

**Մսալիկյան
բռնաճնշումներ
Նայասանում,
դասմություն,
հիշողություն,
առօրյա**



Հազարաշեն
Ազգային
Թանգարանի
Եթնոլոգիական
Կենտրոն
Հայաստան
Center for
Ethnological
Studies
Hazzarashen

ԱՆՄԵՂ
ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻ
ՀԻՇԱՏԱԿԵՆ

ՄԵԼԻԷ-ՍԵՓՈՒՅԱՆ	ՍՄԲԱՏ	1875-1937
ՈՍԿԱՆՅԱՆ	ԴՈՎԻԾ	1897-1936
ՈՍԿԱՆՅԱՆ	ՄՈՒՇԵՂ	1887-1937
ՍԱՀԱԿՅԱՆ	ՍԵՓՈՒՆՈՍ	1892-1937
ԲԱՆԵՅԱՆ	ՍԱՐԳԻՍ	1902-1938
ԽԱՉԱՏԻՅԱՆ	ԱՐՇԱԿ	1890-1954
ԿՈՍՏԱՆՅԱՆ	ՄԱՏՈՒ	1883-1937
ՇԱԿՆՈՑԱՐՅԱՆ	ՇԱԿԵՆ	1934-1954
ԳՐԻԳՈՐՅԱՆ	ԱՐԱՄ	1893-1937

ԵՎ ԴՈՒ ՄԻ ԱՍՍԹԵ ՄԵՂԱՎՈՐ Է
ՔԱՄՈՒԱԿԸ, ԵՎ ԱՆՄԵՂ ԵՍ ԴՈՒ



ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԱԶԱՐԱՇԵՆ ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԳՊՐՈՅՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ (DVV International)

Ստալինյան բռնաճնշումները Կայան Տասանով դասնություն, հիշողություն, առօրյա

Հրանուշ Խառասյան

Գայանե Շազոյան

Հարություն Մարության

Լևոն Աբրահամյան

Ն ի շ ռ ղ ո լ թ յ ա ն ա զ գ ա գ Ր Ո Ւ Թ յ ո լ ն . 5

ՀՏԴ- 94(479.25)
ԳՄԴ- 63.3(5Հ)
Ս 861

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Գրախոսներ պ.գ.թ. Գ. Ստեփանյան, պ.գ.թ. Հ. Մելքունյան

Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, ասորյա /
Ս 861 Հ. Խատատյան, Գ. Շագոյան, Հ. Մարության, Լ. Աբրահամյան. – Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն»
հրատարակչություն, 2015. – 440 էջ (Հիշողության ազգագրություն, 5):

Գրքում քննարկվում են Խորհրդային Հայաստանում ստալինիզմի շրջանի քաղաքական բռնաճնշումների ուղղվածության, հասարակական շերտերի թիրախավորման, քնակչության ասորյային դրանց ազդեցության, բռնաճնշումների պատճառների ու մեղավորության խնդիրների նկատմամբ հանրային գնահատականների և ընկալումների, բռնությունների դերակատարների ու զոհերի հուշարձանացման խնդիրները: Վերլուծությունների համար որպես աղբյուր օգտագործվել են գլխավորապես քաղաքական բռնաճնշումների զոհերի ընտանեկան բանավոր պատմություններ, հուշագրություններ, ինչպես նաև արխիվային նյութեր, բռնաճնշումների շրջանի մամուլը, հետազոտողների հրատարակած տեղեկություններ և փաստաթղթեր: Նախատեսվում է խորհրդային շրջանով զբաղվող պատմաբանների և հասարակագետների, պատմության շարադրանքում հիշողությունները որպես աղբյուր օգտագործողների, ընթերցող լայն շրջանակի համար:

Հետազոտությունը և գրքի տպագրությունը ֆինանսավորվել է Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի (Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ) կողմից՝ Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության միջոցներից: Սույն հրատարակությունը կամ դրա մի մասը կարող է վերարտադրվել միայն աղբյուրը պատշաճ հղելու պարագայում:

Գրքում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել հրատարակիչների կարծիքների հետ: Հրատարակությունը վաճառքի ենթակա չէ և կոմերցիոն կամ շահույթի նպատակ չի հետապնդում:

ՀՏԴ- 94(479.25)
ԳՄԴ- 63.3(5Հ)

Կազմի ձևավորում
Հարություն Մամուելյան

Կազմի ձևավորման համար օգտագործվել է գորգի պատկեր
Լ. Դեր-Բեդրոսյանի հավաքածուից
Կազմի հետնամասում տեղադրված լուսանկարը՝
Մ. Մանվելյանի ընտանեկան արխիվից, 1925 թ.
Երկրորդ էջի լուսանկարը՝ Հ. Մարությանի, 2012 թ.

ISBN 978-5-8080-1185-4

© ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, 2015
© «ՀԱԶԱՐԱՇԵՆ», 2015
© DVV International, 2015

Նախարան

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը Գերմանիայի Մեծահասակների կրթության ասոցիացիայի Միջազգային համագործակցության ինստիտուտն է: Որպես մեծահասակների կրթության առաջատար կազմակերպություն, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը շուրջ 45 տարի շարունակ օժանդակում է մեծահասակների կրթության և ցկայան ուսումնառության զարգացմանը աշխարհի տարբեր երկրներում՝ տարբեր ոլորտներում ստեղծելով և զարգացնելով երիտասարդների ու մեծահասակների շարունակական կրթությանը նպաստող կենսունակ կառույցներ:

Ի լրումն քաղաքացիական կրթությանն ուղղված տարբեր ծրագրերի, մեր կազմակերպությունն առանձնահատուկ տեղ է հատկացնում մոտ անցյալի պատմության խնդրահարույց էջերի քննադատական վերլուծությանն ուղղված ծրագրերին՝ այս գործում որպես հիմնական մեթոդ օգտագործելով հիշողությունը, բանավոր պատմությունը և մեծահասակների կրթությունը: Մման ծրագրերից է Armenia Total(itar)-is-ը: Ծրագրի նախնական գաղափարը պատկանում է Մաթիաս Քլինգենբերգին, որը այժմ գլխավորում է Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ կազմակերպության Կովկասը, Թուրքիան և Բալկանները համակարգող տարածաշրջանային գրասենյակը: 2012-ին գաղափարն առաջին անգամ քննարկվեց «Հազարաշեն» Ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն ՀԿ-ի հետ, որի հետ Դի-Վի-Վի-ն արդեն նմանատիպ մեթոդաբանությամբ աշխատելու համագործակցության փորձ ուներ՝ «Խոսելով միմյանց հետ» հայ-թուրքական հաշտեցման ծրագրի շրջանակներում: Այդ օրվանից մենք համատեղ երկար ուղի ենք անցել: Այսօր արդեն իսկ ծրագիրը բազմաթիվ հաջողություններ ունի, որոնցից ոմանք առավել նկատելի են, իսկ մյուսների վրա դեռ աշխատում ենք: Ծրագրի արդյունքներից կուզենայի առանձնացնել.

www.armeniatotalitaris.am կայքը, որտեղ ներկայացվում են 2012-ից ի վեր բանավոր պատմության մեթոդով Հայաստանի տարբեր վայրերում ԽՍՀՄ քաղաքական բռնությունների ենթարկված մարդկանց և ըմտանկիքների՝ հետազոտողների գրանցած պատմությունները, օրագրեր, լուսնկարներ և ընտանեկան արխիվի այլ փաստաթղթեր, իչպես նաև ժամանակի մամուլը և այլ կտյոթեր,

- «Անհարագատները» ֆիլմը՝ կառուցված ծրագրի ընթացքում գրանցված բանավոր պատմությունների վրա,
- Ծրագրի շրջանակներում իրականացված դասընթացները, որոնց մասնակցած երիտասարդներն այժմ ծրագիրն իրականացնող թիմի մաս են կազմում:

Ծրագրի տարբեր փուլերում մենք բազմաթիվ հանրային քննարկումներ ենք կազմակերպել, ինչպես նաև ունեցել ենք հրապարակումներ մամուլում: Ներկայումս աշխատում ենք Հայաստանի Ազգային արխիվի հետ՝ Ստալինյան բռնանշումների գոհերի տվյալների ամփոփող տեղեկատվական բազա ստեղծելու ուղղությամբ: Հույս ունենք շուտով հանրությանը ներկայացնել այս տխուր հիշողության գիրք հանդիսացող բազան:

Մեծ ուրախությամբ ձեզ ենք ներկայացնում այս գիրքը՝ հույսով, որ այն կօգնի հասկանալ տոտալիտար համակարգի ողջ սարսափը, երբ դժվար է առանձնացնել գոհերին ու դահիճներին, քանի որ այսօրվա դահիճը վաղվա զոհն է: Հույս ունենք, որ այն կօգնի հասկանալ Հայաստանում Ստալինիզմի դրսևորումների առանձնահատկությունները, որոնք դեռևս բավարար հետազոտված, քննարկված, գնահատված չեն: Կարծում ենք, որ այս գիրքը, ինչպես նաև ծրագիրն առհասարակ, կարող են փոխել մեր ներկան, որովհետև պատմությունը միայն այն չէ, ինչ կատարվել է անցյալում, այլև այն, թե ինչպես ենք մենք ընկալում այդ անցյալն այսօր և ինչ ազդեցություն է ունենում մեր ընկալումն այսօրվա որոշումների ու քայլերի վրա:

Լուսինն Խառապյան,

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ կազմակերպության հայաստանյան գրասենյակի տնօրեն

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ	8
ՆԱԽԱԲԱՆ	11
<i>Հրանուշ Խառատյան</i>	
«ՆԱՅԻՈՆԱԼԻԶՄԻ» ԴԻՍԿՈՒՐՍԸ ԵՎ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԹԻՐԱՆԻՎՈՐՈՒՄԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	27
<i>Հրանուշ Խառատյան</i>	
Չոհերն ու մեղավորները	27
<i>Խանջյանի սպանությունը և «հականացիոնալիստական պայքարը» Հայաստանում</i>	46
<i>Հայաստանում ազգայնականության մեջ մեղադրանքի պատճառներն ու նպատակը</i>	88
<i>Հայաստանի խորհրդայնացման որոշ առանձնահատկություններ</i>	91
<i>Թուրքահայերը Հայաստանում</i>	102
<i>Փախստական թուրքահայերը սպառնալիք են Թուրքիայի համար</i>	109
<i>Քաղաքական բռնաճնշումների քրեականացման օրինականացումը</i>	118
Նացիոնալիզմի և «նացիոնալիստների» հետապնդումների զանգվածայնությունը ...	133
<i>«Արդարացվել է կուսակցական կարգով»</i>	141
ԱՄԲՈՂՋԱՏԻՐԱԿԱՆ ԱՌՕՐՅԱ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ)	154
<i>Գայանե Շագոյան</i>	
Ընտանեկան արխիվ. կանանց և տղամարդկանց խորհրդային «հուշ» ու «հիշողությունը»	158
Պատմության և ազգագրության միջև. լյուստրացիան և դաշտային էթիկական խնդիրները	167
Խորհրդային արդիականացման հասարակական աստառը	172
Գյուղ կանգնի, գերան կկոտրի. կրոնական և էթնիկ համայնքները բռնաճնշումների պայմաններում	177
Ամենամոտ օտարը. դրացիական հարաբերությունները բռնաճնշումների պայմաններում	184
«Եւ եղբայր եղբօրը մահի կ'մատնէ». ընտանիքը բռնաճնշումների պայմաններում	187
Կինն ու տղամարդը՝ որպես բռնաճնշումների թիրախ	192
Երեխաներն ամբողջատիրական գաղափարախոսության և ընտանեկան արժեքների միջև	195
Ո՛Վ ԷՐ ՄԵՂԱԿՈՐ. ՍՏԱԼԻՆՅԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱԿՈՐՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԲՈՆԱԴԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ՊԱՏՄԱՆԸԱՐԵՐԸ	199
<i>Հարություն Մարության</i>	
ԽՄԿԿ XX համագումարը և «անհատի պաշտամունքի» փրկարար տեսությունը	199
Բռնադատվողների «մեղքերը»	202
«Նախագահ», անուններ, ցուցակներ	208
Անորոշ «վերևներ»	210

Որոշակի «վերններ»․ Ստալինի դերի ընկալումները.....	211
Վախի գործոնը	214
Աքսորն իբրև վերաբնակեցում․ պատկերացումներ, արդարացման փորձեր... ..	216
Վերաբերմունքը տեղերում բռնադատվածների հարազատների նկատմամբ	218
Համակարգի «մեղավորությունը»	222
Մատնություն և մատնիչներ․ ովքեր և ինչու՞: Ներողամտությունն իբրև պատասխան ..	224
Մեղավորության խնդիրը և մերօրյա իրողությունները	232
Եզրակացության փոխարեն	237

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱՑՈՒՄԸ 238

Լևոն Աբրահամյան, Գայանե Շագոյան

Խորհրդային պատմությունը և ցեղասպանության մետանարրատիվը	239
Երկու բռնաճնշումների «չհատվող» սյուժեներ.....	245
«Հավաքական» և «հավաքված» հիշողությունները	246
«Հիմնական/կարծր» և «ծրագրային/փափուկ» հիշողություններ	253
Հիշել, չի կարելի մոռանալ․ հուշարձանը որպես գերեզմանաքար, և գերեզմանաքարը՝ որպես վավերագիր.....	258
Հիշել չի կարելի, մոռանալ․ խորհրդային շրջանի մերժված հուշարձաններ.....	268
Արձանը՝ որպես կուռք, և խորհրդային «կուռքերի» արձանները.....	274
Չդրված հուշարձաններ.....	283

ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ԲՈՒՆԱԴԱՏՎԱԾՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ 286

Վոլոդյա Մարտիրոսյան

«Ինչ պետություն էր՝ ախպորս տարավ, մարդիս տարավ, պատրոնիս տարավ, բոլորին տարավ...»	286
---	-----

Արփենիկ Ալեքսանյան

Կյանքն ու պայքարը սիբիրյան աքսորում.....	306
--	-----

Իռեն Օրդուխանյան

«Մարմինս դարձել էր մսե մոխրաման»	314
--	-----

Էդգար և Ռուբեն Ջրբաշյաններ

«Ամենաահավորն իհարկե վախի զգացումն էր, որը մարդկանց դարձրել էր ստրուկ»...321
--

Ռևիկ Հարությունյան

«Ինձ համար ինքը լավ մարդ էր»	330
------------------------------------	-----

Պարույր Տոնոյան

Ծամամ տատի գոյատևելու հնարքները	343
---------------------------------------	-----

Ռուստ Աբրահամյան

«Նույն ՆԿՎԴ-իստները եղել են և՛ չար, և՛ բարի»	375
--	-----

Սերգեյ Խուրշուդյան

Խոհարարի պահապան շերեփը, որը կոտրվեց Տիբիրում	396
---	-----

ԲԱՌԱՑԱՆԿ.....	428
---------------	-----

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ	433
-------------------	-----

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	438
-------------------	-----

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

2012 թվականին «Հազարաշեն» ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունը Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ գերմանական հասարակական կազմակերպության (Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտ) հետ համատեղ սկսեց Հայաստանում ԽՍՀՄ ամբողջատիրության շրջանի քաղաքական բռնաճնշումների դրսևորումների և դրանց հասարակական ներկա ընկալումների հետազոտության մի ծրագիր: Ծրագիրը կոչվում է «Armenia total(itar)is» (Ամբողջ(ատիր)ական Հայաստան): «Total(itar)is» եզրով փորձել ենք ընդգծել, որ ուսումնասիրության առարկա են դառնում «ամբողջատիրության» դրսևորումներն ու «ամբողջատիրական» ժամանակաշրջանի խնդիրներն «ամբողջ» Հայաստանում: Ծրագիրը հիմնված է բանավոր պատմության մեթոդաբանության վրա, որի դեպքում հետազոտության հիմնական աղբյուրը մարդիկ են՝ իրենց ապրած կյանքով, լինեն նրանք ամբողջատիրական ժամանակաշրջանի ուղղակի կամ անուղղակի գոհերը, թե նրանց ժառանգները: Ծրագիրը նպատակ ունի վեր հանել Խորհրդային Հայաստանի քնակչության մեջ ամբողջատիրության սոցիալ-մշակութային և սոցիալ-հոգեբանական դրսևորումները, խորհրդային առօրյայի ձևավորման գործընթացը և հետազոտության արդյունքների հանրայնացման միջոցով նպաստել բռնատիրական համակարգի թողած հետևանքների բացահայտմանը և մեղմմանը: Ինչպես հաճախ է պատահում, մեր առաջադրած խնդիրը նորանոր ենթախնդիրներ բացեց, և հետազոտության ու ծրագրի շրջանակներն ընդլայնվեցին:

Դաշտային աշխատանքների հենց սկզբից մենք զգացինք Հայաստանի քնակչության մեզ օգնելու անկեղծ պատրաստակամությունը: Մեզ հետ հանդիպումներում մարդիկ պատմում էին ոչ միայն սեփական հիշողությունները կամ ծնողներից լսածները, այլև դիմում էին ազգականներին, ստուգում սեփական իմացությունները, ներգրավում այլոց, փնտրում գտնում էին լուսանկարներ, նամակներ, փաստաթղթեր: Այս գրքի հեղինակային կազմը շատ երախտապարտ է հետազոտության ընթացքում մեզ հանդիպած բոլոր գրուցակիցներին, ում անկեղծ պատմությունները, մտորումներն ու իրենց կյանքի փորձը մեզ հաղորդելու պատրաստակամությունն այս հատորի հայտնվելու հիմնական գրավականն են: Նրանց մեծ մասը քաղաքական բռնությունների ենթարկվածներն են կամ նրանց զավակները, հասկանալի է՝ արդեն տարեց: Ցավոք, աշխատանքը պատրաստելու ընթացքում նրան-

ցից ոմանք վախճանվեցին, և մենք այս հատորը սիրով նվիրում ենք նրանց և ստալինյան բռնաճնշումների բոլոր զոհերի հիշատակին:

Հավանաբար իրավունք ունենք ասելու, որ ստալինիզմի շրջանի համատարած և համակարգված քաղաքական բռնությունների զոհերին և/կամ դրանց նկատմամբ վերաբերմունք ունեցող մեր գրուցակիցներին մենք մասամբ պարտական ենք նաև մեր սեփական գիտակցության մեջ աստիճանաբար տեղի ունեցած փոփոխությանը: Մեր բոլորի ընտանեկան անցյալը շաղկապված է ԽՍՀՄ քաղաքական բռնություններին, անկախ նրանից՝ ունեցել ենք ընտանիքում այդ բռնությունների որոշակի զոհեր, թե՛ ոչ: Արդյունքում հեղինակների համար այս հատորի վրա աշխատանքը մասնագիտական խնդրից վերաճեց նաև անձնական խոստովանության, անձնական և/կամ ընտանեկան կենսագրությունը հասկանալու և իմաստավորելու, երբեմն էլ՝ վերաիմաստավորելու փորձի: Շնորհակալություն նրանց նաև սրա համար:

Դաշտային հետազոտությունն իրականացնելու համար շատ կարևոր էին ոչ միայն ստալինյան բռնաճնշումների մասին հիշողություն ունեցողները, այլև մարդիկ, ովքեր, այդ հիշողությունների գրանցման կարևորությունը հասկանալով, մեծ եռանդով և սեփական նախաձեռնությամբ օգնել են գտնելու մեր հնարավոր գրուցակիցներին: Այս առիթով առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանին, ով Հայաստանում ստալինյան բռնաճնշումները բանավոր պատմությունների միջոցով ուսումնասիրող առաջին պատմաբանն է և Սյունիքում մեր հետազոտությունները կազմակերպած անփոխարինելի գործընկերը: Շիրակում իրենց իսկ նախաձեռնությամբ մեզ մեծ աջակցություն են ցուցաբերել Լյուրա և Ռոբերտ Խաչատրյանները: Նրանք իրենց շրջապատի տասնյակից ավելի ստալինյան զոհերի և նրանց ժառանգների օգնությամբ մի մեծ ցուցակ կազմեցին և օգնեցին այդ մարդկանց հետ կապ հաստատել: Անձնական նախաձեռնությամբ Շիրակում բազմաթիվ գրույցների կազմակերպման, պատմությունների գրանցման համար երախտապարտ ենք նաև փաստացի մեր ծրագրի գործընկերը դարձած Հասմիկ Շաղոյանին:

Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում մեր ծրագիր ներգրավված ավելի քան քսան ուսանողներին, ովքեր ոչ միայն մասնակցել են մեր հարցազրույցներին, այլև ինքնուրույն դրանք շարունակել են և իրենց գրանցած նյութերով հարստացրել մեր գիտելիքները: Նրանցից Հասմիկ Կնյազյանը նույնիսկ այդ նյութերով գրեց իր մագիստրոսական թեզը և այս թեմայի շրջանակներում դարձավ մեր գիտական գործընկերը:

Շնորհակալություն ենք հայտնում այս հատորի համար ոչ պակաս կարևորություն ունեցած առանձին քննարկումների բոլոր մասնակիցներին և հատկապես դրանք կազմակերպելու գործում մեզ մեծապես աջակցած Կապանի երկրագիտական թանգարանի ողջ անձնակազմին, Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Միքայել եպիսկոպոս Աջապահյանին և Հայաստանյայց առաքելական եկեղեցու Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնի անձնակազմին, ինչպես նաև Երևանի Նորարար փորձատեղական արվեստի կենտրոնին (ՆՓԱԿ):

Մենք երախտապարտ ենք Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ գերմանական հասարակական կազմակերպությանը, որի ֆինանսական օժանդակությամբ հնարավոր դարձան այս հետազոտությունը և գրքի հրատարակությունը: Ծրագրի ֆինանսական հովանավորը լինելուց գատ, այդ կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի աշխատակիցները, մասնավորապես Աննա Պողոսյանը և Լուսինե Խառատյանը հետազոտական թիմի համարժեք անդամի ներգրավվածությամբ մասնակցել են նույնիսկ դաշտային աշխատանքներին, բայց հատկապես մեր բոլոր հանրային և գրավոր շարադրանքների քննարկումներին՝ շահեկան առաջարկություններով հարստացնելով դրանք: Առանձնահատուկ շնորհակալություն Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ կազմակերպության տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Մաթիաս Բլինգենբերգին՝ ծրագրի նախնական գաղափարի և դրա իրականացման տարբեր փուլերում քննադատական դատողություններով ու մասնագիտական գիտելիքներով ծրագիրը հարստացնելու համար: Նրա հետ աշխատելը հեշտ չի, բայց հետաքրքիր է:

Մեր կողմից հավաքված նյութերի զգալի մասին կարելի է ծանոթանալ եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) <http://armeniatotalitaris.am/> կայքում: Նյութերի հավաքումը, վերամշակումը և կայքում տեղադրումը շարունակվում է:

«Armenia total(itar)is» ծրագրի հետազոտական խումբ

ՆԱԽԱԲԱՆ

Այս աշխատանքը համեստ փորձ է հետազոտողների և հանրության ուշադրությունը հրավիրելու Բորիս Գոլդային Հայաստանում ստալինյան շրջանում տեղի ունեցած քաղաքական բռնաճնշումների բազմաբնույթ հարցերից մի քանիսին: Բորիս Գոլդային Հայաստանում տեղի ունեցած քաղաքական բռնաճնշումների մասին հետազոտությունները Հայաստանի Հանրապետությունում չափազանց քիչ են և, դատելով մեր հետազոտությունների ընթացքից, դրանց նկատմամբ մեզանում այսօր չկա նաև հանրային և քաղաքական հետաքրքրվածություն: Շատ քիչ են ուսումնասիրված Հայաստանում տեղ գտած բռնությունների ձևի ու բովանդակության առանձնահատկությունները, բռնությունների իրականացման ընթացքում Հայաստանի ընդհանուր սոցիալական ու բարոյահոգեբանական մթնոլորտը, հասարակության վրա դրանց ազդեցությունը, հասարակական շերտերի ու անհատների վարքային մոդելները, բռնությունների իրականացման գործընթացներին պաշտոնական դիրք զբաղեցնող և պարզապես քաղաքացի անհատի ներգրավվածությունը, խորհրդային քաղաքական մշակույթի ազդեցությունը Հայաստանի կառավարման համակարգի և խորհրդային առօրյայի վրա: Առավել ևս չեն քննարկվել այդ ժամանակահատվածում Բորիս Գոլդային Հայաստանի հասարակության մեջ բռնությունների, դրանք իրականացնողների ու դրանց գոհերի՝ տարատեսակ «հակաների»՝ «հակահեղափոխական», «հակասովետական», «հակապետական», «հակաստալինյան», «հակակոլխոզային» և այլ բնույթի «անհարազատների», «բանդիտների», «դաշնադների», «տեռորիստների», «լրտեսների», «ազգայնականների», «դաշնակցականների», «տրոցկիստների» և «աջտրոցկիստների», «կուլակների», «մաուզերիստների», «խմբապետների», «վնասարարների», «պորտաբույծների», «սոցիալապես վտանգավոր» և «ժողովրդի թշնամի» պիտակված այլևայլ խմբերի ու անհատների և նրանց հարազատների նկատմամբ հանրային ընկալումներն ու վերաբերմունքը: Հիշյալ ձևակերպումները վերցված են ոչ թե գոհերի մեղադրական եզրակացություններից, այլ երեսնական թվականների պարբերական մամուլից և կենդանի մնացած գոհերի պատմություններից, որոնք պահպանվել են երկրորդ-երրորդ սերնդի հիշողություններում:

Նույնիսկ բռնադատվածների ընդհանուր թիվը մեր օրերում միայն մոտավոր է հայտնի: Պատմողներից շատերն անգամ ցայսօր չգիտեն, թե քրեական օրենսգրքի կոնկրետ դիրք հոդվածով կամ ինչ մեղադրանքով են դատապարտվել իրենց նախնիները՝ ծնողները կամ պապերը: Հանրային գիտելիքում շրջանառվող «կուլակ», «դաշնակցական», «տրոցկիստ» բառերը

բացահայտում են այն իրողությունը, որ մարդիկ չգիտեն, որ ԽՍՀՄ քրեական օրենսգիրքը դաշնակցական կամ տրոցկիստական գործունեության համար դատապարտող հոդվածներ չուներ: Նրանք պատմում են այն, ինչ իրականում պահել է նրանց ընտանեկան հիշողությունը, այն, ինչ շրջանավում էր բանավոր գրույցներում և գրվում էր թերթերում, մասամբ նաև այն, ինչ գրված էր ԽՍՀՄ վերջին շրջանի պատմության դասագրքերում:

ԽՍՀՄ քաղաքական բռնությունների նկատմամբ առկա կրավորական կեցվածքը հավանաբար բացատրվում է նրանով, որ ԽՍՀՄ փլուզման շրջանում քաղաքական բռնությունների նկատմամբ հասարակության ակտիվացած ուշադրությունը Հայաստանը շրջանցեց օբյեկտիվ՝ սոցիալ-քաղաքական մասնավոր իրավիճակի և 1988 թ.-ին տեղի ունեցած երկրաշարժի պատճառներով: Ղարաբաղյան հակամարտության հետևանքով հայ-ադրբեջանական սրված հարաբերությունները, ապա և պատերազմը, երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած բնակչության խնդիրները, Հայաստանում միմյանց հաջորդող պարետային ռեժիմները, չորս տարի՝ 1988-1992 թթ.-ին շարունակվող ադրբեջանահայ փախստականների հոսքը Հայաստան, Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակումը, երկարատև էներգետիկ ճգնաժամը, տնտեսության քայքայումը և այլն Հայաստանում երկրորդական-երրորդական դարձրին ԽՍՀՄ քաղաքական ռեժիմի վերաբերյալ այն տարիներին Խորհրդային Միության բոլոր ժողովուրդներին խորապես հուզող հարցերի քննարկումները: Մինչ նախկին սոցիալիզմի ճամբարի երկրներում և նախկին ԽՍՀՄ հանրապետությունների մի մասում աշխույժ քննարկումներ էին սկսվել կոմունիստական ռեժիմի և բռնապետական անցյալի զոհերի ռեաբիլիտացիայի և առհասարակ ամբողջատիիրության դրսևորումների ու լյուստրացիայի հարցերի շուրջ, Հայաստանում չջեռուցվող բնակարաններում, նավթի լամպի լույսի տակ կամ հացի հերթերում քննարկվում էին փախստականներին տեղավորելու, Ղարաբաղի շուրջ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների կողմից սկսված «Կուլցո» օպերացիայի, երկրաշարժի հետևանքով որբացած երեխաների, կրճատվող աշխատատեղերի և պատերազմի հարցերը: Այն տարիներին նույնիսկ հնարավոր չէր աշխատել արխիվների և գրադարանների չջեռուցվող շենքերում, չնայած 1990 թ.-ին վերջապես բացվել էին ՊԱԿի արխիվները:

Մյուս կարևոր պատճառը, հավանաբար, այն է, որ ԽՍՀՄ փլուզումով հնարավորություն էր առաջացել ավելի ազատորեն անդրադառնալ հայոց մեծ ողբերգության՝ Ցեղասպանության թեմային, որը խորհրդահայ պատմագրության մեջ մասամբ բարձրաձայնվել է 1960-ականներից սկսած, բայց՝ զգալի զգուշավորությամբ: Անշուշտ, «զսպող» դեր է խաղացել ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունների բնույթը: Ցեղասպանության և Լեռնային

Ղարաբաղի թեման այնքան գերակա էր, որ մնացած հարցերը դառնում էին երկրորդային-երրորդային:

Մենք խորապես համոզված ենք, որ մեր երկրի պատմության խորհրդային բռնաճշումների էջի չբացահայտվածությունը նորանոր խնդիրներ է դնում անկախ Հայաստանի առաջ՝ թե՛ քաղաքական կողմնորոշումների, կառավարման, թե՛ հանրային վարքի իմաստով: Կարևոր է նկատի ունենալ նաև, որ ՀՀ քաղաքացիների ներկայիս հանրային մշակույթը մեծ հաշվով խորհրդային շրջանի մշակույթի շարունակությունն է, և լավի ու վատի, բարոյականի ու անբարոյի, կարելիի ու անկարելիի հասարակական չափման սկզբունքները ձևավորվել են ոչ վաղ անցյալի խորհրդային ֆորմալ և ոչ ֆորմալ մշակույթում:

Մարդկանց հիշողությունը որպես հիմնական աղբյուր ընտրելով՝ մենք գրուցել ենք հարյուրից ավելի ընտանիքների հետ: Ունեցել ենք բազմաթիվ քննարկումներ, որոնց ընթացքում հասկացանք, որ մարդկանց հիշողությունները կամ, հավասարապես, հիշողության բացակայությունն ու ոչ վաղ անցյալի այդ երևույթի չիմացությունը մեզ առաջադրում են խնդիրներ, որոնք ավելի համապարփակ հետազոտություն են պահանջում, ուստի հետազոտական դաշտն աստիճանաբար ընդլայնվեց: Հիմա արդեն պարզ է, որ մտել ենք պատասխանատվություն պահանջող մի նուրբ ոլորտ, որտեղ դեռևս ստվեր չդարձած անցյալի իրողությունները բախվում են քաղաքական-հասարակական ներկայիս գործընթացներին և նույնիսկ դեր են խաղում կենդանի մարդկանց ճակատագրերում: Զգացվում է նաև քաղաքական պատմագրության պակասը:

Միաժամանակ պարզ է դառնում, որ մինչ հայաստանյան հասարակագիտությունը ճգնում էր դուրս գալ ճգնաժամից, նախկին ԽՍՀՄ պատմության ժառանգորդների, հատկապես Ռուսաստանի Դաշնության ակադեմիական, քաղաքական (մասնավորապես քաղաքական բռնությունների գոհերի ռեաբիլիտացիայի նպատակով 1991 թ.-ին ՌԴ նախագահին կից ստեղծված հանձնաժողովը, որը 1993 թ.-ին գրանցվեց որպես «Դեմոկրատիա» միջազգային հիմնադրամ և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի անդամ Ա. Ե. Յակովլևի կողմից գլխավորվելու պատճառով հաճախ անվանվում է «Յակովլևի ֆոնդ») և քաղաքացիական հասարակագիտությունը (մասնավորապես 1989 թ.-ին հիմնադրված «Մեմորիալ» իրավապաշտպան կազմակերպությունը), ինչպես նաև ակադեմիական գիտությունը զգալի ներդրում են արել այդ ոլորտում, և արդեն շրջանառության մեջ են դրվել հսկայական քանակությամբ փաստաթղթեր, արվել են հաշվարկներ, ձևավորվել են ստալինյան քաղաքական բռնությունների հիմնական բնութագրերը, բանաձևերը և նույնիսկ կադապարվել են որոշ գնահատականներ

ու իրավական մոտեցումներ: Դրանցում վերոհիշյալ պատճառներով զգալի չափով բացակայում է «հայկական նյութը», երբեմն էլ դրանք ներկայացված են սխալներով: Սա, անշուշտ, նախևառաջ հայաստանյան հետազոտողների «մեղքն» է, բայց միաժամանակ բարդացնում է հայաստանյան հետազոտողների խնդիրը՝ անհրաժեշտություն դարձնելով մի կողմից ստալինյան քաղաքական բռնությունների «հայկական հատվածը» ինտեգրելու ընդհանուրի համատեքստում, մյուս կողմից՝ ընդհանուրի մեջ մասնավորեցնելու «հայկական առանձնահատկությունը»:

Հայաստանում սա անհամեմատ դժվար է, քան ՌԴ-ում, որտեղ գտնվում է ԽՍՀՄ քաղաքական բռնությունների արխիվային փաստաթղթերի առյուծի բաժինը, և որտեղ, առնվազն ռեաբիլիտացիոն գործընթացի բերումով, հետազոտողները 1960-ականներից թեկուզ մասնակիորեն առնչվում էին խորհրդային մյուս հանրապետությունների հետազոտողներին անմատչելի այդ փաստաթղթերի գոնե մի մասին:

«Խորոշյովան ձնհալի» տարիներին ԽՍՀՄում որոշ հնարավորություն էր առաջացել ճեղքելու կոմկուսի գրաքննության ծանր ճշումը: Արվեստի և գրականության ոլորտում առաջացած մոսկովյան-մայրաքաղաքային որոշ աշխուժացման արձագանքները, տեղական կոմկուսների աջալուրջ վերահսկողությամբ, մասամբ դրսևորվեցին նաև հանրապետությունների մայրաքաղաքներում: 1954 թ.-ին «Հայպետհրատ»ը տպագրվեց 1936 թ.-ին բռնադատված գրող Վ.Ալազանի «Բանաստեղծի սիրտը» ժողովածուն (չափածո): Քսան տարվա արգելքից հետո, 1955 թ.-ից, դեռևս ընտրողաբար և զգուշավոր վերահրատարակվեցին երեսնականների քաղաքական բռնությունների աղմկոտ գործերի գնդակահարված զոհերի որոշ ստեղծագործություններ (1955 թ.-ին՝ Ա.Բակունցի «Երկեր»ը, 1957 թ.-ին Ե.Չարենցի «Ընտիր երկեր»-ը ևն):

Խորհրդային Հայաստանում «Հայոցքի» ընձեռած մյուս հնարավորությունը ազգային ողբերգությանը՝ Ցեղասպանությանը կողմնակիորեն անդրադառնալու զգուշավոր փորձերն էին: 1950-ականների վերջերի Հայաստանի մշակութային կյանքի նշանակալից երևույթներից էր գեղանկարիչ Սարգիս Մուրադյանի «Կոմիտաս. վերջին գիշերը» նկարը: 1959 թ.-ին հրատարակվեց Պարույր Սևակի՝ 1957-58 թթ.-ին Մոսկվայում գրված «Ալյուռելի զանգակատուն» պոեմը, այնուհետև հրատարակվեցին Հովհաննես Շիրազի բանաստեղծությունները, Հրաչյա Քոչարի «Կարոտ» և «Նահապետ» վեպերը և մի շարք այլ գործեր, բոլորն էլ մինչ այդ արգելված Հայոց ցեղասպանության թեմաներով: Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը մոտենում էր, և Ցեղասպանության հանրայնացմանը նախապատրաստվող երկրների շարքում ԽՍՀՄը Խորհրդային Հայաստանին «թույլատրել» էր Ցեղասպանությանն անդրադարձի որոշ, վերահսկելի չափաբաժին:

Խորհրդային ամբողջատիրության թեման դեռևս «արգելքների փաթեթում» էր և այդ տարիներին Հայաստանի թե՛ պատմագիտական, թե՛ գեղարվեստական, թե՛ հրապարակախոսական գրավոր մշակույթը քաղաքական բռնություններին շատ քիչ է անդրադարձել: Միայն որոշ աշխատանքներում քաղաքական գրաքննության թույլտվության շրջանակներում մասնակիորեն քննարկվել կամ, ավելի ճիշտ կլինի ասել՝ տեղ են գտել «ստալինյան գոհ» մտավորականների մինչ այդ արգելված կենսագրությունները կամ դրանց հիշատակումները՝ առանց բուն պետական տեռորը քննարկելու: Դրանցից առաջինը, թերևս, 1959 թ.-ին հրատարակված Սուրեն Աղաբաբյանի «Գուրգեն Մահարի: Կյանքը և ստեղծագործությունը» և «Ակսել Բակունց»¹ աշխատանքներն էին: 1960 թ.-ին Ակսել Բակունցի մասին հրատարակվեց նաև Ռ-աֆայել Իշխանյանի գիրքը²: Քաղաքական բռնաճնշումների ենթարկված համալսարանական դասախոսներին մասին համառոտ հիշատակություններ կան Երևանի պետական համալսարանի մասին 1965 թ.-ին հրատարակված աշխատանքում³: Բուն բռնություններին վերաբերող ուշագրավ հրատարակություններից կարելի է համարել 1964 թ.-ին Երևանում հրատարակված երկու գեղարվեստական-հուշագրական աշխատանքը (Մկրտիչ Արմեն, «Պատվիրեցին հանձնել ձեզ» պատմվածքների ժողովածուն, Հուսիկ Խանդամուրյան, «Ու՛ր է տանում գնացքը») և 1967 թ.-ին տպագրված Մկրտիչ Արմենի «Ժիրայր Գլենց» վեպը:

1963 թ.-ին Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն Ծ.Աղայանը հրատարակեց 1936 թ.-ին սպանված Խորհրդային Հայաստանի ԿԿ առաջին քարտուղար Ա.Խանջյանի հողվածներն ու ճառերը՝ նախաբանում մեկ պարբերությամբ անդրադառնալով «անհատի պաշտամունքի ծանր տարիներին ... և ժողովրդի թշնամի Բերիայի չարանենգ

¹ Լրամշակված հրատարակվել է 1963 թ.-ին, – *Սուրեն Աղաբաբյան*: Ակսել Բակունց, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1963, 504 էջ:

² *Ռ.Իշխանյան*: Ակսել Բակունց. կենսագրություն և մատենագիտություն, «ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվ. պետական ռեսպուբլիկական գրադարան», Երևան, 1960 (քանի որ այս աշխատանքը Ռ. Իշխանյանի թեկնածուական դիսերտացիան էր, հրատարակվել է նաև 19 էջանոց ռուսերեն համառոտագրումը, – Аксель Бакунц: Жизнь и вопросы творчества (Автореферат дисс. соиск. уч. ст. канд. филол. наук). Ереван, 1962): Հետագայում հրատարակվեց նաև նույն հեղինակի «Բակունցի կյանքն ու արվեստը», «Հայաստան», Երևան, 1974:

³ *Լ.Ղարիբջանյան*: Երևանի պետական Համալսարանը, Երեան, 1965: Հեղինակը հիշատակում է 20 բռնադատված անվանի գիտնականների, մի մասը՝ գնդակահարված, մյուսները՝ աքսորված կամ հետագայում արդարացված: Համալսարանի բռնադատված դասախոսներից ոչ բոլոր կան այս ցանկում, ինչպես, օրինակ, փիլիսոփա Միսակ Խոստիկյանը, ում անունը, ըստ հեղինակի բանավոր վկայության. «չի հիշատակվում Երևանի պետական համալսարանի արխիվի որևէ փաստաթղթում, նույնիսկ ռոճկացուցակներում» (տես *Լ.Հարությունյան*: Խորհրդային Հայաստանի բռնադատուած փիլիսոփա Միսակ Խոստիկյանի կրտսած համարող գիտական եւ գրական ժառանգութեան մասին, Հայկազեան Հայագիտական Հանդէս, Պէյրուք, 2009, թիւ 29, էջ 401):

մեքենայություններին», որին «1936 թ. հուլիսի 9-ին գոհ դարձավ Ա.Խանջյանը»⁴: Երեք տարի անց նույն հեղինակը մի գրքույկ հրատարակեց 1936 թ.-ին Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն (1933-34 թթ.-ին՝ ՀԽՍՀ լուսժողով), 1936-37 թթ.-ին Խորհրդային Հայաստանում թիվ մեկ տրոցկիստ-նացիոնալիստ հայտարարված և գնդակահարված Ն.Ստեփանյանի հեղափոխական և կոմունիստական գործունեության մասին՝ առանձին գլխով անդրադառնալով նաև նրա և նրա հարազատների դեմ իրականացված բռնաճնշումների փաստերին՝ հավատարիմ մնալով «Բերիայի չարանենգ մեքենայությունների» բացատրությանը⁵: ԽՍՀՄի լայնածավալ քաղաքական բռնությունների և դրա հետևանքների քննարկումը կամ կամ քիչ թե շատ լուրջ անդրադարձը դրան շարունակում էր տաքու մնալ:

Սրան հաջորդած քսան տարիների փաստացի լուրջան շրջանն ընդհատվեց վերակառուցման տարիներին, երբ սկսեցին հրատարակվել բռնությունների գոհերի որոշ հուշագրություններ, դարակներում մնացած ձեռագրեր, փաստաթղթեր և առաջին հետազոտությունները⁶: Դրանց նախորդել էր 1928-34 թթ.-ին «Սովետական Հայաստան» թերթի խմբագիր Ռաֆայել Աթայանի «Ասպետական հոգիներ» կիսահուշագրական, կիսավերլուծական ակնարկը Ներսիկ Ստեփանյանի նկատմամբ իրականացված քաղաքական հալածանքների և գնդակահարության, Ա. Խանջյանի սպանության/ինքնասպանության և առհասարակ երեսնականների քաղաքական հալածանքների

⁴ Ծ.Աղայան: Աղասի Խանջյան: Հոգվածներ և ձևեր: Խմբ.՝ Ծ. Պ. Աղայան: Եր.,: «Հայպետհրատ», 1963, էջ 10:

⁵ Ը.Ազայն. Нерсик Степанян, «Айастан», Ереван, 1967:

⁶ Գ. Մահարի: Ծաղկած փշալարեր, Երևան, 1988 (2009 թ.-ին՝ Մահարի Գուրգեն, «Սիբիրական»); Ս. Ղազարյան: Դա չպետք է պատահեր, Երևան, 1988 (ռուսերեն հրատարակվել է 1990 թ.-ին,–Ս. Գազարյան, Это не должно повториться: Документальная повесть. Ереван, 1990); Ս. Խանգաղյան: Երկաթե վարագույրը դեռ չի պատռվել//«Գրական թերթ», 17 փետրվարի, 1989, թիվ 8 (2328); Վ. Ալազան: Տառապանքի ուղիներով//«Գարուն», 1989, թիվ 1 (նաև՝ Ալազան Վահրամ, Տառապանքի ուղիներով, Երևան, 1990թ.): Ս. Զոհիսյան: Փշալարից այն կողմ//«Գարուն», 1989, թիվ 3; Ռ. Քամայան: Աքտրի տարբերակ//«Գրական թերթ», 16 հունիսի, 1989 թ., թիվ 25 (2345); Ս. Վիրաբյան: 1949 թ. գանգվածային բռնագաղթերը Հայաստանում/Երեկոյան Երևան, 20 հունիսի, 1988թ., «Կոմունիստ», 1989, 16 հունիսի; Ս. Վիրաբյան: Փաստաթղթեր 1949 թ. բռնագաղթի մասին//«Բանբեր Հայաստանի արխիվների», 1990, թիվ 3, էջ 68-76; Կ. Զախարյան. Раздел Армении, большевизация, и красный террор//«Республика Армения», 1990, 29 ноября; Դ. Ավետիսյան: Ստալինականության գոհերը. ՀամԿ(Բ)Կ XVII համագումարում հայ պատվիրակները//«Լենինյան արշավ», 1990, թիվ 5 և 6; Ստ. Ստեփանյան: Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1993; Դ. Գասպարյան: Փակ դռների գաղտնիքը, «Ապոլլոն», Երևան, 1994; Դ. Ճղյան: Դեպի հայրենիք-դեպի Սիբիր: Զսպված ըմբոսություն (վավերագրական ակնարկներ և ծանապարհորդական նոթեր), Երևան, 1994; Զ. Թեր-Սոգոսյան. Свобода опоздала на целую жизнь, Алма-Ата, 1997; Մ.Բազարյան: Նամակներ սովետական «որսխոտից» (ներգաղթի և ներգաղթողների մասին), Երևան, 1997; Դ. Բախչինյան: «Չարենգապատում» ըստ անտիպ վավերագրերի, «Սարգիս Խաչենց», Երևան, 1997:

մասին, որում հեղինակը ակնածանքով մեծարելում էր իր ակնարկի «հերոսներին»⁷: Այն զգալի չափով կրում է Ստալինի մահվանը հաջորդած խրոնոշոկյան մերկացումների և առհասարակ «անհատի պաշտամունքի» գնահատականի միջոցով ԽՍՀՄ քաղաքական տեռորի ողջ փիլիսոփայությունը «մի քանի չարագործների ազդեցությամբ» «փակելու» կնիքը: Չնայած արդեն 1987 թ. էր, ԽՍՀՄում գրվել և հրատարակվել էին բավական աշխատանքներ, այդ թվում վաղուց արդեն շրջանառվում էր Ա. Սոլժենիցինի «Արխիպելագ Գուլագը», Ռ. Աթայանը դեռևս նպատակ ուներ «Հոկտեմբերյան մեծ հեղափոխության համամարդկային արժեք ներկայացնող գլխավոր նշանաբանների» անսասանությունը փոխանցել երիտասարդ սերունդներին՝ բացատրելով նրանց, որ այդ քաղաքական տեռորն ընդամենը... «մոլագար մի կամակորոտություն» էր: Ռ.Աթայանը հավանաբար արդեն մոռացել էր բազմաթիվ մարդկանց կյանք, իսկ հասարակությանը՝ մեծ տագնապներ ու արժեքների կորուստներ արժեցած այդ «մոլագար կամակորոտության»ը իր փոքրիկ մասնակցությունը, երբ 1936 թ. Ա.Խանջյանի սպանությունից հետո, թերևս ինքնապաշտպանական նկատառումներով, ասել էր. «Վերջին տարիներս կենտրոնական օրգանը՝ «Խորհրդային Հայաստանը», դաշնակների դեմ ուղղված հողվածներ չէր տպագրում Խանջյանների ցուցումով... Խանջյանն ամեն կերպ պաշտպանում ու խրախուսում էր դաշնակցական գաղափարներով համակված գրականագետների հակահայկական խմբակին, որին գլխավորում էր կուսակցության նախկին անդամ Բակունցը»⁸: Խանջյանն արդեն մահացած էր, բայց Բակունցը դեռ կանր: Այն տարիներին շատերն էին այդ լեզվով խոսում, այդ շատերի մեջ՝ նաև երիտասարդ, Խանջյանի կողմից հովանավորվող Ռ.Աթայանը, ով, իր հերթին, «1937-1939 թթ.-ին բանտային պարապության երկար ժամեր» էր ունեցել և բանտում «շատ բաներ էր լսել Ներսիկ Ստեփանյանի, նրա մտավոր-հոգեկան արժանիքների մասին» և 1987 թ.-ին խոստովանում է, որ Ա.Խանջյանի հետ «անբռնազբոս, ամեն մի վարչականությունից ու ստորադասումից ազատ հարաբերություններ է ունեցել մինչև վերջ, մոտ ութ տարի»:
 «Մինչև վերջ»-ը Խանջյանի սպանությունն էր: Ուղիղ հիսուն տարի անց Ռ.Աթայանը «Խանջյաններին» արդեն «ասպետական հոգիներ» է անվանում: Արդեն, ի դեպ, շատերն էին այդպես անվանում, այդ շատերի մեջ՝ կրկին նաև Ռ.Աթայանը, առանց անդրադառնալու հիսուն տարի առաջվա իր գնահատականին, որ, լավ գիտեր, այն տարիներին ուղղակի մեղադրական էր:

1987 թ.-ին Հայաստանում, սակայն, դեռևս թույլ չէին տալիս հրատարակել բռնությունների գոհ Սուրեն Ղազարյանի վաղուց գրված և դարակնե-

⁷ Ռ. Աթայան: Ասպետական հոգիներ//Գարուն, 1987, թիվ 11:

⁸ Գ.Լազեան: Հայաստան եւ հայ դատը. Հայնոսու յարաբերութիւններու լոյսին տակ: Վերահրատարակեց «Արմէն» հրատարակչական մարմին, Երևան, 1991, էջ 337:

րում պահվող «Դա չպետք է պատահեր» վիպակ-հուշագրությունը (հայերեն այն հրատարակվեց արդեն հաջորդ տարի՝ 1988 թ.-ին, ռուսերեն՝ 1990 թ.-ին): Սա մի պարզ վկայություն է, թե որքան անհամարձակ էր Հայաստանում հասունանում երևույթներն իրենց անուսով կոչելու մշակույթը («խոհանոցային» քննարկումներում այն վաղուց կար):

Հայաստանի անկախացումից հետո՝ 1993-1996 թթ.-ին հայալեզու «Հայաստանի Հանրապետություն» և ռուսալեզու «Республика Армения» թերթերում հրատարակեցին 1930-1938 թթ. ընթացքում բնությունների ենթարկված անձանց անվանական ցուցակները: Ա. Մանուկյանը 1997 թ.-ին հրատարակեց բռնաճշմունքների ենթարկված հոգևորականների մասին աշխատանք⁹, իսկ 1999 թ.-ին՝ ՊԱԿ-ի նյութերով կազմված հանրագումարային աշխատանքը 1920-1953 թթ. քաղաքական բնությունների մասին¹⁰: Ա. Մանուկյանը, թերևս, միակ հեղինակն է, որ կարողացել է հետևողական հետազոտել Հայաստանի ՊԱԿի արխիվի՝ քաղաքական բնությունների վերաբերող նյութերը և հենց այդ նյութերին ճշգրիտ հղումներով 1998 թ.-ին «Արման Ամրիկյան» կեղծանունով հրատարակել է նաև քաղաքական բռնաճշմունքների առանձին դրվագներ ներկայացնող կիսագեղարվեստական-փաստագրական պատմվածքների ժողովածու¹¹:

Այնուհետև հրատարակվեցին քաղաքական բնությունների առանձին դրվագներին անդրադարձող հուշագրություններ, ձեռագրեր և ուսումնասիրություններ¹²: Հուշագրությունների մեջ առանձնանում են Ցեղասպանությունից փրկված և հետագայում խորհրդային քաղաքական բնություններին ենթարկվածների կենսագրական պատումները, որոնցում երբեմն ընտանիքի երկու սերնդի կյանքը ներկայանում է որպես չընդհատվող ողբերգության շա-

⁹ Ա. Մանուկյան: Հայ Առաքելական Եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930-1938 (ըստ ՊԱԿի փաստաթղթերի), «Ամրոց», Երևան, 1997:

¹⁰ Ա. Մանուկյան: Քաղաքական բռնաճշմունքները Հայաստանում 1920-1953 թթ., «Առերեսում-Անի», Երևան, 1999:

¹¹ Ա. Ամրիկյան: Անմեկնեյի են Աստծո ճանապարհները, «Առերեսում-Անի», Երևան, 1998:

¹² Կ. Ղալամբարյան: Ճակատագրի դեմ, Երևան, 2005; Ռ. Երեմյան: Դժոխքի դռներին, Փաստագրական պատմվածք, Երևան, 2005; Հ. Մինասյան: 111... բռնադատված հայ բժիշկներ, 1920-1954թթ., Կենսագրական բառարան, Գիրք Ա, Երևան, 2006; Սեդրա Դևեջյանը հրատարակեց Արմեն Սեանի «Բանտարկելալի մը հուշերը. Տառապանքի տարիներ», «Յեղիակային հրատարակություն», Երևան, 2008 գիրքը; Գ. Սմբատյան: Երկաթե վարագույրից այս կողմ, «Ձանգակ-97», Երևան, 2009; Ա. Կունդակչեան: Հայրենադարձների բռնաճշմունքները ստալինեան ժամանակաշրջանում, «Յեղիակային հրատարակություն», Երևան, 2010; Ա. Գրիգորյան: Եղիշե Չարենցի «Պատգամն» իբրև մեզոստիքոս, <http://cultural.am/hy/norutyunner/hodvacner/egishe-charenci-patgamn-ibrev-mezostiqos>; Ա. Միմոնյան: Չանգեզուրի գոյամարտի հերոս. Խաչատուր Մայիլյան, «Ձանգակ», Երևան, 2014; Հ. Սարգսյան: Ժամանակներ, որ երբևէ չպետք է վերադառնան (Հ. Սարգսյանի պապի՝ Գեղամ Սարգսյանի հուշերն են Կալիմա քաղաքավայրի մասին, էլեկտրոնային հարատարակություն՝ 04.11.2014), – <http://www.hayagitaran.info/2014/11/zhamanaknyer-vor-yerbyeve-chpyetkh-e-vyeradarnan/> ևն:

րունակական շղթա¹³, և խնդիր է առաջադրվում հասկանալ տևական տրավմայի մեջ ապրած մեր հասարակության և նրա առանձին խմբերի ապրումներն ու դրանց հետագա ազդեցությունը Հայաստանի բնակչության վարքի վրա: Դրանցից է, օրինակ, Արփենիկ Ալեքսանյանի «Սիբիրյան օրագիրը»¹⁴, որը հրատարակվեց հեղինակի զավակների և ազգականների ֆինանսական միջոցներով, նրա որդի, ազգագրագետ Հարություն Մարությանի և վերջինիս գործընկեր Էլզա-Բայիր Գուչինովայի ջանքերով: Ստալինիզմի շրջանի բռնաճնշումների գոհ, հայ մեծ երգիծաբան Լեո Կամսարի «Մահապարծ օրագիր» և «Բանտիս օրագիրը» աշխատանքները հրատարակվեցին միայն 2008 և 2010 թ.-ին՝ նրա թոռնուհի Վանուհի Թովմասյանի ջանքերով¹⁵: Թոռնուհիներ Գոհար և Զարուհի Մուրադյանների ջանքերով է հրատարակվել նաև Կոնստանտին Քեչեկի «Հիշողությունները»¹⁶, որում ուշագրավ նյութ կա Երևանում նրա ապրած տարիների քաղաքական մարդոտության երևույթների և Երկրորդ աշխարհամարտում գերիության տարիների մասին: Առհասարակ հիշված աշխատանքների հրապարակումների համար հաճախ պարտական ենք ոչ թե գիտական, գրական կամ քաղաքացիական միջավայրերին, այլ հեղինակների կամ նրանց զավակների մասնավոր ջանքերին:

Անհամեմատ քիչ է հայտնի, թե խորհրդային մյուս հանրապետություններում ստալինյան քաղաքական բռնությունների ենթարկված հայերի մասին ինչ նյութեր կան հրապարակի վրա: Որոշ աշխատանքներ հուշում են, որ դրանք խիստ ուշագրավ են, ինչպես Եվգենյա Եվանգուլովայի գիրքն և Լեւինգրադում իր ընտանիքի ողիսականի և այդ մեծ ընտանիքի անդամների աշխատանքային միջավայրերում տեղի ունեցած բռնությունների մասին¹⁷: Շատ հետաքրքիր գիրք է Մոսկվայից արքունի Մարինա Սպենդիարովայի՝ հայ մեծ երգահան Ալեքսանդր Սպենդիարովի դստեր, Ստալինի որդու ուսուցչուհու՝ Մարկ Գրիգորյանի առաջաբանով հրատարակված «Гроздь черемухи» գիրքը Տայշետի (Օզերլագ), Ուխտիժմլագ ճամբարներում իր և այլ ճամբարականների ապրած կյանքի մասին¹⁸: Ադրբեջանի հայերի «դաշ-

¹³ *Օ. Փանիկեան*: Լուսաբանութիւն, «Գրականութեան եւ արուեստի թանգարանի հրատարակչութիւն», Երևան, 2006; *Պ. Գրիգորյան*: Անպարտ Սասուն, մարտնչող Շենիկ, «Լուսակն», Երևան, 2012; *Ղ. Սիրունյան*: Յեյ Ուջան, հեյ ուջանցիներ, «Լուսակն», Երևան, 2013; *Ս.Մարտիրոսյան*: Սասունը Սեմալում, «Լուսապսակ», Երևան, 2014; *Ա. Չարությունյան*: Փշալարերի ողբը (առանց տարեթվի և հրատարակչության):

¹⁴ *Արբеник Александиян*: Сибирский дневник. 1949-1954 гг., Ереван: Гитутюн, 2007 (Антропология памяти 1):

¹⁵ *Լեո Կամսար*: Մահապարծ օրագիր (1925-1935), «Լուսաբաց» հրատարակչատուն, Երևան, 2008; Նույնի՝ Բանտիս օրագիրը, «Ամարաս», Երևան, 2010:

¹⁶ *К.Кечек*. Воспоминания, «Принт инфо», Ереван, 2014.

¹⁷ *Е.Евангулова*. Крестный путь, Санкт-Петербург, «Мемориал», 2000.

¹⁸ «Литературная Армения», 1990, թիվ 11, 12:

նակցականության» երեսուն տարվա սևեռուն հետապնդումների և առհասարակ բռնաճնշումների շրջանում խորհրդային առօրյայի մասին շատ հետաքրքիր տեղեկություններ են պարունակում Ա. Կիսիբեկյանի երկու ծավալուն հատոր կազմած «Հուշերը»¹⁹: Նույնն է պարագան նաև իր անձնական կյանքի միջոցով թիֆլիսյան բռնությունները ներկայացնող Ս. Ղազարյանի «Դա չպետք է պատահեր» գրքի դեպքում: Որևէ փորձ չի արվել նաև Խորհրդային Հայաստանում և ԽՍՀՄ այլ հանրապետությունների հայերի նկատմամբ իրականացված քաղաքական բռնությունների փոխկապերի առկայության և կամ չգոյության հարցը հասկանալու ուղղությամբ: Մինչդեռ բռնությունների շրջանում իրականաված էթնիկական դեպորտացիաների շարքում հայկական դեպորտացիաների առկայությունն առնվազն հուշում է բռնությունների ընթացքում նաև «հայկական թիրախավորման» մասեին:

Առայժմ դժվար է ասել, թե ԽՍՀՄ քաղաքական բռնությունների թեման Հայաստանում մտնում է գիտական քննարկումների դաշտ: Ճիշտ է, ՊԱԿի արխիվի նյութերի մեծ մասն արդեն հանձնվել է ՀՀ ազգային արխիվին, սակայն «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի ընդունումով 08.06.2004 թ.-ից սկսած դրանք մատչելի են մասամբ²⁰: Գիտական վերլուծությունների համար դրանք, այնուամենայնիվ, մատչելի են, բայց նվազել է գիտական և հանրային հետաքրքրությունը:

1980-ականների վերջերին թե՛ հրապարակային, թե՛ գրասենյակային քննարկումներով աշխուժացել էր խորհրդային շրջանի քաղաքական հետապնդումների և բռնությունների լյուստրացիայի թեման, սակայն այն ըստ էության որևէ հանգրվանի չհասավ և աստիճանաբար մարեց՝ տեղը զիջելով այլ առաջնահերթությունների: Որևէ որոշում չի ընդունվել ո՛չ ինստիտուցիոնալ մակարդակով, ո՛չ հանրային կարծիքում: Նույնիսկ լյուստրացիա երևույթի քիչ թե շատ պատշաճ ձևակերպում կամ ընդհանրական ընկալում չձևավորվեց: Մեծ հաշվով Հայաստանում այն հանգում է «մատնիչների բացահայտում» հասկացությանը, ընդ որում չի քննարկվել, և որևէ հստակ մոտեցում չկա՝ ինչ ասել է «մատնիչ» քաղաքական բռնությունների շրջանում: Շատերը գիտեն, որ մասնավորապես 1930-ականների քաղաքական ակտիվ բռնությունների շրջանում նույնիսկ հարազատների (քույր, եղբայր, ամուսիններ, զավակներ...) հարկադրում էին իրենց հարազատի դեմ ցուցմունք տալ: Քիչ չէին նաև պատրաստի «մատնագրերի» տակ անգրագետ մարդ-

¹⁹ Ա. Կիսիբեկյան: Հուշեր, հ. 1, 2, «Առասպել», Երևան, 2010:

²⁰ Այդ օրենքով «Մարդու անձնական և ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթերի օգտագործման մատչելիությունը սահմանափակվում է դրանց ստեղծման ժամանակից 100 տարի ժամկետով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ»: Համարվում է, որ մարդու դատական գործերը կարող են անձնական և ընտանեկան գաղտնիք պարունակել:

կանց պարզապես ստորագրել տալու հարկադրանքները: «Ինչպե՞ս պարզել մատնիչներին» հարցը ծնում է բազմաթիվ հարցականներ: Եվ վերջապես լյուստրացիան հանգեցնել «մատնիչների» պարզունակ գաղափարին նշանակում է անսահման նվազեցնել ռեժիմի ծավալները, ժամանակի ընդհանուր հասարակական մթնոլորտի ձևավորման սնուցման ակունքները և, ի վերջո, «քաղաքական հանցանքի» ու բուն հանցագործության խնդիրը տեղափոխել բարոյականության դաշտ:

Մեծ հաշվով Հայաստանում լուրջ քննարկում չի եղել քաղաքական բռնությունների գործում Կոմունիստական կուսակցության՝ որպես իշխանության գերակա, թերևս՝ միակ մարմնի, պատասխանատվության շուրջ: Որոշ չափով այս հարցը քննարկվել է Ա. Վիրաբյանի «Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը հետպատերազմյան ժամանակաշրջանում (1945–1957 թթ.)» դոկտորական ատենախոսության մեջ (2001)²¹, որում զգալի շեշտադրումներ կան նաև քաղաքական բռնությունների խնդիրներին, հատկապես 1949 թ. բռնաքտրին, սակայն ԽՍՀՄում կոմկուսի առհասարակ և Հայաստանի կոմկուսի դերը մասնավորապես, իրականում կարոտ է շատ լուրջ վերլուծության՝ ինչ չափով է այն ուղղորդել բռնությունների բովանդակությունը և ծավալը Հայաստանում և ինչ չափով է այն գործել բացարձակ մոսկովյան ենթակայությամբ: Անկասկած խիստ կարևոր է նաև Խորհրդային Հայաստանի կոմկուսի առանցքային դերակատարների անձնական մասնակցության և պատասխանատվության ծավալի խնդիրը, մի հարց, որ իսպառ բացակայում է թե վերլուծական տեքստերում, թե հանրային քննարկումներում: Բռնաճնշումների խնդիրը նվազեցվում է գործնական բռնություններ իրականացնող չեկիստների և քննիչների մակարդակի և փակվում է «ժամանակներն էին այդպիսին», «չէին կարող ոչինչ անել», «իրենց ձեռքը բան չկար» ընդհանուր բնույթի արդարացնող ձևակերպումներով: Տպավորությունն այնպիսին է, որ ԽՍՀՄում ստալինիզմի քաղաքական բռնաճնշումների «ժամանակները» մարդկային գործոնից անկախ, առանձին, ինքնուրույն օբյեկտիվ գոյություն էին, «ժամանակները» տնօրինում էին մարդկանց արարքները՝ անկախ վերջիններիս գիտակցությունից ու ներգրավվածությունից: Այս կրավորական դիրքորոշումը մի կողմից արտածվում է խնդրի ուսումնասիրության և վերլուծությունների պակասից, մյուս կողմից՝ տեղական մակարդակով բռնությունների «ժամանակները տնօրինողների» կամ նրանց մի մասի ժառանգների զգոն ներկայությունից:

Այս իմաստով ուշագրավ է, որ երեսնականներին և հետագայում «ստալինիզմի ոգուն» ծառայած և դրա տարածմանը նպաստած պետական

²¹ Ավելի ուշ հրատարակվեց *Ա. Վիրաբյան: Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով: Հասարակական-քաղաքական կյանքը 1945–1957 թթ.*, Երևան, 2001:

պաշտոնյաների, հասարակական գործիչների և պաշտոնական հեղինակությունների գործունեության նկատմամբ Հայաստանում այդպես էլ որևէ լուրջ հանրային վերաբերում չի եղել, առհասարակ որևէ արտահայտված թերահավատություն չի ձևավորվել, իսկ պաշտոնական ինստիտուտները շարունակել են և շարունակում են նպաստել նրանց հեղինակությունների հանրայնացմանը: Որպես ցայտուն օրինակ կարելի է բերել 2014 թ.-ին Ա. Միկոյանի արձանը Երևանի կենտրոնում տեղադրելու քաղաքային իշխանությունների նախաձեռնությունը, որին այս գրքում անդրադառնում են Գ. Շագոյանը և Լ. Աբրահամյանը, սակայն լուրջ օրինակ է նաև երեսնականների հայ գրողների մի ողջ խմբի «ակտիվ ստալինական» վարքի գնահատման ցանկացած փորձի ձախողումը հայաստանյան մի շարք ինստիտուտների կողմից: Խոսքը մասնավորապես 1930-ական թվականների մասին է, երբ գրական կյանքում դեռևս 1920-ականների վերջերից սկսված աշխույժ գրախոսություններն աստիճանաբար վերաճել էին քաղաքական մեղադրանքների՝ ընդգրկելով աճող քաղաքական բռնությունների ողջ բառամթերքը:

Համարյա քիչ թե շատ հայտնի բոլոր գրողները 1927-35 թթ.-ին թեժ վեճեր էին ծավալում պրոլետարական գրականության, կոմունիստական գաղափարախոսության և հանրային դաստիարակության հարցերում դրանց կարևորության շուրջ՝ միմյանց մեղադրելով դրանցից նահանջի զանազան մակարդակներում: Հատկապես դժվարին, սուր քաղաքական բանավեճերով հարուստ էին «Գրական թերթի» էջերը և 1934 թ.-ին ստեղծված գրողների միության քննարկումները, որոնց պետք է հաջորդեին արդեն 1936-37 թթ. բացահայտ տեռորի տարիները, երբ վեճերը փաստացի վերաճեցին բացահայտ քաղաքական մեղադրանքների: Այն իր գագաթնակետին հասավ 1936 թ. հուլիսին Հայաստանի Կ(բ)Կ կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանի սպանությանը և դրան հաջորդող շրջանում: Գրողներից մասնավորապես Ն. Չարյանի, Հ. Քոչարի, Գ. Աբովի և գրականագետ Ա. Ոսկերչյանի թունոտ, հրապարակային մեղադրանքները լրացնում էին ձերբակալված Գ. Մահարուն, Ա. Բակունցին, Վ. Թոթովենցին, Ս. Տարոնցուն, Վ. Ալազանին, Ե. Չարենցին և այլոց առաջադրված քաղաքական մեղադրանքները: Գրողների հիշյալ քառյակը գլխավորում էր գրական ասպարեզում ազգայնականության դրսևորումների, հակահեղափոխականության, դաշնակցական համակրանքների և, ամենասարսափելին՝ խորհրդայինից բացի մեկ այլ հայրենիք՝ Արևմտյան Հայաստանը կարոտելու և գովերգելու մեջ մեղադրանքները: Այդ տարիներին դա խիստ ծանր մեղադրանք էր: Հայաստանի գրողների միության 1937 թ. ապրիլի 16-ի ժողովի ելույթում Հր. Քոչարն այն տարիների համար ամենածանր քաղաքական մեղադրանքն է առաջադրում Ե. Չարենցին՝ բոլշևիկների և Մուստաֆա Քեմալի կողմից համաձայնեցված Հայաստան-Թուրքիա

սահմանների հարցի վերանայման խնդրի բարձրացումը: 1930-ականների քաղաքական տեռորի գազաթնակետին այս կարգի մեղադրանքների զոհերը գնդակահարվում էին: 1960-ականների սկզբներին, խրուշչովյան հալոցքի շրջանում, երբ քստրներից սկսեցին վերադառնալ ողջ մնացած գրողները և «միջանցքներում» սկսվել էին երեսնականների բռնությունների ու զրպարտությունների մասին խոսակցությունները, և Ն. Ջարյանին, օրինակ, սկսել էին հիշեցնել իր գրած ծանր, դատապարտող հոդվածները գնդակահարված և արքտրված գրողների մասին, Ջարյանը նամակ է ուղարկում նաև իր ջանքերով արքտրված և քսան տարի արքտրներում տառապած, բայց վերադարձած իր պատանեկության ընկեր ու նաև իր քաղաքական պիտակների զոհ Գ. Մահարուն, որում գրում է, թե իրեն «...անտանելի զարմանք է պատճառում այն ջանասիրությունը, որով մարդիկ, առանց պաշտոնի բերման, «ուսումնասիրում» են մեզանից քառորդ դար առաջ մոլեգնած իրադարձությունները...»²²: Ն. Ջարյանի վրդովմունքի առիթը Ռ. Իշխանյանի «Ակսել Բակունց. կենսագրություն և մատենագիտություն» գիրքն էր, պատճառը՝ այդ գրքում «քառորդ դար առաջ մոլեգնած իրադարձություններին» իր՝ Ջարյանի կործանարար մասնակցության մասին նյութերը:

Ն. Ջարյանի «անտանելի զարմանքը» միանգամայն համահունչ էր 1960-ականների հայաստանյան իրականությանը: Մեծ հաշվով զոհերը մնացել էին զոհեր, նույնիսկ արքտրից վերադառնալուց հետո նրանց՝ Գուրգեն Մահարուն, Լեո Կամսարին, մյուսներին կամ չէին հրատարակում, կամ հրատարակում էին մեծ ձգձգումներով, խիստ ընտրողաբար, իսկ երեսնականների հաղթողները շարունակում էին ձևավորել 60-ականների հասարակական մթնոլորտը և, Ջարյանի համար միակ ընդունելի ձևով՝ «պաշտոնի բերումով», որոշել գրական ճաշակն ու հրատարակությունները: Ճակատագրի հեգնանքով թե, ավելի ճիշտ, խորհրդային իրականության տրամաբանությամբ Հր. Քոչարն էր գլխավորում քաղաքական դատապարտումների ենթարկված հայ գրողների արդարացման գործընթացը: Ինքը՝ Քոչարը, նոր քաղաքական մթնոլորտում արդեն դառնում էր Արևմտյան Հայաստանի՝ «կորցրած Էրզրի կարտը» ներկայացնող գրողը և նույնիսկ ամբիոններից խոսում էր Ցեղասպանության զոհերին հուշարձան կանգնեցնելու անհրաժեշտության մասին՝ լիովին տեղավորվելով նոր հովերի թեյադրանքի մեջ և ստանալով «մեծագույն գրող», «ժողովրդի լավագույն գավակ», «հսկայական դերակատարում», «հայրենասերի խիզախ կեցվածք» շոյիչ որակավորումները: Մոռացվել էր, որ 1936 թ. օգոստոսի 7-ին տեղի ունեցած գրողների միության ժողովում նույն Քոչարն առաջարկել էր գրողներ Վ. Նորենցին

²² Գրիգոր Աճենյան: Բռնադատվածությունը Գուրգեն Մահարու նամակներում, <<http://culture.azg.am/?lang=AR&num=2007040702>; http://hay-em.do.am/_id/19/1951_6005.pdf>(11.11.2013):

ու Ա. Բակունցին որպես նացիոնալիստների հեռացնել կուսակցությունից, քանի որ նրանք «Մասուն վերադառնալ ցանկացող հեղոսներ» ունեն իրենց ստեղծագործություններում և նաև նրա հոետորական պաշտպանությամբ էին այդ գրողները դատապարտվել: Արդյունքում 60-ականներին այդպես էլ որևէ սկզբունքային, ազնիվ, բաց քննարկում չեղավ երեսնականների անկյունաքարային դերակատարների մասին:

Այդ փորձը փաստացի ձախողվեց նաև արդեն անկախ Հայաստանի Հանրապետության շրջանում: 2007-08 թթ.-ին գրողներ Մ. Ադալյանը («Վերնագիրը 1937 թվական»//«Գրական թերթ», 2007, հոկտեմբերի 19), Ռ. Հովսեփյանը («Գրական թերթ», 2007, նոյեմբերի 23), Վ. Գաբրիելյանը («Գրական թերթ», 2007, դեկտեմբերի 21) բարձրացրին Հայաստանի գրողների միության անդամներ Հ. Քոչարի, Մ. Չարյանի՝ 1937 թ. քաղաքական բռնաճշումների ընթացքում խաղացած բացասական դերի քննարկման անհրաժեշտության խնդիրը, բայց քննարկում չծավալվեց, չխոսվեց ո՛չ ժամանակաշրջանի, ո՛չ դրա հետևանքների մասին: Իսկ երբ արտոյալ գրող Գ.Մահարու որդին 2008 թ.-ից հրապարակումներով բարձրացրեց 1930-ականներից մինչև 1960-ականները հասարակական ընկալումներում և երկրի պաշտոնական վերաբերմունքում որպես պատվարժան մարդիկ ապրած Քոչար-Չարյան զույգի նկատմամբ վերաբերմունքի վերաբժևորման հարցը²³, գրողների միությունն ու ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտը, արդեն քննություն բռնած «*Ժամանակներն էին այդպիսին*»-ի հետևում թաքնվելով, խորհուրդ տվեցին դադարեցնել «*հին դարմանը քանուն տալու*», «*անցյալը փորկիղելու*» փորձերը:

Այդ նույն շրջանում Կապանի Առաջաձոր գյուղում, օրինակ, ընդհակառակը, քաղաքական բռնությունների զոհերի հիշատակի հավերժացման և քաղաքական բռնությունները դատապարտելու նպատակով հուշարձան է կանգնեցվում՝ «*Եվ մի ասա, թե ժամանակն է մեղավոր, և անմեղ ես դու*» մակագրությամբ: Բոլորը, ովքեր ապրում են քաղաքական բռնությունների ժամանակաշրջանում, քաղաքական բռնությունների բուն փաստի հնարավորությամբ ունեն մեղքի իրենց բաժինը, ահա սա է հուշարձանի մակագրության պատվիրանը: Այս մակագրությունը չի հավասարեցնում զոհերին և դահիճներին, չի փորձում դահիճներին էլ զոհ ներկայացնել՝ «*Ժամանակաշրջանի զոհ*», ընդհակառակը, այս մակագրությունը բոլորին մեղքի բաժին է ներկայացնում. ամեն մեկն ինչ-որ չափով թույլ է տվել, որ այդ «*Ժամանակաշրջանը*» լինի:

Հիշյալ մակագրության «հեղինակը» Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն Գ. Սմբատյանն էր, ով ինքն իրեն «հանձնարարել էր» սեփա-

²³ Ս. Չարյան, Գ. Քոչար: Սերունդները կներեն թե ոչ, <<http://www.akumb.am/showthread.php/27037-Ն-Չարյան-Գ-Քոչար-Սերունդները-կներեն-թե-ոչ>> (01.05.2014):

կան նյութերով հասկանալ՝ ինչ և ինչպես եղավ ոչ այնքան հեռավոր երեսնական թվականներին Կապանի բնակչության հետ: Կապան քաղաքի և Կապանի գյուղական բնակչությանը հայտնի բոլոր գոհերի ընտանիքներում մեկ առ մեկ գրուցելով, գրանցելով նրանց և համագյուղացիների հիշողությունները, հնարավորինս համադրելով դրանք արխիվային իրեն մատչելի նյութերի հետ, հընթացս նաև թանգարանի համար «առգրավելով» գրավոր նյութերը՝ փաստաթղթեր, ձեռագրեր, հուշագրություններ, լուսանկարներ և այլն, Գ. Սմբատյանը գրեց քսանականների-երեսնականների բռնությունների և դրանց հանրային ընկալումների մասին մի հիանալի աշխատանք²⁴: Աշխատանքի ընթացքը և բուն աշխատանքը, վավերական և վերլուծական լինելուց գատ, խաղացել են նաև այլ դեր. հարություն են տվել տագնապների և գուցե գիտակցված մոռացության տակ թաղված թեմային և «*այն ցարիներին*» դերակատարների մասին հարուցել հասարակական քննարկումներ մի տարածքում, որտեղ բոլորը միմյանց ճանաչում են: 2012-13 թթ., երբ մենք՝ երկու ազգագրագետներ, Կապանում հանդիպումներ էինք ունենում մարդկանց հետ՝ նրանց ընտանեկան հիշողությունները գրանցելու, համարյա բոլորի տներում առկա էր Գ. Սմբատյանի գիրքը, որի առանձին դրվագների ու կերպարների շուրջ դեռևս տաք քննարկումներ կային, բայց մեծ հաշվով առարկություններ չկային: Ահա իր այս գրքում Գ. Սմբատյանն ինքը կարծես թե առաջնորդվել է «*Եվ մի ասան, թե ժամանակն էր մեղավոր, և սևմեղ ես դու*» կարգախոսով:

Մեր հետազոտությունը շարունակվում է: Այս աշխատանքում մենք ներկայացնում ենք միայն մի շարք մասնավոր խնդիրներ՝ հիմնականում բանավոր պատմությունների և մեր դիտարկումների վերլուծություններով, անշուշտ հենվելով հրատարակված այլ նյութերի ու հետազոտությունների վրա: Չնայած քաղաքական բռնությունները Խորհրդային Հայաստանում, ինչպես և ողջ ԽՍՀՄում, փաստացի սկսվել են խորհրդայնացումից անմիջապես հետո և պարբերական ուժգնացումներով շարունակվել ստալինիզմի ողջ ընթացքում՝ 1930-50-ականների բացահայտ տոտալիտարիզմի բնույթով, մենք հրաժարվեցինք Խորհրդային Հայաստանի քաղաքական բռնությունների ժամանակագրական «գծային ընթացքը» ներկայացնելու գայթակղությունից՝ առայժմ ընտրելով առանձին խնդիրներ քննարկելու տարբերակը: Մասնավորապես Հ. Խառատյանն առավել մանրամասն կանգ է առել երեսնականների հայաստանյան բռնությունների «թեմատիկ առանձնահատկությունների» վրա՝ փորձելով առաջադրել նաև կոնկրետ քաղաքական պատճառների վարկած, Հ. Մարությանը փորձել է բնութագրել քաղաքական բռնությունների պատճառների ու մեղավորության խնդիրներում հանրային

²⁴ Գ. Սմբատյան: Երկաթե վարագույրից այս կողմ, Երևան, «Զանգակ-97», 2009:

գնահատականները և ընկալումները, Գ. Շագոյանը՝ քաղաքական բռնությունների որոշակի ազդեցությունը Խորհրդային Հայաստանի բնակչության առօրյալի ձևավորումներին, ինչպես նաև, Լ. Աբրահամյանի հեղինակակցությամբ, վերլուծել բռնությունների դերակատարների ու զոհերի հուշարձանացման խնդիրները: Հետազոտողներից յուրաքանչյուրն ինքն է որոշել այս գրքում ներկայացվող թեման, հարցադրումները և դրանց լուծումների մեթոդը: Պետք է խոստովանել, որ հեղինակների կողմից առաջադրված առանձին գաղափարներ «հեղինակային» են և ոչ թե «հեղինակային խմբի» համաձայնեցված կարծիք: Քննարկումներից հետո որոշվեց դրանք չհարթել և թողնել ընթերցողի դատին:

Այս աշխատանքում մենք ստիպված էինք սահմանափակվել Հայաստանի խնդիրներով և գլխավորապես «հայկական նյութով»՝ նվազագույնս անդրադառնալով ԽՍՀՄ ողջ կառավարման համակարգին և ողջ հասարակությանը վերաբերող բռնությունների ընդհանուր երևույթին: Հասկանալի է, որ Խորհրդային Հայաստանում տեղի ունեցած քաղաքական բռնությունները թե՛ հորիզոնական հարթությունում, թե՛ գծային ժամանակագրությամբ լիովին ԽՍՀՄ ընդհանուր բռնությունների մաս էին և ձևով ու բովանդակությամբ շատ չէին տարբերվում ընդհանուրից: Մենք չենք կարծում, որ Հայաստանը քաղաքական բռնությունների մասնավոր թիրախ էր և/կամ Հայաստանում իրավիճակն ավելի ողբերգական էր, քան հսկայածավալ երկրի որևէ այլ հատվածում: ԽՍՀՄ վարչաքաղաքական սուբյեկտների և բազմաթիվ ժողովուրդների նկատմամբ իրականացված քաղաքական բռնությունների ընդհանուր անցյալից Հայաստանում տեղի ունեցածի որոշ դրսևորումներով և դրանց նկատմամբ Հայաստանի հասարակության վերաբերմունքով սահմանափակվելու գլխավոր պատճառը ԽՍՀՄ ընդհանուր քաղաքական բռնությունների քննարկման համատեքստում բացակայող կամ շատ քիչ ներկայացված «հայկական նյութը» և «հայաստանյան դիսկուրսը» ներգրավելն է, որը, հույս ունենք, որոշ առարկայական նյութեր և կարծիքներ կտրամադրի ավելի ընդհանրական հետազոտությունների, քննարկումների համար:

Հուսով ենք, որ այս գիրքը կխթանի Խորհրդային Հայաստանում ԽՍՀՄ քաղաքական բռնությունների թեմայի նկատմամբ հանրային և գիտական հետաքրքրությունը: Գրքի հոդվածները շարադրելիս մենք մտովի երկխոսության մեջ էինք մեր հնարավոր ընդդիմախոսների և համախոհների հետ և շատ կուզենայինք, որ այդ երկխոսությունը կայանա:

Հ.Խառապյան

«ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ» ԴԻՍԿՈՒՐՍԸ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԶՈՎԵՐՆ ՈՒ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ

Խորհրդային Հայաստանի Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) և Պետական անվտանգության կոմիտեի (ՊԱԿ)²⁵ քաղաքական բռնաճնշումների ենթարկված քաղաքացիների արխիվային փաստաթղթերը հետազոտած Ա. Մանուկյանի ամփոփումների համաձայն՝ 1920-1953 թթ. ընթացքում Հայաստանում զանազան բնույթի քաղաքական բռնությունների զոհ են դարձել մոտ 42 հազար մարդ²⁶։ Ներկա պահին Հայաստանում արված այլ, ավելի մանրամասն հետազոտություն չկա, և վերլուծաբաններն առաջնորդվում են գլխավորապես բռնաճնշումների ենթարկված մարդկանց՝ Ա. Մանուկյանի կողմից ամփոփված թվերով ու որակական բնութագրերով. ինչ մեղադրանքներով են մարդիկ դատապարտվել, որո՞նք են եղել այդ մեղադրանքների փաստարկները, քանի՞սն են դատապարտվել դատարանով, քանի՞սը՝ արտադատարանական կառույցներով (տրոյկաներ)²⁷,

²⁵ 1920-1926 – Արտակարգ հանձնաժողով (ԱԿ); 1926-1934 – Պետական քաղաքական վարչություն (ՊԵՎ), 1934-1941 – Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատ (ՆԳԺԿ), 1941-1946, – Պետական անվտանգության ժողովրդական կոմիսարիատ (ՊԱԺԿ), 1946-1953 – Պետական անվտանգության նախարարություն (ՊԱՆ), 1953-1954-Ներքին գործերի նախարարություն (ՆԳՆ), 1954-1991 – Պետական անվտանգության կոմիտե (ՊԱԿ), այսօր՝ Ազգային անվտանգության ծառայություն (ԱՄԾ)։

²⁶ Ա. Մանուկյան։ Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953թթ., Եր., «Առերեսում» – Անի հրատ., 1999, էջ 239։

²⁷ Տրոյկա – Եռյակ։ ԽՍՀՄ ՆԳԺԿ թիվ 00447 հրամանով 30.07.1937 թ. ձևավորված քրեական հետապնդման արտադատարանական մարմին, որը հաստատում էր ձերբակալված մարդկանց՝ քննչական մարմինների կողմից արագացված կարգով իրականացված քննություններից բխող որոշումները, առանց դատական ընթացակարգերի, առանց ապացույցներ պահանջելու, մեղադրյալի և փաստաբանի բացակայությամբ։ Նույն թվականի օգոստոսի 7-ին հրամանում հավելում է կատարվել այն մասին, որ անձի ձերբակալության համար դատախազի սանկցիա չի պահանջվում։ Հայտնի են դեպքեր, երբ Տրոյկաները որոշում են կայացրել առիասարակ առանց մեղադրական գործի, ներկայացվել է միայն մեղադրյալի անունը, իսկ երբեմն էլ՝ մեղադրյալների անունները պարունակող ցուցակը։ Տրոյկաների նիստերը չեն

վարչական կարգով, ինչ պատիժներ են ստացել են:

Քաղաքական բռնաճնշումների գոհերի արխիվային փաստաթղթերի հետազոտման առաջին փորձի հեղինակ Ա. Մանուկյանը կանգնած էր լուրջ խնդիրների առաջ: Գրքի առաջաբանում հեղինակն զգուշացնում է. «Անիրա-
ժեշտ է հիշել, որ ՀՀ ԱԱԾ արխիվում հստակ առանձնացված չեն գուտ քաղա-
քական բռնաճնշումների համար դատապարտվածները: Այդ ցուցակներում
ընդգրկված են նաև լրտեսության, հայրենիքի դավաճանության, սահմանի
ապօրինի անցման, բանդիտիզմի համար դատապարտվածները, որոնց մե-
ծամասնությանը չի կարելի համարել քաղաքական բռնությունների գոհ, առա-
վել ևս, որ նրանց մի մասը չի արդարացվել անգամ մեր ժամանակներում»²⁸:

Ցավոք, «քաղաքական բռնաճնշումների» գոհ հասկացությունը Հա-
յաստանում, մեծ հաշվով, մինչև այսօր զգալիորեն անորոշ է: 1920-1930 թթ.-
ին «բանդիտիզմ», «լրտեսություն», «հայրենիքի դավաճանություն» հաս-
կացությունները հաճախ քողածածկում էին քաղաքական բռնաճնշումները
բոլշևիկների նախկին և ընթացիկ քաղաքական հակառակորդների կամ
քաղաքական տեռորի պայմաններում՝ նույնիսկ ուղղակի պարզ, քաղաքա-
կան գործընթացներին որևէ մասնակցություն չունեցող մարդկանց նկատ-
մամբ: Ամբողջատիրությունը հասունանում էր՝ իր հետ ամրագրելով հաս-
կացություններ, որոնց հանրային և նույնիսկ իրավական ընկալումները
շատ տարբեր էին, բայց դրանց վերաբերյալ Հայաստանում հետազոտու-
թյուններ և ուսումնասիրություններ չկան: Օրինակ, 1920-ական թթ. «բան-
դիտներ» (1920-ական թթ. նրանց անվանում էին «ղաչաղներ») էին բոլորը,
ովքեր բոլշևիկյան չեկիստների հետապնդումներից թաքնվում էին (հիմնա-
կանում՝ անտառներում, լեռներում, ձորերում, ավելի քիչ՝ հեռավոր ազգա-
կանների տներում): Թաքնվում էին մինչխորհրդային Հայաստանի իշխող
կուսակցության՝ Հայ Հեղափոխական Դաշնակցության (տեքստում այսու-
հետև՝ «Դաշնակցություն», կուսակցության անդամները համապատասխա-
նաբար՝ «ղաչակցական») նախկին անդամները, երբեմն՝ նաև նրանց մոտ
ազգականները, մինչբոլշևիկյան շրջանի ինքնապաշտպանական կոիվե-
րի մասնակիցները, բոլշևիկյան գաղափարախոսությունը չընդունողները և
այլն: Կապանում Վ.Պլոդյա Մարտիրոսյանը, ում նախ՝ պապին, ապա՝ հորը
ձերբակալել են (պապին գնդակահարել են, հորը՝ արտորել) պատմում է, որ
իր պապին դատապարտել են բանդիտներին սննդամթերքով ապահովելու
համար. «...մեղադրական եզրակացության մեջ գրված է՝ «սննդամթերքով
ապահովելը բանդիտներին», բայց ինչ բանդիտներ, զինվորներ են եղել,

արձանագրվել: Տրոյկաների կազմը բաղկացած էր երեք մարդուց, որպես կանոն՝ ԿԿ քար-
տուղարից, ՆԳԺԿ ղեկավարից և դատախազից: Վերացվել են 1938 թ. նոյեմբերի 17-ին
ՅամԿ(բ)Կ ԿԿ Զարդյուրոյի ՈՃ5/116 որոշմամբ:

²⁸ Ա.Մանուկյան: Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում, էջ 7:

ուրիշ տեղից եկածներ (Չանգեզուրը պաշտպանելու համար այլ վայրերից եկածներ – Հ.Խ.) են եղել»²⁹: Նրա պապը սննդամթերքով օգնել էր Չանգեզուրը պաշտպանած զինվորներին կամ աշխարհագորին, ովքեր բոլշևիկյան չեկիստների³⁰ հետապնդումներից հետագայում թաքնվում էին:

Հայոց լեզվի բացատրական բառարանում «ղաչաղ» թուրքերեն բառը բացատրվում է. «տաճկ.՝ Kačak – փախստական, որը հետապնդվում է իշխանությունների կողմից և անօրինական կյանք է վարում»³¹: «Անօրինական կյանք»-ը կարող է դիտվել նաև իշխանությունների քաղաքական հետապնդումներից թաքնվելը: Այստեղ մենք ունենք բառի ժողովրդական ընկալումների և լեզվաբանական բացատրության համընկնում, և դրանք երկուսն էլ «հանցագործ», «քրեական հանցագործ» իմաստը չունեն: Դրանք ձեռք են բերվում, հենց որ «ղաչաղ» բառը «բանդիտ» ձևով դառնում է իրավական եզրաբանության մաս: Ամենից ավելի հաճախ «ղաչաղներ» էին համարվում իշխանություններից թաքնվող զինվորական դասալիքները: Տվյալ դեպքում մենք գործ ունենք հակառակի հետ՝ դասալիք չդարձած նախկին կադրային կամ կամավոր զինվորականներ, որոնց անցյալի զինվորական ծառայությունները գործող իշխանությունների կողմից որակվում էին հանցագործություն՝ «բանդիտիզմ»:

Անշուշտ «բանդիտների» մեջ պետք է որ քրեական հանցագործներ նույնպես լինեին: Ավելին, տևական ժամանակ իշխանությունների հետապնդումներից հարկադրաբար թաքնվող մարդկանց մեջ կլինեին նաև քրեականացողներ, օրինակ՝ բնակչությունից ուտելիքի գողություն անողներ: Բայց առնվազն 1920-30 թթ.-ին այնքան շատ էին իշխանությունների կողմից հանցավոր որակված գործողությունների կամ հայացքների համար թաքնվող օրինավոր մարդիկ, որ հանրային գիտակցությունը, «բանդիտ» բառը նույնականացնելով իրենց ծանոթ և հաճախ շատ վստահելի, բայց իշխանությունների կողմից «բանդիտ» հայտարարված մարդկանց հետ, այդ բառին վերապահել է տվյալ ժամանակին և իրավիճակին համապատասխանող իմաստ՝ «իշխանությունների հետապնդումներից թաքնվող անմեղ մարդ»:

²⁹ Տե՛ս Վոլոդյա Մարտիրոսյանի պատմությունը // Armenia Total(itar)is, <<http://armeniatotalitaris.am/?p=1701>>:

³⁰ Չեկիստ – 1917 թ. բոլշևիկյան հեղափոխությունից հետո հակահեղափոխականների դեմ պայքարելու նպատակով Ռուսաստանում կազմավորված Արտակարգ հանձնաժողովի ռուսերեն անվան (Чрезвычайная комиссия) առաջին տառերից կազմված հապավում (ЧК), որի աշխատակիցներին կարծ անվանում էին չեկիստ և հենց այդպես էլ ընդունվեց խորհրդայնացած մյուս հանրապետություններում: Արտակարգ հանձնաժողովի թե՛ անունը, թե՛ ֆունկցիաները հետագայում մի շարք փոփոխությունների են ենթարկվել, բայց չեկիստ բառը միշտ մնացել է շրջանառության մեջ: Հանրային օգտագործման մեջ չեկիստ բառը լայն իմաստով օգտագործվում էր նաև «պաշտոնական մարմինների թույլտվությամբ խորհրդային քաղաքացիներին հետապնդող մարդ» իմաստով:

³¹ Ստ.Մալխասյան: ԶԲԲ, հ. 3, Եր., «Հայպետհրատ», 1944, էջ 184, Ղաչաղ:

Ա. Մանուկյանն իր աշխատանքի հենց սկզբում՝ 12-րդ էջում, ասում է, որ 1920-30 թթ.-ին հետապնդումները պայմանավորված էին «դաշնակցական վտանգի գոյությունը»³²: 1920-1923 թթ.-ին բոլշևիկյան տեռորը դաշնակցականներին համոզել էր, որ ստեղծված պայմաններում հասարակության և հենց իրենց համար չարյաց փոքրագույնը իրենց գործունեությունը դադարեցնելն է, և Կոմունիստական կուսակցության փաստացի հրահանգով 1923 թ.-ին շարքային դաշնակցականների համագումար էր հրավիրվել, նախապես ծրագրված օրակարգի համաձայն համագումարում ելույթ ունեցող դաշնակցականներն արել էին հնարավորը՝ ինքնախարազանելով և ծայրաստիճան անվանարկելով կուսակցության անցյալն ու ներկան, խոսել էին Դաշնակցության կողմից «հայ աշխատավոր ժողովրդի գլխին նորանոր փորձանքներ բերելու» վտանգի մասին և ամեն ինչ արել էին իրենց նվիրվածությունը բոլշևիկներին վկայելու համար: Կազմվել է համագումարի ողջ ընթացքի, բոլոր ելույթների արձանագրությունը և հրատարակվել³³: Մեծ հաշվով Հայաստանում արտահայտված քաղաքական այլախոհությունն չկար: Կովկասի քաղաքական, այդ թվում՝ հեղափոխական ակտիվության կենտրոնները Բաքուն և Թիֆլիսն էին, և նույնիսկ հայ բոլշևիկները գործում և կայանում էին գլխավորապես այդ կենտրոններում կամ Ռուսաստանում: Հայաստանի խորհրդայնացումից հետո բոլշևիկյան կուսակցական իշխանություն ձևավորելու համար հենց այդ տարածքներից էին ուղարկվում կուսակցական գործիչները: Ուշագրավ է, որ Հայաստանի բոլշևիկյան իշխանությունները զգալիորեն պահիվ էին նույնիսկ ներբոլշևիկյան քննարկումներում: Հայաստանի Կոմկուսը, օրինակ, զարմանալիորեն կրավորական էր ԽՍՀՄ կազմավորման սկզբունքների հարցերը քննարկելիս, իսկ դա դեռևս հնարավոր էր: 1922 թ.-ին, երբ քննարկվում էր ԽՍՀՄ կազմավորման սկզբունքների հարցը, և օրակարգում Ստալինի առաջարկն էր այն մասին, որ խորհրդային դարձած Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի հանրապետությունները պետք է մտնեն Խորհրդային Ռուսաստանի կազմի մեջ ինքնավարության իրավունքով, գլխավորապես Ուկրաինայի և Վրաստանի կոմկուսներն էին, որ բացահայտ և սուր պայքար մղեցին դրա դեմ՝ պահանջելով ԽՍՀՄը կազմավորել ներքին հարցերում ինքնուրույն հանրապետություններից: ԽՍՀՄ կազմավորման նպատակով 1922 թ. դեկտեմբերի 30-ին հրավիրված ԽՍՀՄ Խորհուրդների առաջին համագումարին ԽՍՀՄ կազմավորման մասին ներկայացված պայմանագրի քննարկելիք տեքստում խորհրդային դարձած երկրների միության սկզբունքն արդեն ներկայացված

³² Ա. Մանուկյան: Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում, էջ 12:

³³ Նախկին շարքային դաշնակցականների համահայաստանյան համագումարի արձանագրությունները, Յերեվան, 1928:

էր հանրապետությունների ֆեդերացիայի տեսքով: Այնուամենայնիվ ֆեդերատիվ հանրապետությունների բոլոր պետական ֆունկցիաները տրված էին ԽՍՀՄ կառավարման կենտրոնական մարմիններին, այդ թվում ներքին խնդիրներին վերաբերող դատա-իրավական, կրթական, առողջապահական բոլոր համակարգերը, բյուջեների մուտքերի և ելքերի ծրագրավորումը ևն³⁴: Այդ տեսքատում ԽՍՀՄ ապագա հանրապետությունների նկատմամբ իսպառ բացակայում էր «պետական» բառը, նույնիսկ լեզվի հարցում: Այս հարցում մասնավորապես գրված էր, որ «Միության Ժողկոմի և Կենտգործկոմի որոշումները տպագրվում են միութենական հանրապետությունների **ընդհանուր օգտագործման լեզուներով**» և թվարկված էին դրանք՝ ռուսերեն, ուկրաիներեն, բելոռուսերեն, վրացերեն, հայերեն, թուրքերեն³⁵: Մինչդեռ 1922 թ. մարտի 2-ին ընդունված Վրաստանի սահմանադրությամբ վրացերեն լեզուն արդեն իսկ հայտարարվել էր **պետական** լեզու: 1923 թ. դեկտեմբերի 30-ի ԽՍՀՄ Խորհուրդների առաջին համագումարին ուկրաինական և վրացական պատվիրակների ջանքերով ԽՍՀՄ կազմավորման հռչակագրի և պայմանագրի ստորագրումը հետաձգվեց մինչև երկրորդ համագումար³⁶:

Այդ հիշարժան համագումարին Վրաստանի և Ուկրաինայի պատգամավորների կողմից բարձրացված վիճահարույց խնդիրների շուրջ անհամաձայնության պատճառով պայմանագիրը չի ստորագրվել և որոշվել է հանձնարարել Կենտգործկոմին նախապատրաստել պայմանագրի և հռչակագրի վերջնական տեքստերն ու դրանք ներկայացնել խորհուրդների երկրորդ համագումարի հաստատմանը³⁷:

Վրաստանում և Ուկրաինայում դրանք իսկապես կրքոտ քննարկվում էին³⁸: Վիճելի հարցերը մինչև երկրորդ համագումար ցայտուն ձևակերպվեցին 1923 թ. ապրիլի 17-25-ին տեղի ունեցած Ռուսաստանի Կոմունիստական

³⁴ Договор об образовании Союза Советских Социалистических Республик 30 декабря 1922 г., у I Съезд советов СССР. Стенографический отчет. М., Изд. ЦИК СССР, 1923. Приложение 1-е. С.4-7, – http://constitution20.ru/ckeditor_assets/attachments/43/dogovor_ob_obrazovanii_sssr_1922.pdf

³⁵ Տե՛ս Договор об образовании Союза Советских Социалистических Республик 30 декабря 1922г. 14-րդ կետը: Տե՛ս նաև I Съезд советов СССР հոդվածը *Г.В. Якимович*. Образование СССР (1917–1924 гг.) գրքում, – [http://leninism.su/books/3578-obrazovanie-sssr19171924gg.html?showall=&start=9\(17.12.2014\):](http://leninism.su/books/3578-obrazovanie-sssr19171924gg.html?showall=&start=9(17.12.2014):)

³⁶ Նույն տեղում:

³⁷ Декларацию и союзный договор в основном утвердить... Поручить ЦИКу Союза ССР подготовить ко второму съезду советов Союза окончательный текст декларации и союзного договора и представить его на окончательное утверждение второго съезда, – I съезд Советов СССР, Стенографич. отчет, М, 1923; Съезды Советов Союза ССР, Союзных и Автономных Советских Социалистических Республик. Сб. документов. 1917-1936, т. 3, М., 1960, էջ 20:

³⁸ *Л.Б.Каменев*. Очередные задачи Компартии Грузии. Доклад на первом заседании Второго съезда Компартии Грузии 14 марта 1923г. Тифлис, 1923, էջ 27:

բոլշևիկյան կուսակցության 12-րդ համագումարում, որի օրակարգի 6-րդ կետով քննարկվում էր «ազգային հարցը»: Այստեղ կրթերը շատ բորբոքված էին: Վրաստանից սուր ելույթ է ունեցել Դ.Միլիվանին՝ պահանջելով հստակեցնել ազգային հարցի և ԽՍՀՄը ֆեդերատիվ սկզբունքով կազմավորման քաղաքական լուծումը, նրան պաշտպանել են Ֆ.Մախարաձեն, Շ.Էլիավան, Կ.Ցինցաձեն, Դ.Օրախելաշվիլին, նրանց դեմ ելույթներ են ունեցել Ա.Շնուկիձեն և Ս.Օրջոնիկիձեն: ԽՍՀՄ կազմավորման պայմանագրի առանձին կետերի դեմ վրացական դիմադրությունն այնքան ուժեղ էր, որ Ստալինը, ըստ երևույթին, Անդրկովկասի մյուս երկու երկրների օգնության կարիքն է ունեցել: Ադրբեջանի պատվիրակ Ռ.Ախունդովն առաջարկել է պայքարել վրացական թեքումների դեմ: Հայաստանից ելույթներ չեն եղել, բայց հայերից ելույթ է ունեցել Ռուսաստանի պատվիրակ Ա.Միկոյանը՝ հանդես գալով «ազգային հանրապետությունների» իրավունքները պաշտպանող Բ.Միլիվանու դեմ: Ե.Բուխարինը ելույթ է ունեցել ուկրաինական նացիոնալիզմի և պետլյորովականների վնասարարության դեմ: Լարված քննարկումներում «տեղական իրավունքների» պաշտպանությամբ Դրիմից ելույթ է ունեցել Մ.Սուլթան-Գալիկը: Արդյունքում ազգային հանրապետությունների շահերից ելույթ ունեցողների նկատմամբ Ստալինի ելույթում մեղադրանքներ են հնչել նրանց «հակակուսակցական», «հակատվետական» պահվածքի մասին, իսկ Մ.Սուլթան-Գալիկին ուղղակի մեղադրել է բասմաչական շարժումներում նրա կապերի համար և նույնիսկ օգտագործել «սուլթան-գալիսություն» արտահայտությունը՝ որպես ընդգծված նացիոնալիզմի ձևակերպում³⁹:

Շուտով ԽՍՀՄ պայմանագրի վերջնական տեքստի հաստատման հարցն առհասարակ օրակարգից դուրս է եկել և ԽՍՀՄը կազմավորվել է մինչ այդ անկախ համարվող խորհրդային հանրապետություններից՝ առանց ռատիֆիկացված պայմանագրի, փաստացի՝ 1924 թ. ԽՍՀՄ առաջին սահմանադրության հաստատումով, որում նույնիսկ միութենական հանրապետությունների համար 1922 թ. պայմանագրով նախատեսվող իրավունքներն էին կրճատված⁴⁰: Մինչև հիմա փաստացի պարզ չի՝ ԽՍՀՄ կազմավորման պայմանագիրը միջազգային փաստաթուղթ է, թե՛ ներքին օրենք, ինչպես պարզ չի, թե՛ չստորագրված ու չռատիֆիկացված պայմանագիրն առհասարակ իրավական ինչ կարգավիճակ ունի և դրն է ԽՍՀՄ կազմավորումը հաստատող իրավական ակտը՝ առաջին համագումարում պայմանակա-

³⁹ Ств «Национальный вопрос на партийных форумах 1923г.» հոդվածը Գ.Վ. Якимович. Образование СССР (1917-1924гг.) գրքում, – <http://leninism.su/books/3578-obrazovanie-sss19171924gg.html?showall=&start=10> (17.09.2015):

⁴⁰ Ուկրաինայում մասնավորապես քննարկվում է այն հարցը, որ Ուկրաինան առհասարակ պայմանագրային միություն չի ստորագրել և պայմանագրով կապված չի եղել ԽՍՀՄի հետ: Ств В. Буткевич. Связана ли Украина союзным договором 1922 года? գրքից հատված «Права-да Украины», 10 декабря 1991, No215 (14980), – [http://unknownwar.info/_408/\(17.09.2015\)](http://unknownwar.info/_408/(17.09.2015)):

նորեն ընդունված, բայց չստորագրված պայմանագիրը, թե՛ 1924 թ. ԽՍՀՄ առաջին սահմանադրությունը:

Հետագայում դասագրքերում և հանրագիտարաններում միշտ գրվել է, որ ԽՍՀՄ կազմավորման պայմանագիրն ընդունվել է 1922 թ. դեկտեմբերի 29-ին չորս հանրապետությունների կողմից, իսկ 1924 թ. հունվարի 31-ին խորհուրդների երկրորդ համագումարը հաստատել է ԽՍՀՄ սահմանադրությունը, որի բաղադրիչներից էր ԽՍՀՄ կազմավորման պայմանագիրը⁴¹: ԽՍՀՄը կազմավորող սուբյեկտների կողմից ԽՍՀՄ կազմավորման պայմանագիրը չստորագրելու հարցը միշտ խոհեմաբար լուծյան է մատնվել և նույնիսկ ԽՍՀՄ կազմալուծումից հետո այդ հարցը շրջանցվում է⁴²:

Հայաստանի Կոմկուսի մասնակցությունը քննարկվող հարցերին չկար: Հայաստանում բոլշևիկների մեջ եթե նույնիսկ թաքնված քաղաքական այլախոհություն կար, ապա քաղաքական քննարկումներ մեծ հաշվով չկային, եթե այդպիսիք չհաշվենք կուսակցության գաղափարախոսությունը կամ կառավարման հարցերը չվիճարկող այնպիսի խնդիրներ, ինչպես, օրինակ, ազգային այբուբենները վերացնելու և լեզվի ռեֆորմի շուրջ կարծիքների արտահայտումն էր: Այբուբենների հարցում ծրագրվում էր, որ ԽՍՀՄ ոչ ուս բոլոր ժողովուրդներն անցնեն լատիներեն գրի: Գաղափարը ծնվել էր Խորհրդային Ռուսաստանում դեռևս մինչև Հայաստանի խորհրդայնացումը, և հայերից այս հարցը դեռևս 1919 թ.-ից առաջ էր տանում այն տարիներին ՌԽՖՍՀ լուսավորության ժողկոմատի ազգային փոքրամասնությունների բաժնի վարիչ Պողոս Մակինցյանը⁴³: 1920 թ. Հայաստանի բոլշևիկացումից հետո այն զուգակցվեց «լեզվի ռեֆորմի»՝ 1922 թ.-ից Հայաստանի մտավորական շրջանակներում զգուշորեն քննարկվող հարցերին: Ոչ մեկի համար, սակայն, գաղտնիք չէր, որ ԽՍՀՄում լեզվի ռեֆորմը Մոսկվայի բոլշևիկների քաղաքական որոշումն է և «քննարկումներ» ձևացնելը պատվիրված է: Հայերի դեպքում իրական քննարկումները ծավալվում էին Հա-

⁴¹ Съезды Советов Союза ССР, Союзных и Автономных Советских Социалистических Республик. Сб. документов. 1917-1936, т. 3, М., 1960, с. 18-22 Договор об образовании СССР, – [http://dic.academic.ru/dic.nsf/bse/85166/%D0%94%D0%BE%D0%B3%D0%BE%D0%B2%D0%BE%D1%80\(17.12.2014\)](http://dic.academic.ru/dic.nsf/bse/85166/%D0%94%D0%BE%D0%B3%D0%BE%D0%B2%D0%BE%D1%80(17.12.2014)):

⁴² Образование СССР (1917-1924гг.), 1 Съезд Советов, – [http://istmat.info/node/26883\(17.12.2014\)](http://istmat.info/node/26883(17.12.2014)):

⁴³ Դ. Գասպարյան: Փակ դռների գաղտնիքը, Եր., «Ապոլլոն», 1994, էջ 471: Պողոս Մակինցյան-(1884-1938), 1919-20 թթ.-ին՝ ՌԽՖՍՀ լուսավորության ժողկոմատի ազգային փոքրամասնությունների բաժնի վարիչ, 1920-21 թթ.-ին՝ Յամառուսաստանի արտակարգ հանձնաժողովի ազգային փոքրամասնությունների մամուլի բյուրոյի վարիչ, 1921 թ.-ին՝ Հայաստանի Ներքին գործերի, ապա՝ Լուսավորության ժողկոմ, 1922-24 թթ.-ին՝ դիվանագիտական աշխատանք Կ.Պոլսում, 1925-1927 թթ.-ին՝ Միլանում և Փարիզում, ապա՝ Թիֆլիսում գտնվող Կովկասագիտության ին-տի աշխատակից: 1937 թ.-ին ձերբակալվել է և գնդակահարվել 1938 թ.-ին «աջ տրոցկիստ, նացիոնալիստ» մեղադրանքով:

յաստանի մտավորականների անվճռականությունից խիստ հիասթափված հայկական Սփյուռքում. «*Միս հինգ փարփից ի վեր է, որ արդասահմանեան հայ թերթերի էջերում, գիրուն և անգիրուն հայրենակիցներ աղաղակում են երևանեան անապարի դէմ... Սպասում են, որ երևանեան ուղղագրական հանձնաժողովը՝ անդամալոյժ այդ կրիան՝ քարեհաճի յայտնել հայ ազգին իր «հեղինակաոր» և վերջնական որոշումը: Մակայն նրանք, որ ճանաչում են հանձնաժողովի անդամներին և այն ցարօրինակ մթնոլորտը, որի մէջ տեղի են ունենում այդ պատրասկան և վեհերոյր ակադեմականների աշխատանքները, քաջ գիտեն, որ մրոպած թղթերի, քացարդութիւնների, պարասխանների, վերլուծումների այդ լեռը պիտի ծնի մոկն չնչին և այն էլ հիւսնը»⁴⁴: ԽՍՀՄում, այդ թվում՝ Հայաստանում լեզվի ռեֆորմն, իհարկե, արեցին, բայց սեփական այբուբեն ունեցող ժողովուրդներին (ոռուսերից գատ՝ հայեր, վրացիներ) թույլ տվեցին շարունակել օգտագործել 1500-ամյա ավանդույթը: 1920-ականները հասարակական և մշակութային հեղաշրջումների սկիզբն էին, և «կուլտուրական հեղափոխությունը» դեռևս որոշ վերապահումներ ուներ:*

Գուցե որոշ իրավունքների համար վրաց բուլշևիկների պայքարելու կամքն էր պատճառը, որ ԽՍՀՄի կազմի մեջ 1922-36 թթ.-ին որպես առանձին հանրապետություն մտած Անդրֆեդերացիայի⁴⁵ կուսակցության առաջին քարտուղարները միշտ Վրաստանից և վրացի են եղել՝ բացի ընդամենը հինգ ամսով՝ 27.11.1929-8.5.1930 թ.-ին այս պաշտոնին փաստացի նշանակված Ալեքսանդր Կրինիցկու⁴⁶:

⁴⁴ Կոստան Զարեան: Ուղղագրութեան խնդրի առթիւ, «Յայրենիք» օրաթերթ, 1927, 28 օգոստոսի:

⁴⁵ Անդրֆեդերացիա – Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի խորհրդային հանրապետությունների միավորում՝ «Անդրկովկասյան խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն» անվամբ: Կազմավորվել է 1922 թ. դեկտեմբերի 13-ին՝ Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարում, հաստատելով, որ ֆեդերացիայի կազմի մեջ հանրապետությունները մտնում են անկախ երկրներ: Նույն դեկտեմբերի 13-ին հաստատվել են ընդհանուր սահմանադրություն, Անդրկովկասյան Կենտրոնական գործադիր կոմիտե և կառավարություն՝ Անդրֆեդերացիայի ժողովրդական կոմիսարների խորհուրդ: 1922 թ. դեկտեմբերի 30-ին որպես մեկ առանձին, միասնական հանրապետություն մտել է ԽՍՀՄ կազմի մեջ՝ դառնալով ԽՍՀՄ հիմնադիր հանրապետություններից մեկը (Ռուսաստանի Ֆեդերացիայի, Ուկրաինայի, Բելոռուսիայի և Անդրֆեդերացիայի խորհրդային հանրապետություններ): Լուծարվել է 1936 թ.-ին, և 1936 թ. ԽՍՀՄ Սահմանադրությամբ Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը դարձել են ԽՍՀՄ առանձին հանրապետություններ: 1937 թ.-ին նրանցից յուրաքանչյուրն ընդունել է իր սահմանադրությունը:

⁴⁶ Սերգո Օրջոնիկիձե (1922-26), Իվան (Մամիյա) Օրախելաշվիլի (1926-29), Ալեքսանդր Կրինիցկի (1929-30), Վիսարիոն Լոմինաձե (1930 թ. նոյեմբեր – 1930 թ. դեկտեմբեր), Լավրենտի Քարթվելիշվիլի (1930-1931), կրկին Իվան (Մամիյա) Օրախելաշվիլի (1931-1932), Լավրենտի Բերիա (1932-1937): Անդրֆեդերացիայի կուսակցական վեց ղեկավարներից մեկը՝ Լոմինաձեն, չդիմանալով սկսված քաղաքական բռնաճնշումներին, ինքնասպանություն է գործել 1935 թ.-ին, երկրորդը՝ Օրջոնիկիձեն ինքնասպան է եղել 1937 թ. փետրվարին, Օրա-

Գաղափարավարչական հարցերում խորհրդային տիրոջթում դեռևս շարունակվող քննարկումներին Հայաստանի բոլշևիկյան ղեկավարության կրավորականությունը թերևս կարելի է բացատրել նաև նրանով, որ Հայաստանում նրանք ո՛չ գաղափարական, ո՛չ քաղաքական, ո՛չ մարդկային հենարան չունեին: Մինչև բռնի խորհրդայնացումը «պրոլետարիատ» չունեցող Հայաստանին խորթ բոլշևիկյան գաղափարախոսությունը Հայաստանում շատ համակիրներ չէր գտնում: Խորհրդայնացված Հայաստանը ղեկավարելու համար ուղարկվում էին Ռուսաստանում, Բաքվում, մասամբ՝ Թիֆլիսում կայացած և հեղափոխական կամ վարչական աշխատանքի փորձ կուտակած հայ բոլշևիկներին: Մինչև Ստալինի մահը Հայաստանի Կենտկոմի քարտուղարներից ոչ մեկը Խորհրդային Հայաստանի զբաղեցրած տարածքում չի ծնվել, չի մեծացել և մեծ հաշվով Հայաստանի խնդիրների կողող չէին: Հայաստանյան իրականությանը կարող էին ծանոթ լինել Շուշիում ծնված և մեծացածները, բայց նրանց հասունացման և հեղափոխական միջավայրը նույնպես Բաքուն և Ռուսաստանն էին: Մյուս կողմից Հայաստանի Կենտկոմի քարտուղարները, Ժողկոմխորհի նախագահները և ժողկոմներն այնքան կարճաժամկետ էին իրենց պաշտոններում, այնքան հաճախ էին նրանց տեղափոխում նոր պաշտոնների կամ հեռացնում զբաղեցրած պաշտոններից, որ հազիվ էին հասցնում կամ առհասարակ չէին հասցնում ծանոթանալ Հայաստանին⁴⁷:

խելաշվիլուն և Քարթվեղիշվիլուն հետապնդել և 1937 թ.-ին գնդակահարության է դատապարտել Վրաստանի ՆԳԺԿ՝ փաստացի Լ. Բերիայի հրահանգով, Կրիմիցկոյն ձերբակալել և գնդակահարել են 1937 թ. հոկտեմբերին Ռուսաստանում: Միայն ԽՍՀՄ բռնությունների ակտիվ և նախաձեռնողական մասնակից Լ. Բերիան է ապրել մինչև Ստալինի մահը:

⁴⁷ **Սարգիս Կասյան** (1876-1937): 1920 թ.-ին՝ ԶԶ Զեղկոմի նախագահ: Կասյանն է ստորագրել Հայաստանում սովետական կարգերի հաստատման ղեկավարացիան: Ծնվել է 1876 թ.-ին Շուշիում, գործել է Բաքվում և Թիֆլիսում: Հայաստան է եկել հենց 1920 թ.-ին: 1937 թ.-ին գնդակահարվել է: **Գևորգ Ալիխանյան** (Ալիխանով), ծնվել է Թիֆլիսում, գործել է Թիֆլիսում և Բաքվում: Հայաստան եկել է 1920 թ.-ին, ԶԶ ԿԿ ԿԿ առաջին քարտուղար է եղել 1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. մարտ: 1937 թ.-ին գնդակահարվել է: **Սարգիս Լուկաշին (Սրապիոնյան)**, ծնվել է 1885 թ.-ին Նոր Նախիջևանում (Դոնի Ռուսոսով): Սովորել է Սանկտ Պետերբուրգում, գործել է Մոսկվայում, 1918-21 թ.-ին՝ Դոնի մարզում: Հայաստան է եկել 1921 թ.-ին, ԶԶ ԿԿ ԿԿ առաջին քարտուղար է եղել 1921 թ. մարտից 1922 թ. ապրիլ: 1922 թ. մայիսից 1925 թ. հունիս՝ Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ: 1937 թ.-ին գնդակահարվել է: **Աշոտ Գովհաննիսյան**, ծնվել է 1887 թ.-ին Շուշիում: Սովորել է Գերմանիայում, գործել է Բաքու-Մոսկվա-Դոնի Ռուսոսովում, Հայաստան է եկել 1920 թ.-ին, 1920-1921 թ.-ին՝ Հայաստանի առաջին լուսժողովուրդ, 1922-1927 թթ.-ին՝ Հայաստանի ԿԿ ԿԿ առաջին քարտուղար: 1937 թ.-ին ձերբակալվել է, արտորվել, վերադարձել է 1943 թ.-ին, արդարացվել՝ 1954 թ.-ին: **Հայկ Գովսեփյան**, ծնվել է 1891 թ.-ին Կարսի մարզում, սովորել և աշխատել է Մոսկվայում: Հայաստան է եկել 1921 թ.-ին: Հայաստանի ԿԿ ԿԿ առաջին քարտուղար է եղել 1927-1928 թթ.-ին: 1937 թ.-ին գնդակահարվել է: **Հայկազ Կոստանյան**, ծնվել է Թիֆլիսում, սովորել Ռուսաստանում՝ Սարատովում, գործել է Թիֆլիսում, Բաքվում: Հայաստան է եկել 1920 թ.-ին: 1923-25 թթ.-ին կրկին Թիֆլիսում էր, 1925-28 թթ.-ին՝ Մոսկվայում: Հայաստանի ԿԿ ԿԿ առաջին քարտուղար է եղել 1928-1930 թթ.-ին: 1937 թ.-ին գնդակահարվել է: **Աղասի Խանջյան**, ծնվել է 1901 թ.-ին Վանում, 1915 թ.-ին ընտանիքի հետ Ցեղասպանությունից փախստական հայտնվել է Երևանում,

Խորհրդայնացված Հայաստանում կոմունիստների գլխավոր խնդիրը «ազգային պետության» դաշնակցական համարվող գաղափարներների դեմ պայքարելն էր և այդ «գլխավոր խնդիրը» դարձել էր Հայաստան գործուղված բոլշևիկների միակ քաղաքական նպատակը: Հնարավոր է, որ ԽՍՀՄ կազմավորման հարցերը քննարկելիս նրանք նույնիսկ վախենում էին խոսել «հանրապետությունների իրավունքներից», որպեսզի խուսափեին «ազգային պետություն»=դաշնակցություն պիտակից: Դրա փոխարեն, չնայած Դաշնակցության ինքնալուծարմանը, Հայաստանում շարունակում էին փնտրել նրանց այլախոհության դրսևորումները: Բոլշևիկյան հայաստանյան չեկիստները շարունակում էին հայտնաբերել նորանոր «նախկին ու ներկա» դաշնակցականների և փողիարել «դաշնակցական վտանգի» մասին: Իհարկե, Դաշնակցու-

տվորել է Գևորգյան ծննդանուն և Մոսկվայի Կարմիր պրոֆեսուրայի համալսարանում: Գործուղվել է Մոսկվայից 1928 թ.-ին, 1930-1936 թթ.-ին եղել է Հայաստանի ԿԿ ԿԿ առաջին քարտուղար: Սպանվել է (պաշտոնական վարկածով՝ ինքնասպանություն) 1936 թ.-ին Թիֆլիսում: **Ամատունի Վարդապետյան (Ամատունի)**, ծնվել է 1900 թ.-ին Ելիզավետպոլում, գործել է Ադրբեջանում, 1921-23 թթ.-ին՝ Հայաստանում, այնուհետև՝ Վրաստանում, Մոսկվայում, 1928 թ.-ին՝ կրկին Հայաստանում, 1930 թ.-ից՝ կրկին Թիֆլիսում: 1935 թ.-ին Ադրբեջանում՝ Բաքվի ԿԿ ԿԿ երկրորդ քարտուղարն էր: 1936 թ.-ին Թիֆլիսից ուղարկվել է որպես ՀԿ(բ)Կ ԿԿ երկրորդ քարտուղար, առաջին քարտուղար է եղել 1936 հունիսից-1937 սեպտեմբեր: 1937 թ.-ին ձերբակալվել է, 1938 թ.-ին՝ գնդակահարվել: **Գրիգոր Հարությունյան (Հարությունով)**, ծնվել է Վրաստանում՝ Թելավիում, գործել է Թիֆլիսում, 1937 թ. սեպտեմբերին ուղարկվել է Հայաստան, Հայաստանի ԿԿ ԿԿ առաջին քարտուղար է եղել 1937-53 թթ.-ին: Այսպիսով 1920-1937 թթ. ընթացքում Խորհրդային Հայաստանը ղեկավարել են 9-ը ԿԿ քարտուղարներ, որոնցից ոչ մեկը Խորհրդային Հայաստանի զբաղեցրած տարածքում չի ծնվել և չի ապրել մինչև պաշտոնավարման նշանակումը (վեց տարի Հայաստանում ապրել է միայն պատանի հասնջյանը): Իննից յոթը գնդակահարվել են, մեկը՝ աքսորվել: Իններորդը՝ Գրիգոր Հարությունովը Թիֆլիսից Հայաստան է տեղափոխվել իր համար անակնկալ, 1937 թ. սեպտեմբերին, որպեսզի փոխարինի գնդակահարության ենթակա ութերորդ քարտուղարին: Հայաստան տեղափոխվելու մասին Թիֆլիսում նրան հայտնել են ութերորդի գնդակահարության որոշումն իրենց հետ Մոսկվայից Հայաստան բերող Միկոյանն ու Մալենկովը:

Նույնն է պարագան նաև Ժողկոմխորհի նախագահների և Ժողկոմների դեպքում: Նոր Նախիջևանում ծնված Ալ.Մյասնիկյանը որպես Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ տեղափոխվել է Բելոռուսիայից 1920 թ.-ին, մնացել է ոչ լրիվ մեկ տարի: Նոր Նախիջևանում ծնված և Սանկտ Պետերբուրգում կրթված Սարգիս Լուկաշինը (Սրապիոնյան) Հայաստան է եկել 1921 թ.-ին՝ որպես ՀԿ ԿԿ ԿԿ առաջին քարտուղար, մեկ տարի անց ստանձնել է Ժողկոմխորհի նախագահի պաշտոնը (1922-25 թթ.-ին): Շուշում ծնված և Մոսկվայում սովորած, պրոֆեսորնալ հեղափոխական Սարգիս Համբարձումյանը Հայաստան է եկել 1921 թ.-ին՝ որպես առողջապահության նախարար, Ժողկոմխորհի նախագահ է եղել 1925-1928 թթ.-ին: Սահակ Միրզայի Տեր-Պաբրիկյան, ծնվել է Շուշում, որպես պրոֆեսիոնալ հեղափոխական գործել Բաքվում, 1920 թ.-ից՝ Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Մոսկվայում, 1928-1935 թթ.-ին՝ Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ: Մարսկաստանի Սալմաստ գավառում ծնված Աբրահամ Աբրահամի (Համբարձումի) Գուլոյանը Էջմիածնի Գևորգյան ծննդանից հետո սովորել է Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններում, Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ է եղել 1935-1937 թթ.-ին: Բոլորն էլ՝ «որսից» ուղարկվածներ: Մյասնիկյանը զոհվել է Թիֆլիսում ինքնաթիռի կասկածելի վթարից, մյուս բոլորը գնդակահարվել են 1937 թ.-ին: Ցուցակը կարելի է շարունակել Ժողկոմների կենսագրություններով:

թյան ծրագրերի համոզված կողմնակիցներ Հայաստանում կային, բայց մեծ հաշվով գործող իշխանության համար «դաշնակցական վտանգի գոյությունը» ոչ թե առարկայական վտանգ էր, այլ խորհրդայնացումից հետո իրականացվող բոլշևիկյան «կարմիր տեռորի» արդարացում: Այնուհետև նախ՝ բոլշևիկյան, ապա՝ խորհրդային պաշտոնական հռետորաբանության, այդ թվում՝ գիտական գրականության մեջ «դաշնակցական» բառը ձեռք բերեց «իմպերիալիստների դրածո ժողովրդի թշնամու» և «քրեական հանցագործ խմբապետի» խառն իմաստ, ինչը բազմաթիվ միջոցներով, ընդհուպ դպրոցական դասագրքերը, ներմուծվել է հանրային գիտակցություն: Ստեղծված կերպարը «դաշնակցականին» ներկայացնում էր ոչ միայն բոլշևիկների, այլև հայ ժողովրդի թշնամի, իմպերիալիստական երկրների կամակատար հաստափոք, հաստավիզ մառգերիստի, ում նպատակը մարդկանց թալանելով անհոգ կյանք վայելելն էր: Գեղարվեստական միջոցներով (գրականություն, ֆիլմ, կերպարվեստ...) այս կերպարի ներշնչումը բնակչության մեջ ստեղծել էր մի վիճակ, երբ պարզ մարդիկ մեկին նվաստացնելու համար նրան «դաշնակցական» էին անվանում: Դաշնակցական բառը դուրս էր եկել քաղաքական կուսակցություն, քաղաքական հայացք նշանակելու իմաստից և ձեռք էր բերել «հանցագործ» մարդկային բնութագրի իմաստ: Եվ ոչ միայն Հայաստանում: Հետխորհրդային շրջանում Լ.Բերիայի մասին նկարահանված ֆիլմում Ս.Օրջոնիկիձեի եղբոր՝ Պապուլիա Օրջոնիկիձեի դուստր Էթերի Օրջոնիկիձեն Լ.Բերիայի բացասական կերպարը բնութագրելու և նրա նկատմամբ հոր ատելության աստիճանն արտահայտելու համար նրան «դաշնակ» է անվանում («ո՞վ էր Բերիան. Բերիան դաշնակ էր»)՝⁴⁸ չնայած Բերիան հայտնի էր մուսաֆաթական անցյալով և գլխավորում էր դաշնակցականների հալածանքները:

Նույնիսկ այսօր, իրենց բռնադատված այս կամ այն նախնուն անարդար դատապարտելը բացատրելու, փաստելու համար, մեր գրուցակիցներից շատերը մանրամասն բացատրում են, որ նա չի եղել, և փորձում են ապացուցել, որ չէր կարող լինել դաշնակցական: Սա մի կողմից վկայում է այն մասին, որ Հայաստանում մինչև այսօր ոչ միայն մասսայական գիտակցության մեջ, այլև որոշ հետազոտողների կողմից դաշնակցականը հավասարվում է հանցագործի, մյուս կողմից՝ այլախոհությունը որպես հայացք չի ընկալվում, նույնիսկ շարունակում է մեղք, հանցանք համարվել (արդար է, որ դաշնակցականներին հետապնդում էին, անարդարը իմ հորը (պային, տատին...) նրանցից մեկը համարելն էր), իսկ այլախոհության դեմ խորհրդային վարչակարգի քաղաքական բռնաճնշումներն արդարացված անհրաժեշտություն էին: Մինչև այսօր շատերի գիտակցության մեջ ամուր նստած է այն համոզմունքը, որ եթե կոմունիստական իշխանությունները

⁴⁸ Тайна Лаврентия Берия. Кто он на самом деле ֆիլմի առաջին մաս, 36-րդ ռոպե, [https://mail.google.com/mail/u/0/?shva=1#inbox/1510bcfaaa8503f5?projector=1\(11.09.2014\):](https://mail.google.com/mail/u/0/?shva=1#inbox/1510bcfaaa8503f5?projector=1(11.09.2014):)

փակել էին Դաշնակցության կուսակցությունը, ապա անցյալում այդ կուսակցությանը պատկանելության համար հետապնդելը և պատժելը քաղաքական բռնաճնշում չէր: Քաղաքական բռնաճնշումը, ըստ այդ համոզմունքի, մարդուն հանիրավի դաշնակցական կամ հակաբոլշևիկյան անվանելը, կեղծ գործ սարքելն ու այդ կեղծիքով հետապնդելը և/կամ դատելն է: Երևույթների այս ընկալումը մի կողմից շատ մարդկանց ստիպում է անընդհատ պաշտպանել քաղաքական բռնաճնշման ենթարկված իրենց նախնու հանիրավի վարկաբեկված կերպարը՝ «նա դաշնակցական չէր», մյուս կողմից քաղաքական բռնաճնշումները բացատրել սուտ մատնությամբ՝ «սուտ մատնություն են արել՝ իբրև թե դաշնակցական է»: Այսինքն՝ եթե իսկապես դաշնակցական լիներ՝ ոչինչ, որ բանտարկել են, աքտրել են, գնդակահարել են, բայց ախր սուտ է, դաշնակցական չէր: Որոշ չափով նույնն է տրամաբանությունը նաև սոցիալական («դասակարգային») խմբերի, օրինակ՝ կուլակի դեպքում: Առավել հաճախ հանդիպող ձևակերպումները կարելի է ամփոփել հետևյալ կերպ. «Իմ պապին աքտրել են որպես կուլակի, բայց նրանից ինչ կուլակ, ահռելի ընտանիքով մի սենյակում էին ապրում ու հագիվ էին ծայրը ծայրին հասցնում»: Այսինքն՝ ոչինչ, որ կուլակներին բռնադատել են, բայց վատ է, որ ոչ կուլակներին էլ են կուլակ համարել և բռնադատել: Այսպիսով, քաղաքական բռնաճնշման բուն գաղափարը, նույնիսկ դրա այսօրվա իրավունքը ինչ - որ իմաստով «արտոնվում է»... թող մարդիկ ապրեն այնպես, ինչպես իշխանությունն է ճիշտ համարում, սխալն այն է, որ եթե մարդն ապրում և մտածում է իշխանության թույլատրած սկզբունքներով, նրան սուտ մատնությամբ կամ կեղծիքով դատապարտում են:

Իսնդրահարույց է նաև «մատնության», «սուտ մատնության» մասին հաճախ հանդիպող արտահայտությունը: Մեր բազմաթիվ գրուցակիցներ չեն բարձրացրել քննության և/կամ դատավարության միջոցով «սուտ մատնությունը» բացահայտելու հնարավորության հարցը կամ նույնիսկ դրա պահանջը: «Սուտ մատնություն էին արել, տարան այդ մարդու գլուխը կերան», «Մեր հարևանն էր մատնել, հաստատ գիտենք, բայց դե էլ ինչ կարող էինք անել», «Մատնել էին, չեկիստներն էլ եկան տարան, գնաց բանտերում փտեց», «Մեր ընտանիքում միայն խոսում էին, որ պատճառը այդ գյուղսովետի նախագահն է եղել», «Լսել եմ, որ իր եղբայրն է դավաճանել էդ մարդուն... Այսինքն՝ գնացել է ցուցմունք տվել, որ հակապետական է, ես ինչ իմանամ, էսինչ, էսինչ...»: «Վերացրեց եղբայրը (կոլխոզի նախագահը, հարևանը...)», ոչ թե ռեժիմը: Այլ կերպ ասած խնդիրը հաճախ շարունակում է մնալ ոչ թե բուն պատճառի՝ ամբողջատիրության ռեժիմի դաշտում, այլ մարդկային հարաբերությունների: Կարելի է, իհարկե, ենթադրել, որ այս «լեզուն» ձևավորվել է ռեալ ամբողջատիրության և տեռորի պայմաններում, երբ իշխանությունից վտանգը բոլորին էր սպառնում, իսկ իրավապահ մարմիններից ոչ թե օրենքի կատարում էին սպասում, այլ միանգամայն իրա-

տեսորեն նրանց վերապահում էին իշխանության կամքի կատարման դեր: Չխոսելով արդեն այն մասին, որ բուն օրենքն ինքը հաճախ ստեղծվում էր ոչ թե հանրային կյանքը կարգավորելու, այլ իշխանության կամքը «օրինականացնելու» նպատակով: Այս պայմաններում հանրության համար հստակ ու պարզ էր, որ իշխանությունից պաշտպանության որևէ հույս չկա, և մարդկային-անձնային հարաբերություններին պիտի վերապահվեր միմյանց պաշտպանելու դեր (առաջին հերթին հենց իրավապահ մարմիններից), ուստի չարիքի դեպքում մեղադրվում է ոչ թե ռեժիմային վարչակարգը՝ չարիքի ակունքը, այլ այդ «լուռ համաձայնությունը» կամ, պայմանական ասած, «հասարակական պայմանագիրը» խախտող որոշակի մարդը՝ մատնիչը: Մեղավորը, ի վերջո, այն անձն է դառնում, ումից եթե ոչ պաշտպանություն, առնվազն չեզոքություն է ակնկալվում:

Մյուս կողմից բարձրանում է այն հարցը, թե ինչպես է ամբողջատիրությունն ազդում հասարակության և հենց մարդկային հարաբերությունների վրա՝ այն բաժանելով «դատողների», «մատնիչների» և «մատնվողների», և ինչպես է այն մարդկանց դարձնում չարիքի իրացման պարզ սոցիալական (մատնողները) կամ պաշտոնական (չեկիստները) գործակալներ (ազենտ), մարդու վրայից հանելով անձնական բարոյական պատասխանատվությունը: Մի խնդիր, որ գերմանական ֆաշիզմի ամբողջատիրության օրինակով հիանալի ներկայացված է Հաննա Արենդտի «Չարիքի առօրեականությունը» («Չարիքի տափակությունը») (Банальность зла) գրքում⁴⁹:

Իրավունքի և օրենքի մասին սովորաբար խոսք չկա կամ լինելու դեպքում, ամենից ավելի հաճախ հնչում է «դե բոլշևիկների ժամանակ դա չէր կարելի» ձևակերպումը: Պատմելով պատերազմի տարիների իրենց գյուղի իրավիճակի մասին՝ իմ զրուցակից մի կին հիշեց. «...մեր գյուղի նախագահը չորս կին էր նստացրել իբր գողության համար... Գողություն անողներ գուցե շար կային, բայց դրանց ամուսիններին բողոքին բռնել էին (բանալաբար կե), որպես անհարազատ մարդիկ, դատել էին, արքայրել էին, դրանց կանանց երեք տարի նստեցրին բանտում: Չորսի ամուսիններն էլ արքայրված էին, սովի տարի էր, պարտազանական տարի... Շատ կանայք ու երեխաներ էին մի բան մի տեղից վերցնում (խոսքը գնում է կոլխոզի դաշտերից կամ այգիներից առանց թույլտվության հացահատիկ, կարտոֆիլ, միրգ տանելու մասին-Հ.Խ.), նրանց դիտորդություն էր անում նախագահը, ծեծում էր, աշխօրը կտրում էր, բայց չէին նստեցնում, ամուսինը արքայրված չէր... միայն էր չորս կանանց նստեցրին երեք տարի... Ժողովուրդը դրանց գող չէր համարում, Ժողովուրդը հասկացավ, իմացան, որ դրանց իզուր են նստեցրել, իրենց ամուսինների բռնադատվելու պարճառով էին իրենց նստեցրել:... Ժողովուրդը չէր մեղադրում, օրինակ՝ որոշ կանայք ասում էին՝ «ինչ ա է աս, Փառան-

⁴⁹ Ханна Арендт. Эйхман в Иерусалиме. Банальность зла. Москва, Европа, 2008:

ձեռնի ձեռքին ինչ կար, որ բռնեցին, նստեցրին, մեր նման րկլոր, մեր նման կին էր, զոռով պահում էր իր երեխաներին»»: Պատմողի համար այդ կանանց նկատմամբ մասնավոր վերաբերմունքը բացատրություն ուներ. «Դե դաշնակցականի կին էր, եթե դաշնակցական չի՝ դաշնակցականի կին էր... Էն ժամանակ դա վար բան էր: Նրանց կինը չպիտի գյուղումը մնա, երեխաները չպիտի գյուղում լինեն, որովհետև դաշնակցականի ընտանիք է»: «Ինչո՞ւ էն ժամանակ դա վար բան էր» հարցն էլ պատասխան ունի. «Դե հիմա մենք ինչ ենք իմանում, ասել են սխալ էին [դաշնակցականները]՝ մենք էլ գիտենք, որ սխալ էին, հիմա էլ ասում են ճիշտ էին՝ հիմա էլ գիտենք, որ ճիշտ էին»: Իշխանության պաշտոնական գաղափարախոսության կամ գնահատականի նկատմամբ այս շարունակվող բարձրաձայն հնազանդություն/հավատարմությունը, երբ մարդն իր խղճի ու բարոյականության առաջ անձամբ գիտի, որ «դրանց իզուր են նստեցրել», երևոյթների պատասխանատվությունից ինքնօտարման և/կամ ինքնարդարացման հաճախ կրկնվող փաստարկ է: Սա այն սարսափելի հետևանքներից մեկն է, որը բերել է խորհրդային ամբողջատիրությունը, և փաստացի նույնական է այսօր հաճախ կրկնվող «Ժամանակներն էին այդպիսին» հայտնի ձևակերպման հետ:

Կան, անշուշտ, այլ տարբերակներ, երբ մարդն ընդունում է դատապարտվողի «մեղքի» գործոնը: 1928 թ.-ին ձերբակալված և գնդակահարված իր պապի մասին մեր գրուցակիցներից մեկը միանգամայն համոզված ասաց. «Նա մեղքեր ուներ, և այդ բանը նրանք (ազգային անվրանգությունը – Հ.Խ.) գիտեին, թղթեր ունեին: Մժդեհի հետ է եղել, Մժդեհը շատ է մեր րտուն գնացել-եկել, իրա ուներին մեղք կա... դե համ մատուցեցիս, համ կուլակ, համ Մժդեհի հակասովեպական»: Տվյալ դեպքում խոսքը մինչև Հայաստանի խորհրդայնացումը Չանգեզուրի ինքնապաշտպանությանը մասնակցած մարդու մասին է: Տասը տարի առաջ իր գյուղը և հայրենակիցներին զենքը ձեռքին պաշտպանած մարդուն գնդակահարության դատապարտելը նրա թոռը օրինական է համարում, որովհետև... ազգային անվտանգությունը «թղթեր ուներ», այսինքն՝ ապացույցներ ուներ երկրի ինքնապաշտպանությանը իր պապի մասնակցության մասին: Իսկ թե ինչո՞ւ պիտի մինչբուլշևիկյան հայրենիքի ինքնապաշտպանությանը մասնակցությունը բուլշևիկների կողմից «մեղք» համարվեր, թոռն այս հարցն ինքն իրեն չի տալիս: Այս հարցը, սակայն, ինքն իրեն տալիս է Չանգեզուրի ինքնապաշտպանությանը մասնակցության համար այդ ինքնապաշտպանությունից 17 տարի անց ձերբակալված և գնդակահարված Սարգիս Աթաջանյանի մանկատանը մեծացած որդին. «... հայրս միշտ ասել է, որ ինքը քաղաքականությանը չի խառնվել, միայն թուրքերի դեմ է կռվել: Ասում էր. «ես ինչ եմ արել, ինձ ինչո՞ւ պիտի պանեն»: ...ինքն ուղղակի թուրքերի դեմ կռվել էր, հա: Զանի որ ինքը ոչ մի քաղաքական գործունեություն չի ունեցել, այլ բացառապես ուղղակի էր պարիսերին կռվել է թուրքերի դեմ, ինքն անմեղ

է, իրա դեմ որևէ բան չէր կարող լինել...բայց 37 թվին եկան հորս փարսան»: Մեր այս գրուցակցի համար էլ «մեղավոր-անմեղ»ի խնդիրն այլ ձևակերպում ունի. մեղավոր էին քաղաքականությանը խառնվողները, բայց ինչու՞ մեղավոր դարձան նաև իրենք իրենց և իրենց երկիրը պաշտպանողները: Ամփոփելով իր ապրած դժվար կյանքի փորձը, ամբողջ կյանքում աշխատած լինելով «արդար ապրել» և «կոմունիստական կուսակցությանը հակառակ չգնալ», նա եկել է այն եզրակացության, որ «արդարությունը շար փոքր զենք է անարդարության դեմ...արդարության և անարդարության սահմանը շար փխրուն է... շար մոտիկ են, շնոր, չես տարբերի»⁵⁰:

Իրենց ընտանիքներում քաղաքական բռնությունների որոշակի դեպք չունեցող մարդկանց մի մասն էլ վստահ չէ քաղաքական բռնությունների իրավացիության/անիրավացիությանը. «Ես էլ չգիտեմ ինչու այդ մարդկանց փարսան, ինչ էին արել, դե գուցե մի բան արել էին: Ես, օրինակ, իմ փանը նստած, ոչ մի բան չեմ արել, ինձ ինչու՞ չփարսան»: Իրենց շուրջը կատարված, բայց իրենց շրջանցած բոլոր գործընթացների մասին գիտելիքի պակասը, հետևաբար նաև վերաբերմունքի բացակայությունն ավելի բնորոշ է խորհրդային շրջանում խիստ հնազանդ, պասիվ, մեկուսի կյանքով ապրած մարդկանց, ովքեր, ինքնամեկուսացմամբ ինքնապաշտպանվելով, հնազանդությունը դիտում են քաղաքական անարդարությունից խուսափելու միջոց:

Վերադառնալով թվերին՝ հիշեցնեմ, որ Ա. Մանուկյանի կյուրթերը քաղված են դատական և բռնադատումն իրականացնելու նպատակով ստեղծված արտադատարանական՝ «տրոյկաների» և «հատուկ խորհրդակցությունների»⁵¹ մարմինների միջոցով կայացած վճիռների արխիվացված փաստաթղթերից: Մինչդեռ բոլշևիկյան իշխանության հաստատումից անմի-

⁵⁰ Տե՛ս Կամո Զայուպետյան-Աթաջանյանի պատմությունը // Armenia Total(itar)is. <<http://armeniatotalitaris.am/?p=2147>>:

⁵¹ Զատուկ խորհրդակցություն (Особое совещание-ОСО) – 1922 թ.-ից մինչև 1953 թ.-ը ԽՍՀՄ Ներքին գործերի մարմնին կից գործող հանձնաժողով՝ «հատուկ խորհրդակցություն», արտադատարանական մարմին, որը լիազորություն ուներ քննելու հասարակայնորեն վտանգավոր համարվող քրեական գործերը և վճիռներ կայացնել, վերանայել ԽՍՀՄ Գերագույն դատարանի Ռազմական կոլեգիայի վճիռները: ОСО-ն իրավունք ուներ մեղադրյալին դատապարտելու ազատագրվման, արտաքսման, աքսորի, իսկ պատերազմի տարիներին՝ նաև գնդակահարության: ОСО-ի կազմը բաղկացած էր ԽՍՀՄ Ներքին գործերի ժողկոմի տեղակալից, խորհրդային Ռուսաստանի հանրապետության Ներքին գործերի ժողկոմի լիազոր ներկայացուցչից, Բանվորա-գյուղացիական ոստիկանության գլխավոր վարչության ղեկավարից, միութենական այն հանրապետության Ներքին գործերի ժողկոմից, որի տարածքից գործը ներկայացվել է: ОСО-ն վճիռները կայացնում էր արագացված և պարզեցված կարգով, մեղադրյալի կամ փաստաբանի բացակայությամբ: 1949 թ. հունիսի 14-ին Զայաստանից դեպորտացիայի ենթարկված 13.000-ից ավելի մարդու դեպորտացիայի ենթարկելու վճիռներն, օրինակ, կայացրել է ОСО-ն՝ այդ մարդկանց աքսորելուց ամիսներ անց:

ջապես հետո եղել են բազմաթիվ քաղաքական հետապնդումներ և սպանություններ, որոնց մասին որևէ արխիվում տեղեկություններ չեն պահպանվել: Արխիվներում, սակայն, կյոթեր կան ինչպես ամբողջ ԽՍՀՄում, այնպես էլ Հայաստանում տեղի ունեցած իրավունքի այլ բնույթի սահմանափակումների մասին, ինչպես, օրինակ, «ձայնագրկումն էր»՝ ընտրության և ընտրվելու իրավունքի արգելումը, զանազան տնտեսական և սոցիալական հնարավորություններից՝ բարձրագույն կրթության, արհմիության անդամակցության, հասարակական կյանքին՝ քննարկումներին, ժողովներին մասնակցության բոլոր հնարավորություններից զրկելը: Այս կարգի «փափուկ ռեպրեսիան» հայաստանյան ընկալումներում քիչ է մոտենում «քաղաքական բռնության գոհ» հասկացությանը՝ տեղի տալով «կոշտ ռեպրեսիաների», այսինքն՝ ձերբակալությունների, բանտարկության, արքայի, գնդակահարության դատապարտումների առաջ: Մինչդեռ «ձայնագրկումը» տեղի էր ունենում բոլշևիկյան սկզբունքներով սահմանված չափանիշներով, որով, ըստ էության, իշխանությունը մարդկանց բաժանում էր «յուրայինների» և «օտարների», փաստացի՝ իրավատերերի և իրավագուրկների, որով արդեն իսկ սեպ էր խրվում չբարձրաձայնվող հասարակական համախմբման «ինքնապաշտպանական համաձայնության» կայացման մեջ: Քսանականների ձայնագրկվածների մեծ մասը երեսնականներին օրինաչափորեն ենթարկվում էին ավելի կոշտ բռնաճշումների: Օրինակ, Չանգեզուրի Գյուտկում գյուղում «ձայնագրկվել» էր 26 մարդ, իսկ երեսնականներին այս գյուղում «ծանր ռեպրեսիայի» է ենթարկվել 42 մարդ, որից 13-ը՝ գնդակահարություն, Շիկահող գյուղում 28 մարդու ձայնագրկմանը հետևել է երեսնականների 67 մարդու «ծանր ռեպրեսիան», 11ը գնդակահարված են⁵²:

Փաստացի բռնաճշման այն տեսակը, երբ մարդուն ճնշելով հարկադրում էին հրաժարվել քաղաքական մեղադրանք առաջադրված իրենց հարազատից՝ հորից, ամուսնուց, եղբորից..., նույնպես քաղաքական բռնաճշումների զոհերի շարքում չի դիտարկվում, ինչպես չեն դիտարկվում ծնողների բռնաճշումների հետևանքով որբանոցներում կամ հարազատների ընտանիքներում մեծացած երեխաները՝ իրենց կրած հոգեկան և բարոյական զրկանքներով, կամ քաղաքական բռնաճշումների ենթարկված հարազատների պատճառով մարդկանց և ընտանիքների հասարակական մեկուսացվածությունը, և, իհարկե, լիովին հռետորական է մնում ողջ հանրության ապրած վախերի, տագնապների և դրանց հետևանքների հարցը մարդկանց հետագա կյանքում և ընդհանուր հասարակական բարոյականության վրա:

Աշխատելով բռնությունների զոհերի՝ արխիվում գտնվող «գործերի»՝ փաստաթղթերի հետ, Ա. Մանուկյանի աշխատանքն ընդգրկում է գլխավոր-

⁵² Գ. Սմբատյան: Երկաթե վարագույրից այս կողմ, Երևան, «Չանգակ-97», 2009:

րապետ «կոշտ ռեպրեսիաները»: Նրան պետք է երախտապարտ լինել ահ-
 նելի քանակությամբ փաստաթղթեր ուսումնասիրելու, դրանք դասակարգե-
 լու և ԽՍՀՄ քաղաքական բռնաճնշումների շրջանի հայաստանյան նյութերի
 զգալի ծավալ շրջանառության մեջ դնելու համար: Կրկին Ա. Մանուկյանին
 ենք պարտական քաղաքական մեղադրյալներին առաջադրված մեղադրանք-
 ների բնութագրերի հարաբերական դասակարգման համար: Օրինակ, հենց
 Ա. Մանուկյանի աշխատանքից գիտենք, որ 1937-1938 թթ.-ին Հայաստանում
 բռնությունների է ենթարկվել 8104 մարդ, որոնցից 4530-ը գնդակահարվել է
 (ավելի քան յուրաքանչյուր երկրորդը – Հ.Խ.): Ըստ Ա. Մանուկյանի ամփոփ-
 ման. «Ամենահաճախ նշվող մեղադրանքը հակախորհրդային գործունեու-
 թյունն էր՝ 3729 անգամ, ապա դաշնակցական գործունեությունը՝ 1333 անգամ,
 այնուհետև հակահեղափոխական գործունեությունը՝ 508 անգամ, տրոցկիզ-
 մը՝ 109, և որքան էլ տարօրինակ թվա, ընդամենը 9 հոգի մեղադրվում էին
 «մաքուր» ազգայնամոլական «հանցանքի» համար»⁵³: Դատավճիռների մեջ
 «ազգայնամոլական «հանցանքի» համար» դատապարտումների փոքր թիվը
 հեղինակին տարօրինակ է թվացել այն պատճառով, որ «...բազմաթիվ գոր-
 ծերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրականում, մինչև վերոհիշյալ
 «վերջնագրերի» ձևակերպումը, ՀԽՍՀ ՆԳԺԿ-ում կազմված գրեթե բոլոր մե-
 ղադրական եզրակացությունների մեջ վերը նշված մեղադրանքների կողքին
 անպայման նշվում էր, որ մեղադրվողները զբաղվել են ազգայնամոլական
 («նացիոնալիստական») գործունեությամբ: Այսպես՝ եթե նշվում է, թե ձերբա-
 կալվածը զբաղվել է հակախորհրդային գործունեությամբ, ապա իսկույն ավե-
 լացվում է նաև ազգայնամոլական կամ տրոցկիստական պիտակը, իսկ ավելի
 հաճախ՝ աջ-տրոցկիստականը նշելուց հետո կրկին հիշատակվում է ազգայ-
 նամոլական մեղադրանքը»⁵⁴: Հայաստանյան բռնադատումների հիմքում մեծ
 հաշվով ընկած էին «տրոցկիստական-ազգայնական», «դաշնակցական-ազ-
 գայնական» հայացքները կամ գործողությունները, իսկ մեղադրականները
 ձևակերպվել են «հակասովետական-ազգայնական»:

«Տրոցկիստական» կամ «աջտրոցկիստական» մեղադրանքն առնվազն
 Խորհրդային Հայաստանի բռնադատումներում դժվար հասկանալի մեղա-
 դրանք էր: Այն ընկալվել և կիրառվել է որպես սոցիալիզմի կառուցման հար-
 ցում Լենինի և «ճիշտ բոլշևիկների» (ովքեր տվյալ դեպքում քաղաքական և
 վարչական իշխանությանը տիրապետող Ստալինը և նրա հետևորդներն էին)
 հայացքներից տարբերվող Լ.Տրոցկու և նրա հետևորդների՝ կոմունիստա-
 կան կուսակցության ներսում իշխանության կենտրոնացումը և ժողովրդա-

⁵³ Ա. Մանուկյան: Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում, էջ 38 (աղբյուրը՝ ՀՀ Ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության ազգային անվտանգության կարճված գործերի ֆոնդ, Գ. 13129, Թ. 2560):

⁵⁴ Ա. Մանուկյան: Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում, էջ 39:

վարության նվազումը քննադատող հայացք՝ առանց անդրադառնալու այդ քննադատության փաստարկներին կամ տրոցկիզմի հետ համեմատության: 1936 թ.-ին Հայաստանի ամենախոշոր «տրոցկիստ» համարվող Ն.Ստեփանյանին՝ Մարքսիզմ-Լենինիզմ ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրենին, ՆԳԺԿ երկարատև հարցաքննությունների ընթացքում ստիպում են խոստովանել, որ իր ջանքերը Հայաստանի ԿԿին համոզելու՝ թե «արդյունաբերության մերձեցումը հումքի աղբյուրներին սոցիալ-ուկրոնիզմ չէ, այլ լենինյան թեզիս և առկա է կուսակցության 12-րդ համագումարի որոշումներում», սխալ և տրոցկիստական են եղել⁵⁵, որ սխալ և տրոցկիստական էր նաև կուսակցությունում կոլեկտիվ ղեկավարության, դեմոկրատիայի բացակայության և Ստալինի կամքին ենթարկվածության մասին մինչև վերջերս իր ունեցած կարծքը⁵⁶, իսկ Անդրկովկասի հանրապետությունների զարգացման անհամաչափությունը Անդրերկրկոմի քաղաքականություն համարելու իր «հակահեղափոկական կարծիքը» կուսակցությունն անվանարկելու ստոր զրպարտություն է⁵⁷: Հայաստանում տրոցկիզմին վերաբերվող մեղադրական գործերը շատ են հիշեցնում միջնադարյան ինկվիզիցիայի հավատաքննությունները. «Ձեռն հավատում Սուրբ երրորդությանը, – խարույկ»: «Ձեռն հավատում սոցիալիզմի կառուցման Ստալինի (Բերիայի) ընտրած ճանապահին, – գնդակահարություն»: Մեկ տարբերությամբ, – եթե ինկվիզիցիայի զոհը կարող էր ընդունել իր սխալը և զոջալ՝ կարող էր ազատվել խարույկից: ՆԳԺԿում համարյա բոլորն էին ընդունում իրենց «սխալը» և զոջում, բայց գնդակահարությունից չէին ազատվում⁵⁷:

Տրոցկիզմի մեղադրանքներով թեկուզ կողմնակի փաստարկներով գործերը, ինչպես Ն.Ստեփանյանի դեպքում է, բացառություն են: Այդ գործերում օրինաչափությունը փաստարկների և կյուրերի բացակայությունն է: «Տրոցկիզմի» մեջ մեղադրվողների քննչական գործերում, չնչին բացառություններով, «տրոցկիզմի» դրսևորումները չեն քննարկվել, օգտագործվել է պարզապես «տրոցկիստ» պիտակավորումը, մեղադրանքը ներկայացնելիս երբեմն հիմք է հանդիսացել «տրոցկիստական հայացքների» համար ավելի վաղ դատապարտված անձանց հետ նախկին կամ ներկա ծանոթությունը, իսկ ավելի հաճախ չեն ծանրաբեռնվել դրա փնտրտությամբ՝ հարկադրելով քննվողներին խոստովանել իրենց «տրոցկիստ» լինելը: Հայաստանում «տրոցկիզմի» մեջ մեղադրվողներից (սակ՝ քննիչներից) շատերը հազիվ թե իմացել կամ հասկացել են «տրոցկիզմի» էությունը կամ գաղափարը: Բորիբոդահայ թերթերը սովորաբար վերատպում էին «Պրավդա»ի հակատրոցկիստական հոդվածները՝ առանց դրանք վերլուծելու և ուղենցելով «տրոցկիզմը» դատապարտող հռե-

⁵⁵ Ն.Ստեփանյանի 04.06.1936 հարցաքննության արձանագրությունից, ՅՅԱԱ, Ֆ.1191, Ց. 4, Գ. 101, էջ 28:

⁵⁶ Նույն տեղում, էջ 28-29:

⁵⁷ Ն.Ստեփանյանի 03.07.1936 հարցաքննության արձանագրությունից, նույն տեղում, էջ 73:

տորաբանությամբ: Այն ընդամենը ԽՍՀՄում ընթացող հակատրոցկիստական պայքարը Հայաստան տեղափոխող բառ-միջևորդ էր «հակասովետական» մեղադրանքի համար և հարմար «գաղափարական» եզր հիմնական մեղադրանքին՝ «նացիոնալիստին» կցելու համար:

«Տրոցկիստական-նացիոնալիստական»-ի հետ մրցակցում էր «դաշնակցական-նացիոնալիստական»ը: Սա հասկանալի էր. «դաշնակցական»ը ծանոթ բառ էր, «հակասովետական» էր, իսկ «դաշնակցական-ազգայնականը»՝ «հայ ժողովրդի և Հայաստան»ի ներկայի ու ապագայի վերաբերյալ խորհրդային ծրագրերից գատ որևէ այլ ծրագրի հավատացողը՝ անկախ «Հայ Հեղափոխական դաշնակցություն» կուսակցության անցյալ կամ առկա ծրագրային դրույթների, անկախ դատապարտվողի՝ դաշնակցության հետ որևէ առնչությունից: Դատապարտումներում սովորաբար դեր է խաղացել «Դաշնակցության հետ համագործակցություն» մեղադրանքը, ինչն ավելի հաճախ նշանակում էր՝ մասնակցել է կամ կապ է ունեցել 1915-1922 թթ. հայ-թուրքական կամ 1920-21 թթ. հակաբոլշևիկյան կռիվներին, երբեմն՝ նաև՝ Հայաստանի վերաբերյալ բոլշևիկներից տարբերվող ծրագիր ունի կամ կապ ունի այդպիսի ծրագիր ունեցող մարդու հետ:

Ինչ վերաբերում է «հակասովետական-նացիոնալիստական»ին, ապա այստեղ Հայաստանի ռեպրեսիվ պրակտիկան ի հայտ է բերել զանազան մակարդակների տեղական ըմբռնումներ՝ չեկիստների և քննիչների մասնավոր ընկալումներից մինչև կուսակցական բջիջների ժողովների ու գրող-հրապարակախոսների սեփական կամ կոմկուսից ազդված պատկերացումները: Ինչ ասեք կարող էր մատուցվել որպես «նացիոնալիստական»՝ Հայոց ցեղասպանության մասին հիշողություններից (հակաթուրքական է, ուրեմն՝ նացիոնալիստական է) մինչև «Վարդան Մամիկոնյանին մեծարելը», որով մարդն ընդգծում է իր «ազգային հպարտությունը», ուրեմն՝ «նացիոնալիստ է»:

ԽՍՀՄ բոլշևիկյան հռետորաբանության մեջ «նացիոնալիզմ» եզրն ամենից ավելի օգտագործվել է «սեպարատիզմի»՝ «ազգային հանրապետությունների անկախանալու ձգտումներ»ի իմաստով, անկախ նրանից, կային այդ կարգի ծրագրեր կամ գործողություններ, թե ոչ: Այլ կերպ ասած, ԽՍՀՄում քաղաքական «նացիոնալիզմը» գլխավորապես ԽՍՀՄ ազգային հանրապետությունների անկախացման ձգտումների հնարավորությունն էր: «Նացիոնալիզմի» բուրգի գագաթի այս «նացիոնալիզմից» ներքև հետապնդելիորեն «նացիոնալիստական էին» «ազգային կարգերի», «մայրենի լեզվի», «ազգային այբուբենի», «ազգային շահերի», «ազգային անցյալի», «ազգային պատմության», «ազգային հիշողությունների», «ազգային տեղանունների»... ցանկացած անհամապատասխանություն ԽՍՀՄ ինտերնացիոնալիզմի վերաբերյալ կոմկուսի պարտադրող սկզբունքներին: Հայաստանում հատկապես խիստ «նացիոնալիստական» էր համարվում... Հայոց ցեղասպանության և Արևմտյան Հայաստանի մասին հիշողությունը: Ուշագրավ է, որ, ինչպես

վկայում են հայկական նյութերը, «նացիոնալիստներ» էին նաև Անդրֆելդերացիայի՝ Կոմկուսի իշխանությունն իրացնող ղեկավար անձանց բացարձակ հեղինակությունը կամ կառավարման մեթոդները վերապահությամբ ընդունող մարդիկ: Այս շրջանակում խիստ նացիոնալիստներ էին նաև Բերիայի իշխանությունից դժգոհություն արտահայտողները: Բերիան ազգային պատկանելություն ուներ՝ վրացի էր, և նրա իշխանությունից դժգոհությունը, «հակասովետականից» գատ, մեկնաբանվում էր նաև «նացիոնալիստական»:

Հայաստանում մեղադրական գործերում առկա «նացիոնալիստական գործունեություն» ձևակերպման համատարածությունը հայտնվել է 1936 թ. հունիսից, Մարքսիզմ-Լենինզմի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Ն. Ստեփանյանի ձերբակալությունից և ՀՀ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանի սպանությունից (պաշտոնապես՝ ինքնասպանությունից) հետո, Հայաստանում «հակասովետական-նացիոնալիստական խմբի հայտնաբերման» հայտարարությամբ:

Խանջյանի սպանությունը և «հականացիոնալիստական պայքարը» Հայաստանում

Հուլիսի 9-ի երեկոյան Թբիլիսիից գանգեց Բերիան:

– Ընկեր Ստալին, երկրկոմի բյուրոն այսօր լսեց Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում բացահայտված հակահեղափոխական կազմակերպության մասին հաղորդումը: Զգաստությունը կորցնելու հարցում լուրջ մեղադրանքներ են ներկայացվել Հայաստանի ԿԿ քարտուղար Խանջյանին: Խանջյանը մեղադրանքները կատեգորիկ ժխտում էր: Երեկոյան, մեկ ժամ առաջ, նա եկավ ինձ մոտ, իրեն մարտահրավիրողի պես էր պահում, ինձ մեղադրում էր կուսակցական հին կադրերի ջարդում, կուսակցության պատմության կեղծարարությունում: Նա վայրենի, գրգռված վիճակում էր, սպառնում էր ինձ սպանել, համարյա իրականացնում էր իր սպառնալիքը, բայց ես նրան կանխեցի և ինքնապաշտպանական նպատակով գնդակահարեցի նրան:

- Ո՞ր բացատրությունն եք ընտրել ապարատի համար:
- Ինքնասպանություն:
- Իսկ հանրության համար:
- Կարծում եմ՝ նույնը:

Անսպորտի Ռիբակով, Արբատի զավակները

1936 թ. հուլիսի 9-ին Թիֆլիսում՝ Լ. Բերիայի առանձնասենյակում, սպանվեց Խորհրդային Հայաստանի ԿԿ քարտուղար Աղասի Խանջյանը:

Հայաստանն այն ժամանակ դեռևս ԽՍՀՄ առանձին հանրապետություն չէր, այլ 1922 թ.-ին ձևավորված Անդրկովկասյան Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության մաս, որի կենտրոնի առաջին քարտուղարը 1932 թ.-ից սկսած Լ. Բերիան էր: Այլ կերպ ասած Լ. Բերիան Ա. Խանջյանի ուղղակի ղեկավարն էր:

Բերիայից Հայաստանում դժգոհություններ շատ կային: Հայաստանում չբարձրաձայնելով խոսում էին այն մասին, որ Բերիան ուղղակիորեն կառավարում է Հայաստանի պաշտոնյաների նշանակումը, Թիֆլիսից Հայաստան է ուղարկում իրեն ծառայող մարդկանց, որոնց անելիքը Հայաստանի իշխանություններին Բերիայի օգտին լրտեսելն էր, կասեցնում է Հայաստանի տնտեսական զարգացումը, Անդրֆեդերացիայի բյուջեից նվազեցնում է Հայաստանի հատկացումները, Վրաստանում ոչնչացվում են հայկական մշակութային հուշարձանները, պատերից քերվում են հայատառ վիմագիր արձանագրությունները, քանդվում է հնագույն հայկական գերեզմանոց Խոջիվանքը, Վրաստանում մեծարվում են նախախորհրդային վրաց հեղինակները, օրինակ՝ Ի.Ճավճավաձեն, Հայաստանում Րաֆֆու նկարն անգամ չի կարելի գրողների միության պատերին փակցնել, Բերիան խոչընդոտում է Երևան-Ադստաֆա երկաթգծի կառուցումը, թույլ չի տալիս արտադրական ձեռնարկություններ կառուցել Հայաստանում ևն⁵⁸: Բերիայի կադրերը համարվող Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ Ա.Գուլոյանն անթաքույց արհամարանքով էր վերաբերվում Երևանը կառուցող Ա.Թամանյանի աշխատանքներին, իսկ երկրորդ քարտուղար Ա.Ամատունին բարձրաձայն ասում էր՝ «Ի՞նչ պետք է այստեղ օպերա, Թիֆլիսում կա՝ բավական չի»⁵⁹: Այս մարդիկ 1936 թ. փետրվարի 21-ին, ինչպես պատմում է այդ ժամանակ «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիր Ռ.Աթայանը, Ա.Թամանյանին «նացիոնալիստ» պիտակավորելով չեն համաձայնվել Խանջյանի հետ միասին ստորագրել Թամանյանի մահախոսականի տեքստը, և վրդովված Ա.Խանջյանը միայնակ է ստորագրել այն⁶⁰: Իսկ երբ Ա.Խանջյանի բացակայության շրջանում լուր են ստացել, որ Ֆրանսիական նավով Փարիզից Բաթումի նավահանգիստ է հասել հայ մեծ երգահան, Հայոց Ցեղասպանությունից հետո ներանձնացած Կոմիտասի աճյունը, մարդ են ուղարկել Բաթում՝ ետ վերադարձնելու: Նավապետը չի համաձայնվել ետ տանել աճյու-

⁵⁸ Բերիայից հիշյալ և այլ բնույթի դժգոհությունների մասին տեղեկություններն առկա են 1936-37 թթ.-ին ձերբակալված հայ մտավորականների հարցաքննությունների գրծերում, բայց հատկապես Ն.Ստեփանյանի ձերբակալության ժամանակ բռնագրավված նրա անձնական արխիվի նյութերում:

⁵⁹ Ռ. Աթայան: Ասպետական հոգիներ, էջ 49:

⁶⁰ Նույն տեղում: Մահախոսականի տեքստը տես «խորհրդային Չայաստան», 1936, փետրվարի 22, կամ «Աղասի Խանջյան: Հոդվածներ և ձառեր», Երևան, «Չայաստանի պետական հրատարակչություն», 1963, էջ 460-461:

նը, իսկ երբ Խանջյանը կարգավորել է Բերիայի թույլտվությամբ Կոմիտասի դին Հայաստանում թաղելու հարցը, թաղմանը չեն մասնակցել⁶¹:

Վրաստանում պակաս դժգոհ չէին Բերիայից, հատկապես նրա դաժան բռնակալ, քինախնդիր կառավարումից և բացահայտ անառակ վարքից: Նախկին չեկիստ Բերիան անձամբ էր հրահանգում ձերբակալությունները և նույնիսկ դատավճիռները, անձամբ էր մասնակցում քննություններին և հաճախ անձամբ ծեծում էր քննվողներին, իսկ մի շարք դեպքերում նրան անցանկալի մարդկանց ձերբակալությունից հետո գնդակահարում էին նույնիսկ առանց այն էլ կեղծ դատավարության⁶²: Նրա կողմից ղեկավարվող Անդրֆեդերացիայի երեք հանրապետությունների ՆԳԺԿ մարմինները 1936-37-ին շատերին էին մեղադրում և մահվան դատապարտում Բերիայի դեմ մահափորձ ծրագրելու գործերով, և 1953 թ. Բերիայի հանցագործությունների քննությունը պարզապես իրավականորեն վավերացնում էր այն, ինչն առնվազն Անդրկովկասի ժողովուրդներին և անկասկած՝ մոսկովյան իշխանություններին հայտնի էր վաղուց. «Բերիայի դեմ տեռորիստական գործունեության մասին քննիչների կողմից ձեռք բերվող ցուցմունքներն ամեն կերպ խրախուսվում էին «Բերիայի կողմից», ինչի արդյունքում քննիչներն ամեն կերպ ջանում էին այդպիսի ցուցմունքներ կորզել...»⁶³, «դրանք Բերիայի շուրջ ստեղծում էին կուսակցությանն ու անձամբ Ստալինին նվիրվածության պատրանք»⁶⁴ և, իհարկե, ծայրաստիճան նվազեցնում Բերիային քննադատելու, առավել ևս նրա դեմ ըմբոստանալու հնարավորությունները:

Անդրֆեդերացիայի երրորդ հանրապետության՝ Ադրբեջանի կենտրոնի քարտուղար Մ. Բադիրովը Բերիայի մտերիմն էր Անդրկովկասի խորհրդայնացման պահից, Անդրֆեդերացիայի ԿԿ ԿԿ քարտուղար Բերիայի ընտրվելուց մեկ տարի անց՝ 1933 թ.-ին դարձել էր Ադրբեջանի ԿԿ ԿԿ առաջին քարտուղար, և ընդհուպ 1953 թ. փոխադարձաբար նպաստել են միմյանց կուսակցական առաջխաղացմանը⁶⁵: Բադիրովը համարվում էր «Բերիայի մարդը»,

⁶¹ Ռ. Աթայան: Ասպետական հոգիներ, էջ 49:

⁶² Լ. Բերիայի հանցագործությունների՝ 1953 թ. քննության Բերիայի հարցաքննության օգոստոսի 7 (РГАСПИ (Российский государственный архив социально-политической истории), Ф. 17, Оп. 171, Д. 465, Л. 214-224, <<http://istmat.info/node/22208>>), օգոստոսի 14-ի (РГАСПИ, Ф. 17, Оп. 171, Д. 466, Л. 158-165, <<http://istmat.info/node/22221>>), օգոստոսի 17-ի (РГАСПИ, Ф. 17, Оп. 171, Д. 466, Л. 172-183, <<http://istmat.info/node/22225>>), հոկտեմբերի 19-ի (РГАСПИ, Ф. 17, Оп. 171, Д. 470, Л. 158-169, <<http://istmat.info/node/22266>>)) նյութերը, տե՛ս Политбюро и дело Берия. Сборник документов / Под общей ред. О.Б. Мозохина. М., «Кучково поле», 2012 (<http://istmat.info/node/22125>) (07.07.2014):

⁶³ Նույն տեղում, Լ. Բերիայի հանցագործությունների՝ 1953 թ. քննության օգոստոսի 7 Բերիայի հարցաքննության արձանագրությունից:

⁶⁴ Նույն տեղում, Լ. Բերիայի հանցագործությունների՝ 1953 թ. քննության օգոստոսի 14 Բերիայի հարցաքննության արձանագրությունից:

⁶⁵ Լ. Բերիայի հանցագործությունների՝ 1953 թ. քննության սեպտեմբերի 8-ի Բերիայի հարցաքննության արձանագրությունը, վկա Մ. Բադիրովի՝ հոկտեմբերի 29-ի հարցաքննու-

աշխատանքային մեթոդներով նրանից շատ չէր տարբերվում: Աղբրեջանում, որտեղ նրան տեղական Ստալին էին ընդունում և «հայր Բաղիրով»՝ «պիրե-լի հայր Բաղիրով», «հարազատ հայր Բաղիրով» կոչում, նա համարյա բացարձակ տեր ու տնօրեն էր⁶⁶, և, իհարկե, մարդիկ երկուսից էլ վախենում էին: Ունեին արդյոք այս մարդիկ սեփական քաղաքական ծրագրեր, թե՞ պարզ պատեհապաշտներ էին՝ քննարկման առանձին կյուք է: Կասկած չկա մի բանում՝ տարբեր պատճառներով Հայաստանը երկուսի համար էլ խնդրահարույց էր: Բերիան ամեն ինչ անում էր Հայաստանում «իբ մարդիկ» ունենալու համար, որոշ հաջողություններ ուներ, բայց հաճախ էր բախվում Խանջյանի խուլ կամ բացահայտ դիմադրությանը: Հայաստանում, բնականաբար, նույնպես Բերիայից վախենում էին, և բարձրաձայն, ժողովներում և մամուլում ստորաքարշությամբ նրան փառաբանում էին՝ «Անդրկովկասի բոլշևիկների մարտական ղեկավար», «Անդրկովկասի լավագույն բոլշևիկ և մեծ Ստալինի ամենահետևողական աշակերտ», «Մեծ Ստալինի լավագույն աշակերտ և հավատարիմ զինակից», «Իմաստուն ուսուցիչ», հավաստիացնում էին իրենց անմնացորդ նվիրվածությունն անձամբ Բերիային, թերթերում ինքնամոռաց երջանկություն էին արտահայտում «Թանկագին Լավրենտիյ Պավլովիչ»ի անու-նով որևէ կառույց, վայր անվանակոչելու առիթով⁶⁷ ևն⁶⁸:

Խանջյանի սպանությունն անմիջապես պաշտոնապես ներկայացվեց որպես ինքնասպանություն, որն իբր նացիոնալիստական և հակահեղափո-խական-տրոցկիստական տարրերի մերկացման գործում Ա. Խանջյանի թու-

թյան արձանագրությունը (РГАСПИ, Ф. 17, Оп. 171, Д. 470, Л. 215-225, <<http://istmat.info/node/22274>>); Մ. Բաղիրովի հանցագործությունների՝ 1954-ի քննության ասրիլի 9-ի հարցա-քննության արձանագրությունը (РГАСПИ, Ф. 17, Оп. 171, Д. 474, Л. 86-96, <<http://istmat.info/node/22310>>), հրատարակված «Политбюро и дело Берия» (<<http://istmat.info/node/22125>>):

⁶⁶ Э.Р. Исмаилов. Власть и народ. Послевоенный сталинизм в Азербайджане. 1945-1953. Баку, Адильоглы», 2003, էջ 151:

⁶⁷ «Նտրիրդային Յայաստան», 6 հուկտեմբերի, թիվ 231 (4829), էջ 1:

⁶⁸ Ամբողջատիրություններին բնորոշ այս երևույթի ևՄՅՄ «առաջին ջութակը» «Պրավդա» թերթն էր, որում «Ժողովուրդների հանձարեղ հայր» Ստալինին մատուցվող ամենօրյա փառաբանությունների չափաբաժինը և մակարդակը ուղիղ համեմատական էին պատժվող մարդկանց թվին՝ որքան շատ մարդ, այնքան շատ փառաբանություն: 1936 թ. ամռանը, երբ Յայաստանի թերթերը թմբկահարում էին խանջյանական «հակասովետական-նացիոնա-լիստական խմբի հայտնաբերման» գործում Բերիայի հմուտ կառավարումը, Մոսկվայում զուգահեռաբար ընթացող Ջինովկե-Կամենև-Բովսարին աղմուկոտ գործի շուրջ «Պրավդա» թերթն ամեն օր տպագրում էր հայտնի գրողների, գիտնականների, դերասանների, աշխա-տանքային կոլեկտիվների («աշխատավորության») գովասանքները «պաշտելի Ստալինին» և խրախուսում ևՄՅՄը «ժողովրդի թշնամիներից» փրկելու նրա ջանքերը: Հանրապետու-թյունների պաշտոնական թերթերը դրանք տեղական լեզուներով թարգմանելուց և տպագրելուց գատ միացնում էին փառաբանումների ու դատապարտումների իրենց բաժինը և տեղական մակարդակի «հայրերի» ու «թշնամիների» մասին գրելիս պատճենում էին «Պրավդա»ի՝ շրջանառության մեջ դրվող փառաբանումների և հերթական «ժողովրդի թշնամիների» դատա-պարտումների ձևակերպումները: Այս գործում «ձևով ազգային, բովանդակությամբ՝ սոցիա-լիստական» կարգախոսը իրրավի նվաճել էր ժողովների և մամուլի հռետորաբանությունը:

լության և անկարողության հետևանք էր: Համընդհանուր հանրային կարծիքը մոտավորապես այնպես էր, ինչպես ներկայացված է Ա. Ռիբակովի վեպից քաղված վերոհիշյալ հատվածում:

Ա. ՌԱՆՁՅԱՆ


Համ. 4 (բ) 4 Անդրեյեփոքը հայտնում է Հայաստանի 4 (բ) 4 Կենտրոնի շարտուղար ընկեր Խանձյանի մասը, ժողովի անկողնի 1936 թվականի հուլիսի 5-ին, ինքնապատմության ակտի հետևանքով:

Ինքնապատմության ակտը դիտելով վերջին փոքրագույն արտահայտություն, ժողովը անմիջապես և մանուշակա կուսակցական կազմակերպության ղեկավարի համար, Համ. 4 (բ) 4 Անդրեյեփոքը անհրաժեշտ է համարում հայտնել կուսակցության անդամներին, ժողովը ընկեր Խանձյանը վերջին ժամանակներս իր աշխատանքի մեջ մի շարք թաղաքական սխալներ էր թույլ տվել, ժողովը արտահայտվել էր ինչու անպիտանության և հակահեղափոխական-արոցկիտանության աստիճանի մերկացման գործում բազմաթիվ սխալներով, ընկեր Խանձյանը թաղաքական շահերով գործառնականում բուլեփեկորեն ուղղելու գրանք է գրված ինքնապատմության:

Ընկեր Խանձյանի ընդհանուր մի նակը ստատիստիկում էր նաև նրա ակտի հետևանքով ինքնապատմության մասը անակտի աստիճանային:

ՀԱՄ. 4 (Բ) 4 ԱՆԴՐԵՅԷՓՈՒՔ

300



Հայաստանի 4 (բ) 4 Կենտրոնը հայտնում է Հայաստանի 4 (բ) 4 Կենտրոնի շարտուղար ընկեր Խանձյանի մասը, ժողովի անկողնի 1936 թվականի հուլիսի 5-ին, ինքնապատմության ակտի հետևանքով:

Ինքնապատմության ակտի ընկեր Խանձյանը հանդես բերեց, մանուշակա կուսակցական կազմակերպության ղեկավարի համար անմիջապես վերջացում:

Վերջին ժամանակներս իր աշխատանքի մեջ թույլ տալով մի շարք թաղաքական սխալներ, ժողովը արտահայտվեցին ինչու անպիտանության և հակահեղափոխական-արոցկիտանական աստիճանի մերկացման գործում բազմաթիվ սխալներով, ընկեր Խանձյանը թաղաքական շահերով գործառնականում բուլեփեկորեն ուղղելու գրանք էր գրված:

Ընկեր Խանձյանի ընդհանուր մի նակը ստատիստիկում էր նաև նրա ակտի հետևանքով ինքնապատմության մասը անակտի աստիճանային:

Հ4 (Բ) 4 ԿԵՆՏՐՈՒՔ

Շուրյ 1 Խանձյանի մահվան պաշտոնական ծանուցումը

ԽՍՀՄի մակարդակով Ա. Իսանջյանի «ինքնասպանությունը» ծանուցվել է սպանությունից հետո միայն երրորդ՝ Իսանջյանի թաղման օրը, հուլիսի 12-ին, «թաքնվելով» «Պրավդա» թերթի 6-րդ էջում, որպես հուլիսի 11-ին Թիֆլիսից ստացված պարզ տեղեկություն (Թիֆլիս, 11ը հուլիսի, ՏԱՍՍ), բայց հորվածը սկսվում է «Ըստ Երևանից ստացված տեղեկության» բառերով: «Ըստ Երևանից ստացված տեղեկության Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար ընկեր Իսանջյանը ամսի 9-ին ինքնասպանություն է գործել: Վերջին շրջանում ընկեր Իսանջյանը պատշաճ զգոնություն չէր ցուցաբերում հակահեղափոխական տարրերի դեմ պայքարի գործում: Վերջին ժամանակներում ընկեր Իսանջյանը տառապում էր ծանր թոքախտից, ինչը ազդել էր նրա ընդհանուր վիճակի վրա»: Այս տեղեկությունը զգուշորեն շրջանցել է Իսանջյանի սպանության վայրի՝ Թիֆլիսի հիշատակությունը: Այս հակասություններից գլուխ չհանած Դեյլի Թելեգրաֆի Մոսկվայի թղթակիցը տեղեկությունը հաղորդել է հուլիսի 13-ին, շրջանցելով Իսանջյանի մահվան ամսաթիվը և հայտնելով, որ Իսանջյանն ինքնասպանություն է գործել Երևանում⁶⁹: Հազիվ թե որևէ մեկը հավատում էր Իսանջյանի ինքնասպանության մասին պաշտոնական տեղեկությանը:

Իսանջյանի դին տեղափոխվեց Հայաստան և թաղման օրը՝ հուլիսի 12-ին, տեղի ունեցավ Հայաստանի կուսակցական ակտիվի ժողով, որի ժամանակ ՀամԿ(Բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար Ս. Կուդրյավցևն իր ելույթի ժամանակ շեշտեց, որ Հայաստանում մերկացված և ձերբակալված տրոցկիստներն անհամեմատ քիչ են հարևան հանրապետություններից, քանի որ Ա. Իսանջյանը իսանգարում էր նրանց մերկացմանը⁷⁰: Որպես թիվ մեկ տրոցկիստ հիշատակվեց մայիսին ձերբակալված Ներսիկ Ստեփանյանի (Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն, նախկին լուսժողովում) անունը, ով հուլիսի 4-ի հարցաքննության ժամանակ ասել էր. «Ես այն կարծիքին էի, որ կուսակցության մեջ բացակայում է դեմոկրատիան: Ես չեմ հավատացել Ստալինի ղեկավարությանը: Ես գտնում էի, որ կուսակցությունում կոլեկտիվ ղեկավարություն չկա, որ բոլորը փաստորեն կախված են Ստալինի անձնական կամքից, որ գոյություն ունի միայն նրա անձնական դիկտատուրան...»⁷¹:

⁶⁹ Գ.Լազեան: Հայաստան եւ հայ դատը հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ: Երևան, 1991, էջ 336:

⁷⁰ Ա.Սանուկյան: Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում, էջ 44-45:

⁷¹ ՀՀԱԱ, ԿԳՖ, Գ. 3036, Հ.2, Թ.30-31; Ներսիկ Ստեփանյանի առաջին կինը՝ Սերիկ Դավթյանը Հայաստանից այսպես կոչված «Ստալինյան ցուցակներով» դատապարտված մարդկանց մեջ միակ կինն էր (աքսորվել է, – <http://stalin.memo.ru/regions/regi3.htm>): Աքսորվել է նաև երկրորդ կինը՝ Թագուհի Ծաղիկյանը, ով աքսորից վերադառնալուց հետո ինքնասպան է եղել (Դ. Գասպարյան: Փակ դռների գաղտնիքը, Եր., «Ապոլլոն», 1994, էջ 70):

бумаг, обнаруженных при обыске квартиры
арестованного СТЕПАНА Персеа Мижалобидзе.

- ✓ 1. Газетные вырезки содержания материал об ССР Грузии - 32 вырезки.
- ✓ 2. Газетные вырезки по другим вопросам.
- ✓ 3. "Вопросник" сведения о движении производительных и непроизводительных работ - на 3 листах.
- ✓ 4. Заметки о языке в 6-ти пунктах, где 6-м пунктом указано "неправильно понимает инструкцию Шт. Берия и др." на 1 лист.
- ✓ 5. Запись на блок-ноте Института Марксизма-Ленинизма, начинающаяся со слов "когда говорим о необходимости научения истории культуры" и т.д. на 1 листе.
- ✓ 6. Заметки на блок-ноте Народному комиссару Просвещения СССР под названием "для доклада" на 3 листах.
- ✓ 7. Запись на бланке Зам. Директора Ин-та Марксизма-Ленинизма, начинается со слов "Фабрика плашино в Тифлисе" 1 лист.
- ✓ 8. Заметки "закон неравномерного развития народов в СССР - С-НАИ, политика" - на 1 листе.
- ✓ 9. Заметки, где между прочим сказано "В Грузии чаем-высочевали меньшевизм", таким же "чаем выкорчуте и национализм в Армении" - на 5 блок-н. листах
- ✓ 10. Запись на бланке Ин-та Марксизма-Ленинизма, начинается со слов "сельское хозяйство" на 1 лист.
- ✓ 11. Записи начинаются со слов - "у нас об'являют вел. шов, не своим опасностью, а бояться только местного национализма" - на 1 л.
- ✓ 12. Лист с цитатой "надо уметь признать зло безболезненно" на 1 листе.
- ✓ 13. Запись на отрывке блок-нота Госиздата Армении, начинается со слов "68 пластинок - 5 Азербайджану, Армении ничего" - на 1 л.
- ✓ 14. Выписка из газеты "Заря Востока" от 2.Х-35 г. - на 1 л.
- ✓ 15. "Тово" об окончании проектировки шерстяного комбината в Тифлисе" на 1 л.
- ✓ 16. Запись, начинается со слов "ассимилирует СВАНОВ" на 1 л.
- ✓ 17. Заметка "Абастуман 12 миллионов", 400 тысяч в затмении - на 1 л.
- ✓ 18. Запись начинается со слов "армия в грузинских школах" - на 1 листе.

- ✓ 19. Записи под заголовком "национальный вопрос" (на армянском и русском языках) - на 1 л.
- ✓ 20. Записи на блок-ноте Ин-та Марксизма-Ленинизма Армении начинаются со слов "курорты Армении" - на 1 л.
- ✓ 21. Т о ж е - начинается со слов "доклад АБРАМЯН" - на 1 л.
- ✓ 22. Записи на блок-ноте НИИ СССР "язык не националистичен и не интернационалистичен, а национальн" - на 1 л.
- ✓ 23. Т о ж е - - на 1 л.
- ✓ 24. Записи на 4-х зашнурованных автором листах блок-нота Научно-просвещения ЦКР по вопросам о языке.
- ✓ 25. Цитаты из Бигельса - на 1 лист.
- ✓ 26. Записи - начинается со слов "Абул-Гамид и Е. Физическое истребление, морально-экономическое урнетение" - на 1 л.
- ✓ 27. Записи - начинается со слов "ликвидирован... (одно слово не разобомиво) завод, лошади отправлены в Грузию" - на 1 л.
- ✓ 28. Записи - начинается со слов "распределение колхозных средств" - на 1 листе.
- ✓ 29. Записи - начинается со слов "ликвидация Закарпатской Академии Наук" - на 1 листе.
- ✓ 30. Записи - начинается со слов "барско-феодалное отношение Грузии и Армении" - на 1 листе.
- ✓ 31. Заметки на блок-ноте Зам. директора Ин-та Марксизма-Ленинизма - начинается со слов "осуществляли все условия для критики, проверили на слово "АБРАМЯН" - на 6 блок-нотных листах.
- ✓ 32. Записи - начинается со слов "как отпечатала "Правда" письмо Ромэн-Ролана" - на 1 л.
- ✓ 33. Записи - постановлением ЦКК'а пол. миллиона Армян дод на дате... - на 1 л.
- ✓ 34. Текст к докладу "о годовщине убийства 26-ти бакинских комиссаров" - на блок-ноте ректора ЦКК - на 15 листах, помещенных автором.
- ✓ 35. Заметки на бланке ректора ЦКК под заголовком "для национал. вопроса" - на 1 л.
- ✓ 36. Т о ж е, помечено датой 12 сентября 1931 г. на 3 листах.
- ✓ 37. Цитата из Маркса - на 1 л.
- ✓ 38. Речь ЮРЕСА по поводу избения армян в Турции, отпечатана на 20-ти страницах.
- ✓ 39. Протокол совещания армянской Комиссии при Оргкомитете ССР, копия адресованная СТЕПАНЯНУ - на 2 л.
- ✓ 40. - Правда "о Закавказье, Закарпатедат 33 г. на 51 л.

- ✓ 41. Тетрадь с заметками, на которой написано название и про- тив Арсися и ему подобных... (поле брани) - на 8 л.
- ✓ 42. Тетрадь с надписью - заметки О.С. и Т., касающиеся вы- детки и записи троцкистского характера (явно контр-револю- ционные и террористические) на 2 л.
- ✓ 43. Тетрадь с записями начинающихся со слов - 1. Правительст- венная делегация - 130 миллионов - на 4 л.
- ✓ 44. Обная тетрадь с надписью - экономические проблемы с под- писью И. СТАШАНДИ на обложке. Записи начинаются со слов "Ана- калаки Табахчеля Арм. сов." - на 10 листах.
- ✓ 45. Выдержки из "Правды" от 5.11.35 г. на трех л.
- ✓ 46. Выдержки из книг и статьи (изданных по национальному вопросу) на 8 л., напечатанных на пишущей машинке.
- ✓ 47. Записи на двух страницах (на одном листе начинается со слов "Постановление КК ВЦИК" от 31 октября 1931 г.).
- ✓ 48. Запись - начинается со слов "какая программа" на 1 л.
- ✓ 49. "Литература по национальному вопросу" список источни- ков на 18-ти страницах.
- ✓ 50. Записи на одном листе - начинается со слов 1-я глава, исторические факты.

НАЧ 4 ОТД. IV ОТДЕЛА УГБ
 Старший лейтенант Государственной Безопасности
 (инспектор) *А. Лисин*

Примечание: Документы
 за №№ 3, 9, 36, 46. не
 имели копий.

о/у 10 отг. КГБ Арм. Сов
 от. 1-5 *Авеля /Аветисян*
 23.12.82

Լրուսանկար 3, 3.1, 3.2- ՀՀԱՍ, Ֆ.1191, Յ. 4, 9.106, Թ. 3,4,5

«Կուսակցության մեջ դեմոկրատիան պակասելու» մասին կարծիքն, անշուշտ, լուրջ փաստարկ էր, որպեսզի Ե.Ստեփանյանը մեղադրվեր տրոցկիզմում, իսկ Ստալինի անձնական դիկտատուրայի հաստատման պնդումն արդեն բացահայտ հակահեղափոխական էր: Կուդրյավցևը հայտարարեց, որ «քննությամբ բացահայտվել էր Ե. Ստեփանյանի թունդ հակահեղափոխական դեմքը»⁷², իսկ Խանջյանը հովանավորել է նրան: Ձերբակալության պահին Ե. Ստեփանյանի տունը խուզարկելիս հայտնաբերվել էին ՆԳԺԿի համար նրա «նացիոնալիզմը հաստատող» Ե.Չարենցի «Գիրք ճանապարհին» գիրքը, հայկական կոտորածների մասին Ժան Ժորեսի ճառը, Անդրկովկասի հանրապետությունների տնտեսական զարգացումների անհամանասնության և ազգային քաղաքականության, շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ պայքարի տարբերությունների, Բերիային Աբդուլ Համիդի հետ համեմատության ևն գրառումներ: Այդ տարիներին սրանք բոլորը խիստ համարձակ, նույնիսկ լսողին իշխանության հարվածի տակ դնող ձևակերպումներ էին: Չանդրադառնալով Ե.Ստեփանյանի գրառումների բովանդակության տարողունակ թեմային, ստորև ներկայացնենք միայն այդ խուզարկությամբ հայտնաբերված նյութերի ցանկը.

Հուլիսի 12-ի ժողովին, որին մասնակցում էր 106 մարդ, բարձրաձայն հայտարարվեց, որ Խանջյանը Հայաստանում հովանավորում էր Ե.Ստեփանյանին և նրա նման մարդկանց: Ժողովի մասնակիցներից շատերը ելույթ ունեցան և Ա. Խանջյանին դատապարտեցին թուլամորթության, նացիոնալիզմը խրախուսելու, ժողովրդի թշնամիներին հովանավորելու և այլ «մահացու մեղքերում»՝ դրանք ուղեկցելով Բերիայի «իմաստուն և մարդասիրական կառավարումը» փառաբանելով: Լենինականի քաղկոմի քարտուղար Դանիելյանն իր ելույթում ընդգծեց, որ Խանջյանի նացիոնալիզմի դրսևորումներից մեկը «ընկեր Բերիայի կողմից անձամբ ստուգված» և Հայաստանում ներդրված պաշտոնյա կադրերի (բանախոսը նրանցից մեկն էր) նկատմամբ անվստահությունն էր, իսկ տեղական կադրերը նույնիսկ ռուսերեն են վատ խոսում. «Ընկերներ, այսօր մեր ժողովին մասնակցում է հանրապետության ղեկավար սկիզբիլը, և դուք այսպեղ տեսաք, թե ինչպես են դժվարանում խոսել ռուսերեն: Ես դա խայտառակություն եմ համարում: Ինչպես նա կարող է աշխարհել, եթե չի կարողում Սարքսին, Լենինին, Սյրայինին ռուսերեն, Հուլյանների լեզվով, եթե չի կարողում «Պրավդան» և նրա առաջնորդողները... կարող է ընկերներն ինձ մեղադրեն մեծապետական շովինիզմի մեջ, բայց դա այդպես չէ...»⁷³: Ազգայնական որակվեց նաև Խանջյանի տնտեսական կառա-

⁷² Ա.Ամրիկյան: Մնեկնեյի են Աստոծ ծանապարհները, Երեան, «Առեքեսում-Անի», 1998, էջ 167:

⁷³ Ա.Ամրիկյան: Նշված աշխ., էջ 188 (աղբյուրը՝ ԶԶ ԱԱ, Պատմ. Ֆոնդ, Գործ 186):

վարումը, քանի որ նա ջանում էր Հայաստանում ներդրումներ անել, իսկ դա «Հայաստանի անկախության կարիքները հակադրում էր Խորհրդային Միության և միացյալ միության կարիքները... Ժողովուրդը, բանվորական թարգմանը, երկաթուղին և այլն, որոնք ակնհայտ վկայում են, որ Խանջյանի վարած քաղաքականությունը անկախության մեջ գալիս էր մեր թշնամական, հայ ազգայնամոլների ճամբարից...»⁷⁴: Բանախոսը գիտեր, որ Ն. Ստեփանյանին «նացիոնալիզմի» մեջ մեղադրող ՆԳԺԿ նրա գրառումներում գտել էր Անդրերկրկոմի երեք հանրապետությունների անհամաչափ զարգացման հարցում Բերիայի քաղաքականությունը քննադատող ձևակերպումներ («Հայաստանում մանկապարտեզների վերանորոգման համար տրվում է 10.000, իսկ Վրաստանում այդքան տրվում է մեկ մանկապարտեզի համար», «Դաշնամորի գործարան Թիֆլիսում, թղթի ֆաբրիկա Թիֆլիսում, մեքենաների վերանորոգման գործարան, շաքարի գործարան, մարգարիսի գործարան, նավթահանության մեքենաների գործարան, թաղիքի ֆաբրիկա, Թիֆլիսում՝ բազալտի և պղնձի գործարան, իսկ հումքը և էներգիան Հայաստանում են», «42 մլն Վրաստանի առողջարանային շինարարության համար, 800.000՝ Հայաստանի առողջարանային շինարարության համար: Սա չէ՞ որ հակասում է 31.10.33 թ. Անդրերկրկոմի որոշումներին», «Գիտությունների ակադեմիայի Անդրֆեդերացիայի մասնաճյուղի լիկվիդացիա և այդ բազայի վրա վրացական մասնաճյուղ. Անդրֆեդերացիայի մասնաճյուղի միջոցները՝ 1.200.000 ամբողջովին տրվել են վրացական մասնաճյուղին», «Վրաց հեղինակների թարգմանություն հայերեն, իսկ հայ հեղինակներին չեն թարգմանում» ևն)⁷⁵: Ն.Ստեփանյանին նացիոնալիզմում մեղադրում էին նաև Մոսկվայի Հայ կուլտուրայի տունը⁷⁶ Անդրֆեդերացիային հանձնելու Բերիայի պահանջին (Հայաստանում ներդրված նրա կադրերի՝ Ակոպովի և Մուդրուսու միջոցով) դիմադրելու⁷⁷ և Երևան-Աղստաֆա երկաթգծի շինարարությունը կասեցնելուց դժգոհելու համար⁷⁸: Ամեն կերպ հարկավոր էր սեփական երկրի զարգացման

⁷⁴ Լույս տեղում, էջ 196:

⁷⁵ ԶՅԱԱ՝, ֆ. 1191, Ց.4, Գ.106, թթ. 9, 13, 16, 20, 26, 28 30:

⁷⁶ Մոսկվայի հայ կուլտուրայի տունը – Լազարևի հայ ընտանիքի միջոցներով Մոսկվայում 1814-15 թթ-ին կառուցված շենք, որտեղ 1815 թ.-ին բացվել է «Հայկական Լազարևյան ուսումնարան հայ և այլ ժողովուրդների երեխաների համար», հետագայում՝ «Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտ», 1921 թ.-ից տրվել է Խորհրդային Հայաստանի կառավարության տնօրինությանը՝ որպես մշակույթի տուն: Այժմ ՌԴ-ում Հայաստանի Հանրապետության դեսպանատունը այդ շենքում է:

⁷⁷ Ն.Ստեփանյանի 07.08.1936 թ. հարցաքննության արձանագրությունից պարզվում է, որ Խանջյանին իրեն կշտամբել է Անդրերկրկոմի բյուրոյի նիստում Մոսկվայի հայ մշակույթի տունը Անդրֆեդերացիային հանձնելու որոշմանը դիմադրելու համար. տե՛ս ԶՅԱԱ, ֆ. 1191, Ց. 4, Գ. 101, Թ. 117: Ն.Ստեփանյանի դիմադրելը եղել է նրան լուսժողովուրդի պաշտոնից ազատելու պատճառներից մեկը:

⁷⁸ Ն.Ստեփանյանի 03.08.1936 թ. հարցաքննության արձանագրություն, ԶՅԱԱ, ֆ. 1191, Ց. 4,

մտահոգության «նացիոնալիզմից» ինքնօտարվել: Վարչական նոր դիրքեր գրավելու, վախի ու ինքնապաշտպանական շողոքորթության մոլուցքի մեջ «ազգայնական» որակվեց այն ամենը, ինչը կարող էր նպաստել Հայաստանի զարգացմանը, և կրթված պաշտոնյաներն ու հեղափոխության բովով անցած կուսակցականները ժողովի արձանագրության մեջ «սիրելի ընկեր Ստալինին» հավաստիացրին, որ «Մենք գիտեինք, մենք զգում էինք, մենք հասկանում էինք, թե ինչ հսկայական օգնություն և օժանդակություն էր ցույց տալիս Հայաստանի Կ(Բ)Կ Կենտրոնին և Խանջյանին կուսակցության Երկրկումն ու անձանք ընկեր Բերիան»⁷⁹: Ժողովին մասնակցող 106 մարդուց 71ը առաջիկա երկու տարիներին պիտի զոհ գնային իրենց իսկ մեղադրական տեքստերով՝ որպես «նացիոնալիստներ»⁸⁰:

Ա. Խանջյանի սպանությամբ Հայաստանում «պայթեց» «հականացիոնալիստական պայքարը», ձևակերպվեց հայկական «քաղաքական նացիոնալիզմ»ը և, կարելի է ասել, տեղափոխվեց միանգամայն ծրագրված պետական տեռորի մակարդակի: Սկիզբը դրվում է հուլիսի 14-ի գրողների միության կուսակցամակերպության ժողովով, որի ընթացքում դատապարտվում է նացիոնալիզմը, և մերկացվում են «Խանջյանի կողմից հովանավորվող նացիոնալիստ գրողները»:

Հայաստանի գրական միջավայրում «նացիոնալիզմի թեման» քննարկվում և «նացիոնալիզմը» քննադատվում էր առնվազն 1933-34 թթ.ից: Քննարկումներում հասկանալի չէր, թե ինչու՞մ է արտահայտվել նացիոնալիզմի մեջ մեղադրված գրողների նացիոնալիզմը և ինչպե՞ս էր առհասարակ ընկալվում նացիոնալիզմը հայկական քաղաքական և մտավորական շրջանակներում: Գատելով «Խորհրդային Հայաստան» թերթի 1934 թ. հուլիսի 23-ի (թիվ 168) «Դեպի ծավալուն ստեղծագործական ինքնաքննադատություն» խմբագրականով, նացիոնալիստ գրողները, «խուսափելով այսօրվա սոցիալիստական պրակտիկան արտահայտող թեմատիկայից, իրենց հայացքն ուղղում են դեպի անցյալի ամենամոռայլ էջերը և ոչ միայն չեն կարողանում դիտել այդ արձակը կոմունիզմի լուսարձակի փակ, այլև ակնհայտորեն արտահայտում են մեր դասակարգային թշնամու գաղափարախոսական զինանոցից սնվող տրամադրություններ... իսկ ազգային հասրկանիչների խորացման փեսությունն իր յուրահատուկ անդրադարձումն ունեցավ նաև Չարենցի վերջերս գրական լեզվի վերաբերյալ արված զեկուցման մեջ»: «Անցյալի ամենամոռայլ էջեր» արտահայտությունը վերաբերում էր գլխավորապես ոչ վաղ անցյալի՝ 1915-22 թթ. Հայոց ցեղասպանության և կորցրած Արևմտյան Հայաստանի՝ Խորհրդային Հայաս-

Գ. 101, Թ. 144:

⁷⁹ Ա.Ամրիկյան: Նշված աշխ., էջ 198:

⁸⁰ Ա.Անունկյան: Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում, էջ 45:

տանում փաստացի արգելված թեմային (Ն. Ստեփանյանը «նացիոնալիստ էր» նաև այդ թեմային առնչվող «Կոունկ», «Ծիծեռնակ» հայկական երգերն արգելելու դեմ ըմբոստանալու համար), մասամբ նաև՝ հայկական միջնադարին (կղերա-ֆեոդալական է): «Ազգային հայրկանիշների խորացման փեսությունը» վերաբերում էր ժամանակակից ընդհանուր խորհրդային մշակույթից ազգային մշակույթի տարբերակմանը և կարևորմանը, ինչը հակադրություն էր դիտվում «ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրա» կարգախոսին: «Ազգային հայրկանիշների խորացման» դրսևորում էր համարվում նաև պատմական անցյալին գեղարվեստական անդրադարձը «ազգային դիտանկյունից», ինչը դիտվում էր հասարակական-պատմական զարգացումների օրինաչափությունների մարքսիզմ-լենինիզմի տեսությանը (մասնավորապես անցյալի բոլոր պատմական հասարակական հարաբերությունները ֆեոդալական կամ իմպերիալիստական-բուրժուական ճնշումներով, իսկ կոնֆլիկտները՝ դասակարգային պայքարով բացատրելը) հակադրվելու և ազգային առանձնահատկություններ փնտրելու փորձ: Հուլիսի 14-ի գրողների միության կուսկազմակերպության ժողովին արդեն այս հարցերը չէին քննարկվում, հռետորները պարզապես մերկացնում էին «նացիոնալիստներին»: Մասնավորապես երիտասարդ գրող Հ. Քոչարը անուն առ անուն թվարկում է «նացիոնալիստ» գրողներին. «Ալազանը <...> խճճվելով նացիոնալիստական սխալների մեջ, իր սրերծագործություններում արտահայտելով նացիոնալիստական փենդենցներ, այնպես հասավ, որ ամենակրթուր կերպով պաշտպանեց Բակունց-Չարենց-Արմենի նացիոնալիստական խմբակը և ամենակրթիվ պայքար սկսեց այդ խմբակի հակառակորդների դեմ... Ալազանը, օրինակ վերցնելով Խանջյանից, շարունակեց ամենասերտ կապ և հարաբերություններ սրերծել նացիոնալիստական ինտելիգենցիայի ներկայացուցիչների հետ: ... «Գրական թերթը»՝ Ալազանի խմբագրած թերթը, <...> չէր պայքարում նացիոնալիզմի դեմ, նա, ընդհակառակը, հաճախ հանդիսանում է նացիոնալիստների համար հարմար ամբիոն (Բակունցի նացիոնալիստական գեկուցման փակագրությունը, Չարենցի ռեզյումեն և այլն)... Մենք, մեր կուսկազմակերպությունը պետք է օգնի կուսակցությանը մինչև վերջ մերկացնելու նացիոնալիստներին և ջախջախի նացիոնալիզմը...»⁸¹: ԽՍՀՄ ռեպրեսիվ պրակտիկայում այսպիսի բարձրաձայն «մերկացումները» հանրայնացված ծեսեր էին, որով սովորաբար նախապատրաստում էին ՆԳԺԿի հերթական զոհերին զոհասեղանին ուղարկելու հանրային պաշտպանությունը:

Հուլիսի 14-ի Հայաստանի գրողների միության կուսկազմակերպության այդ ժողովը «Հակահեղափոխական տրոցկիստական-նացիոնալիստական

⁸¹ Հատված Հ.Քոչարի ելույթից ՀԽԳՄ կուսակցական կազմակերպության 1936 թ. հուլիսի 14-ի ժողովում: ՀՀԱԱ, ֆ. 1346, Ց. 1, Գ. 4, Թ. 13-16:

վիժվածքներ» քաղաքական մեղադրականներով գրողների միությունից հեռացնում է Խանջյանի համակիրները համարվող հայ գրողներ Գ. Վանանդեցուն, Վ. Թորթվենցին, Գ. Մահարուն, Ա. Բակունցին, Դ. Տեր-Միմոնյանին, Վ. Նորենցին, իսկ մեկ ամիս անց, օգոստոսին, նրանք ձերբակալվում են⁸²:

Գրողների միության կուսկազմակերպության հիշյալ ժողովի ելույթների տեքստերում «նացիոնալիստ» բառը պարունակող համարյա յուրաքանչյուր նախադասություն, սակայն, ընդհանուր բնութագիր էր և չէր բացատրում «նացիոնալիստ» հայտարարված գրողների «հակահեղափոխական նացիոնալիզմը»: «Նացիոնալիզմ»ը որպես հակահեղափոխական հանցանք փնտրող գրողներին քաղաքական օգնություն էր հարկավոր, և այդ օգնությունը հասնում է Բերիայից. Խանջյանի սպանությունից տաս օր անց, Թիֆլիսում հրատարակվող «Заря Востока» թերթի հուլիսի 20-ի «Փոշիացնել սոցիալիզմի թշնամիներին» Բերիայի հողվածով հասկանալի է դառնում, թե որտեղ է թաքնված հայկական «հակահեղափոխական նացիոնալիզմը»: «Հիմա արդեն պարզվել է, – գրում է Բերիան, – որ Խանջյանը տարիներ շարունակ պարբերաբար նամակագրություն է ունեցել արտասահմանում (Փարիզում) գտնվող հայկական հակահեղափոխական բուրժուա-նացիոնալիստական «Ռ-ամկավար» կուսակցության հայտնի ներկայացուցիչ ուն Չոպանյանի⁸³ հետ: Այդ գրագրությունը Խանջյանը թաքցրել է կուսակցությունից: Խանջյանին ուղարկվող նամակներում այդ Չոպանյանը հակահեղափոխական, նացիոնալիստական խորհուրդներ է տվել Խանջյանին: ...1936 թ. նամակում նոր Մահմանադրության առիթով Չոպանյանը խորհուրդ է տվել Խանջյանին դնել սահմանների վերանայման և ընդարձակման հարցը: Նա գրում է, որ խոսքը ոչ միայն Թուրքիային տրված Անիի, Արարատի, Կարսի և Սուրմալուի մասին է, այլև Ախալքալակի, Ղարաբաղի, Նախիջևանի, որոնք միշտ Հայաստանի մաս են եղել: Խանջյանը ոչ միայն այս կարգի նամակներ է ստացել, այլև հնարավոր է համարել դրանց պատասխանել և նույնիսկ հետևել այդ հակահեղափոխական խորհուրդներին... Խանջյանն ուղղակի հովանավորել է հայ մտավորականության, գրողների մի մասին՝ կատաղի

⁸² Ա. Խանջյանի մահվան և գրողների ձերբակալությունների մասին Վ. Ալազանի հիշողությունները տես Վ. Ալազան: Տառապանքի ուղիներով // «Գարուն», 1989, թիվ 1:

⁸³ Չոպանյան Արշակ – (1872-1954) Հայ գրող, թարգմանիչ, հրապարակաոս, քաղաքական և հասարակական գործիչ, «Ռամկավար» կուսակցության անդամ: Առաջին հայացքից տարօրինակ է թվում, որ բոլշևիկները Խանջյանի նացիոնալիզմը հաստատելու համար Սփյուռքի հայերից հենց Չոպանյանի հետ նամակագրության հանգամանքն էին ընտրել: Ա. Չոպանյանը դեռևս 19-րդ դ. վերջերից հայտարարում էր իր ռուսական կողմնորոշումը և հետագայում հավանությամբ էր վերաբերում խորհրդային Հայաստանի գոյությանը և Հայաստանի թեկուզ փոքր ինքնավարության հեռանկարը կապում էր հենց Ռուսաստանի հետ: Ստորև կտեսնենք, որ հայկական ռեպրեսիաների առանձնահատկությամբ Ա. Չոպանյանին թիրախավորելը միանգամայն տրամաբանական էր:

նացիոնալիստական տարրերին»: Այսպիսով տեղեկացվում է, որ հայկական «հանցավոր նացիոնալիզմը» նախ և առաջ Հայաստանի խորհրդայնացման շրջանում Թուրքիային և Ադրբեջանին անցած հայկական տարածքների վիճարկման հնարավորության հարցն է: Խորհրդային Հայաստանում այդ մասին բարձրաձայն չէին խոսում, բայց սփյուռքում Խանջյանի մահն ուղղակի կապում էին սահմանների խնդրին և համարում սպանություն. «*Աստիճանաբար լուրեր կը հասնէին արտասահման: Կը պարզուի, որ Խանճեան վեճ ունեցած է խորհրդային իշխանատրներուն հետ Հայաստանի հողային պահանջներուն շուրջ: Նոր սահմանադրութեամբ կը լուծուէր Անդրկովկասի ֆերերացիան ու Հայաստանի ներքին սահմանները կը դառնային վերջնական: Կը կարծուի, թէ Բերիայի հետ ունեցած վեճի ընթացքին է, որ Խանճեան սպաննուած է Թիֆլիսին մէջ*»⁸⁴:

Բերիայի հողվածը դառնում է «նացիոնալիզմ» փնտրող գրողների և չեկիստների կողմնորոշիչը: Հիմա արդեն չորոշակիացված-չառարկայացված դատադրություններից կարելի էր դուրս գալ և տեղափոխվել միանգամայն հուսալի գործնական հարթություն: Հայ գրողները «հայկական նացիոնալիզմը» հուսալիորեն երաշխավորող սահմանների վիճարկումից դուրս են գալիս ավելի լայն ասպարեզ՝ համեմելով այն զգայական ու գործնական-առօրեական «ապացույցներով». դա Թուրքիային մնացած կորցրած հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ կարոտն է, Խորհրդային Հայաստանի «լուսավոր ներկայով ու ապագայով» խանդավառ ուրախության փոխարեն՝ հայրենիք վերադառնալու թաքուն հույսերը կամ անցյալը լուսապսակով զարդարելու կասկածելի ձգտումը (ինչը մեկնաբանվում է որպես հոռետեսություն խորհրդային ապագայի նկատմամբ), թուրքերի կողմից հայերին ջարդելու հիշողությունները («ոսպիզմ է և թշնամություն է սերմանում ժողովուրդների միջև»): Օգոստոսի 7-ի ելույթում Հ. Քոչարն արդեն սկսում է որոշակիացնել, հստակեցնել նացիոնալիզմի դրսևորումները հայ գրողների կենցաղում և ստեղծագործություններում. *սասունցի Վաղարշակ Նորենցը նացիոնալիստ է, որովհետև իր փղայի անունը Սասունիկ է դրել* (այսինքն՝ Նորենցն իր որդուն անվանակոչել է Թուրքիայում գտնվող իր հայրենիքի՝ Սասունի անունով - Հ. Խ.): Վ. Նորենցն ու Ա. Բակունցի «Ծիրանի փողի» *Սասուն վերադառնալ ցանկացող հերոսը հիշեցնում են իրար...* (երկուսն էլ հանցագործ են, քանի որ հերոսացնում են Սասուն՝ հայրենիք վերադառնալ ցանկացողներին - Հ. Խ.): Քոչարն առաջարկում է Նորենցին վտարել կուսակցության շարքերից որպես նացիոնալիստի⁸⁵: Հ. Քոչարին երկրորդում է Ն. Զարյանը. «*Բակունցի «Սև*

⁸⁴ Գ. Լազեան: Հայաստան եւ Հայ դատը, էջ 336:

⁸⁵ ՀԽՍՀ կուսակցական կազմակերպության 1936 թ. օգոստոսի 7-ի ժողովից: ՀՀՍԱ, ֆ. 1346, ց. 1, գ. 4, թ. 13-16, էջ 104-106:

ցելերի սերմնացանը», Մկրտիչ Արմենի «Երևանը», Թոթովենցի «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա», «Հրկիզված թղթեր», Եղ. Չարենցի «Գիրք ճանապարհին», Գ. Վանանդեցու և ուրիշների «Հայ գրականության պարմությունը» ... այս գրքերում Բակունցի նացիոնալիստական-պրոցկիստական խմբակը դնում էր Հայաստանի սահմանների հարցը և արելություն էր հրահրում դեպի թուրքերը (Բակունց), հին, կիսաֆեոդալական Երևանը հակադրում էր սոցիալիստական շինարարությանը (Արմեն), քարոզում էր հայերի և թուրքերի թշնամության ռասայական տեսությունը (Թոթովենց), հայ ժողովրդի ասպզան համարում էր մութ և անհայտ (Չարենց), հայ անցյալի գրական նացիոնալիստական գործիչներին զարդարում էր դեմոկրատիզմի լուսապակով (Վանանդեցի, Դրաստամար Տեր Մինոնյան) ...⁸⁶:

Օգոստոսի 19-ին «Պրավդա» թերթում հրատարակվում է Լ. Բերիայի մեկ այլ ուղենիշային հոդված՝ «Փոշիացնել, հողմացրիվ անել սոցիալիզմի թշնամիներին», որը երկու օր անց վերատպվում է «Խորհրդային Հայաստան» օրաթերթում. «Ջգասպություն չհայտարարելով պրոցկիստների և դաշնակների դեմ մղվող պայքարում, յերկերեսանիություն անելով կուսակցության հանդեպ, Խանջյանն ուղղակի հովանավորում էր այն ազգայնական ասնձարձակ փարրերին, վորոնք բուն էյին դրել հայ ինտելիգենցիայի մեջ, գրողների մի վորոշ հարվածում, վորոնք բացահայտ պայքար էյին մղում հայ ժողովրդի ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի դեմ, հակադրելով դրան «ձևով ազգային և բովանդակությամբ ազգայնական» կուլտուրայի հակահեղափոխական ֆորմուլը»⁸⁷:

Թերթի նույն համարում տպագրվում է հայ գրողների հեռագիրը Բերիային, որով նրանք շտապում են «Մեր սիրելի դեկալար, Անդրկովկասի ժողովուրդների եղբայրության հմուտ կազմակերպիչ ընկեր Բերիային» տեղեկացնել, որ գրողները պատրաստ են պայքարելու «պրոցկիստական-նացիոնալիստական թափփոխների»՝ «Անդրկովկասի ժողովուրդների եղբայրության դիտրիմ թշնամիների» դեմ և «մերկացնելու նրանց գործակիցների զազրելի էությունը», և որ իրենք «արելությամբ և զզվանքով են լցված նացիոնալիստական և պրոցկիստական այն թափփոխների դեմ, որոնց դու դիմակազերծ ես արել «Պրավդայի» քո հոդվածում»⁸⁸:

⁸⁶ Լ. Չարյան. Ընդդեմ նացիոնալիզմի և տրոցկիզմի, հանուն սոցիալիստական մեծ գրականության // «Գրական սերունդ», 1936, թիվ 4, էջ 15-19:

⁸⁷ «Սովետական Հայաստան», 1936, 21 օգոստոսի:

⁸⁸ «Սովետական Հայաստան», 1936, 21 օգոստոսի:

ՀԱՅՍՍԱՍԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԻ ՎՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ Ը Ն Կ. Բ Ե Ր Ի Ա Յ Ի Ն

ՄԵՐ ՄԻՐԵՆԻ ԸՆԿՎԱԿԱՐ, ԱՆԿԸՐ
ԿՈՎՎԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ՑԵՂ
ԲԱՅՐՈՒԹՅԱՆ ՀՄՈՒՑ ԿԱԶՄԱԿԵՐ-
ՊԻՉ ԸՆԿԵՐ ԲԵՐԻԱ.

Հայաստանի հորհրդային Գրողնե-
րի Ցերեկամի կազմակերպությունն
իր ընդհանուր ժողովում ամենաժամ
գոհունակությամբ հավանությամբ
տվեց այն դատավճռին, վար պրոյե-
տարիատի հեղափոխական դատարա-
նը կայացրեց հակահեղափոխական
փաշխատական քափքփուկների, տը
րոցկիստական - գինույնվական բան
դայի նկատմամբ:

Այդ դատավճիռը բղխում էր մեր
սրտից— բղխում էր հորհրդային
Միության վաղ աշխատավարու-
թյան, ամբողջ աշխարհի աշխատա-
վորների այն ամենաժամ հավատից
ու սիրուց, վար ունեն նրանք դեպի
սոցիալիզմի հայրենիքը, դեպի ժողո
վուրդների մեծ առաջնորդ, մեր մեծ
Ստալինը:

Մերնի ընկեր ԲԵՐԻԱ, մեզ, հոր-
հրդային Հայաստանի գրողներին
շատ լավ հայտնի չե այն ջերմ հո-
գատար վերաբերմունքը և մեծ ու-
ժանդակությունը, վար դու համդես
եա բերել դեպի Անդրկովկասի բար
ժողովուրդները, դեպի հայ ժողո-
վուրդը և նրա կուլտուրան:

Մեզ հայտնի չե նաև այն բուշե-
վիկյան պայտոր, վար դու տա-
րել ես Անդրկովկասի հակահեղա-
փոխական նացիոնալիստական-տրոց
կիստական քափքփուկներին դի-

մակագերծ անելու և մեր հայրենի-
քը փաշիզմի այդ գործակալներից
մաքրելու համար:

Մենք զզվանքով ու ասելուսյամբ
ենք լցված նացիոնալիստական-տրոց
կիստական այն քափքփուկների նը-
կատմամբ, վարանց դու դիմակագերծ
ես արել «Պրավդա»-յի ֆո հողվա-
ծում, վարանց ներկայացուցիչները
հանջյանի ստոր հովանավորությամբ
շնորհիվ բուն էյին դրել նաև մեր
կազմակերպության, Հայաստանի
հորհրդային Գրողների Միության
մեջ: Գրողների Միությունը դուրս
վտարեց իր շարքերից մեր սոցիալիս
տական հայրենիքի, Անդրկովկասի
ժողովուրդների յեղարարության այդ
վոխերիմ քշմախներին, հեղահե-
ղափոխական նացիոնալիստ-տրոց-
կիստ Սիմոնյանին, Բախունջին, Ա-
լազամին և մյուսներին:

Հայաստանի Գրողների Միությու-
նը մինչև վերջ կմերկացնի այդ հա-
կահեղափոխական քափքփուկների
ու նրանց գործակիցների զազրելի ե-
յուրյունը և կմաքի իր շարքեր
այդ քարախից՝ Հայաստանի կրթի
կենտկուժի բուշեվիկյան դեկալարու-
թյամբ ե՛լ ավելի մեծ յեռանդով կը-
լծվի մեր ձևով ազգային, բուլմեդա
կուրյամբ սոցիալիստական կուլտու-
րայի զարդացման գործին:

Կեցցե՛ Անդրյերկունն ու նրա մտը
տական դեկալար ընկեր Բերլան.

Կեցցե՛ մեր մեծ ուսուցիչ, ժողո-
վուրդների մեծ առաջնորդ ընկեր
Ստալինը:

Լուսանկար 4. «Սովետական Հայաստան», 1936, 21 օգոստոսի

Օգոստոսի 5-ին ՆԳԺԿ հարցաքննության է կանչվում գրող Ա. Բակունցը և ՆԳԺԿ-ի պետ Խ. Մուղդուսուն ցուցմունք է տալիս (ՆԳԺԿի՝ ցուցմունք կորզելու մեթոդներին չեմ անդրադառնալու, դրանք բավականաչափ հայտնի են ԽՍՀՄ բռնաճշումները հետազոտողների աշխատանքներից), որ 1933 թ.-ից սկսած ինքն ու Չարենցը կազմակերպել են հակախորհրդային մի կազմակերպություն, որին նույն թվականին հարել են գրողներ Վ.Ալազանը,

Վ.Նորենցը, Գ.Վանանդեցին և Ն.Ստեփանյանը, այնուհետ նաև՝ Մ. Արմենը, Գ. Մահարին⁸⁹: Օգոստոսին ձերբակալվում է «հայ ինտելիգենցիայի մեջ բուն դրած ազգայնական սանձարձակ տարրերի»՝ հայ գրողների առաջին խումբը և հայտարարվում է Հայաստանում գաղտնի *հակախորհրդային նացիոնալիստական* խմբի գոյության մասին: Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին «նացիոնալիստ» բառը զարդարում էր թերթերի առաջնորդողների վերնագրերը՝ առաջիկա երկու տարիներին դառնալով պարտադրված հասարակական քննարկումների (յուրաքանչյուր աշխատանքային կոլեկտիվ պարտավոր էր քննարկել և դատապարտել նացիոնալիստ թափթփուկներին և խանդավառ ուրախությամբ հավանություն տալ նրանց հետապնդումներին) և դատապարտող քաղաքական հռետորաբանության հիմնական նյութը: «Գրական լեզվի նացիոնալիստական աղավաղումների դեմ» («Խորհրդային գրականություն», 1936, թիվ 3-4), «Ընդդեմ նացիոնալիզմի եւ տրոցկիզմի, հանուն սոցիալիստական մեծ գրականության» («Գրական սերունդ», 1936, թիվ 4, էջ 15-19), «Կապը կտրած խմբապետը» («Գրական սերունդ», 1936, թիվ 5-6, էջ 33-35), «Նացիոնալիստը խորհրդային գրողի դիմակով» («Գրական թերթ», 1936, թիվ 19, 25 օգոստոսի), «Հակասովետական տրոցկիստ-նացիոնալիստական վիժվածքներ» («Սովետական Հայաստան», 1936, 2 սեպտեմբերի), «Նացիոնալիստական-տրոցկիստական տականքներ» («Սովետական Հայաստան», 1936, 4 սեպտեմբերի), «Ատում և զգվում ենք նացիոնալիստական-տրոցկիստական տականքներից» («Սովետական Հայաստան», 1936, 4 սեպտեմբերի) և այլն: «Նացիոնալիստական-տրոցկիստական տականքներից» ատելության ու զգվանքի համաժողովրդականությունն «ապահովվում է» նախ կուսակցական կազմակերպությունների տեղական՝ Գորիսի, Թալինի, Ամասիայի... շրջանների բոլոր գյուղերի կուսակցական բջիջներում ժողովներով, որոնցում «զայրոյթով դատապարտում են Ա. Խանջյանի դավաճանական քայլը»⁹⁰, ապա աշխատավորական կոլեկտիվների ժողովներով, որոնցում պահանջում են «օրենքի ամբողջ խստությամբ պատժել հակահեղափոխական տրոցկիստական բոլոր տականքներին»⁹¹, իսկ սեպտեմբերի 29-ին Կիրովականի կուսշրջկոմի քարտուղար Բ. Ներսիսյանը «Մինչև վերջ դիմակազերծ անել անարգ թշնամիներին յեվ նրանց գործակալներին» հոդվածով առաջարկում է նացիոնալիստներից մաքրել նաև կոմերիտ-երիտասարդության շարքերը՝ չմոռանալով անուններով թվարկել «հակահեղափոխական-

⁸⁹ Խորհրդային բռնությունների հետազոտող Յ. Միրզոյանը գրում է, որ Բակունցի հարցաքննության արձանագրության բնօրինակն ինքը տեսել է, և այնտեղ Բակունցի ստորագրությունը չկա (*Г.Мирзоян. Советские правители Армении, Ноев Ковчег, ном. 2 (137), февраль, 2009, <http://www.noev-kovcheg.ru/mag/2009-02/1526.html#ixzz34zAmhUal*) (Վերջին անգամ կայքէջը ստուգել եմ 01.05.2015>):

⁹⁰ «Սովետական Հայաստան», 1936, 23 հուլիսի:

⁹¹ «Սովետական Հայաստան», 1936, 17 օգոստոսի:

Խորհրդային ամբողջատիրությունը փաստացի նախապատրաստում էր հենց այն, ինչ գերմանական ֆաշիզմն իրականացրեց պատերազմի տարիներին՝ ողջ գերմանական ժողովրդին ներքաշելով ֆաշիզմի հանցակցության մեջ⁹⁴:

Բերիայի հողվածից հետո «հայկական նացիոնալիզմի» բոլշևիկյան ընթացիկ բնութագիրն աստիճանաբար ձևավորվում է հայկական մամուլում՝ դաշնակցական համակրանք, արևմտահայաստանամետություն, սահմանների անձեռնմխելիության նկատմամբ կասկած, հայ և թուրք ժողովուրդների անցյալի բարեկամության նկատմամբ կասկածամտություն՝ դրանք դիտարկելով որպես հակասովետականություն, հետևաբար՝ թշնամություն խորհրդային կարգերին, ուրեմն՝ ժողովրդի թշնամի:

1936 թ. դեկտեմբերի 31-ին «Գրական թերթ»ի «Դաշնակցական տակաձևը» վերնագրով հողվածով ծագումով խարբերդից, Ցեղասպանության ջարդերի բոլոր սարսափներն ապրած, «արևմտահայ կարոտների երգչի» համարում ունեցող, «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» գրքի հեղինակ Վ.Թոթովենցն «աջ տրոցկիստական է», «ահաբեկչական խմբակցության անդամ», «նացիոնալիստ», «ազգայնամոլ», «ռասիստ», «շովինիստ», «ֆաշիստ», «եղել է Անդրանիկի համհարզը», «խմբապետ», «Թոթովենցին հովանավորել է դավաճան Իսանջյանը»... «Մերկացված տրոցկիստ-նացիոնալիստ, հակահեղափոխական, գրական խայտուրիստ Վահան Թոթովենցի գողոզիական նացիոնալիզմը», ըստ հեղինակի, դրսևորվել է ««Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» գրական վիժվածքում»՝ հայկական ջարդերի որոշ նկարագրություններում, որոնցում նա «կեղծում է անցյալի իրական դասակարգային հարաբերությունները... Նկարագրելով ազգամիջյան փոխհարաբերությունները թթու ազգայնամոլի տեսանկյունով, որի համար գոյություն չունեն դասակարգային պայքար, հայ ու թուրք աշխատավորներ, այլ կա միայն «հայեր ու թուրքեր»: Վ.Թոթովենցին չէր ներվում Արևմտյան Հայաստանի և ցեղասպանությունից փրկված արևմտահայերի ճակատագրով իր շարունակական մտահագրությունը: Դեռևս 1917 թ.-ին նա էր, որ ձևակերպել էր արևմտահայության կարիքների բացահայտմանը միտված «Հայաստան» նորաստեղծ թերթի հիմնական նպատակները. թերթը չի սպասարկելու որևէ կուսակցության կամ հասարակական-քաղաքական հոսանքի շահերը, այն ստեղծվում էր արևմտահայության խնդիրների և կարիքների բացահայտման ու լուծման առաջարկների հավաքման, քննարկման, հայրենիքի վերականգնման համար արևմտահայության համախմբանը և երկրի հասարակական-քաղաքական ղեկավարությունը իրենց ձեռքը վերցնելուն նպաստելու, միջազգային

⁹⁴ X.Арендт. Организованная вина // «Скрытая традиция» գրքում, Москва, «Текст», 2008, էջ 40-44:

հանրությանը Արևմտյան Հայաստանի աղետալի վիճակը ներկայացնող նյութեր հավաքելու, արևմտահայերն լեզուն և գրականությունը քարոզելու նպատակով: Դեռևս 1917 թ. մարտի 21-ին Վ.Թոթովենցը դիմել էր Ա.Չոպանյանին՝ խնդրելով նպաստել այս օրակարգի շուրջ հեղինակավոր հայերին համախմբվելու գործին⁹⁵: «Հայաստան» թերթի գաղափարական ոգեշնչողը եղել էր Անդրանիկ Օզանյանը, որի գերագույն խնդիրը Ցեղասպանությունից փրկված հայերի վերադարձն էր հայրենիք: Այդ նպատակները 1936 թ.-ին ռասիստական և հակասովետական էին որակված, իսկ Արևմտյան Հայաստան հիշողները՝ նացիոնալիստ:

«Գրական թերթ»-ի 1937 թ. մարտի 10-ի համարում «Նացիոնալիստ տականքների հոգեդրոդին» վերնագրով հոդվածում Հր. Քոչարը քննադատում է Խ. Դաշտենցի 19360 թ.-ին հրատարակված «Բոց» բանաստեղծական ժողովածուն: «Նացիոնալիստ տականքները» Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Գ. Մահարին, Վ. Ալազանը, Վ. Նորենցն են, «հոգեդրոդին»՝ Խ. Դաշտենցը, որի «ապաշտրի այս գիրքը տրոցկիստական-նացիոնալիստական գրական վիժվածք է», «տրոցկիստի եւ նացիոնալիստի ծանոթ երգ է, կամ ավելի ճիշտ՝ նրա նվոցն առաջին հաղթական հնգամյակի դեմ», ժողովածուում «լալիչության է հասնում հակահեղափոխական, բակունցյան այն ժխտական վերաբերմունքը, որ հանդես է բերված դեպի «հյուսիսի» (ռուսական – Հ. Խ.) կոլտուրան, որին հակադրվելու համար նույն էջում նա գովերգում է Արագածն ու Արարատը, որոնց սովերները դրոշ են երիտնացիոնալիստի համար» (գլխավոր մեղքը Թուրքիայի տարածքում մնացած Արարատ սարը հիշատակելն է, «հյուսիսի» կոլտուրան ժխտելու որևէ ակնարկ չկա): «Բոց»ի շուրջ սկսված աղմուկը երկարում է, և 1910 թ.-ին Արևմտյան Հայաստանում Բիթլիսի Դաշտադեմ գյուղում ծնված ու վաղ մանկական տարիքում ցեղասպանությունից փրկված Խ. Դաշտենցը խոհեմություն է ունենում հեռանալ Մոսկվա, որտեղ մնում է մինչև պատերազմը: Նա, բարեբախտաբար, դեռ կարող էր այդ անել, երիտասարդ էր և շատ հայտնի չէր:

1937 թ. մարտի 1-ին ԽՍՀՄ «Գլավլիտը»⁹⁶ «Գաղտնի» մակագրությամբ տեղեկացնում է ԽՍՀՄ ԿԿ գլխավոր գաղափարախոս Ա. Ժդանովին, որ «Հայ բանաստեղծ Չարենցի 1933 թ.-ին Երևանում լույս տեսած «Գիրք ճանապարհի» ժողովածուի «Պատգամ» բանաստեղծության տողերի երկրորդ

⁹⁵ Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ա.Չոպանյանի ֆոնդ, Թղթապանակ 2411, Թ. 1:

⁹⁶ Գլավլիտ - Ռուսերեն Главное управление по делам литературы и издательств – Главлит հապավումը (Գրականության և հրատարակչության գործերի գլխավոր վարչություն): 1922-1991 թ. ընթացքում ԽՍՀՄում տպագրվող ստեղծագործություններում պետական գաղտնիքի հրապարակումը կանխարգելելու նպատակով տպագրությունից առաջ նախնական գրախոսություն իրականացնող պաշտոնական մարմին՝ ԽՍՀՄ պետական վերահսկողական վարչություն: Իրականում վերահսկում էր հրապարակվող նյութերում կոմունիստական գաղափարախոսության անհրաժեշտ չափաբաժնի պահպանության անհրաժեշտությունը:

տառերն ուղղահայաց ընթերցելու դեպքում գաղտնի նացիոնալիստական կոչ է բացահայտում՝ «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»⁹⁷: Հարց է առաջանում, թե ումից կամ ինչից է Չարենցն ուզում «փրկել հայ ժողովրդին» և ինչու՞ է դա փաստացի գաղտնագրված (մեզոստիքոս)⁹⁸: Ապրիլի 16-ին գրողների միությունից Չարենցի վտարման հարցը քննարկող գրողների ընդլայնված նիստում Հ. Քոչարը հայտարարում է, որ Չարենցն «իր սրեղծագործության մեջ միշտ աշխարհ է նացիոնալիզմին հազցնել գեղարվեստական շապիկ... Նրա սրեղծագործությունները հանդիսանում են հայկական նացիոնալիզմի սնապանծ արտահայտությունները: <Չարենցի հովանավոր> հակահեղափոխական-նացիոնալիստ Խանջանին Ար. Չոպանյանը առաջադրում է սահմանների հարցը, Ղարսի հարցը և սոսիալարակ Խանջանը և նրա ռեմակը հրահրում էին այդ հարցը»⁹⁹:

Չայած հրապարակախոսական հոետորաբանության մեղադրանքներում ամենից ավելի հնչում էր «տրոցկիստ-նացիոնալիստ» ձևակերպումը, թե՛ հրապարակախոսները, թե՛ քննչական մարմինները «տրոցկիզմ» չէին փնտրում, այլ հատուկ մանրակրկիտությամբ շեշտը դրվում էր «նացիոնալիզմի» փնտրտուքին: 1936-37 թթ.-ին ձերբակալված բոլոր հայ գրողները «նացիոնալիստ» էին (Ե. Չարենց, Ա. Բակունց, Վ. Թոթովենց, Վ. Ալազան (ձերբակալվել է տաս տարով ազատագրվման է դատապարտվել նաև նրա եղբայրը՝ նկարիչ Եղիազար (Դանչո) Գաբուզյանը)¹⁰⁰, Գ. Մահարի, Գ. Վանանդեցի, Լեռ Կամսար, Զ. Եսայան, Վ. Նորենց, Դ. Տեր-Սիմոնյան, Է. Չոփոնյան, Ե. Չուբար, Մ. Ջանան, Ե. Մակինց, Ա. Վշտունի և այլն): Ուշագրավ է, որ ձերբակալված գրողների բացարձակ մեծամասնությունը թուրքահայեր էին (գլխավորապես՝ Արևմտյան Հայաստանից), կամ՝ Արևելյան Հայաստանի այն հատվածից, որոնք բոլշևիկները 1921 թ.-ին հանձնեցին Թուրքիային

⁹⁷ «Չարենցապատում ըստ անտիպ վավերագրերի. 3. *Բախշինյանի* հրապարակումներով, մեկնաբանությամբ և ծանոթագրություններով», Եր., «Սարգիս Խաչենց», 1997; *Ա. Գրիգորյան*, Եղիշե Չարենցի «Պատգամն» իբրև մեզոստիքոս, <<http://cultural.am/hy/norutyunner/hodvacner/egishe-charenci-patgamn-ibrev-mezostiqos>> (01.05.2015):

⁹⁸ Նույնիսկ քսան տարի անց, Ստալինի մահից և Բերիայի գնդակահարությունից հետո Յայաստանի քաղաքական-հասարակական միջավայրն այնքան վախեցած էր, որ 1955 թ.-ին Չարենցի և բռնադատված մյուս գրողների արդարացումը մասնագիտորեն հիմնավորելու նպատակով ստեղծված հանձնաժողովը (նախագահ՝ Զ. Քոչար, անդամներ՝ Գ. Բորյան, Է. Թոփչյան, Ա. Ասատրյան, Զ. Մկրտչյան, Զ. Սալախյան) հատուկ է անդրադարձել «Պատգամ»ին և գզուշորեն գրել, թե Չարենցը դժգոհ էր ոչ թե կարգերից, այլ միայն նրա մի ղեկավարից. «Գիրք ծանապարհի»ի մեջ զետեղված է «Պատգամ» ակրոստիքոսը, որի մեջ բանաստեղծը պատգամում է. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: Այս բանաստեղծությունը Չարենցի ներքին բողոքի արտահայտությունն էր ընդդեմ իմպերիալիզմի լակեյ Բերիայի քաղաքականության՝ ուղղված Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության ոչնչացման դեմ»:

⁹⁹ Յայաստանի գրողների միության 1937 թ. ապրիլի 16-ի ժողովին Զր. Քոչարի ելույթից, տե՛ս «Չարենցապատում ըստ անտիպ վավերագրերի», էջ 106:

¹⁰⁰ *Ա.Անունյան*: Քաղաքական բռնաճնշումները Յայաստանում, էջ 107:

(Չարենցն ու Վանանդեցին Կարսից էին, Թոթովենցը՝ Խարբերդից, Ալազանը, Գարուզյանը, Մահարին, Վշտունին, Լեռ Կամսարը, գրականության ինտի տնօրեն Հենրի Գաբրիելյանը՝ Վանից, Չ. Եսայանը, Մ. Ջանանը, Է. Չոփուռյանը՝ Կոստանդնուպոլսից, Վ. Նորենցը՝ Սասունից): Նրանք բոլորը ցեղասպանությունը վերապրած փախստականներ էին¹⁰¹: Արևմտյան Հայաստանից՝ Վանից էր նաև սպանված Ա. Խանջյանը, ում ընտանիքն Արևելյան Հայաստանում հայտնվել էր նույնպես ցեղասպանության հետևանքով:

Նրանցից շատերին առաջադրված «հակասովետական» մեղադրանքում փաստարկներից մեկը Սփյուռքի հայ գրող, քաղաքական գործիչ Ա. Չոպանյանի հետ կապեր ունենալու հանգամանքն էր: Ա. Չոպանյանի հետ որևէ առնչություն պետական հանցագործության մակարդակի հարց էր դարձել: Հայերեն այբուբենը լատիններենով փոխարինելու և լեզվի ռեֆորմի գաղափարների առաջատար, Հայաստանի նախկին լուսժողով, Չոպանյանի հետ նամակագրություն ունեցած Պ. Մակինցյանը 1938 թ. հուլիսի 18-ին գնդակահարության դատապարտվեց նույնպես «աջ-տրոցկիստական, ազգայնամոլական» գործունեության համար¹⁰²: Նրան մեղադրում էին նաև Բերիայի դեմ տեռորիստական մահափորձ կազմակերպելու մտադրություններ ունենալու մեջ:

Ա. Չոպանյանից բխող մեծագույն վտանգը, ինչպես Բերիան գրել էր, «Անին, Արաբատը, Կարսը և Սուրմալուն, այլև Ախալքալաքը, Ղարաբաղը, Նախիջևանը» Հայաստանին միացնելու հարցի առաջադրում էր: Սա դի-

¹⁰¹ «Գրողական միջավայրի» «հականացիոնալիստական» հանրային հռետորաբանների մեջ աչքի էին ընկնում նույնպես արևմտահայերը, հատկապես Ն. Զարյանը (Վան քաղաքից) և Դ. Քոչարը (Բագրևանդից): Երկուսն էլ՝ պատանեկությանը Ցեղասպանության բոլոր սարսափներով անձամբ անցած, երկուսն էլ՝ որք մեծացած: Պետական տեռորի ահագնացող մեխանիզմում նրանց դերի մասին չխոսել, իհարկե, չի կարելի: Շատ ավելի ցավոտ է այդ դերի ձևավորման բարոյա-հոգեբանական նախադրյալների հարցը: Նրանց արարքը միայն փաստում է պետական տեռորի հրեշավոր ազդեցությունը մարդկանց գիտակցության վրա: Գուցե նրանց աղմկոտ դատապարտումները ինքնապաշտպանական էին, Ցեղասպանությունից փրկված պատանիների խաթարված հոգեբանության դրսևորում: Նրանց պատանեկությունն ու երիտասարդությունն անցել էր «որևէ կերպ կենդանի մնալու» սևեռուն գաղափարի պայմաններում: Ցեղասպանության շրջանում ընտրելու հնարավորություն չկար, նրանք հայ էին ու դրանով՝ դատապարտված: Կար արդյոք բռնաձնշումների շրջանում ընտրության հնարավորություն: Քոչարի դեպքում խնդիրը բարդանում էր նաև նրանով, որ նրա հայրը՝ Քոչար Գաբրիելյանը թուրքերի դեմ կռվել էր Անդրանիկի ջոկատում (խմբապետ Քոչո), իսկ դա 30ականների բռնաձնշումներում հայկական նացիոնալիզմի վկայություններից մեկն էր: Ձերբակալվել և գնդակահարության էր դատապարտվել Ջանֆիդա գյուղում ապրող Քոչոյի մտերիմ ընկեր Բ.Սարգսյանը: Նույն մեղադրանքներով, ինչ կարող էր Քոչոյին առաջադրվել, եթե նա կենդանի լիներ: Դ. Քոչարն իրեն պետք է որ թակարդում գգար: Թվում էր՝ ելք կար: Ուրիշների կյանքերի հաշվին: Սակայն այս ծանապարհն ընտրելուց հետո այլևս հետդարձ չկար: Դնարավոր է երբևէ չափել մարդկանց գիտակցության և վարքի վրա սարսափելի ցեղասպանության ու դրան հաջորդած քաղաքական բռնաձնշումների ազդեցության ձևերը, ծավալն ու խորությունը:

¹⁰² Ա.Մանուկյան: Քաղաքական բռնաձնշումները Հայաստանում, էջ 71:

տարկվում էր որպես նացիոնալիզմ և, ըստ երևույթին, պետք է ենթադրել, որ ԽՍՀՄ վերադաս պաշտոնական օդակներում «հայկական նացիոնալիզմը» վերացնելու խնդիրներից մեկը կորսված հայրենիքի հիշողությունը կամ, առնվազն, դրա բարձրաձայնումն արգելելն էր: Ընդհանուր ԽՍՀՄ քաղաքական բռնությունների ստեղծած տագնապի ու վախի մթնոլորտը հիանալի առիթ էր թե բռնությունն ինքնին Հայաստանում իմաստավորելու, թե բոլշևիկների կողմից հայերի համար ձևակերպված «հայկական նացիոնալիզմը»՝ սահմանների վերանայման հնարավոր հույսերը ճնշելու, թե Հայաստանի և ԽՍՀՄ այլ հանրապետությունների հայերի հանդեպ բռնություններով Սփյուռքի հայերի միջավայրում առկա և հնարավոր «նացիոնալիստական» քաղաքական ծրագրերը զսպելու հնարավորությունը, թե, վերջապես, Հայաստանում հաստատված թուրքահայ փախստականների վերադարձի բոլոր թաքուն հույսերն արմատախիլ անելու համար: Հարկավոր էր այս նպատակին հասնել՝ ոչ մի կերպ չբարձրաձայնելով «Արևմտյան Հայաստան», «արևմտահայություն», «փախստականներ», «թուրքահայեր», «հայկական ջարդեր» փաստացի արգելված բառերը¹⁰³. դրանք բոլորը փոխարինված էին անորոշ թվացող «նացիոնալիզմ», «նացիոնալիստներ», «ազգայնամուլներ» բառերով:

ԵԳԺԿի կողմից հայաստանյան «նացիոնալիզմի» ձևակերպման հատուկացումը լավ երևում է Ե.Ստեփանյանի հարցաքննությունների ընթացքից: 1936 թ. մայիսի 21-ին քննիչներն ասում են, որ իրենց հայտնի են նրա նացիոնալիստական հայացքները և պահանջում են մեղադրյալից խոստովանել, թե որո՞նք են դրանք: Ե.Ստեփանյանի պատասխանը. «...ինձ նացիոնալիստ են անվանում Հայաստանում ազգային-մշակութային շինարարության ճիշտ գծի վերաբերյալ իմ հայացքների համար, ինչպես Ե.Չարենցի նկատմամբ հարցն է, կամ՝ Կենտկոմում «Կռունկ» և «Ծիծեռնակ» երգերն արգելելու որոշման

¹⁰³ Խորհրդային հանրագիտարաններում, այդ թվում Մեծ հանրագիտարանի՝ БСЭ-ի (Большая советская энциклопедия) բոլոր երեք հրատարակություններում (1926-1947; 1949-1958; 1969-1978) Ցեղասպանությունից փրկված և Արևելյան Հայաստանում հաստատված հայերի, այդ թվում՝ հիշյալ գրողների մասին գրվում էր՝ ծնվել է Թուրքիայում այսինչ թվին, տեղափոխվել է Հայաստան: «Տեղափոխության» պատճառի, այսինքն՝ ցեղասպանության մասին՝ ոչ մի ակնարկ: Լույսն է պարագան նաև Սովետահայ հանրագիտարաններում կամ տեղեկատու այլ ժողովածուներում: Այլազան, օրինակ, ըստ 1974 թ.-ին հրատարակված Հայկական Սովետական Հանրագիտարանի, ծնվել է Վան քաղաքում (երկիրը չի նշվում) 1903 թ.-ին և 1914 թ.-ին գաղթել Երևան, ընկել որբանոց (հ. 1, էջ 134): Լույսնիսկ 1990 թ.-ին հրատարակված Հայկական Համառոտ Հանրագիտարանում պատկերը չի փոխվում՝ ծնվել է Վան քաղաքում, մահացել՝ Երևանում (էջ 73): Ո՛չ ցեղասպանության, ո՛չ աջտրման մասին որևէ տեղեկություն չկա: Այդպես է գրված նաև բռնաճնշումների արևմտահայ գոհերի փաստաթղթերում, այդ թվում՝ հետագայում՝ արդարացման փաստաթղթերում: Ընդ որում այդ մարդկանց ծնվելու ժամանակաշրջանում «Թուրքիա» անունով պետություն չկար, կար Օսմանյան կայսրություն: Խորհրդային Գլավլիտը Խորհրդային բառամթերքից հանել էր հայկական ջարդեր, կոտորածներ, հետագայում՝ Հայոց ցեղասպանություն, Արևմտյան Հայաստան բառերը:

դեմ ելույթի, Մոսկվայի հայ մշակույթի տունը Անդրֆեդերացիային հանձնելու Մուղդուսու և Ակոպովի առաջարկություններին դեմ ելույթիս համար, որը նացիոնալիստական որակվեց¹⁰⁴: Հաջորդ՝ մայիսի 29-ի հարցաքննությանը քննիչները «հակահեղափոխական» են անվանել այս ցուցմունքները և պահանջել ավելի մանրամասն ներկայացնել իր նացիոնալիստական հայացքները: Մ.Ստեփանյանն ասում է, որ Մոսկվայում սովորելու տարիներին, 1926 թ.-ին, սխալ հայացքների պատճառով գտնում էր, որ Ղարաբաղը և Ախալքալաքը պետք է Հայաստանի կազմում լինեին, բայց Հայաստան վերադառնալուց հետո հասկացել է իր սխալը և դրանց հակահեղափոխական, հակակուսակցական բնույթը¹⁰⁵: Հուլիսի չորսի հարցաքննության ժամանակ արդեն քննիչը հարցը ձևակերպում է՝ հաստատելով. «Քննությունը հաստատում է, որ Դուք հայկական հակահեղափոխական, ռազմատենչ նացիոնալիզմի հայացքների կրող եք: Ընդունում եք», ինչին վերջինս ստիպված է պատասխանել. «Այո, ընդունում եմ, որ ես հայկական նացիոնալիզմի հակահեղափոխական հայացքի կրող եմ և լիակատար էվոլյուցիա եմ կատարել մինչև դաշնակցականություն-տրոցկիզմ... Բայց իմ գործնական աշխատանքում ես դրանք չեմ կիրառել»: «Դա ճիշտ չէ, ճիշտ պատասխանեք», - պահանջում է քննիչը: Եվ «խոստովանում է», որ կիրառել է¹⁰⁶: Ու՛ր պիտի փախչեր ՄԳԺԿի չարձանագրվող սարսափելի մեթոդներից: Ցուցմունք վերցնողը չի հետաքրքրվում կիրառելու մանրամասներով, բավական է կիրառելու խոստովանությունը: Բայց դա դեռ բավարար չէր: Բերիայի ուղղորդող հոդվածի լույս տեսնելուց հետո Հայաստանի «թիվ մեկ նացիոնալիստը» մի շարք հարցաքննությունների ընթացքում դեռ պետք է «խոստովանի», որ հայացքներից բացի գործել է՝ հակահեղափոխական խմբակ է հավաքագրել գրողներից ու մտավորականներից, որտեղ քննարկել են Անդրերկրկումի ազգային քաղաքականությունը, ահաբեկչական մեթոդներով Անդրֆեդերացիան տապալելու, Բերիային սպանելու ծրագրեր... Իսկ ահա հոկտեմբերի 15-ին հարցաքննությանը ՄԳԺԿն ստանում է Բերիայի ցանկալի հաղթաթուղթը. Մ.Ստեփանյանը «խոստովանում» է, որ կուսակցության դեմ պայքարում պետք է օգտագործվեր «այսպես կոչված Հայկական հարցը»: Եվ քանի որ իրենք ԽՍՀՄ ազգային քաղաքականությանը հակադրելու ոչինչ չեն գտել, մնացել են դաշնակցական ծրագրերի հույսին: Մ.Ստեփանյանը «խոստովանում» է, որ անշուշտ դրանք հակահեղափոխական հայացքներ են, բայց իրենք գտնում էին, որ հայ ժողովուրդը «կույր աղիք» է թշվել և անհրաժեշտ է Հայաստանին միացնել Լեռնային Ղարաբաղը, Ախալքալաքը և Նախիջևանը, իսկ «անձամբ ես գտնում էի, որ պետք է Հայաստանին միացվեր Ադրբեջանի ողջ հայաբնակ լեռնային հատվածը: Մենք բոլորս գտնում էինք, որ վաղ թե ուշ պետք է Հայաստանին միաց-

¹⁰⁴ ԲՀԱԱ, Ֆ. 1191, Ց. 4, Գ. 101, Թ.2 շրջադարձ:

¹⁰⁵ Նույն տեղում, Թ. 11-13:

¹⁰⁶ Նույն տեղում, Թ. 79-81:

վի անմարդարնակ Կարսը... Մենք գտնում էինք, որ եթե առաջիկա տաս տարում Կարսը Հայաստանին չմիացվի, ոռոգման մեծ ցանց չկառուցվի և արտասահմանի հայերի մեծ ներգաղթ չլինի, ապա արտասահմանի հայերը վերջնականապես կծուվեն... Մենք Անդրերկրկոմի ղեկավարությանը և անձամբ Բերիային հակահեղափոխական բանսարկություններով մեղադրում էինք հակահայկական քաղաքականության մեջ, ավելին, հակահեղափոխական բանսարկությամբ վրացական նացիոնալիզմին օժանդակելու և հակահայկականության մեջ մեղադրում էինք Ստալինին»¹⁰⁷:

Ցանկալի փաստաթուղթն ստացված է: Փոխկապակցված «հանցագործները»՝ Ներսիկ Ստեփանյանն ինքը և նրա «ղեկավարած հակահեղափոխական, տրոցկիստական, նացիոնալիստական խմբի անդամների» հայտնի դեմքերը՝ ձեռքակալված գրողների բացարձակ մեծամասնությունը պատիժը ստացել են Ստալինի անձնական թույլտվությամբ, այսպես կոչված «ստալինյան ցուցակներով»¹⁰⁸: Այդ ցուցակներով հայ գրողներից գնդակահարվել են Ա. Բակունցը (ռուսերեն շարադրված ցուցակում սխալմամբ գրվել է Վակունց), Վ. Թոթովենցը, Ն. Մակինցը, Դրաստամատ Տեր-Միմոնյանը (ցուցակում անունը սխալմամբ գրված է Արաստամատ), Է. Չոփուռյանը, Ե. Չոբարը, Ջանանը (Ջանանյան Մկրտիչ Միհրանի), աքսորվել՝ Գ. Վանանդեցին (ցուցակում՝ Փոքրուդյան (Վանանդեցի) Գուրգեն), Ալազանը (ցուցակում՝ Գաբուզյան (Ալազան) Վահրամ), Մահարին (ցուցակում՝ Աճեմյան (Մահարի) Գուրգեն), Վ. Նորենցը, գրականագետ Հ. Գաբրիելյանը¹⁰⁹: Բնականաբար պատժվել են նաև Ն.Ստեփանյանի հարազատները՝ Սիբիր է աքսորվել կինը, որպես «ժողովրդի թշնամիներ» գնդակահարվել է Տաջիկստանում աշխատող եղբայրը՝ Միքայել Ստեփանյանը, տաս տարով բանտում են հայտնվել Արմեն և Ալեքսանդր Ստեփանյան եղբայրները, աշխա-

¹⁰⁷ Նույն տեղում, Թ. 185-186 շրջադարձը:

¹⁰⁸ Ստալինյան ցուցակ – ԽՍՀՄ Գերագույն դատարանի ռազմական կոլեգիայի կողմից դատապարտման ենթակա անձանց անվանական ցուցակ, որոնք մինչև դատարան ուղարկվելը հաստատվում էին անձամբ Ստալինի և Քաղբյուրոյի այլ անձանց (Վ.Մոլոտով, Լ. Կազանովիչ, Կ. Կորոշիլով, Ա. Ժրանով, Ա. Միկոյան, Ս. Կոսիոր) կողմից՝ «կողմ են» մակագրությամբ և ստորագրությամբ: 1936, 1937, 1938 թթ.-ին Ստալինյան ցուցակները 388-ն են, հավաքված են 11 հատորի մեջ և պահվում են ՌԴ նախագահի արխիվում: Ցուցակները հրատարակության են պատրաստվել ՌԴ նախագահի արխիվի, Ռուսաստանի սոցիալ-քաղաքական պատմության պետական արխիվի (РГАСПИ), և «Մեմորիալ» իրավապաշտպան կազմակերպության համագործակցությամբ, 2002-2013 թթ. ընթացքում: 1937-1938 թթ. համար այդ ցուցակները ներառում են ռազմական կոլեգիայի կողմից դատապարտված 43.768 անձի անուն: Ստալինյան ցուցակներով դատապարտումները շարունակվել են 1940, 1942, 1950 թ.-ին, բայց անհամեմատ նվազ ծավալներով: Դատապարտման երեք մակարդակ կար, 1-ին՝ գեղարկահարություն (39 հազար մարդ), 2-րդ՝ 10 տարվա ազատազրկում (մոտ 5 հազար մարդ), 3-րդ՝ 5-8 տարվա ազատազրկում (102 մարդ)(<http://stalin.memo.ru/images/intro.htm>):

¹⁰⁹ Сталинские расстрельные списки, Республика Армения; <http://stalin.memo.ru/regions/regi3.htm>

տանքից և կուսակցությունից հեռացվել է ավագ եղբայրը՝ Ստեփան Ստեփանյանը (պատերազմի տարիներին կամավոր ճակատ է մեկնել և զոհվել Լենինգրադի պաշտպանության ժամանակ: Կամավոր ճակատ է մեկնել և զոհվել նաև Ստեփանի միակ որդին՝ Վովան), բոլորն էլ՝ պատանեկան տարիներից բոլշևիկյան կուսակցության նվիրյալներ¹¹⁰:

Հայաստանի գրողների «ազգայնականությունը» հայերով չէր սահմանափակվում: Արևմտյան Հայաստանի տարածքից ցեղասպանական գործողությունների պատճառով հայերի հետ միասին Արևելյան Հայաստան էին անցել զգալի թվով եզդիներ: Ինչու՞ նրանք չպիտի կարոտեին իրենց հայրենիքը և չպիտի երազեին վերադառնալ: 1937 թ. գարնանը ձերբակալվում են Հայաստանի գրողների միության անդամներ եզդի Ջարդոն Գենջին («Ռյա Թագա» քրդերեն թերթի խմբագիր, Ալազյազի քրդական թատրոնի տնօրեն), արձակագիր, գրականագետ Հաջիե Ջնդին: Նրանք մեղադրվում էին «քուրդ ապստամբական հակախորհրդային կազմակերպության» ղեկավարման մեջ, որի «ապացույցն» այն էր, որ Հաջիե Ջնդին, օրինակ, իր հրապարակումներում «ազգայնամոլական գաղափարներ» է հետապնդել՝ կապի մեջ լինելով արտասահմանի «դաշնակցական-քրդական» «Հայրեն» (ինքնություն, անկախություն) կոմիտեի ղեկավարներ Բադիրխանի և «անգլիական գործակալ Հակոբյանի» հետ¹¹¹: Երկու տարի քանտում մնալուց հետո նրանք ազատ են արձակվել: Իսկ ահա Վան քաղաքում ծնված թուրքահայ, Մերձավոր Արևելքի պատմության ամբիոնի պրոֆեսոր, 1927 թ.-ին Խորհրդային Հայաստան տեղափոխված Հ. Հակոբյանին ավելի ծանր մեղադրանքներ են հասցեագրվել՝ նա մի քանի արտասահմանյան երկրների հետախուզությունների «աշխատակից» էր, «Ռամկավար» կուսակցության նախկին անդամ, գերհանցանքը՝ կապ է ունեցել «սահմանների հարց քննարկող» Ա. Չոպանյանի հետ¹¹² և Ստալինյան ցուցակներով դատապարտվել գնդակահարության¹¹³:

Սակայն միայն տեղական՝ հայաստանյան և խորհրդային տարածքի նյութը բավարար չէր Հայաստանի «հրեշավոր նացիոնալիզմի» էությունը բացահայտելու: Անհրաժեշտ էին արտասահմանյան նյութեր:

«1937 թ.-ին Մոսկվայում Ռուբինշտեյն ազգանունով քննիչին Լեհաստանում ԽՍՀՄ նախկին ներկայացուցիչ Յ. Խ. Դավթյանը¹¹⁴ «խոստովանել է», որ 1937 թ.-ին Փարիզում Անդրկովկասյան Ֆեդերացիայի ներկայա-

¹¹⁰ *Ц. Агабян*. Нерсик Степанян. Ереван, «Айастан», 1967, էջ 53-56.

¹¹¹ *Ա. Մանուկյան*: Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում, էջ 95:

¹¹² *Ա. Մանուկյան*: Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում, էջ 71:

¹¹³ Сталинские расстрельные списки, Республика Армения; <http://stalin.memo.ru/regions/reg3.htm>

¹¹⁴ Յակով (Հակոբ) Զրիստոփորի Դավթյան (1888-1938), ԽՍՀՄ պետական գործիչ, չեկիստ, դիվանագետ:

ցուցիչ Միմոն Փիրումովն իրեն ծանոթացրել է խոշոր նավթարդյունաբերող, անգլոհայատակ Գյուլբենկյանի հետ, ով Դավթյանի հետ պայմանավորվել է անգլիացիների ղեկավարությամբ աշխատել Հայաստանը ԽՍՀՄ կազմից հանելու համար: Այդ պայմանավորվածության մասին Դավթյանը տեղեկացրել է Սահակ Տեր-Գաբրիելյանին, ով, Դավթյանի տեղեկությունների համաձայն, արդեն աշխատում էր անգլիացիների հրահանգով... ԽՍՀՄ-ում հակահեղափոխական նացիոնալիստական աշխատանքները ղեկավարողների թվում Դավթյանը հիշատակել է Խանջյանին (մահացած է), Նազարեթյանին, Փառյանին և Խալաթովին»¹¹⁵:

Այսպիսով, ոչ միայն «հաստատվում է» Խորհրդային Հայաստանի հետ արտասահմանի հայության «դավադիր» և Խանջյանի «հանցավոր» գործունեությունը, այլև այն լրացվում է Յ. Դավթյանի ու ՀՀ ժողովմխորհի նախկին նախագահ, հին բոլշևիկ Սահակ Տեր Գաբրիելյանի «հանցակցությամբ»: Սահակ Տեր-Գաբրիելյանին, ով 1931 թ.-ին դեմ էր արտահայտվել Անդրկովկասի դաշնության ղեկավարի պաշտոնում Բերիայի նշանակման Ստալինի առաջարկին (Բերիային «ժուլիկ» անվանելով՝ դեմ էր արտահայտվել նաև վրացի քաղաքական-պետական գործիչ Լավրենտի Քարթվելիշվիլին, գնդակահարվել է 1937 թ.-ին), շուտով ձերբակալում են և առաջադրում «աջ տրոցկիստական» կազմակերպության հետ դաշինք կազմած «Հայկական ազգայնամոլական կազմակերպության Կենտրոնի» ղեկավար լինելու մեղադրանք¹¹⁶: Խոշտանգումներով ուղեկցվող հարցաքննություններից մեկի ժամանակ նա դուրս է նետվում չորրորդ հարկի պատուհանից և մահանում (այլ տեղեկություններով նրան դուրս են նետում)¹¹⁷: Ս. Տեր-Գաբրիելյանի կողմից Թուրքիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի հետախուզությունների համար աշխատանքի ներքաշման մեղադրանքով 1938 թ.-ին գնդակահարության է դատապարտվում նաև 1933 թ.-ին Կ.Պոլսից Հայաստան տեղափոխված լրագրող Տիգրան-Չավեն Զուրաբյանը: Չի մոռացվում նաև սահմանների «սարսափելի» խնդիր ղնող Ա. Չոպանյանի հետ համագործակցության մեղադրանքը¹¹⁸:

¹¹⁵ Отдельные листы из сводок с показаниями арестованных управления НКВД СССР, АПРФ (Архив президента Российской Федерации), Ф.3, Оп. 24, Д. 408, Л. 144-168; «Лубянка. Советская элита на сталинской голгофе», 1937-1938: М., МФД (Международный фонд демократии), 2011, էջ 380-393, <<http://istmat.info/node/26452>> (01.05.2015): 1894 թ. Բաքվում ծնված և 1938 թ. Մոսկվայում գնդակահարված Արտաշես Խալաթովը 1935 թ.-ից գյուտարարների համամիութենական ընկերության նախագահն էր:

¹¹⁶ ՀՀ ՆԳ և ԱԱ ՍԱ արխիվ, ԿԳՖ, գ. 5407, հ. 2, թ. 289, – *Ա.Սանուկյան*: Հայաստանի հասարակական-քաղաքական գործիչները ստալինյան բռնությունների տարիներին, «Լրագրեր» հասարակական գիտությունների, 2000, № 1, էջ 34 <[http://raber.asj-oa.am/1797/1/2000-1\(27\).pdf](http://raber.asj-oa.am/1797/1/2000-1(27).pdf)> (01.05.2015):

¹¹⁷ Копия протоколов допроса В.Н.Меркулова от 17 и 19 октября 1953 г., РГАСПИ, Ф. 17, Оп. 171, Д. 470, Л. 170-196, «Политбюро и дела Берии. Сборник документов», էջ 449-462:

¹¹⁸ *Ա.Սանուկյան*: Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում, էջ 96:

Ամեն մարդ Հայաստանում կարող էր «ազգայնական» մեղադրանքի ենթարկվել, թեկուզ և այն պարզ պատճառով, որ «հայաստանյան ազգայնականությունը» բոլշևիկյան-չեկիստական տրամաբանությամբ ներառում էր, օրինակ, նախկինում դաշնակցական ազգական կամ ծանոթ ունենալը: Ընդ որում չէր տարբերակվում «ազգայնական հայացքն» ու «ազգայնական գործողությունը»: «Նացիոնալիզմի մեջ թաղված» Հայաստանի «նացիոնալիզմի պատճառների» բացատրական գեկույցում, որը 1937 թ. մարտի 19-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմը նամակով ներկայացրել էր Ստալինին, թվարկվում են Հայաստանի բնակչության մեջ հայերի քանակական գերակշռությունը(!), իշխանության մարմիններում գլխավորապես հայերի առկայությունը, 300 հազարից ավելի «Թ-ուրքիայից վերաբնակները (!)» (Ցեղասպանությունից փրկված փախստականներին «վերաբնակներ» անվանելը բոլշևիկյան քաղաքական կեղծիքներից մեկն էր, ինչպես քաղաքականացված էր 300 000-ին «նացիոնալիստ» ներկայացնելը, որին կանդիդատնանք ստորև-Հ.Խ.), վերջին յոթ-ութե տարիներին շուրջ 45 000 հայերի տեղափոխությունը Եվրոպայից¹¹⁹, շուրջ 25 հազար հայերի՝ արտասահմանում ազգականներ ունենալը¹²⁰, արտասահմանում ավելի քան մեկ միլիոնանոց հայկական գաղութի առկայությունը, «որտեղ դաշնակցական կուսակցությունը մինչև այսօր առաջադարձ է», Հայաստանը արտասահմանյան հայերի հետ կապող ցանցի առկայությունը (Հայ օգնության միությունը՝ ՀՕԿ, հայրենակցական միությունները, Հայ առաքելական եկեղեցու արտասահմանյան կառույցները): «Մրանք բոլորը հարմար ուղիներ են փարսպեասկ հակահեղափոխական և լրտեսական գործունեության համար», - տեղեկացնում է գեկույցը: Զեկույցում թվարկված խմբերն, իհարկե, ՆԳԺԿի հետապնդումների թիրախներն էին: Այս պաշտոնական Զեկույցն այնուհետև տեղեկացնում է, որ 1931 թ.-ին Անդրերկրումին (այսինքն՝ Բերիային, Հ.Խ.) հաջողվել է «*Խանջանի գլխի վրայով*» մասամբ պայքարել հայ ազգայնականության դեմ, ովքեր կենցաղից դուրս էին մղում ռուսերեն լեզուն, կեղծում էին պատմությունն առհասարակ, հեղափոխության պատմությունը՝ մասնավորապես¹²¹: ՀՀ ԿԿ-ն խոս-

¹¹⁹ 1921-36 թթ. ընթացքում հորիրդային Յայաստան է տեղափոխվել 42.286 մարդ, ընդ որում ոչ միայն Եվրոպայից:

¹²⁰ Նույն հաջողությամբ կարող էր ասվել 300.000 և ավելի, քանի որ այդքան էր հաշվվում թուրքահայերի թիվը, որոնք բոլորն էլ տեսականորեն կարող էին արտասահմանում ազգական ունենալ, և դեռ դրան ավելացրած՝ Յայաստանում ապրող թուրք-ադրբեջանցիները, որոնց մի մասի ազգականները 1920-22 թթ.-ին անցել էին Թուրքիա:

¹²¹ Հեղափոխության պատմությունը կեղծելու ակնարկն ուղղված էր նախ և առաջ Ն. Ստեփանյանին, ով գրախոսել և քննադատել էր 1935 թ.-ին Բերիայի հեղինակությամբ հրատարակված «Անդրկովկասում բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցեր» գիրքը, որում վերանայված էին Անդրկովկասի հեղափոխականների կենսագրությունները, և ուռձացվում ու փառաբանվում էր Ստալինի անձնական ներդրումը կովկասյան բոլշևիզմում և հեղափոխությունում (տե՛ս Լ. Բերիայի հանցագործությունների՝ 1953 թ. քննության օգոս-

տանում է սեպտեմբերին ներկայացնել «այս ահռելի վնասարարության» դեմ պայքարի իր ծրագրերը, չնայած հենց հիմա էլ կան անուրանալի ձեռքբերումներ, ինչպես ա) ուղղորդվել և ամրացվել է գրողների աշխատանքը, նրանք հիմա գրում են գլխավորապես *սովետական թեմաներով*: Հիմա մենք ունենք ժամանակակից թեմաներով և *ընկեր Սյրալինի անվան հեյր կապ ունեցող մի շարք հաջողված գործեր*: *Ընարվել են կուսակցության առաջնորդին նվիրված հարյուր չափածո սյրեղծագործություններ*, բ) նկարիչները նույնպես անցել են սովետական թեմաներին: Շախապատրաստվում է *Սյրալինյան Սահմանադրությանը նվիրված ցուցահանդես*, գ) *աշխատանքներ են ծավալվել պարունության կեղծարարների դեմ...* Սույն հիշարժան Ձեկույցում տազնապ է հնչեցվում այն մասին, որ ներկայումս հայկական ազգայնական շրջանակների համար Հայաստանի ԿԿ քարտուղարի դերում ցանկալի է տեսնել Հ. Կոստանյանի¹²² թեկնածությունը, ով ՀՀ ԿԿ ԿԿ քարտուղար եղած ժամանակ (1928-1930) հայ ազգայնականների դեմ չէր պայքարում, իսկ հիմա Անդրերկրյան քարտուղար Լ. Բերիայի դեմ պայքարելու նպատակով միավորվել է վրաց ազգայնականների հետ...¹²³:

Բերիային «հայ ազգայնականների գոհ» ներկայացնելու գործը Խորհրդային Հայաստանի ՆԳԺԿ ժողկոմ Խ.Մոռզուսին նախապատրաստում էր դեռևս Ն. Ստեփանյանի գործի քննության ժամանակից և հատկա-

տոսի 15-ի Բերիայի հարցաքննության արձանագրությունը, ՔԳԱՍՊ, Փ. 17, Օռ. 171, Դ. 466, Պ. 158-165 <<http://istmat.info/node/22221>>: Գիրքը գրելու հեղինակային իրավունքը անդրկուլիսներում վիճարկում էին Կրաստանում ԿԿ Քարոզչության բաժնի վարիչ Է.Բեդիան (գնդակահարվել է 1937 թ.-ին «Տրոյկայի» որոշմամբ, Բերիայի նախածեռնությամբ (տես Լ. Բերիայի հանցագործությունների՝ 1953 թ. քննության օգոստոսի 15-ի Բերիայի հարցաքննության արձանագրությունը, ՔԳԱՍՊ, Փ. 17, Օռ. 171, Դ. 466, Պ. 158-165 <<http://istmat.info/node/22221>) և Անդրֆեդերացիայի երկրամասային կոմիտեի երկրորդ քարտուղար, Կարմիր պրեֆետուրայի ինստիտուտի պատմության բաժնի տնօրեն Սեֆը (Սեմյոն Ֆաերմարկ), ով նույնպես գնդակահարվել է 1937 թ.-ին (Լ.Բերիայի հանցագործությունների՝ 1953 թ. քննության հուլիսի 23-ի և օգոստոսի 7-ի Բերիայի հարցաքննության արձանագրությունները (ՔԳԱՍՊ, Փ. 17, Օռ. 171, Դ. 465, Պ. 29-37, – <http://istmat.info/node/22189>, ՔԳԱՍՊ, Փ. 17, Օռ. 171, Դ. 465, Պ. 214-224, – <http://istmat.info/node/22208>): Գիրքը համարվում էր Ստալինի վստահությունը շահելու Բերիայի հերթական քայլը: Իր հերթին Մ.Բաղիրովի հեղինակությամբ լույս տեսած գրքում փառաբանվում էր Բաքվի կուսկազմակերպությունում Բերիայի վստակը (ՔԳԱՍՊ, Փ. 17, Օռ. 171, Դ. 482, Պ. 37-38 <<http://istmat.info/node/22393>>): Ստալինն, ըստ երևույթին, հայերին նույնպես հրավիրել էր մասնակցելու բոլշևիկյան հեղափոխությունը վերագնահատելու, հերոսների տեղափոխելու և վերաշարադրելու օրակարգին (սրա մասին տես, օրինակ, *Ալ.Տեր-Գաբրիելյան, Վիրավոր առյուծ. կյանքը շշուկով // «Առավոտ», 2014, 18 հունիսի*, – <<http://www.aravot.am/2014/06/18/472246/>>):

¹²² Կոստանյան Յայկազ Արշակի – (1897-1938) ՅԽՍՀ և ԽՍՀՄ կուսակցական, պետական գործիչ: 1921-23 թթ.-ին եղել է Յայաստանի Աշխատանքի և սոցիալական ապահովության, ապա՝ Ներքին գործերի ժողկոմ, 1923-25 թթ.-ին՝ Կրաստանի Կոմկուսի կենտրոնի բաժնի վարիչ: Յայաստանի ԿԿ ԿԿ առաջին քարտուղար է եղել 1928-1930 թթ.-ին: 1937 թ.-ին գնդակահարվել է:

¹²³ *Գ Մանուկյան, Լ.Մխիթարյան, Ա. Բաղայան*: Փաստաթղթեր 1930-ական թվականների քաղաքական բռնածնյունների մասին // «Բանբեր Յայաստանի արխիվների», 2003, 2(102), էջ 79-81 <<http://www.armarchives.am/UserFiles/File/02-03.pdf>> (11.11.2014):

պես Խանջյանի սպանությունից անմիջապես հետո: Հայաստանում շատ մարդիկ են մեղադրվել Բերիայի դեմ մահափորձեր նախապատրաստելու գործով, այդ թվում՝ ԺԿԽ նախկին նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանը, Ն. Ստեփանյանը, Պ. Մակինցյանը, Ե. Չարենցը, Թիֆլիսում՝ Հ. Թումանյանի որդի Համիկ Թումանյանը, Վրաստանի Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի փոխտնօրեն Հ. Սարոյանյանը են¹²⁴: Բերիայի դեմ կազմակերպվելիք մտացածին մահափորձերի պատմությունների հեղինակը, ինչպես վերև ասվել է, ինքը՝ Բերիան էր: Նույնիսկ այս խնդրում «հայկական ազգայնական գործունեությունը» Հայոց ցեղասպանության հետ կապելու Բերիայի սևեռուն գաղափարը նրան տարել է տեռորիզմի իրականացման արևմտահայկական զուգահեռին. Ն. Ստեփանյանի, Ա. Բակունցի, Ե. Չարենցի, Պ. Մակինցյանի քննիչները ստիպում էին նրանց խոստովանել, իբրև թե Բերիային սպանելու համար փորձել են ներգրավել Թիֆլիսում 1922 թ.-ին Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից մեկին՝ Ջեմալ փաշային սպանած Արտաշես Գևորգյանին¹²⁵:

Մտղդուսու կողմից դեռևս 1936 թ.-ին սկսված Դրաստամատ Տեր-Սիմոնյանի երկամյա հարցաքննության 36 էջերում շարադրված նյութերից առավել «ազդու» որոշ քաղվածքներ բնութագրում են հայերի «հակաբերիական ազգայնականության»՝ ՆԳԺԿի ձեռք բերած խղճուկ արդյունքը. «Դր. Տեր Սիմոնյանի ցուցմունքների համաձայն 1934 թ.-ին Ա. Եսայանի գլխավորությամբ ձևավորվել է ռազմարենչ հայկական նացիոնալիզմի դիրքերից հակահեղափոխական խումբ Անդրերկրումի ՀամԿ(բ)Կ և անձամբ ընկ. Բերիայի դեմ կազմակերպված պայքար մղելու նպատակով (թվարկվում է խմբի պատկառելի թվաքանակով կազմը –Հ.Խ.):...Այս խումբը հայկական ռազմարենչ նացիոնալիզմի դիրքերից չարամիտ հերյուրանքներ է քարտածել Անդրերկրումի ՀամԿ(բ)Կ և անձամբ ընկ. Բերիայի մասին, նրան մեղադրելով հակակոմսակցական գործունեության մեջ: Խումբը գտնում էր, որ ԽՍՀՄ փոքր ժողովուրդների մեջ ամենապատանդավորը և կուլտուրականը հայ ժողովուրդն է, քայք նրա պոպուլենցիալ ուժերը համապատասխան ծավալման հնարավորություն չունեն, որովհետև վրացիներից քաղկացած Անդրերկրումի ղեկավարությունը զսպում է դրանք՝ վրաց ժողովրդին առաջին պլան մղելու համար:... Խմբի ղեկավար Եսայանը Հայաստանի ԿԿի տնտեսական քաղաքականությունը համարել է անհեռարես... Բոլոր հակահեղափոխական նացիոնալիստների նման Եսայանը ողջ չարիքը համարել է Անդրերկրումի ՀամԿ(բ) Կ-ին: ...Եսայանի հակահեղափոխական նացիոնալիստական խումբը որպես

¹²⁴ Դ. Գասպարյան: Փակ դռների գաղտնիքը, էջ 26, 48-49, 129 են:

¹²⁵ 1894 թ.-ին Արևմտյան Հայաստանի Էրզրոմի նահանգի խոտորջուր գավառակի Միջին թաղ գյուղում ծնված և Ցեղասպանությունից փախստական դարձած Արտաշես Գևորգյանին Ջեմալի սպանությանն իր հետ միասին մասնակցած Գետրոս Պողոսյանի հետ (ծագումով նույնպես խոտորջուրից) 1936 թ.-ին ձերբակալել և 1937 թ.-ին գնդակահարել են Ստալինի կյանքի համար պոտենցիալ վտանգ ներկայացնելու մեղադրանքով (Ա.Սանուկյան: Զաղաքական բռնությունները Հայաստանում, էջ 14):

Հայասրանի կուսակցական ղեկավարի թեկնածու համարել է նախկին քարտուղար Հ. Կոստանյանին... վերջինս կապեր ունի վրաց ազգայնականների հետ, ովքեր ընկ. Բերիայի հավանական քաղաքական հակառակորդներն են... [և] հույս ունեն Հայասրանի և Վրաստանի համարուղ ուժերով հասնել Անդրկովկասի և Վրաստանի կառավարումից Բերիայի հեռացմանը...»¹²⁶։ Այսպիսի հայկական «ուզմանտենչ ազգայնականություն» է վավերացրել ՆԳԺԿն ցուցմունքներ կորզելու իր երկամսյա բարբարոս մեթոդների ծանր զինանոցով՝ «ընկ. Բերիայի դեմ կազմակերպված պայքար մղելու նպատակով չարամիտ հերյուրանքներ են տարածել» և ուզում են կառավարման կազմի փոփոխություն։ Սա ԽՍՀՄ կառավարման համակարգի անձնային ուզուրպացման պարզ վկայություններից մեկն է։

Բերիան, իհարկե, տեսնում էր, որ թե՛ Վրաստանում, թե՛ Հայաստանում դժգոհությունն իր կործանարար և հակամարդկային վարչարարության նկատմամբ ավելանում է (Ադրբեջանում Բաղիրովը Բերիայի լուրջ թիկունքն էր և ճնշում էր ցանկացած հակաբերիականություն՝ միաժամանակ ազատ լինելով իր ծրագրերն իրականացնելու), և վախենում էր հայ-վրացական ընդդիմադիրների հնարավոր միավորումից¹²⁷։ Դեռ մինչև սեպտեմբերի պլենումը, որին ՀՀ ԿԿ ԿԿն պետք է ներկայացներ «հայկական ազգայնականության ահռելի վնասարարության» դեմ պայքարի իր ծրագրերը, 1937 թ. հուլիսի 30-ին ընդունվում է ԽՍՀՄ ՆԳԺԿի թիվ 00447 հայտնի հրամանը՝ «Նախկին կուլակների, քրեականների և այլ հակասովետական տարրերի ռեպրեսիաների մասին»¹²⁸, իսկ հուլիսի 31-ին այն հաստատվում է Քաղբյուրոյի կողմից, որով խորհրդային բռնաճնշումներում նոր, մեծ ալիք էր սկսվում և որով սահմանվել էին ոչ միայն «հանցագործությունների տեսակները», այլև «հանցագործների քանակը» և նրանց հասանելիք պատիժներն ու պատժաչափերը։ ԽՍՀՄ յուրաքանչյուր հանրապետություն, մարզ, վարչա-տարածքային միավոր իր քնակչությունից պիտի «պեղեր» ծրագրված քանակի մեղավորներ և պատժեր նրանց։ «Օպերացիան» պիտի սկսվեր օգոստոսի 5-ից և ավարտվեր չորս

¹²⁶ ԶՅԱԱ, ֆ. 4.- 91, Ց. 3, Գ. 2276, Թ. 31-44, պատճեն, մեքենագիր, էջ 75։

¹²⁷ 1937 թ. գարնանը Վրաստանում «բացահայտված տրոցկիստական լրտեսական-վնասարարական Կենտրոնի» անդամներին (ըստ Բերիայի՝ «բացառապես ազգայնական թեքման») նույնպես մեղադրում էին Բերիայի մասին չարամիտ հերյուրանքներ տարածելու մեջ (առաջադրված մեղադրանքներն էին՝ «խոսում են Վրաստանի և Անդրկովկասի կոմունիստական կառույցների անտանելի ռեժիմի, աշխատանքի չեկիստական մեթոդների, Վրաստանի կործանման մասին»)։ 1937 թ. հուլիսի 9-ին Վրաստանի Գերագույն դատարանը ձերբակալվածներից յոթին փակ դատով դատապարտել է գնդակահարության, և նույն օրն իրականացվել է գնդակահարությունը (տես Բերիայի դատավարության նյութերը)։

¹²⁸ Оперативный приказ народного комиссара внутренних дел Союза С.С.Р. № 00447: об операции по репрессированию бывших кулаков, уголовников и др. антисоветских элементов,— АП РФ, 3-58-212, л. 55-78 <<http://www.memo.ru/history/document/0447.htm>> (դիտելու ամսաթիվը)։

ամսվա ընթացում: Հանձնարարվում էր քննությունն անել արագացված կարգով և գործը հանձնել «տրոյկային»: «Տրոյկաներն» իրավունք ունեին, հանցագործության որակից ելնելով, առաջին կարգից՝ երկրորդ, կամ՝ երկրորդից առաջին տեղափոխել սահմանվող պատժատեսակը: Հանձնարարվում էր խիստ գաղտնի պահել գնդակահարությունների իրականացման ժամանակը և վայրը, ինչպես նաև յուրաքանչյուր հինգերորդ օրը «կենտրոնին» տեղեկացնել ընթացքի մասին¹²⁹:

Բոլոր մյուս հանրապետությունների նման պաշտոնական Երևանը շտապում է տեղեկացնել.



Երևանից Ն.Խ.Եժովին,
Ի.Վ.Ստալինին, 09.07.1937

ԽՍՀՄ ներքին գործերի
ժողովրդական կոմիսարիատի
Պետական անվտանգության
գլխավոր վարչության
հատուկ բաժնի 3-րդ
բաժանմունքին, Հուլիսի
գաղտնի, պատժենելն
արգելվում է.

Ստացվել է 9 հուլիսի
1937 թ., ժ. 11.25 ռուս.,
վերհանվել է ժամը 14.00,
Երեվանից

Մեքենագրված է 4 օրինակից,
թիվ 1 - ընկ.Եժովին,
թիվ 2, 3 - ընկ.Ստալինին,
թիվ 4 - 3-րդ բաժանմունք:

Հայաստանի Համ(ը)ն և սեղեկացնում է եռյակի կազմը. Մուղղուսի Խ. ՆԳՎ, Միկվելյան Ս. Հանրապետության դատախազի տեղակալ, Տեր-Նակալով Ս. Գերագույն դատարանի հատուկ կոլեգիայի նախագահ: Ծրագրվում է կուլակների թիվը առաջին կատեգորիայով 300 մարդ, երկրորդով՝ 400, քրեականները առաջին կատեգորիայով 200 մարդ, երկրորդով՝ 250: Առաջին կատեգորիայի ընտանիքներն անպայման աքսորվում են:

Հայաստանի Համ(ը)ն և Արմատունի (պետք է լինի Ամատունի-2.Խ.)
Թիվ 286

Որոշում. „ընկ. Ստալին՝ կողմ:
Ա.Պ[ոսկրեբիշև], ընկ. Միկոյան՝ կողմ,
ընկ.Կալինին՝ կողմ,,

Կնիք. „IV Частъ ОС ЦК ВКП(б).
Вх. № 226I/м»¹³⁰.

¹²⁹ Подготовка и реализация приказа НКВД № 00447 «Об операции по репрессированию бывших кулаков, уголовников и других антисоветских элементов», РГАСПИ. Ф.17, Оп.166, Д.575, Л.140-142. Բնագիր, մեքենագիր (<http://www.alexanderyakovlev.org/almanah/inside/almanah-doc/1006219>)

¹³⁰ РГАСПИ. Ф.17, Оп.166, Д.575, Л.140. Բնագիր, մեքենագիր (<http://www.alexanderyakovlev.org/almanah/inside/almanah-doc/1005938>):

Այսպիսով, Հայաստանն այդ հրամանն իրականացնելու համար նախատեսում էր 500 մարդու գնդակահարություն, 650 մարդու արքոր կամ համակենտրոնացման ճամբար: Համեմատության համար ասեմ, որ Վրաստանը Կենտրոնին ներկայացնում է առաջին կատեգորիայի՝ գնդակահարության ենթակաների համար նախատեսվող 1419, երկրորդ կատեգորիայով՝ 1562 մարդու թիվ¹³¹, Ադրբեջանը համապատասխանաբար 5250 և 1500¹³², Դոնի Ռոստովը՝ 5721 և 5914¹³³ մարդու և այն: Իրավունք ուներ ՆԳԺԿն Հայաստանին «նացիոնալիզմի» մեջ մեղադրելու. զոհաբերվողների փոքր թվեր էր ներկայացրել: 1937 թ. սեպտեմբերին ԽՍՀՄ Քաղբյուրոյի անդամ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի՝ Խորհրդային Հայաստանի անփոփոխ պատգամավոր Ա. Միկոյանը, Ստալինի մասնավոր վստահությունը վայելող Գ. Մալենկովի վերահսկիչ ուղեկցությամբ, Մոսկվայից գործուղվում է Հայաստան՝ պարզելու և «վերջնականապես արմատախիլ» անելու «հայկական ազգայնականությունը»: Երա գալով «բացահայտվեցին» նորանոր «ազգայնականներ», այդ թվում՝ ընդամենը մեկ տարի առաջ նշանակված, Ստալինին ու Բերիային ջանասիրաբար հայ «ռազմատենչ ազգայնականներ» մատուցած, մեկ տարվա ընթացքում «հայ ազգայնականության» և «հայ ազգայնականների» դեմ լայնածավալ ու անխոնջ պայքար մղած բարձրաստիճան պաշտոնյաներ: Ազգայնականության դեմ պայքարող «ընկերները» չհասցրին ներկայացնել, թե Խորհրդային Հայաստանում «*ընկեր Ստալինի անվան հեյր կապ ունեցող որքան նոր հաջողված գործեր են ստեղծվել, կուսակցության առաջնորդին նվիրված որքան չափածո և արձակ ստեղծագործություններ, որքան հակաբերիական-հակահեղափոխական ազգայնական է ձերբակալվել և գնդակահարվել*» և դեռ որքան է ծրագրվում, վերջապես ինչ է արել նոր դեկավարությունը «նացիոնալիստ» թուրքահայերի դեմ: Սեպտեմբերի 23-ին Հայաստանի կուսակցության կենտկոմի պլենումն աշխատանքից ազատեց Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնում մեկ տարի առաջ Խանջյանին հաջորդած, հակաազգայնական պայքարը գլխավորած Ա. Ամատունուն և ընտրեց հատուկ այդ նպատակով Բերիայի կողմից Թիֆլիսից ուղարկված Գ. Հարությունովին:

Նոր ձերբակալվածներն անմիջապես բազմաթիվ «խոստովանություններ» են անում, ինչի մասին տեղեկանում ենք Ա. Միկոյանի հետ Հայաս-

¹³¹ РГАСПИ, Ф. 17, Оп. 166, Д. 575, Л. 107 <<http://www.alexanderyakovlev.org/almanah/inside/almanah-doc/1005790>> (12.06.2014):

¹³² РГАСПИ, Ф. 17, Оп. 166, Д. 575, Л. 119 <<http://www.alexanderyakovlev.org/almanah/inside/almanah-doc/1005979>> (12.06.2014):

¹³³ РГАСПИ, Ф. 17, Оп. 166, Д. 575, Л. 109 <<http://www.alexanderyakovlev.org/almanah/inside/almanah-doc/1005908>> (12.06.2014):

տան ժամանած ԽՍՀՄ ՆԳԺԿի ներկայացուցիչ Մ.Լիտվինի¹³⁴ իր պետին՝ ԽՍՀՄ ներքին գործերի ժողկոմ Եժովին, հայաստանյան «ազգայնական կազմակերպության» վերաբերյալ 24.09.37 թ. ամփոփիչ հեռագրից: Այն անմիջապես «Խիստ գաղտնի» մակագրությամբ ներկայացվել է Ստալինին: Այս հետաքրքիր փաստաթղթից պարզվում է, որ «հայ ժողովրդի նացիոնալիստ թշնամիների» նոր փունջը բացահայտվել է ընդամենը մի մարդու՝ Ադրբեջանի Կենտկոմի նախկին երկրորդ քարտուղար Անեստատ Ակոպովից ստացված ցուցմունքների հիման վրա և «Միկոյանի հետ համաձայնեցված» ցանկով: Բացի անձերի և նրանց պաշտոնների թվարկումից, այս փաստաթղթում հանդիպող մեղադրական բանաձևերն են՝ «ներքաշվել է տրոցկիստական խմբի մեջ», «Հայաստանի հակախորհրդային նացիոնալիստական կազմակերպության», «աջտրոցկիստական կազմակերպության» խմբի անդամ է, «անզլիական հեախույզ է»: Մեկ օրում այս ծանր հանցագործությունները «բացահայտած» և բազմաթիվ «հանցավորների հայտնաբերած» խմբի պետը (անշուշտ Լուբյանկայի¹³⁵ փորձարկված մեթոդով) տեղեկացնում է նաև. «Բացահայտվել են ազատության մեջ գտնվող ակտիվ դաշնակցական տարրեր: Ձերբակալությունները շարունակվում են: Իսնդրում են հեռագրով տեղեկացնել, թե որտեղ են տեղի ունենալու Հայաստանի ԿԿ ԿԿ ձերբակալված առաջին քարտուղարների՝ Ամատունու և Ակոպովի հարցաքննությունները, Երևանում՝, թե՛ ուղարկենք Մոսկվա: Լիտվին»¹³⁶: «Հույժ գաղտնի» այս փաստաթղթում Ստալինի հետաքրքրել են գլխավորապես զինվորականները: Նրանց ազգանուններն առել է շրջանակի մեջ և լուսանցքում գրել Եժովին՝ «այս բոլոր հայ-զինվորականներին պետք է ձերբակալել»¹³⁷: Արդեն ձերբակալված էին:

¹³⁴ Լիտվին Միխայիլ Իոսիֆի–(1892-1938), 1936 թ. հոկտեմբերի 15-ից ԽՍՀՄ ՆԳԺԿ կարգերի բաժնի վարիչ, 1937 թ. մայիսից ՆԳԺԿ պետական անվտանգության գլխավոր վարչության չորրորդ քաղաքական բաժնի վարիչ, 1938 թ. հունվարից՝ Լենինգրադի մարզի ՆԳԺԿ վարչության ղեկավար, նույն 1938 թ. նոյեմբերին ինքնասպանություն է գործել (Резбилитация: как это было. Документы, Т. 3, М., «Материк», 2004, էջ 649):

¹³⁵ Լուբյանկա –ԽՍՀՄ և ՌԽՖՍՐ Պետական անվտանգության հիմնական շենքը, որը Մոսկվայում Լուբյանկա անունով փողոցի վրա գտնվելու պատճառով հաճախ անվանվել է պարզապես «Լուբյանկա»:

¹³⁶ АП РФ, Ф. 3, Оп. 24, Д. 332, Л. 43, Բնագիր, մեքենագիր, – <<http://www.alexanderyakovlev.org/fond/issues-doc/61197>> (04.09.2014):

¹³⁷ «Հայ-զինվորականների» խնդիրը ԽՍՀՄ բռնություններում մասնավոր քննարկման հարց է: Նրանք իրենց կյանքով պետք է պատասխան տալին Հայաստանի մինչխորհրդային շրջանի ինքնապաշտպանությանը մասնակցության «ազգայնականության» համար: Նրանցից ոմանք, ինչպես հայտնի գեներալ-մայոր Մ. Սիլիկովը մի շարք աքսորներից և ձերբակալություններից հետո, որոնցում ոչ մի կերպ չպիտի կարողանան ապացուցել նրան վերագրվող հանցանքները, մինչև հասունանա առանց որևէ ապացույցի «Եռյակներով» «դատելու», այսինքն՝

Միկոյանի և Մալենկովի սեպտեմբերյան այս չարաբաստիկ այցի կապակցությամբ Ա. Միկոյանը հետագայում պիտի գրի. «Ստալինը Քաղբյուրոյի որոշմամբ ինձ հանձնարարում է իր նամակով գնալ Հայաստան, որտեղ «խրամատավորվել են վնասարարներն ու տրոցկիստները»: ...Ես պետք է ԿԿ Պլենումին կարդայի նամակը և տեղում ստորագրեի հանրապետության ՆԳԺԿի կողմից Մոսկվայի հետ համաձայնեցված ձերբակալման ենթակա մարդկանց ցուցակը: Դ-ա, իբրև թե, հայ կոմունիստների համար ավելի համոզիչ կդարձներ ԿԿի կողմից վնասարարների դեմ պայքարին տրվող կարևորությունը: Քաղբյուրոյի հանձնարարությունից ես ոչ մի կերպ չէի կարող հրաժարվել: Երևանում ամեն ինչ գնում էր Ստալինի սցենարով: Ինձ հետ ուղարկվել էր Ստալինի վստահելի մարդը՝ Մալենկովը: Ինձ համար միակ անակնկալը դահլիճում Բերիայի հայտնությունն էր: Նա ներս մտավ, երբ ես ամբիոնից ելույթ էի ունենում: Ես մտածեցի, որ նա եկել է Ստալինի հանձնարարությամբ ինձ ձերբակալելու: ...Եվ ես հարկադրված էի ստորագրել 300 մարդու ցուցակը: Ես, այնուամենայնիվ, հասցրի այն նայել և հայտնաբերեցի կուսակցության իմ պատանեկան տարիների ավագ ընկեր Դանուշ Շահվերդյանի անունը: Ես այն ջնջեցի: Սակայն դա որևէ հետևանք չունեցավ, նրան ձերբակալեցին: Ակնհայտ էր, որ Բերիան տեղական ՆԳԺԿին տեղյակ էր պահել, որ իմ ստորագրությունը միայն ձևականություն է, իմ նկատառումները կարելի է հաշվի չառնել, չնայած ես Քաղբյուրոյի անդամ եմ և եկել եմ Ստալինի նամակով»¹³⁸: Ա. Միկոյանի այս (և այլ) հիշողություններից բխում է, որ ինքը հասկանում էր պետության կողմից կազմակերպված սովորական գոեհիլ քրեական հանցագործությանը՝ մարդասպանությունների իր մասնակցությունը, բայց... «ոչ մի կերպ չէր կարող հրաժարվել... հարկադրված էր ստորագրել»: Եվ, իհարկե, համեստորեն «մոռանում» է, որ «հարկադրված ստորագրելուց» հետո իր հետ Հայաստան ժամանած Լիտվինը նորանոր «հանցագործներ» է պեղել Հայաստանում և իր հետ համաձայնեցրել է «մինչև նյութեր ամիսը հակախորհրդային նացիոնալիստական» կազմակերպության բազմաթիվ այլ անդամների ձերբակալություններ¹³⁹: Ավելին, Միկոյանն ինքն է խնդրել ավելացնել Հայաստանի համար նախատեսվող գնդակահարվողների սահմանաչափը, ինչի մասին վկայում

ուղղակի մեղադրանք ներկայացնելու («աջ տրոցկիստական-ազգայնամոլական» (ՀՀԱԱ, ԿԳՖ, Գ.904; 9062) և պատիժ սահմանելու շրջանը (գնդակահարություն): Կամ ՆԳԺԿ բանտում տանջամահ արված Սարդարապատի մյուս հերոս Դավիթ Աթոյանը («տրոցկիստական-ազգայնամոլական խմբի մասնակից» (ՀՀԱԱ, ԿԳՖ, Գ.2536)) և շատ ուրիշներ:

¹³⁸ А. Микоян. Так было, Москва: «Варгис», 1999, գլուխ 46:

¹³⁹ Տե՛ս Մ.Ի. Լիտվինի հեռագիրը Երևանից 24.09.37 <<http://www.alexanderyakovlev.org/fond/issues-doc/61197>>(16.09.2015):


է Ռուսաստանի պետական արխիվում հայտնաբերված, 1937 թ. սեպտեմբերի 22-ով թվագրված մի փաստաթուղթ, որով ԽՍՀՄ ՆԳ ժողովրդական կոմիսար Եժովը տեղեկացնում է Ստալինին այն մասին, որ ընկեր Միկոյանը խնդրում է Հայաստանը հակասովետական տարրերից մաքրելու նպատակով «դաշնակցական և այլ հակասովետական տարրերից» գնդակահարվողների թիվն ավելացնել 700 մարդով: Նույն փաստաթղթով Եժովն առաջարկում է գնդակահարվողների թիվն ավելացնել 1500 մարդով և նախկին թիվն էլ ունենալով՝ այն հասցնել 2000-ի¹⁴⁰: Խոսքը ԽՍՀՄ ՆԳԺԿի թիվ 00447 հրամանով Հայաստանի համար նախատեսվող սահմանաչափի մասին էր: Երկու օր հետո՝ սեպտեմբերի 24-ին ՀամԿ(բ)Կ-ն որոշում է «Հայաստանը հակախորհրդային տարրերից մաքրելու նպատակով Հայաստանի Կ(բ)Կին թույլ տալ առաջին կարգի կատեգորիայով (գնդակահարություն) բռնադատման ենթարկվողների քանակն ավելացնել 1500 մարդով»¹⁴¹: «Ընկեր Միկոյանը» բացառիկ չէր իր նախաձեռնողականությամբ: Սա գործնական խաղի կանոնների մաս էր, բոլոր խորհրդային հանրապետությունները և միջին օղակների վարչատարածքային կազմակերպությունները մրցակցում էին «վերևում»՝ Մոսկվայում տեղերի համար նախատեսված պատժվողների սահմանված թվաքանակներն ավելացնելու «միջնորդություններով»: Հրատարակված են 1937 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին «ընկեր Ստալինին» ուղղված այդ կարգի բազմաթիվ խնդրանքներ¹⁴²: Փաստաթղթավորվում էր «տեղերի» պաշտոնատար անձանց մեղսակցությունը կենտրոնական պետական հանցագործությանը: Քանի որ սեպտեմբերի 22-ին Հայաստանի ԿԿ հիմնական ղեկավար կազմը ձերբակալվել էր, այդ տխուր առաքելությունը ստիպված էր իր վրա վերցնել Միկոյանը¹⁴³:

¹⁴⁰ РГАСПИ, Ф. 17. Оп. 166. Д. 580. Л. 10, Բնօրինակը <<http://www.alexanderyakovlev.org/almanah/inside/almanah-doc/1006600>> (17.06.2014):

¹⁴¹ *Ա.Մանուկյան*: Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում, էջ 23:

¹⁴² База данных документов. Архив А. Н. Яковлева, <<http://www.alexanderyakovlev.org/db-docs/pages/2/topicId=37>> (16.09.2015):

¹⁴³ Документ 103, Н.И. Ежов — И.В. Сталину, 22.09.1937 // Альманах «Россия. XX век». Архив А. Н. Яковлева, <<http://www.alexanderyakovlev.org/almanah/inside/almanah-doc/1006600>> (04.05.2014):



Լուսանկար 6. ԲԳԱՏՈՒ, Փ. 17. Օռ. 166. Դ. 580. Լ. 10, Բնօրինակը

Նոր ձեռքակալությունները նոր թափ են հաղորդում «հայկական նա-
ցիոնալիզմի» դեմ խորհրդային իշխանությունների պայքարին: «Պրավդա»

թերթի Հայաստանի թղթակից Մ. Կոտլյարովը սեպտեմբերի 29-ին, խորհրդային հանրությանը «հիշեցնելով» Խանջյանի հակահեղափոխական-նացիոնալիստական աշխատանքները Հայաստանի Կենտկոմում, տեղեկացնում է, որ մոլի նացիոնալիստներ են նաև Խանջյանին Հայաստանում հաջորդած նոր կառավարիչները՝ «Խանջյանի մոլի արբանյակ, նրա հակահեղափոխական նացիոնալիստական գործի շարունակող» Կենտկոմի նոր քարտուղար Ամատունին, «ժողովրդի գնդակահարված թշնամի Կամենևի նախկին անձնական քարտուղար, մոլի նացիոնալիստ», Ժողովրդի նախագահ Գուրյանը, հողագործության ժողկոմ, «հայ ժողովրդի ոխերիմ թշնամի, մոլի նացիոնալիստ» Գումեդիևը¹⁴⁴: Չի հապաղում նոր թշնամիներին դատափետելու հանրության հավանությունների ապահովման գործընթացը՝ Ազիգբեկովի, Մարտունու շրջաններից, Ղամարլուից աշխատավորները պահանջում են «անարգանքի սյունին գամել, բնաջինջ անել, հողմացրիվ անել...» հայ ժողովրդի նացիոնալիստ թշնամիներին¹⁴⁵: «Անսալով» «դատավճիռ պահանջող» ժողովրդի ձայնին, առաջնորդվելով Միկոյանի՝ «Հայաստանին հատկացված լիմիտներն ավելացնելու» խնդրագիր-միջնորդագրով, մեկ ամիս անց ԽՍՀՄ ՆԳԺԿի Հայաստանում գտնվող քննիչները հոկտեմբերին զեկուցագիր են ներկայացնում 1183 մարդու ձերբակալության մասին, որից 500 գնդակահարվել է նույն ամսին¹⁴⁶: Ձերբակալությունները և գնդակահարությունները շարունակվում էին: Միայն 1937 թ. նոյեմբերի 1-ից մինչև 1938 թ. մարտի 25 պատիժներ են ստացել 6333 մարդ, 3639՝ գնդակահարություն¹⁴⁷: Իսկ նոյեմբերի 29-ին, Հայաստանի խորհրդայնացման տոնահանդեսի առիթով «Известия» թերթը շորհավորում է Հայաստանին՝ Միկոյանի նման բարեկամ ունենալու համար. «Հայաստանի դավաճանները հայտնաբերվել են ընկեր Միկոյանի անմիջական մասնակցությամբ... Հայաստանի ժողովուրդը երբեք չպիտի մոռանա իրենց ցույց տրված Միկոյանի մեծ օգնությունը»:

1937 թ. սեպտեմբերին «մեղադրվողի այթոռին» էր հայտնվել նաև ՀԽՍՀ ՆԳԺԿի ղեկավար, ՀԿ(բ)Կ ԿԿի և բյուրոյի անդամ, մինչև 1937 թ. սեպտեմբեր քաղաքական հետապնդումները Հայաստանում ղեկավարող Խ. Մուրդուսին: «Ազգայնամոլության» հետաքննության մեջ մասնագիտացած Մուրդուսին «խստտովանել» է, որ ինքը նույնպես ազգայնամուլական կազմակերպության անդամ է, ուր ներառվել է դավաճան Ա. Խանջյան-

¹⁴⁴ «Հայ ժողովրդի թշնամիների գործերը (հեռագրով «Պրավդա»ի Հայաստանի թղթակցից)», «Սովետական Հայաստան», 1937, 29 սեպտեմբերի // Armenia Total(itaris) <<http://armeniatotalitaris.am/wp-content/uploads/2013/12/1937-038.pdf>> (16.09.2015):

¹⁴⁵ Նույն տեղում:

¹⁴⁶ Ա.Մանուկյան: Քաղաքական բռնությունները Հայաստանում, էջ 51-52:

¹⁴⁷ Նույն տեղում, էջ 195:

նի կողմից¹⁴⁸: Որպես «հայկական ազգայնամուտության մեծ գիտակ»՝ նրա հարցաքննության արձանագրություններից մեկն ամբողջովին «նվիրվել» է «հայաստանյան ազգայնամուտության» ակունքներին: Ըստ այդ արձանագրության՝ Մուղղուսին գտնում էր (կամ նրան հարկադրել էին, որ այդպես «գտնի»), որ Խորհրդային Հայաստանի ղեկավարման ընդամենը տասնյոթամյա կենսագրությունն ամբողջովին ազգայնամուտական է եղել. «Եթե հետևենք Հայաստանում խորհրդային կարգերի գոյության ողջ պատմությանը և վերլուծենք այստեղ կուսակցական և խորհրդային ղեկավար մարմինների գործունեությունը, ապա դժվար չի լինի հաստատել, որ այդ ղեկավար մարմիններն են սխտեմատիկաբար ներթափանցել և ակտիվորեն անցկացրել իրենց գիծը թունդ ազգայնամուտները: Ազգայնամուտությանը Հայաստանի խորհրդայնացման ամենասկզբում հավատարմորեն ծառայել են հայկական «սպեցիֆիկները»¹⁴⁹, որոնց պետք է համարել ՀամԿ(բ)Կ-ի՝ խորհրդային իշխանությունների դեմ կազմակերպված պայքարի սկզբնավորողներ: Նրանք իրենց բնույթով նույն դաշնակցականներն էին: Այդ պայքարը բարդ ազգային զուգակցումների պայմաններում ունեցավ մի շարք շրջաններ: Սկսած 1921-ից մինչև 1927 թ. Հայաստանի կուսակցական-խորհրդային ղեկավարությունը գտնվում էր «Սպեցիֆիկների» (Մյասնիկով, Լուկաշին, Աշոտ Իռանեյան, Կարինյան, Համբարձումյան և ուրիշներ) ձեռքում: Նրանց քաղաքական գիծը գրեթե չէր տարբերվում դաշնակների գծից: 1927 թ.-ին «սպեցիֆիկների» ղեկավարության մեջ գլխավոր դերը խաղում էին Ժ-Դ-Կի նախագահ Տեր-Գաբրիելյանը և Կենտկոմի քարտուղար Հայկ Հովսեփյանը: Հատկապես այդ ժամանակ Հայաստանում իրենց գործունեությունը ծավալեցին տրոցկիստները: Այսպիսով՝ 1930–1931 թթ.-ին Հայաստանի ղեկավարության մեջ էին ազգայնամուտ Իսանջյանը, տրոցկիստ Վարդանյանը և այլ Տեր-

¹⁴⁸ Նույն տեղում, էջ 207:

¹⁴⁹ Սպեցիֆիկներ – Այսպես է անվանել Վ.Լենինը 1903 թ. հոկտեմբերին Բաքվում հիմնադրված ՍԴԲԿ՝ «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության» (չչփոթել ժնևում 1903 թ. սեպտեմբերին հիմնադրված ՅՄԴՄ՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» հետ) անդամներին: ՍԴԲԿն ծրագրավորում էր ստեղծել համահայկական բանվորական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների համադաշնություն, և գտնում էր, որ Կովկասի յուրաքանչյուր ազգի բանվոր դասակարգ պետք է ունենար առանձին կազմակերպություն, որոնք մյուսներից կարող էին տարբերվել լեզվական, կազմակերպչական ինքնուրույնությամբ և յուրահատուկ այլ պահանջներով: 1905 թ. սեպտեմբերի 5-ին ՈՍԴԲԿ կենտկոմին ուղարկված նամակում Լենինը նրանց անվանել էր «սպեցիֆիկներ» և որակել որպես «բունդական կրեատուրա (դրածո), որը հատկապես հորինված է կովկասյան բունդիզմը սնելու համար» (*Վ. Հակոբյան*: Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության (ՍԴԲԿ) ձևավորման պատմությունից, «Լրաբեր» 33 ԳԱԱ հասարակական գիտությունների, 2009, № 2, էջ 46-58, – [http://hpi.asj-oa.am/2688/1/2009-2-3\(46\).pdf](http://hpi.asj-oa.am/2688/1/2009-2-3(46).pdf))(07.07.07): Այնուհետև «սպեցիֆիկներ» եզրը բոլշևիզմի դաշտում ձևավորված պատմագրության մեջ ամրագրվել է այդ կազմակերպության հայացքները կրողների նկատմամբ, իսկ բոլշևիկյան միջավայրում օգտագործվել է նաև որպես որոշ հայ բոլշևիկների «նացիոնալիստական մեկուսացման» ձգտման բնութագիր և քաղաքական այլախոհություն:

Գարրիելյանը: Այդ ժամանակահատվածը պետք է համարել ՀամԿ(բ)Կի և խորհրդային իշխանությունների դեմ հետագա ակտիվ պայքարի ծավալման համար կադրերի կազմակերպման և տրոցկիստների, ազգայնամոլների ու աջերի միավորման ժամանակամիջոց... Այս ամենը պատմեցի, որպեսզի հասկանալի լինի, որ Հայաստանում գոյություն ունեւ միասնական հակա-խորհրդային կազմակերպություն, և, նրան մասնակցելով, տրոցկիստները և աջերը ճշող մեծամասնությամբ եղել են ազգայնամոլներ, որոնք կանգնած էին Խորհրդային Միությունից Հայաստանի անջատման դիրքերում»¹⁵⁰:

Այսպիսով 1937 թ.-ին ԽՍՀՄ ՆԳԺԿ «հոգացել է», որպեսզի Հայաստանում համընդհանուր քաղաքական նացիոնալիզմի առկայությունը վավերացվի խորհրդայնացման սկզբից ևեթ, այդ թվում՝ ի դեմս ամենանվիրյալ բոլշևիկ ղեկավարության: Նկատի ունենալով, որ ձերբակալված Մուղդուսու քննիչները 1937 թ. սեպտեմբերին կուսակցական մաքրման նպատակով ՀամԿ(բ)Կ ԿԿ պատվիրակության հետ (Գ. Մալենկով, Ա. Միկոյան, Մ. Լիտվին, հետո՝ նրանց միացած Լ. Բերիա) Հայաստան եկած, Լիտվինի ղեկավարությամբ գործող ԽՍՀՄ ՆԳԺԿ քննիչներ Լ. Այլումանը, Կ. Գեյմանը և Յախոնտովն էին¹⁵¹, դժվար չէ կռահել, որ Հայաստանի տոտալ ազգայնամոլության մասին Մուղդուսու այս ամփոփումները ներշնչվել են ԽՍՀՄ ՆԳԺԿից: Եվ ոչ միայն Մուղդուսու: 1937 թ. սեպտեմբերին Մուղդուսու հետ միասին ձերբակալված ՀամԿ(բ)Կ առաջին քարտուղար Ա. Ամատունու, քարտուղար Սո.Ակոպովի հարցաքննությունների արխիվային գործերը կարդացած Ա.Մանուկյանը գրում է, որ նույն տեքստը կրկնվում է նրանց ցուցմունքներում¹⁵²: Այնքան կարևոր էր նրանցից կորզվելիք անհրաժեշտ բացատրությունը, և, միաժամանակ, ոչ անհրաժեշտ տեղեկություններ «դուրս չտալը», միով բանիվ՝ վերահսկողությունը, որ նրանց հարցաքննության անձամբ ներկա էին լինում Բերիան և Լիտվինը: ԽՍՀՄ ՆԳԺԿ տեղակալ Մ. Պ. Ֆրինովսկին 11.03.1939 թ.-ին բնութագրել է Ալուման-Գեյման-Լիտվին եռյակին. սրանք նույնիսկ Լուրյանկայի փորձառու ծեծողների մեջ իրենց մասնավոր հմտությամբ հայտնի էին որպես «ծակող քննիչներ»

¹⁵⁰ ՀՀ Ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության ազգային անվտանգության կարճված գործերի ֆոնդ (ՀՀ ՆԳ և ԱՍՆ ԱԱ ԿԳՖ), Գ. 10953, Հ. 1, Թ. 15 – 18, – հղվում է ըստ Ա. Մանուկյան: Հայաստանի հասարակական-քաղաքական գործիչները ստալինյան բռնությունների տարիներին հողվածի// «Լրաբեր» հասարակական գիտությունների, 2000, № 1, էջ 31, – <[http://raber.asj-oa.am/1797/1/2000-1\(27\).pdf](http://raber.asj-oa.am/1797/1/2000-1(27).pdf)> (07.07.07):

¹⁵¹ Ա.Մանուկյան: Հայաստանի հասարակական-քաղաքական գործիչները, էջ 39: Լ. Այլումանը և Կ. Գեյմանն իրենց հերթին կռնադատվեն երկու տարի անց՝ 1939 թ., և ԽՍՀՄ Գեորգույն դատարանի կողմից կղատապարտվեն գնդակահարության որպես ՆԳԺԿ մարմիններում գործող հակախորհրդային, ահաբեկչական, դավադրական կազմակերպության անդամներ, ուր, իբրև թե, ներքաշվել են Լիտվինի կողմից (Ա.Մանուկյան: Քաղաքական բռնածնունները Հայաստանում, էջ 215):

¹⁵² Ա.Մանուկյան: Հայաստանի հասարակական-քաղաքական գործիչները, էջ 31-32:

(следователи колольшики), ովքեր կարողանում էին «քննվողների անունից գրագետ տեքստ կազմել» և ծեծով հարկադրել ստորագրել այդ տեքստերը: «Շատ հաճախ ցուցմունքները տալիս էին ոչ թե քննվողները, այլ քննիչները»¹⁵³: Կարելի է չկասկածել, որ հայաստանյան ազգայնամոլության վերաբերյալ կիսագրագետ Մուդրուսու «քաղաքականապես ճիշտ» ձևակերպումները նրան պարզապես հրամցվել է ստորագրության: Այդ տեքստը հետագայում պետք էր գալու:

Խորհրդային Հայաստանի «նացիոնալիզմի պատմականությունը» և «հայ ազգայնամոլության» բնութագիրը ՆԳԺԿի (մեծ հաշվով՝ ԽՍՀՄ քաղաքական ակտիվի) հետագա տնօրինությանը նվիրած տխրահռչակ Մուդրուսուն նույնպես չի շրջանցել Ստալինի կողմից ստորագրված գնդակահարվողների սև ցուցակում հայտնվելու ճակատագիրը: Մուդրուսին ավարտել էր իր գործը, նվիրել էր «հայ ազգայնամոլության ապացույց» ցանկալի ամփոփիչ փաստաթուղթը, որը ոչ միայն պիտի արդարացներ հայ ժողովրդի նկատմամբ պետական տեռորը, այլև՝ հաստատեր Հայաստանի հասարակայնության և մասնավորապես հայաստանյան հումանիտար գիտության նկատմամբ «լրացուցիչ վերահսկողության անհրաժեշտությունը»: Հայաստանյան պատմագրությունը, փիլիսոփայությունը, գրականությունը և գրականագիտությունը հետագայում դեռ շատ կուսակցական գրախոսության կենթարկվեն, որովհետև ինչ և ինչպես էլ գրեին հայաստանյան հետազոտողները՝ «նացիոնալիստական» կմեկնաբանվի («արգելված թեմաներից» բացի դեռ կգործեն «արգելված հարցադրումներ», «արգելված կերպարներ», «արգելված դարաշրջաններ», «արգելված աղբյուրներ», «արգելված հեղինակներ», «արգելված բառեր»՝ միով բանիվ՝ «արգելված մտածողություն»): Կարելի է չկասկածել, որ ԽՍՀՄի ընդհանուր «արգելվածվածներից» զատ հանրապետություններից յուրաքանչյուրի համար կար նաև առանձնահատուկ «արգելվածների» շարք:

Հայաստանում ազգայնականության մեջ մեղադրանքի պատճառներն ու նպատակը

Ընդունված է համարել, որ քաղաքական բռնությունների նպատակը բոլշևիկների բացարձակ իշխանությունը և կառավարման համակարգում Կոմունիստական կուսակցության մենաշնորհը հաստատելն էր, ԽՍՀՄ քայքայված տնտեսությունը նոր գաղափարախոսության սկզբունքներով վերա-

¹⁵³ АПРФ (Архив Президента РФ, бывший архив Политбюро ЦК КПСС), Ф. 3, Оп. 24, Д. 373, Л. 3-44, րնագիր, մեքենագիր <<http://www.alexanderyakovlev.org/fond/issues-doc/58650>> (նշել ամսաթիվը):

կառուցելը, ԽՍՀՄ սովերային ազգային քաղաքականություն իրականացնելը: Իրականում ձևով լինելով միատեսակ, ազգային հանրապետություններում և կոնկրետ ժողովուրդների դեպքում քաղաքական բնությունները նաև այդ հանրապետությունների կամ ժողովուրդների նկատմամբ միանգամայն որոշակի խնդիրներ էին լուծում: Այս իմաստով քաղաքական բնությունները հանրապետությունից-հանրապետություն, ժողովրդից ժողովուրդ ունեին իրենց թիրախային առանձնահատկությունները և առնվազն մասամբ շարունակում էին ցարիզմի գաղութային քաղաքականությունը:

Վերևում ասվել է, որ Հայաստանում 1937-38 թթ.-ին գրեթե բոլոր քաղաքական մեղադրական եզրակացություններում «հիմնական» (հակախորհրդային և դաշնակցական) մեղադրանքների կողքին անապաման նշվում էր, որ մեղադրվողները զբաղվել են ազգայնամուլական («նացիոնալիստական») գործունեությամբ»:¹⁵⁴ «Նացիոնալիզմի» մեղադրանքի համատարածությունը, որ այդ տարիներին, ինչպես ստորև կտեսնենք, ամկա էր նաև միանգամայն պարզ մարդկանց՝ բանվորների, գյուղացիների հանդեպ առաջադրված մեղադրականներում, կասկած է առաջացնում այն կիրառելու որոշակի նպատակի շուրջ:

ԽՍՀՄը կազմող հանրապետությունների շարքում Հայաստանն, իհարկե, նացիոնալիզմի մեղադրանքում բացառիկ չէր: ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների բռնաճշումներում, Ռուսաստանից և Ադրբեջանից գատ, նացիոնալիզմի մեղադրանքն այս կամ այն չափով առկա էր: 1990 թ.-ին ԽՍՀՄ ԿԿ-ին կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի կողմից կազմված «Այսպես կոչված «նացիոնալիստական թեքման» մասին տեղեկանքի համաձայն «նացիոնալիզմի մեղադրանքին 1920-ականների վերջերին – 1930-ականներին գոհ են դարձել Ուկրաինայի, Բելոռուսիայի, Հայաստանի, Վրաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի շատ ղեկավարներ»¹⁵⁵: Ոմանց մեղադրում էին «ազգային շրջաններում կուսակցական և պետական ապարատը արագորեն տեղայնացնելու (տեղական կադրերով համալրելու – Հ.Խ)», ուրիշներին՝ «երկրի արևելյան ռեգիոններում ինդուստրիալիզացման տեմպերն անբավարար համարելու», երրորդներին՝ «ղեկավար մարմիններին և առանձին ղեկավարների անբավարար աշխատանքի համար քննադատելու», չորրորդներին՝ «հանրապետությունների և մարզերի ոչ բնիկ բնակչությանը տեղական՝ ազգային լեզուն սովորելն արագացնելու օգտին ելույթների» համար, այլոց՝ երկրի «ֆեդերալիստական» կառուցվածքի մասին հայացքների համար:

¹⁵⁴ *Ա.Մանուկյան*: Հայաստանի հասարակական-քաղաքական գործիչները, էջ 30:

¹⁵⁵ «О так называемом «национал-уклонизме», Справка ИМЛ при ЦК КПСС // Реабилитация: как это было. Середина 80-х годов - 1991, Том 3, М., Изд: «Материк», 2004, էջ 359-360:

1922 թ. ղեկտեմբերի Խորհուրդների առաջին համագումարից սկսած այն միշտ եղել է ազգային հանրապետություններին հնազանդեցնելու գործիքներից մեկը: «Նացիոնալիզմին» վերագրվող հաճախ կրկնվող մեղադրանք էր ԽՍՀՄ-ից անջատվելու «դավադիր ծրագրերի առկայությունը» (Բելոռուսիայում, օրինակ, «հայտնաբերվեց» «Բելոռուսիայի ազատագրման միություն» կազմակերպություն, Ուկրաինայում՝ Ուկրաինան ԽՍՀՄ-ից «պոկեելու» նպատակ հետապնդող բազմաթիվ հակահեղափոխական կազմակերպություններ): Միջինասիական հանրապետություններում «նացիոնալիզմի» հիմնական մեղադրանքը «նացիոնալիստական թեքումն» էր, ստալինյան ձևակերպմամբ՝ «աշխատավոր դասակարգի ինտերնացիոնալիստական քաղաքականության հարմարեցումը բուրժուազիայի նացիոնալիստական քաղաքականությանը», այսինքն՝ խորհրդային իշխանությունը տապալելուն և կապիտալիզմը վերականգնելուն ուղղված «սեփական» «ազգային» բուրժուազիայի փորձերը¹⁵⁶: Հայաստանյան «նացիոնալիզմի մեղադրանքը» հիշյալ բնութագրերից տարբերվում է: ԽՍՀՄ Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտը նույնիսկ չի բնութագրել հայաստանյան նացիոնալիզմի մեղադրանքը, սահմանափակվելով ըստ էության ոչինչ չստող մի տեղեկանքով. «Նացիոնալիստական թեքման» մեջ 1936-37 թթ.-ին Հայաստանում մեղադրվել են «ՀՍՍՀ ԿԿ քարտուղար Աղասի Խանջյանը, Ժողկոմխորհի նախագահ Ս.Մ. Տեր-Գաբրիելյանը, Կենտրոնական գործադիր կոմիտեի քարտուղար Ռ.Պ. Դաշտոյանը, Ժողկոմխորհի նախագահի տեղակալներ Լ.Գ. Շապյանը, Ա.Ա. Երզնկյանը, Արվեստի գործերով հանրապետական վարչության նախագահ Դ.Ա. Տեր-Սիմոնյանը, Հայպետհրատի տնօրեն Դ.Ա. Շահվերդյանը, հայտնի գրողներ Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Վ. Թորոպենցը»¹⁵⁷: Տեղեկանքը լռում է, թե ինչու՞մ է արտահայտվել Հայաստանի ղեկավարության և մտավորականության «նացիոնալիստական թեքումը» կամ, առնվազն նրանց առաջադրված «նացիոնալիստ» մեղադրանքի բնույթը: ԽՍՀՄ-ի «ֆեդերալիստական» կառուցվածքի քննարկումներում Հայաստանի Կոմկուսը, ինչպես վերը տեսանք, նույնիսկ չի մասնակցել: Ուշագրավ է նաև, որ ԽՍՀՄ-ում ռեպրեսիաների «նացիոնալիստական ալիքը» գլխավորապես 1930-31 թթ.-ն էին, և մեղադրանքներն էլ հասցեագրված էին գլխավորապես հանրապետությունների ղեկավարներին, մինչդեռ Հայաստանում այն բուռն և աղմկոտ ընթացք ունեցավ 1936-37 թթ.-ին և առաջադրվել է ոչ միայն ղեկավարներին ու մտավորականներին, այլև համարյա համատարած բոլոր ձեռքակալվածներին, այդ թվում՝ գյուղացիներին, բանվորներին, ծառայողներին, կուսակցականներին և անկուսակցականներին:

¹⁵⁶ «О так называемом «национал-уклонизме»...», էջ 359-360:

¹⁵⁷ Նույն տեղում, էջ 360:

Քննչական մարմինների կողմից փնտրվող «սահմանների» խնդիրը և թուրքահայերի թիրախավորումը, ինչպես նաև հրապարակախոսության մեջ «արևմտահայամետության» մեղադրանքը հուշում են, որ Հայաստանում իրականացված քաղաքական բռնությունների բովանդակության, մասնավորապես «հայկական նացիոնալիզմի» ձևակերպման և այն ռեպրեսիվ նպատակով օգտագործելու խնդրում ազդեցություն են ունեցել հայ ժողովրդի քսաներորդ դարի սկզբի մեծ ողբերգությունը՝ Հայոց ցեղասպանությունը և դրան հաջորդած ռուս-թուրքական քաղաքական համաձայնությունները: Քաղաքական բռնաճնշումների հայաստանյան գլխավոր առանձնահատկությունը հասկանալու համար անհրաժեշտ է թվում հպանցիկ անդրադառնալ Հայաստանի խորհրդայնացմանը նախորդած որոշ իրադարձությունների:

Հայաստանի խորհրդայնացման որոշ առանձնահատկություններ

1914 թ.-ին սկսված Առաջին համաշխարհային պատերազմին պատմական Հայաստանի տարածքներին տիրապետող երկու երկրները՝ Թուրքիան և Ռուսաստանը մասնակցում էին հակադիր ճակատներում: Արևմտյան Հայաստանը Թուրքիայի կազմում էր (Թուրքահայաստան), Արևելյան Հայաստանը՝ Ռուսաստանի (Ռուսահայաստան): Պատերազմի հենց սկզբին՝ 1915 թ.-ին հայերի նկատմամբ Թուրքիայում իրականացված Ցեղասպանությունից փրկված հայ փախստականները կուտակվել էին Թուրքիային սահմանակից տարածքներում, այդ թվում՝ Ռուսաստանի տարածք հանդիսացող Կովկասում, ամենից ավելի՝ Արևելյան Հայաստանի տարածքում:

1917 թ. բոլշևիկյան հեղափոխությունից հետո Խորհրդային Ռուսաստանը միակողմանի դուրս եկավ Առաջին համաշխարհային պատերազմից և 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում կնքված հաշտության պայմանագրով Թուրքիային զիջեց ոչ միայն պատերազմի ընթացքում գրավված «Թուրքահայաստանը», այլև «Ռուսահայաստանի» զգալի մասը՝ Կարսի մարզը՝ 30.000 քառ. կմ. տարածք, և թուրքերի պահանջով պարտավորվեց *ցրել հայերից բաղկացած ռազմական միավորումները*, ինչպես նաև *հսկա-թուրքական քարոզչություն վարող հայկական կազմակերպությունները*: Այս պայմանագրից հետո թուրքական բանակները մտան Կովկաս, և փաստացի հայ բնակչության նկատմամբ ցեղասպանական գործողությունները շարունակվեցին ներկայիս Ադրբեջանի և Հայաստանի տարածքներում:

1918 թ. մայիսին Այսրկովկասի երեք ժողովուրդներ՝ հայերը, վրացիները և կովկասյան թուրքերը (հետագայի ադրբեջանցիները) հռչակեցին

իրենց անկախ հանրապետությունների ստեղծումը, որոնք համապատասխանաբար ղեկավարվում էին այդ ժողովուրդների հիմնական ազգային կուսակցությունների կողմից՝ մենշևիկյան, մուսավաթական և դաշնակցական: 1918-20 թթ. ընթացքում Հայաստանում և Ադրբեջանում համարյա չեն դադարել ազգամիջյան հայ-թուրքական կռիվները: Միաժամանակ Հայաստանում ստիպված էին պատերազմել նաև Կովկաս մտած թուրքական բանակների դեմ, իսկ Ադրբեջանում, ընդհակառակն, օսմանյան և կովկասյան թուրքերի բանակները միավորվել էին թե՛ Հայաստանի դեմ, թե՛ Ադրբեջանի հայ բնակչության:

Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից և 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարի պայմանագրից հետո պարտված երիտթուրքերի ժառանգորդ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ ձևավորված զուգահեռ թուրքական, դեռևս անլեզու իշխանությունը սկսեց բանակցել բոլշևիկյան Ռուսաստանի հետ՝ համատեղ պայքարելու «Անտանտի երկրների դեմ», որոնք այդ պահին քննարկում էին Թուրքիան անդամահատելու ծրագիրը: Դրա դիմաց Քեմալը խոստանում էր միանալ «բոլոր ճշվածներին օգնելու» բոլշևիկյան գաղափարախոսությանը և բոլշևիկացնել Թուրքիան, ինչպես նաև օգնել Կովկասի բոլշևիկացմանը: Որոշ ժամանակ սա դառնում է Խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականության բացառիկ կարևորության հեռանկարը: «Անտանտի երկրների դեմ պայքարելուց» զատ, Քեմալը խոստանում է խորհրդայնացնել Ադրբեջանը, իսկ Լենինը խոստանում է քեմալական Թուրքիային ազատել «հայկական հարցից»:

Մուստաֆա Քեմալին «հայկական հարցից» ազատելու առաջին ծրագրային դրոյթը ձևակերպելը հանձնարարվեց հայազգի երիտասարդ բոլշևիկ Ա. Միկոյանին: 1919 թ. դեկտեմբերին Միկոյանը Լենինին ներկայացրեց Արևմտյան Հայաստանի և ցեղասպանությունից փրկված թուրքահայերի ճակատագրի վերաբերյալ Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշման հնարավոր ծրագիրը, որը ծայրահեղորեն հարմարեցված էր «հայկական հարցից» ազատվելու Մ. Քեմալի պատկերացումներին: Ա. Միկոյանն առաջարկում էր հաշվի առնել այն փաստը, որ կոտորածների հետևանքով Թուրքահայաստանում բառի ուղղակի իմաստով հայ չի մնացել, թուրքահայ փախստականներից Անդրկովկասում առկա է մոտ 300.000 մարդ¹⁵⁸, իսկ բուն Թուրքահայաս-

¹⁵⁸ Հայոց ցեղասպանության հետազոտող Ռիչարդ Հովհաննիսյանը գտնում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին՝ 1918 թ.-ին Արևելյան Հայաստանում կային մոտ 400-500 հազար թուրքահայ փախստականներ, – *Richard G. Hovannisian. The Republic of Armenia, vol. 1: The first year, 1918-1919, Berkeley – Los Angeles: University of California Press, 1971, էջ 48:* Ա. Միկոյանը հայ փախստականների թիվը համարում է 300.000 մարդ որը Անդրկովկասում: Հագիվ թե՛ նա միտումնավոր նվազեցնում է թվերը, ավելի հավանական

տանում ապրում են համարյա միայն մահմեդականներ: «Միայն իմպերիալիստների կամակատար հայ շովինիստներն են դեռևս կրում «Մեծ Հայքը» վերստեղծելու պատրանքային գաղափարը, որի նպատակը Թուրքիան կողոպտելն ու իմպերիալիստներին զոհաբերելն է, և որը նույնիսկ վերականգնվելու դեպքում դժբախտություն կրերի Թուրքահայաստանի ներկայիս մահմեդական բնակչությանը: Եթե բոլշևիկների կուսակցությունը նույնիսկ պաշտպանի հայ շովինիստների այս ագրեսիվ ծրագրերը, նա իր դեմ կտրամադրի արևելքի մահմեդական բազմամիլիոն հասովածը: Բոլշևիկներն այժմ պետք է ընդունեն, որ հայկական ազատագրական շարժումը վերափոխվել է իմպերիալիստական-նվաճողականի, որ «Թուրքահայաստանի» և առհասարակ «Միացյալ անկախ Հայաստանի» գաղափարը վտանգավոր, ռեակցիոն և հանցագործ գաղափար է, որի դեմ բոլշևիկյան կուսակցությունը պետք է պայքարի, որ հայկական հարցն առհասարակ արդեն վերացել է, քանի որ այդ տարածքներում վերացել է... հայ ժողովուրդը, իսկ հայ փախստականներին ապագայում, երբ հայերը կնվաճեն թուրքերի վստահությունը, կարելի է վերադարձնել իրենց հայրենիք և լուծել թուրք բոլշևիկների մեջ»¹⁵⁹: Կոտորածներից փրկված թուրքահայության նկատմամբ այս չափազանց ագրեսիվ ծրագիրն ընկավ Լենին-Քեմալ, մեծ հաշվով՝ Ռուսաստան-Թուրքիա, հետագայում՝ ԽՍՀՄ-Թուրքիա՝ Հայաստանի և հայերի նկատմամբ հետագա քաղաքականության հիմքում:

1920 թ. գարնանը Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ Անկարայում ստեղծվեց Կ. Պոլսի սուլթանական կառավարությանը զուգահեռ կառավարություն: Լենինի ու Մ. Քեմալի՝ «գիջումների շուրջ» համաձայնություններից հետո 1920 թ. ապրիլի 26-ին, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի բացման երրորդ օրը, Քեմալը նոր ձևավորված կառավարության անունից սամակով դիմում է խորհրդային կառավարությանը՝ դիվանագիտական հարաբերություններ սկսելու և Թուրքիային զենքով, ոսկով ու պարենով օգնելու խնդրանքով, որի դիմաց, ի թիվս այլոց թուրքական կառավարությունը հանձն է առնում «*ռազմական գործողություններ սկսել իմպերիալիստական Հայաստանի*

է թվում, որ այդ շրջանում փախստականների շարունակական և անկառավարելի հոսքերն անկարելի էին դարձնում հաշվարկները: Բոլոր դեպքերում ԽՍՀՄ-ում սովորաբար առաջնորդվել են 300.000 թվով՝ այս թիվն օգտագործելով մերթ Զայաստանում, մերթ՝ Անդրկովկասում՝ հավաքված փախստականների թիվ և չնայած 1919 թ.-ից հետո մեծ թվով փախստականներ մահացել են, ինչպես նաև 1920 թ.-ին մեծ թվով նոր փախստականների ներհոսք է եղել, հետագայում 300.000 թիվը տևական ժամանակ մնացել է շրջանառության մեջ:

¹⁵⁹ РГАСПИ, Ф. 5, Оп. 1, Д. 1202, Лл. 8-9 об, Բնօրինակ, հրատարակված է Ю.Барсегов. Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарии. Զատոր 2, մաս 1, 2003, Изд. «Гардарики Москва», (այսուհետ՝ Ю. Барсегов), էջ 37-38, <<http://www.genocide.ru/lib/barseghov/responsibility/v2-1/0648-0685.htm#670>> (12.09.2014):

դեմ»¹⁶⁰ և պարտավորվում է «Ադրբեջանին ստիպել մղննելու սովետական պետությունների խմբի մեջ»¹⁶¹:

Լենինին ուղղված Քեմալի՝ ապրիլի 26-ի նամակից ճիշտ երկու օր հետո, ապրիլի 28-ին, Ադրբեջանը հաշտ ու խաղաղ հայտարարում է իր «խորհրդային» դառնալու իրողությունը: Մինչ Սևրում նախապատրաստվում էր Հայաստանի համար շահեկան պայմանագիրը, մի կողմից՝ օսմանյան թուրքերի, մյուս կողմից՝ ռուս-ադրբեջանական բուլշևիկների բանակները գրոհներ են սկսում հայկական Նախիջևանի և Ջանգեզուրի դեմ: Ջանգեզուրի ինքնապաշտպանությունը ղեկավարող Գ. Մժղեհին հաջողվում է մոբիլիզացնել տեղի հայ բնակչության բոլոր ներքին ռեսուրսները և ամիսներով դիմակայել թե՛ ռուս-թուրքական կանոնավոր բանակների, թե՛ տեղի մահմեդական բնակչության գրոհները: Այսուհետ հայերի ջարդերի մեջ նոր գաղափարական մեկնաբանություն է մտնում. նրանք խանգարում են «արևելքը բուլշևիզացնելու» և «բոլոր ճնշվածներին պաշտպանելու» ռուս-թուրքական ծրագրի իրականացմանը: Խորհրդայնացած Ադրբեջանը Մոսկվայից պահանջում է արագորեն խորհրդայնացած Ադրբեջանին կցել հայկական Ջանգեզուրը և Ղարաբաղը¹⁶²:

Օգոստոսի 24-ին խորհրդային կառավարությունը Քեմալի դեռևս ոչ լեգիտիմ կառավարության հետ ստորագրում է «Բարեկամության նախնական համաձայնագիր», որով «Անտանտի ինտերվենցիայի դեմ պայքարելու համար» Քեմալին խոստանում է ահռելի ռազմական օգնություն: Մեկ շաբաթ հետո՝ սեպտեմբերի 1-7-ը, Բաքվում տեղի է ունենում Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը: Թուրքական կողմից համագումարին մասնակցում էին սուլթանական Թուրքիայի դեռևս օրինական իշխանությունների կողմից հայերի ջարդերի կազմակերպման համար մահապատժի դատապարտված և Խորհրդային Ռուսաստանի կողմից գրկաբաց ընդունված Էնվեր, Բեհալտդին Շաքիր և Խալիլ փաշաները: Համագումարից տասը օր հետո, սեպտեմբերի 17-ին, համագումարի կողմից ձևավորված Արևելքի ժողովուրդների քարոզչության ու գործողությունների խորհրդի նախագահությունը Բաքվում որոշում է ընդունում, որ Արևելքի ժողովուրդների հեղափոխականության, **Ադրբեջանում զարգացում ապրող թրքասիրության ու գաղութարարության**

¹⁶⁰ РГАСПИ, Ф. 2, О. 2, Д. 280, Л. 280-281 об. (Ю. Барсегов, էջ 51-52):

¹⁶¹ АВРР (Архив внешней политики Российской Федерации), Ф. 04, Оп. 39, П. 262, Д. 52987, Л. 1, Պատժեն; Ф. 132, Оп. 4, П. 104, Д. 40, Л. 13 (Ю. Барсегов, էջ 50-51):

¹⁶² РГАСПИ, Ф. 2, Оп. 1, Д. 14516, Лл. 1-2 об. (Ю. Барсегов, էջ 75); Ա. Միկոյանի և Գ. Օրջոնիկիձեի հեռագիրը 29.06.1920 // РГАСПИ, ֆ. 64, օպ. 1, Ժ. 17, Լ. 134; ՀՀ ՊԱ, Ֆ. 200, ց. 1, Գ. 4, թթ. 2-3, Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ.: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու(կազմողներ Ա.Միրզոյան, Ա.Ղազիյան), Երևան, ՀՀ Պատմության արխիվ, 2003, էջ 479-480:

ծրագրերի, ինչպես նաև Թուրքիայում սոցիալիզմի գաղափարախոսության հոգեվարքի դեմ միակ փրկությունը... թուրքական ազգայնական ուժերի հարձակումն է Հայաստանի վրա, որից հետո ռուսական բանակը հայերին պաշտպանելու պատրվակով կմտնի Հայաստան և այն կխորհրդայնացնի: Այդպիսով, կվերանա Թուրքիան Ռուսաստանից բաժանող սեպը, և թուրքական զորքերն անմիջապես դուրս կգան Կովկասից¹⁶³: «Արևելքի խորհրդայնացումը» հետաձգելով՝ Մուստաֆա Քեմալի բանակը խորհրդային ռազմամթերքն օգտագործելով, «Անտանտի ինտերվենցիայի դեմ պայքարին» զուգահեռ, 1920 թ. սեպտեմբերի 23-ին հարձակվում է Հայաստանի Հանրապետության վրա: Նոյեմբերին պատերազմն ավարտվում է թուրքերի հաղթանակով, և քենալական զորքերը խորանում են Կովկասում:

«Խորհրդայնացած» Ադրբեջանի մահմեդականները քենալականների մուտքն ընդունում էին որպես ազատարարների: Եթե մինչ այդ Հայաստանի խորհրդայնացումը ծրագրվում էր՝ իբրև թե բոլշևիկացող Թուրքիային և Ռուսաստանին բաժանող սեպը վերացնելու համար, հիմա արդեն Ռուսաստանը կանգնեց այլ՝ Թուրքիայի և Ադրբեջանի միացման միանգամայն իրական խնդրի առաջ: Չկարողանալով ազդել թուրք դաշնակիցների կամայականությունների վրա՝ Ստալինը Լենինին խորհուրդ է տալիս Հայաստանն արագորեն խորհրդայնացնել և բաժանարար սեպ դարձնել Թուրքիայի ու Ադրբեջանի միջև՝ թույլ չտալով նրանց ընդհանուր սահման ունենալ¹⁶⁴: Հարավային Կովկասում արդեն փաստացի տնօրինող Քեմալը Մոսկվայի հետ սկսում է խոսել սպառնալի լեզվով, ակնարկելով, որ եթե Անտանտի երկրները Սևրի պայմանագիրը վերանայեն Թուրքիայի օգտին, ապա թուրք նացիոնալիստները պատրաստ են մի կողմ նետել բոլշևիկների կողմից իրենց պարտադրված և թուրքական քաղաքական ու ազգային ծրագրերը ճնշող ծանր պայմանները (խոսքը սոցիալիզմը Թուրքիա ներմուծելու մասին է)¹⁶⁵: Այլ կերպ ասած թուրքերը բարձրաձայնում են, որ սոցիալիզմը Թուրքիա ներմուծելուց շատ ավելի ձեռնտու է պայմանավորվել «Անտանտի իմպերիալիստական երկրների» հետ:

Մ.Քեմալն արդեն Խորհրդային Ռուսաստանից կախյալ չէր: Ապաստամբած և ռուսական զենքով կռվող Քեմալի ռազմական զործերն արևմուտքում շատ հաջող ընթացք ունեին, և «Անտանտի իմպերիալիստական երկր-

¹⁶³ «Заключение президиума совета пропаганды и действий народов Востока» о политике России на Востоке, представленное Президиуму Исполкома Коминтерна и ЦК РКП(б), АНИ РА, Ф. ИЗ, Оп. 3, Д. 7, Л. 1-2 և հաջորդ էջ, պատճեն, հրատարակված է *Ю.Барсегов*, էջ 170-172; *Е. К.Саркисян*. За кулисами (Как рождался Московский договор 1921 г.) // «Литературная Армения», 1991, № 1, էջ 71-82:

¹⁶⁴ ԲԳԱՍՊԻ, Փ. 558, Օպ. 1, Դ. 1999, Լ. 3 (Барсегов Ю. էջ 237):

¹⁶⁵ ԲԳԱՍՊԻ, Փ. 2, Օպ. 1, Դ. 16321, Լ. 1, 8, 20, 21 (Барсегов Ю. էջ 264-265):

ների» արևելյան քաղաքականության մեջ նույնպես շրջադարձ էր կատարվել. երկրները փորձում էին Քեմալի հետ համաձայնության գալ: Մերձավոր Արևելքում ֆրանսիական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Անրի Գուրոն (1867-1946) 1920 թ. սեպտեմբերին լուծարել էր Կիլիկիա վերադարձած հայերին օգնության մեկնող Հայկական լեգեոնը, և շուտով պիտի հայտարարեր՝ «Սերի պայմանագիրը փոխել այնպես, որ ընդունելի լինի թուրքերի համար», քանի որ «թուրքերը երկար ժամանակ մեր բարեկամներն էին, իսկ այնուհետև մեր քաջ և հավատարիմ թշնամիները» («Le Temps», 10.12.1920):

Իրենց «դասակարգային դաշնակից» Թուրքիային կորցնող ռուս բոլշևիկների համար միանգամից երկրորդական է դառնում Թուրքիայի սոցիալիստականացման խնդիրը, Խորհրդային Ռուսաստանի օրվա հրամայականը դառնում է, Ադրբեջանը չկորցնելով, Թուրքիայի հետ որևէ մակարդակի դաշնակցությունը պահպանելը: Թուրքիայի «տրամադրությունը բարձրացնելու» և բարեհաճությունը վերադարձնելու ամենակարճ ճանապարհը Հայաստանի Հանրապետությունը վերացնելը, Թուրքիայի օգտին անդամահատելը և խոցելի, հնազանդ ու անկարող դարձնելն էր, որի դիմաց թուրքերը խոստանում են հետ քաշել իրենց զորքերը: Նոյեմբերի 29-ին ռուսների ձևավորած հայկական հեղափոխական կոմիտեն ռուսական բանակի հետ միասին մտնում է Հայաստան և հայտարարում, որ աշխատավորական Թուրքիայի օգնությամբ Հայաստանը դառնում է խորհրդային և պատրաստ է թուրքերի հետ համատեղ պայքարելու Անտանտի իմպերիալիստների դեմ¹⁶⁶: Հայաստանը գրաված թուրքական բանակի դեմ կռվելու անկարող Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեկտեմբերի 2-ին վայր է դնում իր լիազորությունները և Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանի հետ ստորագրում համաձայնագիր, որով Հայաստանի Հանրապետության կառավարությունն իշխանությունը հանձնում է Հայաստանի բոլշևիկյան հեղափոխական կոմիտեին¹⁶⁷: Թուրքերը, սակայն, Հայաստանից դուրս չեն գալիս, շարունակում են թալանել¹⁶⁸, կոտորել խաղաղ բնակչությանը և տղամարդկանց քշել Թուրքիայի աշխատանքային ճամբարներ¹⁶⁹:

¹⁶⁶ Великая Октябрьская социалистическая революция и победа власти в Армении (Сборник документов), Ереван, 1957, էջ 433-434; МИД СССР, Документы внешней политики СССР. М., Госполитиздат, Т. 3, 1959, էջ 348-349:

¹⁶⁷ Сборник действующих договоров, соглашений и конвенций, заключенных РСФСР с иностранными государствами, Вып. 3, М., 1992, թիվ 79, էջ 14-15 (յու. Բարսեղոս, էջ 289):

¹⁶⁸ РГАСПИ, Ф. 85, Оп. 14, Д. 49, Лл. 16-16 об. (յու. Բարսեղոս, էջ 316):

¹⁶⁹ Armenia. Political and Ethnic Boundaries. 1878-1948. Anita L.P.Burdett (ed.). Archive Editions, 1998. էջ 824 (յու. Բարսեղոս, էջ 352-353). РГАСПИ, Ф. 85, Оп. 14, Д. 105, Л. 1-2 об. Հրատարակված է МИД СССР, Документы внешней политики СССР, Т. 3, էջ 484-487 (տե՛ս նաև յու.Բարսեղոս, էջ 354-356; Великая Октябрьская социалистическая революция, էջ 478, 492-493):

Այս պայմաններում սկսվում են թուրքերի հետ նոր պայմանագիր կնքելու՝ Մոսկվայի կոնֆերանսի նախապատրաստական աշխատանքները, որն ավարտվեց Հայաստանի անդամահատմամբ:

Հավանաբար բոլշևիկները կարիք ունեին Հայաստանի գոհաբերությունը «գաղափարապես հիմնավորելու» և, ըստ երևույթին, դրանով էր պայմանավորված տխրահոչակ Արևելքի ժողովուրդների քարոզչության և գործողությունների խորհրդի անդամ Ա. Սկաչկոյի «Արևելքի և նացիոնալիզմի հարցեր»-ին նվիրված մարտի 4-ի հոդվածը, որում փաստացի հստակեցվեց «հայկական նացիոնալիզմի» բոլշևիկյան ձևակերպումը: Այս հոդվածից պարզվում է, որ սոցիալիզմի գաղափարների տարածման համար մեծ գոհողություն է անհրաժեշտ, և այդ գոհողությունն ընկած է հայ ժողովրդի ու Հայաստանի ուսերին: Հայաստանին ու հայ ժողովրդին վիճակված այս մեծ առաքելությունը թելադրում է, որ հայերը պետք է ըմբռնումով մոտենան իր նացիոնալիզմից հրաժարվելու Անկարայի կառավարության դժկամությանը: Դրա փոխարեն խորհրդային երկրները պետք է հաղթահարեն իրենց նացիոնալիզմը, իրենց տարածքներն ու նույնիսկ իրենց համայնոսիների առանձին խմբեր գոհաբերեն հեղափոխության զարգացման շահերին: Ընդ որում «խորհրդային երկրներից» խոսքը բացառապես Հայաստանի և հայերի մասին է: Խորհրդային Ադրբեջանն, օրինակ, հայաբնակ Ղարաբաղը, Նախիջևանը և Չանգեզուրը պահանջելիս «նացիոնալիստ չէ», իսկ Հայաստանը, «հավատալով պրոլետարական հեղափոխության անխուսափելիությանը, պետք է անվարան զիջումների գնա այլ, այդ թվում նացիոնալիստական տերություններին», քանի որ Թուրքիան, իր խոստումներին հակառակ, առանց նախնական տարածքային զիջումների չի համաձայնվում սոցիալիստական դառնալ, և այդ զիջումները Հայաստանի հաշվին են, քանի որ ոչ Ռուսաստանը, ոչ Ադրբեջանը Թուրքիայի հետ վիճելի տարածքներ չունեն: Հայերը պետք է գիտակցեն համաշխարհային սոցիալիզմի հանդեպ իրենց առաքելությունը, որը ոչ այլ ինչ է, քան... թուրք հանցագործների հանցագործ չհամարելը և նրանց հանդեպ բարյացկամությունն ու զիջողամտությունը, հուսալով, որ առաջիկայում ստեղծվելու է «Վրացական, Հայկական և Անատոլիական թուրքական ֆեդերացիա, որի շուրջը կմիավորվեն արևելքի այլ երկրները»¹⁷⁰: Այսպիսով, Հայաստանին զուշացված էր «նացիոնալիստ չլինել», «հանուն հեղափոխության զարգացման» իր շահերն ու իր տարածքները զի-

¹⁷⁰ А. Е. Скачко. Армения и Турция на предстоящей конференции. «Жизнь национальностей», 1921, մարտի 4 (Ю. Барсегов, էջ 412-415): Նույնիսկ ռուս բոլշևիկներն են հետագայում ամաչել այս հոդվածից: Յետագա տարիներին այն թարգմտվել է այնքան խնամքով, որ երբ 1982 թ.-ին ԿԳԲ-ն այդ հոդվածի տեքստը տեսել է խորհրդային այլախոհ Գ. Խամիզովի մոտ, փորձել է պարզել, թե որտեղից կարող էր այն հայտնվել (Г.П. Хомизури. Социальные потрясения в судьбах народов (на примере Армении). М, Изд. «Интеллект», 1997, էջ 82-83):

ջել Թուրքիային, ցեղասպանությունը, ընթացիկ կոտորածներն ու հայրենիքը մոռանալ, ըմբռնումով մոտենալ «թուրքական նացիոնալիզմին» և Թուրքիային վերաբերվել ջերմ բարյացակամությամբ: «Համաշխարհային սոցիալիզմին» պահանջած ընթացիկ գոհը պիտի Հայաստանը լիներ:

Խորհրդային Հայաստանում ամուր տեղավորված թուրքական գորքերը ոչ մի օր չդադարեցրին խաղաղ բնակչության կոտորածներն ու թալանը: Կոնֆերանսի քննարկումներին, սակայն, ոչ ոք այդ մասին չի խոսել: Մարտի 16-ին քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև ստորագրվեց «Եղբայրության և բարեկամության պայմանագիր»ը: Թուրքոսական «Եղբայրության և բարեկամության» նոր պայմանագիրն արդեն Արևելքի ժողովուրդների խորհրդայնացման հարցը չէր դնում: Ավարտվում է Արևելքի ժողովուրդների մեջ Թուրքիայի միջոցով բոլշևիզմն արտահանելու նախկին պայմանավորվածությունը, հաստատվում է թուրքական նացիոնալիզմի իրավունքը և պայմանագրի հաջորդ կետերով Հայաստանն ու հայ ժողովուրդը զոհաբերվում են այդ իրավունքին: Կարսն ու Արդահանը տրվում են Թուրքիային, Նախիջևանը ինքնավար տարածքի կարգավիճակով հանձնվում է Ադրբեյջանին պայմանով, որ «Ադրբեյջանը այդ պրոտեկտորատը չի զիջելու երրորդ պետության»:

ԽՍՀՄ քաղաքական բռնաճնշումների խնդրի առումով խիստ կարևոր է Մոսկվայի պայմանագրի 8-րդ հոդվածով ամրագրված կետերից մեկը, որ հետագայում պետք է դեր խաղար Խորհրդային Հայաստանի քաղաքական ռեպրեսիաներում: Այդ կետում ասվում է, որ *երկրները պարտավորվում են թույլ չտալ իրենց տարածքում, կամ դրա մի մասում մյուս երկրի նկատմամբ պայքարելու նպատակ ունեցող խմբերի ձևավորում կամ առկայություն* (ենթադրելի է, որ տվյալ դեպքում Թուրքիայի համար խոսքը գնում է դաշնակցականների և առհասարակ հայերի մասին, Ռուսաստանի համար՝ Թուրքիայում ապաստան գտած մուսավաթականների): Թուրքիան և Ռուսաստանն այդ պարտավորությունը ստանձնում են նաև Կովկասի խորհրդային հանրապետությունների նկատմամբ (ենթադրաբար Թուրքիան՝ Ադրբեյջանի, Ռուսաստանը՝ Հայաստանի): 12-րդ հոդվածով Թուրքիայի մաս հանդիսացող այն տարածքներից, որոնք մինչև 1918ը Ռուսաստանի տարածքներ էին, ցանկացած բնակիչ կարող էր ազատորեն լքել Թուրքիան և տեղափոխել իր ունեցվածքը կամ դրա արժեքը (հասկանալի է, որ խոսքը քրիստոնյա բնակչության, գլխավորապես՝ հայերի մնացորդների մասին էր): Բոլորին պարզ էր, որ Թուրքիային անցնող Կարսի և Արդահանի տարածքներում դեռևս մնացած հայության վերջին բեկորները պետք է դուրս գնային: Միաժամանակ պայմանագրում որևէ խոսք չկար հայ փախստականների՝ հայրենիք վերադառնալու իրավունքի մասին, որով *փաստորեն Ցեղասպանություն*

նից փախստական թուրքահայությունը հայրենիք վերադառնալու իրավունքից զրկվում էր¹⁷¹:

Սեպտեմբերի վերջին Կարսում սկսվում են Անդրկովկասի երեք հանրապետությունների՝ Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրի շուրջ քննարկումները: Թուրքահայ փախստականների հարցով «Պայմանավորվող կողմերը պարտավորվում են պայմանագրի ստորագրումից երեք ամիս անց մասնավոր համաձայնություն կազմել 1918-1920 թթ. պատերազմի փախստականների մասին»¹⁷²: 1915-18 թթ.-ի՝ նախաքենավական ջարդերի շրջանի հայ փախստականների հարցն առհասարակ չի քննարկվում: Արդյունքում Հայաստանի ու հայերի հարցում թուրքերի բացարձակապես բոլոր պայմաններն ընդունելուց հետո հոկտեմբերի 13-ին Կարսում կնքված պայմանագիրը սահմանների հարցում փաստացի կրկնում էր Մոսկվայի պայմանագիրը, իսկ 14-րդ հոդվածով «1918-1920 թթ. պատերազմի փախստականների մասին» համաձայնագրի ստորագրումը ձևակերպվում է անորոշ «վեց ամսվա ընթացքում» արտահայտությամբ¹⁷³: Այս հոդվածում քննարկվող հարցերի կապակցությամբ Կարսում Ադրբեյջանի, Վրաստանի և Հայաստանի հետ կնքված պայմանագրից անհրաժեշտ է անդրադառնալ դրա 10-րդ հոդվածին, որով **կողմերը պարտավորվում էին թույլ չտալ իրենց տարածքներում այնպիսի կազմակերպությունների կամ խմբերի գոյությունը, որոնք պայմանավորվող կողմերի դեմ պայքարելու նպատակ ունեն**¹⁷⁴: Սա, իհարկե, Մոսկվայի պայմանագրի 8-րդ հոդվածի կրկնությունն էր: Ցավոք, վերլուծաբանները Մոսկվայի և Կարսի՝ համապատասխանաբար 8-րդ և 10-րդ հոդվածներին քիչ են անդրադառնում կամ առհասարակ չեն անդրադառնում, մինչդեռ դրանք, ամենայն հավանականությամբ, մեծ չափով պայմանավորել են ԽՍՀՄ ստալինյան բռնաճնշումների հայկական և հայաստանյան առանձնահատկությունը:

1923 թ.-ին Անտանտի երկրները քենավական Թուրքիայի հետ Լոզանի կոնֆերանսում պիտի քննարկեին հայ փախստականությանն իր հայրենիքում հավաքվելու նպատակով «Հայկական օջախ» ստեղծելու հարցը: Բոլշևիկները, որոնք միացյալ պատվիրակություն էին Խորհրդային Ռուսաստանից, Ուկրաինայից և Վրաստանից (պատվիրակության կազմում հայ

¹⁷¹ МИД СССР, Документы внешней политики СССР, Т. 3, էջ 597-602 (Կ. Բարսեղոս, էջ 459-460):

¹⁷² РГАСПИ, ф. 298, Оп. 1, Д. 108, Л. 19-22 (Կ. Բարսեղոս, էջ 547-548): Պատճենը Յու. Բարսեղովի գրքում՝ էջ 549:

¹⁷³ МИД СССР, Документы внешней политики СССР. М., Госкомиздат, 1960, т. 4, էջ 420-426 (տե՛ս նաև Կ. Բարսեղոս, էջ 556-557):

¹⁷⁴ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, «Գիտություն», 2000, էջ 393:

բուլշևիկներ չկային), հաջողությամբ թուրքերին օգնում են տապալելու նաև այդ հարցը: Գ. Զիչերինը 1923 թ. հունվարի 10-ին Լոզանից իր տեղակալ Մ. Լիովիտովին ուրախությամբ տեղեկացնում է, որ թուրքերը շատ հաղթական են ընթանում, որ թուրքերի բոլոր հաջողությունները պայմանավորված են ռուս-թուրքական դաշինքով և թուրքերն ընդունում են այդ փաստը¹⁷⁵, և որ «*դաշնակիցները դադարել են հայերի համար ազգային օջախ պահանջել: Դաշնակիցները համաձայնել են, որպեսզի որպես ազգային փոքրամասնություններ ճանաչվեն միայն ոչ մահմեդականները...*» (այսինքն՝ հայերի հարցը մասնավոր չդրվի, և առհասարակ «հայ» բառը չհիշատակվի – Հ.Խ.): *Դաշնակիցները «փոքրամասնությունների հարցում» Թուրքիայի համար հրաժարվել են Ազգերի լիգայի հապուկ վերահսկողությունից*¹⁷⁶: Բացարձակապես անհասկանալի է, թե ցեղասպանության ենթարկված հայերից Թուրքիայում մնացած փոքրաթիվ խմբի անվտանգության նկատմամբ մասնավոր պայմանի դուրսմղումը Լոզանի կոնֆերանսի ընդունելիք որոշումներից ինչու՞ էր այդպես ուրախացրել «բոլոր ճնշվածների պաշտպան» բուլշևիկներին¹⁷⁷:

Բուլշևիկների պնդմամբ իրենք մասնակցում են նաև թուրքահայ փախստականության՝ իրենց հայրենիք վերադարձի խնդրի քննարկմանը՝ հայտարարելով, որ «Ռուսաստանն ու Ուկրաինան մտադիր են իրենց տարածքներում նկատելի քանակությամբ հայ փախստականներ բնակեցնել...»¹⁷⁸: Բուլշևիկների կողմից ամեն ինչ արվում է, որ Լոզանի կոնֆերանսում թուրքահայերի հայրենիք վերադառնալու մասին որոշում չընդունվի: 1923 թ. նոյեմբերի 23-ին Ստալինին գրած Զիչերինի նամակից պարզվում է, որ խոսքը 250.000 հայերի մասին էր, ընդ որում արդեն ԽՍՀՄ դարձած խորհրդային բյուջեն ամենևին չէր պատրաստվում այդ խնդրի լուծումը կազմակերպելու համար ֆինանսական միջոցներ տրամադրել¹⁷⁹: Արդյունքում փախստական հայերի խնդիրը մնում է նորաստեղծ Ազգերի լիգայի խղճին, իսկ Թուրքիայում մնացած հայերին «խցկում են» Առաջին համաշխարհային պատերազմից Եվրոպայում խիստ պահանջարկված, դեմոկրատական ֆասադ ցուցադրող «փոքրամասնությունների իրավունք» կասկածելի բանաձևի

¹⁷⁵ РГАСПИ, Ф. 5, Оп. 1, Д. 1988, Л. 39-43 (Ю. Барсегов, էջ 609):

¹⁷⁶ РГАСПИ, Ф. 5, Оп. 1, Д. 1988, Лл. 39-43 (Ю. Барсегов, էջ 609-610):

¹⁷⁷ Այս կապակցությամբ տե՛ս նաև Ա.Մյանիկովի՝ 1922 թ. նոյեմբերի 15-ի նամակը Լենինին, Ստալինին և Զիչերինին, որով նա խնդրում է Լոզանի կոնֆերանսում պաշտպանել դեռևս Թուրքիայում մնացած և վտանգի տակ գտնվող փոքրաթիվ հայերի պաշտպանությանն ուղղված որոշումները (РГАСПИ, Ф. 5, Оп. 2, Д. 108, Л. 3-3 օժ., Ю. Барсегов, էջ 593): Նրա կուսակցական ընկերները ծիշտ հակառակ դիրքերում էին կանգնած:

¹⁷⁸ МИД СССР. Документы внешней политики СССР. М., Госкомиздат, Т.6, М., 1962, էջ 165-166; 166-167; РГАСПИ, Ф. 5, Оп. 1, Д. 1988, Л. 109 (Ю. Барсегов, էջ 610, 611, 612):

¹⁷⁹ АВПР, Ф. 04, Оп. 51, П. 325, Д. 54958, Л. 50 (Ю. Барсегов, էջ 620-621):

մեջ: Ընդ որում իրավական և գործնական իմաստներով դեռևս չփորձարկված «փոքրամասնությունների իրավունքները» Լոզանում ձևակերպվում են ոչ թե եվրոպական՝ ազգային, այլ թուրքական՝ կրոնական սկզբունքով՝ «ոչ մահմեդական փոքրամասնություններ»¹⁸⁰, ինչը Թուրքիայի համար հիանալի հնարավորություն էր իսլամացած հայերին գրկելու այդ փոքրիկ իրավունքներից և օտարելու քրիստոնյա մնացած հայությունից¹⁸¹: Լոզանի կոնֆերանսից հետո թուրքահայ փախստականների, գերի տարված և թուրքական բանտերում ու աշխատանքային ճամբարներում տառապող հայերի խնդիրն արդեն խորհրդային արտաքին քաղաքականության օրակարգից դուրս է գալիս:

Թուրքահայերի խնդիրը, սակայն, դուրս չի գալիս ԽՍՀՄ քաղաքականության ներքին օրակարգից: Չէ որ Մոսկվայի պայմանագրի 8-րդ և Կարսի պայմանագրի 10-րդ հոդվածով պարտավորվել էին **թույլ չտալ իրենց տարածքում, կամ՝ դրա մի մասում մյուս երկրի նկատմամբ պայքարելու նպատակ ունեցող խմբերի ձևավորում կամ առկայություն**: Ո՞վ/ովքեր կարող էին լինել այդ խումբը/խմբերը, եթե ոչ ջարդերի ենթարկված և հայրենիքը կորցրած «թուրքահայերը» (անշուշտ նաև գլխավորապես Ադրբեյջանում ապրող քրդերը, ում համար ԽՍՀՄը 1923 թ. հուլիսի 7-ի որոշմամբ Ադրբեյջանի կազմում ստեղծել էր նախ Քրդստանի գավառ՝ քրդերի երբևէ ունեցած առաջին վարչական միավորը, ապա՝ «Կարմիր Քրդստան») ազգային օկրուգը, որը վերացվեց 1927-30 թթ.-ին Թուրքիայում ծավալված քրդական ապստամբությունների շրջանում, և հետագայում քրդերը դարձան ԽՍՀՄ բռնաճնշումների մասնավոր թիրախներից մեկը: Սույն հարցը, սակայն, այս տեքստում չի քննարկվի):

Այսպիսով, ռուս-թուրքական ժամանակավոր «բոլշևիկյան եղբայրացումը» և Հայաստանի խորհրդայնացումը հայ ժողովրդին արժեցան յոթ

¹⁸⁰ Լոզանի պայմանագրի հոդված 37-45,– [http://wwi.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne\(12.06.2015\)](http://wwi.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne(12.06.2015)):

¹⁸¹ «Ոչ մահմեդական փոքրամասնություն» բանաձևը հետագայում ծակատագրական դեր պիտի խաղար, քանի որ փոքրամասնությունների բոլոր իրավունքներից գրկում էր իսլամացած հայերին (երանք «ոչ մահմեդական փոքրամասնություն» չէին), արագացնում նրանց ուժացումը՝ թրքացումը կամ քրդացումը, մյուս կողմից «հայկական ինքնությունը» տեղափոխում էր կրոնական ոլորտ՝ ընդհուպ մինչև լեզուն: Ոչ մահմեդական փոքրամասնություններն, օրինակ, այդ պայմանագրի 40-րդ հոդվածով իրավունք չունեին մայրենի լեզվով խոսելու: Արդյունքում իսլամացած կամ ավիացած հայերը գրկվում էին իրենց մայրենի լեզվով խոսելու, այդ լեզուն մայրենի համարելու իրավունքից, քանի որ այն ոչ մահմեդական փոքրամասնության լեզու էր: Այս բանաձևը Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած «փոքրամասնություն»-«մեծամասնություն» կոնֆլիկտի և փոքրամասնությունների եվրոպական «իրավականացման» հետևանքների ամփոփումը տես «Национальные меньшинства» и «люди без государства», Հաննա Արենդտի գրքում. *Арэндт Ханна. Истоки тоталитаризма, М., ЦентрКом, 1996, էջ 364-387*:

ամսվա պատերազմ թուրքական և ռուս-ադրբեջանական բոլշևիկյան կանոնավոր բանակների դեմ, Արևելյան Հայաստանի տարածքի կեսի հանձնումը Թուրքիային, Շախիջևանի և Ղարաբաղի հանձնումը Ադրբեջանին, Արևելյան Հայաստանի և առհասարակ Կովկասի խաղաղ հայ բնակչության ջարդերը, տղամարդկանց մի մասի թուրքական աշխատանքային ճամբարներ քշվելը, Հայաստանի ունեցվածքի թալանը թուրքերի կողմից, թուրքահայ փախստականների առաջ հայրենիք վերադառնալու բոլոր հնարավորությունների արգելափակումը, ԽՍՀՄում Հայոց ցեղասպանության փաստի բացարձակ լռության դատապարտվելը և այս ամենից հետո ԽՍՀՄի հայերի շարունակական տագնապը՝ թուրքական և ԽՍՀՄ բոլշևիկյան իշխանությունները ու՛մ կամ ի՛նչը կհամարեն Թուրքիայի **նկատմամբ պայքարելու նպատակ ունեցող անհատ կամ խումբ**: Լոզանի կոնֆերանսից հետո ԽՍՀՄում, այդ թվում Խորհրդային Հայաստանում փաստացի արգելվեցին Հայոց ցեղասպանության թեմայի շուրջ քննարկումները, նույնիսկ՝ հիշողությունների բարձրաձայնումը, և հետագայում այդ խնդիրն օգտագործվեց ստալինյան քաղաքական բռնություններում՝ որպես «հայկական նացիոնալիզմի» բնութագիր:

Թուրքահայերը Հայաստանում

Չանդրադառնալով Խորհրդային Հայաստանում հաստատված բոլշևիկյան իշխանության առաջին տարիների հեղափոխական բռնությունների՝ Կարմիր տեռորի տարողունակ թեմային, փաստենք միայն, որ թուրք «բոլշևիկների» հետ ռուս և հայ բոլշևիկների «եղբայրացումը» անվստահություն էր առաջացնում նրանց նկատմամբ: Հայ բոլշևիկները խոսում էին «հայկական նացիոնալիզմի» դեմ պայքարելու և Արևելքի մահմեդական բնակչության հետ եղբայրանալու մասին, իսկ Հայաստանի հայ բնակչության՝ «արևելքի մահմեդական բնակչության հետ» հարաբերությունների փորձում գերակշռում էին բռնությունների և կոտորածների հիշողությունները: Հայ բոլշևիկները թուրք բոլշևիկներին հայտարարել էին հայ ժողովրդի բարեկամներ, ովքեր խորապես մտահոգ էին հայ և թուրք ժողովուրդներին կեղեքող դաշնակցականների բռնություններով և թշնամություն ունեն բացառապես դաշնակցականների դեմ: Հիմա դաշնակցականները չկային, իշխանության տերը հայ բոլշևիկներն էին, իսկ թուրք բոլշևիկները բոլորովին չէին տարբերակում հայ բոլշևիկներին հայ դաշնակցականներից և շարունակում էին թալանել ու կոտորել խաղաղ հայ բնակչությանը:

Փոփոխությունն այն էր, որ եթե դաշնակցական գորամիավորումները պաշտպանում էին կոտորվողներին ու թալանվողներին, ապա բոլշևիկները պահավ բողոքի նոտաներ էին հղում և ամեն կերպ ջանում հեռու մնալ բոլշևիկ թուրք ասկյարների հետ անմիջական շփումներից: Դրան զուգահեռ Հայաստանի բոլշևիկները ճիշտ այն ժամանակ, երբ թուրքերը բառի բուն իմաստով կոտորում էին Շիրակի և Լոռվա բնակչությունը և հարյուրավոր անթաղ դիակները կուտակում ճանապարհների վրա¹⁸², շարունակում էին բացարձակի հասցնել հայ ժողովրդի ինքնապաշտպանության հնարավորությունների կազմալուծումը՝ ձերբակալելով դիմադրողներին և զինվորական սպաներին:

Հայաստանի հարավում՝ Զանգեզուրում, մինչ Հայաստանի խորհրդայնացումը թուրքերի դեմ պայքարող Նժդեհը 1920 թ. դեկտեմբերի 25-ին հայտարարում է, որ չի ընդունում բոլշևիկյան իշխանությունը, Տաթևում համազանգեզուրյան համագումար է հրավիրում և հայտարարում Զանգեզուրի՝ Լեռնահայաստանի անկախությունը Խորհրդային Հայաստանից:

1921 թ. հունվարի 14-ին Հայաստան է գալիս Համառուսական Արտակարգ Հանձնաժողովի՝ Ադրբեյջանի և Հայաստանի նախագահ Գևորգ Աթաբեկյովը: Նրա առաջին պահանջը Տրոցկու խորհուրդը կատարելն էր (Տրոցկին պնդել էր, որ բոլոր դաշնակցական սպաներն ուղարկվեն Ռուսաստան, և նրանց փոխարինեն ռուսները¹⁸³)՝ Հայաստանի բոլոր նախկին սպաներին աքսորելը (այդ թվում՝ նրանց, ովքեր արդեն ծառայության էին անցել կարմիր բանակում): ՀՀ Ազգային արխիվի փաստաթղթերը վկայում են, որ նախաձեռնությունը Ռուսաստանի կենտրոնական իշխանություններին էր և իրականացվել է 11-րդ կարմիր բանակի հրամանատարության կողմից՝ 11-րդ կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Ս. Օրջոնիկիձեի կարգադրությամբ¹⁸⁴: 1921 թ. հունվարի 24-ին հրամայում են դեռևս կենդանի մնացած բոլոր սպաներին հավաքվել հայկական նախկին պառլամենտի շենքում՝ «վերագրանցման համար», և հավաքված 1400 (այլ աղբյուրներով՝ 1500) նախկին սպաներին աքսորում են Ռուսաստան՝ Ռյազան քաղաք, այդ ամենն ուղեկցելով նվաստացման գործողություններով¹⁸⁵: Նրանց մեջ կային 15 գնեդալ և 25 գնդապետ¹⁸⁶, մեծ մասը՝ թուրքերից Հայաստանի ինքնա-

¹⁸² Գ. Մարտիրոսյան. Еще об одной белой странице черного предательства, «Литературная Армения», 1994, № 7-9, էջ 99:

¹⁸³ Armenia. Political and Ethnic Boundaries. 1878-1948. Anita L.P.Burdett (ed.). Archive Editions, 1998, էջ 654-656 (Կ. Բարսեղյան, էջ 336-338):

¹⁸⁴ Վ. Ղազարխանյան: Հայ սպաների աքսորը 1920-21թթ. // «Բանբեր Հայաստանի արխիվների», 2003, 2(102), էջ 33 <<http://www.armarchives.am/UserFiles/File/02-03.pdf>> (07.07.07):

¹⁸⁵ КПСС в резолюциях и решениях, ч. 2, М., Госполитиздат, 1954, էջ 490: Վ. Ղազարխանյան: Հայ սպաների աքսորը 1920-21 թթ., էջ 35, 47, 49:

¹⁸⁶ Ա. Մանուկյան: Զաղաքական բռնությունները Հայաստանում, էջ 171:

պաշտպանական կոիվների մասնակիցներ: Արխիվային նյութերի որոշ տեղեկություններ թույլ են տալիս եզրակացնել, որ արքայի տանը են նաև Վրաստանի ու Ադրբեջանի հայազգի սպաները¹⁸⁷: Դրան հաջորդում է բացահայտ տեղորը՝ ձերբակալությունները¹⁸⁸:

1921 թ. հունվար-փետրվար ամիսներին Շիրակում դեռևս բոլշևիկ համարվող թուրքերը տղամարդկանց թշուր էին Թուրքիա՝ հարկադիր աշխատանքների, գյուղերում շարունակվում էին կանանց ու երեխաների կոտորածները¹⁸⁹, իսկ ռուս և հայ բոլշևիկյան կառավարությունները չէին կարողանում խնդիրը կարգավորել իրենց դաշնակից թուրքերի հետ:

Չեկիստներից ու թուրքերից ծայրահեղ դաժանությունների ենթարկվող բնակչությունը, հետևելով դաշնակցականների հորդորներին, ըմբոստանում է և գավառներից խումբ-խումբ շարժվում դեպի Էջմիածին և Երևան: Դրանք գլխավորապես Արևմտյան Հայաստանից փախստականներն էին՝ թուրքահայերը: Նրանց մեջ դեռևս կային զինված, մինչև վերջ Անդրանիկի հետ մարտնչած մարդիկ, ովքեր մասնակցել էին նաև Սարդարապատի և այլ կոիվներին, փորձ ունեին, ըստ էության տրամադրված չէին նաև Հայաստանի նոր իշխանությունների դեմ և նույնիսկ «1920 թ. դեկտեմբերի 3-ի մի վավերագրից պարզվում է, որ Արագածի լանջին տեղակայված 1500-ի չափ սասունցի, մշեցի, խնուսցի և արևմտահայ կամավոր այլ զինվորներ կոլեկտիվ դիմում էին ուղղել ՀՄԽՀ բանակի հրամանատարությանը՝ ցանկություն հայտնելով հավատարիմ ծառայել խորհրդային երկրին»¹⁹⁰: Նրանց նպատակն, ամենայն հավանականությամբ, Հայաստանը դեռևս ասպատակող թուրքական զորքերի դեմ համատեղ դիմադրությունն էր: Փետրվարին արդեն, հնարավոր է, բոլշևիկյան կառավարման երկուսուկես ամսվա ընթացքում նրանք համոզվել էին թուրքերին դիմադրելու բոլշևիկյան կամքի բացակայության մեջ, իսկ հայ զինվորական սպաների արքայի վերջնականապես հուսախաբ էր արել այդ դեռևս որպես փախստական դեզերող մարդկանց: Փետրվարի 18-ին ասպատամբներին դիմադրելու կարողություն

¹⁸⁷ Նույն տեղում, էջ 35:

¹⁸⁸ Великая Октябрьская..., 1957, էջ 507-508:

¹⁸⁹ 1921 թ. ապրիլի 28-ին Ամերիկյան կոմիտեն Ջաջուռի լեռնանցքի մոտ հայտնաբերել էր հունվար-փետրվար ամիսներին սպանվածների 1 200-1 500 դիակ. «...տղամարդկանց դիակ բացարձակ չկա, արական սեռի զոհերից ամենատարիքովը 14 (!-Յ.Խ.) տարեկան էր... Մեզ տեղեկացրին, որ բուն լեռնանցքում շատ դիակներ կան, սակայն անբարենպաստ եղանակային պատճառներով մենք չկարողացանք այնտեղ հասնել», - Великая Октябрьская..., 1957, էջ 557-558:

¹⁹⁰ Ա. Զակոբյան: 1921 թ. փետրվարյան իրադարձություններում «կարմիրների» և ասպատամբների զինուժի մասին հայ պատմագրության մեջ // «Լրաբեր հասարակական գիտությունների», 2011, թիվ 2, էջ 7 (աղբյուրը՝ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 3) <[http://hpi.psj.-oa.am/5675/1/2011-2\(3\).pdf](http://hpi.psj.-oa.am/5675/1/2011-2(3).pdf)> (11.09.2014):

չունեցող բոլշևիկները նահանջում են՝ նախապես հապճեպորեն կացնահարելով Երևանի բանտում պահվող կալանավորներից առավել հայտնի քաղաքական, ռազմական ու հանրային գործիչներին:

Բոլշևիկները հետ են քաշվում Արտաշատ՝ շարունակելով իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքում տեռորի ենթարկել վախեցած բնակչությանը: Այդ տեռորը հավանաբար այնպիսի չափեր էր ընդունել, որ բռնություններից առանձնապես չխորշող Ս. Օրջոնիկիձեն մարտի 18-ին ստիպված էր զգուշացնել Գ. Աթաբեկովին. «Շատ ընկերներ հաղորդում են, որ Ձեր գործողությունների շրջաններում տեղի են ունենում անիմաստ գնդակահարություններ, գնդակահարում են գերիներին և այլն: Խստորեն պնդում եմ շատ զգույշ լինել և ոչ մի դեպքում ձեռք չտալ գերիներին, և առհասարակ ես անընդունելի եմ համարում տեռորի մեթոդն ու բնակչության համատարած ահաբեկումը»¹⁹¹:

Ապրիլի սկզբին բոլշևիկները վերագրավում են իշխանությունը: Ապստամբների զգալի մասը, նրանց հետ նաև բազմաթիվ մտավորականներ և/կամ պարզապես ունևոր մարդիկ, մոտ տասը հազար մարդ, նահանջում են դեպի հարավ՝ անկախ հայտարարված Զանգեզուր (Լեռնահայաստան):

Բոլշևիկներն, իհարկե, հասկանում են, որ «չափն անցել են»: Օրջոնիկիձեի խորհրդով ապրիլի 24-ին Հայեղկոմն ընդունում է «Ընդհանուր ներման մասին» դեկրետ, որով ներում է շնորհվում խռովության բոլոր մասնակիցներին: Դեկրետում ասվում էր. «...ազալու համարել քաղաքական և ամեն տեսակի ու ձևի պայրասխանաբախությունից առանց բացառության բոլոր նրանց, ովքեր որևէ կերպ պայքարել են Հ.Ս.Խորհրդային հանրապետության դեմ, անկախ նրանց անմիջական գործից, կոչումից, դիրքից, պաշտոնից: Բոլոր այս քաղաքացիներին վերահաստատել իրենց ամբողջ իրավունքների մեջ»¹⁹²: Հայ կոմունիստները միջնորդեցին Ս. Օրջոնիկիձեին՝ այդ համաներման դեկրետի շրջանակներում ազատ արձակել նաև «Հայաստանի և Վրաստանի սահմաններից Ձեր կարգադրությամբ արտաքսված հայ սպաներին»¹⁹³: Նրանք դեռ չգիտեին, որ նույն այդ սպաներին դեռ սպասում է սարսափելի՝ 1937-1938ը, երբ մի սադիստ-չեկիստի ներկայացրած պարզ թղթի կտորի վրա ԽՍՀՄ հսկայածավալ երկրի գերագույն հրամանատար-առաջնորդը կգրի «այս բոլոր հայ-գիևվորականներին պետք է ձերբակալել»:

¹⁹¹ РГАСПИ, Ф. 85, Оп. 14, Д. 74, Л. 1-2 (Ю. Барсегов, էջ 465):

¹⁹² «Կոմունիստ», 1921, 24 ապրիլի:

¹⁹³ Վ. Ղազարեցյան: Չայ սպաների արքայը 1920-21թթ., էջ 35:

ԵՐ ԵՐԱՅԻՄ ԵՐԵՄԵ ԱՄՍ Ի Ե...

1921 Մարտի 20-ին.

Բանարարությունը Հայաստանի Հանրապետության հարստության մեծագույն աղբյուրն է. այն պետք է հարստանա աշխարհագրական կենտրոններով:

Նոր հրահանգները Հայաստանի կողմից հարստության աշխարհագրական կենտրոնները հարստանալու համար պետք է անհրաժեշտ զանգվածները հավաքել:

Բանարարներին, անասնաբույրներին և աշխարհագրական կենտրոններին հարստանալու համար պետք է հանդիսանան իրենց հարստության աղբյուրները:

1. Հարստանալու և իրենց հարստության աղբյուրները հարստանալու համար պետք է...

2. Այս հարստանալու աղբյուրները հարստանալու համար պետք է հարստանալու համար պետք է հարստանալու համար պետք է...

3. Այս հարստանալու համար պետք է հարստանալու համար պետք է հարստանալու համար պետք է...

4. Այս հարստանալու համար պետք է հարստանալու համար պետք է հարստանալու համար պետք է...

5. Այս հարստանալու համար պետք է հարստանալու համար պետք է հարստանալու համար պետք է...

Հայաստանի Բանարարության հարստանալու համար պետք է հարստանալու համար պետք է...

Կր. Կր. 1921 թ. Մարտի 20-ին Երևան

Շնորհակալությամբ

Երևան

Լուսանկար 7. 1921 թ. ապրիլի 24-ին Հայկեղյուզի ընդունած «Ընդհանուր ներման մասին» դեկրետը

Հասկանալով, որ թուրքահայերի անհուսալի վիճակի վրա «աչք փակելով» որևէ խնդիր չի լուծվելու, «Կոմունիստ» թերթում քննադատվում է նրանց նկատմամբ դրսևորվող անտարբերությունը՝ առաջարկելով «Կոչորեղ այդ անփարբերությունը, պարզել փանկահայ շարժման հասարակական քաղաքական բնույթը, ընդառաջել ժողովրդական զանգվածների ղեակ կարիքների...»¹⁹⁴:

1921 թ. ապրիլին Ալեքսանդրապոլից հեռացան նաև ավեր սփռող թուրքական զորքերը: Հավանաբար պետք է խնդիրը հասներ զինված ապստամբության, որպեսզի ռուսաստանյան բոլշևիկները հասկանային, որ իրենց դաշնակից և կուսակից «թուրք բոլշևիկներին» Հայաստանում թողնելն արդեն դուրս է գալիս բոլոր սահմաններից: Ալեքսանդրապոլի գավառում «բոլշևիկ քեմալականների» թողած «ժառանգության» վերաբերյալ Հայիեդկոմի հանձնաժողովի ստուգումը պարզել էր. «Սպանվածներ - 60.000, սովից մահացածներ - 34.000, բռնաբարվածներ - 50.000, որից 20.000 տղջիկներ, գերվել են 8000: Տարվել են խոշոր եղջերավոր անասուն՝ 80.000 գլուխ, մանր եղջերավոր՝ 25.000 գլուխ, որջ գյուղատնտեսական մթերքները և տեխնիկան: Ընդհանուր առմամբ տարվել է 143.416.500 ռուբլու արժողության ապրանք»¹⁹⁵:

Հուլիսի կեսերին Զանգեզուրից հեռանում է նաև Նժդեիդ՝ իր զինակիցների մի խմբի և Զանգեզուր հասած ապստամբների հետ անցնելով Պարսկաստան: Նրանց մի մասը ապստամբների նկատմամբ իշխանությունների կողմից ներում հայտարարվելուց հետո, գլխավորապես 1924 թ., ետ վերադարձան Խորհրդային Հայաստան և Զանգեզուրում մնացած իրենց զինակիցների հետ հետագայում ընկան խորհրդային բնությունների մատակցի մեջ:

Ապստամբությունը ճնշելուց հետո Հայաստանի Ռազմական հեղափոխական կոմիտեն վերակառուցվեց ժողովրդական կոմիսարների խորհրդի (ԺԿԽ), մայիսի 21-ին ԺԿԽի նախագահ և ռազմական ժողովրդական կոմիսար նշանակվեց կրթված մտավորական Ալեքսանդր Մյասնիկյանը: Նրա իշխանությունը սովորաբար բնութագրվում է որպես մեղմ և կառուցողական շրջան: Մյասնիկյանը պիտի կառավարեր մի երկիր, որը, իր իսկ խոսքերով. «...բաղկացած էր փախստականներից և անմարդկայնացող ու դեգեներացվող թշվառ ժողովրդից: [Խորհրդային Հայաստանն] սրացել է հարյուրհազարավոր որբերի ու կմաղքի հասցված երեխաների բանակ: Մեր երկիրը որբերի ու փախստականների տեղ է, փառապանքի, հեծեծանքի, ողբի ու փառապանքի դժոխք»¹⁹⁶:

¹⁹⁴ Աշ. Զովհաննիսյան: Զրեշավոր թուրքիմացություն // «Կոմունիստ», 1921, 19 ապրիլի:

¹⁹⁵ Կ.Սարգսյան: Հայաստանում սովետական իշխանությունն ամրապնդելու միջոցառումները // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, #3, էջ 25-26 <[http://raber.asj-oa.am/4524/1/1986-3\(21\).pdf](http://raber.asj-oa.am/4524/1/1986-3(21).pdf)> (12.05.2015):

¹⁹⁶ А.Арутюнян. Александр Мясникян и становление второй республики // Нораванк, (30.03.2015), <http://www.noravank.am/rus/articles/security/detail.php?ELEMENT_ID=13279> (11.05.2015):

Ա. Մյասնիկյանն, իհարկե, չէր կարող ազդել ԽՍՀՄ ընդհանուր քաղաքականության վրա: Նա չէր կարող ազդել հոկտեմբերին կնքվելիք Կարսի պայմանագրի ընթացքի վրա, որտեղ, օրինակ, նույնիսկ խորհրդային շրջանում Հայաստանից թալանված գույքը վերադարձնելու խնդիրն իր կուսակից բոլշևիկները լուծեցին թուրքերի օգտին¹⁹⁷ առկախ թողնելով Թուրքիայի աշխատանքային ճամբարներում աշխատող հայ գերիների և հարյուր հազարավոր թուրքահայ փախստականների հարցերը: Չէր կարող ազդել Լոզանի կոնֆերանսի քննարկումներին, որի ընթացքում ռուս բոլշևիկներն ամեն ինչ արեցին, որպեսզի ցեղասպանությունից փրկված ու աշխարհում դեզերող հայ փախստականների հույսերն իրենց հայրենիք՝ Թուրքիայի իշխանության տակ գտնվող Արևմտյան Հայաստան ու Կիլիկիա, լիովին փակուղի մտնեն: Մինչդեռ Մյասնիկյանի ղեկավարության տակ գտնվող Խորհրդային Հայաստանը լեցուն էր փախստական թուրքահայերով, ովքեր շարունակում էին օրեր հաշվել «տուն վերադառնալու» համար: Մյասնիկյանը մի կողմից պետք է կտրեր հայրենիք վերադառնալու նրանց հույսերը, մյուս կողմից՝ նրանց հավատացներ, որ խորհրդային իշխանությունը մարդասեր է:

Այնուամենայնիվ նույնիսկ այդ դժվար պայմաններում Ա. Մյասնիկյանին հաջողվեց որոշ դրական գործեր անել: Առաջին հերթին՝ աղքատ գյուղացիությանը ղեկընտռված ազատել հարկերից: 1921 թ. հուլիսի 13-ին հիմնեց փախստականների գործերի վարչություն, իսկ 1921 թ. սեպտեմբերին որոշում ընդունեց ՀՕԿի՝ Հայաստանի օգնության կոմիտեի ստեղծման մասին, որը մինչև Մեծ տեռորի հասունանալը և դրան զոհ գնալը հասցրեց զգալի գործ անել փախստականների համար: 1922 թ. ապրիլին կազմակերպեց արևմտահայության համագումար՝ հրավիրելով նաև Վրաստանում և Ադրբեջանում պատսպարված փախստականների ներկայացուցիչներին: Այդ համագումարին իր ելույթը սկսեց վաղուց սպասված «թուրքահայ մեր եղբայրներ»-ով և խոսելով ընդհանուր հայրենիքը ոտքի կանգնեցնելու խնդիրների մասին՝¹⁹⁸ հավատ ու վստահություն ներշնչելով այդ բազմիցս տառապած ու ամեն կողմից մերժված մարդկանց, որ Խորհրդային Հայաստանը նաև իրենց հայրենիքը կդառնա: Կարողացավ 1921-25 թթ. ընթացքում ներգաղթ կազմակերպել և Իրանի, Կ. Պոլսի, Հունաստանի, Սիրիայի տարածքներում դեզերող հայ փախստականներից շուրջ 19.600 մարդու հնարավորություն տվեց տեղափոխվելու Հայաստան:

Ա. Մյասնիկյանը Հայաստանում նշանակվել էր նաև թուրքերի դեմ «հայկական նացիոնալիզմը» զսպելու առաջադրանքով: Այդ «զսպումը» նա իրականացնում էր՝ փորձելով կողոպտված ու կոտորված բնակչության

¹⁹⁷ РГАСПИ, Ф. 298, Оп. 1, Д. 108, Л. 15-16; Л. 19-22; Л. 28; Л. 35 (Ю. Барсегов, էջ 549, 551, 552):

¹⁹⁸ «Խորհրդային Հայաստան», 1922, 11 ապրիլի:

նը հաշտեցնել Հայաստանը քեմալականներին զոհաբերելու որոշումների հետ, համոզում էր, որ խորհրդային արևելյան քաղաքականության համար քեմալական գործոնը Անտանտի դեմ պայքարելու միջոց է և «*այսօր ով պայքարում է Անարանյի դեմ, նա օգնում է մեզ, մենք էլ օգնում ենք նրան, սա ռեալ քաղաքականությունն է*»: Հայաստանի բնակչության համար ընդունելի Մյասնիկյանին, սակայն, 1922 թ. մարտի 12-ից տեղափոխեցին նոր ձևավորվող Անդրֆեդերացիայի դաշնակցային խորհրդի նախագահի, ապա՝ քարտուղարի պաշտոնին: Հետհեղափոխական Անդրկովկասի երկրների ներքին քաղաքական դերակատարներն այդ տարիներին զանազան ինտրիգներով լուծում էին իրենց ազդեցության գոտիների հարցերը: 1925 թ. մարտի 22-ին Մյասնիկյանը զոհվեց Թբիլիսիից թռչող ինքնաթիռի հրկիզումից՝ նշանավոր հեղափոխական Ս. Մոզիլսկու և Հայաստանում բավական տխուր հետք թողած Գ. Աթաբեկյանի հետ: Այս ինքնաթիռի չբացատրված վթարը բազմաթիվ հարցականներ թողեց, այդ թվում՝ 1925 թ.-ին Վրաստանի Չեկայի նախագահի տեղակալի պաշտոնը զբաղեցնող Լ. Բերիայի՝ վթարով շահագրգռվածության շուրջ:

Ողջ ԽՍՀՄ-ում նոր իրավիճակ էր զարգանում, իշխանության վերաբաշխումների գործընթացներ, որոնցում փախստականներով լեցուն և չլուծված բազմաթիվ հարցերով Հայաստանը պիտի փորձեր գտնել իր տեղը:

Փախստական թուրքահայերը սպանալիք են Թուրքիայի համար

«Կյանքիս մեջ երկու շար ծանր օրեր եմ փետել: Մեկը դրանցից այն օրն էր, երբ մենք պիտի գաղթեինք մեր հայրենիքից ընդմիջի՝ փրահիկներին թողնելով մեր փունն ու փեղը, մեր նախահայրերի գերեզմանները և այն բոլորը, ինչ քաղցր էր մեզ համար աշխարհում: Մի անակնկալ քամի պայտուհանը բաց անելով հանկարծ մարեց մեր ճրագը, և մենք այլևս ոչինչ չփետանք... Ու սա կես դար է համարյա, որ մենք աչքը փակ դիպում ենք մեր կորցրած դրախտը մեր հոգու աչքերով: Իմ կյանքի երկրորդ դժբախտ օրն այն էր, երբ օրը ցերեկով երկու չեկիստ եկան փունս խուզարկեցին, բաժանեցին ինձ իմ կնոջից ու երեք սիրասուն զավակներից, փարան չեկա ու երկաթե դուռը երկնիցս փակեցին: Ես զրկված էի ապրելու համար երկու ամենասանհրաժեշտ քանից՝ Հայրենիքից ու Ազատությունից: Եվ որովհետև չգիտեմ, թե այդ երկու քաներից որին առաջին փեղը պետք է փախ, որին երկրորդական, այդ պատճառով էլ ապրում եմ փրահիկներին ու բոլշևիկներին հավասար արելությամբ»:

Լեո Կամսար, 1960

Ցեղասպանությունից փրկված և Հայաստանում ապաստանած թուրքահայությունը շատ դժգոհ էր Կարսի պայմանագրից, և դա խորապես անհանգստացնում էր բուլշևիկներին, ովքեր պարտավորվել էին ողջ խորհրդային տարածքում թույլ չտալ «Թուրքիայի նկատմամբ պայքարելու նպատակ ունեցող խմբերի ձևավորում կամ առկայություն»: Թուրքերը Խորհրդային Հայաստանում թուրքահայերի առկայությունն ինքնին դիտարկում էին որպես այդպիսի նպատակ ունեցող խումբ: Եթե ճիշտ է Ռ. Հովհաննիսյանի հաշվարկը, ապա 1918 թ.-ին Խորհրդային Հայաստանում կային 400-500 հազար թուրքահայ փախստականներ: 1918 թ.-ից հետո նրանց թիվն ավելացել էր 1920 թ. քեմալական զորքերի կոտորածներից փախածներով: Մինչև 1920 թ. թուրքահայ փախստականների մեծ մասը, նույնիսկ 1915-1916 թթ.-ին Մուշից, Սասունից, Բիթլիսից փախածների մեծ մասը դեռևս ապրելու տեղ չունեին: Տասնյակ հազարավոր փախստականներ՝ կանայք, երեխաներ, ուղղակի շրջում էին Անդրանիկի զորամասերի հետևից, և նույնիսկ զինվորների օգնությամբ սնվում էին: Մինչև այսօր Հայաստանի Թալինի, Շիրակի շրջանների գյուղերում հարյուրավոր մարդիկ պատմում են, որ իրենց պապերն ու տատերը երկու-երեք տարի թափառել են Անդրանիկի զորքերի հետևից՝ տարեցներ, մանկահասակ երեխաներ, հիվանդներ, երբեմն նույնիսկ խանգարելով ռազմական գործողություններին¹⁹⁹: Ցեղասպանության գեհեռից փրկված փախստականներից շատ-շատերը մահացան սովից ու համաճարակային հիվանդություններից հատկապես Երևանի փողոցներում, Էջմիածնում՝ վանքերի պատերի տակ, Ալեքսանդրապոլում... Նրանցից շատերն են մասնակցել Բրեստի պայմանագրից հետո Հայաստան ներխուժած թուրքական զորքերին կանգնեցրած 1918 թ. մայիսի 22-ի Սարդարապատի ճակատամարտին, ինչը հետագայում նրանց պիտի ստիպեր թաքնվել Թուրքիայի հետ եղբայրացած ԽՍՀՄ պատժիչ մարմինների հալածանքներից: Հայաստանից Անդրանիկի մեկնելուց հետո՝ 1920 թ.-ին փախստականները փորձեցին ժամանակավորապես տեղավորվել «որևէ տեղ»: Այդ հարցում գործող իշխանություններից օգնություն չստանալով, փախստականների նախկին ֆիդայական²⁰⁰ առաջնորդները՝ ինքնապաշտպանության կազմակերպիչները նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցրին:

¹⁹⁹ Պորուչիկ *Ա. Կոլմակով*: Պատմական հայկական վաշտը: Անդրանիկի վերջին զորամասի սփրիդյան վաշտը, Երևան. «Արմավ», 2014, էջ 59-62; *Ս.Մարտիրոսյան*, Սասունը Սեմալում, Երևան, «Լուսապակ», 2014, էջ 111-118:

²⁰⁰ Ֆիդայի – համարվում է արաբական բառ՝ «զոհաբերող» կամ «փրկիչ»: Հայերենում օգտագործվել և օգտագործվում է գլխավորապես արևմտահայ խաղաղ բնակչությանը թուրքական և քրդական բռնության կամայականություններից պաշտպանող կամավոր, վրիժառու, ինչպես նաև բռնապետության դեմ պարտիզանական մեթոդներով պայքարող մարդ իմաստներով: Հայ ֆիդայիների մասին առաջին հիշատակություններն սկսվում են 1880ականներին: Լույս իմաստով օգտագործվում է նաև «հայրուկ» բառը:

Նրանք շարունակում էին զինված մնալ և փորձում էին հայ բնակչությանը պաշտպանել թուրքական բանակի կամայականություններից: Ահա հենց նրանք էլ որոշեցին, որ իրենք բնակություն կհաստատեն Թուրքիայի հետ գծված սահմանամերձ տարածքներում՝ առաջիկա հնարավորության դեպքում հայրենիք վերադառնալու հույսով: Այդ տարածքների զգալի մասը, սակայն, լեռնային էին և մեծ մասամբ Արարատյան դաշտավայրում ապրող մահմեդական բնակչության ամառային քոչավայրերն էին: Փախստականները նրանց վախեցնելով, երբեմն էլ բռնությամբ գրավեցին այդ բնակավայրերի մի մասը և երեքից հինգ տարի թափառող հայ փախստականների մի մասը տեղավորվեց մահմեդականներից դատարկված բնակավայրերում, մյուսները հարմարվեցին հայերով բնակեցված բնակավայրերում: Մահմեդականների մի մասն անցավ այլևս Թուրքիայի տարածք հանդիսացող Կարս և Իզդիր, մի մասն էլ՝ Խորհրդային Հայաստանի Արարատյան դաշտավայրի մահմեդական հիմնական բնակավայրեր: Սա նույնպես ԽՍՀՄ ռեպրեսիաների շրջանում պիտի ուղղվեր նրանց դեմ՝ որպես թուրքերին հալածելու մեղադրանք:

Թվում էր, որ հայրենիք վերադառնալու հույսով սահմանային գոտիներում ժամանակավորապես հաստատված արևմտահայ փախստականները Կարսի պայմանագրով և Լոզանի կոնֆերանսով պիտի վերջնականապես հույսները կտրեին վերադարձի գաղափարից: Սակայն փախստականների մեջ լուրեր էին տարածվել, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերը ժամանակավոր են, քան տարի անց դրանք վերանայվելու են, և իրենք վերադառնալու են հայրենիք²⁰¹: Սա պատճառներից մեկն էր, որ գաղթականությունը շարունակում էր ապրել սահմանամերձ գոտիներում, իրենց բնակության վայրերը համարում էր ժամանակավոր և առհասարակ կողմնորոշված էր վերադարձի գաղափարին:

Մինչ Խորհրդային Հայաստանի թուրքահայերը հուսալով սպասում էին հայրենիք վերադառնալուն, հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանի գանազան անկյուններում դեզերող և դեռևս թաքնվող հայերի համար նոր խնդիրներ էին հասունանում: Թուրքիայում արագորեն նվազեցնում էին Լոզանի պայմանագրով իրենց վրա դրված պարտավորությունները: Օրինակ, Լոզանի պայմանագրի «Տնտեսական դրույթներ» վերնագրով 3-րդ բաժնի 65-րդ հոդվածով Թուրքիան ընդունել էր, որ 1915 թ. տեղահանությունն ու սպանությունները բնորոշվեին որպես «անօրինական կերպով ձեռնարկված ռազմական միջոց», և պարտավորվել էր այդ բռնագաղթի պատճառով

²⁰¹ Ռուս-թուրքական Մոսկվայի պայմանագրի սահմանափակ ժամկետի և դրան ուղեկցող գաղտնի փաստաթղթերի փաթեթի մասին տես՝ *Л.Эбрамджян. Русско-турецкий договор 16 марта 1921г. // <<http://www.yerkramas.org/2014/05/04/russko-tureckij-dogovor-16-marta-1921-goda-novyie-versii-v-znachenii-regionalnoj-politiki/>> (15.06.2014):*

մարդկանց կրած վնասները փոխհատուցել, լքված, իրականում իր կողմից բռնագրավված գույքը ետ վերադարձնել տերերին, եթե նրանք ողջ են, կամ նրանց ժառանգներին: Սա, անշուշտ, վերաբերում էր նաև հայերին: Բայց 1923 թ. սեպտեմբերին Թուրքիայում ընդունված օրենքով արգելվում է Կիլիկիայից և «Արևելյան նահանգներից» արտագաղթած բոլոր հայերի վերադարձը Թուրքիա, իսկ 1926 թ. օգոստոսին թուրքական կառավարությունը հայտարարում է, որ իրենք կպահեն մինչև 1924 թ. օգոստոսի 6 բռնագրավված ողջ ունեցվածքը և կհանձնեն տերերին, եթե այդ գույքի տերերը կամ նրանց ժառանգներն այդ գույքի մոտ լինեն: Ցեղասպանությունից փրկված, զանազան երկրներում դեգերող փախստական հայերին հայրենիք վերադառնալ արգելվել էր, և այդ իրավունքից օգտվել կարող էին միայն Թուրքիայի զանազան անկյուններում թաքնված հայերը, եթե նրանցից ոմանք որևէ հրաշքով կարողանային հասնել իրենց գույքին, բայց «Շատ դեպքերում մուսուլման ամբոխը վերադարձող հայերին կախում էր իրենց իսկ պտղատու ծառերից՝ տեղական իշխանությունների քաջալերմամբ»²⁰²: Մեծ մասամբ, սակայն, խնդիրը չէր հասնում դրան, քանի որ հայերին պարզապես արգելել էին իրենց նախկին բնակության վայրերը վերադառնալ, և նույնիսկ շարունակվում էին բռնաքաղցի նու բռնագաղթեցումները²⁰³: Որևէ վայրում այս կամ այն կերպ հաստատված հայերը տեղաշարժվելու իրավունք չունեին և պարբերաբար պետք է ներկայանային զինվորական մարմինների՝ իրենց ներկայությունը հաստատելու²⁰⁴:

Իրականում Թուրքիան միանգամայն արհամարհանքով էր վերաբերում Լոզանի պայմանագրով ստանձած պարտավորություններին, և որևէ մարմին կամ երկիր չկար, որ վերահսկեր կամ որևէ կերպ հետևեր դրանց կատարմանը: Ճիշտ է, պայմանագրի կողմ հաղնիսացող մի շարք երկրներ՝ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան, պարտավորվել էին հետևել Թուրքիայում փոքրամասնությունների իրավունքի կիրառման ընթացքին, բայց «նոր մտածող» Մուստաֆա Քեմալի հետ բարեկամացած երկրներից յուրաքանչյուրը մատների արանքով էր նայում Թուրքիայի «չարաճճիություններին»: Քեմալական Թուրքիայում մնացած հայերի մի մասը, հասկանալի պատճառներով չվստահելով Քեմալի «նոր մտածողությանը»,

²⁰² Walker Christopher: The Armenians.// Minority Rights Group Report No. 32 by David Narshall Lang, 2-nd rev. ed. London, January 1977, էջ 15: Տե՛ս նաև «Իսրայելցիների, յոյների, վրացիների նկատմամբ ատելություն չկայ, մեծ ատելություն հայերի նկատմամբ է», Հայկազեան Հայագիտական Հանդես [Haigazian armenological Review] (այսուհետ՝ ՀՀՀ), թիվ 34, Պեյրուք, «Haigazian University Press», 2014, էջ 526-527:

²⁰³ Հ.Խառատյան: Սասունցիները // ՀՀՀ, թիվ 33, Պեյրուք, Haigazian University Press, 2013, էջ 465, 466:

²⁰⁴ Հ.Խառատյան: «Մայրիկս փորձել է իսկական հաւատացեալ մահմեդական լինել, բայց միաժամանակ իրեն միշտ քրիստոնեայ է զգացել» // ՀՀՀ, թիվ 33, էջ 442:

1923-1924 թթ. ընթացքում տեղափոխվեցին Խորհրդային Հայաստան: Չգիտես ինչու այս տեղափոխությունը մինչև այսօր անվանվում է «հայրենադարձություն», չնայած այդ մարդիկ Խորհրդային Հայաստան տեղափոխվել էին իրենց հայրենիքից: Թուրքիայի տարածքից Խորհրդային Հայաստան տեղափոխվողների նկատմամբ «հայրենադարձություն» բառը կիրառելու պատճառը, հավանաբար, այն էր, որ Խորհրդային իշխանությունները չէին կարող իրենց տարակարծություն թույլ տալ և վտանգել այդքան դժվարությամբ նվաճված թուրքական բարեհաճությունը և հայերի հայրենիքը «հայերի հայրենիք» համարել: Այստեղից էլ՝ «հայրենադարձություն» եզրը, ինչով վավեացվում է, որ «հայերի հայրենիքը սահմանափակվում է Խորհրդային Հայաստանի առկա սահմաններով»: Լոզանի կոնֆերանսում հայ փախստականների դեմ թուրքական շահերը եռանդուն պաշտպանած և «հայ փախստականներին ընդունելու» խոստում տված ԽՍՀՄը չէր կարող արգելել Թուրքիայից հայերի փոքր խմբաքանակի անցումը Հայաստան, բայց նաև չէր ուզում միջոցներ ծախսել նրանց տեղավորելու համար:

Կարելի է չկասկածել, որ Թուրքիայի հետ Հայաստանի սահմանամերձ տարածքներում հաստատված հայ փախստականները թուրքերի կողմից ընկալվում էին որպես Թուրքիայի դեմ թշնամական գործողությունների և/կամ վրիժառույթյան հնարավոր հեռանկար ունեցող խումբ: Բազմաթիվ կորուստներ տված և ամեն ինչից զրկված փախստականները չդադարող պատերազմների մեջ գտնվող Հայաստանում առաջին տարիներին հանապազօրյա հացի խիստ մեծ կարիք ունեին, ինչը, ըստ նրանց ներկայիս ժառանգների հիշողությունների, երբեմն հայթայթում էին պարզ կողոպուտով՝ անցնելով Թուրքիայի տարածքում գտնվող իրենց երբեմնի հայրենիք և կողոպտելով տեղի քրդերին, համարելով, որ իրենք ընդամենը հետ են վերցնում իրենցից կողոպտածի մի մասը: Առնվազն նման հիշողություն կա նրանց այսօրվա թոռների մեջ: Սա բոլշևիկյան իշխանության լուրջ գլխացավանքներից մեկն էր, բայց մարդկանց կերակրելու այլ տարբերակ չէր առաջարկվում:

Լոզանի կոնֆերանսում հայ փախստականների՝ հայրենիք վերադառնալու խնդիրը հաջողությամբ տապալած և Խորհրդային Ռուսաստանում տեղավորելու խոստում տված Խորհրդային իշխանություններն այժմ բարձրաձայն քննարկում էին Խորհրդային Հայաստանը թուրքահայերից ազատելու խնդիրը: «Արձագանք Փարիզի» հնչակյան օրգանի 1924 թ. հոկտեմբերի 26-ի համարում տպագրված հոդվածում հաղորդվում է, որ 1924 թ.-ին Երևանում հրատարակված «Տնտեսական լրաբեր» ռուսալեզու թերթում լույս է տեսել Խորհրդային Հայաստանի հայտնի պետական դեմքերից մեկի՝ Արտաշես Կարինյանի²⁰⁵ «Պետք է վերջ տալ հայության հավաքմանը Հա-

²⁰⁵ Արտաշես Կարինյան – (1886-1982), հայ բոլշևիկ հեղափոխական, ապա՝ պետական քա-

յաստանում և 300.000 արևմտահայ գաղթականությանը ցրել Ռուսաստանում» հողվածը, որում հեղինակը գրում է. «Պետք է այժմ ևեթ հայտարարել, որ Հայաստանում կամ Հայաստանին կից շրջաններում հող ստանալու բոլոր հույսերն անիրականանալի են: Հայաստանը հողային ֆոնդ չունի: Մանր բուրժուական ռոմանտիկների հյուսած բոլոր հաշիվները Տաճկահայաստանի հողերի մասին բոլորովին անհող են: Այդպիսի կացության մեջ կարող է լինել միայն մի ելք և մի ուղի, այն է՝ հողային կնճռի լուծումը Հայաստանից դուրս և Խորհրդային Միության սահմաններում: Հայաստանն այժմ մեկուսացած և ինքնամիտի հողային միավոր չէ: Նա հրաժարվել է «Ազգային պետության» գաղափարից և կամավոր մտել Խորհրդային համայնավար միության մեջ: Ահա այս պատճառով է, որ նա կարող է խնդրել խորհրդային մյուս հանրապետություններից, որպեսզի իրենց ազատ հողային ֆոնդից տան որոշ տարածություն և դրանով աջակցեն հողային կնճռի լուծմանը Հայաստանում: Այդպիսի հողեր քիչ չեն Հյուսիսային Կովկասում, Դուբի շրջանում և Կուբանում: 300 հազար հայերի բնակեցումը Խորհրդային Միության հսկայական տերիտորիայի վրա ավելի հեշտ խնդիր է, քան թե սոված ու քայքայված Հայաստանում: Այդ գաղթականության բնակեցումը կազատի Հայաստանը ծանր բեռից, որ խեղդում է նրան: Այդ ձևով իր հիմքի մեջ **կյետեղվի ամեն մի ազգայնական փորձ** և կստեղծվի ամուր պատվանդան Մերձավոր Արևելքի ժողովուրդների միության համար... Պետք է վե՛րջ տալ հայության հավաքման գաղափարին Հայաստանում, մի գաղափար, որ մինչև այժմ էլ ապրում է ժողովրդական զանգվածների գիտակցության մեջ... Հողային ֆոնդի բացակայությունն է պատճառը, որ զարգանա ազգայնական ռոմանտիկան և հայությունը ձգտի տիրանալու իր «պապենական հողերին», ինչպես նաև վառ ու կենդանի պահի «միացյալ և անկախ Հայաստանի գաղափարը» ժողովրդական զանգվածների մեջ... Ուստի, մի անգամ ընդմիջտ այս բոլոր կնճիռները լուծելու համար անհրաժեշտ է նախ՝ ա) վերջ դնել հայության հավաքման գաղափարին Հայաստանի մեջ և ապա՝ բ) երկրի մեջ եղած 300.000 արևմտահայ գաղթականությանը ցրել լայնածավալ Ռուսաստանի մեջ»²⁰⁶:

Կարող է տարօրինակ թվալ, որ քննարկումների առնվազն երեք հնարավորություններից (Մոսկվայի, Կարսի և Լոզանի կոնֆերանսները) որևէ

դաքական գործիչ, պատմաբան: Ծնվել և հեղափոխական գործունեությունն իրականացրել է Բաքվում: 1923-24 թթ.-ին՝ Հայաստանի Կենտրոնական նախագահի տեղակալ, 1924-28 թթ.-ին՝ նախագահ, 1937 թ.-ին՝ բռնադատված-աքսորված: 1940 թ.-ին աքսորից վերադառնալուց հետո զբաղվել է գիտական գործունեությամբ: Նրա մասին տես *Խ.Բարսեղյան*: Արտաշես Կարինյան (ծննդյան 100-ամյակի առթիվ) // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, թիվ 4 <[http://hpi.asj-oa.am/4594/1/1986-4\(11\).pdf](http://hpi.asj-oa.am/4594/1/1986-4(11).pdf)> (01.05.2015):

²⁰⁶ Գ.Լազեան: Հայաստան եւ հայ դատը, էջ 308-310:

մեկում երբեք չի քննարկվել Խորհրդային Հայաստանում առկա մահմեդական բնակչությունը Թուրքիայի տարածքում մնացած հայերով կամ թուրքահայ փախստականներով փոխանակելու խնդիրը (հատկապես որ Լոզանի կոնֆերանսին որոշվեց Թուրքիայի հույներին փոխանակել Հունաստանի մահմեդականների հետ), երբեք չի խոսվել Հայաստանի սակավահողության մասին, նույնիսկ այն դեպքերում, երբ թուրքերը ոչ միայն վճռականապես առարկում էին հայ փախստականների՝ հայրենիք՝ Արևմտյան Հայաստան վերադառնալու առաջարկների դեմ, այլև պնդում էին Թուրքայում մնացած վերջին հայերին ԽՍՀՄ տեղափոխել: Պարզից էլ պարզ էր, որ թուրքերին խիստ ձեռնտու էր մահմեդական բնակչության առկայությունը Հայաստանում և խիստ անցանկալի՝ Խորհրդային Հայաստանի՝ Թուրքիայի հետ սահմանակից գոտում փախստական թուրքահայերի կուտակումը:

Իրականում Հայաստանի սակավահողությունն այն շրջանում բնակչության համար սպառնալիք չէր: Ըստ համահայաստանյան գյուղատնտեսական վիճակագրական նյութերի՝ «Վիճակագրական տեղեկատու»ի Հայաստանի բնակչությունը 1923-1924 թթ.-ին կազմել է ընդամենը 841.043 մարդ, 1924-1925 թթ.-ին՝ 907.755 մարդ²⁰⁷, 1926 թ. ԽՍՀՄ մարդահամարի նյութերով՝ 880.500 մարդ: 1926 թ. ԽՍՀՄ մարդահամարի նյութերով ողջ Հարավային Կովկասում հայերի թիվն ընդամենը 1.332.593 մարդ էր, որից 402.008ը քաղաքաբնակներ էին²⁰⁸: Ակնհայտ է, որ «Հայաստանում հայության հավաքման գաղափարին վերջ տալու» Ա.Կարինյանի առաջարկը «Հայաստանում հողային ֆոնդի բացակայությամբ» չէր պայմանավորված, այլ Հայաստանի թուրքահայերի՝ Ա. Կարինյանի ձևակերպած «ազգայնական ռոմանտիկայի» և/կամ «ազգայնական փորձերի»՝ «պայպենական հողերին» տիրանալու ձգտման տագնապով: Սա հենց այն էր, ինչ ԽՍՀՄը Թուրքիայի հետ պայմանագրերով խոստացել էր թույլ չտալ: Ուշագրավ է, որ Ա.Կարինյանն առաջարկում է «Ռուսաստանում ցրել» ոչ թե Հայաստանի բնակչության մի մասը, այլ հատկապես Հայաստանում գտնվող «300.000 արևմտահայ գաղթականությանը»: Բոլշևիկյան տրամաբանությամբ թուրքահայ փախստականներին «Հայաստանից արտրելով» կվերանար «ազգայնական ռոմանտիկայի» վտանգը և «ամուր պատվանդան կստեղծվեր Մերձավոր Արևելքի ժողովուրդների միության համար»: Ա.Կարինյանը 1921 թ. սեպտեմբերից մինչև 1922 թ. վերջերը եղել էր Հայկական ՍՍՀ կառավարության դիվանագիտական ներկայացուցիչը Ստամբուլում՝ հիմնա-

²⁰⁷ Հայաստանի Կենտրոնական հրատարակությունները // գրեց՝ Ս.Մասուրեան: «Հայրենիք» ամսագիր, Դ տարի, թիւ 2 (38), 1925, դեկտեմբեր:

²⁰⁸ Всесоюзная перепись населения 1926 года. Закавказская СФСР, http://demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_26.php?reg=5 (07.05.2015)

կանում «հայրենադարձության» կազմակերպման հարցերով: Նա, իհարկե, լավ գիտեր թուրքահայերի՝ «ժողովրդական զանգվածների գիտակցության մեջ» Խորհրդային Հայաստանում ապաստանելու «ազգայնական ռոմանտիկայի» մասին և իր հողվածով «փակում էր թեման»։ սակավահող Խորհրդային Հայաստանը ոչ միայն չի կարող նոր թուրքահայերի ընդունել, այլ պիտի ծրագրի եղածին ցրելու հնարավորությունները: 1918-1920 թթ.-ին աշխատած լինելով Մոսկվայում՝ ՌՍՖՍՀի ազգությունների ժողովրդական կոմիսարիատին կից հայկական գործերի կոմիսարիատում, նա, անշուշտ, լավ գիտեր թուրքահայ փախստականների նկատմամբ բոլշևիկյան Ռուսաստանի մտադրությունները: Ա. Կարինյանի այս հողվածով նաև զգալիորեն հասկանալի է դառնում «հայկական ազգայնականության» նկատմամբ բոլշևիկյան մտահոգությունը, որոնցից առնվազն մեկը «պապենական հողերը» վերադարձնելու թուրքահայերի ձգտման հնարավորությունն էր, որը կանխարգելելու ծրագիրը դեռևս 1919 թ.-ին Ա. Միկոյանն էր ներկայացրել Լենինին՝ Մուստաֆա Քեմալի հետ բանակցությունների վաղ փուլում:

Թուրքիայում վերացնում էին հայկական ունեցվածքի, ազգային ինքնության մնացորդները, ԽՍՀՄում՝ ահաբեկում դրանց տերերին և առնվազն «արգելափակում» նրանց հայրենական հիշողությունների հրապարակային դրսևորումները: 1925 թ.-ին Թուրքիայի վարչապետ (հետագայում՝ նախագահ) Իսմեթ Իստյուն, ով ղեկավարում էր Լոզանի կոնֆերանսի թուրքական պատվիրակությունը և լավ գիտեր փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ իր երկրի պարտավորությունները, հայտարարեց, որ թուրքական իշխանություններն ամեն գնով թրքացնելու են Թուրքիայի ողջ բնակչությանը. «Մենք բացահայտ ազգայնամոլներ ենք: Մենք ցանկացած գնով պետք է թրքացնենք նրանց, ովքեր ապրում են մեր հայրենիքում»²⁰⁹: Թուրքիայում մնացած հայերին սա քիչ էր վերաբերում, նրանց հանդեպ պիտի շարունակվեր արտաքսման կամ ֆիզիկական ոչնչացման ծրագիրը: 1927 թ.ին Թուրքիայում՝ Սերաստիայի բանտում գտնվող Գևորգ Հալաջյանը տեսել է Թուրքիայի կառավարությունից Սերաստիայի կուսակալ Հիւմին ուղղված մի շարք փաստաթղթեր՝ «Անատոլուի մեջ գտնվող փոքրաթիվ հայությունը սահմանեն դուրս վտարելու կամ տեղվույն վրա բնաջնջելու համար», և նմուշի համար արտագրել է 1927 թ. հունվարի 3-ով թվագրվող մի նամակ. «Մակարա, 1927 թ. 3 հունվարի, 1927 թ., թիվ 216: Ձեր գրությունը նկարի է առնված և մատնանշված հարցերի շուրջ անհրաժեշտ կարգադրու-

²⁰⁹ С. Аванесов. Положение национальных меньшинств в Турции, Ереван, Изд. АН АРМ ССР, 1963, էջ 13:

թյուններն արված են 1926 թ. դեկտեմբերի 18-ի 376 համարի տեղեկագրով... կառավարության տեսակետը հայերի մասին պարզ է և որոշակի: Վարվեցեք Ձեզ հարմար գտնված ձևով: Ազատ եք նրանց հանդեպ Ձեր կարգադրություններում առանց մեզ հարցնելու, անշուշտ աղմուկից խուսափելով»²¹⁰:

Թուրքիայում մնացած և հալածանքներից թաքնվող, թշվառ գոյություն պահպանող հայերի մեջ դեռևս հույսեր կային, որ ԽՍՀՄը և Խորհրդային Հայաստանը սպասում է իրենց: Սերաստիայի հայությունը Թուրքիայի բանտում գտնվող Գևորգ Հալաջյանի ջանքերով 1926 թ.-ին Անդրկովկասի առևտրական ներկայացուցիչ Պ. Շահվերդյանի միջոցով համարձակվում է «աղերսագրով» դիմել Խորհրդային Հայաստանի կառավարությանը՝ խնդրելով ընդունել իրենց²¹¹: Այս նամակի պատասխանի մասին Գ. Հալաջյանը գրառում ունի իր բանտային օրագրում սեպտեմբերի 2-ին. «Իբր թե մեր դիմումը նկատի է առնվել Հայաստանի Ներքին գործերի նախարարության կողմից և հրամայված է անմիջապես տեղեկացնել գավառահայության պահանջները: Իբրև թե մեր տեղեկագիրը չի ներկայացնում մեր կացությունը, և իրենք նոր մանրամասների կարիք ունեն... Պահանջվում է գրել՝ ա) որքան հայություն կա Անատոլիայի մեջ, որտեղ են բնակվում; բ) քանի արհեստավոր, պտղաբույծ, անասնապահ, մեղվաբույծ և ծխախտոտի մասնագետներ կան և որ քաղաքներում; գ) առանձին ցուցակներ կազմել և առաջնահերթությունը տալ մասնագետներին և ինքնաբավներին; դ) ինչպիսիք են գավառահայության քաղաքական համոզմունքները, և ինչ կուսակցությունների են պատկանում նրանք: Չորս հարցումներ, և մեկը մյուսից արտառոց. կարծես գավառահայությունը ապրում է խաղաղ ու բնական պայմանների մեջ, որ հնարավոր լինի ճշտել, թե որքան հայ կա Անատոլիայի խորքերը, կամ ինչ դասակարգի են պատկանում ամեն մեկը, որքանը արհեստավորմասնագետ է և ամենաողբերգականը՝ որ կուսակցությանն են նրանք պատկանում»²¹²: Պարզ էր, որ խորհրդահայ իշխանություններն ընտրել էին թե՛ բացահայտ մերժումից, թե՛ հարցի լուծումից խուսափելու տարբերակը:

Խորհրդային Հայաստանում 1926 թ.-ից հարկադրեցին, որ եկեղեցին հրաժարվի Ցեղասպանության զոհերի հիշատակը՝ ապրիլի 24-ը նշելուց²¹³:

²¹⁰ Թափառական (Գևորգ Հալաջյան): Դէպի կախաղան, Երևան, «Վան Արյան», 2014, էջ 103:

²¹¹ Նույն տեղում, էջ 80-81:

²¹² Թափառական (Գևորգ Հալաջյան), Նշված աշխ., էջ 96-97:

²¹³ Հայոց ցեղասպանության զոհերի հանրային հիշատակման նախաձեռնությունը գալիս է 1919 թ.-ից՝ Կ. Ղուլի մի խումբ մտավորականների կողմից: 1921 թ.-ին Գևորգ Ե կաթողիկոսի կարգադրությամբ եկեղեցական օրացույցներում ապրիլի 24-ը ավելանում է հիշատակի օրերի շարքում՝ որպես «Տօն Ազգային-իշատակ բիրտար նահատակաց մերոց յընթացս համաշխարհային պատերազմին»: Հայաստանի խորհրդայնականացումից հետո պետական

1926 թ.-ին Խորհրդային Հայաստանի կառավարությունը որոշեց նաև դադարեցնել թուրքահայերի գանգվածային ներգաղթը՝ որպես պատճառաբանություն օգտագործելով Շիրակում տեղի ունեցած երկրաշարժը և ներգաղթածներին տեղավորելու դժվարությունները: Այդ նույն թվականից ակտիվացան Դաշնակցությանը վերագրվող «հայ ազգայնականության» թեմայի քննարկումները²¹⁴, հետապնդումներն ու խմբային ձերբակալությունները: Ձերբակալությունների մասին Հայաստանյան (և խորհրդային) լրատվամիջոցներն, իհարկե, լուր էին, բայց 1926 թ. ապրիլին Փարիզում հրատարակվող «Դրոշակ»ը «Հայաստանի ձերբակալությունները» վերնագրով հոդվածով տեղեկացնում է հարյուրավոր ձերբակալությունների մասին՝ Շիրակում 43 մարդ, Ալազյազում 12, Էջմիածնում 15, Կոտայքում 5, Դիլիջանում 10, Զանգեզուրում 11, Երևանում՝ 89, Երևանի զինվորական և հրամանատարակ կազմից՝ 40 մարդ ևն²¹⁵:

Քաղաքական բռնաճնշումների քրեականացման օրինականացումը

1926 թ. սեպտեմբերի 8-ին Հայաստանի կենտրոնական գործադիր կոմիտեն որոշում է ընդունում «Բոլոր տեսակի հակահեղափոխության, հրոսակության, մաքսանենգության և պաշտոնի վերաբերյալ հանցագործությունների դեմ հաջող պայքարելու նպատակով արտադատական պատժի իրավունք տալ Հայաստանի Պետական քաղաքական վարչությանը (ՀՊԲՎ, հետևագրյն ԿԳԲն)՝ մինչև պատժի առավելագույն չափը»:

իշխանություններն առհասարակ չէին անդրադառնում Ցեղասպանության թեմային և դրա հիշատակմանը: 1926 թ.-ից ԽՍՀՄ, այդ թվում Հայաստանի տարածքում եկեղեցին այլևս չէր համարձակվում բարձրաձայնել հոգեհանգստի արարողությունները, Էջմիածնի հրատարակած օրացույցերում այն բացակայում էր, նույնիսկ «Էջմիածին» ամսագիրը զգուշանում էր անդրադառնալ այդ օրը սահմանված հոգեհանգստյան արարողության՝ ընդհուպ մինչև 1964 թ.: 1964 թ.-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը հրապարակում է կոնդակ, որով 1965-ը հայտարարում է «ազգային սուգի և արդթքի տարի», և վերահաստատում է ամեն տարի ապրիլ 24-ին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի համար պատարագ մատուցելու և հոգեհանգստյան արարողություն կատարելու Գևորգ Ե կաթողիկոսի հրահանգը:

²¹⁴ А.Каринян. Дашнакцутюн против фактов. Тифлис, 1926; Նույնի՝ Путь армянских националистов. М., 1926; Նույնի՝ Новые позиции националистов. М., 1929; Նույնի՝ Партия Дашнакцутюн и ее соратники. Ереван, 1930.

²¹⁵ Ղզվում է ըստ Գ.Լազեան: Հայաստան եւ հայ դատը, էջ 320:



Լուսանկար 8 Քաղվածք՝ ՀՍԽՀ Կենտրոնի մի 08.09.1926 թ. որոշումից ՀՊԲՎ-ին արտադասական իրավունք պալու մասին²¹⁶

1926 թ.-ին «Արտակարգ հանձնաժողով»-ից ՊԲՎ²¹⁷ վերանվանված կառույցի չեկիսատները լիովին օգտագործեցին իրենց նոր լիազորությունները: Չեկիսատներն իրենք էին որոշում ում համարել հակահեղափոխական, մաքսանենգ, հրոսակ և ինչպես պատժել նրանց: Այդ թվում՝ գնդակահարել:

²¹⁶ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության կայք <<http://www.sns.am/index.php/am/history/museum/77-museum-1921-1988/>> (նշել ամսաթիվը):

²¹⁷ ԽՍՀՄ 1924 թ. Սահմանադրության 9-րդ գլխի 61-րդ հոդվածով քաղաքական և տնտեսական հակահեղափոխության, լրտեսության և բանդիտիզմի դեմ պայքարելու գործում միութենական հանրապետությունների հեղափոխական ջանքերը համախմբելու նպատակով ԽՍՀՄ ժողովուրդի կից ստեղծվել էր Միավորված պետական քաղաքական կառավարման վարչություն (ռուսերեն՝ Объединенное Государственное Политическое Управление, հապավումը՝ ОГПУ), որը մասնաձյուղեր ուներ հանրապետություններում՝ Պետական քաղաքական վարչություն՝ ՊԲՎ <<http://www.hist.msu.ru/ER/Etext/cnst1924.htm#9>> (01.05.2015): Այս մարմինն էր, որ հետագայում հայտնի դարձավ որպես ԿԳԲ:

1926-30 թթ. ընթացքում դաշնակցական ընդհատակյա կազմակերպության անդամակցության մեղադրանքով տեղի ունեցան մի շարք խմբակային ձերբակալություններ և դատավարություններ²¹⁸, ինչպես նաև շրջանառության մեջ դրվեց «Դաշնակցական ժամանակներում ակտիվ հակահեղափոխական գործունեության համար» ձևակերպմամբ մեղադրանքը: 1927 թ.-ին վեց տարվա արքայի է դատապարտվել նաև մեր գրուցակիցներից Հասմիկ Տեր Ավագյանի հայրը՝ Գնդեվազ գյուղի ուսուցիչ Անուշավան Տեր Ավագյանը²¹⁹, 1928 թ.-ին՝ Աշոտ Գրիգորյանի պապը՝ Պատվական Սահակյանը (Տեր Գրիգորյան), նախկինում Նժդեհի հետ Զանգեզուրի ինքնապաշտպանությանը մասնակցած լինելու մեղադրանքով: 15 տարի առաջ Նժդեհի հետ Զանգեզուրի ինքնապաշտպանության մասնակիցները չեկիստների կողմից հետապնդվում էին որպես «հակախորհրդային տարրեր», և այդ մասին ընտանեկան հիշողություններ ունեն Զանգեզուրի մեր գրուցակիցներից շատերը²²⁰: Լիովին մոռացվել էր 1921 թ. ապրիլի 24-ի «համաներում»ը:

Շատ ծանր էր հատկապես Թալինի և Շիրակի թուրքահայերի վիճակը: Մինչև այսօր Թալինի շրջանում պատմում են, որ 1927-28 թթ.-ին թուրքահայ փախստականների բնակավայրերից չեկիստները չէին հեռանում: 2014 թ. ամռանը Սասնաշեն գյուղի մի խումբ մարդկանց հետ երկար գրուցում էինք այս հարցերի շուրջ. «...բոլոր արևմտահայերին, բոլոր տղամարդկանց, ուլքեր կռվել էին թուրքերի դեմ, դաշնակցական էին համարում: Առաջին հերթին՝ ֆիդայիներին: Բոլորդ էլ շատ լավ գիտեք, որ սովետական տարիներին օրինակ արևմտահայերն իրավունք չունեին ասելու՝ որտեղից են էկել, արքորում էին դրա անվան տակ, իբրև իրենք եղել են դաշնակցականներ, և բոլոր դաշնակցականները կոչվեցին կարճ՝ «հակա» (հակասովետական-Հ.Խ.): Սովետական Միությունը դրանց վտանգավոր էր համարում: Մինչև 30-ական թվականներն արևելահայերին էդքան չէին հալածում, հիմնականում՝ մերոնց, արևմտահայերին: Նույնիսկ մեր տներում մեր երգերն էին արգելված, երգել չէր կարելի, որոշ մարդիկ գնում մատնում էին, հետևանքն արքորն էր»²²¹:

Ավելորդ է ասել, որ Հայաստանում «դաշնակցական վտանգ»ը խիստ ուռճացված էր: ԽՍՀՄ չեկիստները դրա մասին բավարար տեղեկություններ

²¹⁸ Ա.Սանուկյան: Զաղաքական բռնածնունդները Հայաստանում, էջ 15, 155ևն:

²¹⁹ Տե-ս Հասմիկ Տեր-Ավագյանի պատմությունը // Armenia Total(itar)is, <<http://armeniatotalitaris.am/?p=1790>> (16.11.2014):

²²⁰ Տե՛ս Կամո Հայրապետյան-Աթաջանյանի, Աշոտ Գրիգորյանի, Նինա Հովսեփյանի, Հրանտ Թանգյանի, Վլոդյա Մարտիրոսյանի պատմությունները Armenia Total(itar)is <<http://armeniatotalitaris.am/?p=2147>> կայքում:

²²¹ Հ.Խառատյանի, Զ.Համբարձումյանի, Գ.Ստեփանյանի գրանցած նյութ, Վերին Սասնաշեն գյուղ, Թալինի շրջան, 2014, օգոստոս:

ունենին: Ինչպես գրում է այդ չեկիստներից մեկը. «Դաշնակների մասին մենք գիտենք պարսկական աշխատանքից: Մենք հետևում ենք Թավրիզում գտնվող դաշնակների ներկայացուցիչ Իշխանյանի փոստին, որով միշտ տեղյակ ենք նրանց գործունեությանը Հայաստանում և Թուրքիայում... հայերի վերաբերյալ մեր մյուս աղբյուրը Կոստանդնուպոլսում է, ով մեզ տրամադրում է այնտեղի հայոց պատրիարք Նարոյանի²²² նամակագրությունը: Վերջապես, Հունաստանում գտնվող հայ եպիսկոպոս Մազլումյանը²²³ մեր առաջադրանքով քայքայիչ աշխատանքներ է տանում դաշնակների միջավայրում և մեզ լուսաբանում է այնտեղի հայերի իրավիճակի և տրամադրությունների մասին... Այդ կուսակցությունը ներքին գծությունների և անբավարար նյութական միջոցների պատճառով որևէ լուրջ վտանգ չի ներկայացնում...»²²⁴: Այս տողերը գրվել են 1930 թ.-ին, երբ Հայաստանում պետական հակադաշնակցական տեռորը երկրորդ թափն էր հավաքում: Միանգամայն պարզ է, որ խնդիրը դաշնակցությունը չէր, խնդիրը գլխավորապես փախստական թուրքահայերի սոսկական գոյությունն էր Խորհրդային Հայաստանում, նրանց և առհասարակ թուրքահայերի ապագայի նկատմամբ Հայաստանը ղեկավարող որոշ կոմունիստ ղեկավարների հայացքները: Մասնավորապես «1928-1936 թ.-ին Խանջյանը խորապես համոզված էր, որ միայն հայության գերակշիռ հատվածի կենտրոնացումը Խորհրդային Հայաստանում կարող է փրկել նրան նոր անդարմանելի կորուստներից»²²⁵: Խնդիրը նաև այն էր, որ Խանջյանի ղեկավարության շրջանում զգալիորեն «ուշադրություն էր դարձվում արևմտահայ մշակույթին, խրախուսում էր մանավանդ Ալազան-Նորենց-Տա-

²²² Նարոյան Մեսրոպ Մշեցիի Կ.Պոլսի հայոց պատրարքության պատրիարք է եղել 1927-44թթ.:

²²³ Մազլումյան Տեր Կարապետ, 1915թ. իր հոտի հետ տարագրվել է Բրուսայի Պանտրմա քաղաքից: Հունաստանի հայոց թեմի առաջնորդ Տեր Կարապետ արքեպիսկոպոս Մազլումյանն է 1943թ. քահանա ձեռնադրել, Տեր Վազգեն անունով կոչել և վարդապետական աստիճան տվել Լևոն Պալջյանին՝ հայոց ապագա կաթողիկոս Վազգեն առաջինին:

²²⁴ Գ.Տ. Ազաբեկով. ГПУ: Записки чекиста. Берлин, Издательство «Стрела», 1930, էջ. 214-215 (տե՛ս նաև Գ. Ազաբեկով. ЧК за работой, М.: Ассоциация «Книга. Просвещение. Милосердие», 1992, Глава XVI. Будничный день чекиста <http://www.lib.ru/MEMUARY/AGABEKOW/ch_zarabotoj.txt> (01.05.2015): Դատելով ԽՍՀՄից առաջին փախստական չեկիստ Գ. Աղաբեկովի 1930 թ. իրատարակած գրքի նյութերով, ԽՍՀՄում, Իրանում և Թուրքիայի տարածքում դեռևս կենդանի մնացած դաշնակցականների մասին ԽՍՀՄ ՆԳՄԿ տեղեկանում էր հատկապես Իրանում և Թուրքիայում գործող ԽՍՀՄ դեսպանատներից և չեկիստներից: Վերջիններս, դարձյալ նույն աղբյուրով դատելով, «արտասահման ընկնելու» հույսով ԽՍՀՄ ՆԳՄԿ հետ համագործակցող պատահական, հիմնականում անբարոյական մարդիկ էին, ովքեր իրենց գործն անում էին առանց որևէ համոզմունքային, գաղափարական, բարոյական կամ ազգային պարտավորության: Նրանց մեջ քիչ չէին էթնիկական հայերը, ովքեր, իրենց ծագումն օգտագործելով, գանձազան ձևերով շահում էին այդ երկրների հայերի փստահությունը, տեղեկություններ քաղում և նրանց իսկ տեղեկություններն օգտագործում հենց նրանց դեմ: ԽՍՀՄ-ը նաև Թուրքիային էր նյութեր մատակարարում Թուրքիայում մնացած հայերի իրական քաղաքական կամ մտացածին գործունեության մասին»: Տե՛ս նույն տեղում, էջ 214-215:

²²⁵ Ռ. Աթայան: Ասպետական հոգիներ, էջ 16:

րոնցու ջանքերը՝ արևմտահայ պոեզիայի հավաքման ու հրատարակման ուղղությամբ»²²⁶: Արևմտյան Հայաստանը ամեն գնով մոռացնելու համար այնքան ջանքեր թափած ԽՍՀՄ քաղաքական ծրագիրը կարող էր ճաքեր տալ:

1927 թ. օգոստոսի 7-ին որպես Դաշնակցություն կուսակցության անդամ ձերբակալվել և 8 տարի ժամկետով Տաշքենդ քաղաքի է դատապարտվել ֆիդայի Չոլուն (Հարություն Աբրահամի Կիրակոսյան)²²⁷: 1934 թ.-ին Չոլուն ազատ է արձակվել քաղաքից ու վերադարձել Թալին, Ոսկեթաս գյուղ: Երկրորդ անգամ Չոլոյին ձերբակալել են 1937 թ. օգոստոսի 8-ին և սեպտեմբերի 17-ին գնդակահարել Հրազդանի կիրճում²²⁸: Չոլոյի ֆիդայական ընկեր Մորուք Կարոյին²²⁹ «ղաչաղ» էին հայտարարել և շուրջ երկու տարի չեկիստներից թաքնվելուց ու սարերում ապրելուց հետո, 1930 թ.-ին սահմանն անցել և Թուրքիայի վրայով փախել է Պարսկաստան: Մորուք Կարոյի օրինակով փախչել էին ծրագրում նաև ծագումով Սշո Փեթարա գյուղից, Թալինի Կաթնաղբյուր գյուղում հաստատված Իսրայել Իսրայելյանը՝ ֆիդայի Փեթարա Իսրուն և Տեր Քաջի Ադամը: Փեթարեցի Իսրայելը բազմաթիվ մարդկանց էր փրկել կոտորածներից և սահմանն անցկացրել ու բերել Արևելյան Հայաստան: Ամիսներով խորջինն ուսին պտտվել էր Սասունի, Բիթլիսի լեռնային գյուղերում՝ «Մեկ հայ, մեկ ոսկի» ծրագրով բառի բուն իմաստով գնել քրդերի գյուղերում պահվող որբացած հայ մանուկներին: Թալինում և Կաթնաղբյուր գյուղում ապրող նրա թոռները՝ Սպարտակ Պետրոսյանը և Մարատ Իսրայելյանը պատմում են. «Սկզբում որպես կուլակ քաղաքացին Աստրախան: Ինքն Աստրախանից փախել, ետ էր եկել այստեղ: [19]29-30 թթ.-ին Իսրոյին, Մորուք Կարոյին ու Տեր Քաջի Ադամին անընդհատ հետապնդում էին որպես ղաչաղ: Բայց սովորական գյուղացի մարդիկ են եղել, որ ուրիշներին չօգնեին՝ վնաս չէին տա, նրանցից ինչ ղաչաղ: Մորուք Կարուն սահ-

²²⁶ Լույն տեղում:

²²⁷ Հարություն Աբրահամի Կիրակոսյան – (1877-1937): Ծնվել է Սասունի Շենիկ գյուղում: Մասնակցել է Արևմտյան, ապա նաև Արևելյան Հայաստանի ինքնապաշտպանական կռիվներին, եղել է Անդրանիկի զինվորներից: 1919 թ.-ին կամ 1920 թ.-ին հաստատվել է Թալինի շրջանի ներկայիս Ոսկեթաս գյուղում: 1921 թ.-ին մասնակցել է Փետրվարյան ապստամբությանը, պարտությունից հետո անցել է Պարսկաստան, ապա՝ Հունաստան: Փետրվարյան ապստամբությանը մասնակցածներին Խորհրդային Հայաստանի իշխանությունների կողմից ներում չնորհվելուց հետո 1924 թ.-ին վերադարձել է Հայաստան: Դատապարտվել և գնդակահարվել է 1937 թ.-ին:

²²⁸ Պ. Գրիգորյան: Անպարտ Սասուն, մարտնչող Շենիկ, Երևան, «Լուսակն», 2012, էջ 254:

²²⁹ Մորուք Կարո – Կարապետ Ավոյան (1875-1949): Ծնվել է Սասունի Գելիեգուզան գյուղում, եղել է Անդրանիկի զինվորներից և մասնակցել է նրա գլխավորած բոլոր կռիվներին: 1921 թ.-ին մասնակցել է Փետրվարյան ապստամբությանը, պարտությունից հետո անցել է Պարսկաստան, ապա՝ Հունաստան: Փետրվարյան ապստամբությանը մասնակցածներին Խորհրդային Հայաստանի իշխանությունների կողմից ներում չնորհվելուց հետո՝ 1924 թ.-ին վերադարձել է Հայաստան և հաստատվել Թալինի Ահազի, ներկայիս Զովասար գյուղում: Հետապնդումները վերակսվելուց հետո փախել է Պարսկաստան:

մանն անցավ գնաց, էն երկուսին սպանեցին ձորում, [19]34 թ.-ին: Բացարձակապես ինքը դաշնակ չի էղել, հետո մեղադրեցին որպես «դաշնակցական»: Թույլ չեն տվել նույնիսկ գյուղի գերեզմանատանը թաղել: Թաղված են հենց սպանված վայրում: Իր երեխաները շատ դժվար ապրեցին, մինչև իրենց մահը վախից ձայն չէին հանում: Հանել են հինգ երեխին տանից գցել են դուրս, առել են աման-չաման, կարպետ ա, ը, պղինձ ա, ամեն ինչ... Պապիս Սարիստ որդին մինչև իր մահը այդ վախը կար իր մեջ, կոլխոզում կարող է աշխատեցնեին, ոչինչ չտային, վախից ձայն չէր հանում: Է, ամբողջ Հայաստանն էր վախենում, այսինքն ամբողջ Սովետն էր վախենում»²³⁰:

Նույն պատմությունն է Դաշտադեմ գյուղում ապրող Տարոն Մուրադյանի պապի²³¹ և Մաստարա գյուղում հաստատված Անդրանիկ ձիապան Արիսա Զորիկի (Զոհրապ Գասպարի Մամիկոնյան) դեպքում, ում Մուշի հայրենական Առատ գյուղը թուրքական իշխանություններն ամբողջովին այրել էին՝ կենդանի այրելով նաև նրա ծնողներին, կնոջն ու հնգամյա որդուն: Դատելով արիսիվային նյութերից՝ նրանց բոլորին գաղտնի հետևում էին առավագն 1924 թ.-ից: Համենայն դեպս Պ-ԲՎի կողմից կազմված գործում նրանցից շատերի նկատմամբ գործակալների տեղեկությունները սկսվում են այդ թվականից: Օրինակ՝ «Ջանֆիդա գյուղում ապրող միջակ գյուղացի, անգրագետ, խմբապետ Բաբե Սարգսյանի» մասին գործակալական տեղեկություններ կան 15.10.1924 թ.-ին, 24.10.1925 թ.-ին, 15.08.1926 թ.-ին, 01.09.1926 թ.-ին, 15.05.1935 թ.-ին 01.10.1935 թ.-ին 15.07.1936 թ.-ին, 23.06.1935 թ.-ին: Դրանք իրականում ոչինչ չասող «տեղեկություններ» են (հանդիպել է անծանոթ մարդու հետ; իրեն կասկածելի է պահում; զրուցել է դաշնակցականների հետ...): 1927 թ.-ին Բաբեին ձերբակալել են որպես «դաշնակցություն կուսակցության անդամ»ի, բայց հինգ ամիս բանտում պահելուց հետո ազատել են: Կրկին ձերբակալել են 1929 թ.-ին նույն մեղադրանքով, արքայովել է, արքայից վերադարձել է 1932 թ.-ին: 1937 թ. հոկտեմբերին Բաբեին ձերբակալել են երրորդ անգամ: Հարցաքննությանը Բաբեի խոստովանական «ցուցմունքներով» նա Անդրանիկի ջոկատում մասնակցել է ինքնապաշտպանական կռիվներին (տեքստում գրված է՝ «մասնակցել եմ թուրքերի դեմ կռվին»): Տեքստը գրված է Բաբեին անհասկանալի ռուսերեն լեզվով, Բաբեի ստորագրությունն առկա է: Նույն նոյեմբերի երեքին կազմվել է մեղադրական եզրակացություն. «Խորհրդային իշխանության կատաղի թշնամի է: Չի խոստովանել: Մերկացվել է ագենտների նյութերով և վկաների ցուցմունքներով»: Երկու օր անց, նոյեմբերի 5-ի Տրոյկայի նիստը որոշել է «Գնդակահարել, անձամբ նրան պատկանող ունեցվածքը առգրա-

²³⁰ Գ. Խառատյանի գրույցը Թալինի Կաթնաղբյուր գյուղում, 2014, 11-ը օգոստոսի:

²³¹ Գրանցել է Լ. Խառատյանը Թալինի Դաշտադեմ գյուղում 2011 թ.-ին:

վել»: Երկու օր անց հինգ երեխաների հորը, գյուղացի, աշխատող մարդուն գնդակահարել են:

Բաբե Տեր-Դանիելյան-Սարգսյանը, սակայն, «հանցանքներ» ուներ, որոնք խորհրդային արդարադատության տեքստերում չպիտի արտացոլվեին, բայց որոնց համար նա իրականում դատապարտվել է գնդակահարության: Դրանք շարունակում են մնալ նրա համագյուղացիների հիշողություններում. 1915 թ.-ին Բաբեն օգնել էր Վանի ապատամբներին, սպանել էր իր եղբայրներին և համագյուղացիներին սպանած քուրդ բեկին, օգնել էր իր համագյուղացիներին Ցեղասպանությունից փախուստի ժամանակ, 1918 թ.-ին Սարդարապատում կռվել էր թուրքական կանոնավոր բանակի դեմ: ԽՍՀՄ-ի համար նա շատ, շատ վտանգավոր անցյալ ուներ: Նրա ընտանիքի անդամները՝ որդին, թոռները, 2015 թ.-ին պատմում էին. «Մեր ծագումը Վանի նահանգի Բերկրիի Քաբաբիկ գյուղից է: Մեր պապը եղել է Անդրանիկի բանակում հեծելազորային գնդի հարյուրապետ: Տատս պատմում էր, որ դեռ Վանի ինքնապաշտպանության ժամանակ Բաբեն միշտ գնում էր Բաքու՝ գեներ բերելու: Մելերով գնում էին Բաքու, աղ էին բերում, բայց աղի տակը գեներ էին դարսում: Տատս պատմում է, որ մի անգամ ինքը Բաքու գնացած է եղել, քուրդ բեկերից մեկը Քաբաբիկ գյուղի երևելի մարդկանց, երիտասարդներին, կռվողներին տարել է՝ իբրև թե պատիվ տալու, հետո հանել է գյուղի վերջում սպանել է²³²: Սպանվողների մեջ եղել են Բաբեի երիտասարդ եղբայրները՝ Կարոն, Հովհաննեսը: Բաբեն վերադառնալուց հետո այդ բեկին սպանել է: Ինքը երեք անգամ բռնվել է թուրքերի կողմից, երեք անգամն էլ փախել է: Շատ քաջ մարդ էր: Երբ որ գաղթը սկսվել է, Քաբաբիկի և շրջակա գյուղերի ժողովրդի մի մասն անցել է Սիրիա, մյուս մասին Բաբեն օգնել է հասնելու Արևելյան Հայաստան: Տատս ասում էր, երբ որ եղսիրը, գաղթականներին տատս եղսիր էր ասում, երբ որ եղսիրը հավաքվում էր, որ պիտի զար Հայաստան, Բաբեն էր բերում անցկացնում Հայաստան: Հենց որ Արաքս գետը անցնում էին, ինքը նորից գնում էր եղսիր փրկելու: Տատիս խոսքերն են: Ինքը մի քանի զինվորներով օգնում էր, հսկում էր, որ քրդերը ճանապարհին չսպանեին, չթալանեին: Բոլորին անվնաս բերում հասցնում էին այս կողմ, իրենք՝ նորից գնում էին մյուսներին բերելու: Տատս ասում էր՝ Բաբեն ուր գնում էր, թուխսի ճուտերի պես ժողովորդը հետևից գնում էր: Եկել են այս գյուղում հիմնվել, որպեսզի պատեն

²³² 1915 թ. ապրիլի 6-ին քրդերը հարձակվել էին Քաբաբիկի վրա և կոտորել գյուղի բնակչությանը, կենդանի մնացածները հասել էին Վան քաղաք, որտեղից մայիսին վերադարձել էին ռուսական զորքերի կողմից վերագրավված իրենց գյուղ: Թուրքերի կողմից Վանը գրավելուց հետո Վանի ընդհանուր բնակչության հետ զաղթել են Արևելյան Հայաստան (Հայոց Ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Հատոր 1, Վանի նահանգ, Երևան, 2012, «Հայաստանի Ազգային արխիվ», էջ 226-227, 455-456):

պահին նորից անցնեն իրենց երկիրը: Սարդարապատի ճակատամարտին ինքը որպես մահապարտ է մասնակցել: Քոչոյի հետ: Հրաչյա Քոչարի հոր հետ: Բաբեն ու Քոչոն շատ մտերիմներ են եղել: Հետո սովետական կարգերը հաստատվեցին, ու Բաբեն եղավ հալածական: Իսկ [19]36 թ.-ին այնպես էին հետապնդում, որ մեր պապը դաչաղ դարձավ, տանը չէր մնում, միայն երբեմն թաքուն տուն էր գալիս: Մինչև ձերբակալվելը ինքը շոր չի հանել, իր տանը չի պառկել քնել: Չգիտեմ՝ որքանով է ճիշտ, տառտա ասում էր հենց Խանջյանին սպանեցին, արդեն Բաբենին էլ սկսեցին հետապնդել: Ձերբակալվելուց հետո Չեկայից ասել էին արքային, և որդին՝ Չորիկը, արքայազնություն անընդհատ փնտրում էր իր հորը: Իսկ տառտա մինչև իր մեռնելու օրը կարծում էր պիտի վերադառնան հայրենիք: 1984 թ.-ին մահացավ, ասում էր «բալա ջան, հենց հիմա որ Արաքսը անցնեմ, ես կգնամ իմ տան վրեն կկանգնեմ»: Ամեն օր, ամեն ինչ առիթ էր, որ պատմեր Էրզրից. խնձոր ուտեիր՝ պատմում էր Էրզրի խնձորի մասին, ջուր խմեր՝ պատմում էր Բերկրիի առատ ու համով ջրերի մասին...»²³³:

Բոլոր «ֆիդայական» անցյալ ունեցողները վտանգի տակ էին, բայց վախենում էին բոլոր թուրքահայերը, քանի որ արքայազն, նույնիսկ գնդակահարելու համար հատկապես հայդուկյան անցյալ ունենալը պարտադիր չէր: 1926 թ.-ից հետո փախստականներին խստիվ արգելված էր խոսել նախ՝ ցեղասպանության, ապա՝ Էրզրի՝ հայրենիքի մասին: Դաշտադեմ գյուղից Ռոբերտ Ավետիսյանը, ում պապերը փրկվել էին Մուշի կոտորածներից, պատմում է. «Մեծ մասը վախենում էր պատմեր: Վախենում էր կարգերից: Էն ժամանակ բռնում, արքայում էին... կեսին դաշնակցական են ասել, կեսը եսիմ ինչի համար են արքայում... վախենում էին պատմել ժողովուրդը գաղթի բանի [ջարդերի] մասին: Էդ թեմայով չէին խոսում, որովհետև մեջները նենց մարդիկ կային, որ գնում ասում [մատնում] էին»²³⁴: Սասունի փախստականներից Թալինի Ահագչի գյուղում ապրողների մասին սասունցի Պողոս Գրիգորյանը գրում է. «...բոլորիկյան բռնապետության դաժան տարիներին, վախի ու սարսափի մեջ լեզուները կապ դրած ապրեցին, քչախոս դարձան, գոմերի մեջ քնեցին, իրենց տառապանքները, հոգսն ու ցավը ավելի շատ անասունների ու ծկան եզների հետ կիսեցին, քան՝ ընտանիքի անդամների ու հարևանների հետ»²³⁵: Իսկական որս էր սկսվել կորցրած «հայրենիքը հիշողների» և հայրենիքը կամ հայրենակիցներին պաշտպանածների դեմ:

Խորհրդային Հայաստանում իրենց կարծիքով ժամանակավորապես հաստատված թուրքահայերի հատկապես գյուղաբնակ հատվածն առհասարակ

²³³ ԶԶ Ջանֆիդա գյուղում գրուցել է Զ.Խառատյանը, 2015, հունիս:

²³⁴ Թալինի Դաշտադեմ գյուղում գրուցել է Լ.Խառատյանը, 2012, 22 ապրիլի:

²³⁵ Պ. Գրիգորյան: Անպարտ Սասուն, մարտնչող Շենիկ, էջ 44:

րակ չէր հասկանում սոցիալիզմի, ունեցվածքի ազգայնացման գաղափարները, բայց, իրականում ունեցվածք չունենալով, նրանք բոլշևիկների դեմ գաղափարական պայքար չունեին: Բայց բոլշևիկներին շատ էր անհանգստացնում հայրենիք վերադառնալու փախստականների ցանկությունը: Բոլորովին այլ նպատակներ ունեցող ստալինյան քաղաքական բռնությունները հարմար առիթ էին, եթե Հայաստանում նպատակ չէին՝ մի կողմից արտորներով, գնդակահարություններով և ազատագրկումներով Հայաստանը թուրքահայերից բեռնաթափելու, մյուս կողմից՝ ահաբեկման միջոցով Թուրքիային թողնված հայրենիքի հիշողությունները եթե ոչ մոռացնելու, ապա՝ լուեցնելու:

1930-ականներին ԽՍՀՄը բռնաճնշումներով երկրում ստեղծում էր դասակարգային միատարրություն: 30.01.1930 թ. Քաղբյուրոն որոշում ընդունեց «կուլակությունը որպես դասակարգ» բռնությամբ վերացնելու մասին²³⁶: 1930 թ. փետրվարի 2-ին Միավորված պետական քաղաքական կառավարման վարչության (ОГПУ) № 44/21 հրամանով «*Կուլակությունը որպես դասակարգ առավել կազմակերպված վերացնելու և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման Խորհրդային իշխանությունների միջոցառումներին կուլակների հակառակվելու բոլոր փորձերը վճռականորեն ճնշելու նպատակով... կուլակներին, հարկապես նրա հարուստ և հակահեղափոխական ակտիվ մասին պետք է կործանիչ հարված հասցվի*»²³⁷: Ըստ այդ հրամանի հատկապես թիրախավորված էին «*ակտիվ սպիտակգլարդիականները, ապարամբները, նախկին բանդիտները, հակահեղափոխական ակտիվություն ցուցաբերողները, եկեղեցական խորհուրդների, կրոնական համայնքների և աղանդավորական խմբերի ակտիվ անդամները, հարուստ կուլակները, վաշխատուները, սպեկուլյանտները, նախկին կալվածատերերը և խոշոր հողատերերը*»²³⁸: Հիշյալ բոլոր մարդիկ ու խմբերը ենթակա էին պատժիչ գործողությունների՝ ձերբակալությունների, արքայների, տեղահանության: Այս որոշումը թափ հավաքող քաղաքական բռնություններին փաստացի և բացահայտ տալիս էր գանգվածային պատժիչ գործողությունների իրավունք:

Չեկիստների համար դժվար չէր Հայաստանում գտնվող թուրքահայերի ակտիվ մասին այս որոշմամբ «կործանիչ հարված հասցնել»՝ վերացնել: Խորհրդային չափանիշներով նրանց մեջ «կուլակներ» չկային, չկային նույ-

²³⁶ Постановление Политбюро ЦК ВКП(б) от 30.01.1930 о мероприятиях по ликвидации кулацких хозяйств в районах сплошной коллективизации (ՀամԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի 30.01.1930 թ. որոշումը «Համատարած կոլեկտիվացման շրջաններում կուլակական տնտեսությունների վերացման միջոցառումների մասին» (<http://russia.bestpravo.ru/ussr/data04/tex16612.htm>) (08.08.2014)

²³⁷ Приказ Об'единенного Государственного Политического Управления № 44/21 2 февраля 1930 г.,—<http://www.memorial.krsk.ru/DOKUMENT/USSR/300202.htm> (08.08.2014)

²³⁸ Նույն տեղում:

նիսկ «միջակներ»։ Կոտորածներից հազիվ փրկված և հայրենիքից փախստական այդ մարդիկ մեծ դժվարությամբ գոյատևման խնդիր էին լուծում։ Նրանց նկատմամբ գլխավորապես կիրառվեցին «ապստամբներ», «նախկին բանդիտներ» («ղաչաղներ») մեղադրանքները, որով նրանք որակվեցին «հակահեղափոխականներ»։ Ինչու՞մ էր նրանց «ղաչաղությունը»։ Ըստ ներկայիս սերնդի հիշողությունների և պատկերացումների՝ «Ղաչաղները ֆիդայիներն են, էրգրում ֆիդայիներ են էղել... Ֆիդային այն մարդիկ էին, ովքեր իրենց ընտանիքները թողել են, ամեն ինչից հրաժարվել են, գնացել են հայրենիքը պաշտպանելու, իրանց անձը, կյանքը նվիրել են հայրենիքին, ժողովրդի պաշտպանությանը։ Այսպեղ, Խորհրդային Միությունում էլ նույն մարդկանց ասում էին ղաչաղ... ցանկացած Կրեմլյան, որ զենքից կրակել էր, ասենք Չուրչի²³⁹ կամ Անդրանիկի զինվոր է էղել, էլ [մարդը] բուլշևիկների թշնամի էր համարվում։ Երբեմնի ֆիդայի՝ էս հողի վրա դարձավ ղաչաղ, այսպեղ գալուց հետո իրենց սկսեցին ղաչաղ ասել... Բայց շարունակում էին գնալ էրգիր, կարծում էին՝ պիտի գնան էրգիր, իրանց Կրեմլ, իրանց հող ու ջրին։ Ովքեր, ասենք, չէին ուզում էսպեղ ասրել, իրենց կոխվր թուրքի հետ չէր վերջացել, ուզում էին գնալ [հայրենիք]։ Կարծում էր, թե դեռ պիտի թուրքի դեմ կռվի, իր հայրենիքը, իր Կրեմլը էր վերցնի։ Սովետական Միությունը դրանց վրանգավոր էր համարում։ Իրենք Սովետական Միության հետ կռիվ չունեին, բայց Սովետական Միությունը իրենց հետ [կռիվ] ուներ։ Դրանց բոլորին դաշնակ էին ասում և հետապնդում էին չեկիսպները։ Եվ որովհետև ֆիդայիներին դաշնակ էին համարում, թշնամի էին համարում, նրանք էլ թաքնվում էին։ [19]20-ական թվականներից որոշ մարդիկ սկսեցին ասրել ասրերում, հենց նրանց էլ սկսեցին ղաչաղ անվանել։ Ղաչաղ սովորաբար ասում են նրանց, ովքեր Կրեմլ չեն ասրում, զենքը վերցրած փախնում են ասրեր, թաքնվում են իշխանությունից։ Նրանց առանձին օջախներում ոչնչացնում էին։ Էդպես դրանց խեղդեցին։ Շարերին սպանեցին, ավելի շարին էլ Կրեմլից հանեցին ու արքայեցին»²⁴⁰։ Մարդիկ մինչև այսօր վստահ են՝ 1930-ականների Խորհրդային Հայաստանի թուրքահայ «ղաչաղները» հայրենիք վերադառնալ երազողներն էին։ ԽՍՀՄի համար նրանք ամենավտանգավոր «ղաչաղներն» էին։ «Ղաչաղներ» էին նաև Հայոց ցեղասպանու-

²³⁹ Գևորգ Չուրչի (1870 - 1907), հայրուկապետ, Արևմտյան Հայաստանում համիդյան ջարդերից սկսած՝ ինքնապաշտպանական կռիվների կազմակերպիչ։ Ծնվել է Արևմտյան Հայաստանում՝ Սասունի Փսանաց գավառի Մկթեք գյուղում, զոհվել է պարսիզանական կռիվներում։ Նրա հարազատներից ոմանք փրկվել են Ցեղասպանությունից և այլ աստուծոցների հետ փախել Արևելյան Հայաստան՝ հաստատվելով Թալիսի Աշնակ գյուղում։ Տես Պողոսյան Ա. Գեվորգ Չուրչի //«Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, թիվ 7 <<http://raber.asj-oa.am/3829/1/1989-7%2824%29.pdf>> (05.27.1014)։

²⁴⁰ Հ.Խառատյանի, Զ.Համբարձումյանի, Գ.Ստեփանյանի գրանցած նյութ, Վերին Սասնաշեն գյուղ, Թալիսի շրջան, ՀՀ, 2014, օգոստոս։

թյան շրջանում ջարդերի ենթարկվող և հայերի հետ միասին Արևելյան Հայաստան փախած եզդիների առաջնորդները, որոնց համար Խորհրդային Հայաստանում արտորավայր էր ընտրված Բայազետը (այժմ՝ Գավառ)։ «*Բայազետը դարձած էր արտորավայր քիչրոք ցեղապետներու համար։ Այստեղ արտորված էին Եռասուֆ Բեկը, Նշանատր ռազմիկ Ջահանգիր աղան եւ ուրիշներ, որոնք մեծ ծառայություններ մատուցած էին հայերուն. Հայրկապէս Մարդարայարի Նշանատր ճակատամարտի ընթացքին*»²⁴¹։

Ուշագրավ է, որ Խորհրդային Հայաստանում կուտակված թուրքահայության դեմ շեշտված ճնշումները զուգահեռվում էին 1925-30 թթ.-ին Թուրքիայի արևելքում՝ Արևմտյան Հայաստանի տարածքում ընթացող քրդական ապստամբությունների ճնշումներին և դրանց հաջորդած քրդերի և այլ «կասկածելի տարրերի» ցրման գործողություններին։ Թուրքիայում դա խիստ հարմար առիթ էր Յեդասպանությունից փրկված հատուկներ հայերի մասնակցությունն այդ ապստամբություններին հայերի «հերթական դավաճանությամբ» բացատրելու և վերջին տարիներին թաքստոցներից դուրս եկող հայերի մնացորդներին վտարելու կամ վերացնելու։ 1929 թ. ամռանը և դրան հաջորդող ամիսներին մոտ 30 հազ. լիովին ունեզուրկ հայեր Հալեպ են արտորվել Խարբեթի, Դիարբեքի և Մարդինի նահանգներից։ Հալեպի հայկական կոմիտեին Բշերիկի հայերի արտրի մասին 1929 թ. հոկտեմբերի 28-ին տեղեկացնում են Գ.Մարգարյանը և Պ.Օհանյանը²⁴²։ Արտորյալների անցագրի վրա նշում էր արվում՝ «Թուրքիա վերադառնալն արգելվում է»։ Հալեպում բրիտանական հյուպատոս Ա.Մոնկ-Մեյսոնի 1929 թ. նոյեմբերի 14-ի հաղորդագրությունը վկայում է, որ այդ արտորն արդեն վեց ամսվա ընթացք ունի։ Հյուպատոսը հայտնում էր, որ Խարբեթի, Դիարբեքի և Մարդինի նահանգներից անընդհատ վտարված հայեր են գալիս Հալեպ, այնպիսի տպավորություն է, որ թուրքերը որոշել են ամեն գնով ազատվել գավառների ողջ քրիստոնյա բնակչությունից։ Հալեպ հասնողները խիստ հյուծված, հիվանդ էին, և պատմում էին, որ երկրում մնացող հայերին հետապնդում են, բանտերն են նետում, արտորվելը հաջողություն է համարվում²⁴³։ 30.000

²⁴¹ *Ս. Պալաթոն*։ Վերջին թոնդրակեցիները։ Ինքնապատում վեպ, «Տպարան Սշակ», Պեյրուֆ, 1977, էջ 125-126։

²⁴² *Զաւէն Սարրիեան*։ Թուրքիոյ ներքին գաւառներու հայոց պարտադիր արտագաղթը (1929-1930), «Քայոց Ցեղասպանութենէն առաջ եւ ետք», հոդվածների ժողովածու, Անթիլիաս, 2011, էջ 174 (տե՛ս նաև ԶԶԶ, Գ. Զատոր, Պեյրուֆ, 1972)։

²⁴³ *Walker Ch. Armenia: The Survival of a Nation*. London, 1980, էջ 348; *Armenians in Turkey today*, Dr. Tessa Hofmann A CRITICAL ASSESSMENT OF THE SITUATION OF THE ARMENIAN MINORITY IN THE TURKISH REPUBLIC (second edition), Uppsala, 2003, էջ 15,– <http://www.armenian.ch/gsa/Docs/faae02.pdf> (07.08.2014)։ Մոնկ Մեյսոնի տեղեկագիրը (Translations of Grown-copyright records in the Public Record Office, London, appears by permission of the Controller of H.M.Stationery Office. F.O. 371/13827) հայերեն հրատարակել է Զաւէն Սարրիեանը

հայ գաղթականների (իրականում՝ արքայալուսների) մասին միջազգային արձագանքի շուրջ անգլիական կառավարության ներկայացուցիչների հետ հայերի բանակցությունները դեմ էին առնում «թուրքական կառավարության համար շատ տհաճ կլինի» բանաձևին, իսկ միջամտությունը «վատ հետևանք կունենա խնդրո առարկա փոքրամասնության համար»²⁴⁴: Աքսորներից, ձերբակալություններից գատ 1929 թ. թուրքական կառավարության հրամանագրով «Հայերը չեն կարող ծախել կամ կտակել իրենց ունեցվածքը, որը նրանց մահից հետո անցնում է պետությանը... Իրենց տները, դաշտերը և հունձքերը անցնում են թուրք գաղթականներին»²⁴⁵: Գավառներում, իհարկե, այլևս հայկական դպրոցներ չկային, իսկ Կոստանդնուպոլսում Լոզանի պայմանագրով մնացած հայկական դպրոցներն իշխանության որոշումով համարվում են ծագումով թուրք ուսուցիչներով, որոնց հայ ուսուցիչներից շատ ավելի բարձր աշխատավարձը պետք է վճարվեր հայերի հավաքած դրամով: Միաժամանակ Կ.Պոլսի թուրք «հասարակական կարծիքին» հղում անելով պահանջվել էր, որ հայկական դպրոցների հայ աշակերտները դասամիջոցներին միայն թուրքերեն խոսեն: Հայկական դպրոցներում հայ երեխաները հայերեն կարող էին խոսել միայն հայերեն լեզվի և կրոնի դասերին՝ դասը պատասխանելիս կամ ուսուցչին հարց տալիս²⁴⁶:

1920-30-ականների քրդական ապստամբությունների ընթացքում հայերի փաստացի, հնարավոր և մտացածին վրիժառության գաղափարը լայնորեն օգտագործվում էր քաղաքական և քուրդ-թուրքական կոնսոլիդացիայի նպատակներով՝ «թշամին արթուն է, մենք պետք է միասնական լինենք»: Սա շատ հարմար բանաձև էր նաև հայկական կոտորածներին ակտիվ մասնակցած և հայկական գույքը թալանած քրդերին ու թուրքերին միավորելու «ընդհանուր թշնամու» դեմ: 1931 թ.-ին քրդերով բնակեցված «*Տիգրանակերտի (Դիարբեքիր – Հ.Խ.) քաղաքային խորհուրդը ընդունել է որոշումներ՝ հայերի հեղբու ստեպուր չանել, հայ գործավորներ բացարձակապես չգործածել, բռնի կերպով հայերից փողեր գանձել, նրանց գույքն առգրավել եւ այլն*»²⁴⁷: Դա լավ առիթ էր նաև ողջ երկրի տարածքում դեռևս թաքնված հայերին փնտրելու, բանտարկելու, գնդակահարելու և/կամ կրկին արքայալուսելու:

Հայերին (հավանաբար նաև քրդերին) ճնշելու գործում ԽՍՀՄ-ն այդ ժամանակ շարունակում էր օգնել Թուրքիայի կառավարությանը: Մասնավորապես Թեհրանում սովետական լիազոր ներկայացուցիչ Յակով Դավթյանը թուրքական և իրանական կառավարություններին փաստաթղթեր

(նշվ.աշխ., էջ 176-179):

²⁴⁴ *Զաւէն Սըրրլեան*, նշվ.աշխ., էջ 182:

²⁴⁵ *Զաւէն Սըրրլեան*, նշվ.աշխ., էջ 178:

²⁴⁶ «Յայրենիք» ամսագիր, 1928, մարտ, էջ 171-173:

²⁴⁷ «Յայրենիք» ամսագիր, 1931, մայիս, էջ 170:

էր հանձնել քուրդ ապստամբների զինմանը և վարժեցմանը հայ դաշնակների մասնակցության մասին, ստույգ մահվան դատապարտելով նրանց և թաքնվող հայերի հետապնդումների նոր դուռ բացելով²⁴⁸: 1928 թ.-ին Մերձավոր Արևելքում ԽՍՀՄ ամենամեծ գործակալական գրասենյակը Թուրքիայում էր՝ Կոստանդնուպոլսում, որն արաբական արևելքում՝ Սիրիայում, Պաղեստինում, Եգիպտոսում աշխատող ԽՍՀՄ չեկիստների հիմնական բազան էր: Ընդ որում «Թուրքիայում բարեկամական հարաբերությունները պայրճառով հրամայված էր թուրքերի դեմ աշխատանքները դադարեցնել, որով թուրքերը նաև մարմների արանքով կնայեն այլ երկրների դեմ մեր աշխատանքներին»²⁴⁹: Թուրքիան, այո, հանդուրժում էր ԽՍՀՄ չեկիստների գոյությունը Թուրքիայում և նաև օգտվում էր նրանց ծառայություններից, առնվազն՝ իր հակահայկական և հակաքրդական ծրագրերում:

1930 թ.-ին, երբ ԽՍՀՄը դասակարգային միատարրության հասնելու նպատակով հրահանգեց զանգվածային տեղորոշ բնակչության մի հատվածի նկատմամբ, Թուրքիայում նույն այդ ժամանակ, նույնպես հրահանգով և զանգվածային տեղորոշով, ջանում էին հասնել ազգային միատարրության: 1930 թ.-ին արդարադատության նախարար Մահմուդ Էսսաթը հայտարարեց. «Մարդիկ, ովքեր ծագումով մաքուր թուրքեր չեն, այս երկրում ունեն միայն ստրուկ, ճորտ լինելու իրավունք»²⁵⁰: Դա քայլ առ քայլ իրականացվող ծրագիր էր, որն իրենց մաշկի վրա զգացել են առնվազն քրդերը, հույները, հրեաները, ալևիները և, իհարկե, հայերի մնացորդները: Ընդ որում ոչ ոք, այդ թվում ինքը՝ Մահմուդ Էսսաթը, չէր կարող որևէ կերպ բացատրել «ծագումով մաքուր թուրքեր»ի առանձնացման չափանիշը: Ինչպես ԽՍՀՄում հայտնի չէր, թե ովքեր էին, ի վերջո, «կուլակները», որոնց «որպես դասակարգ վերացնելու» անվան տակ 1930 թ. փետրվարի 2-ի որոշմամբ պիտի պատժվեին «ակտիվ սպիտակգվարդիականները, սպարավորները, նախկին բանդիտները, հակահեղափոխական ակտիվություն ցուցաբերողները, եկեղեցական խորհուրդների, կրոնական համայնքների և աղանդավորական խմբերի ակտիվ անդամները...»: Սրանք էին կուլակները:

Իրենց առջև դրված ծրագրային խնդիրները հարևան և դաշնակից երկու երկրներն էլ իրականացնում էին բռնությամբ: 1934 թ.-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ընդունած թիվ 2510 «Բնակեցման օրենք»ով Երբքին գործերի մինիստրին իրավունք էր տրվում երկրի՝ թուրքական մշակույթին (խոսքը նախ և առաջ թուրքերեն լեզվի մասին էր, – հոդված 11) բավականա-

²⁴⁸ Գ. Վարդանյան: Արարատյան հանրապետություն և Կարմիր Քրդստան, <http://www.diplomat.am/publ/public/aratyan_hanrapetowt_39_yown_ev_karmir_qrdstan_mas_error/14-1-0-645> (10.06.2015):

²⁴⁹ Բ. Ս. Ագաբեկով. ГПУ. Записки чекиста. Берлин, Изд. «Стрела», 1930, 214-215, 218-219:

²⁵⁰ С. Аванесов. Положение национальных меньшинств в Турции, էջ 14:

չափ չհարմարված տարբեր ժողովուրդների բնակության վայրերի տեղափոխություններ իրականացնել: Նույնիսկ ձևի համար որևէ պայման չստեղծելով այդքան ցանկալի թուրքերենը սովորեցնելու համար (դպրոցներ կային միայն քաղաքներում և վարչական կենտրոններում) ընտրվել էր իշխանության համար առավել ցանկալի հարկադիր տեղափոխության տարբերակը՝ արևելյան մասի բնակչությունը տեղափոխել թրքախոս արևմտյան շրջաններ: Առավել հայտնի են արևելյան՝ քրդաբնակ նահանգներից արևմուտք՝ թրքաբնակ նահանգներ տեղափոխած հազարավոր քրդերի դեպքերը, սակայն տեղափոխությունների էին ենթարկվում նաև Թուրքիայի փոքրաթիվ, ցաքուցրիվ ապրող հայերը: Այդ մասին տեղեկացնում է «Ամերիկայի Միացյալ նահանգների դեսպանություն, Անկարա, մարտի 2, 1934 թ. N 151, մարտի 24, 1934, թեմա՝ հայերի տեղահանությունը: Հուլիսի գաղտնի» փաստաթուղթը, որով ԱՄՆ պետական դեպարտամենտին հայտնվում է Անատոլիայի ներքին շրջաններից Ստամբուլ վեց շաբաթ շարունակվող հայերի տեղահանության մասին՝ որպես «Անատոլիան մաքուր թուրքական տարածք դարձնելու իշխանությունների քաղաքականության մաս»:²⁵¹ Տեղահանվածներն, իհարկե, չգիտեին (և չգիտեն) «Բնակեցման օրենք»ի մասին, բայց մինչև այսօր հիշում են տեղափոխությունների հարկադրանքը:

«Էթնիկական դեպորտացիայի» թուրքական օրինակը վարակիչ էր ԽՍՀՄի համար: 1936 թ. դեկտեմբերի 17-ին ԽՍՀՄ ԺԿԽ (Ժողովրդական կոմիսարների խորհուրդ) №211-420cc որոշմամբ Ադրբեջանական և Հայկական ԽՍՀներից Ղազախական ԽՍՀ են արտոբվում «քրդեր, հայեր և թուրքեր»: Այս մասին տեղեկանում ենք ԽՍՀՄ Ներքին գործերի ժողկոմի տեղակալ Չերնիշևին ԳՈՒԼԱԳի աշխատանքային բնակեցման բաժնի ավագ տեսուչ Կարելինի՝ 1939 թ. ապրիլի 23-ի գեկուցագրից, որում ասվում է. «1936 թ. դեկտեմբերի 17-ի ԽՍՀՄ ԺԿԽ №211-420cc որոշմամբ Ադրբեջանական և Հայկական ԽՍՀներից 1937 թ. վերջին Ղազախական ԽՍՀ տեղափոխված «քրդերը, հայերը և թուրքերը վերաբաշխվել են Արևմ Աթայի և Հարավ Ղազախական մարզերում, քրդերը՝ 553 ընդամենը, 3101 մարդ, հայերը և թուրքերը՝ 568 ընդամենը, 2788 մարդ, ընդամենը 1121 ընդամենը, 5889 մարդ...»:²⁵² Այս գեկուցագրում ուշագրավ մանրամասներ կան «տեղափոխության ենթարկվածների» (իրականում՝ արտոբվածների) մասին: Պարզվում է, որ «թուրքերը» թուրքեր չեն, այլ «թուրքական գնչուներ» (тюркские цыгане(?)): Մեկ այլ փաստաթղթում, որը 17.04.1937 թ.-ին ՆԳԺԿ ժողկոմ Ն. Եծովը ուղարկել է ԽՍՀՄ ԺԿԽի նախագահ Վ. Մոլոտովին, Եծովը խնդրում է

²⁵¹ *Ջալեն Սըրդեան*: 1934թ.ի պարտադիր արտագաղթը, «Հայոց Ցեղասպանությանն առջե եւ ետք», էջ 187 (տե՛ս նաև «Ազգ» օրաթերթ, Երևան, թիվ 72, 2010, 22 ապրիլի):

²⁵² ГАРФ, Ф. Р-9479, Оп.1, Д.55, Л.24-28, բնօրինակ <<http://www.alexanderyakovlev.org/fond/issues-doc/1021134>> (12.08.2014):

1936 թ. դեկտեմբերի 17-ի ԽՍՀՄ ԺԿԽ №211-420cc որոշմամբ Ադրբեջանի սահմանային գոտու 400 տնտեսությունների տեղափոխումը Հարավային Ղազախստան կազմակերպելու համար ՆԳԺԿին գումար հատկացնել²⁵³: Չնայած խոսքը նույն որոշման մասին է, սակայն այս նամակում ո՛չ Հայաստանի մասին խոսք կա, ո՛չ էլ «տեղահանվողների» ազգային կազմի մասին: Եթե Հայաստանից ու Ադրբեջանից տեղափոխությունները կազմակերպվել են առանձին, և Ադրբեջանից ի վերջո պետք է տեղափոխվեր 400 տնտեսություն, ուրեմն Հայաստանից տեղափոխվել է 721 տնտեսություն, պետք է ենթադրել՝ հայեր և քրդեր: Այս հանելուկային արտոքի մասին տեղեկություններն առհասարակ վատ են «փաստաթղթավորված»:

Երկու դաշնակից երկրներում զուգահեռաբար փորձարկվում և դիմադրության չհանդիպելով՝ թափ էին հավաքում իշխանությունների օրինականացված բացահայտ, զանգվածային բռնություններ իրենց երկրների քաղաքացիների նկատմամբ, երկուսում էլ հասունանում էր պետական բարձրագույն տեղորը, որոնք դեռ զուգահեռաբար պիտի իրականացվեին 1937-38 թթ.-ին, ԽՍՀՄում՝ Մեծ տեղորը, Թուրքիայում՝ Դերսիմի ակնի ու հայ բնակչության սպանող և հարակից բռնությունները՝ բնակչության հերթական աքսորներն ու տեղահանությամբ ցրման գործողությունները: Թերևս ավելորդ չի հիշել, որ դա նաև գերմանական ֆաշիզմում հակահրեականության ձևավորման ժամանակն էր: Առեղի թվով մարդկանց կյանքեր խժռած երեք ռեժիմներն էլ մասնավոր վերաբերմունք ունեին որոշակի ազգային կամ խմբային ինքնությունների նկատմամբ, երեքում էլ բացարձակի էր հասցված պետական իշխանության կամքը, երեքն էլ բարձրագույն խնդիր էին սահմանել՝ «նոր մարդու» կամ «նոր ազգի» կերտում:

Դատելով գործողությունների իրականացման հերթականությունից, այս վարքի ներշնչողը պետք է Մուսաֆա Քեմալը լիներ, որին, իր հերթին, հավանաբար ոգևորել էր Հայոց ցեղասպանության դերակատարների անպատժելիությունը: Լոզանի պայմանագիրը և դրան մասնակից երկրների անվերապահ սիրալիրությունը Թուրքիայի հանդեպ վավերացրել էին այդ անպատժալիությունը, իսկ երկրի այլազգիների նկատմամբ Մուստաֆա Քեմալի կառավարության պատժիչ գործողությունները Թուրքիայի դաշնակից երկրների ղեկավարների համար դարձել էին երկրի կառավարման իդեալ: Քեմալական Թուրքիան ոչ միայն և ոչ թե պարզապես ազգայնամուլական երկիր էր կառուցում, այլ առարկայորեն իրականացնում էր նացիստների դեռևս տեսական երազանքը՝ նոր որակի ազգ էր ձևավորում: Մուստաֆա Քեմալը կերտում էր «թուրք ազգին»՝ բռնություններով վերացնելով այդ

²⁵³ ГАРФ, Ф. Р-9479, Оп.1, Д.40, Л. 14, պատճեն, [http://www.alexanderyakovlev.org/fond/issues-doc/1021132\(07.04.2014\)](http://www.alexanderyakovlev.org/fond/issues-doc/1021132(07.04.2014));

ճանապահին առկա և հնարավոր խոչընդոտները: Եվրոպական «ժողովրդավարները» Քեմալի բռնություններին եթե ոչ հավանությամբ, առնվազն բարյացկամ լռությամբ էին վերաբերվում: Լիովին օրինաչափ է, որ, ինչպես հետևողականորեն ցույց է տալիս Շտեֆան Իհրիգը, Մուսաֆա Քեմալի կառավարումը և նրա կերպարը խորապես ազդել էր նացիզմով ոգևորված Հիտլերի վրա²⁵⁴: Դեռևս 1933 թ. հուլիսին թուրքական *Milliyet* օրաթերթին տված հարցազրույցում Հիտլերն ասում է. «Թուրքիայի ստեղծմանն ուղղված այն ազատագրական պայքարը, որ վարում էր Աթաթուրքը, իրեն [Հիտլերին] տվեց վստահություն, որ նացիոնալ-սոցիալիստական շարժումը նույնպես հաջողություն կունենա: Այս տեսանկյունից շարժումը Թուրքիայում իր համար եղել է պայծառ աստղ», իսկ 1938 թ.-ին իր ծննդյան օրվա առթիվ թուրք քաղաքական գործիչների հետ հանդիպմանը խոստովանել է, որ ինքն Աթաթուրքի աշակերտն է: Հավանաբար «թուրքերի հոր»՝ Աթաթուրքի աշակերտ պետք է համարել նաև սոցիալիզմի իշխանության դեկլարար «հայր Ստալինին», առնվազն՝ փաստացի միանձնյա կառավարման բռնատիրական մեթոդներով: Բոլոր երեքն էլ՝ «առաջնորդ» (ֆյուրեր), «մեծ», «հանճարեղ», «փրկիչ», «կերտող», «առաքյալ», «հայր», ում համար հասարակությունը փորձարարական մեծ լաբորատորիա էր...

ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ ԵՎ «ՆԱՑԻՈՆԱԼԻՍՏՆԵՐԻ» ՀԵՏԱՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

«Հեղք էրք թողեցին որ...»

1927-30 թթ. ձերբակալվածներն ու Ռուսաստան կամ Միջին Ասիա արտրվածների զգալի մասը 30-ականների սկզբներին վերադարձել էին և 1937 թ.-ին նրանք «նացիոնալիստ» պիտակավորվողներից առաջիններից էին: «Նացիոնալիստների» պակաս չկար ամբողջ Հայաստանում: «Թուրքահայերը», հատկապես Շիրակի և Թալինի՝ ներկայիս Թուրքիայի հետ սահմանային գոտում ապրող, Չանգեզուրի նախկին ինքնապաշտպանները, Սարդարապատի ճակատամարտի մասնակիցները, նախկին սպաներից կենդանի մնացածները, մտավորականները, հատկապես մինչև հեղափոխություն արտասահմանյան որևէ երկրում կրթություն ստացածները...

²⁵⁴ Stefan Ihrig. Atatürk in the Nazi Imagination. The Belknap Press of Harvard University Press. Cambridge, Massachusetts / London, England, 2014, 311 p. (տես նաև Դ.Մարությանի գրախոսականը Շտեֆան Իհրիգի գրքի վերաբերյալ՝ Դ.Մարության: Նոր աշխատություն Աթաթուրքի դերի մասին. «Բանբեր հայագիտության, Երևան», 2015, թիվ 2, էջ 241-251):

Այս բոլոր մարդիկ կամ կորցրած հայրենիքի, կամ հայրենիք վերադառնալու հույսերի, կամ «թուրքական վտանգի» հիշողության/գիտակցության կրողներ էին, ուրեմն՝ «նացիոնալիստներ»։ Բոլշևիկյան ընկալմամբ հայկական նացիոնալիզմը կարելի է ձևակերպել նաև որպես «թուրքական վտանգի գիտակցություն»։ Նացիոնալիզմի այս ընկալումը զգալիորեն հեշտացնում էր կոնկրետ «մեղավորի» թիրախավորումը։ Նույնիսկ կիսագրագետ քննիչները կարող էին «նացիոնալիստներին» առանց դժվարության որոշել. մասնակցել է թուրքերի դեմ ինքնապաշտպանությանը, սիրում է իր Արևմտյան Հայաստանը, ուզում է վերադառնալ։ Տիպական մեկ օրինակ, որ գրառել է Արտավազդ Մաթևոսյանը Գ-դիչի մասին²⁵⁵. «Ես հիշում եմ Գ-դիչի դատավարությունը, որ տեղի էր ունենում Մարկոսենց Սամսոնի տան կտորին։ Չոր պաթոնակների վրա նստած էին հայ դատավորները։ Գ-դիչն առանց դատապաշտպանի էր։ Ասենք դատապաշտպանն ի՞նչ կարող էր անել։ Դատավորը ջանում էր ապացուցել Գ-դիչի մեղքը, որ նա թուրք է սպանել։ Իսկ Գ-դիչն իր հերթին չէր ժխտում փաստը՝ ասելով, որ թուրքերը մեր գյուղացիներին էին սպանում, և թվարկում էր սպանվածների անունները։ «Ես դա արել եմ ինքնապաշտպանության նպատակով։ Նրանք հասել էին մեր գյուղերը», - արդարանում էր Գ-դիչը։ «Ո՛չ, իրավունք չունեիր։ Քո մտածածն ու արածը նացիոնալիստական ու շովինիստական հայացքներ են», - գոռում էր դատավորը»²⁵⁶։ Գ-դիչին առաջադրված մեղադրանքներն էին. Դաշնակցության անդամ է, նացիոնալիստ, թուրքերի է սպանել, դեմ է կոլեկտիվացմանը, վնասարար է, խուճապ է առաջացրել բնակչության շրջանում՝ հայտարարելով, թե 1931 թ. ապրիլի 27-ից հետո նոր, ավերիչ երկրաշարժ է լինելու²⁵⁷։

Հատկանշական է, որ Գ-դիչին դատող դատավորը չի առարկում թուրքերի գրոհի փաստի դեմ, նա առարկում է ինքնապաշտպանության իրավունքի դեմ («քո մտածածն ու արածը նացիոնալիստական ու շովինիստական հայացքներ են»)։ Իսկ ահա Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բանվոր Ն. Գրիգորյանին 1938 թ.-ին 10 տարվա ազատազրկման են դատապարտել «1905 թ. մասնակցել է աղբբեջանական գյուղերի ջախջախմանը» մեղադրանքով²⁵⁸։ Ցարիզմի կողմից 1905-06 թթ.-ին հրահրված հայ-թուրքական ջարդերի՝ ժամանակի մասնույում լավ լուսաբանված շրջանը, որի վերա-

²⁵⁵ Գրիչը «...ծնվել է 1875 թ., Առաջին համաշխարհային պատերազմում ռուսական բանակի զինվոր էր, մասնակցել է Վան քաղաքի պաշարմանը։ 1918-20 թթ.ին մասնակցել է Ջանգեզուրի ինքնապաշտպանությանը, որի ընթացքում սպանել է նաև հայերի դեմ քարոզչության գաղափարախոս մի մոլլայի։ Գնդակահարվել է տրոյկայի 1937 թ. հոկտեմբերի 20-ի որոշումով»։ Տե՛ս Գ. Սմբատյան։ Երկաթե վարագույրից այս կողմ, էջ 189։

²⁵⁶ Գ. Սմբատյան։ Երկաթե վարագույրից այս կողմ, էջ 188։

²⁵⁷ Նույն տեղում, էջ 190-191։

²⁵⁸ Ա. Աննուկյան։ Քաղաքական բռնությունները Հայաստանում, էջ 138։

բերյալ հրատարակված արժեքավոր վերլուծություն-գրականություն կար դեռ մինչև խորհրդայնացումը²⁵⁹, և որը ժամանակին, չնայած համառ պահանջներին, որևէ իրավական քննության չէր ենթարկվել, 22 տարի հետո կոմունիստների կողմից օգտագործվում է որպես «հայկական ազգայնամոլությունը» փողհարելու միջոց: 1936 թ.-ին ձերբակալվեց Գյուտևույն գյուղից Սարգիս Աթաջանյանը: Առաջին անգամ նրան ձերբակալել էին 1930 թ.-ին «կուլակ լինելու, կոլխոզի դեմ գործելու և նացիոնալիզմի համար», որպես «ազգամիջյան կոիվներ հրահրող» արտրվել է երեք տարով: Սարգիս Աթաջանյանի հորը ջրաղացում միայնակ աշխատելիս քառատելով սպանել էին հարևան Ղազանչի գյուղից թուրքերի մի խումբ: Սպանված ջրաղացպանի որդի Սարգիսը երիտասարդ տարիքում միացել էր թուրքերի դեմ կռվող Նժդեհի ջոկատներից մեկի՝ Գերասիմ Աթաջանյանի ջոկատին²⁶⁰: «Նացիոնալիստ», «ազգամիջյան կոիվները հրահրող» մեղադրանքների համար դրանք բավարար ապացույցներ էին: Նրա որդին՝ Կամո Հայրապետյանը (ազգանունը փոխել է մայրը՝ «ժողովրդի թշնամի» Աթաջանյան ազգանունից կապը խզելու նպատակով) 2012 թ.-ին Կապանում իր հոր նախ՝ արքայի, ապա գնդակահարության պատմությունը պատմելիս հուզվում և փորձում էր արցունքները զսպել այնպես, կարծես այն երեկ էր կատարվել: Նրա հորը արքայել էին 1928 թ.-ին, չնայած «ինքը քաղաքականությանը չի խառնվել, միայն թուրքերի դեմ է կռվել»: Առաջին արքայից վերադառնալուց հետո, 1937 թ.-ին կրկին ձերբակալվել է: Որդին պատմում է. «*Հեյոտ շար րարբեր լուրեր էինք լսում... Մի անգամ էլ խոսք եղավ, որ հայրս Արխանգելսկում է, մի թուրք էր տեղեկություն բերել: Տարբեր տեղեկություններ, րարբեր խոսակցություններ: Հեյրազայում ես, որ շար դիմեցի, իրենք մեզ պարապանում էին, որ ձեր հայրը մահացել է 1942 թվականին, բայց հեյրազայում արդարացման համար վկայականը որ տվել են, էն ժամանակ ասել են, որ իրոք ձեր հայրը [19]37 թվի նոյեմբերի 14-ին գնդակահարվել է: Երկրորդ անգամ րարել են և գնդակահարել են: Երևանում»²⁶¹: Չանգեզուրի ինքնապաշտպանությանը մասնակցության պատճառով 1937 թ.-ին գնդակահարության դատապարտված կապանցիների մասին ուշագրավ մանրամասներ կան Գ. Սմբատյանի գրքի «Գոյամարտի զինվորները վտարանդիության մեջ և նահատակներ»*

²⁵⁹ A. B. Амфитеатров. Армянский вопрос. СПб., 1906; И. Алибегов. Елисаветпольские кровавые дни пред судом общества. Тифлис, 1906, <<http://www.genocide.ru/lib/alibegov/elizavetpole.html>> (17.05.2014); Г. Е. Старцев. Кровавые дни на Кавказе. СПб., 1907; Ա-ԴՈ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, Երևան, 1907; М. С. Ордубади. Кровавые годы, 1911<<http://www.karabakh-doc.azerall.info/ru/azerpeople/ap061-1.php>> (16.07.2014) ևն:

²⁶⁰ Գ. Սմբատյան: Երկաթե վարագույրից այս կողմ, էջ 148:

²⁶¹ Կամո Հայրապետյան-Աթաջանյանի պատմությունը // Armenia Total(itar)is <<http://armeniatotalitaris.am/?p=2147>> (նշել ամսաթիվը):

գլխում²⁶²: ԽՍՀՄ քաղաքական բռնությունների շրջանում հիշյալ բոլոր մարդիկ «նացիոնալիստ», «հակախորհրդային» մեղադրանքով դատապարտվել են մեկ հիմնական «հանցանքի» համար՝ ինքնապաշտպանությանը մասնակցած լինելու պատճառով: Մակայն Հայաստանին բոլշևիկյան իմաստով «նացիոնալիստ չլինել», այսինքն՝ թուրքերի հարձակման դեպքում չդիմադրել և ըմբռնումով մոտենալ «թուրքական նացիոնալիզմին» Սկաչկոյի հոդվածով հանձնարարված էր 1921 թ.-ին, Մոսկվայի պայմագիրն ստորագրելուց առաջ, իսկ 30-ականներին մարդկանց դատապարտում էին մինչև 1921 թ. թուրքերին դիմադրելու «նացիոնալիզմի» համար:

Ըստ էության ՆԳԺԿի գործը թե՛ հեշտ էր, թե՛ դժվար: Հեշտ էր, քանի որ Հայաստանում «թուրքական վտանգի հիշողություն» չունեցող քիչ մարդ կար, ուստի բռնությունների թիրախ մարդկային ռեսուրսը բավարարում էր: Դժվարն այն էր, որ «թուրքական վտանգի հիշողությունը» դրանից չէր նվազում: Հո չէին կարող երկրի ողջ բնակչության «բանավոր հիշողությունը» ոչնչացնել, մաքրել: Փոխարենը, սակայն, կարող էին այդ հիշողությունը հնազանդեցնել և լռեցնել²⁶³:

Բոլշևիկյան ընկալման «նացիոնալիստներ»ը Հայաստանում շատ էին, բայց առաջին հերթին դրանք ցեղասպանությունը վերապրած թուրքահայերն էին: Նրանց «նացիոնալիզմը» կրկնակի էր, նախ՝ ինքնապաշտպանությունը, երկրորդ՝ հայրենիքը կարոտելը, երրորդ և ամենասարսափելին՝ հայրենիք վերադառնալու ցանկությունը: Սա ուղղակի «դիմադրություն էր» Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի և Լոզանի կոնֆերանսի համաձայնություններին: Շիրակի Հայկավան գյուղից Սուքիաս Զաքարյանը պատմում է. «...մեր գյուղը լրիվ փաճկահայեր են... ամենաքիչը քսան քսանհինգ տուն արքորեցին: Հեյրո փողոցներով արքորեցին, ամբողջ ընտանիքով, հեյրո էլ առանձին-առանձին մարդկանց բռնեցին... Ուրեմն ինչ էին արել, կոմունիզմի քարտուղարը մայրություն էր արել կոլխոզի նախագահի վրա, իբրև թե այդ մարդը կազմակերպել է, որ Տաճկաստանի ժողովուրդն անցնի սահմանից այն կողմ: Չէ որ սահմանն արդեն փակել էին, արդեն հեղափոխությունը եղել էր... Սուր մայրություն էր արել, որպեսզի ինքը դառնա նախագահ... Մեկին ձևակերպեցին, իբր վստահ է խոսացել կոլխոզի նկարմամբ: Սուր էր: Քսան-քսանհինգ տուն բռնեցին: Բրդոյենց թախումը (տոհմը – Հ.Խ.) լրիվ բռնեցին, Կորոյին բռնեցին, Սուրադին բռնեցին, Համբոյին բռնեցին, Խևոյի

²⁶² Գ. Սմբաթյան: Երկաթե վարագույրից այս կողմ, էջ 136-197:

²⁶³ ԽՍՀՄ քաղաքական բռնություններում տարբեր մակարդակների և բովանդակության հիշողության թիրախավորման մասին տես Светлана Быкова. «Наказанная память»: свидетельства о прошлом в следственных материалах НКВД, «Неприкосновенный запас», 2009, No2(64) (<http://magazines.russ.ru/nz/2009/2/by4.html>)

Թուրքիին, Կոլիկի ախպորը՝ Հասրաթին: Գասպարին: Բուռնաշենց թախտումին, Գյունաշյան Գարեգինին, Պավլիկին բռնեցին... Քսան-քսաննինգ րնից ավել կլինեն, բռնեցին Կարան: Վայ-վայ-վայ, նոր, որ կխոսենք, արդեն կհիշես... Հայ ես, հայ մարդ ես, մի բան խոսեցիր՝ ռուսները եկան բռնեցին Կարան: Ոչ մեկը չիտեր՝ էր մարդը ինչ էր երել... Բնչ է երել, Էսպետից [Արևմտյան Հայաստանից] էկել է սրեղ, փախեախախին էկել է, էկան բռնեցին Կարան: Հարեղ ինչ էր երել էր մարդը, սովեպին ինչ էր երել, սովեպ էլ չէր րեսել հլե կարգին, նոր էր էղել սովեպը...»²⁶⁴:

Շիրակի մարզի Երազգավորս գյուղի բնակիչները ցեղասպանությունից փրկված թուրքահայեր են: Երազգավորսը Թուրքիայի սահմանին կայած գյուղ է. «Մեր գյուղից էր Կարիներին մուրավորապես վաթսուն ընտանիք րուծել են ... երեք հորեղբայրներին՝ Արամին, Գարեգինին ու Ալեքսանին ձերբակալել են 1937 թ.-ին: ... քանի հոգու մեր գյուղից Կարել ու վերջացրել են: Ուղղակի սպանել են, դիակները բարձել են բեռնապար մեքենան, Կարել են լցրել սահմանի վրա գրնվող փոսը: [Թաղած տեղը] սահմանն է, փակ է, հնար չկար րեսնելու: Հեղո բերոնով փոսը լցրել էին, հարթեցրին, կորցրին գնաց: Հեղք երբ թողեցին որ...»²⁶⁵:

Թալինի շրջանի Աշնակ գյուղում հաստատվել էին Սասունից փախստականները: Սանասար Արոյանը պատմում է, որ «վերններից» գյուղերի դեկավարներին հարկադրում էին «ժողովրդի թշնամիների» մասին տեղեկություններ տալ. «Մարտիրոսյան Զաքարը կոլխոզի նախագահն էր, ինքը ասել է՝ «մեր մոր դավաճաններ չկան»: Իրեն Կարել են Թալին, նեղել են, թե՛ «դու չես ասում, ժողովրդի թշնամիին թաքցնող ես»: «Այ մարդ, ինչ թշնամություն, մարդ չկա, ես ինչ թշնամի գրնեմ դրանց մեջ: Իրանք ինչ են արել, թուրք են սպանել: Մեր պարիսլը բռնաբարողին ինչ սպանող, դրանք ինչ թշնամի են»: Թունապան Աշոփին ու իր ընկեր Մանուկին բռնեցին Կարան հարցաքննության, ասում են՝ «ովքեր են ձեր գյուղում ժողովրդի թշնամիները»: Ասում է՝ «ինչքան ասեմ»: «Ինչքան շար՝ էքքան լավ»: Ասում է՝ «ով Արիսայը՝ Արաքսը անցել է այս կողմ, բողբոլ ժողովրդի թշնամի են, բռնեք ու արտերեք»: Վերցնում այդ մարդուն Երևան, ուղղիչ րուն են րանում: ... հա, ես ընդհանուր թշնամու դեմ զենք եմ վերցրել, կովել եմ, թուրքը մեզ կոտորել է, ես էլ զենք եմ վերցրել ինքնապաշտպանության, ես նախահարձակ չեմ եղել, ինչու՞ են դրա համար ինձ արտրում, մեղադրում, ես իմ ընտանիքն եմ պահել, իմ պարիսլը, իմ էրեխայի կյանքն եմ փրկել, ինչու՞ են դրա համար ժողովրդի թշնամի արքել...»²⁶⁶:

²⁶⁴ Ս. Զաքարյանի պատմությունը Զայկավան գյուղում գրանցել է Գ. Շագոյանը 2012 թ.:

²⁶⁵ Ս. Մխիթարյանի պատմությունը Երազգավորս գյուղում գրանցել է Գ. Շագոյանը 2012 թ., համառոտագրությունը տես, — <http://armeniatotalitaris.am/?p=1705> (16.09.2014):

²⁶⁶ Գ. Կնյազյանի գրանցած պատմություն, Աշնակ գյուղ, 2013:

Պատմում է Հենրիկ Մարտիրոսյանը, Աշնակ գյուղից (1936 թ. ծնված)։ «Էս մարդը Սասունից փախել, եկել է, հանցագործ չի, իհարկե երազում էր, որ պիտի գնար Էրզիր, նա ինչ որ թշնամանք չի ունեցել կառավարության հանդեպ, չի եղել [այդպես քան]։ Հիսի մարդիկ կային, որոնք, հորս ասածն է, նրանց հանել են որպես ժողովրդի թշնամի։ Ընդհակառակը, նրանք ժողովրդի համար էին [ժողովրդի նվիրյալ]։ Հայրս ասում էր, որ մեկին բռնել էին, որ իբր իր մրաժուժումով նա պիտի գնա Սասուն։ Ասում էր էդ մարդը հանցագործ չէր, իրա հոգին էր դա, որ պիտի գնա Սասուն նորից, նա հանցագործ չէր։ [Մերոնց] ամբողջ մրաժմունքը, ամբողջ գիտակցությունը եղել է, որ ճանապարհները պիտի բացվի, գնանք Էրզիր, մեր Սասուն, թե կոխվ կըլնի ընտրել թուրքերի հետ, թե ինչ... Այսինքն՝ մեր ժողովրդի մեջ կային շար-շար մարդիկ, հենց մեր հայերի մեջ, որոնք թշնամաբար էին մտրենում [հայրենիքի մասին երազողներին]...»²⁶⁷։

«Հայկական նացիոնալիզմը» բռնաճնշումների թիրախ ընտրելու նպատակն ակնհայտ է՝ հանրային գիտակցության տեռորի միջոցով անհուսալի դարձնել սահմանների վերանայման հնարավորության խնդիրը, նվազագույնի հասցնել ԽՍՀՄ-ում ապրող հայերի կողմից Ցեղասպանության հիշողությունը, նվազագույնի հասցնել կամ վերացնել Արևմտյան Հայաստանի մասին հիշատակությունը, ընդհուպ՝ հիշողությունից դուրս մղելու աստիճան։ Դրա փոխարեն ներդնել այլ գաղափար, այն է ա) հայ-թուրքական անցյալի վատ հարաբերությունները բացառապես դասակարգային էին, որն է այլ կարծիք ռասիզմ է; բ) Արևմտյան Հայաստանի մասին հիշողությունները նացիոնալիզմ են և դաշնակցականություն, հետևաբար՝ հակասովետականություն։

Երևույթների ընթացքի այս տրամաբանությունը հասկանալի է դարձնում, թե ինչու Ա. Իսանջյանի «նացիոնալիզմը» բացահայտելու համար Լ. Բերիան ընտրել էր նրա կապը ռուսամետ և խորհրդամետ Ա. Չոպանյանի հետ։ Ա. Չոպանյանը բացարձակապես անընդունելի էր Թուրքիայի համար, քանի որ նա խորապես համոզված էր, որ հայերի ֆիզիկական ոչնչացումը Օսմանյան Թուրքիայի կառավարողների անշեղ ծրագիրն է, որի գործադրությունը պարզապես կախված է ժամանակից, տարածաշրջանային և միջազգային նպաստավոր պայմաններից։ Թուրքական իշխանությունների հակահայկական ծրագրային ռասիզմի մասին Ա. Չոպանյանի այս համոզումն ամբողջովին հակասում էր հայ-թուրքական անցյալի դասակարգային հակասությունների տեսության վրա հիմնված Քեմալ-Լենին դաշինքի խորհրդային քարոզչական հռետորաբանությանը և լայն ասպարեզ բացում հայկական նացիոնալիզմի բոլշևիկյան մեկնաբանությունների համար։

²⁶⁷ Գ. Կնյազյանի գրանցած պատմություն, Աշնակ գյուղ, 2013։

Վերադառնալով ԽՍՀՄ-Թուրքիա դաշնակից բռնապետությունների՝ բռնությունների զուգահեռականության հետազոտման արժանի խնդրին, համառոտ ակնարկով անդրադառնանք միայն 1937-38 թթ. ԽՍՀՄ Մեծ տեռորին զուգահեռ Թուրքիայի լոկալ տարածքում՝ Դերսիմում, իրականացված փաստացի ցեղասպանական գործողություններին, առավել ևս, որ այս վերլուծությունը ԽՍՀՄ քաղաքական բռնությունների մասնավոր՝ հայկական հատվածի մասին է, իսկ Դերսիմի ցեղասպանական գործողություններն ունեին նաև «հայկական մաս»։ Երկուսի արմատներն էլ գալիս են Հայոց ցեղասպանությունից։

Դերսիմցիների նկատմամբ ցեղասպանական գործողություններն իրականում նախապատրաստվում էին դեռևս Հայոց ցեղասպանությանը զուգահեռ²⁶⁸ և մինչև 1937-38 թթ. իրականացումն այդ սպառնալիքը երբեք չի նվազել։ Մնացած ամեն ինչից զատ երիտթուրքերից ծնված քեմալական թուրքական իշխանություններին խորապես անհանգստացնում էին Դերսիմի ալևի բնակչության իրավահավասարության և աշխարհիկության ձգտումները, ինքնության պահպանանության ջանքերը և ցեղասպանվող հայերին օգնած լինելու փաստը։ Այս հանգամանքը շաղկապվում էր Դերսիմի ալևի բնակչության հայկական ծագման տեղեկություններին²⁶⁹։ 1935 թ.-ին Թուրքիայի Մեծ ժողովին ներկայացված «Թունջելիի մասին» օրենքով Դերսիմ անունը փոխարինվեց Թունջելիով և հայտարարվեց, որ դրա բնակչությունը նախապես պատկանում էր «թուրքական ռասային»²⁷⁰։ Նույն օրենքով Թունջելին դրվեց զինվորական վերահսկողության տակ, իսկ ռազմական գավառապետին արտակարգ լիազորություններ տրվեցին մարդկանց և ընտանիքների ձերբակալությունների ու տեղահանությունների նկատմամբ՝ այս լիազորությունները բացատրելով գավառի հետամնացությամբ և ցեղե-

²⁶⁸ Hans-Lukas Kieser. Basel, Switzerland, Some Remarks on Alevi Responses to the Missionaries in Eastern Anatolia (19th-20th cc.), [https://www.cc.columbia.edu/sec/dlc/ciao/conf/mei01/kih01.html\(02.11.2013\)](https://www.cc.columbia.edu/sec/dlc/ciao/conf/mei01/kih01.html(02.11.2013));

²⁶⁹ *Հ.Խառատան*։ Հայ-ալեվիական սոցիալ-կրոնական սինթեզը Դերսիմի ալեվիների ավանդազրոյցներում, Հանդես Ամսօրեայ, Վիեննա-Երեան, «Մխիթարեան հրատարակչատուն», 2014, էջ 135-233; *Հ.Խառատայան*։ Դերսիմի ալևիների ինքնության ճգնաժամը և ալևիացած հայերի ինքնության ներկայիս փնտրտույթը Դերսիմում, «Հայ ժողովրդական մշակույթ-16», Երևան, 2014, էջ 161-173; *Hranuş Kharatyan, 'Dersim Kültür Havzası'nın Ermeni Nüfusu, Alevleşmiş Ermenileri ve Alevilerin Kimlik, Arayışında Ermenilik Faktörü, «Müslümanlaş(tırıl) mis Ermeniler»* (Konferans Tebliğleri Kasım 2013), İstanbul, 2015, էջ 350-366:

²⁷⁰ *Martin van Bruinessen. Genocide in Kurdistan? The Suppression of the Dersim Rebellion in Turkey (1937-38) and the Chemical War Against the Iraqi Kurds (1988)*, in George J. Andreopoulos (ed.), Conceptual and historical dimensions of genocide, «University of Pennsylvania Press», 1994, էջ 9 (http://www.hum.uu.nl/medewerkers/m.vanbruinessen/publications/Bruinessen_Genocide_in_Kurdistan.pdf):

րի սանձարձակությամբ²⁷¹: Ջարդերը նախապատրաստող թուրքական պետության քարոզչությունը 1937 թ. առաջին կեսին հանգստացնում էր «օրենքով թրքացված» բնակչությանը՝ խոստանալով լեռնային, անտառապատ ու ջրառատ Դերսիմը դարձնել «թուրքական Շվեյցարիա»²⁷²: Սա զուգահեռվում էր 1922 թ. հունիսի 12-ին Թուրքիա-Սիրիա սահմանագծին ստեղծված «Ալավիների պետության» լուծարման և Սիրիային միացման՝ ֆրանսիական իշխանությունների 1936 թ. դեկտեմբերի 5-ի գործողություններին: 1937 թ. ամռանը թուրքական իշխանությունները զորք մտցրին Դերսիմ ու միանգամից սկսեցին կոտորածները՝ ընտրելով հայերի խնդրի լուծման հաջողված փորձի կրկնությունը՝ պարզապես ոչնչացնել բնակչությանը²⁷³: Ջարդերն ավարտելուց հետո Թուրքիայի ներքին գործերի նախարար Շյուքրու Կայը Թուրքական Մեծ ժողովին Դերսիմում կոտորվածներին ներկայացրեց որպես պատժված թուրքերի՝ փաստորեն ամրագրելով «Թուրքերի մասին» օրենքով Դերսիմի բնակչության «թրքացումը» և ջարդերի վրայից հանելով «ցեղասպանական» տեքստը²⁷⁴:

Կոտորածներից հետո Դերսիմում կենդանի մնացած բնակչության մի մասին տասը տարով արքայազնի Թուրքիայի թրքալեզուներով բնակեցված արևմտյան խորքերը: «Էթնիկական դեպորտացիաներով» ԽՍՀՄի հետ քչերը կարող են մրցակցել, բայց Թուրքիան հազիվ թե զիջում է նրան:

1937-38 թթ. դերսիմյան ջարդերը նույնպես Թուրքիային հաջողվեց տևական ժամանակ լուծության քողի տակ պահել: Բավական էր, որ Մ.Քեմալը վերացրել էր սուլթանությունն ու խալիֆայթը, ընդունել էր սահմանադրություն ու կրոնը պաշտոնապես անջատել էր պետությունից, արաբական այբուբենն ու իսլամական օրացույցը փոխարինել էր լատինական այբուբենով ու գրիգորյան օրացույցով, կանանց գլխից ջանում էր հանել գլխաշորերը և նրանց տվել էր ընտրական իրավունք: Թուրքիան «դարձել էր Եվրոպա», և Լոզանի պայմանագրով բավարարված Եվրոպան շարունակում էր սիրալիր մնալ «մոդեռնացող Թուրքիա»յի նկատմամբ: Հայոց ցեղասպանության հիշողությունները միջազգային հանրության հիշողությունից տեղափոխվել էին «մոռացվող պատմություն» պարագրաֆ, իսկ հարևան ու դաշնակից Ռուսաստան/ԽՍՀՄը ամեն ինչ անում էր՝ ցեղասպանված հայերի մնացորդների գլխացավանքից Թուրքիային ազատելու համար: Դերսիմի կոտորածների մասին թուրքերենով գրված առաջին գիրքը հրատարակվել է Հայկաում

²⁷¹ Նույն տեղում, էջ 12-13:

²⁷² Hans-Lukas Kieser. **Some Remarks on Alevi Responses to the Missionaries in Eastern Anatolia (19th-20th cc.):**

²⁷³ Martin van Bruinessen. Genocide in Kurdistan? էջ 6-7:

²⁷⁴ Նույն տեղում, էջ 8-9:

1952 թ.-ին ²⁷⁵, երբ Թուրքիան պատրաստվում էր ՆԱՏՕ-ին անդամակցությանը, և մեծ հաշվով մնացել է աննկատ: Հեղինակի՝ Նուրի Դերսիմիի դուստրը և շատ հարազատներ զոհ էին գնացել ջարդերին, իսկ ինքը փախել էր կոտորածներից անմիջապես առաջ: Շատ հեշտ էր ապստամբ Նուրի Դերսիմին ներկայացնել որպես Թուրքիայի լավագույն առաքինությունները սնացնող մեկին: Դերսիմում, սակայն, յուրաքանչյուրը մինչև այսօր պատմում է այն, ինչ Նուրի Դերսիմիին վերագրվում է իբրև Թուրքիայի դեմ աչառու հորինվածք: Նույնիսկ 1990 թ.-ին, երբ թուրքերենով լույս տեսավ Դերսիմի ջարդերի մասին Իսմաիլ Բեշիկչիի գիրքը²⁷⁶, հեղինակն անմիջապես տասը տարով հայտնվեց բանտերում: Թուրքիայում իշխանությունների հանցագործություններին անդրադարձը դավադրություն էր համարվում պետության դեմ: Ինչպես ԽՍՀՄում: Արդյունքում Դերսիմի ջարդերի մասին իմացությունը, ուրեմն նաև հիշողությունը ընդհուպ մինչև վերջերս առհասարակ մնացել էին միայն դերսիմցիների գիտելիքի և հիշողության մեջ: Դերսիմում հիշողություններ փնտրելու կարիք չկա, այն ամենուր է, կենդանի մնացած յուրաքանչյուր դերսիմցի ունի ջարդերի հետ կապված իր ընտանեկան պատմությունը, և այն աստիճանաբար դառնում է նոր քննարկումների թեմա: Ինչպես Հայոց ցեղասպանությունը, իսկ ԽՍՀՄում՝ գումարած ստալինիզմի քաղաքական բռնությունների հիշողությունները:

«Արդարացվել է կուսակցական կարգով»

Հայաստանում նացիոնալիզմի դեմ պայքարն այս շարադրանքում սկսվեց Թբիլիսիում՝ Լ. Բերիայի առանձնասենյակում, ՀՀ ԿԿ առաջին քարտուղար Ա. Իսանջյանի սպանության փաստի արձանագրմամբ: 1932 թ.-ից մինչև 1936 թ. դեկտեմբերի 5-ը Լ. Բերիան Անդրֆեդերացիայի ԿԿ առաջին քարտուղարն էր (1936 թ. դեկտեմբերի 5-ին Անդրֆեդերացիան լուծարվեց), և երեք հանրապետությունների կարևոր պաշտոններում նշանակել էր իր դրածոներին²⁷⁷: Անդրկովկասում փաստացի Լ. Բերիան էր ղեկավարում նաև քաղաքական բռնաճնշումների ընթացքը: Հնարավոր է, որ «հայկական քաղաքական նացիոնալիզմը» 1936-38 թթ. քաղաքական բռնաճնշումների թիրախ դարձնելու գաղափարի հեղինակը Լ. Բերիան էր, հատկապես եթե

²⁷⁵ Nuri Dersimi M. Kürdistan tarihinde Dersim [Դերսիմը Քրդստանի պատմության մեջ], Aleppo, 1952:

²⁷⁶ Ismail Beşikçi. Tunceli Kanunu (1935) ve Dersim Jenosidi [Թունջելիի մասին 1935 թ. օրենքը և Դերսիմի Ցեղասպանությունը], Istanbul: Belge yayinlari, 1990:

²⁷⁷ Политбюро и дело Берия, էջ 697-695 <<http://istmat.info/node/22319>> (նշել ամսաթիվը):

հավատանք նրա նախնիկն մուսավաթական անցյալի և կապերի մասին տեղեկություններին ու վերլուծություններին: Հնարավոր է նաև, որ նա պարզապես «մոսկովյան պատվերի» կատարողն էր: Ի վերջո Լենին-Քեմալ որոշումների հայազգի սպասավորների պակաս, սկսած 1919 թ.-ից՝ Ա. Միկոյանից, նույնպես չի զգացվել: Բռնաճնշումներում «հայկական նացիոնալիզմի» թիրախավորման կոնկրետ առիթը թերևս կարելի է համարել 1930 թ. հոկտեմբերին Համահայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ ընտրված Գ. Գյուլբենկյանի կողմից ցեղասպանությունից փրկված և Հունաստանում կուտակված հայ փախստականների համար Սիրիայում բնակության տարածքներ կառուցելու նախաձեռնությունը: Խոսքն այն նույն փախստականների մասին է, որոնց Լոզանի կոնֆերանսի օրերին Ռուսաստանում և Ուկրաինայում վերաբնակեցնելու խոստում էր տվել Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Չիչերինը և, իհարկե, նրանց թողել էին ճակատագրի քմահաճույքին: Համահայկական Բարեգործական Ընդհանուր միությունը որոշում է Հունաստանում կուտակված և թշվառ գոյավիճակում գտնվող հայ փախստականների համար Սիրիայում Մոսուլ-Բաղդադից մինչև Տրիպոլի-Իսլաֆա երկաթգծի ուղղությամբ փոքր բնակավայրերի շարք կառուցել՝ նկատի ունենալով նաև աշխատանքի հնարավորության հեռանկարը: Թուրքիան անմիջապես ըմբոստանում է՝ Գյուլբենկյանին մեղադրելով Թուրքիայի դեմ «վրեժխնդրության հայկական օջախներ» ստեղծելու մտադրության մեջ: ԽՍՀՄը «ըմբռնումով» է մոտենում իր դաշնակցի ըմբոստությանը և 1931 թ. հոկտեմբերի 14-ին Խանջյանը ելույթով Թուրքիայի սահմանի մոտ ստեղծվելիք «հայկական օջախները» գնահատում է որպես ԽՍՀՄի բարեկամ Թուրքիայի դեմ իմպերիալիստական ինտերվենցիայի գոտի: Իր ելույթում Ա. Խանջյանն ասել էր. «...Սիրիայում ազգային օջախ ստեղծելու համար դաշնակների արած գործնական քայլերը, որոնք, ի դեպ, արվում են անգլո-ֆրանսիական ինպերիալիստական խմբակներին մոտ կանգնած Կյուլբենկյանների անմիջական հովանավորությամբ և հակադրվում են արտասահմանի գաղթական աշխատավորության՝ Խ. Հայաստան ներգաղթելու մեր ծրագրին, նպատակ ունեն հավարարիմ ուժ տրամադրել ֆրանսիական ինպերիալիզմին Սիրիայի գաղութային շահագործման և ազգային-ազատագրական շարժումները ճնշելու, ինչպես նաև Կյուլբենկյանների նախահանքերին կամ նախաձեռնողին էժան բանվորական ուժ մատակարարելու համար...»²⁷⁸: Վիրավորված Գ. Գյուլբենկյանը հրաժարվեց ՀԲԸ նախագահի պաշտոնից²⁷⁹: Ավելի ուշ՝ արդեն ԽՍՀՄ փլուզումից հետո, Կ. Դավալքյանը պիտի գրի. «Վարսահ

²⁷⁸ «Խորհրդային Հայաստան», 1931, 15 օգոստոսի:

²⁷⁹ *Էդ. Մելքոնյան*: Գ. Գյուլբենկյան-Խորհրդային միություն, չկայացած գործընկերություն, «Լրագրեր հասարակական գիտությունների», 1998, թիվ 3, էջ 93, [http://raber.asj-oa.am/2196/1/1998-3\(91\).pdf](http://raber.asj-oa.am/2196/1/1998-3(91).pdf) (08.08.2014):

եմ, որ Գ. Կոլլպենկյանն ինքը մինչև վերջ էլ չգիրակցեց, թե ինչ հայապրաց ծրագիր է հսկադրվել իր գործունեությանը առարկայականորեն, այլապես այդքան դյուրավ չէր զիջի իր դիրքերը, ընկրկելով անարդար վիրավորանքի առջև... Գ. Կոլլպենկյանի հրաժարականը համեմատաբար աննշան, միանգամայն անապասելի և պարասիական արդյունքն էր մի մեծ ու լայնածավալ քաղաքականության, որի մշակմանը ձեռնարկել էր Թուրքիան այդ ժամանակաշրջանում, որի կերտ նպատակին էր՝ հայությունը հեռու վանել իր սահմաններից, և որի էությունը այդպես էլ հասու չեղավ Հայաստանի ղեկավարությունը...»²⁸⁰: Չի բացառվում, որ Մոսկվայից, Թիֆլիսից և Բաքվից ուղարկված երիտասարդ հայ բոլշևիկների մեջ 1931 թ.-ին իսկապես դեռևս «բոլշևիկյան ռոմանտիզմով» խանդավառներ կային: Այդպիսին էր, անկասկած, Ն.Ստեփանյանը՝ սոցիալիզմի գաղափարների իրական կրողը, ով երբեք չսովորեց իշխանության՝ առհասարակ, բոլշևիկյան իշխանության՝ մասնավորապես, խոսքի ու գործի տարբերությունները, և նույնիսկ ՆԳԺԿին ցուցմունքներ տալիս փորձում էր համոզել քննիչներին, որ Ստալինն ու Բերիան շեղվել են իրական կուսակցական ուղուց: Նա դրանք ընկալում էր գլխավորապես որպես մարդկային գործոն՝ «սխալ» կամ «վատ մարդու» արարք, երբեք չկասկածելով ԽՍՀՄը ղեկավարող կոմունիստական կուսակցության արդարությանը: Ա.Իսանջյանը, սակայն, «բոլշևիկյան ռոմանտիզմ» չունեք: 1926-29 թթ. ընթացքում Հայաստանում թուրքահայերի նկատմամբ իրականացված բացահայտ տեռորի մասին Իսանջյանը ոչ միայն տեղյակ էր, այլ գուցե նաև՝ մասնակից: Այդ հալածանքների մասին սկսված խոսակցություններին վերջ տալու համար է, հավանաբար, կազմակերպվել 1929 թ. ապրիլի 7-ին, Հայաստանի խորհուրդների 6-րդ համագումարին «սասունցի բախտավոր գյուղացու»՝ խորհրդային երկրից շտրհակալ ելույթը, և Ա.Իսանջյանի գնահատականն այդ ելույթին: Իսանջյանն ասում է, որ սասունցի այս գյուղացու ելույթն ամենամեծ ժխտումն է Հայաստանում սասունցիների հալածանքների մասին. «Խորհրդային Հայաստանում սասունցիների նկատմամբ չկա և չի կարող լինել որևէ ուրիշ քաղաքականություն, քան մեր ընդհանուր քաղաքականությունը գյուղացիության նկատմամբ... արտասահմանում դաշնակցականները ստեր են տարածում սասունցիների հալածանքների մասին՝ նպատակ ունենալով «արտասահմանի հայ աշխատավորների անգիտակից մասն օգտագործել ի շահ միջազգային իմպերիալիզմի»²⁸¹: Իսանջյանն, անկասկած, հիանալի իրազեկ էր անմեղ մարդկանց հետապնդումներին և նրա ելույթը լիովին համահունչ էր «կուլակաթափությունից բարգավաճող աշխատավորության» մասին այդ ժամանակվա ԽՍՀՄ այլ բարձրաստիճան կոմունիստ-

²⁸⁰ Նույն տեղում, էջ 93:

²⁸¹ «Խորհրդային Հայաստան», 1929, 10 ապրիլի:

ների քաղաքական ելույթներին: Նա, իհարկե, չէր կարող ազդել թափ առնող բռնությունների ինտեգրիային, և եթե շարունակելու էր պաշտոնավարել՝ պիտի իրեն պատվիրված երգը երգեր: Եվ, իհարկե, «երգում էր»: Իսանջյանն էր Հայաստանում ղեկավարում կուլակաթափության և կոլեկտիվացման անհաջող քաղաքական ծրագիրը և «Կենտկոմի քարտուղարի հրահանգով պետքավարչության գյուղ թափված ջոկատների կողմից շատ անմեղ գյուղացիներ սպանվեցին կամ աքսորվեցին»: Հայաստանում խորհրդային չափանիշներով կուլակ չկար, բայց կուլակաթափության պլանը կատարելու համար «կուլակաթափում» էին ջրավորությունից մի փոքր տարբերվող գյուղացիները: Մինչև Ստալինի «Հաջողություններից գլխապտույտ» հոդվածը «Պապեն առավել պապական էր Աղասի Խանջեանը՝ համատարած կոլեկտիվացման օրերուն», - գրում է Ալեքսանդրապոլի որբանոցում մեծացած և Հայաստանում սկսված հալածանքերից 1931 թ.-ին փախած Ցեղասպանության որբերից մեկը²⁸²: Պարսկաստանի հետ սահման հանդիսացող Արաքս գետով շատերն էին լողալով փախչում՝ ենթարկվելով խեղդվելու կամ խորհրդային սահմանապահների կրակահերթերից սպանվելու վտանգին²⁸³:

Եթե նույնիսկ կարելի է կասկածել, որ 1931 թ.-ին «Հայաստանի ղեկավարությունը» դեռևս հասու չէր հայերին իր սահմաններից հեռու վանելու Թուրքիայի քաղաքականությանը, ապա 1931 թ.-ից հետո Խանջյանը պետք է այնքան հասունանար, որ հասկանար Թուրքիայի այդ քաղաքականությանը ԽՍՀՄի օժանդակությունը: Առնվազն 1934 թ.-ից, երբ Բերիայի կողմից Խորհրդային Հայաստանի ՆԳԺԿ-ի պետ նշանակվեց Խ.Մուղդուսին, ՆԳԺԿ-ն բացարձակ դուրս եկավ հայկական իշխանությունների վերահսկողությունից, և Հայաստանում փաստացի գլխավորում էր քաղաքական բռնաճնշումների «հականացիոնալիստական» ալիքը: Խանջյանը չէր կարողանալու և չկարողացավ մրցակցել Անդրերկրկոմի ղեկավարությունը փաստացի իրականացնող Բերիա-Բաղիրով զույգի հետ: Վերջիններս մուսաֆաթական Ադրբեջանից սկսած հեղափոխական ինտրիգների փայլուն դպրոց էին անցել, սովոր էին իրենց ճանապարհից մշտապես վերացնել անցանկալի մարդկանց, տասնամյակից ավել աշխատել և փաստացի ձևավորել էին Անդրկովկասի խորհրդային չեկիստական խոհանոցը: Նրանք կուսակցությունն ու վարչական ապարատը ծառայեցնում էին իրենց ծրագրերի և իրենց երկրների կարիքների համար, իսկ Խանջյանը ծառայում էր կուսակցությանը: Այդ դպրոցին և խոհանոցին անտեղյակ Խանջյանն, իհարկե, նրանց մրցակիցը չէր: Նրանց մրցակիցը կարող էր լինել Խորհրդային Հա-

²⁸² Ա.Պալաթոն: Վերջին թոնդրակեցիներ: Ինքնապատում վեպ: Պէյրուֆ, «Տպարան Մշակ», 1977, էջ 121-122:

²⁸³ Նույն տեղում, էջ 154:

յաստանի ժողկոմխորհի նախագահ, նույն դպրոցը Բաքվում և Մոսկվայում անցած Սահակ Տեր-Գաբրիելյանը, ուստի շրջահայաց Բերիայի ջանքերով 1935 թ.-ին կուսակցության որոշումով նա աշխատանքից ազատվել և տեղափոխել էր Մոսկվա, իսկ Հայաստանի ժողկոմխորհի նախագահ էր նշանակվել Բերիայի դրածո Աբրահամ Գուլոյանը: 1935 թ.-ին որպես Հայաստանի երկրորդ քարտուղար և Խանջյանի տեղակալ Թիֆլիսից ուղարկվել էր Ամատունին: Խանջյանը թակարդում էր և օղակը սեղմվում էր: Նա հասկանում էր, որ «Հայաստանի իշխանություններ» կոչվածին մնացել է մեկ գործառույթ՝ կատարել Բերիայի թելադրանքները: Իսկ դրանք գնալով ավելի ու ավելի կոշտ էին դառնում: Իրեն հավատարիմ մնացած պաշտոնյաներին Խանջյանը հորդորում էր չհակաճառել Անդրերկրկումի, որ նույնն է՝ Բերիայի որոշումներին: Խորհրդային Հայաստանի լուսժողկոմ Ն.Ստեփանյանին պաշտոնից հեռացնելու հիմքում ընկած էր Բերիայի ցանկությանը հակաճառելու Ն.Ստեփանյանի փորձը: Խանջյանին թողնվել էր Հայաստանում դաշնակցականների ուրվականների դեմ պայքարելու առաքելությունը: 1935 թ.-ին, 1920 թ. մայիսյան բոլշևիկյան ապստամբության 15ամյակի հոբելյանին, Խանջյանի ծավալուն և թունավոր ելույթը համարյա բացառապես ուղղված էր «դաշնակցական Հայաստանի սև անցյալին», սակայն այն բնութագրում էր Խորհրդային Հայաստանի և հենց իր՝ Ա.Խանջյանի իրական վիճակը ԽՍՀՄում. ««Անկախ» և «ազատ» Հայաստան... որպիսի լկտի ծաղր էին պարունակում այս բառերն իրենց մեջ... «Անկախ» և «ազատ» դաշնակցական պետությունն ստիպված էր ծռմովելու իմպերիալիստական ամեն մի գնդապետի առաջ...», - ասում էր Խանջյանը 1935 թ. իր ելույթում²⁸⁴, երբ հենց ինքը ստիպված էր ծռմովել երկու տիրոջ՝ ԽՍՀՄ ԿԿն զավթած Ստալինի և Անդրերկրկումի տիրակալ Բերիայի առաջ: «Իմպերիալիզմի ձեռնածու դաշնակցական Հայաստանին» փոխարինած Խորհրդային Հայաստանը դարձել էր ԽՍՀՄ Կոմկուսի, իսկ Խանջյանը՝ Բերիայի և Խորհրդային Հայաստանում նրա նշանակած ղեկավար կադրերի անպարարությունների ձեռնածուն: Խանջյանն, այո, շարունակում էր «երգել իր պաշտոնին վերապահված երգը», բայց անկասկած տանջվում էր և արդեն հասունացել էր եթե ոչ ըմբոստանալու, ապա առնվազն որոշ հարցերում չենթարկվելու համար: Երկու տարի նա դիմադրում էր Ն.Ստեփանյանին ձեռքակալելու Բերիայի հրահանգին: Չնայած Խանջյանն ի վերջո ստորագրեց այդ ձեռքակալության հրամանը, բայց նրա դիմադրությունը Բերիայի համար վատ նախադեպ էր և, իհարկե, Խանջյանի հնազանդությանը սովոր Բերիային գրգռում էր: Բայց կար ավելի կարևորը՝ 1936-38 թթ. լայնածավալ բռնություններ

²⁸⁴ «Մայիսյան ապստամբությունից դեպի նոյեմբերյան հաղթանակը»: Կուսակցական հրատարակչություն, Երևան, 1935: Տես «Ա.Խանջյան: Հողվածներ և ձառեր», էջ 423:

րի շարքը, որին հասունացած Խանջյանը կարող էր հրաժարվել մասնակցել: Արդեն 1936 թ. դեկտեմբերի 17-ի ԽՍՀՄ ԺԿԿ ԾԿԿ №211-420cc հրամանով կատարվելու էր Հայաստանից հայերի առաջին դեպորտացիան: Կենդանի մնալու դեպքում կուսակցությանը ծառայող Խանջյանը կարող էր կուսակցության ծրագրերի մասին անցանկալի հարցեր տալ: Դա կարող է բացատրել Խաջյանին սպանելու որոշումը՝ չբարձրաձայնելու համար այն լայնածավալ գործողությունները, որոնցով ԽՍՀՄը պիտի փորձեր վերջնականապես լուծել Հայաստանի՝ Թուրքիային սահմանակից տարածքներում գտնվող թուրքահայության գոյության և ահաբեկման՝ իր դաշնակցին մշտապես մտահոգող խնդիրը²⁸⁵: Այլապես, մնացած ամեն ինչից զատ, ԽՍՀՄի դեմ կարող էր կենդանանալ Թուրքիայի կողմից միշտ պատրաստ պահված ադրբեջանական անջատողականության ուրվականը:

«Դաշնակցական հակահեղափոխական կազմակերպությանն» անդամակցության մեղադրանքով գործեր հայերի դեմ, իհարկե, հարուցվում էին նաև հայերի զգալի քանակություն ունեցող Ռուսաստանում, Ադրբեջանում և Վրաստանում²⁸⁶: Այդ նյութերը, սակայն, դեռևս հետազոտված չեն: Ադրբեջանցի հետազոտող Էլդար Իսմաիլովի 2015 թ.-ին հրատարակված գրքում տեղեկություն կա, որ 1936 թ. միջակայքից մինչև 1938 թ. միջակայք Ադրբեջանում ձերբակալվել են 13.356 ադրբեջանցիներ, 16.988 հայեր,

²⁸⁵ Արևմտյան Հայաստանի սահմանամերձ տարածքներում հայրենիք վերադառնալու ցանկություն ունեցող թուրքահայերի գոյությունը նույնիսկ Հայոց ցեղասպանությունից հարյուր տարի անց շարունակում է մնալ Թուրքիայի իշխանությունների սևեռուն մտահոգություններից մեկը: Ներկայիս սիրիական կոնֆլիկտում, օրինակ, սիրիահայերը լիովին վստահ են, որ սիրիական ընդդիմության հետ Թուրքիայի իշխանությունների հարաբերություններն օգտագործվում են նաև հայերին Սիրիայից դուրս մղելու ծրագրերն իրականացնելու համար (A. Санджян. Армянские общины в условиях гражданской войны (сравнение Ливана и Сирии), журнал «Диаспоры», No. 1-2, М., 1915, էջ 78): Սիրիայի՝ Թուրքիային սահմանակից Քեսապ հայկական քաղաքի շուրջ սիրիական ընդդիմության ուժերի կուտակումներին զուգահեռ թուրքական հեռուստատեսությունն ակտիվացրել էր Քեսապում իբրև թե հավաքված հայ վրիժառուների, ԱՍԱԼԱյի առկայության բացահայտ սուտ թեման (Հ. Չոլաքեան: Քեսապի երեք օրերը (21-23, 2014), Երևան, «Էդիթ պրինտ», 2014, էջ 35): Քեսապի և շրջակայքի Ղենմիտ, Եաղուպիտ, Գնիտ գյուղերի հայերին 2014 թ.-ին ի վերջո իրենց բնակավայրից դուրս մղեցին Թուրքիայից ներթափանցած ռազմական կազմավորումները: Սա վերջին արարն էր «Մեքե դեմ ենք, որ Սիրիայում մեր սահմանների մոտ հայեր բնակվեն» 1920-30ականների Թուրքիայի՝ Ֆրանսիային ներկայացվող շարունակական բողոքների: Ֆրանսիան Ալեքսանդրեթի սանջակը՝ Հաթայը Թուրքիային վերադարձնելիս 1939 թ.-ին այն կրիկահայության մնացորդներից դատարկել էր, իսկ հայերին տեղավորել էր իբրևանյան Անձարում: Թուրքական Հաթայն ազատավել էր հայերից, իսկ 2014 թ.-ին «Սուրիոյ հիլիսային տարածքի տեղաբնիկ հայերու վերջին պատառիկները մաքրեցին» (Հ. Չոլաքեան: Քեսապի երեք օրերը, էջ 117):

²⁸⁶ Записка Р.А. Руденко и И.А. Серова в ЦК КПСС с приложением проекта обвинительного заключения по делу Н.М.Рухадзе, 16 апреля 1954 г., РГАСПИ. Ф. 17. Оп. 171. Д. 474. Л. 107–139 (հրատարակված է «Дело Берия: Приговор обжалованию не подлежит», էջ 453-454):

16.488 վրացիներ, 15.000 «իրանցիներ»²⁸⁷, իսկ «Ստալինյան ցուցակներով» Ադրբեջանում պատժվել է 870 մարդ, որից 340ը՝ ադրբեջանցիներ²⁸⁸: Թվում է՝ պետք է ենթադրել, որ «13.356 ադրբեջանցիները» Ադրբեջանի խորհրդային հանրապետության թրքալեզուներն էին: Սակայն դրանք այն տարիներն էին, երբ դեռևս հասկանալի չէր «ադրբեջանցի» բառի էթնիկական տարողությունը: 1937 թ.-ին Բաղիբովն արդեն հրահանգել էր «թաթերեն, քրդերեն, թալիշերեն լեզուներից անցնել ադրբեջաներենին», իսկ 1939 թ.-ին, հեղինակի հավաստմամբ, Ադրբեջանի «բազմաթիվ էթնիկական փոքրամասնությունները սկսեցին հաճույքով գրվել ադրբեջանցի»²⁸⁹: Կարելի է վստահ լինել, որ «13.356 ադրբեջանցիները» բաղկացած էին թրքալեզուներից, կովկասալեզու ավարներից, լեզգիներից, ուդիներից, ռուտուլներից, իրանալեզու թաթերից, թալիշներից, քրդերից և այլն: Բոլոր դեպքերում Բաղիբովը Մեծ տեռորի «հնարավորություններն» օգտագործում էր Ադրբեջանի ազգային խնդիրը լուծելու:

Ներկա պահին մենք քանակական և որակական տվյալներ չունենք ԽՍՀՄ այլ հանրապետություններում բռնադատված հայերի թվերի և նրանց առաջադրված կոնկրետ մեղադրանքների մասին: Այս կամ այն չափով տեղեկություն կա միայն ԳՈՒԼԱԳ²⁹⁰ում գտնված հայերի թվաքանակի մասին: Ըստ Ն. Ջեմսկովի հետազոտությունների՝ 1939 թ.-ին ԽՍՀՄ ԳՈՒԼԱԳ-ում կային 11.064 հայեր (1940 թ.-ին այդ թիվը նվազել է 209 մարդով՝ դառնալով 10.755 մարդ, իսկ 1941-ին ավելացել 547-ով՝ կազմելով 11.302 մարդ)²⁹¹: Նույն տարիներին Հայաստանի հարևան երկու երկրների, 1922-1936 թթ. ընթացքում Հայաստանի հետ միասին Անդրֆեդերացիայի մաս կազմող Վրաստանի և Ադրբեջանի ազգային հանրապետությունների երկու հիմնական ժողովուրդների՝ վրացիների և ադրբեջանցիների՝ ԳՈՒԼԱԳ-ում գտնվողների թվերի դինամիկան սկզբունքորեն համամասնելի են հայերի թվին: ԳՈՒԼԱԳ-ում 1939 թ.-ին գտնվում էին 11.723 վրացի (համապատասխանաբար 1940 թ.-ին՝ 12.099, 1941 թ.-ին՝ 11.109 մարդ): ԳՈՒԼԱԳ-ում 1939 թ.-ին

²⁸⁷ Э.Исмаилов. История «большого террора» в Азербайджане, Москва, «РОССЛЕН», 2015, с.170.

²⁸⁸ Նույն տեղում, էջ 171:

²⁸⁹ Նույն տեղում, էջ 156:

²⁹⁰ ԳՈՒԼԱԳ – Ազատագրվածների բանտերի և ճամբարների գլխավոր վարչություն (ռուսերեն՝ – Главное управление лагерей и мест заключения առաջին երեք բառերից կազմված հապավում՝ ГУЛАГ), ԽՍՀՄ ԼԳԺԿ, ԼԳԼ, Արդարադատության նախարարության ստորաբաժանում, որը 1930-1956 թթ.-ին ղեկավարում էր զանգվածային ազատագրվածների կեցության և վերահսկողության գործը: ԳՈՒԼԱԳ բառն ավելի հաճախ, այս տեսքում նույնպես, օգտագործվում է ազատագրվածների վայրերի իմաստով:

²⁹¹ Национальный состав лагерных заключенных ГУЛАГа в 1939-1941 гг. (по состоянию на 1 января каждого года), В.Земсков, ГУЛАГ (историко-социологический аспект), «Социологические исследования» 1991 г., № 6. Աղյուսակ 5 (http://scepssis.net/library/id_937.html):

գտնվող աղբրեջանցիների մասին տեղեկություն չկա, իսկ 1940 թ. համար հայտնի է 10.800 մարդու թիվը, 1941 թ.-ին՝ 9.996: Դատելով 1939 թ. մարդահամարի նյութերով, թե Հայաստանի ընդհանուր բնակչությունը, թե Հայաստանի հայերը քանակապես զգալիորեն զիջում էին Վրաստանի և Աղբրեջանի ընդհանուր բնակչությանն ու վրացիներին և աղբրեջանցիներին: Ըստ այդ նյութերի Հայաստանի բնակչությունը կազմում էր 1.282.338 մարդ, որից հայեր էին 1.061.997²⁹², Վրաստանի ընդհանուր բնակչությունը 3.540.023 մարդ էր, որից վրացի էին 2.173.922-ը²⁹³: Աղբրեջանում 1939 թ.-ին ապրում էր 3.205.150 մարդ, որից աղբրեջանցի են գրանցվել 1.870.471ը²⁹⁴: Ակնհայտ է, որ հայերի թիվը կրկնակի զիջում է վրացիներին, և 1.7 անգամ՝ աղբրեջանցիների թվերին: Եթե խնդիրը դիտարկենք ԽՍՀՄ ծավալներով, ապա ԽՍՀՄում 1939 թ.-ին ապրում էին Հայաստանի հայերից կրկնակի շատ հայեր՝ 2.152.860 (Հայաստանից զատ նաև հատկապես Աղբրեջանում, Վրաստանում և Ռուսաստանում), 2.249.860 վրացիներ և 2.275.778 աղբրեջանցիներ²⁹⁵(Աղբրեջանից դուրս առավել հոծ զանգվածով՝ Վրաստանում, Դաղստանում և Հայաստանում): Անդրկովկասից զատ զգալի թվով հայեր կային նաև Ռուսաստանում՝ 218.156²⁹⁶: Բոլոր դեպքերում հայերի ընդհանուր թիվն ավելի փոքր էր: Արդյունքում երեք ժողովուրդներից թվաքանակով ամենափոքրը՝ հայերը ԳՈՒԼԱԳ-ում ավելի շատ էին, ամենամեծը՝ աղբրեջանցիները, 1940 և 1941 թ.-ին «զիջում էին» հայերին ու վրացիներին²⁹⁷: Անդրկովկասի երեք ժողովուրդների՝ ԳՈՒԼԱԳ-ում գտնվողների թվաքանակի փոփոխության պատկերը 1942-1947 թթ.-ին շատ ավելի անհամամասն էր: Բոլոր երեք ժողովուրդների թվաքանակի դինամիկան նվազման միտում ունի, բայց՝ շատ տարբեր համամասնությամբ: Հայերի թիվը 1942 թ. 10.307 մարդուց 1947 թ.-ին հասել էր 5.728-ի: 1942 թ.-ին ԳՈՒԼԱԳ-ում կային 11.171 վրացի, իսկ 1947 թ.-ին՝ 4.609: 1942 թ.-ին ԳՈՒԼԱԳ-ում գտնվող 8.170 աղբրեջանցիներից 1947 թ.-ին մնացել էին միայն 1.495-ը: Այլ կերպ ասած հինգ տարիների ընթացքում հայերի թիվը նվազել էր 1,7, վրացիներինը՝ 2,4, աղբ-

²⁹² Всесоюзная перепись населения 1939 года. Национальный состав населения по республикам СССР,– http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_39.php?reg=6 (25.04.2014):

²⁹³ Всесоюзная перепись населения 1939 года. Национальный состав населения по республикам СССР,– http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_39.php?reg=4(25.04.2014):

²⁹⁴ Всесоюзная перепись населения 1939 года. Национальный состав населения по республикам СССР,– http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_39.php?reg=5 (25.04.2014):

²⁹⁵ Всесоюзная перепись населения 1939 года. Национальный состав населения по республикам СССР,– http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_39.php?reg=0(25.04.2014):

²⁹⁶ Всесоюзная перепись населения 1939 года. Национальный состав населения по республикам СССР,– http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_39.php?reg=1(25.04.2014):

²⁹⁷ Национальный состав лагерных заключенных ГУЛАГ-а в 1939-1941 гг. (по состоянию на 1 января каждого года),– *В.Н.Земсков. ГУЛАГ (Историко-социологический аспект)*, Աղյուսակ 5<<http://www.hrono.ru/statii/2001/zemskov.php>> (12.04.2014):

բեջանցիներինը՝ 5.4 անգամ: Այսինքն՝ ԳՈՒԼԱԳ-ում հայերի բացարձակ թիվը թե ավելի մեծ էր, և թե զգալիորեն քիչ էր նվազել: Եվ դեռ մեծ հարցական է՝ «ադրբեջանցի» էին արդյոք «ադրբեջանցիները», թե՛ այդ թվերն ամփոփում են նաև Ադրբեջանից ԳՈՒԼԱԳ տարված իրանալեզու ու կովկասալեզու էթնիկ միավորներին, քանի որ այդ տարիներին «ադրբեջանցի» տերմինը դեռևս չէր «էթնիկացել» և կարող էր նշանակել «Ադրբեջանի քաղաքացի»²⁹⁸: Այս ցանկերով դատելով ՆԳԺԿ տեսանկյունից Անդրկովկասի ժողովուրդներից ԽՍՀՄ-ում առավել անվստահելիին հայերն էին, առավել վստահելիին՝ ադրբեջանցիները: Ուշագրավ է, որ 1942-1947 թ. ցանկում հայտնվում են նաև թուրքեր: 1942 թ.-ին ԳՈՒԼԱԳ-ում գտնվող 488 թուրքերից 1947 թ.-ին մնացել էին 186ը²⁹⁹, այսինքն՝ բացարձակ թիվը նվազել էր 2,6 անգամ: Վ. Ջենսկովը գրում է, որ «Ճամբարային վիճակագրությանը սրացվում է, որ 1944 թ.-ին ադրբեջանցիների թիվը վրացիներից թվից փոքր էր 1,9 անգամ և հայերի թվից՝ 2,3 անգամ, իսկ 1947 թ.-ին՝ համապատասխանաբար 3,1 և 3,8 անգամ: Իրականում ադրբեջանցիների թիվն ավելի մեծ էր: Կասկածելի է նաև թուրքերի թվի վերաբերյալ տեղեկությունը: Ըստ երևույթին ադրբեջանցիների ու թուրքերի մի մասն ինչ որ պատճառով հաշվառվել են այլ ազգությունների անվամբ»: Որևէ աղբյուր, որոշակի վկայություն, նույնիսկ տեսական դատողություն չկողդ այս «ըստ երևույթին»ը խիստ կասկածելի «ըստ երևույթին» է: Ինչքան թուրքեր պիտի լինեին ԳՈՒԼԱԳ-ում, եթե ողջ ԽՍՀՄ-ում, ըստ 1939 թ. մարդահամարի նյութերի, ընդամենը 10.592 թուրք կար: Այլ խնդիր է, թե ինչու՞, իսկապես, պատերազմի ընթացքում ադրբեջանցիները և Թուրքիայի՝ հակախորհրդային դիրքորոշում ունեցող թուրքերը հայերից ու վրացիներից «ավելի վստահելի էին», իսկ հայերը, ինչպես պարզվում է, առավել անվստահելիին էին: Սա՝ այն դեպքում, երբ Թուրքիան ահռելի զորամիավորումներ էր կենտրոնացրել Հայաստանի սահմանի մոտ՝ Անդրկովկասն իրեն միացնելու վաղուցվա ծրագիրն իրականացնելու հարմար առիթ դիտելով պատերազմը, և ԽՍՀՄը ստիպված էր ճակատում այնքան անհրաժեշտ զորքերի քսան դիվիզիա ու ռազմական տեխնիկայի մեծ խմբաքանակ ստեղծել թուրքական սահմանին՝ հնարավոր Կովկասյան ճակատը պահելու համար: Պատերազմի ընթացքում Բոսֆորի և Դարդանելի նեղուցները, որոնք Մ.Քեմալը նվաճել էր երիտասարդ բոլշևիկյան Ռուսաստանի զենքով ու փողով, որոնք Թուրքիայի տրամադրության տակ պահելու

²⁹⁸ Г.Харатян. Официальные этно-демографические показатели в Азербайджане в контексте поиска и кризиса идентичности азербайджанцев. М., «Центриздат», 2015:

²⁹⁹ Национальный состав лагерных заключенных ГУЛАГа в 1942-1947 гг. (по состоянию на 1 января каждого года), В.Земсков. ГУЛАГ (историко-социологический аспект), «Социологические исследования» 1991 г., № 6, Աղյուսակ 11 (http://scepsis.net/library/id_937.html) (12.04.2014):

համար Լոզանի կոնֆերանսին այնքան ջանքեր էր գործադրել Ռուսաստանը, ԽՍՀՄի դեմ մղվող պատերազմի ընթացքում փաստացի գերմանական ռազմանավերի տրամադրության տակ էին: ԽՍՀՄի դեմ պատերազմի հենց սկզբին Թուրքիայում մնացած ողջ չափահաս հայ տղամարդկանց «գորահավաք»ի անվան տակ հավաքել էին և ժամանակավորապես օգտագործում էին շինարարական աշխատանքներում, մինչև պատերազմի ընթացքը ցույց կտար, թե երբ նրանց կոտորեն, իսկ ԽՍՀՄում հայերն անվստահելի էին: Այդ նույն պատերազմի ընթացքում հայերի հանդեպ իրականացված էթնիկական դեպորտացիաները (Ղրիմից, Կրասնոդարից, համընտհայերին՝ Վրաստանից) գալիս են ավելացնելու հայերի հանդեպ ԽՍՀՄ կենտրոնական իշխանության հանելուկային անվստահությունը փաստող երևույթները: Ուշագրավ են նաև պատերազմից հետո՝ 1951 թ.-ին, հիշյալ ժողովուրդներից ԳՈՒԼԱԳ-ում գտնվողների՝ նույն հեղինակի կողմից հաշվարկված թվերը: Բոլորի քանակություններն աճել են՝ կազմելով հետևյալ պատկերը³⁰⁰.

	Ընդհանուր թիվը	Ճամբարներում	Գաղութներում
Հայեր	26764	12029	14735
Ադրբեջանցիներ	23704	6703	17001
Վրացիներ	23583	6968	16615
Թուրքեր	362	300	62

Ակնհայտ է, որ հայերի թիվը ոչ միայն ավելի մեծ է ընդհանուր թվաքանակով նրանց գերազանցող ադրբեջանցիներից և վրացիներից, այլև գաղութներից առավել խիստ ռեժիմ ունեցող ճամբարներում հայերի թիվն իր հարևաններից գերազանցում է կրկնակի: 1951 թ.-ին ճամբարներում առավել մեծ թվաքանակ ունեին ԽՍՀՄ այն ժողովուրդները, որոնց բնակության տարածքները պատերազմի ժամանակ ընկել էին ֆաշիստական օկուպացիայի տակ: Հայաստանը դրանց մեջ չէր:

Խանջյանի սպանությունից 17 տարի անց՝ 1953 թ.-ին Ստալինի մահից և Բերիայի ձերբակալությունից հետո, երբ ԽՍՀՄում պաշտոնապես իբրև թե քննություն էր գնում ԽՍՀՄ քաղաքական ռեպրեսիաների շուրջ, և Բերիային ու նրա համախոհներին քննում էր ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ռ. Ռուդենկոն, Բերիայի շուրջ 23, և նրա համախոհների շատ ավելի հարցաքննությունների ընթացքում ոչ մի հարց չի տրվել Խանջյանի մահվան հանգամանքների մասին: Համենայն դեպս այդպիսիք չկան Բերիայի

³⁰⁰ Национальный состав заключенных ГУЛАГа (по состоянию на 1 января 1951 г.) В.Земсков, ГУЛАГ (историко-социологический аспект), «Социологические исследования» 1991 г., №7, Աղյուսակ 2 (http://scepsis.net/library/id_937.html):

հարցաքննություններն ամփոփող արխիվային փաստաթղթերի 752 էջանոց ժողովածուի մեջ³⁰¹: Մինչդեռ քննության ընթացքում 1953 թ. հուլիսի 17-ով թվագրված դիմում էր ստացվել քաղաքացի Բաղդասարյան Եվգենյայից, որով նա Խանջյանի սպանության/ինքնասպանության վերաբերյալ իր կասկածները և կոնկրետ տեղեկությունները ներկայացնելով, կարծիք էր հայտնել Բերիայի կողմից սպանված լինելու վերաբերյալ³⁰²: Այդ դիմումը ժողովածուում առկա է, դիմումի մուտքագրման օրվանից հետո տեղի է ունեցել Բերիայի 15 հարցաքննություն, բայց դրանցից որևէ մեկում Խանջյանի մահվան մասին հարց չի տրվել: Ոչ մի խոսք մի մարդու մահվան հանգամանքների մասին, ում մահն օգտագործվեց հայաստանյան նացիոնալիզմի առասպելի ձևավորման, «բացահայտման» և Հայաստանի հանդեպ հետագայում «հականացիոնալիստական» քաղաքականություն ձևավորելու համար: 1936-1937 թթ.-ին Հայաստանում հազարից ավելի մարդ ձերբակալվել և տարբեր հողվածներով պատիժներ է ստացել միայն այն պատճառով, որ համարձակվել է կասկածել Խանջյանի ինքնասպանության՝ Բերիայի կողմից պաշտոնապես հայտարարված վարկածին³⁰³, իսկ Բերիայի հարցաքննությունների ընթացքում քննությունը հետաքրքրվել է Բերիայի անվան հետ կապվող բազմաթիվ սպանությունների հարցերով, բայց՝ ոչ Խանջյանի: Հուլիսի 31-ի հարցաքննությանը Բերիային տեղեկացրել են, որ նրա դեմ մեղադրանք է առաջադրվել նաև իր հանցագործությունները ծածկելու նպատակով իր կողմից կազմակերպած տեռորիստական սպանությունների համար, կրկին թվարկվում են անուններ³⁰⁴, բայց Խանջյանի անունն այդպես էլ չի հիշվում: Հուլիսի 14-ին մի ամբողջ հարցաքննություն նվիրվել է Բերիայի

³⁰¹ Дело Берия: Приговор обжалованию не подлежит <<http://istmat.info/node/27101>>; Политбюро и дело берия. Сборник документов (<<http://istmat.info/node/22125>>:

³⁰² РГАСПИ. Ф. 17. Оп. 171. Д. 466. Л. 53-60 (իրատարակված է «Дело Берия: Приговор обжалованию не подлежит», էջ 227-229):

³⁰³ ՀՀ ՊԱԿ-ում բռնությունների ենթարկվածների կոնկրետ գործերն ուսումնասիրած Ա. Մանուկյանը գրում է, որ ձերբակալված գիտնականների, գրականության, մշակույթի գործիչներին ինչ մեղադրանք էլ հարուցված լինել, միշտ դրանց ավելացվել է. «չի հավատացել Ա. Խանջյանի ինքնասպանություն կատարելու պաշտոնական հայտարարությանը և սարդիչ լուրեր է տարածել այն մասին, որ նրան թքիլիսիում սպանել են» (Ա. Մանուկյան, Քաղաքական բռնաձնշումները Հայաստանում, էջ 63): Ես կարող եմ սրան ավելացնել, որ 2012-14 թթ.-ին մեր հետազոտության ընթացքում 1936-37 թթ.-ին բռնադատված բազմաթիվ սովորական քաղաքացիների և գյուղացիների ներկայիս ժառանգորդների ընտանեկան կիշողություն իրենց հոր/պապի ձերբակալությունը, արտորդ, նույնիսկ գնդակահարությունը կապում են Ա. Խանջյանի ինքնասպանությանը թերահավատ վերաբերվելու հետ (տես <<http://armeniatotalitaris.am/>>, Արմեն Ոսկանյանի (Երևան), Սարիբեկ Գրիգորյանի (Շիրակ), Փարսադան Հարությունյանի (Զանգեզուր), Ռուդիկ Քարամյանի (Զանգեզուր), Բաբե Տեր Դանիելյան-Սարգսյանի և այլոց պատմությունները):

³⁰⁴ РГАСПИ. Ф. 17. Оп. 171. Д. 466. Л.93-106 (Հրատարակված է «Политбюро и дело Берия», <<http://istmat.info/node/22198>>):

հեշտամոլության խնդրին, քննարկվել, թե որքան կապեր է նա ունեցել կանանց և «հակահեղափոխական» որակված կանանց հետ, սիֆիլիսով նրա հիվանդանալու հարցին³⁰⁵, բայց Բերիայի հանցագործությունների «հայկական ծավալը» խնամքով շրջանցվել է: Ակամա հարց է առաջանում, ինչն էր այդպես վախեցնում խորհրդային իշխանություններին, որ կարող էր ավելի խայտառակ բան լինել, քան բուն բռնաճշմունները: Ինչ գիտեր Բերիան, որի մասին քննության ընթացքում չպիտի խոսվեր: Հարցադրումը չի փոխվում նաև այն դեպքում, երբ ընդունենք, որ Բերիային ֆիզիկապես վերացրել են 1953 թ. հունիսի 26-ին, իրականում ոչ մի հարցաքննություն չի եղել, և հարցաքննության արձանագրությունների տեքստերը կազմվել են ԽՍՀՄ արդարադատության առասպելի շրջանակներում: Բոլորովին վերջերս վաղուց շրջանառվող այս պնդումը հաստատել են նաև Ռուսաստանի փորձագետները³⁰⁶: Բոլոր դեպքերում կեղծված թե իրական հարցաքննությունների արձանագրությունների տեքստերում «Խանջյանի էպիզոդի» բացակայությունը հաստատում է, որ ԽՍՀՄ Կոմկուսի Քաղբյուրոն որոշել է շրջանցել այն:

1953 թ.-ից խորհրդային կեղծիքի մի նոր շրջան էր սկսվել, երբ դարձյալ ամեն ինչ բոլորին հայտնի էր, բայց բոլորն անգիտություն էին ձևացնում և «զարմանում ու զայրանում» էին Ստալինի ու Բերիայի չարագործություններից: Սա էլ «բացահայտումներ ձևացնելու ժամանակներն էր»՝ մի նոր «ժամանակներն էին այդպիսին» շրջան:

Բերիայի գնդակահարությունից երկու տարի անց՝ 1955 թ.-ին ստեղծված քաղաքացիական հանձնաժողովը տեղեկություններ է հավաքել Խանջյանի մահվան հանգամանքների մասին և 1956 թ. փետրվարի 8-ին ներկայացրել ԽՍՀՄ ԿԿ³⁰⁷: Այդ տեղեկանքում ակնհայտ են սպանության վարկածի օգտին վկայող նյութերը, սակայն դատական որոշում չկա: «1956 թ. հունվարի 13-ին Ռ.Ա. Ռուդենկոն ԽՍՀՄ ԿԿ գրություն է ուղարկում Ա.Գ. Խանջյանի արդարացման վերաբերյալ: Դրանում մասնավորապես տեղեկացվում է, որ ԽՍՀՄ Գերագույն դատարանի ռազմական կոլեգիան դատախազական ստուգումների նյութերով վերջին շրջանում արդարացրել է Հայաստանի կուսակցական-խորհրդային 76 ղեկավար աշխատողների, այդ թվում հանրապետության Կ(բ)Կ ԿԿ նախկին քարտուղար Ա.Գ. Իոանիսյանին, ԿԳԿ

³⁰⁵ РГАСПИ. Ф. 17. Оп. 171. Д. 464. Л.93-106 (հրատարակված է «Политбюро и дело Берия», <http://listmat.info/node/22175>):

³⁰⁶ А.Н.Дугин, В.Н.Шепелев. Документы РГАСПИ об устранении Л.П.Берии. «Отечественные архивы», 2015, №3, 44-48.

³⁰⁷ Записка П.Т.Комарова в ЦК КПСС об обстоятельствах смерти А.Г.Ханджяна, АПРФ, Ф.3, Оп.24, Д.442, Лл.74-76, Реабилитация: как это было. Документы Президиума ЦК КПСС и другие материалы. В 3-х томах, Т. 1. Март 1953-февраль 1956. Сост. Артизов А.Н., Сигачев Ю.В., Хлопов В.Г., Шевчук И.Н., М.:МФД (Международный фонд демократии), 2000 (տե՛ս notes 5, փաստաթուղթ № 14):

նախկին նախագահ Մ.Ն. Մարտիկյանին, ԿԳԿ նախկին անդամ Պ.Ե. Պետրոսյանին, Ժողկոմխորհի նախկին նախագահ Մ.Ն. Դանիելյանին, ԿԳԿ նախագահի նախկին տեղակալ և քարտուղար Ռ.Պ. Դաշտոյանին և այլոց: Գրությունում վավերացվել է նաև, որ «Խանջյանի նկատմամբ հաշվեհարդարը» սարքել են Լ. Բերիան և նրա կամակատարները: 1956 թ. հունվարի 17-ին ԿԿ Նախագահությունը (արձանագրություն №182, կետ 18) որոշեց «ընդունել ԽՍՀՄ Գերագույն դատախազ ընկ. Ռուդենկոյի առաջարկությունը Ա.Գ. Խանջյանի արդարացման մասին, գրությունն ուղարկել Հայաստանի ԿԿ ԿԿ»³⁰⁸: Ինչ է նշանակում «Խանջյանի նկատմամբ հաշվեհարդարը սարքել է Լ. Բերիան»: Արդյո՞ք «հաշվեհարդարը» նշանակում է սպանություն: Արդյո՞ք «Խանջյանի նկատմամբ հաշվեհարդարը» նշանակում է Խանջյանի անվան շուրջ առասպելականացված հայաստանյան «բուռն նացիոնալիստական գործունեությունը» և հայկական նացիոնալիզմի քաղաքականացման բովանդակային առանձնահատկությունը: 2004 թ.-ին Մոսկվայում հրատարակված «Ռեաբիլիտացիա. ինչպե՞ս է այն եղել: 1980-ական թթ. Կեսեր – 1991» գրքում Խանջյանի մասին կարդում ենք. «Խանջյան Ա.Գ. (1901-1936) – **սպանվել է** 1936 թ. հուլիսի 9-ին: Արդարացվել է 1956 թ. հունվարի 17-ին կուսակցական կարգով ԽՍՀՄ ԿԿ Նախագահության կողմից»³⁰⁹: Ոչ մի խոսք՝ երբ է հաստատվել սպանության վարկածը, ում կողմից է հաստատվել, ով է սպանել, ինչու... **Արդարացվել է կուսակցական կարգով:** Այսպես հեշտությամբ ԽՍՀՄ իշխանությունները փակեցին Խորհրդային Հայաստանի պատմության այս խճճված էջը, իսկ արդեն անկախացած Հայաստանի Հանրապետությունում այդ էջը բացելու կամքը դեռևս բացակայում է:

³⁰⁸ РГАНИ(Российский государственный архив новейшей истории), Ф. 3. Оп. 8. Д. 368. Л. 50–53, հրատարակված է «Реабилитация: как это было», Т.1, notes 5, փաստաթուղթ № 18:

³⁰⁹ Реабилитация: как это было. Середина 80-х годов-1991. Документы Политбюро ЦК КПСС..., Т. 3, МФД, М., 2004, էջ 670:

ԱՄԲՈՂՋԱՏԻՐԱԿԱՆ ԱՌՕՐՅԱ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ)

Ամբողջատիրական համակարգի պայմաններում մարդու առօրյան կազմակերպելու տեղական լուծումներն ու խորհրդային ճամբարի ներքին զարգացումներն առիթ դարձան 1960-ականների վերջից խստորեն քննադատելու, ապա նույնիսկ հրաժարվելու «ամբողջատիրություն» եզրից՝ որպես անարդյունավետ հղացքի¹: Սակայն գորբաչովյան վերակառուցման հետ մեկտեղ, երբ նորից արդիականացան և շրջանառության մեջ դրվեցին ստալինյան բռնաճնշումներին առնչվող մանրամասներ, բացվեցին շատ արխիվներ, և հասանելի դարձան նոր նյութեր, այս հասկացության հանդեպ ուշադրությունը վերադարձավ ոչ միայն նախկին խորհրդային², այլև արևմտյան (նախևառաջ գերմանական)³ պատմագրություն⁴:

¹ Տե՛ս *Л. Гудков*. «Тоталитаризм» как теоретическая рамка: попытки ревизии спорного понятия // Мониторинг общественного мнения: экономические и социальные перемены. 2001. № 6 (56), էջ 13-30. Հմմտ. *А.И. Борозняк*. Жестокая память. Нацистский рейх в восприятии немцев второй половины XX и начала XXI века. М.: Политическая энциклопедия, 2014: խորհրդային Ռուսաստանի առնչությամբ այս ձևակերպման առաջին վերանայողներից առավել հայտնի է. *Ш. Фицпатрик*. Сталинские крестьяне. Социальная история Советской России в 30-е годы: деревня. М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2001: Նույնի՝ Повседневный сталинизм. Социальная история Советской России в 30-е годы: город. М.: РОССПЭН, 2008:

² Տե՛ս *Тоталитаризм как исторический феномен*. Отв. ред. А. Кара-Мурза, А.К. Воскресенский. М.: Философское общество СССР, 1989:

³ Տե՛ս *Б.С. Орлов*. Проблематика осмысления прошлого в совместных исследованиях ученых России и Германии. Центр научно-информ. исследований. глобал. и регион. пробл. Отд. Зап. Европы и Америки. М.: 2011; *В.В. Рулинский*. «Спор историков» в Германии: проблема ответственности за нацистские преступления // Вестник славянских культур, N 1 (XXVII), март 2013, էջ 46-56:

⁴ Տե՛ս *A. Gleason*. Totalitarianism: The Inner History of the Cold War. New York: Oxford University Press, 1995; *Тоталитаризм в Европе XX века*. Из истории идеологий, движений, режимов и их преодоления. М.: Памятники исторической мысли, 1996; *Beyond Totalitarianism: Stalinism and Nazism Compared*. Eds.: Geyer M., Fitzpatrick Sh., New York: Cambridge University Press, 2009; *P. Baehr*. Hannah Arendt, Totalitarianism, and the Social Sciences. Stanford: Stanford University Press, 2010; *A.J. Gregor*. Totalitarianism and Political Religion: an Intellectual History. Stanford: Stanford University Press, 2012, էջ 4-10 նա:

Ցավոք, մասնագետները շատ քիչ են անդրադարձել այն հարցին, թե որքանով էր ամբողջատիրական համակարգն ազդել խորհրդային հայաստանցու վրա: XX դար թեակոխած ավանդական կենսաձևով ապրող հայ մարդու վրա «խորհրդային արդիականացման» ազդեցությունը մասամբ ուսումնասիրել են ժամանակակից հայ արվեստաբանները⁵, սակայն նրանք հիմնականում շրջանցել են սոցիալական ինստիտուտների և մարդու առօրյայի փոփոխությունների հետ կապված խնդիրները՝ կարևորելով մշակութային դրսևորումները: Խորհրդային շրջանի ազգագրական աշխատանքներում որոշ անդրադարձներ կան նոր կենսակերպի հաստատման ընթացքին թե՛ քաղաքում⁶, թե՛ գյուղում⁷: Դրանցում, բնականաբար, չէին կարող քննարկվել խորհրդային ամբողջատիրական կառավարումից բխող արդյունքները, առավել ևս՝ խորհրդային մոդեռնացման կարևոր առանձնահատկություններից՝ բռնաճնշումները⁸: Չնայած խորհրդային շրջանում գրանցած դաշտային կյուրերի մեծ մասն առօրյա պրակտիկաների բավականին ճշգրիտ արձանագրումն էր, սակայն դրանց հիման վրա արված հրապարակումներում ներկայացվում էր ոչ այնքան խորհրդային մարդու իրական առօրյան, որքան՝ ինչպիսին այն պիտի լիներ՝ շեշտադրումն անելով նոր կարգուկանոնի (խորհրդային մոդեռնացման) հաղթարշավի վրա, որը գալիս էր փոխարինելու ավանդական կենսաձևին⁹: Թեև նման աշխատանքներում, անկախ դրանց գաղափարական պատվերից, արտացոլվում էին խորհրդային առօրյայի ուշագրավ իրողություններ:

Խորհրդային շրջանի ճգնաժամերը նպաստեցին կայսրության տարբեր ժողովուրդների առօրյայի համահարթեցմանն ու պարտադրեցին պե-

⁵ Այս տեսանկյունից հարցն առավելագույնս լուսաբանվել է *Հրաչ Բայադյանի* հոդվածներում: Տե՛ս հոդվածների շարքը «Յետը» էլեկտրոնային թերթում, 2914, նոյեմբերի 14-19 <<http://hetq.am/arm/>>:

⁶ Население Еревана. Этносоциологическое исследование. Ер.: Издательство АН АрмССР, 1986; *А.Е. Тер-Саркисянц*. Современная семья у армян, Ер.: Наука, 1972; *Л.А. Абрамян., Р.В. Пикичян*. Заметки по этнографии современного города (на примере Еревана). I. Рабиз и изменчивость городской социальной иерархии // Этнические группы в городах европейской части СССР. М.: МФГО, 1987, էջ 136-146; *Л.А. Абрамян, Р.В. Пикичян*. Заметки по этнографии современного города. Автомобильная культура Еревана // Этноконтактные зоны в Европейской части СССР (география, динамика, методы изучения). М.: МФГО, 1989, էջ 148-159:

⁷ Տե՛ս *Դ. Վարդումյան, Է. Կարապետյան*, Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Եր., ՋՍՍԻ ԳԱ հրատարակչություն, 1963, *Ա.Է. Թեր-Տարկисяնց*, նշվ. աշխ. նս:

⁸ Դմմտ. օրինակ. *M.K. Matossian*. The Impact of Soviet Policies in Armenia. Leiden: E. J. Brill, 1962; *R. Suny*. Armenia in the Twentieth Century. Chico, California: Scholars Press, 1983; *Նոյկի* Looking toward Ararat. Armenia in Modern History. Bloomington: Indiana University, 1994; *R. Panossian*. The Armenians. From Kings and Priests to Merchants and Commisars, New York: Columbia University Press, 2006, էջ 262-383 նս:

⁹ Տե՛ս *Դ. Վարդումյան, Է. Կարապետյան*, նշվ. աշխ., *Ա.Է. Թեր-Տարկисяնց*, նշվ. աշխ.:

տական ամբողջատիրական նույն կանոնները, որոնք ստիպում էին այս պայմաններում հայտնված մարդուն, անկախ իր նախորդ փորձից, ձևավորել բացարձակ նոր հարբիտում¹⁰ մասամբ յուրացնել համամիութենական նորմերը, մասամբ էլ, դրանց հարմարվելով, ձևափոխել տեղականը:

Ճգնաժամի խորքային ազդեցությունն առօրյայի վրա տեսանելի է յուրաքանչյուր ազգագրագետի, ով, հետևելով մշակույթի այս կամ այն դրսևորումնան գարգացումներին, կարող է փաստել, որ առավել մեծ փոփոխություններ բաժին են ընկնում խոշոր ճգնաժամերին հաջորդող մի քանի տարի «ավանդական կենսաձևի» դադարին հաջորդած ժամանակահատվածին: Այս ընթացքում է, որ ընդհատվում են նախկին պրակտիկաները, և ձևավորվում նորերը¹¹: Պատահական չէ, որ էթնոպատմաբանական վերակազմության մոտեցումը սերունդներին բաժանում է ըստ ճգնաժամերի՝ հաշվի առնելով, որ գիր չունեցող ժողովուրդների պատմությունն ու հիշողությունն առավելագույնս են համընկնում, իսկ բանավոր հիշողությունը հաճախ մտապահում է հենց ճգնաժամերը¹²: Այն գործի է դնում հիշողության որոշակի մեխանիզմներ՝ ձևավորելով, օրինակ, «փայլատակող հիշողություն» (flashbulb memory)¹³, որը, «լուսավորելով» մտապահված որևէ դրվագ, «հիմնական հիշողության բանկ» է տեղափոխում այն ուղեկցող բազմաթիվ ըստ էության ոչ կարևոր մանրուքներ, բայց դրանցում արտացոլվում են հիշողի տարբեր սոցիալական ցուցիչներ, որոնք սովորաբար չեն մտապահվում: Օրինակ, մեր գրեթե բոլոր գրուցակիցները մանրամասն նկարագրում էին այն օրը, երբ իմացան Ստալինի մահվան մասին՝ պատմության մաս դարձնելով իրենց առօրյա զբաղմունքն ու բազմաթիվ հանգամանքներ, որոնք որպես կանոն չեն արտացոլվում կենսագրության ընդհանուր պատմում: Պատմական/պետական մասշտաբի իրադարձությունն ամբողջատիրական հասարակություններում հաճախ է դառնում «սեփական կենսագրության» դրվագ¹⁴: Սա այն սահմանն է, երբ մարդու և պետության «կենսագրությունները» ձևավորում են միմյանց՝ միահյուսվելով և մտապահվելով իրեն մեկ ընդհանուր նարրատիվ, որտեղ երկրի և մարդու առօրյաները միմյանց արտացոլում են:

Նոր խորհրդային կարգերի ազդեցությամբ ձևավորված առօրյա բազ-

¹⁰ Տե՛ս Մ. Бурдые. Практический смысл. СПб.: Алетея, 2001, էջ 43-54:

¹¹ Հմմտ. Գ. Շազոյան, «Յոթ օր, յոթ գիշեր». հայոց հարսանիքի համայնապատկեր, Եր., «Գիտություն», 2011, էջ 14-15:

¹² Էթնոպատմաբանական վերակազմության մեթոդի մասին տե՛ս E.S. Burch. The Method of Ethnographic Reconstruction // Alaska Journal of Anthropology, Vol. 8, no. 2 (2010), էջ 123-140:

¹³ R. Brown, J. Kulik. Flashbulb Memories // Cognition, 1977, N 5 (1), էջ 73–99, տե՛ս նաև՝ D.B. Pillemer. Momentous Events, Vivid Memories: How Unforgettable Moments Help Us Understand the Meaning of Our Lives. Cambridge, Mass.: Harvard University Press. 1998:

¹⁴ W. Gurian. Totalitarian Religions // The Review of Politics, Vol. 14, No. 1 (Jan., 1952), էջ 3-14:

մաթիվ փոփոխություններ, ի տարբերություն ռուսական նյութի¹⁵, ո՛չ Հայաստանում, ո՛չ էլ մյուս նախկին խորհրդային հանրապետություններում¹⁶ չեն արժանացել հետազոտողների ուշադրությանը: Հավանաբար դա պայմանավորված է հետխորհրդային երկրներում ապագադրությամբ զուգահեռ «ազգային պետության» հարցի կարևորությամբ, ինչն էլ առավել արդիականացրել էր «էթնիկ» մշակույթների ուսումնասիրության խնդիրները, որոնք հաճախ հակադրվում էին «խորհրդայինին»՝ այն ներկայացնելով իբրև զարգացման «ճիշտ ուղուց» շեղում: Պատահական չէ, որ որոշ նախկին խորհրդային պետություններում «կոմունիստական» անցյալի հանդեպ ուշադրությունն ավելանում է Ռուսաստանի վերջին շրջանի գաղութատիրական փորձերին զուգահեռ՝ արդիականացնելով ոչ վաղ անցյալի հնարավոր վերադարձի հարցը:

Անդրադառնալով «ամբողջատիրական առօրյային»՝ այս հոդվածում նկատի կունենանք ոչ թե խորհրդային բռնաճնշումների շրջանի կենցաղի նկարագրությունը¹⁷, ինչը կպահանջեր ավելի ծավալուն աշխատանք, որքան մեր գրանցած բանավոր պատմություններում սոցիալական փոփոխություններն արտացոլող առավել աչքի ընկնող դրվագները: Տվյալ դեպքում փորձել ենք մոտենալ բանավոր պատմության գերմանական դպրոցի մեկնությանը, ըստ որի՝ «բանավոր պատմությունը» որևէ պատմական ընթացքի սովորական քաղաքացու ընկալումն է կամ պետական ինստիտուտների փոխհարաբերվելու նրա փորձի ներկայացումը¹⁸: Այստեղ գլխավորապես կրնանարկենք

¹⁵ Տե՛ս Մ. *Փաշտրիկ*. Сталинские крестьяне: *Уютнй*՝ Повседневный сталинизм; О. *Гурова*. Советское нижнее белье: между идеологией и повседневностью. М.: Новое литературное обозрение, 2008; Е.А. *Осокина*. За фасадом сталинского изобилия. Распределение и рынок в снабжении населения в годы индустриализации. М., 1999; J. *Hellbeck*. Revolution on My Mind: Writing a Diary under Stalin. Cambridge, MA, 2006; *Й. Хельбек*. Повседневная идеология: жизнь при сталинизме // Неприкосновенный запас, 2010, N4 (72) <<http://magazines.russ.ru/nz/2010/4/he2-pr.html>> (16.05.2014); Н.Б. *Лебина*. Повседневная жизнь советского города: нормы и аномалии. 1920–1930 годы. СПб.: «Нева» - «Летний сад», 1999; S. *Kotkin*. Magnetic Mountain: Stalinism as a Civilization, University of California Press, 1995; С. *Чуйкина*. Дворянская память: «бывшие» в советском городе. СПб.: Издательство Европейского университета, 2006; Т.М. *Смирнова*. «Бывшие люди» Советской России. Стратегии выживания и пути интеграции. 1917-1936 годы. М.: Издательский дом «Мир истории», 2003; М. *Меерович*. Наказание жилищем. Жилищная политика в СССР как средство управления людьми. 1917-1937. М.: РОССПЭН, 2008 ևն:

¹⁶ Այս իմաստով բացառություն է՝ С. *Абашин*. Советский кишлак. Между колониализмом и модернизацией. М.: «Новое литературное обозрение», 2015:

¹⁷ Հմմտ. А. *Марутян*. Обыкновенная жизнь в необыкновенных условиях (травматический быт в сталинской ссылке и способы его преодоления) // А. *Алексамян*. Сибирский дневник 1949-1954. Ер.: «Гитутюн», 2007, էջ 35-55:

¹⁸ Լման մոտեցման ձևակերպումը տե՛ս А. *Людке*. История повседневности в Германии: новые подходы к изучению труда, войны и власти. М.: РОССПЭН, 2010, էջ 53-83; Л. *Нутхаммер*. Вопросы к немецкой памяти. Статьи по устной истории. М.: Новое издательство, 2012, էջ 9-91:

1930-ականների բռնաճնշումների և 1949 թ. արտոյի պայմաններում ձևավորված այնպիսի պրակտիկաներ, որոնք թեև արտաքինապես կարող էին նմանվել արդիական սոցիալական հարաբերություններին, սակայն դրանց հիմքում հաճախ ընկած էին ուղիղ հակառակ երևույթներ: Այսպիսով, կփորձենք ցույց տալ, որ խորհրդային այսպես կոչված արդիականացումն իրականացվում էր ոչ միայն ցավոտ պատժիչ եղանակներով, այլև նույն պետության քաղաքացիների մի սովոր հատվածի սոցիալական հարաբերությունների հակառակ՝ կոնտրամոդեռնացման ձևափոխումների հաշվին:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԽԻՎ. ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ «ՀՈՒՇՆ» ՈՒ «ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ»

Թեև ստալինյան բռնաճնշումների մեր ուսումնասիրությունն ու նպատակային գիտարշավներն անցկացրել ենք 2012 թ. սկսած, սակայն, թեմայի հանդեպ ունենալով անձնական և մասնագիտական հետաքրքրություն, առաջին դաշտային նյութերը գրանցել ենք առնվազն 2006 թ.: Հետազոտական թիմի որոշ անդամների ընտանիքներում եղել են բռնադատվածության դեպքեր, կամ ստալինյան բռնաճնշումների շրջանում նրանց ընտանիքները հայտնվել են ձերբակալության անմիջական սպառնալիքի տակ, ուստի այս հետազոտության մեթոդաբանությունը որոշ չափով ներառել է նաև ինքնաազգագրությունը¹⁹, երբ հետազոտողը սեփական փորձին անդրադառնում է որպես ուսումնասիրության նյութի:

Ծրագրի շրջանակում նախատեսված էր աշխատել հիմնականում Երևանում և երկու մարզերում՝ Սյունիքում և Շիրակում, բայց դաշտային նյութեր գրանցել ենք Հայաստանի գրեթե բոլոր մարզերում, իսկ որոշ պատմություններ՝ Հայաստանի սահմաններից անդին: Ընդհանրապես դժվար է հետազոտության աշխարհագրական տեղայնացում կատարել, նույնիսկ քաղաք-գյուղ իմաստով, քանի որ բռնաճնշումների պայմաններում կտրուկ աճում է բնակչության շարժունությունը: Սա նախևառաջ պայմանավորված էր նրանով, որ տեղաշարժերը, գրանցված բնակավայրից անհետանալը ձերբակալություններից խուսափելու ամենատարածված ձևերից էին: Ուստի մեր որոշ գրուցակիցների ճակատագրեր ճամփորդությունների տարեգրություն են հիշեցնում²⁰:

¹⁹ T.E. Adams, S.H. Jones, C. Ellis. Autoethnography, N.Y. Oxford University Press, 2015; С.В. Соколовский. Автоэтнография и антропологические исследования науки // Антропология академической жизни, т. 2, М., 2010, էջ 24-42; S. Wall. An Autoethnography on Learning about Autoethnography // International Journal of Qualitative Methods, 2006, Vol 5, №2, էջ 146 - 160:

²⁰ Գ. Շաղոյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), գրույց Ս. Յարություն-

Վերևում ասվել է, որ հետազոտությունը կատարվել է հիմնականում բանավոր պատմություն մեթոդաբանությամբ, և երկու տարում գրանցել ենք 100-ից ավելի պատմություններ՝ նպատակ չդնելով քանակապես ներկայացուցչական ընտրանք կազմելու: Տվյալ դեպքում ավելի կարևորում էի այն նարրատիվները, որոնք թույլ կտային արձանագրել ստալինյան բռնաճշմունքների մասին ընտանեկան հիշողության քիչ թե շատ կայուն շարադրանքի առկայությունը կամ դրա բացակայությունը:

Վերջին խնդիրը ձևակերպվեց հետազոտության ընթացքում առաջացած մեկ տեխնիկական անհրաժեշտության պատճառով. որոշ հարցազրույցներ մոտ մեկ ամիս տարբերությամբ գրանցվել են երկրորդ անգամ՝ վավերագրական ֆիլմում²¹ օգտագործելու նպատակով: Այդ զրույցների մի մասը և՛ առաջին, և՛ երկրորդ անգամ գրանցել է նույն հետազոտողը, զրույցների մյուս մասը երկրորդ անգամ գրանցել է նույն թիմի մեկ այլ հետազոտող, այսինքն՝ պատմողի համար նոր մարդ: Մինևնույն մարդու գրանցած առաջին և երկրորդ անգամ հնչած տեքստերն իրարից ավելի քիչ էին տարբերվում, քան տարբեր հետազոտողների՝ նույն մարդու հետ գրանցած զրույցները: Սա մի կողմից գալիս է փաստելու, որ հարցազրույցների միջոցով արձանագրված պատմությունների վրա զրուցավարի ազդեցությունը շատ ավելի մեծ է, քան կարելի է պատկերացնել, և երբեմն այնքան, որ նրանց կարելի է համարել հնչած պատասխանների համահեղինակ, քանի որ հարցադրումներով, անհատականությամբ, կարեկցանքի արտահայտությամբ և այլ սուբյեկտիվ գործոններով նրանք ազդում են պատմության եթե ոչ փաստագրական տվյալների, ապա գոնե դրվագների ընտրության, ներկայացման լեզվի, երբեմն էլ մեկնության վրա: Ուշագրավ է, որ հարցազրույց վարողի այդ ազդեցության հանդեպ պատմողի զգայունությունը հաճախ ուղիղ համեմատական է պատմողի կրթական մակարդակին: Իմ տպավորությամբ, որքան ավելի կրթված էր պատմողը, այնքան ավելի շատ էր հաշվի առնում զրուցավարի կամա թե ակամա արձագանքները: Մյուս կողմից, ոչ միայն զրուցավարն է ընտրում պատմողին, այլև պատմողն է «ընտրում» իր զրուցակցին և որոշում, թե հատկապես որ զրուցավարին կուզենար «հասցեագրել» իր կյանքի պատմությունը:

Չնայած մեր բոլոր զրուցակիցներն էլ առաջին անգամ պատմելիս ավելի դյուրագգաց և անկաշկանդ էին, սակայն նրանցից մի մասի երկրորդ անգամ ներկայացրած շարադրանքը մեծ հաշվով չէր տարբերվում առաջի-

նովի հետ (այսուհետև՝ նշվելու է միայն բանասացի ազգանունը), Երևան, 2013, տես *Ս. Հարությունով*, «Мы всю жизнь скрывали, что отца посадили» // Armenia Total(itar)is, 27.07.2014 <<http://armeniatotalitaris.am/?p=4528>>:

²¹ «Անհարազատները» // Armenia Total(itar)is, ռեժ. Ս. Հովսեփյան, Նիկա Շեկ (48:06), <<http://armeniatotalitaris.am/?p=4389>> (11.06.2014):

նից: Ավելին, որոշ դրվագներ կրկնվում էին բառացիորեն: Մինչդեռ բանասացների մյուս մասը մեկ ամիս անց դժվարանում էր նորից պատմել առաջին անգամ ներկայացրած պատմությունը: Ինչպես պարզվեց, դրանք հիմնականում այն բանասացներն էին, ովքեր ընդհանրապես առաջին անգամ էին բարձրաձայնում իրենց կյանքի այս դրվագները, այն էլ մեր խնդրանքով: Այսինքն, նրանց պատմությունը ոչ թե կայացած «ներքին տեքստ» էր, այլ բարձրաձայն հիշելու ընթացքում նոր պատումի ստեղծում, որը ձևավորվում էր մեր աչքի առաջ և, թերևս, մեր մասնակցությամբ: Իսկ այն բանասացները, ովքեր գրեթե բառ առ բառ կարողացան կրկնել իրենց առաջին անգամ հնչեցրած պատմությունները, կարծես արդեն ունեին «կայուն նարրատիվ», որը, ինչպես օրինակ մեր գրուցակից Պարույր Տոնոյանի դեպքում, նաև գրավոր էր շարադրված մինչև մեր ծանոթությունը²²:

Դաշտային նյութերի գրանցման երկրորդ կարևոր հանգամանքն այն էր, որ բռնաճնշումների մասին տեքստերը կանանց մոտ կարծես ավելի «անկայուն» էին: Կարող եմ ենթադրել, որ նրանք (գոնե մեր գրուցակիցների մեծ մասը) ավելի քիչ են առիթ ունեցել այս թեմաների շուրջ խոսելու կամ դրանց առնչվող դրվագներ պատմելու: Սա կարող է պայմանավորված լինել նաև նրանց վախով և ավելի մեծ գգուշավորությամբ²³, ինչը, թերևս, ձևավորվում է մշտապես վտանգի տակ ապրելու և հատկապես երեխաների համար պատասխանատվություն կրելու ու նրանց միակ խնամակալը մնալու պայմաններում:

Անսպասելի էր, երբ մեր տղամարդ գրուցակիցները պատմության ընթացքում շատ ավելի հաճախ էին հուզվում և անհաջող փորձեր անում զսպելու իրենց արցունքները, քան կանայք, ովքեր թե՛ իրենց, թե՛ մերձավորների կյանքի դաժան դրվագները պատմելիս ավելի կենտրոնանում էին գոյատևելու համար պայքարի պլանների վրա, քան վերապրած զրկանքների և դրանց հետ կապված զգացմունքների: Ստեղծվում էր այնպիսի տպավորություն, որ հոգեբանական տրավման տղամարդկանց մեջ ավելի խոր նստվածք էր թողել: Կանայք, անկախ կրած զրկանքներից, հաճախ իրենց ընկալում էին որպես իրավիճակի օբյեկտ, ստեղծված ծանր պայմաններում ակամայից հայտնված մեկը, ում հիմնական խնդիրը գոյատևելն էր, առաջացած դժվարությունները որևէ կերպ հաղթահարելը: Մինչդեռ տղամարդկանց պատմություններում բռնաճնշումների զոհերի դեմ ուղղված դաժանություններն ավելի սուբյեկտավորված էին՝ միաժամանակ ձևակերպելով պատասխանատվության խնդիրը: Տղամարդիկ առավելագույնս հուզվում էին՝ վերհիշելով իրենց մայրերի կրած զրկանքները, կարծես վերածվելով մա-

²² Պ. Տոնոյան, Մի կյանք, Գյումրի, ա.հ. 2008:

²³ Հմմտ. S.P. Pattie. Faith in History. Armenians Rebuilding Community. Washington and London: Smithsonian Institution Press, 1997, էջ 15-20:

նուկների, ովքեր այդ տարիներին, բացի իրենց բաժին ընկած ցավից, տառապում էին մորն ու ընտանիքի ավելի կրտսեր անդամներին պաշտպանելու անկարողությունից: Դա ավելի նկատելի էր հատկապես ավագ զավակների պատմություններում: Ակնհայտորեն տղամարդկանց սոցիալական դերը ենթադրում էր հավելյալ պատասխանատվություն, որը կանանց դեպքում առնվազն ավելի թույլ էր արտահայտված:

Կանանց պատմություններում, ինչպես իրավացիորեն մի առիթով նկատեց բռնաճնշումներն ուսումնասիրող Գրիշա Սմբատյանը, մեծ տեղ են զբաղեցնում հատկապես եղբայրների ճակատագրերի հետ կապված նրանց ապրումները: Նույնիսկ երկրորդ սերնդի՝ որդիների յուրացրած տեքստերում, ազդված լինելով մոր պատմություններից, ամենահուզիչ դրվագները քեռիների վերաբերյալ պլոմեներն են²⁴:

Կանանց և տղամարդկանց տեքստերը հաճախ տարբերվում էին իրենց պլոմետապին ընտրություններով: Դա քիչ թե շատ սպասելի էր, եթե նկատի առնենք ավանդական կենցաղում նրանց տարբեր դերաբաշխումը: Անսպասելի էր այն, որ տղամարդկանց համեմատ կանայք ավելի հաճախ էին գրավոր դիմում տարբեր պետական մարմինների՝ իմանալու կորսված հարազատների ճակատագրերը²⁵: Նույնիսկ եթե սամակն ինքնուրույն կազմելու համար նրանք բավարար գրագետ չէին, այնուամենայնիվ նրանց դրդմամբ էին հարազատները զբաղվում ընտանիքի անհայտ կորած անդամի ճակատագիրը պարզելու հարցերով և սամակն էլ այդ կանանց անունից ուղարկում²⁶:

Դրան հակառակ գոհվածների կամ կորածների հիշատակը որևէ կերպ «հուշարձանացնելու»²⁷ նախաձեռնությունը գլխավորապես «տղամարդկային» է՝ լինի դա կենտոաֆ (դիակ չչաբրունակող գերեզման)²⁸, թե իրական հուշարձան²⁹ կառուցելը:

Ընտանեկան հիշողության «հուշականացման» մեխանիզմները կանանց և տղամարդկանց մոտ ունենին ևս մեկ ուշագրավ տարբերություն: Եթե կանայք խնամքով պահում էին բոլոր փաստաթղթերն ու իրենց կորուսյալ

²⁴ Խաժակ Զմայակյանի պատմությունում մոր բազմիցս կրկնվող խոսքերը, կարծես, մինչ օրս փորձում էին արդարացնել անօրեն ձերբակալված երիտասարդին. «Իմ եղբայրս՝ քո քեռին, դաշնակցական չի եղել, ինքը եղել է դաշնակցական զորքի կապիտան»: Տե՛ս *Խ. Զմայակյան*, «Տարան, տարան ու տարան» // Armenia Total(itar)is, <<https://www.youtube.com/watch?v=sTYDDbXx4LM>> (16.08.2015), (9:40-9:50):

²⁵ Գ. Շազոյան, *Լ. Աբրահամյան*, ԴԱՆ, Ախուրյան, 2012-13, Անժեյա Շահբազյան, ԴԱՆ, Գյումրի, 2012, Ասյա Յատյան, Գ. Մարոթյան, ԴԱՆ, Սյունիք, 2012, Նինա Զովսեփյան:

²⁶ Տե՛ս այս ժողովածուի մեջ՝ Պ. Տոնոյան, Շամամ տատի գոյատևելու հնարքները, տե՛ս նաև *Ս. Զարոթյունով*, «Мы всю жизнь скрывали...»:

²⁷ *Խ. Զմայակյան*, «Տարան, տարան ու տարան» (29:45-30:15):

²⁸ Գ. Շազոյան, *Լ. Աբրահամյան*, ԴԱՆ, Արագածոտն, 2014, Գ. Շազոյան, ԴԱՆ, Զաղպատ, 2014:

²⁹ Գ. Խառատյան, Զ. Զամբարձումյան, Գ. Շազոյան, Գ. Ստեփանյան, ԴԱՆ (այսուհետև՝ ԶԱԻ ԴԱՆ), Գորթ, 2014:

հարազատների առանձին նկարներ կամ իրեր՝ նմանվելով «թանգարանային ֆոնդապահի», մեր մի քանի տղամարդ գրուցակիցների կուտակած արխիվն ավելի հիշեցնում էր թանգարանային ցուցադրություն: Դա ոչ միայն նյութականացված հուշի պահպանում էր, այլև այն որոշակի համատեքստում տեղադրելու, մեկնաբանելու փորձ: Հիշողությունն այդպես ձևավորող տղամարդն էլ, կարծես, վերածվում էր թանգարանային ցուցադրության գիղի (ուղեվարի): Նրանց մոտ այդ իրերը հաճախ զբաղեցնում էին սեկյակի որևէ տեսանելի հատված՝ բառի բուն իմաստով վերածվելով «ցուցադրության»³⁰:

Լուսանկարները երբեմն պահվում էին ոչ թե սովորական այլոմներում (հաճախ ուղեկցվելով երկար տեքստերով), այլ կարող էին փակցված լինել նախշագարդված գրքերի³¹ կամ այլ փաստաթղթերի³² վրա՝ վերաձևակերպելով համատեքստը: Դրանք զգալիորեն հիշեցնում էին զինվորականների այլոմները (հմնտ. «дембельский альбом»³³): Այս իմաստով հատկապես ուշագրավ է Ռուստ Աբրահամյանի մոտ պահվող իր հոր անձնագիրը, որտեղ հոր նկարի փոխարեն նա փակցրել էր արքարավայրում արված իրենց համատեղ լուսանկարը [նկ. 9]: Մեծ ընտանիքից արտրել էին միայն հորն ու



Նկ. 9. Սուրիաս Աբրահամյանի անձնագիրը՝ փոխված նկարով:

³⁰ Գ. Շագոյան, Լ. Աբրահամյան, ԴԱՆ, Գյումրի, 2012-2013, Ռուստ Աբրահամյան, ԴԱՆ, Գյումրի, 2013, Սերգեյ Խուրշուդյան: Գ. Շագոյան, ԴԱՆ, Դաշտաղեմ, 2010, Խորեն Զաքարյան:

³¹ Գ. Շագոյան, Լ. Աբրահամյան, ԴԱՆ, Գյումրի, 2013, Սերգեյ Խուրշուդյան, Գ. Շագոյան, ԴԱՆ, Դաշտաղեմ, 2010, Խորեն Զաքարյան:

³² Լ. Աբրահամյան, Գ. Շագոյան, ԴԱՆ, Գյումրի, 2012-2013, Ռուստ Աբրահամյան:

³³ Հմնտ. Дембельский альбом – русский Art Brut между субкультурой и книгой художника: сборник материалов и каталог выставки. сост. М. Карасик, С. Лазарев, М. Коростелева. СПб.: М.К. & Хармсиздат, 2001; М.Ю. Валькова. «Дембельский» альбом // <<http://flot.com/welfare/seacall/dmalbums.htm>> (15.06.2014):

իրեն՝ տասնմեկամյա Ռուստյին, քանի որ նա միակ անչափահասն էր և, ի տարբերություն իր մյուս 5 եղբայրների, գտնվում էր հոր խնամքի տակ, ուստի և եղբայրներից միակն էր, ով հոր հետ աքսորվեց: Իր և հոր համատեղ նկարը հոր անձնագրում պիտի փաստեր խորհրդային բռնաճշմունքների այն կարևոր հանգամանքը, որ բռնադատվածների ընտանիքի անդամները կարծես «կորցնում» էին անձնական կենսագրությունն ու դառնում ընտանիքի մեկ այլ անդամի ճակատագրի պատանդը: Մի բան, որ ստացել էր օրենքի ուժ, էթե հիշենք 1926 թ. Ռուսաստանի քրեական օրենսգրքում տեղ գտած 58-րդ հոդվածի ЧСИР-ին («член семьи изменника родины»՝ «հայրենիքի դավաճանի ընտանիքի անդամ») վերաբերող ենթակետը:

Լուսանկարների հետ միասին «ընտանեկան արխիվներում» պահվում էին տարբեր թերթերից կտրած և խորհրդային պատմությանը վերաբերող, կազմողների կարծիքով առավել կարևոր հոդվածներն ու հեռուստահաղորդումներից քաղած առանձին գրանցումներ³⁴: Անձնական կենսագրությունն այնքան էր միահյուսվել պետության պատմությանը և քաղաքական անցուղարձին, որ դրանք անհնարին էր տարանջատել: Ամբողջատիրական պետությունը ոչ միայն կառավարում և ներխուժում էր քաղաքացիների անձնական կյանք, այլև «կազմակերպում» նրանց հուշերը:

Լուսանկարների հետ որպես կանոն պահվում էին բռնադատվածների հուշատեսարենն ու օրագրերը, որոնք ծառայում էին ոչ այնքան որպես տեղեկատվության կրիչ, որքան հուշ, մահացած ազգականից մնացած մասունք: Հաճախ ընտանիքի անդամները խնամքով պահվող այդ գրառումները նույնիսկ չէին էլ ընթերցել: Դրանք ավելի շատ հիշեցնում էին «տան սուրբ» համարվող կրոնական բովանդակությամբ գրքերի կամ սուրբ համարվող մատուցների հանդեպ ժողովրդական վերաբերմունքը³⁵: «Տան սրբերի» դեպքում այդ չընթերցված գրքերի սկզբնական գործառույթը՝ տեղեկություն հաղորդելը, փոխվել էր «բուժելու», «փրկելու», «օգնելու» գործառույթով, որից կարող էր օգտվել ցանկացած մեկը: Ծնողների, պապերի թողած գրավոր տեքստերի հանդեպ վերաբերմունքը շատ նման էր այս սրբազան իրերի նկատմամբ եղած առօրյա պրակտիկաների, կարելի է ասել, որ սրանք վերածվել էին «սրբազան ընտանեկան հուշի»: Հազվադեպ էին այն բանասացները, ովքեր մտահոգված էին այդ հուշերի ոչ միայն հրատարակմամբ, այլև, ինչպես նշեցինք, գոնե ծանոթ էին բովանդակությանը: Սրբազան հուշ լինելու կողքին եղել է դեպք, երբ պապի գրավոր հուշերը նույնիսկ փորձում էին մեզ վաճառել:

³⁴ Հմմտ. Լ. Աբրահամյան, Գ. Շագոյան, ԴԱՆ, Գյումրի, 2012-2013, Խաժակ Հմայակյան, ԴԱՆ, Ախտրյան, 2012-13, Անժելա Շահբազյան, ՀԱԻ ԴԱՆ, Ընող, 2014, Զավախյան Հասմիկ:

³⁵ Տան սրբերի մասին տես Հ. Մարության, «Տան սուրբ» երևույթը. ակունքների հարցը և մերօրյա դրսևորումները // Հայոց սրբերը և սրբավայրերը, Եր. «Հայաստան», 2001 էջ 337-346:

Ինչպես ստալինյան տարիների շատ հավատացյալներ, իրենց կյանքը վտանգելով, թաքցրել են «սուրբ գրքերը», այնպես էլ տարբեր թաքստոցներում պահվել էին բռնադատվածների լուսանկարներն ու նրանցից մնացած այլ իրեղեն հուշերը: Օրինակ, մեր գրուցակիցներից մեկի մայրը, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանական ճամբարում հայտնված և ֆաշիստների հետ համագործակցող ամուսնու պատճառով հետապնդումների ենթարկվելով, տան պատից կողք կողքի կախված իր և ամուսնու նկարները «միավորել» էր՝ ամուսնու նկարը դնելով իր նկարի շրջանակի մեջ՝ թաքցնելով սեփական պատկերի հետևում, իսկ այս երկու նկարների արանքում պահել ամուսնու նամակները: Չնայած ՊԱԿ-ի բազմաթիվ ծանր հարցաքննություններին և կտտանքներին, նա չի ոչնչացրել ամուսնուց մնացած այդ հուշերը, ավելին՝ մինչև կյանքի վերջը «պաշտպանել» իր դիմանկարով՝ վտանգելով սեփական կյանքն ու ազատությունը³⁶: Այս և նման այլ պատմություններ բացատրում են նաև ստալինյան բռնաճնշումներին առնչվող մեզ հասած «ընտանեկան արխիվների» սակավությունը. այս իրեղեն հուշերը մշտապես վտանգավոր էին, և հատուկ քաջություն էր պետք՝ դրանք պահելու համար:

Դաշտային աշխատանքների ընթացքում գրանցել ենք մի քանի ուշագրավ նմուշ, երբ խմբային լուսանկարներում ոմանց դեմքերը ջնջված են կամ մկրատով զգուշությամբ կտրված: Դրանք «Ժողովրդի թշնամի» որակված ազգականներն ու բարեկամներն էին: Եկարների տերերի ապահովության համար անհրաժեշտ էր ոչ միայն չլիվել «թշնամի» ճանաչվածների հետ, այլև մերժել նախկինում նրանց հետ եղած մերձավորությունն ու դրա մասին հուշն ու վկայությունը: Ճակատագրի հեգնանքով այսօր այդ լուսանկարների բացակայող դեմքերն են դրանք դարձնում ավելի հիշարժան և լավագույնս բնութագրում այդ ժամանակները [նկ. 10]: «Ժողովրդի թշնամի» ճանաչվածների պատկերները ոչնչացվում էին նույնիսկ պետական հրահանգով: Այսպես՝ 1938 թ. հունվարի 14-ին հատուկ ակտով ոչնչացվեցին Մ. Սարյանի և մի շարք այլ նկարիչների շուրջ հիսուն կտավներ, գծանկարներ ևն, քանի որ դրանց վրա պատկերված էին «սխալ» մարդիկ կամ դրանք նկարագարողում էին «սխալ» գրքեր³⁷:

³⁶ Գ. Շաղոյան, ԴԱՆ, Երևան, 2014:

³⁷ Ա. Տեր-Պարրիելյան, Տխուր հուշարձաններ // Առավոտ, 04.12.2013, <<http://www.aravot.am/2013/12/04/411656/>> (17.08.2015):



Նկ. 10. 1927 թ., Երևան, ընկերների լուսանկար՝ «Ժողովրդի թշնամիների» ջնջված դեմքերով (Մայա Մանվելյանի ընդամենական ալբոմից):

Չնայած պետությունը մեր բանասացներից շատերին ճանաչել է որպես բռնադատվածներ, սակայն նրանց մեծ մասն արքայազնի ժամանակ եղել են շատ երիտասարդ կամ անչափահաս և արքայազնի են ընտանիքի մեկ այլ անդամի՝ հիմնականում հայրերի պատճառով: Ըստ էության նրանք ներկայացնում են ոչ թե բռնադատվածների առաջին սերունդը, այլ կարելի է ասել «1,5-ը» (իրադարձության ականատեսն են և դրանից բխող գրկանքների կրողը, բայց ոչ հիմնական թիրախը) կամ երկրորդ ու երրորդ սերունդները, ում հիշողություններն իրենց ընտանիքների գոյատևման պայքարի և հալածանքների մասին է. սա ավելի շուտ «Ժողովրդի թշնամու» ընտանիքի անդամի հիշողություն է: Բոլոր դեպքերում այժմ հնարավորություն ունենք համեմատելու խորհրդային բռնաճշմունքների վերաբերյալ առնվազն երեք սերնդի պատկերացումներ: Մեր գրանցած նյութը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր սերունդ շեշտադրում է տարբեր երևույթներ³⁸: Ինձ համար առավել կարևոր են երկրորդ սերնդի հիշողությունները, քանի որ հենց այս սերունդն է խորհրդային սոցիալականացման իրական պտուղը, և այս մարդկանց հիշողությունները

³⁸ Չմմտ. *К. Бейкер, Ю.Б. Гиппенрейтер. Влияние сталинских репрессий конца 30-х годов на жизнь семей в трех поколениях // Вопросы психологии, 1995, N 2, էջ 66-84:*

խորհրդային առօրյայի մասին, երբ դեռ յուրացվում էին նոր կանոնները, լավագույնս են ներկայացնում «խորհրդային մարդու» կայացումը: Օրինակ, այս տեքստերից կարելի է պատկերացում կազմել, թե ինչպես էին երեխաները յուրացնում լռելու և երկակի կյանքով ապրելու կանոնները, փնտրում ինքնարտահայտվելու նոր ձևերը, ճանաչում ու սահմանազատում «յուրայիններին»՝ ինչպես էր ձևավորվում փոխաբերական լեզուն նա: Մյուս կողմից, պետք է հիշել, որ նույն խորհրդային դաստիարակությունը ստացած մարդն է 1965 թ.³⁹, 1988 թ.⁴⁰ ընդվզել ու ազգային պայքարի դուրս եկել: Ինչը հասկանալու համար անհրաժեշտ է վերականգնել, թե ինչ մասով էին պետական և ընտանեկան արժեքները բախվում, ինչն էր յուրացվում, ինչը՝ թաքցվում, սակայն շարունակում պայմանավորել մարդու սոցիալականացումը:

Այս հետազոտության դաշտը մեր նախկին դաշտային փորձից տարբերվում էր մեր գրուցակիցների լաված լինելու առանձնահատուկ շահագրգռվածությամբ: Բանասացներն իրենք էին ջանում, որպեսզի իրենց հիշողությունները որևէ տեղ պահպանվեն և հնչեն: Երբեմն մեկ բացող հարցը բավարար էր՝ լսելու կյանքի մոտ երկու ժամ չընդհատվող պատմություն: Սա այն քիչ դեպքերից էր, երբ մեր գրուցակիցները լսելով, որ կատարվում է նման հետազոտություն, իրենք էին մեզ գտնում: Արդեն դաշտային աշխատանքներն ավարտված էին, երբ մեր հերթագրված գրուցակիցների ցուցակը սկսեց մոտենալ արդեն իսկ ձայնագրածների քանակին: Մենք ինքներս էլ հասկանում էինք, որ անհրաժեշտ է շտապել, գոնե այն պատճառով, որ ստալինյան բռնությունների մասին անձնական հիշողություն ունեցողների թիվն օրեցօր պակասում է: Նույնիսկ մեր արդեն ձայնագրած մի քանի բանասաց, ցավոք, վախճանվեցին՝ չտեսնելով այս հատորում զետեղված իրենց պատմությունը: Ոմանց հասցրինք ցույց տալ ընդամենը մեր տեսագրած նյութերը, ոմանց նույնիսկ դա էլ չհաջողվեց անել: Երբեմն մեր ցուցակում նշված գրուցակցի մահվան լուրն ավելի շուտ էր հասնում, քան մեր հանդիպման նշանակած օրը...

³⁹ Նկատի ունեն 1965 թ. ապրիլին 24-ին Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցի հետ կապված բազմահազար ցույցը Երևանում, սրա վերջին վերլուծություններից, տես *M. Lehmann*. *Apricot Socialism: The National Past, the Soviet Project, and the Imagining of Community in Late Soviet Armenia* // *Slavic Review*, 2015, N 74, 1, էջ 9-31:

⁴⁰ Նկատի ունեն Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը խորհրդային Հայաստանին միավորելու համար 1988 թ. սկսված համաժողովրդական շարժումը:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ. ԼՅՈՒՍՏՐԱՑԻԱՆ ԵՎ ԴԱՇՏԱՅԻՆ ԷԹԻԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դաշտային կյուրերը գրանցելիս երբեմն հայտնվում էինք մի իրավիճակում, երբ երեկվա գրուցակիցդ, որի մոտ գնացել էիր որպես «գոհի» գավակի, պարզվում էր՝ մեր հաջորդ օրվա գրուցակցի հոր «դահճի» գավակն է: Մեր պատմությունները հաճախ «ցանցային բնույթ» էին ստանում՝ դառնալով մեկը մյուսի շարունակությունը: Նույնիսկ տարբեր բնակավայրերում տարբեր ճանապարհներով գտնված մարդկանց պատմությունները խաչվում էին, և մենք, ակամայից դառնում էինք բազմաթիվ ընտանեկան գաղտնիքների, մեր գրուցակիցներից շատերի համար այդպես էլ անհայտ մնացած բացահայտումների կրող: Երբեմն մեզ ուղեկցողը, ով սիրալիք տարել էր իրեն հայտնի բռնադատվածի ընտանիք՝ որպես հարազատ մարդու տուն, չէր էլ իմանում, որ հենց իր հայրը կամ պապն է եղել այդ ընտանիքն արտաքսողը կամ հետապնդողը: Այս և նմանատիպ իրավիճակները մեզ կանգնեցրին մի շարք բարդ էթիկական խնդիրների առջև:

Բանն այն է, որ բանավոր պատմության մեթոդաբանությունն ունի տարբեր պահանջներ՝ կախված նրանից, թե որ գիտակարգի համատեքստում ես այն իրականացնում: Եթե պատմաբանների համար այն ծառայում է նախևառաջ որպես վավերագրի հնարավորինս մոտ հավելյալ աղբյուր (նշելով մարդկանց անունները, տեղանունները ևն)⁴¹, ապա մարդաբանների⁴² համար այս պատմությունները հաճախ ավելի կարևոր են՝ հասկանալու, թե ինչու է մարդ այս կամ այն երևույթը հենց այդպես հիշում, քան՝ որքանով է այն համարում անցյալը: Ի տարբերություն պատմաբանների, մշակութային մարդաբանների (ազգագրագետների)՝ մասնագիտական էթիկան պահանջում է բանասացի անանունություն, քանի որ նրանց դաշտային ամենակարևոր պատվիրաններից է բանասացին չվնասելը: Մեր դեպքում այս կանոնը շարունակում է գործել՝ անկախ նրանից՝ մեր գրուցակիցը եղել է նախկին համակարգի զոհը, թե՛ հանցագործը: Անուններ հրապարակելու դեպքում վտանգվում են ոչ միայն նախկին հետապնդողները կամ նրանց ժառանգները՝ ակամայից ընկալվելով «մեղսակից», այլև նախկին զոհերը,

⁴¹ Տե՛ս, օրինակ, *И.Б. Орлов. Устная история // Теория и методология истории: учебник для вузов / Под ред. В.В. Алексеева, Н.Н. Крадина, А.В. Кортаева, Л.Е. Гринина. Волгоград: Учитель, 2014, էջ 335-355:*

⁴² Յմմտ. *А. Портелли. Массовая казнь в Ардеатинских пещерах: история, миф, ритуал, символ // Неприкосновенный запас, 2005, №2-3 (40-41) <<http://magazines.russ.ru/nz/2005/2/po27-pr.html>> (15.06.2014):*

ովքեր կարող են վրեժխնդրության թիրախ դառնալ: Մեր տարեց գրուցակիցները երբեմն չէին էլ պատկերացնում իրենց պատմություններում որոշ անուններ «հրապարակելու» հնարավոր հետևանքները: Օրինակ, մեր գրուցակիցներից մեկը կոյուրը հրապարակելու թույլտվությունը տալուց 15 րոպե անց զգուշացրեց. «Հանկարծ ասածս չպատմեք մեզ մատնած [...այս ինչ] մարդու զավակներին, դրանք հիմա ԿաԳեԲե-ում կարևոր պաշտոններ են զբաղեցնում և կարող են ինձ վերացնել, եթե իմանան, որ նրանց ծնողի արածի մասին պատմել եմ»:

Այսպես կոչված «մատնիչների» անունները չհրապարակելու որոշումը պայմանավորված է ոչ միայն մեր գրուցակիցներին «մատնիչների» ժառանգներից պաշտպանելու ձգտումով: Խնդիրը շատ ավելի խորն է և կապված է Հայաստանում լրուստրացիայի բացակայության հետ: Թեև հետագոտական թիմի բոլոր անդամները գիտակցում են լրուստրացիայի անհրաժեշտությունը որպես հասարակության ինքնամաքրման կարևոր գործընթաց, սակայն յուրաքանչյուրն այն իրագործելու մոտեցումներն ու ճանապարհները յուրովի է տեսնում: Տվյալ հետազոտության շրջանակում պայմանավորվել ենք «մատնիչների» անունները չնշել՝ հաշվի առնելով, որ քանի դեռ համապետական լրուստրացիա չի անցկացվել, մեզ հանդիպած դեպքերի հերոսները մյուսների համեմատ կհայտնվեն անհավասար պայմաններում: Չանդարդառնալով լրուստրացիայի հետ կապված բազմաթիվ խնդիրների՝ մի փոքր կանգ առնեն այս հարցի այն քննարկումների վրա, որ գրանցել ենք այս հետազոտության ընթացքում:

Հայաստանյան շարքային քաղաքացու տեսանկյունից լրուստրացիան նախևառաջ նշանակում է պատժիչ մարմինների հետ համագործակցողների անունների հրապարակումը: Հայաստանում դա տեսականորեն առավել նպատակահարմար էր անել թերևս 1990-ականներին, ինչի արդյունքում որոշ պաշտոնյաներ կգրկվեին իրենց պաշտոններից, և այսօր կունենայինք զգալիորեն տարբերվող քաղաքական վերնախավ: Սակայն այն ժամանակ արխիվները բացվեցին մասամբ, պետական անվտանգության մարմինները, եթե նույնիսկ տրամադրում էին գոհերի ընտանիքներին իրենց ծնողների գործերը, «մատնիչների» անունները որպես կանոն թաքցնում էին՝ խուսափելով հնարավոր հաշվեհարդարներից և բարդ քաղաքական իրավիճակում (պատերազմ, տնտեսական ճգնաժամ) հավելյալ սոցիալական լարվածություն ստեղծելուց⁴³: Սակայն սրան զուգահեռ ամբողջատիրական համակարգի հասարակական և քաղաքական դատապարտում նույնպես տեղի չունեցավ: Ավելին, հետխորհրդային դժվարությունների մեջ հայտնված մեր գրուցակիցներից նույնիսկ նրանք, ովքեր այդ համակարգի անմիջական գո-

⁴³ Գ. Խառատյան, ԴԱՆ, Երևան, 2013, Դավիթ Շահնազարյան:

հերն էին կամ նրանց ժառանգները, Խորհրդային Միության հանդեպ կարոտախոս ունեին: Մարդկանց զգալի մասն իրենց բաժին ընկած բռնության պատճառները հակված են տեսնելու իրենց հարևանների և համագյուղացիների մեջ, այլ ոչ թե համակարգի⁴⁴: Այս իրավիճակում, հրապարակելով որոշակի սկզբունքով ընտրված մարդկանց անուններ և սահմանափակելով որոշ սոցիալական խմբերի իրավունքները, հազիվ թե կհասնենք լյուստրացիայի ամենակարևոր նպատակին՝ նախկին կառավարման ձևի դատապարտմանն ու դրա հնարավոր վերադարձը կանխելուն: Ինչպես ցույց տվեց եվրոպական պետությունների լյուստրացիայի փորձը, որոշ դեպքերում այս գործընթացը պարունակում է չարաշահումների մեծ հնարավորություն և միշտ չէ, որ նշանակում է արդարության հաղթանակ, թեև հասարակությունն ամբողջատիրական արժեքներից ազատելու և սոցիալական առողջացման համար կարևոր դեր է ունեցել:

Մեր գրուցակից, 1990-ականների պետական անվտանգության դեկավար պաշտոնյաներից մեկն այսօր լյուստրացիա իրականացնելու հիմնական սահմանափակումը տեսնում է ներկա կառավարման և հատկապես խիստ անկատար դատաիրավական համակարգի մեջ. «Յուրաքանչյուր ավտորիտար երկրում արխիվները կբացվեն այնպես, ինչպես դա հարմար է տվյալ պահի իշխանություններին»⁴⁵: Ավելին, նույնիսկ նախնիների մասին տեղեկություններն այսօր կարող են օգտագործվել՝ մարդկանց վրա անօրեն ճնշումներ գործադրելու և հետապնդելու համար:

Մյուս կողմից, խորհրդային դատաիրավական համակարգում անվտանգության մարմինների կազմած գործերը չեն կարող համարվել մեղքի իրական ապացույցներ: Գործերի մի մասը կտտանքների միջոցով ձեռք բերված ինքնախոստովանություններ են կամ վկայություններ: Գրեթե յուրաքանչյուր գործի համար անհրաժեշտ է նոր քննություն՝ պարզելու՝ ինչ պայմաններում են մարդիկ հնչեցրել այլոց և շատ հաճախ իրենց մերձավորների անունները՝ որպես «երկրի դավաճանների», և երբ են «գործ տվել»՝ հետապնդելով իրենց նեղ անձնական շահը (ըստ մեր բանասացների՝ մեկի բնակարանը ստանալու, մյուսի պաշտոնին նախանձելով, երրորդի կնոջը տիրանալու, երբեմն էլ՝ մանր ու մեծ վրիժառությունից դրդված): Իրավական համակարգը թե՛ նախկինում, թե՛ այսօր հասարակական վստահություն չունի, և նրա կայացրած դատավճիռները չեն ընդունվում որպես իրական մեղքի ապացույց: Մեզ հասանելի դատական գործերն էլ ավելի հաճախ գալիս էին փաստելու այն իրողությունը, որ «դահիճների» և «գոհերի» միջև սահմանը շատ պայ-

⁴⁴ Տե՛ս այս հատորում 3. *Մարդկանց*, Ո՞վ էր մեղավոր. ստալինյան բռնությունների պլանավորման և իրականացման մասին բռնադատվածների ու նրանց ժառանգների պատմաշարը:

⁴⁵ 3. *Խառատյան*, ԴԱՆ, Երևան, 2014, Դավիթ Շահնազարյան:

մանական է, իսկ երբեմն ուղղակի բացակայում է: Ստիպված ենք հաշվի առնել այն հանգամանքը, որ, ի տարբերություն մարդկանց կասկածների, անհատական գործերում երբեմն հիշվում են իրենց մերձավորների անունները, և դրանց բացահայտումը զոհերի համար հոգեբանորեն շատ ավելի ծանր հետևանքներ կարող է ունենալ, քան իրականության չիմացությունը: Երբեմն մարդիկ գիտակցաբար հրաժարվում էին «մատնիչի» անունն իմանալու հնարավորությունից՝ ընդունելով, որ այդ «մատնողներն» իրենք էլ համակարգի զոհ են, և այդ իմաստով նրանց անուններն էական չեն⁴⁶: Կամ հրաժարվում էին նրանց մասին տեղեկություն ստանալուց՝ իրենց անձնական հանգստության և վրեժխնդրության առիթ չստեղծելու պատճառով⁴⁷: Մեր զրուցակիցներից մեկը, ով հավատացած էր, որ լյուստրացիան անհրաժեշտ է, հորը խնայելով՝ նրանից թաքցրել էր, որ «մատնողը» հարազատ եղբայրն էր՝ հասկանալով, որ դա ամենամեծ ցավը կպատճառի ճամբարներում երիտասարդությունը կորցրած մարդուն⁴⁸: Այսինքն, եթե մարդիկ պատրաստակամ են լյուստրացիոն գործընթացին մասնակցելու, գործնականում, նույնիսկ զոհերը, պատրաստ չեն այն իրենց հարազատների վրա տարածելուն:

Ամենայն հավանականությամբ որևէ լյուստրացիոն գործընթացից դուրս կմնան պատժիչ օրգաններում աշխատող առանձին պաշտոնյաներ, ովքեր «զոհերին» փրկելու կամ աջակցելու տարաբնույթ միջամտությունների փորձեր են արել, պարզ է, որ դրանք որպես կանոն իրականացվել են գաղտնի: «Օրգանների» աշխատողների կերպարները երբեմն այնքան են բարդանում, որ անհնարին է նրանց տեղավորել «դրական» կամ «բացասական» կերպարների մեջ: Նույն պատմության ընթացքում նրանց կարգավիճակը կարող է «դահիճից» փոխվել «փրկչի»: Ինչպես դա տեղի ունեցավ Ռուստ Աբրահամյանի հոր ձերբակալության ժամանակ, երբ ՆԳԺԿ-ի աշխատակիցներին հյուրասիրելով այդ ընտանիքը կարողանում է խուսափել 1930-ականների բռնություններից և նորից թիրախավորվում է 1949 թ. հայերի զանգվածային աքսորի ժամանակ: Այս անգամ Սիբիր են ուղարկում ընտանիքի հորն ու նրա հետ ապրող կրտսեր որդուն, իսկ մյուս՝ արդեն չափահաս և առանձին ապրող որդիները ենթարկվում են տարբեր՝ ավելի մեղմ զրկանքների: Եվ այս անգամ ևս 1930-ական թթ. ՆԳԺԿ-ի իրենց փրկած նույն երկու աշխատակիցներ Աբրահամյանի որդիներից մեկին ճանաչելով, փրկության ձեռք են մեկնում. փոխելով նրա պաշտոնը՝ դարձնում են պա-

⁴⁶ Տե՛ս այս հատորում՝ Ռ. Հարությունյան, «Ինձ համար ինքը լավ մարդ էր»:

⁴⁷ ՀԱԻ ԴԱՆ, Արագածոտնի մարզ, 2014:

⁴⁸ Տե՛ս Սեմինար – քննարկում Կապանում. խորհրդային շրջանի քաղաքական բռնաճնշումների Հայաստանում և դրանց հետևանքները // Armenia Total(itar)is, Կապան, 2013, <<http://armeniatotalitaris.am/?p=4340>>:

կաս խոցելի և ազատում հնարավոր ձերբակալությունից⁴⁹: Մեկ այլ պատմության մեջ «էկկավեդեիստի բարիությունն» արտահայտվում է նրանում, որ, անկարող լինելով գնդակահարությունից փրկել անմեղ դատապարտյալին, նա կազմակերպում է վերջինիս հրաժեշտի հանդիպումն ընտանիքի հետ⁵⁰: Այս կարգի դեպքերը որևէ արխիվ ի վիճակի չէ բացահայտելու: Իհարկե, նման «սպիտակ» էջերը չեն փոխհատուցում նույն մարդու ձեռքով իրականացված մյուս հանցագործությունները, ինչն անխուսափելի էր, եթե նա պաշտոն է զբաղեցրել ՆԳԺԿ-ում, սակայն դրանք հաշվի չառնելը նշանակում է արդարության դեմ մեղանչել⁵¹:

Ամիջական բռնաճշումներին ենթարկվածների քանակն օրեցօր կրճատվում է, և այսօր ավելի շատ գործ ունենք թե՛ «գոհերի» և թե՛ «դահիճների» ժառանգների հետ: Սակայն նույնիսկ մահացածների անունները բարձրաձայնելու դեպքում բխվելու ենք մի կարևոր հանգամանքի՝ մեղքի համար «ընտանեկան պատասխանատվություն կրելու» հասարակական ընկալման հետ, որը, բացի ավանդական նորմ լինելուց⁵², թերևս ամրապնդվել է նաև խորհրդային բռնաճշումների գործադրած տրամաբանությամբ, երբ «ժողովրդի թշնամու» ընտանիքի անդամները համարվում էին մեղսակից: Մեր զրուցակիցները մեծ մասամբ բավականին սթափ էին գնահատում «դավաճանների» ժառանգների հանդեպ վերաբերմունքն ու ստեղծված իրավիճակը: Վրեժխնդրության բացակայությունն ու իրենց դրական վերաբերմունքը երբեմնի «թշնամու» ժառանգի հանդեպ շատերը հիմնավորում էին՝ մեջբերելով նույն Ի. Ստալինի խոսքերը. «сын за отца не отвечает» [«որդին հոր համար պատասխանատու չէ»]: Ընդ որում, եթե զավակները գիտակցում և ընդունում էին ծնողների մեղքը, նրանց ավելի բարձր էին գնահատում և հիմնականում ծնողի գործած մեղքերի հետ չէին կապում: Գրանցել ենք նաև հակառակ դեպքեր, երբ որդիներն ընդհանուր սեղանի շուրջը իրենց «վխրագործ» հայրերի պատվին բաժակ են բարձրացրել և այդ պատճառով հայտնվել անհարմար վիճակում՝ անսպասելիորեն բխվելով այդ կենացին միանալու սեղանակիցների հրաժարմանը⁵³:

⁴⁹ Ո. Աբրահամյան, «Նույն ՆԿՎՌ-իստները եղել են և՛ չար, և՛ բարի»:

⁵⁰ Զ. Խառատյան, ԴԱՆ, Երևան, 2012, Հասմիկ Տեր Ավագյան, տե՛ս նաև Զ. Տեր Ավագյան // Armenia Totalitarianis, <<http://armeniatotalitaris.am/?p=1790>> (15.03.2014):

⁵¹ Այս խնդրին, թերևս, լավագույնս անդրադարձել է բազմաթիվ մրցանակների և քննարկումների արժանացած Ֆլորիան Յենկել ֆոն Դոններսմարկի «Ուրիշների կյանքը» գ/ֆիլմը (2006): Ֆիլմի և այնտեղ բարձրացված խնդիրների վերլուծությունը տե՛ս Totalitarianism on screen: The Art and Politics of The Lives of Others. Eds.: C.E. Scott, F. Taylor IV, University Press of Kentucky, 2014:

⁵² Հմմտ. ավանդական սովորույթը՝ աղջիկ ուզելիս կամ տալիս խնամի ընտանիքի «ժառանգականությունը» հաշվի առնելը: Տե՛ս, օրինակ, Գ. Շազոյան, «Յոթ օր, յոթ գիշեր», էջ 43-44:

⁵³ ՀՄԻ ԴԱՆ, Լոռի, 2014:

Այս բաժնում ներկայացված խնդիրները հաշվի առնելով՝ հետազոտական թիմը, որոշ անհատական վերապահումներով, հիմնականում եկավ այն կարծիքին, որ շատ ավելի կարևոր են բռնաճնշումների երևույթի և խնդրի բարձրաձայնումն ու քննարկումը, քան առանձին անունների հրապարակումը⁵⁴: Կարելի է ասել, որ այս աշխատանքում նախընտրեցինք հետևել բանավոր պատմության ոչ թե պատմագիտական, այլ մարդաբանական թևի դաշտային էթիկայի սկզբունքներին:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐԳԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՍՏԱՌԸ

Հայաստանի խորհրդայնացումը ենթադրում էր նախևառաջ նոր սոցիալական հարաբերություններ, որոնք խորհրդային արդիականացման և նախապայմանն էին, և հետևանքը: Ինչպես նկատում է Է. Հորսբաումը. «Մարդկության 80%-ի համար միջնադարն անսպասելիորեն ավարտվեց 1950-ականներին»⁵⁵: Ավանդական շատ հարաբերություններ և նորմեր Հայաստանում նույնպես իրենց ավարտը գտան միայն XX դ.՝ մեծ հաշվով ազդվելով խորհրդային արդիականացումից, որն այս գործընթացի ամբողջատիրական տարատեսակներից էր (հմմտ. նաև ֆաշիստական Գերմանիայի և Թուրքիայի արդիականացման օրինակները)⁵⁶: Դեռ XIX դարի վերջում իբրև միասնական սոցիալ-տնտեսական միավորներ գյուղական գերդաստանների⁵⁷ քայքայումը⁵⁸ կտրուկ արագացավ և, խորհրդայնացման հետ կապված, ընդունեց նոր տրամաբանություն՝ միաժամանակ ձևափոխելով գյուղական համայնքի ողջ կառուցվածքը: Չնայած դրան, ձևափոխված ազ-

⁵⁴ Բացառություն են կազմում առավել հայտնի քաղաքական գործիչների (գրող, նկարիչ ևն) անունները, ովքեր արդեն դարձել են հանրային քննարկման առարկա և հասարակության համար ունեն նաև խորհրդանշական իմաստ:

⁵⁵ Э. Хорсбаум. Эпоха крайностей, Короткий двадцатый век 1914-1991. М.: Издательство «Независимая газета», 2004, էջ 311:

⁵⁶ Տե՛ս X. *Арендт*. Истоки тоталитаризма. М.: ЦентрКом, 1996, էջ 407-622:

⁵⁷ Հայկական գերդաստանների մասին տե՛ս, օրինակ, В. Бдоян. Кровнородственный «азг» и родственные отношения у армян, СЭ, 1952, № 1; Э. Карапетян. Армянская семейная община, Ер.: Издательство АН Армянской ССР, 1958: *Նույնի՛* Родственная группа «азг» у армян, Ер.: Издательство АН Армянской ССР, 1966: Ռ. *Նահապետյան*, Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ). պատմաագագագրական ուսումնասիրություն, Եր., ԵՊՀ հրատ., 2012 նն:

⁵⁸ Ընդ որում այն քայքայվում էր ոչ օրինաչափ ճանապարհով՝ հաշվի առնելով արևմտահայերի ցեղասպանության հետևանքով ընտանիքների զգալի մասի ֆիզիկական ոչնչացումն ու ձգնաժամային իրավիճակը և Առաջին համաշխարհային պատերազմի ազդեցությունը ընդհանրապես ու Կովկասի ազգամիջյան ընդհարումներն արևելահայերի դեպքում:

գակցական կապերը շարունակում էին գործել մինչև ուշխորհրդային տարիներ, իսկ հետխորհրդային շրջանում, շահագործվելով ընտրական գործընթացներում⁵⁹ և մասամբ էլ ստանձնելով որոշ տնտեսական գործառույթներ⁶⁰, դրանք որոշ չափով վերակենդանացան կամ նորից ստեղծվեցին:

Ավանդական, մինչարդիական, առանձին հարաբերություններ խորհրդային պայմաններում ստացել էին նոր գործառույթներ: Օրինակ, կոլտնտեսականների որոշ բրիգադների հիմքում հաճախ ընկած էին մեծ ընտանիքներ՝ մեծ ազգակցական խմբեր: Պլանի կատարումն ու գերակատարումն, օրինակ, ընկալվում էր, բացի աշխատանքային պարտավորությունից, նաև որպես ազգակից բրիգադիրին աջակցություն⁶¹: Կոլեկտիվացման տարիներին «կոլեկտիվ մտնելու» որոշումը հաճախ նույնպես ընդունում էին գերդաստանային մակարդակում՝ ամբողջ ազգով. «...երբ սկսեցին կոլխոզ անել, հորողերներս, մեր ազգագանները՝ Տոնոյանները, բաժանվեցին, բոլորը տանը տուն էղան, թե՛ ինը տուն՝ կոլխոզ սարքին: Առաջին համարն էր Աղասին, մենք 6-րդ համարն էինք, թե՛ 7-ը, իսկ Ավագ պապը [որ այլ ազգից էր] 52-րդ համարն էր կոլխոզի ցուցակում»⁶²: Սա խոսում է այն մասին, որ գերդաստանները դեռ շարունակում էին մնալ ինքնաբավ, ինքնակազմակերպվող միավորներ, որոնք կարող էին նոր իշխանությունների համար լինել ինչպես «կոլեկտիվ կառավարման» հարմար գործիք, այնպես էլ խոչընդոտ, եթե հանկարծ գերդաստանը որոշեր մերժել պետական որևէ որոշում: Պետական պատժիչ մեքենան շատ արագ թիրախավորեց ավանդական համայնքը՝ դրա մեջ տեսնելով նաև կարևոր գաղափարական մարտահրավեր. պայքար հին աշխարհի դեմ: Թեև մինչարդիական հասարակությունը և արդիականության ծնունդ ամբողջատիրականը շատ տարբեր երևույթներ են, բայց նրանց միջև կա մի ընդհանրություն. երկուսում էլ անձը գնահատվում է միայն որպես խմբի անդամ, և նրա իրավունքներն ու ցանկություն-

⁵⁹ Տե՛ս G. Shagoyan. From Ideologies to Technologies: an Anthropological overview of Elections as an Indicator of Modernization and Counter-Modernization of Armenian Society // South Caucasus at a Crossroad. Thorny Realities and Great Expectations, S. Asatiani, N. Lejava (eds.), Heinrich Boll Stiftung South Caucasus, 2014, էջ 108-121; L. Abrahamian, G. Shagoyan. From Carnival Civil Society toward a Real Civil Society: Democracy Trends in Post-Soviet Armenia // Anthropology & Archaeology of Eurasia, Winter 2011-12, Vol. 50, No. 3, էջ 11-50; Л. Абрамян. Глобализация по-деревенски: армянский вариант // Сельские метаморфозы, Краснодар: Издательский дом «Дедкофф», 2008, էջ 41-74; Մ. Գաբրիելյան, Հայկական ընտանիքն անցումային շրջանում (ազգաբանական ուսումնասիրություն), Եր. Ա.հ., 2005:

⁶⁰ Հմմտ. L. Աբրահամյան, Ա՛զգ-պետություն, թե՛ ընտանիք-պետություն. հայ ինքնության ընտանեկան առանձնահատկությունները. ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները: Հանրապետական գիտաժողովի նյութեր՝ նվիրված Էմմա Կարապետյանի հիշատակին, Երևան, 2001, էջ 12-17, Գաբրիելյան Մ. Հայկական ընտանիքն անցումային շրջանում:

⁶¹ Գ. Շաղոյան, ԴԱՆ, Ձորագյուղ, Գեղարքունիքի մարզ, 2011:

⁶² Գ. Շաղոյան, ԴԱՆ, Պարույր Տոնոյան, Գյումրի, 2012:

ները ստորադասված են «խմբի» շահերին: Տարբեր են «խմբի» սահմանները. եթե մինչարդիականում դա կարող էր լինել մեծ ընտանիքն ու համայնքը, ամբողջատիրականում «ժողովուրդն» էր, կամ, ըստ Հաննա Արենդտի, զանգվածը⁶³, որտեղ այլևս անտեսանելի են դասակարգերն ու սոցիալական խմբերը, իսկ քաղաքականացված հայացքներ ունեցող մարդուն փոխարինում էր անտարբեր և առաջնորդի որոշմանն անխոս ենթարկվող մեծամասնությունը⁶⁴: Այդ «զանգվածային» միատարրությանը հասնելիս բոլոր «տարբերվողները» կամ նույնիսկ տեսականորեն դրա կարողությունն ունեցողներն այս կամ այն կերպ չեզոքացվում էին: Այսպես, գերդաստանում կամ համայնքում դիրք, ազդեցություն, հեղինակություն, որևէ ինքնուրույնություն (տնտեսական, սոցիալական) ունեցողներն առաջինն էին թիրախավորվում և տարբեր, նույնիսկ անհեթեթ (օրինակ՝ «կոպիտ է վարվել կոլխոզի եզերի հետ»)՝ մեղադրանքներով ձերբակալվում: Ըստ էության նման համակարգերի համար մեղադրանքը կարևոր չէր, կարևորը միջին և ստորին մակարդակներում առաջնորդի կարողությամբ օժտված մարդկանց մեկուսացումն էր: Եթե նույնիսկ դա արվում էր ոչ հատուկ գիտակցությամբ, այլ տեղում տարբեր պաշտոնյաների կողմնորոշումով՝ թելադրված ստեղծված իրավիճակից, շուտով այն վերածվում էր համատարած պրակտիկայի: Մեր գրանցած կյոթերից ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ գյուղի հատկապես հեղինակավոր, ակտիվ մարդիկ էին դառնում բռնաճնշումների առաջին թիրախը, և այս մարդկանց, ինչպես նաև նրանց ընտանիքների մեկուսացումը՝ որպես կողմնակի արդյունք, էականորեն նպաստում էր ազգակցական կապերի թուլացմանը: Կասկածամտությունն ու համատարած վախն էլ հանգեցնում էին միջանձնային շփումների նվազմանը: «Ժողովրդի թշնամու» ընտանիքի անդամներն այնքան էին մեկուսացած, որ հնարավորություն չունեին իրականացնելու փոխօգնություն պահանջող տարրական գյուղատնտեսական աշխատանքներ⁶⁵: Սա առանձնապես հետաքրքիր է, քանի որ, որպես մեկուսացման հետևանք, տվյալ ընտանիքը սկսում էր տնտեսական որոշումներ կայացնել ինքնուրույն, սակայն չափազանց փոքր հնարավորությունների պայմաններում: Եվ, հակառակ այն տարածված պատկերացման, որ խորհրդայնացումը ենթադրում էր նախևառաջ խոշոր տեխնիկական առաջընթաց, այս մեկուսացված ընտանիքներն ստիպված դիմում էին գոյատևման առավել արխայիկ ռազմավարությունների (հմմտ. ձեռքով ցանելու և հողը մշակելու տեխնոլոգիաները)⁶⁷: Տարբեր ընտանիքների առօ

⁶³ X. Арендт. Истоки тоталитаризма, էջ 416-462:

⁶⁴ *Նույն տեղում*, էջ 407-433:

⁶⁵ Դ. Խառատյան, ԴԱՆ, Սյունիք, 2013:

⁶⁶ Տես Պ. Տոնոյան, Շամամ տատի գոյատևելու հնարքները:

⁶⁷ Պ. Տոնոյան, Շամամ տատի գոյատևման հնարքները:

ըյա կյանքի նկարագրությունները տեսանելի են դարձնում երկրի ծավալով միատեսակ թվացող գործընթացների գործնական բազմազանությունն ու առօրյա պրակտիկաների ընտրության հնարավորությունները⁶⁸:

Ի տարբերություն հայաստանյան գյուղերում ստեղծված իրավիճակի՝ արտարավայրերում նույնիսկ հեռու ազգականները հաճախ դառնում էին մեկը մյուսի համար կարևոր հենարան՝ երեխաների ուսումը շարունակելու, միմյանց ընտանիքում ապրելու, օտար միջավայրում միմյանց օգնելու ևն հարցերում, չնայած այժի է ընկնում նաև ամուսնալուծությունների անսովոր մեծ քանակը⁶⁹:

Հայրենիքում մնացած ազգականները հաճախ վախենում էին արտրվածներին նույնիսկ նամակ գրելուց («Է, նամակ գրեի՞ք՝ գուկային մեզի էլ կտանեին... Այդ չեք պատկերացնում, թե ինչեր էր կատարվում»)⁷⁰: Վախի մթնոլորտն այնպիսին էր, որ շատերը, որպես կանխարգելիչ միջոց, դատապարտվածների և նրանց ընտանիքների հետ խզում էին բոլոր կապերն ու շփումը⁷¹:

Կային, սակայն, ընտանիքներ, ովքեր արտոյալներին գրում էին գրեթե ամեն օր: Արփենիկ Ալեքսանյանի սիրիայան օրագրից իմանում ենք, որ երբեմն նրանք օրական կարող էին 16 նամակ⁷², մի քանի ծանրոց ստանալ: Բաժանված ընտանիքների միջև այս կապերը սիրիայան դաժան պայմաններում գոյատևելու կարևոր գրավականներից էին: Շույն օրագրից բավականին պարզ պատկեր ենք ստանում, որ միայնակ արտրվածների մեջ մահացության դեպքերը շատ ավելի հաճախ էին, քան ընտանիքով բռնադատվածների: Երբեմն որոշ ընտանիքներ կամավոր իրենց վրա էին վերցնում արտորում հայտնված միայնակների խնամակալությունը: Խմբային պարտավորվածության զգացողությունը կարծես ավելի էր մեծանում, եթե օգնության կարիք ուներ համերկրացին, առավել ևս, որ 1949 թ. արտորի զոհերի զգալի մասը Թուրքիայում իրագործված ցեղասպանությունից փրկվածներն էին, ովքեր նոր պայմաններում գտնում էին իրենց դեռ Արևմտյան Հայաստանի «համերկրացուն» և հայկական համայնքի ներսում հաճախ ստեղծում մի փոքր «ենթահամայնք»: Այս իմաստով առավել ծանր էր հայրենադարձների վիճակը, ովքեր 1949 թ. բռնարտորի մի ուրույն խումբ էին: Ի տարբերություն

⁶⁸ Հմմտ. *А. Людке. История повседневности в Германии*, էջ 53-83:

⁶⁹ Շնորհակալություն եմ հայտնում 1949 թ. բռնարտորի՝ Հայաստանի արխիվային նյութերին քաջատեղյակ Սաթենիկ Ֆարամազյանին՝ նման օրինակների մասին իր տեղեկությունները մեզ հաղորդելու համար:

⁷⁰ *Գ. Շազոյան, ԴԱՍ, Գյումրի, 2013*:

⁷¹ Տե՛ս, օրինակ, *Փ. Հարությունյան // Armenia Total(itar)is <<http://armeniatotalitaris.am/?p=3942>> (15.05.2014)*:

⁷² *А. Алексанян. Сибирский дневник 1949-1954 гг.*, էջ 128:

խորհրդային փորձառու քաղաքացիների՝ երկրի ներսում նրանք հիմնականում ազգականներ չունեին, ուստի և ծանոցի, նամակի, որևէ աջակցության ակնկալիքը նույնպես շատ ավելի նվազ էր: Այս ընտանիքների հայրերը հայրենաստության սխալ որոշում կայացնելու և իրենց հարազատներին նման դաժան փորձության ենթարկելու համար հաճախ տառապում էին մեղքի սուր զգացողությունից՝ ընդհուպ մինչև ինքնասպանություն գործելը՝ նույնիսկ արտոքից վերադառնալուց հետո⁷³: Մինչդեռ մյուս բռնադատվածների միջավայրում ընտանիքի առջև մեղանշելու դեպք ունենք գրանցած թերևս միայն գերի ընկնելու համար արտրվածի մոտ⁷⁴:

Խմբային փոխօգնությունն արտրավայրի ծանր պայմաններում գոյատևելու ամենաարդյունավետ ռազմավարություններից էր⁷⁵: Բուն արտրավայրերը (ոչ բռնադատվածների ճամբարները) կարծես դուրս էին մնացել «խորհրդային երկրի» որոշակի տրամաբանությունից՝ վերածվելով մի մեծ փակ համակարգի, որի ներքին կյանքը մեծ մասամբ կախված էր արտրավայրում հայտնվածների ինքնակազմակերպումից և փոխըմբռնումից: Այն, որ այս երկու «խորհրդային աշխարհներն» ունեին խոսքի և մտքի ազատության տարբեր պայմաններ, լավագույնս երևում է Արփենիկ Ալեքսանյանի սիբիրյան օրագրի մի դրվագից, որտեղից հասկանում ենք, որ արտրի առօրյայի նկարագրությունը Թբիլիսիում ազատության մեջ մնացած այս ընտանիքի միակ անդամի՝ օրագիր գրողի քրոջ համար հնչում է որպես վտանգավոր այլախոհական տեքստ, մինչդեռ դրանց բարձրաձայնումը բուն արտրում անցնում է ուղղակի աննկատ⁷⁶: Իհարկե, սա պայմանավորված է նաև նրանով, որ, ի տարբերություն արտրվածի, սեփական տանն ապրողն ավելի շատ է վախենում ունեցածը՝ տունը, աշխատանքը, ծանոթ միջավայրը, քիչ թե շատ բարվոք կյանքը, կորցնելուց: Այս երկու իրողություններն առաջացնում են երկու գործընթացներ. կենտրոնում դրանք գնում էին սոցիալական հարաբերությունների ամբողջատիրական արդիականացման ուղղությամբ. հանրությունն «ատոմավորվում»⁷⁷ էր, մինչդեռ արտրում կարծես տեղի էր

⁷³ Այս դիտարկման համար շնորհակալություն եմ հայտնում ամերիկահայ հետազոտող Յագել Անթառամյան Յոնֆմանին՝ ամերիկահայ բռնադատվածների միջավայրում իր դաշտային աշխատանքից որոշ տեղեկություններ պատմելու համար:

⁷⁴ Տե՛ս այս ժողովածուում *Ս. Խորշոռյան*, Խոհարարի պահապան շերեփը, որը կոտրվեց Սիբիրում, նաև *Սերգեյ Խորշոռյան // Armenia Total(itar)is*, <<http://armeniatotalitaris.am/?p=2264>> (17.08.2015):

⁷⁵ Հմմտ. *Գ. Շաջոյն*. Возвращаясь в «советское сейчас»: дневник-летопись-мемуары Ареник Алексанян, Сибирский дневник 1949-1954 гг. Ереван: Издательство «Гитутюн» НАН РА, 2007, 408 էջ (Антропология памяти. Вып. I). ISBN: 978-5-8080-0703-1 // Ab Imperio, 2012, N 2, էջ 569-581:

⁷⁶ *Ա. Ալեքսանյան*. Сибирский дневник 1949-1954 гг., էջ 256:

⁷⁷ Այստեղ «ատոմավորված» եզրն օգտագործված է Հ. Արենդտի առաջարկած իմաստով, տե՛ս *Х. Арендт*. Истоки тоталитаризма, էջ 317:

ունենում դրան հակառակ գործընթացը՝ գործի էին դրվում համայնքային, խմբային փոխօգնության և ինքնակազմակերպման ոչ ֆորմալ մեխանիզմներ, առանց որոնց ուղղակի անհնարին էին բնակլիմայական և տնտեսական ծանր պայմաններում գոյատևելն ու նոր տարածքներ յուրացնելը: Այդ մեխանիզմներն ավելի բնորոշ էին ոչ թե արդիականացված, այլ ավանդական հասարակությանը: Այսինքն, արդյունաբերական մոդեռնացմանը զուգահեռ (այդ թվում՝ սիրիդյան, միջինասիական ահռելի տարածքների յուրացումն ու դրանց շահագործումը բռնադատվածների և այստեղ արտորվածների հաշվին) ընթանում էր հասարակական հարաբերությունների կոնտոնդերնացման գործընթաց⁷⁸:

ԳՅՈՒՂ ԿԱՆԳՆԻ, ԳԵՐԱՆ ԿԿՈՏՐԻ. ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆԻԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԲՈՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Էթնիկությունը, խորհրդային կայսրության վարչարարության հիմքերից մեկը լինելով, երբեմն դառնում էր սան բռնաճնշումների սկզբունք: «Էթնիկ փոքրամասնության» կարգավիճակը բռնաճնշումների շրջանում կարող էր խոցելիության տարբեր պայմաններ ենթադրել, օրինակ՝ թիրախավորել կամ դարձնել ավելի անտեսանելի: Երբեմն նման պայմանները կախված էին երկրում կամ հանրապետություններում ընթացող որոշակի բռնաճնշումների ալիքից: Օրինակ, 1949 թ. արքարին, որն Անդրկովկասից և Սևծովյան ավազանից թեև տարբեր հողվածներով, բայց ըստ էության հայերին բռնագաղթեցնելու մի ծրագիր էր, ուստիև այլազգիների քանակն աննշան էր. Հայաստանից 13 272 բռնագաղթվածների ցուցակում կային ընդամենը 17 ոչ հայ՝ 6 ասորի, 4 ադրբեջանցի, 4 հույն, 2 ռուս, 1 քուրդ⁷⁹: Սակայն 1930-ականների դեպորտացիաների ընթացքում, երբ «անվստահելի տարրերից» մաքրում էին ԽՍՀՄ-ի թուրքական և իրանական սահմանները⁸⁰, Հայաստանից նախկին թուրքահպատակ հայերի հետ մեկտեղ արտրեցին մի քանի հարյուր քրդեր⁸¹:

Բացի որոշակի «էթնիկ խմբերից», ոչ պակաս հետևողական թիրախավորվում էին կրոնական համայնքները: Միայն «կրոնավոր», առավել

⁷⁸ Չմմտ. *В.А. Красильщиков*. Вдогонку за прошедшим веком. Развитие России в 20 веке с точки зрения мировых модернизаций. М.: РОССПЭН, 2010, էջ 43-62; *А.С. Фомина*. История модернизации в России. М., 2003, էջ 30-33:

⁷⁹ *Նույն տեղում*, էջ 232:

⁸⁰ *Н.Л. Поболь, П.М. Полян*. Сталинские депортации 1928-1953, М.: 2005, էջ 75-80:

⁸¹ Հայաստանից դեպորտացված քրդերի ճշգրիտ թվերը մինչ օրս պարզված չեն: Տե՛ս *Н.Л. Поболь, П.М. Полян*. Сталинские депортации 1928-1953, էջ 76, прим. 1:

ևս հոգևորական, լինելու պատճառով շատերն ինքնըստինքյան ճանաչվեցին խորհրդային հասարակարգին «անհարազատ տարր»: Հայաստանում խորհրդային իշխանության առաջին կրոնավոր գոհերից դարձան հայ առաքելական եկեղեցու սպասավորների կողքին նաև այլ կրոնական համայնքների առաջնորդներ (հմմտ. կաթոլիկ Ն. Ակիլյանին, ավետարանչական եկեղեցու լենինականյան համայնքի ղեկավար՝ Ռ. Մելիք-Աղամյանին)⁸²: Մինևույն ժամանակ այդ համայնքները կարծես ավելի համախմբված էին, և տեղի մատնիչները պակաս եռանդով էին գործ տալիս համագյուղացիների վրա, կամ բուն համայնքում ձևավորվել էին դրանց «մատնությունների» ավելի արդյունավետ մեխանիզմներ: Այսպես, օրինակ, Փանիկի կաթոլիկ համայնքում, ըստ գյուղի բնակիչների, կողքի գյուղերի համեմատ, ձերբակալվածների քանակն ավելի փոքր էր ինչպես 1930-ականներին, այնպես էլ 1949 թ.⁸³: Այստեղից 1949 թ. արտրվել էին այն ընտանիքները, որոնց անդամները Հայրենական պատերազմում գերի էին ընկել: 1949 թ. այս գյուղից արտրվածների աննշան քանակը թերևս պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ գյուղի հիմնական բնակչությունը կազմում էին դեռ XIX դ. Ներգաղթածները, իսկ 1949 թ. խորհրդային արտրի թիրախը հիմնականում Թուրքիայում ծնվածներն էին («уроженец Турции») ու նրանց ընտանիքները:

Կաթոլիկ համայնքի «մենք»/«նրանք»-ի ինքնության սահմանն անցնում էր նախևառաջ ըստ կրոնական պատկանելության ու հակադրվում մեծամասնություն կազմող հայ առաքելական եկեղեցու հետևորդներին կամ իրենց աթեիստ հոջակածներին, ովքեր կաթոլիկ համայնքի համար մնում էին ավանդական «հայ-ֆրանկ» հակադրության դաշտում: Հետևաբար համագործակցությունն իշխանությունների հետ ի վնաս համագյուղացիների միաժամանակ ձեռք էր բերում կրոնական ուրացության երանգ: Մյուս կողմից, այս համայնքի ներկայացուցիչները քաղաքական կամ վարչական առաջխաղացման համար չունեին երևանյան քաղաքական վերնախավում անհրաժեշտ սոցիալական կապիտալը և, հակառակը, օտար համարվելու մի հավելյալ՝ կրոնական պատճառ կար: Խորհրդային տարիներին այս գյուղի համայնքային կյանքը բավականին տարբերվում էր իր գաղափարախոսական համարձակությամբ (օրինակ, դասավանդման որոշակի ազգայնականությամբ, ընտանեկան և համայնքային կրոնական պրակտիկաներով, խորհրդային տարիներին համայնքի հաշվին եկեղեցիների վերակառուցմամբ ևն)⁸⁴, ինչը, կարծում ենք, բացատրության համար հավելյալ ուսումնասիրության կարիք ունի: Սակայն ինչպես որևէ կրոնական պրակտիկայի

⁸² Նույն տեղում, էջ 13; հմմտ. Ա. Մանուկյան, Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները (1930-1938 թթ.), «Ամրոց», Եր., 1997:

⁸³ Գ. Շաղոյան, ԴԱՆ, Փանիկ, 2012, Սամվել Գևորգյան:

⁸⁴ Գ. Շաղոյան, ԴԱՆ, Փանիկ, 2012, Սամվել Գևորգյան:

իրականացում, այնպես էլ, դա հաշվի առնելով, այդ համայնքների ներկայացուցիչներին ղեկավար պաշտոնների նշանակելուց խուսափելը ունենի ոչ պաշտոնական բնույթ:

Բացի կրոնական փոքրամասնություն կազմող, նաև հայ առաքելական եկեղեցու հետևորդներն ու ուղղակի քրիստոնյա հավատացյալները տարբեր ճանապարհներ էին գտնում՝ իրականացնելու ոչ միայն անհատական կրոնական ծեսեր (հմմտ. գաղտնի մկրտություններ)⁸⁵, այլև՝ համայնքային ծեսեր, որոնք ավելի շատ ժողովրդական քրիստոնեության բնույթ ունեին, օրինակ՝ մատաղ և ուխտագնացություն կամ «ընտանեկան սրբերի» կառուցում, որին կարող էին մասնակցել մի քանի ընտանիք, իսկ երբեմն՝ գրեթե ամբողջ գյուղը⁸⁶: Այս շրջանում եկեղեցու հիմնական հենարանն էին դարձել այն հավատացյալները, ովքեր կամավոր իրենց վրա էին վերցրել լքված սրբավայրերի խնամքը, ժամանակ առ ժամանակ փորձում էին այդ տարածքներում իրականացնել որևէ ծես: Այդ մարդիկ հիմնականում համայնքի տարեց տղամարդիկ էին, որոնց շուտով փոխարինեցին կանայք, ում իշխանություններն ավելի քիչ էին նկատում, ուստի տղամարդկանց համեմատ նրանք, կրոնական ծեսեր իրականացնելով, ավելի քիչ էին վտանգվում⁸⁷: Այսպիսով, ժողովրդական քրիստոնեության հիմնական ծիսարարությունը՝ տղամարդկանց արճիճ/մոմ թափելու, մաղ պտտեցնելու, վախ բռնելու և այդ կարգի այլ ծիսակրոնական պրակտիկաներ տեղափոխվեցին կանանց տիրույթ⁸⁸, կանայք «հովանավորության» տակ վերցրին նաև «տան սրբերին», որոնք հաճախ «բնակվում» էին խոհանոցում՝ կանանց տարածքում: Ուշագրավ է, որ որոշ համայնքներում, որոնք հայտնի են իրենց ուխտավայրերով (Կոտայքի մարզի մի քանի գյուղեր, որտեղ Մեծ Զատիկին հաջորդած 6 շաբաթներին մինչև այսօր հաջորդում են ուխտագնացություններ), ոչ միայն ուխտավայրի ամենամոտ գյուղի բնակչությունն էր մասնակցում արարողություններին, այլև այստեղ էին հավաքվում ամբողջ տարածաշրջանի ուխտավորները: Սա այն եզակի դեպքերից է, երբ կուսակցական վերնախավն ու պետական կառույցներում պաշտոն զբաղեցնողները (այդ թվում՝

⁸⁵ Ուշագրավ է, որ նման մկրտությունները կարող էին վերածել բացառապես կանացի միջոցառման՝ ընդհուպ կին-քավոր ունենալը (Գ. Շազոյան, ԴԱՆ, 2013, Ջրվեժ):

⁸⁶ «Transformations of Sacred Spaces, Pilgrimages and Conceptions of Hybridity in the Post-Soviet Caucasus» (finances by Funding Initiative of the Volkswagen Foundation) հետազոտական նախագծի ԴԱՆ-ից (հայկական թմբի ղեկավար՝ Լ. Աբրահամյան), 2012-2015:

⁸⁷ Խորհրդային տարիներին նաև Ռուսաստանում կանանց կրոնական գործառույթի բարձրացումը Ս. Շտիրկովը բացատրում է հենց այդ հանգամանքով: Տե՛ս Ս. Շտիրկովի բանավոր զեկուցումը՝ «Русское православие в поисках новых святых: блаженные старицы и их жития», Հնագիտության և ազգագրության ինստիտուտի մեթոդաբանական սեմինարների շարք, 21.10.2013:

⁸⁸ Հմմտ. Յ. Անտոյան. Магическое целительство и гадание в Армении (по материалам XX века), кандидатская диссертация, Ер.: Институт археологии и этнографии НАН РА, 2007.

հաճախ ուսուցիչները) կամ չէին մասնակցում այս կրոնական ծեսերին կամ դա անում էին թաքուն⁸⁹: Ունենք գրանցած բազմաթիվ դեպքեր, երբ կոմկուսի անդամը խնդրում է ազգականներին իր փոխարեն մոմ վառել⁹⁰ կամ մատաղ անել⁹¹: Իսկ ուշխորհրդային՝ ծաղկուն կոռուպցիայի շրջանում կուսակցական պաշտոնյան առանձնացնում էր «մաքուր» աշխատավարձը կաշառք ստացած «կեղտոտ» (հարամ) փողերից՝ մոմ վառելու կամ մատաղ անելու համար ծախսելով միայն «հալալ» գումարից:

Ցեղասպանությունից հետո Արևելյան Հայաստանում ապաստան գտած զգալի թվով «թուրքահայեր» նոր վայրերում ջանում էին միասին տեղավորվել՝ հիմնելով համերկրացիներից բաղկացած նոր բնակավայրեր (օրինակ՝ սասունցիների, մշեցիների ևն գյուղեր): Նրանք հաճախ ոչ միայն եկեղեցի չունեին, այլև կրոնական այցելությունների ավանդական սրբավայրեր, և նրանց նոր «կրոնական լանդշաֆտը» ձևավորվում էր խորհրդային աթեիզմի տարիներին՝ ոչ պաշտոնական սրբազան տարածքների «բացահայտմամբ»՝ տան սրբերի, իբրև բուժիչ հատկություններով օժտված ուխտավայրերի, այդ թվում որպես այդպիսին ծառայող խորհրդային իշխանությունների ձեռքով նահատակված քահանաների գերեզմաններ ևն⁹²:

Խորհրդային Հայաստանում արևմտահայերը համարվում էին ավելի կրոնապաշտ: Հիմնականում նրանց մեջ էին տարածված գաղտնի կնունքներն ու ամուսնության պսակները: Մինչդեռ արևելահայերի հատկապես համայնքային բնույթի կրոնական պրակտիկաներն ավելի թույլ էին արտահայտված: Այս պայմանական երկու հատվածների տարբերության պատճառները հարկավոր է փնտրել ոչ թե դրանցում խորհրդային կառավարման տարբեր մոտեցումներում, այլ համայնքի ձևավորման միգրացիոն պատմության մեջ⁹³: Որպես կանոն XIX դ. Հայաստան ներգաղթած համայնքները «զմոռում» են իրենց ավանդական կենցաղը այդ թվում՝ առօրյա կրոնական պրակտիկաները: Մինչդեռ չտեղահանված բնակչությունը (լինի այն արևմտահայ, թե արևելահայ), ենթարկվելով XIX-XX դդ. արդիականացմանը բնորոշ ապակրոնականացմանը, խորհրդային կարգերի հաստատման պահին որոշ չափով արդեն հրաժարվել էին մի շարք կրոնական պրակտիկաներից, որոնք զմռսվել էին XIX դ. «միգրանտ» համայնքներում:⁹⁴

⁸⁹ Գ. Շաղոյան, ԴԱՆ, Կոտայք, 2014:

⁹⁰ Նույնի, ԴԱՆ, Տաթև, 2001:

⁹¹ Նույնի, ԴԱՆ, Կոտայք, 2014:

⁹² Գ. Շաղոյան, ԴԱՆ, Գեղարքունիք, Վարդենիկ, Գեղարքունիք, 2010:

⁹³ Օրինակ, XIX դ. ներկայիս Հայաստանի տարածք տեղափոխված (արևելահայ) պարսկահայերի կրոնական պրակտիկաներն ու կրոնի հանդեպ վերաբերմունքն ավելի նման էին մոտավորապես նույն շրջանում Հայաստանում վերաբնակեցված տաճկահայերի համապատասխան պրակտիկաներին:

⁹⁴ Հմմտ. Գ. Շաղոյան, «Յոթ օր, յոթ գիշեր», էջ 20-22:

Բացի իշխանությունների կիրառած մեխանիզմներից, բնակավայրի մա-կարդակով խորհրդային բռնաճնշումների ծավալները մասամբ կախված էին համայնքների ներքին համերաշխությունից և համալսմբվածությունից: Որքան շատ էին ներհամայնքային լարվածությունը, միջանձնային և միջլսմբային խնդիրները, այդքան մեծ էր պետական պատժամեքենայի միջամտության հավանականությունը: Ցեղասպանությունից հետո փախստականներով և մեծ մասամբ XIX դ. հիմնավորված «տեղացիներով»⁹⁵ խառը բնակչությամբ գյուղերում հաճախ գործում էր «օտար-յուրային» բաժանումը, և դրանից բխում էին նաև որոշակի տագնապներ: Ինչպես մինչ օրս բացատրում են Շի-րակի գյուղերում⁹⁶, երկու խմբերի՝ «գաղթական տաճկահայերի» և «տեղացի եղլականների» միջև լարվածությունը կարող էր «մատնությունների» հավե-լյալ առիթ ստեղծել: Մյուս կողմից, քանի որ թուրքահայերը՝ որպես այլ երկ-րում ծնվածներ («уроженец Турции»), քաղաքական բռնաճնշումների մաս-նավոր թիրախներից էին, միանգամայն հնարավոր է, որ նրանց միջավայ-րում ծնվում էին տեղացիների մատնությունների վերաբերյալ կասկածներ: Թուրքահայերի մեջ քիչ չէին հենց իրենց հետ գաղթած փախստականների մատնություններին կասկածողները⁹⁷: Մրա հակառակ դեպքերն էլ կային, երբ փախստականներին իր տանիքի տակ առնելով և նրանց աջակցելով՝ տեղա-ցի համեմատաբար հարուստ գյուղացին հետագայում այս «տնվորի» միջամ-տության շնորհիվ է կարողանում խուսափել ձերբակալությունից⁹⁸, թեև նման դեպքեր մեզ ավելի հազվադեպ են հանդիպել:

Հայաստանի տարբեր շրջանների բռնաճնշումների ալիքներն ունեին որոշ տեղական առանձնահատկություններ: Եթե արևմտահայ միջավայրում ավելի հայտնի էին դաշնակցականները, արևելահայոց որոշ գյուղերում սո-ցիալիզմի գաղափարախոսությունն ու բոլշևիզմն էին ավելի ծանոթ, ուստի վերջին հատվածները առժամ էին հատկապես «կուսակցական մաքրումնե-րի» ժամանակ: Լոռվա մարզի Հաղպատ գյուղում այսօր էլ շարունակում են հպարտանալ իրենց առաջին կուսբջջով և հին բոլշևիկների անուններ թվար-կելով⁹⁹: Ուշագրավ է, որ Լոռիում ավելի հեշտությամբ հիշում էին մատնիչ-ների՝ դժվարանալով մտաբերել նրանց գոհերի անունները¹⁰⁰: Ինչը թերևս

⁹⁵ Խոսքը 1820-ականներից Օսմանյան կայսրությունից հայերի պարբերական արտա-գաղթերի հետևանքով ձևավորված գյուղերի մասին է, որոնց բնակիչներին սովորաբար «եղլական» էին ասում: Ցեղասպանությունից հետո նույն գյուղերում բնակեցված հայերին, ովքեր ըստ էության «եղլականների» տարածքներից էին՝ Մուշից, Սասունից, Բիթլիսից, Էրզրումից ևն, անվանում էին «գաղթականներ»:

⁹⁶ Գ. Շաղոյան, ԴԱՆ, Հայկական, 2012, հմմտ. նույնի՝ ԴԱՆ, Հայկական, 2013, Գ. Շաղոյան, Ա. Պողոսյան, ԴԱՆ, Այնթափ, Ավվարդ Սայադյան, 2013 ևն:

⁹⁷ Գ. Շաղոյան, ԴԱՆ, Երազգավորս, Շիրակի մարզ, 2012:

⁹⁸ Գ. Շաղոյան, Ա. Պողոսյան, ԴԱՆ, Այնթափ, Ավվարդ Սայադյան, 2013:

⁹⁹ ՀԱԻ ԴԱՆ, Հաղպատ, 2014:

¹⁰⁰ ՀԱԻ ԴԱՆ, Շնող, 2014:

կարելի է բացատրել գյուղում գոհերի ժառանգների բացակայությամբ, ովքեր կամ արքորի պատճառով, կամ, խուսափելով նման հեռանկարից, լքել էին տվյալ բնակավայրը և ջնջվել համագյուղացիների հիշողությունից: Առավել ևս, որ բռնադատվածների հետ յուրաքանչյուր կապ հղի էր ծանր հետևանքներով: Մինչդեռ համագյուղացի «գործ տվողներին» հարկավոր էր իմանալ՝ անվազն նրանցից զգուշանալու համար: Եվ եթե բռնադատվածներն իրենք հայրենի գյուղի հետ կապ պահելու համար քայլեր չէին ձեռնարկում, ապա որպես կանոն գյուղից նման նախաձեռնություն դժվար էր սպասել: Թեև ունենք գրանցած եզակի դեպք, երբ հանիրավի դատապարտվածն արքորից գյուղ է վերադառնում համագյուղացիների նախաձեռնությամբ¹⁰¹:

Սյունիքում, ըստ մեր գրանցած պատմությունների, գյուղերի ներքին պառակտումների և մատնության հիմնական «կյոթը» մասնակցությունն էր հայկական ինքնապաշտպանական կոիվներին: Սա դիտվում էր որպես այդ փաստացի պատերազմի հայկական դիմադրության կազմակերպիչ Գարեգին Նժդեհին կողմնակցության ապացույց:

Մարդկանց որոշակի «կատեգորիաների» մեջ տեղավորելով՝ խորհրդային համակարգը կազմում է «սև» ցուցակներ, և ստեղծված տագնապների պայմաններում սովորական առօրյա խնդիրները, որոնք այլ պայմաններում կավարտվեին թեթև վիճաբանությամբ, հազարավոր մարդկանց համար ունենում էին ճակատագրական հետևանքներ: Այսպիսով, ամբողջատիրական կառավարման պայմաններում սովորական անձնական/խմբային/համայնքային լարվածությունը և անհամաձայնություններն առաջարկում են գործիքներ, որոնք մեկը մյուսի դեմ պայքարելու համար հուժկու զենքի են վերածվում՝ քայքայելով համայնքը, քանդելով ներքին համախմբվածությունը, մարդկանց միայնակ թողնելով դժբախտության առջև:

Համայնքային համախմբվածությունն ամենուր չէ, որ իր դիրքերը միանգամից զիջում է նոր կանտոններին, կամ գոնե կային նման պատկերացումներ: Օրինակ, հարևան գյուղերի բնակիչները մատնանշում էին Լեռնապատը, Սվարանցը, Վերին Սասնաշենը, Փոքր Քեթին, Մարատակը, որտեղ իբրև թե գյուղացիների համերաշխության կամ տեղական իշխանությունների կամքի ու հանդգնության շտրիիվ ձերբակալություններ քիչ են եղել կամ գրեթե չեն եղել: Համաձայն այդ պատմությունների՝ գյուղացիները կարողացել են պարտադրել իրենց ղեկավարությանը հետ կանգնել համայնքի այս կամ այն ներկայացուցչին հետապնդելու մտադրությունից: Օրինակ, Հռոռնում հիշում են, թե ինչպես Մարատակ գյուղում կոլխոզ մտած նախկին հոգևորականին գյուղացիները թույլ չեն տալիս ձերբակալել¹⁰²: Կամ գյուղխորհրդի, կոլտնտեսության նախագահները տարբեր ճանապարհներով կարողա-

¹⁰¹ Նման մի դեպք արձանագրել է ազգագրագետ Լիլիթ Պողոսյանը, Արմավիրի մարզ, 2014:

¹⁰² Գ. Շաղոյան, ԴԱՆ, Հոռոմ, 2014:

նում են դիմակայել և չկատարել վերևից եկած հրահանգը. մի դեպքում ելնելով, ինչպես համոզված էին մեր գրուցակիցները, ընտանեկան շահերից (որպեսզի, ի թիվս այլ ցուցակավորվածների, չաբստովի և այդ պաշտոնյայի եղբոր ընտանիքը)¹⁰³, մյուս դեպքում՝ ելնելով հանրային շահերից («էդ մարդիկ, որոնք, որ դուք պտի տանիք, հմի դաշտը աշխատանքի մեջ են»: Ըսել են՝ մենք մարդ չունինք, մենք [այսինքն՝ գյուղի ղեկավարները] գուկանք»)¹⁰⁴: Ունենք գրանցած պատմություն, երբ գյուղի վարչական ղեկավարն իր համագյուղացուն փրկում է ուղղակի խղճահարությունից դրդված¹⁰⁵:

Այս կարգի դրվագները բացառություններ են, որոնք հաստատելու և հասկանալու համար անհրաժեշտ է դրանցից յուրաքանչյուրն առանձին ուսումնասիրել: Այսպես թե այնպես հարևանությամբ ապրողները դրանք ընկալում էին որպես արդարության և սոցիալական համաձայնության կղզյակներ, միաժամանակ դրանց գոյությունն ինքնին ձևավորում էր այն հասարակական կարծիքը, որ պետական տեռորը տեղացի պաշտոնյաների կամայականության արդյունքն էր. եթե մի գյուղում մարդկանց չեն բռնադատել, ուրեմն դա հնարավոր էր նաև մյուսում, իրենց համայնքում, հետևաբար խնդիրը ոչ թե «Ստալինն էր», այլ իրենց գյուղի մատնիչը, իրենց գյուղխորհրդի նախագահը նև, որովհետև այդ տրամաբանությամբ. «Ստալինը որտեղից գիտեր, որ մեր գյուղում ապրում է «այսինչ այսինչյանը», ուրեմն հենց մեր գյուղացիներն են, չէ՛, մատնել»: Վերևից ստացված որոշմանը չհնազանդվելու կամ տեղում որոշումը փոխելու հնարավորությունները կախված էին բազմաթիվ հանգամանքներից: Այլ հարց է, որ որոշ համայնքներում այդ հանգամանքներից օգտվելու փորձ արվում էր, իսկ որոշ համայնքներում՝ ոչ, երբեմն էլ, ընդհակառակը, տեղի «դահիճների» ջանասիրությամբ գերակատարվում էր «դատապարտյալների» պլանը:

Այսպիսով, իր տիրույթից դուրս գործող համայնքային կառուցվածքին բախվելով, ամբողջատիրական համակարգը սկսում է այն քանդել՝ խորացնելով յուրաքանչյուր համայնքում եղած մանր ճեղքվածքները: Կարելի է ենթադրել, որ նման ճեղքվածքներ քիչ ունեցող համայնքներում, որտեղ ավելի գորեղ էր համայնքավածության ու ինքնակազմակերպման ներուժը, բռնաճնշումներից տուժածների թիվը, հավանաբար, ավելի քիչ էր:

¹⁰³ ՀԱԻ ԴԱՆ, Գողթ, 2014:

¹⁰⁴ Ս. Խորշուրյան, Խոհարարի պահպան շերտիք:

¹⁰⁵ Գ. Շաղոյան, ԴԱՆ, Զովասար, 2010, Լենա Ավետիսյան (Մորուք Կարոյի դուստրը):

ԱՄԵՆԱՄՈՏ ՕՏԱՐԸ. ԴՐԱՅԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

«Բռնաճնշումների» հետևանքներից էր հասարակական հարաբերությունների ևս մեկ կարևոր փոփոխություն՝ դրացիության մասնակի խեղումը: Եթե ճգնաժամային պայմաններում դժվարությունները հաղթահարելու համար հարևանները հաճախ համախմբվում են¹⁰⁶, ապա խորհրդային կարգերի հաստատման տարիներին, երբ բնակչությունը ծայրահեղ ունեզրկվում է, իսկ մի անանուն գրպարտչի նամակով հնարավոր է դառնում մարդ ձերբակալել, հաճախ հենց հարևանն էր դառնում այն մատնիչը, ով այք էր դրել դրացու ունեցվածքին՝ տանը¹⁰⁷, այգուն, անասուններին, կամ գոնե մարդիկ ավելի հակված էին նրանց մեջ փնտրել իրենց «մատնիչին»¹⁰⁸: Անշուշտ «դրացիական վտանգը» միայն ունեցվածքի վրա այք դնելով չէր պայմանավորված: Երբեմն դեր էին խաղում հին հակասությունները, երբեմն հարևանին՝ որպես առավել իրազեկի, պարզապես հարկադրում էին տեղեկություններ հաղորդել, երբեմն էլ մարդիկ սեփական կաշին փրկելու համար շտապում էին որևէ ծանոթ «ուրիշի» հարվածի տակ դնել: Կային, անշուշտ, դեպքեր, երբ «կարգերին ծառայամտությունը» օգտագործվում էր սեփական սոցիալական դիրքը բարձրացնելու նպատակով: Ընդհանուր կասկածամտության պայմաններում իրենց «տան ականջը լինելու» մեջ հարևանին նաև ամենաառաջինն էին կասկածում:

Արդյունքում համայնքային մեկ այլ համախմբող համակարգ՝ դրացիական հարաբերությունները, խորհրդային տարիներին վերածվեցին հավելյալ վտանգի և զգալիորեն թուլացան: Մրա կողքին, իհարկե, կային եզակի օրինակներ, երբ հարևաններն իրենց դրսևորում էին իբրև աջակից՝ վտանգելով սեփական անձը.

«Մեր տան կողքերը պաշարված էր, ոչ ոքի չէին թողնում տուն մտնեն, բայց մի կին էկավ՝ ներս մտավ, դա Ղարոյան Ազնիվն էր, նա վախ չունեք, խիզախ կին էր: Ներս եկավ և ասեց. «Դուք խիղճ չունեք, էս ձմռանը օձն իր բնից դուրս չի գա, դուք ո՞նց այս անմեղ ընտանիքին էս ձմռանը տնից դուրս կհանեք»,

¹⁰⁶ Տե՛ս, օրինակ, Գ. Շաղոյան, Բարի կամք, թե՛ պարտականություն // Պատմություններ աղքատության մասին, Եր., «Լուսակն» հրատ., 2001, էջ 350-369:

¹⁰⁷ Հմմտ. նման դրվագներ հատկապես բնորոշ են ռուսաստանյան կոմունալ բնակարանային պատմություններին: *Н.Б. Лебина, Повседневная жизнь советского города, էջ 196-198:*

¹⁰⁸ Հմմտ. *А. Алексаян. Сибирский дневник 1949-1954 гг., Գ. Շաղոյան, ԴԱՆ, Լոռի, 2014, ԴԱՆ, Շիրակ, 2012:*

բայց չդիմացավ, արտասպեց: Հետո բերեց մի քիչ խմոր շաղեց, հարևան Եվայի թոնիրը վառեցին միասին, բաղարջներ թխեցին և բարի ճամփա մաղթեցին»¹⁰⁹:

Հարևանական «բացասական» գործոնն «աշխատում էր» գլխավորապես 1930-ականների բռնաճշումների ընթացքում, երբ, մի կողմից, համընդհանուր աղքատություն էր, մյուս կողմից՝ «բոլորը բոլորին կասկածում էին», և երբեմն «գործ տալը» գոյատևման կամ փրկության միակ միջոցն էր կամ այդպիսին էր թվում:

Աքսորում հայտնված բախտակից հարևանների համար, ովքեր մեկուսացած էին գրեթե բոլոր ազգականներից, դրացիական հարաբերությունների դերն ու կարևորությունն ավելի էին աճում: Երբեմն հարևաններին էին բաժին ընկնում այն պարտականությունները, որոնք ճգնաժամային պայմաններում սովորաբար իրենց վրա էին վերցնում ազգականները: Օրինակ, մեր գրանցած պատմություններից մեկում հարևաններն են դառնում արքորում «աշխատանքային բանակ» տեղափոխված այլազգի հարևանի երեխաների միակ խնամակալն ու հոգ տանում մինչև ծնողների վերադարձը¹¹⁰:

Հարևանային փոքր համայնքների քայքայումը մասամբ պայմանավորված էր նաև բնակչության բարձր մորբիլությամբ: Ինչպես հիշում ենք, բնակչության վայրի փոփոխությունն հնարավոր ձերբակալությունից խուսափելու առաջին միջոցն էր: Օրինակ, ինչպես խոստովանում է Ս. Հարությունովը, եթե իրենց ազգականները քաջատեղյակ էին, որ իր հայրը ձերբակալված է, ապա այս ընտանիքի հաճախ փոխվող բնակչության վայրերում ոչ մի հարևան դրա մասին պատկերացում չունեի¹¹¹:

1949 թ. Ալթայի և Կրասնոյարսկի երկրամասեր արքորվածների բնակեցումը, եթե նախօրոք պատրաստած բարաքներում չէին, ապա տեղացիների, հաճախ նախկին արքորվածների կամ նրանց ժառանգների «խտացման» հաշվին էր: Տեղացիները պարտավոր էին մի սենյակ կամ անկյուն առանձնացնել՝ ընդունելու արքորավայր տեղափոխված նոր բնակիչներին: Հաճախ այդ տան տերերը դառնում էին ռուսերենի առաջին ուսուցիչներն ու տեղական պայմաններին ծանոթացնողները¹¹²:

Դրացիական հարաբերությունները գյուղում և քաղաքում զգալիորեն տարբեր էին: Գյուղերում դրացիները հաճախ նաև ազգականներ էին: Քաղաքի «դրացիությունն» ուշագրավ է իր խայտաբղետությամբ, երբ իրար կողք էին հայտնվում հնարավոր զոհերն ու դահիճները, իսկ հերթական

¹⁰⁹ Գ. Շագոյան, ԴԱՆ, Չովասար, 2014, Հասմիկ Ավետիսյանի հուշատետրից:

¹¹⁰ Տեն, օրինակ, Գ. Շագոյան, ԴԱՆ, Գյումրի, 2012, Այա Յասոյան:

¹¹¹ Ս. Հարությունով, «Мы всю жизнь скрывали...»

¹¹² Հ. Մարության, ԴԱՆ, Տաթև, 2012, Նոյեմի Արշակյան:

կանսանիայի արդյունքում որոշ թաղամասեր կարող էին զգալիորեն դատարկվել: Գերմանիայում, Մերձբալթյան երկրներում, Վրաստանում, Ռուսաստանում ուսումնասիրությունների հիման վրա ստեղծվեցին կարմիր տեռորի զբոսաշրջային սոցիալական երթուղիներ, երբ, ասենք, Թբիլիսիի մեկ փողոցի օրինակով ցույց է տրվում ստալինյան բռնաճշմունքների սոցիալական մի ողջ ներկայակերպ¹¹³. դեմ դիմաց սալոնոլ հարևաններ, որոնցից մեկի տան տարածքը լայնացել էր դիմացի հարևանին ձեռքակալելու հաշվին: Միմյանց նայող պատշգամբներ, որտեղից ժամանակին իրար են հետևել «գոհերն» ու «դահիճները»¹¹⁴: Այսօր նման նախագիծը Երևանում ամենայն հավանականությամբ կձախողվի, քանի որ հին քաղաքի ոչ մի հատված այն աստիճան չի պահպանվել, որ հնարավոր լինի վերականգնել նման գոնե մեկ բակային պատմություն: Մինչդեռ մեր գրառած պատմությունները նույնպես արձանագրում են, թե ինչպես էին հարևանությամբ սպորում բանտից վերադարձածն ու, ասենք, ՊԱԿ-ի աշխատողը: Այստեղ «գոհերն» ու «դահիճները» նույնպես ակամա դառնում են հարևաններ, և նրանց դրացիական հարաբերությունները երբեմն անհնարին էին դարձնում համակարգի թելադրած կանոնների ուղղակի կատարումը¹¹⁵:

Այսպիսով, չնայած ամբողջատիրական համակարգը որոշ չափով քանդում էր դրացիական փոխօգնության ավանդական կառուցվածքը, բայց, հակառակ սոցիալական արդիականացման տրամաբանության, փոխարենը ձևավորվում էին ընդհանուր կենցաղ կիսելու հարևանության նոր ձևեր: Իհարկե, դրացիական հարաբերություններ կան և արդիական հասարակություններում, բայց դրանց գործառույթներն ու հիմնականում ինստիտուցիոնալացված ձևերը զգալիորեն տարբերվում են ավանդականից: Խորհրդային վարչարարությունը նույնպես փորձեց ինստիտուցիոնալացնել դրացիական հարաբերությունները հատկապես բազմաբնակարան շենքերում՝ 1959 թ.-ից մտցնելով բնակչահագործման գրասենյակների (ԲԸԳ) ցանցը (ավելի հայտնի՝ ռուսերեն ՋՅԿ տարբերակով)¹¹⁶: Մրանց գործառույթների մեջ, ի թիվս այլոց, ներառվեցին հարևանների հարաբերությունների կարգավորումն ու համատեղ սոցիալական կյանքի կազմակերպումը: Դրանք նաև ծառայում էին իբրև գաղափարախոսական վերահսկման ստորին օղակ: Այս հիմնարկների աշխատողը խորհրդային երգիծական ֆիլմերի

¹¹³ В маршруты «Топографии красного террора» войдут свыше 20 памятников столицы Грузии // Кавказский Узел, 2.06.2010, <<http://www.kavkaz-uzel.ru/articles/171040/>> (19.07.2015):

¹¹⁴ Red Terror Topography // Sovlab, <<http://sovlab.ge/projects/finished/redterrortopography/>> (14.08.2014):

¹¹⁵ Տես այս հատորում Ռ. Հարությունյան, «Ինձ համար ինքը լավ մարդ էր»:

¹¹⁶ ЖЭК – Жилищно-эксплуатационная контора, ԲԸԳ – հայերեն բանավոր խոսքում այն սովորաբար չէր թարգմանվում:

սիրված կերպարներից էր¹¹⁷: Հայաստանում դրանք այդքան էլ քննարկվող կերպարներ չէին, թերևս հենց այն պատճառով, որ այստեղ հարևանների միջև հարաբերությունները կարգավորվում էին ոչ թե ԲՇԳ-ների միջնորդությամբ, այլ ավելի հաճախ՝ դրացիական մշակույթի ավանդական ձևերով: Ընդհանրապես «ետ մնացող արդիականացմանը» բնորոշ է անհավասար զարգացում՝ կենտրոն-կղզյակներում, օրինակ՝ Մոսկվայում կամ Լենինգրադում, և ծայրամասերում¹¹⁸, օրինակ՝ հայաստանյան բնակավայրերում:

Մյուս կողմից, քանի որ խորհրդային արդիականացումն այնպիսին էր, որ արդյունաբերական զարգացումը (հատկապես արտրավայրերում) հենվում էր փաստացի ստրկական աշխատանքի վրա, ապա ակնհայտ է, որ այդ պայմաններում անհնար էր ձևավորել արդիական սոցիալական հարաբերություններ: Դրանց փոխարեն, մարդկանց համատեղ գոյատևելու անհրաժեշտությամբ պայմանավորված, ստեղծվում էին նախաարդիական համայնքային փոխօգնության ամենատղիղ ձևերը: Այդ իմաստով դրացիական հարաբերությունների փոփոխությունները խոշոր քաղաքներում¹¹⁹ և մնացած վայրերում հաճախ ընթանում էին հակառակ ուղղություններով:

«ԵՒ ԵՂԲԱՅՐ ԵՂԲՕՐԸ ՄԱՀԻ ԿՄԱՏՆԷ»¹²⁰. ԸՆՏԱՆԻՔԸ ԲՌԵԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Բռնադատվածների վերաբերյալ գրպարտիչ տեղեկությունների տակ հաճախ ստորագրել են նույն ընտանիքի անդամները: Ինձ հայտնի դեպքերում հաճախ կասկածում էին դատապարտվածի եղբայրներից մեկին: Այսինքն, երբ նկարագրում են խորհրդային հասարակությունը որպես «եղբայրը եղբոր դեմ գնացող», դա ոչ միայն թևավոր խոսք է՝ հղում Աստվածաշնչին¹²¹, այլև հաճախ իրական իրավիճակի արձանագրում: Ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ եղբայրներին միտումնավոր էին ստիպում մի-

¹¹⁷ Չմմտ. Լ. Գալդայի «Ադամանդե ձեռքը» կամ Գ. Դանելյայի «Աֆոնյա» ֆիլմերը:

¹¹⁸ В.А. Ачкасов. Россия как разрушающееся традиционное общество // Журнал социологии и социальной антропологии. 2001. Том IV. № 1, էջ 171-184:

¹¹⁹ Թեև խոշոր քաղաքների կոմունալ բնակարաններում ձևավորված հարևանության նոր կանոնները նույնպես բավականին հեռու էին ինստիտուտային հարաբերություններից: Դրա մասին տես *И. Утехин. Очерки коммунального быта. М.: ОГИ, 2004; А.И. Черных. Жилищный передел. Политика 20-х годов в сфере жилья // Социологические исследования, 1995, N 10, էջ 71-78; К. Герасимова. Советская коммунальная квартира как социальный институт: историко-социологический анализ: на материалах Петрограда-Ленинграда, 1917-1991. Кандидатская диссертация, Санкт-Петербург, 2000 (рукопись); К. Герасимова. Советская коммунальная квартира // Социологический журнал. 1998, N 1-2, էջ 224-244* նև:

¹²⁰ *Մատթեոս 10:21*:

¹²¹ *Նույն տեղում:*

մյանց դեմ վկայություն տալ: Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ բոլոր եղբայրները գնդակահարվում կամ արքայրվում էին¹²²: Եղբայրներին մեկը մյուսի դեմ վկայություն տալու կամ միասին ոչնչացնելու միտումի պատճառներից մեկը թերևս դատավճիռները կայացնողների ու նրանց մերձավորների դեմ վրեժի հնարավոր զարգացումները կանխելն էր: Ինչը, կարծում եմ, արվում էր ոչ թե հատուկ համակարգված հրահանգով, այլ իրենց ապահովագրելու տեղացի պաշտոնյաների հաշվարկով: Պատահական չէ, որ պատմություններից մեկում մեր գրուցակիցն ուղիղ նշում է, որ երբ արքայրվածներն իրենց հասունացած զավակների հետ սկսեցին վերադառնալ հայրենի գյուղ, նախկին պաշտոնյան, ում ստորագրությամբ նրանք արքայրվել էին, իր զավակների հետ շտապ տեղափոխվում է մայրաքաղաք՝ փախչելով հնարավոր հաշվեհարդարից¹²³: Նման զարգացումներից խուսափելու համար որոշ դատապարտյալներ նույնպես ձգտում էին այլևս հայրենի բնակավայր չվերադառնալ:

Եղբայրներին միմյանց դեմ տրամադրելու նպատակներից կարող էր լինել նաև ազգակցական մեծ խմբավորումները քանդելու ձգտումը՝ զրկելու մեկը մյուսին սատարելու հնարավորությունից: Քիչ չէին այն դեպքերը, երբ նույն ընտանիքի անդամները միմյանց հանրայնորեն էին ուրանում¹²⁴: Եղբայրները կարող էին ձեռք մեկնել՝ որդեգրելով իրենց եղբոր զավակներին, եթե նրանք երկու ծնողներին կորցրել էին¹²⁵: Եղբոր, քրոջ որբացած ընտանիքին թաքուն օգնություն էին հասցնում սովորաբար գիշերային ժամերին՝ մյուսների համար աննկատ¹²⁶: Ավելի հաճախ օգնության ձեռք էին մեկնում ազգակից կանայք, ուլքեր, ինչպես արդեն առիթ ունեցել եմ նշելու, տղամարդկանց համեմատ ավելի քիչ էին հետապնդվում: Սակայն այստեղ էլ կային նրբություններ. եթե կինն ուներ ամուսին և/կամ արու զավակներ, նա ավելի մեծ դժվարությամբ էր օգնության ձեռք մեկնում իր «ժողովրդի թշնամի» ազգականին, որպեսզի չվտանգի իր ընտանիքը¹²⁷:

Մերժված և մեկուսացած ընտանիքները հիմնականում ըմբռնումով էին մոտենում իրենց ազգականների խուսափողական վարքին և նրանց չվնասելու համար գիտակցաբար սահմանափակում էին իրենց շփումները:

¹²² Տե՛ս *Հասմիկ Տեր Ավագյան* // Armenia Total(itari)s, <<http://armeniatotalitaris.am/?p=1790>> (17.08.2015):

¹²³ Գ. Շաղոյան, Լ. Աբրահամյան, Երազգավորս, Շիրակի մարզ, 2012-2013:

¹²⁴ Դ. Կնյազյան, ԴԱՆ, Ստեփանավան, 2014, Գ. *Խառատյան*, Գ. *Մարության*, ԴԱՆ, Սյունիք, 2012:

¹²⁵ Տե՛ս, օրինակ, *Ասյա Յասոյան* // Armenia Total(itari)s, <<http://armeniatotalitaris.am/?p=2512>> (17.05.2014):

¹²⁶ ԶԱԻ ԴԱՆ, Ծնող, 2014, Հասմիկ Զավախյան:

¹²⁷ Այս տարբերությունը պատկերավոր ներկայացված է, օրինակ, Ռևիկ Հարությունյանի պատմության մեջ, տե՛ս Ռ. Հարությունյան, «Ինձ համար ինքը լավ մարդ էր»: Տե՛ս նաև Գ. *Խառատյան*, ԴԱՆ, Կապան, 2012-13, Փարսադան Հարությունյան, Ծավ, Շիշկերտ, Հրանուշ և Լյուդվիգ Խաչատրյաններ ևն:

Կան նաև հակառակ դեպքեր, օրինակ՝ կինը վրեժ է լուծում եղբորից՝ իրենից երես թեքելու համար¹²⁸:

Գերդաստանային համախմբվածությունն ու միասնությունը հատկապես տուժում էին, երբ տեղական իշխանությունները թիրախավորում էին տնտեսապես և սոցիալապես աչքի ընկնող, ազդեցիկ, հեղինակավոր մարդկանց: Երբեմն նույնիսկ եղբայրների միջև էին տարբերություն դնում. օրինակ՝ 2-3 բռնադատված եղբայրների կողքին նրանց մի եղբորը իշխանությունները «չէին նկատում», ինչը մեր գրուցակիցները բացատրում էին նրա «խեղճ» լինելով, համայնքում առանձնապես հեղինակություն չունենալով¹²⁹: Կարծես, իրոք, առաջնային նպատակն էր համայնքը գրկել համախմբող և կազմակերպող, առաջնորդի հատկություններով օժտված մարդկանցից, ինչը պիտի հեշտացներ հասարակական կազմակերպման նոր սկզբունքների հաստատումը, որոնք հիմնված էին ոչ թե ազգակցական, այլ աշխատանքային կամ կուսակցական կապերի (ոչ թե գաղափարների) վրա: Այսինքն՝ կոշտ պատժիչ ճանապարհով իրագործվում էր ավանդական սոցիալական կառուցվածքի հիմնովին վերաձևավորումը:

1949 թ. աքսորը բացահայտեց ընտանիքի մասին պետության այդ պահի հեղհեղուկ կոնցեպցիան, քանի որ աքսորվելիք ընտանիքը «կոմպլեկտավորելու» համար դե ֆակտո անհրաժեշտ էր սահմանել, թե ում են համարում ընտանիքի անդամ: Հայերի պարագայում այս հարցը հատկապես է կարևորվում, քանի որ որոշ դեպքերում, իսկ 1949 թ.՝ համատարած, աքսորվում էին ոչ թե անհատապես, այլ ընտանիքներով: Ընտանիքների կազմը հիմնականում համընկնում էր նույն տանիքի տակ ապրողների ցուցակի հետ, այսինքն՝ պետության մոտեցումը, թե ինչպես հաշվառել ընտանիքը, հիմնականում համընկնում էր ավանդական պատկերացումների հետ: Եթե մեկի աղջիկն ամուսնացած էր և ապրում էր ամուսնու ընտանիքում, ապա նա չէր համարվում հայրական ընտանիքի անդամ և աքսորի ենթակա չէր¹³⁰: Նույնն էր պարագան առանձին ապրող որդու դեպքում: Սակայն, եթե որդին նույնիսկ ամուսնացած էր, բայց ապրում էր հոր հետ միասին, ապա նա աքսորվում էր, ինչպես նաև իր կինը՝ անկախ նրանից, թե երբ է այդ կինը որպես հարս հայտնվել տվյալ ընտանիքում¹³¹: Աքսորվող որդու պարագայում աքսորի ենթակա էին նաև ծնողները (բոլոր տարբերակներում էլ կային, անշուշտ, բացառություններ): Երբեմն դեռևս չգրանցված, բայց ամուսնանալ

¹²⁸ Տե՛ս այս գրքում ներառված *Պարոյր Տոնոյանի* պատմության այն դրվագը, երբ Շամամ տատը եղբոր որդու հարսանիքին չկանչելու համար հարս ու փեսայի վրա ոսկորներ է շաղ տալիս:

¹²⁹ Գ. Շաղոյան, ԴԱՆ, Երազգավորս, Սաշա Մխիթարյան, նաև՝ ԴԱՆ, Գյումրի, 2014:

¹³⁰ Գ. Շաղոյան, ԴԱՆ, Գոշ, 2006, Զարիկ Գրիգորյան:

¹³¹ *Նույն տեղում*:

պատրաստվող գույգից մեկը, ով չկար արտրվածների ցուցակում, կարողանում էր համոզել վերահսկողներին և կամավոր միանալ արտրվողներին¹³²:

Դեռևս չեմ հանդիպել դեպքի, որ արտրի ենթական լինել կինը (բացառությամբ երեսնականների մասնավոր դեպքերի՝ ՎՄԻՐ): Կանանց արտրը որպես կանոն հորը, որդուն, ամուսնուն արտրելու հետևանքն էր՝ որպես ընտանիքի անդամի: Լինելով միանվագ գործողություն, այն է՝ 1949 թ. հունիսի 14-ի գիշերը սկսել և ավարտել արտրվածներին գնացքով ճանապարհ գցելը, երբեմն այդ գիշեր տնից բացակա ընտանիքի անդամը «դուրս էր մնում» արտրվողների խմբից: Աշխատանքի կամ սովորելու բերումով այլ բնակավայրերում գտնվող չամուսնացած որդիներին և դուստրերին ոչ միշտ, բայց հաճախ հաջողվել է խուսափել արտրից¹³³: Արտրի գործողությունն իրականացնելու գիշերը տնից բացակայության պատճառով կարող էր խուսափել նաև այն մարդը, ում պատճառով իր ընտանիքը հայտնվել էր արտրվողների ցուցակում: Այդպիսի դեպք ենք գրանցել, օրինակ, Փանիկ գյուղում, որտեղից պետք է արտրվեր Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գերի ընկած մի մարդ՝ իր ընտանիքով: Արտրն իրականացնելու գիշերը նա Վրաստանում էր, և ընտանիքից տարան տանը գտնվող 19-ամյա կնոջն ու 15 օրական որդուն: Երբ ընտանիքի հայրը վերադառնում է և տեղեկանում, որ կնոջն ու որդուն իր պատճառով արտրել են, դիմում է իշխանություններին, որ իրեն էլ արտրեն: Սակայն նրան մերժում են՝ բացատրելով, որ մեկ մարդու արտրավայր ուղարկելու հնարավորություն չունեն: Այս մարդն իր հաշվին հասնում է Ալթայի երկրամաս, գտնում ընտանիքը, բայց նրան այլևս չեն ներառում դատապարտվածների ցուցակ: Նա այնտեղ շարունակում է ապրել որպես ազատ բնակիչ, զբաղեցնում բարձր պաշտոններ, մինչդեռ իր կինն ու որդին մյուս արտրվածների հետ պարտավոր էին պարբերաբար վերահաստատել իրենց ներկայությունն ըստ գրանցման վայրի¹³⁴:

«Հայրենիքի դավաճան» ընտանիքի ղեկավարի պատճառով նրա ծնողները, կանայք և երեխաները գրկանքներ էին կրում նաև այն դեպքերում, երբ իշխանություններն անգոր էին բռնել «վտանգավոր տղամարդուն»: Այսպես, ֆիդայի Մորուք Կարոյին 1934 թ. հաջողվում է բարեհաջող փախչել Հայաստանից, ապրել և իր մահկանացուն կնքել Իրանում: Հետխորհրդային տարիներին նրա աճյունը հանդիսավոր բերվեց Հայաստան՝

¹³² Ունենք գրանցած դեպք, երբ փեսային արտրում են հենց հարսանիքի գիշերը, և նրա հարսնացուն պնդում է և կարողանում միանալ արտրվողներին: Տես *Ս. Խորշուդյան*, Խոհարարի պահպան շերտի...:

¹³³ Տես, օրինակ, *Ռ. Աբրահամյան*, «Նույն ՆԿՎԴ-իստները եղել են և՛ չար, և՛ բարի»:

¹³⁴ *Սամվել Գևորգյան* // Armenia total(itari)s, < <http://armeniatotalitaris.am/?p=3010>> (14.05.2015):

Չովասար գյուղ, որտեղ նա մոտ 14 տարի ապրել էր Սասունից փախչելուց հետո: Մինչդեռ նրա կինն ու երեք դուստրերը որպես «հակայի» ընտանիք 1941 թ. արքայազնություն են Սիբիր՝ անցնելով ամենածանր փորձությունների միջով¹³⁵:

Աքսորից ու ձերբակալությունից խուսափելու տարածված ռազմավարություններից էր բնակության վայրից «ճիշտ ժամանակին» բացակայելը¹³⁶: Սա իր հերթին նպաստում էր «հավաքովի» կամ տարաբնույթ կազմ ունեցող համայնքների ձևավորմանը մի կողմից, անսպասելի մեկնելու պատճառով ազգականների միջև կապերի բնականոն թուլացմանն ու ընդհատմանը՝ մյուս կողմից:

Միաժամանակ կիսված շատ ընտանիքներ ձգտում էին միմյանց օգնել¹³⁷: Եղել են փորձեր, սեփական կյանքը վտանգելով, արքորից փախցնել հարազատին¹³⁸: Ընտանիքն կարող էր վերածվել իսկական «ամրոցի», ինչպես դա, օրինակ, տեղի ունեցավ Փանիկ գյուղում՝ Կարապետյանների ընտանիքում, ովքեր կարողացել էին ընտանիքի հորը 18 տարի հեռու պահել համազյուղացիների և իշխանությունների տեսադաշտից՝ թաքցնելով ամբարում: Եվ միայն երբ որդիներից մեկն ամուսնալուծվում է, և ընտանիքը պառակտվում է, տունը կորցնում է իր անտիկությունը, ու «ինքնաբանտարկվածը» բաժանված հարսի մատնությամբ հայտնվում է դատարանի առաջ: Բայց ժամանակներն արդեն ուրիշ էին, և դատարանը գտնում է, որ նա իր «պատիժն» արդեն ստացել է տնային բանտարկությամբ¹³⁹:

Այսպիսով, բացի խորհրդային արդյունաբերության զարգացման ու ուրբանիզացման գործընթացներից, որոնք նպաստում էին մեծ ընտանիքների տրոհմանը, բռնաճնշումները, իրենց հերթին, յուրովի քայքայում էին մեծ ընտանիքը, իսկ փոքր ընտանիքներին ստիպում պարփակվել իրենց մեջ: Մեծ տեռորի տարիներին ոչ միայն ընտանիքի անդամներն էին ակամա դառնում մեկը մյուսի «պատանդն» ու «պատասխանատուն»՝ տուժելով որպես «ժողովրդի թշնամու ընտանիքի անդամ», այլև ամբողջ ընտանիքն էր հաշվառվում որպես բռնաքսորի միավոր՝ պետության ճանաչած անդամներով: Եվ եթե մեծ գերդաստանների տրոհումը փոքր ընտանիքների՝ հասարակական հարաբերությունների արդիականացման բնականոն գործընթացն էր, ինչը ենթադրում է նաև փոքր ընտանիքների ինտեգրումն այդ նոր հարաբերություններին, դրանց բաց լինելուն, անձի անհատականացու-

¹³⁵ Գ. Շագոյան, ԴԱՆ, Չովասար, 2010, Մորուք Կարոյի դուստր Ելենա Ավետիսյան:

¹³⁶ Գ. Շագոյան, ԴԱՆ, Շիրակ, 2012, Երևան, 2013:

¹³⁷ Հմմտ. Գ. Շագոյան. Возвращаясь в «советское сейчас», էջ 569-581.

¹³⁸ Ռ. Արրահամյան, «Նույն ՆԿՎԴ-իստները եղել են և՛ չար, և՛ բարի»:

¹³⁹ Գ. Շագոյան, ԴԱՆ, Փանիկ, 2012, Հովսեփ Կարապետյան:

մը են, ապա դրա խորհրդային տարբերակն ընթանում էր ճիշտ հակառակ ուղիով՝ քարացնելով ընտանիքի սահմանները, դրանք դարձնելով անանցանելի, ընտանիքի անդամների ճակատագիրը լիովին պայմանավորելով մեկի հանդեպ պետության վերաբերմունքով: Այդ իմաստով խորհրդային ընտանիքի վերածնունդը նպաստում էր ընտանիք-ինստիտուտի ոչ այնքան արդիականացմանը, որքան՝ արխաիկացմանը:

ԿԻՆԵ ՈՒ ՏՂԱՄԱՐԴԸ՝ ՈՐՊԵՍ ԲՈՒՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ ԹԻՐԱՆ

Թեև կանայք և տղամարդիկ հայտարարված էին նոր հասարակության հավասար անդամներ, կանանցից պետությունն ավելի քիչ էր վտանգ սպասում, և բռնադատվածների շարքերում, չհաշված բացառիկ դեպքերը¹⁴⁰, նրանք, ինչպես արդեն նշել եմ, հայտնվում էին հիմնականում որպես ածանցյալ մեղադրյալ: Սրանով է կարելի, թերևս, բացատրել այն հանգամանքը, որ կանայք ավելի ազատ էին աջակցում իրենց բռնադատված ազգականներին¹⁴¹: Նույնիսկ եթե օգնությունը պիտի մի եղբորից հասներ մյուս եղբոր ընտանիքին, փոխանցողները որպես կանոն կանայք կամ երեխաներն էին: Ամուսնացած կանանց հայրական ընտանիքները, հատկապես եթե այլ գյուղից էին, ավելի ազատ էին աջակցում հարևան գյուղում ապրող դստեր մեկուսացված ընտանիքին: Դա նպաստում էր նաև նրան, որ շատ բռնադատվածների ընտանիքներ տեղափոխվում էին կնոջ ծննդավայր, և մայրական գծով բարեկամական կապերը նախկին՝ ավանդական նահապետական համայնքի համեմատ ավելի էին սերտանում: Ուշագրավ է, որ նահապետականից դեպի մայրագծային ազգակցական կապերի ամրացումը՝ որպես տնտեսական ճգնաժամի արձագանք, նկատելի դարձավ նաև 1990-ականներին, երբ, օրինակ, արտագնա աշխատանքի մեկնող տղամարդկանց խմբերը սկսեցին ձևավորվել ոչ միայն հայրական գծով, այլև աներ-փեսա, քենակալներ կապերով: Կնոջ ազգականների հետ համագործակցության՝ սոցիալական ճգնաժամի պայմաններում ակտիվացող երևույթը, թերևս, նահապետական մեծ ընտանիքից դեպի փոքր ընտանիք ձևափոխվելու գործընթացի միջանկյալ տարբերակն է:

¹⁴⁰ Թերևս առավել հայտնիներից է Զաբել Եսայանը (տես, օրինակ՝ Ս. Արզումանյան, Զապել Եսայան (կյանքը և գործը), Երևան, ՀՍՄՀ ԳԱ, 1965):

¹⁴¹ Լ. Արրահամյան, ԴԱՆ, Երևան, 2006, Գ. Շագոյան, Գյումրի 2012-2013, Գողթ, 2014 նն:

Մեր գրանցած պատմություններում չունենք գոնե մեկ դեպք, երբ ձերբակալված լինելը միայն կինը, և ամուսինն այդ պատճառով մնար երեխաների միակ խնամակալը: Սովորաբար լինում էր հակառակը¹⁴²: Առաջինը կնոջն էին ձերբակալում միայն այն դեպքում, եթե ամուսինը դիմել էր փախուստի և իշխանությունների համար անհասանելի էր¹⁴³: Իշխանությունները սովորաբար արագ կորցնում էին կանանց նկատմամբ քաղաքական հետաքրքրությունը, եթե վերջիններս կապված չէին որևէ տղամարդու հետ: Սակայն երբեմն հենց կանայք էին դառնում իրենց ամուսինների ձերբակալության առիթը: Մեր գրանցած պատմություններում ժամանակ առ ժամանակ հայտնվում էր սյուժե, թե ինչպես են ձերբակալել գեղեցիկ կնոջ ամուսնուն, որպեսզի կարողանան ազատ սիրահետել կնոջը՝ անկախ նրանից, թե որքանով էր այդ կինը պատասխանում սիրահետողի զգացմունքներին: Եթե Շիրակում մեր գրանցած պատմություններում կինը հենց այս իմաստով էր դառնում ամուսնու ձերբակալության ակամա պատճառը¹⁴⁴, ապա Սյունիքում պատմում էին, թե ինչպես, անկախ ամուսնու ձերբակալության պատճառից, միայնակ մնացած կանանց տղամարդիկ հետապնդում էին՝ սեռական կապ պարտադրելով: Այս դեպքում կանանց առավել նախընտրելի ռազմավարությունը նոր ամուսնությունն էր՝ որևէ տղամարդու պաշտպանության տակ հայտնվելու ակնկալիքով¹⁴⁵: Թեև դա այդքան էլ հեշտ լուծվող հարց չէր, քանի որ ձերբակալվածի ընտանիքի անդամները ենթարկվում էին հասարակական մեկուսացման, ու բռնադատված ամուսնու պատճառով ինքնին դժվար էր, գրեթե անհնարին, երկրորդ ամուսնությունը: Նման առաջարկություն սովորաբար անում էին երեխաներ ունեցող այրի տղամարդիկ: Մեր գրուցակիցներից մեկի մայրն իր երեխաներին հանձնել էր մանկատուն և ամուսնացել ութ երեխա ունեցող այրի տղամարդու հետ՝ այլ տղամարդկանց հետապնդումներից խուսափելու համար, և նրա առաջին ամուսնու ընտանիքը հավանություն էր տվել նրա այս քայլին¹⁴⁶: Այդպիսով, փրկվում էր կնոջ պատիվը և ուրեմն՝ նաև առաջին ամուսնու ընտանիքի պատիվը:

«Ժողովրդի թշնամու» մերժված և մեկուսացած ընտանիքում նույնպես դստեր ամուսնության խնդիրն էր բարդ: Օրինակ, հայրենիքի դավաճան հայտարարված ֆիդայի Մորուք Կարոյի¹⁴⁷ պատճառով տարիներ շարունակ

¹⁴² Հմմտ. օրինակ, *Ուկիլ Հարությունյանի* պատմության՝ մոր ձերբակալելու մասին դրվագը: Ռ. Հարությունյան, «Ինձ համար ինքը լավ մարդ էր»:

¹⁴³ Գ. Շագոյան, ԴԱՆ, Զովասար, 2010, Հասմիկ Ավետիսյանի (Մորուք Կարոյի դուստր) ձեռագիր հուշերից:

¹⁴⁴ Գ. Շագոյան, ԴԱՆ, Ախուրյան, 2012:

¹⁴⁵ Զ. Սարոյան, ԴԱՆ, Սյունիք, 2012, Կոլոդյա Մարտիրոսյան:

¹⁴⁶ *Կամո Աթաջանյան* // Armenia Total(itaris) <<http://armeniatotalitaris.am/?p=2147>> (29.06.2014):

¹⁴⁷ Մորուք Կարոյի մասին մանրամասն տե՛ս Ա. Յեթոյան, Մորուք Կարո. Հայ ընտանիքի

հայաձված ընտանիքում դուստրերից մեկի չամուսնանալը բացատրում էին բացառապես հոր նկատմամբ իրականացվող հետապնդումներով¹⁴⁸: Ոչ ոք չէր ուզենա կապվել իշխանությունների կողմից թիրախավորված ընտանիքի հետ: Միայնակ մնացած կանայք հաճախ պատրաստ էին ցանկացած զոհաբերության, անհավասար ամուսնությունների¹⁴⁹: Այս դեպքերում ամուսնությունը միայն կնոջ կարգավիճակի փոփոխություն չէր, այն աղջկան ազատում էր հասարակական մեկուսացումից:

Ձերբակալվածների որդիներին, հատկապես երբ նրանք մոտենում էին չափահասության տարիքին, մեծ վտանգ էր սպառնում, նրանց ավելի հաճախ, քան դուստրերին, կարող էին ձերբակալել կամ արքորել: Վտանգված այս ընտանիքներում երբեմն գենք էր դառնում Ստալինի՝ «որդին հոր համար պատասխանատու չէ»¹⁵⁰ արտահայտությունը, որը, սակայն, միշտ չէ, որ պաշտպանում էր.

«[19]41 թ. նոյեմբերի 28-ին մի խումբ միլիցիոներ մտան մեր տունը, մորս ասին՝ Մարթա, ձեր *վեշերը* կապեք, ձեզ արքորում ենք: Մայրս հարց տվեց՝ ինչ պատճառով: «Որպես հակայի ընտանիք»: Մայրս պատասխանեց՝ ես եմ մեղավոր, ինձ մենակ արքորեք, երեխաները ինչ մեղք ունեն: Մաստարայի Գասպարը պատասխանեց, թե՛ Մարթա, դրանք կատվի ձագեր են, մեծանան չանչը քցեն մեր աչքը կհանեն՝ խրկենք, քանի փոքր են... Իսկ ես ասի՝ ընկեր Լենինը ասել է. «Հայրը որդու տեղ պատասխանատու չի, որդին՝ հոր տեղ: Մենք խորհրդային դպրոց ենք գնացել և նրա ուղիով ենք դաստիարակվել»: Իսկ պետը պատասխանեց. «Դա իրականություն չի ասել ընկ. Լենինը՝ լոգունգ է բաց թողե»¹⁵¹:

Կանանց և տղամարդկանց դատավճիռների նույնիսկ ամենաընդհանուր քանակական և բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ, հակառակ սեռերի հավասարության հռչակված կարգախոսի, կանայք շարունակում էին ընկալվել որպես տղամարդու «կցորդ»: Չնայած տնտեսության և արդյունաբերության մեջ սեռերի միջև տարբերակումները հասցված էին նվազագույնի, և կանայք ներգրավված էին նույնիսկ տղամարդու ֆիզիկական ուժ պահանջող աշխատանքներում, բայց սոցիալական հարաբերությունների տեսանկյունից այստեղ առանձնապես փոփոխություն չէր նկատ-

իրպատում, Երևան, «Վան Արյան», 1998:

¹⁴⁸ Գ. Շագոյան, ԴԱՆ, Զովասար, 2010:

¹⁴⁹ Փարսադան Հարությունյան // Armenia Total(itar)is <<http://armeniatotalitaris.am/?p=3942>>:

¹⁵⁰ Պ. Տոնոյան, Շամամ տատի գոյատևման հնարքները:

¹⁵¹ Գ. Շագոյան, ԴԱՆ, Զովասար, 2010, Մորուք Կարոյի դստեր՝ Հասմիկ Ավետիսյանի գրավոր հուշերից:

վում: Ավելին, խորհրդային բռնաճնշումների մեքենան 1926 թ. շրջանառության մեջ է դնում Ռուսաստանի ՔՕ 58-րդ հոդվածի նոր խմբագրումը, որտեղ հայտնվում է՝ «ЧСИР» («член семьи изменника родины»՝ հայրենիքի դավաճանի ընտանիքի անդամ) հասկացությունը: Այն 1935 թ. ստանում է ԽՍՀՄ օրենքի ձևակերպում և լայնորեն կիրառվում է հատկապես կանանց նկատմամբ¹⁵²: Այսինքն, օրենքով է սահմանվում մի կատեգորիա (ЧСИР), որը թեև օրենքի տառի մակարդակում սեռական բնորոշում չուներ, բայց գործնականում մեծ մասամբ թիրախավորում էր հենց կանանց՝ որպես տղամարդու «ածանցյալ»:

ԵՐԵՒԱՆԵՐՆ ԱՄԲՈՂՋԱՏԻՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Բռնաճնշումների մասին երեխաների հուշերով դատելով՝ չնայած վախի ընդհանուր մթնոլորտին, ընտանիքներում շատ ավելին էր խոսվում, քան կարելի էր ենթադրել այդ շրջանի մասին մեծահասակների հիշողություններից: Երեխաների վարքի նկարագրություններից հասկանալի է դառնում, որ ընտանիքներում բարձրաձայնվել են տարբեր «փակ» թեմաներ, կամ դրանք ստացել են այնպիսի վերաբերմունք, որ երեխաների մեջ ձևավորվել է պաշտոնական գնահատականից խիստ տարբեր ընկալում: Բռնաճշվածների երկրորդ սերնդի այս հիշողությունները լավ օրինակ են առաջին սերնդին բնութագրելու համար: Այս հիշողությունները հաճախ ընտանեկան կիսագրույցների և որոշ թեմաներից խուսափելու վկայություններն են, որտեղից էլ հաճախ ծնունդ են առնում ամբողջատիրական համակարգին մանկական դիմադրության օրինակները: Դրանցից է դպրոցական Խաժակ Հմայակյանի որոշումը որպես բողոք իր պապիկի ձերբակալության դեմ չարտասանել Ստալինին գովերգող Նաիրի Զարյանի բանաստեղծությունը¹⁵³: Սա ոչ ուղղակիորեն խոսում է այն մասին, որ ազգականների միջավայրում «ընտանիքի անդամ»/«ազգի դավաճան» երկընտրանքը հաճախ լուծվում էր հոգուտ հարազատի: Այս իրավիճակը տպավորիչ պատմում է Ռևիկ Հարությունյանը.

¹⁵² Հմմտ. Լ. Գասպարյան (Սեդրոսյան), Շատ մեծ էր կրած դառնությունը // Lragir.am, 13.06.2009 <<http://www.lragir.am/index/arm/0/society/view/27238> > (21.10.2014):

¹⁵³ Խ. Հմայակյան, «Տարան, տարան ու տարան»:

«Ես երբեք, նույնիսկ էն տարիներին, որ բոլորը համոզված էին, որ [19]37 թվին անարդարություն չի եղել, դա ճիշտ ա եղել, և այլն, և այլն, ես էն ժամանակ էլ, ես իմ հորս սիրել եմ: Երբեք իմ մերս չի ասել, որ քո հերը անմեղ ա, բայց ես ամբողջ մորս կեցվածքով զգում էի, որ իմ հերս անմեղ ա»¹⁵⁴:

Երեխաները վաղ տարիքից սովորում էին լռելու կամ իրենց ընտանիքի մասին կեղծված պատմություն ներկայացնելու անհրաժեշտությանը: Շատերը ստիպված էին իրենց ծնողների մասին ստեղծել մի առասպել և օտարներին, ինչպես նաև պաշտոնական կենսագրություններում, ներկայացնել միայն այդ վարկածը: Օրինակ, Սողոմոն Հարությունովը խոստովանում է, որ ամբողջ կյանքը ստիպված էր ստել գնդակահարված հոր մահվան իրական պայմանների մասին: Իրականության ազգականներն ու բարեկամները քաջատեղյակ էին, սակայն հաճախ բնակության վայրը փոխող այս ընտանիքն իր բազմաթիվ հարևաններին ներկայացնում էր ընտանեկան պատմության հորինված տարբերակը, որ իբրև թե հայրը սրտի կաթվածից է մահացել¹⁵⁵:

Քննարկելով բռնաճնշումներին զոհ գնացած մարդկանց քանակը, սովորաբար հաշվի չեն առնում մանկությունը կորցրած նրանց զավակների խեղված ճակատագրերը: Նրանցից ոմանք դարձան ընտանիքի ավագը և պատասխանատուն, ուրիշներն ընկան մանկատուն՝ գրկվելով ոչ միայն ծնողներից, այլև բոլոր ազգականներից, երբեմն էլ նաև մայրենի լեզվից¹⁵⁶: 1927 թ. ԽՍՀՄ-ի բնատերի և ճամբարների 48 %-ը կազմում էին 16-24 տարեկանները¹⁵⁷: Իսկ 1940 թ. դեկտեմբերի 10-ի որոշմամբ 12-ամյա երեխաներին կարող էին գնդակահարել, օրինակ, երկաթգիծը վնասելու մեղադրանքով¹⁵⁸: Ձերբակալվածների երեխաներին հաճախ մանկատուն էին հանձնում, ինչը պարտադիր չէր անել նախկին բնակության վայրում կամ նույնիսկ հայրենիքում, տվյալ դեպքում՝ Հայաստանում: Ունենք պատմություն, երբ տարբեր մանկատներ ուղարկված մեկ ընտանիքի երեխաներից մեկին հաջողվել է գտնել, մյուսին՝ ոչ, նրա ճակատագիրը մինչ օրս մնում է անհայտ¹⁵⁹: Սրտացավ

¹⁵⁴ Ռ. Հարությունյան, «Ինձ համար ինքը լավ մարդ էր»: հմմտ. նաև «Ընտանեկան արթմ» ֆիլմը (ռեժ. Հովհաննես Իշխանյան, 2014):

¹⁵⁵ Ս. Հարությունով, «Мы всю жизнь скрывали»:

¹⁵⁶ Գ. Շաղոյան, ԴԱՆ, Ախտրյան, 2012-13, Անժեյա Շահբազյան:

¹⁵⁷ Տե՛ս Ա. Сопженицын. Архипелаг ГУЛАГ М.: Инком, 1991, т. 6. էջ 277: Հմմտ. կոլխոզի պահեստից մեղր գողանալու համար անչափաս երկու տղաների 5-7 տարով բանտարկելու դրվագը: Տե՛ս Պ. Տոնոյան, Շամամ տատի գոյատևելու հնարքները:

¹⁵⁸ Լ. Օվչинникова. Дети в сталинских лагерях // История, № 11/2003, <<http://his.1september.ru/article.php?ID=200301101>> (15.06.2014):

¹⁵⁹ Գ. Շաղոյան, Լ. Արրահամյան, ԴԱՆ, Ախտրյան, 2012, 2013, Անժեյա Շահբազյան, Գյումրի, 2012; Պ. Տոնոյան, Շամամ տանի գոյատևելու հնարքները:

ազգականների կամ բարեկամների ընտանիքները հաճախ վերածվում էին յուրօրինակ մանկատների¹⁶⁰, որտեղից տեղափոխումներն իրական մանկատուն և հակառակը դարձել էին սովորական երևույթ¹⁶¹:

Չնայած պետական գաղափարախոսությունը հատուկ աշխատում էր գավակներին վերածել «ընտանեկան լրտեսների»¹⁶², մեր նյութերը վկայում են, որ այս գաղափարախոսական կամպանիան գոնե Հայաստանում հիմնականում ձախողված էր: Ընտանեկան ավանդական կապերն ու ծնողների և հասկապես հայրերի հանդեպ անքննելի հարգանքն ու սերը հաջողությամբ դիմակայում էին պետության ստեղծած «թշնամու» կերպարին: Բացառություն էին կազմում, թերևս, Հայկական լեզուում հայտնված և բացեիբաց Խորհրդային Միության թշնամու կողմն անցածների գավակների վերաբերմունքը, ովքեր ոչ միայն հանրայնորեն, այլև ներքուստ էին նրանց դատապարտում: Թեև նույնիսկ այս մարդկանց պարագայում երեխաների վերաբերմունքի մեջ լիսում էին տարբերություններ: Օրինակ, մեր գրանցած դեպքերից մեկում դուստրն իր հոր հանցանքի հանդեպ ավելի հանդուրժող էր և շարունակում էր նրան արդարացնել, մինչդեռ եղբայրն արգելում էր նույնիսկ հոր անունը տալ¹⁶³: Լինել «ազգի դավաճանի» գավակ նշանակում էր գրկվել մի շարք հնարավորություններից, այդ թվում՝ կարիերա կառուցել որոշակի ոլորտներում, օրինակ՝ քաղաքական, ռազմական, որոնք, ի դեպ, հիմնականում ենթադրում էին տղաների մասնակցություն: Իհարկե, երեխան կարող էր դուրս գալ այս փակուղուց, եթե առնվազն համաձայնեք հրապարակավ հրաժարվել հորից/ընտանիքից¹⁶⁴: Մեր գրանցած պատմություններում նման դեպքեր չարձանագրվեցին, ինչը, իհարկե, չի նշանակում, որ դրանք չեն եղել:

¹⁶⁰ Տե՛ս Պ. Տոնոյան, Շամամ տատի գոյատևման հնարքները, *Ասյա Յասոյան* // Armenia Total(itar)is ևն:

¹⁶¹ Պ. Տոնոյան, Շամամ տատի գոյատևման հնարքները, *Ս. Խուրշուդյան*, Խոհարարի պահապան շերեփը ևն:

¹⁶² Օրինակ, հերոսացնելով Պավլիկ Մորոզովի կերպարը, որի ութ նախատիպերից մեկը նահատակված բաքվեցի հայազգի Գրիշա Յակոբյանն էր: Սրա մասին տես *В. Игнатов. Доносчики в истории России и СССР*, М.: «Вече», 2014: Մորոզովի կերպարի ձևավորման և պատմության մասին տես *Ю. Дружников, Доносчик 001, или Вознесение Павлика Морозова*. М.: Московский рабочий, 1995; *K. Kelly, Comrade Pavlik: The Rise and Fall of a Soviet Boy Hero*, Granta Books, 2005: Հմմտ. նաև Անաստաս Միկոյանի գովերգումը պիոներ Կոլյա Շչեգովի, ով մատնել էր հորը. «Жесть. 20 лет ВЧК ОГПУ НКВД. Речь Микояна на праздничном мероприятии - юбилее 20 лет деятельности ВЧК ОГПУ НКВД - торжественный вечер в Большом театре Союза ССР, Москва, Россия, 1930-е годы», <<https://www.youtube.com/watch?v=dqe30iGxbR8>> (30.05.2014):

¹⁶³ Գ. Շաղոյան, ԴԱՆ, Երևան, 2014:

¹⁶⁴ Ռ. Արրահամյան, «Նույն ՆԿԿ-իստները եղել են և՛ չար, և՛ բարի»:



Այսպիսով, խորհրդային բռնաճնշումները, մարդկային միլիոնավոր կյանքեր և ճակատագրեր խեղելով, ձևավորում էին հասարակական նոր հարաբերություններ՝ հռչակված սոցիալական քաղաքականությանը զուգահեռ հաճախ գործի դնելով ճիշտ հակառակ տրամաբանությամբ զարգացող գործընթացներ: Ինչպես փորձեցի ցույց տալ, խորհրդային ընդհանուր արդիականացմանը զուգահեռ, երբ ստեղծվեցին սոցիալական մոբիլությունն ապահովող որոշակի պայմաններ, լուծվեց համընդհանուր կրթության հարցը, քանդվեցին ավանդական գենդերային ու գերդաստանային, համայնքային հարաբերությունները ևն, խորհրդային կառավարման հակառակ երեսը կազմող բռնաճնշումներն աշխատում էին հասարակական հարաբերությունների արխաիկացման ուղղությամբ: Միլիոնավոր մարդիկ զրկվեցին սոցիալական սանդղակով դրական տեղափոխության հնարավորությունից՝ արժանանալով փաստացի ստրուկի կարգավիճակի, միլիոնավոր երեխաների հանրակրթական ծրագիրը փոխարինվեց աշխատանքային ճամբարներով: Կոռջ և երեխաների կախվածությունը տղամարդու կարգավիճակից ամրագրված էր օրենքով (ԿՇՄԲ): Ոչ ֆորմալ՝ համայնքային հարաբերությունները ստեղծվում էին ինստիտուցիոնալ տարբերակների բացակայության պատճառով և ընդունում շատ ավելի արխաիկ ձևեր: Մեծ ընտանիքը թեև տրոհվում և մոտենում է արդիական հասարակությանը բնորոշ փոքր ընտանիքին, սակայն խորհրդային ընտանիքի կարծրացած սահմաններն ու ընտանիքի ներսում հայտնված անձի իրավունքները, միևնույնն է, մնում են ստորադասված խմբին. ընդամենը խումբն է փոքրանում: Մակայն վերջինիս լիազորություններն անձի նկատմամբ մեծանում են, անձը դառնում է տվյալ խմբի՝ ընտանիքի կցորդն ու ամբողջովին կորցնում ինքնուրույնությունը: Այս կաղապարները ձևավորում են նաև համապատասխան պրակտիկաներ, որոնցից շատերը ցայսօր էլ շարունակում են կենցաղավարել:

Ո՞Վ ԷՐ ՄԵՂԱՎՈՐ.

**ՍՏԱԼԻՆՅԱՆ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՄԱՍԻՆ ԲՈՒՆԱԴԱՏՎԱԾՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ
ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ՊԱՏՄԱՇԱՐԵՐԸ**

**ԽՄԿԿ XX ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ «ԱՆՀԱՏԻ
ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ» ՓՐԿԱՐԱՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ**

1956 թվականը խորհրդային պատմության մեջ մտավ իբրև ԽՄԿԿ XX համագումարի տարի: Այդ համագումարը դարձավ շրջադարձային իրադարձություն խորհրդային հասարակության համար, մեծապես փոխեց շեշտադրումները Խորհրդային Միության քաղաքական կյանքում: Համագումարի ժամանակ լավեց «Սովետական Միության կոմունիստական պարտիայի կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը պարտիայի XX համագումարին. ՍՄԿԳ Կենտկոմի առաջին քարտուղար ընկեր Ե. Ս. Խրուշչևի զեկուցումը»,¹ որտեղ, ի թիվս տարբեր հարցերի քննարկման, կար Բերիային նվիրված դրվագ,² և մեկ այլ դրվագում խիստ հակիրճ անդրադարձ էր կատարված անհատի պաշտամունքին՝ առանց անուններ տալու: Խնդիրը «տեսականորեն» պարզաբանվեց (կրկին առանց անուններ հնչեցնելու) Մ.Ա.Սուլովի ճառում:³ Համագումարի իր ելույթում մեկ-երկու նախադա-

¹ Տե՛ս «Սովետական Չայաստան», 16 փետրվարի 1956 թ.:

² «Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն մեծ ուշադրություն է նվիրել և նվիրում սոցիալիստական օրինականության ամրապնդմանը: Փորձը ցույց է տալիս, որ սոցիալիստական օրինականության նվազագույն թուլացումը Սովետական պետության թշնամիները ձգնում են օգտագործել իրենց ստոր, քայքայիչ աշխատանքի համար: Այդպես էր գործում պարտիայի կողմից մերկացված Բերիայի բանդան, որը փորձում էր պետական անվտանգության օրգանները դնել պարտիայի և Սովետական իշխանության վերահսկողությունից դուրս, դրանց վեր դասել պարտիայից ու կառավարությունից, այդ օրգաններում ստեղծել անօրինականության ու կամայականության մթնոլորտ: Այդ շայկան թշնամական նպատակներով դեկավար ազնիվ աշխատողների և սովետական շարքային քաղաքացիների հասցեին հորինում էր կեղծ մեղադրական նյութեր»: «Սովետական Չայաստան», 16 փետրվարի 1956 թ.:

³ «Անհատի կուլտի թերրիան և պրակտիկան, որոնք խորճ են մարքսիզմ-լենինիզմի ոգուն և որոնք տարածում էին գտել մինչև XIX համագումարը, զգալի վնաս հասցրին ինչպես պար-

ությունը Բերիայի՝ Հայաստանին պատճառած վնասներին անդրադառնում է նաև Հայաստանի կոմկուսի ղեկավար Ս. Հ. Թովմասյանը:⁴ Եվ միայն Ն. Ս. Խրուշչևի՝ համագումարի փակ նիստի ժամանակ ներկայացրած զեկուցման (ավելի քան 70 էջ ծավալով) մեջ էր, որ այդ ժամանակվա չափանիշներով զգալիորեն խոսվեց Ստալինի ու Բերիայի գործունեության մասին՝ խնդիրը ներկայացնելով «անհատի պաշտամունքի» հարցադրման տեսանկյունից:⁵ Վերջինս իր տեսական-պաշտոնական ձևակերպումը գտավ հաջորդիվ մեջտեղ եկած մի շարք փաստաթղթերում՝ «Սովետական Միության կոմունիստական պարտիայի XX համագումարի բանաձևը ՍՄԿՊ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցման վերաբերյալ», որի III բաժնում կա դրվագ անհատի պաշտամունքի առնչությամբ,⁶ ավելի մանրամասն՝ «Պրավդայում» մարտի 28-ին լույս տեսած «Ինչու՞ անհատի պաշտամունքը խորթ է մարքսիզմ-լենինիզմի ոգուն»⁷ ու «ՍՄԿՊ կենտրոնական կոմիտեի որոշումը անհատի պաշտամունքը և նրա հետևանքները հաղթահարելու մասին»⁸ ծավալուն հրապարակումներում:

տիական կազմակերպական, այնպես էլ իդեոլոգիական աշխատանքին: Նրանք նվազեցնում էին ժողովրդական մասսաների դերը, և պարտիայի դերը, նվաստացնում էին կոլեկտիվ ղեկավարությունը, քայքայում էին ներպարտիական դեմոկրատիան, ճնշում էին պարտիայի անդամների ակտիվությունը, նրանց նախաձեռնությունը և ինքնագործունեությունը, հանգեցնում էին աշխատանքում առանձին անձանց անվերահսկողության, անպատասխանատվության և նույնիսկ կամայականության, խանգարում էին քննադատության և ինքնաքննադատության ծավալմանը և առաջ էին բերում հարցերի միակողմանի, իսկ երբեմն էլ՝ սխալ լուծում»: «Սովետական Հայաստան», 19 փետրվարի 1956 թ.:

⁴ «Միջազգային իմպերիալիզմի գործակալ Բերիան և նրա բանդան փորձում էին բարոյալքել մեր ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպությունը: Նրանք մեծ վնաս հասցրին Հայաստանի Կոմունիստական պարտիայի ղեկավար կադրերին և հայ ժողովրդին»: «Սովետական Հայաստան», 24 փետրվարի 1956 թ.:

⁵ Доклад Первого секретаря ЦК КПСС тов. Хрущева Н. С. XX съезду. <http://www.coldwar.ru/hrushchev/doklad-pervogo-sekretarya%20hrushcheva.php> (դիտված է 21.09.2015): Բնութագրական է, որ այդ զեկուցումը կարդացվել է համագումարի հիմնական աշխատանքների ավարտից հետո, երբ կուսակցության ղեկավար մարմիններն համագումարի կողմից արդեն ընտրվել էին: Չեկուցումից հետո քննարկումներ չեն կայացել: Խնդրի մանրամասն դիտարկումը տես XX съезд КПСС. Доклад Хрущева о культе личности Сталина // История России <http://histrf.ru/ru/lenta-vremeni/event/view/xx-siezd-kpss-doklad-khrushchjeva-o-kul-tie-lichnosti-stalina>; Леонид Млечин, История секретного доклада // <http://kommersant.ru/doc/2900598>:

⁶ «Կոմունիստների և բոլոր աշխատավորների ակտիվությունը բարձրացնելու համար կարևոր նշանակություն ունեցավ պատմության մեջ անհատի դերի մարքսիստական-լենինյան ըմբռնման լայն պարզաբանումը: Համագումարը գտնում է, որ Կենտրոնական Կոմիտեն միանգամայն ժիշտ հանդես եկավ անհատի պաշտամունքի դեմ, որի տարածումը փոքրացնում էր պարտիայի ու ժողովրդական մասսաների դերը, նսնացնում էր պարտիայի մեջ կոլեկտիվ ղեկավարության դերը և հաճախ աշխատանքում հանգեցնում էր լուրջ էրիպումների, և Կենտրոնական Կոմիտեն հանձնարարում է չթուլացնել պայքարը անհատի պաշտամունքի մնացուկների դեմ...»: «Սովետական Հայաստան», 25 փետրվարի 1956 թ.:

⁷ Տես «Սովետական Հայաստան», 29 մարտի 1956 թ.:

⁸ Տես «Սովետական Հայաստան», 3 հուլիսի 1956 թ.:

«Անհատի պաշտամունքի» տեսության մեջտեղ բերելը, ի թիվս մի շարք խնդիրների, լուծում էր մեկ հիմնական հարց՝ պահպանել կոմունիստական կուսակցության ղեկավար դերը Խորհրդային Միությունում, այդ կերպ պահպանելով միակուսակցական համակարգը, այն է՝ միահեծան իշխանությունը, լայն առումով՝ կոմունիստական ռեժիմը:⁹ Ինչու՞: Այն պարզ պատճառով, որ Ստալինի ու նրա մերձավոր շրջապատի մենիշխանությունը հետևանք էր միակուսակցական համակարգի: Սակայն դրա մասին բարձրաձայնելը, մեղադրանքները համակարգի վրա բարդելը կհանգեցնեին այդ համակարգի վերացման անհրաժեշտության խոստովանության: Ուստի և պետք էր գտնել ավելի «ընդունելի» քավության նոխսագ, որպիսի գործառույթ էլ տրվեց «անհատի պաշտամունքի» նորաթուխ տեսությանը և դրա հաղթահարման անհրաժեշտության մատնանշմանը:¹⁰ Ավելի պարզ՝ մեղքը բարդվեց մեկ անձի վրա¹¹: Ու այդ բառի բուն իմաստով «փրկարար» տեսությունը

⁹ Բնութագրական է, որ ԽՄԿԿ ԿԿ-ի 1956 թ. հուլիսյան որոշումից հետո (տե՛ս նախորդ հղումը), խորհրդային կենտրոնական և մասնավորապես հայաստանյան մամուլում (նկատի ունեն Չայկովկուսի օրգան «Սովետական Չայաստան» օրաթերթը) ընդամենը մի քանի օրում (տե՛ս, օրինակ, հուլիսի 5, 7, 11-ի համարները) մեծ թափով սկսեցին տպագրվել հորդվածներ ու թղթակցություններ տեղերից կոմկուսի դերի ու տեղի մասին հետևյալ բնութագրական վերնագրերով. «Սովետական Միության աշխատավորները ջերմորեն հավանություն են տալիս և պաշտպանում ՍՄԿԴ Կենտկոմի որոշումը «Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները հաղթահարելու մասին», «Պարտիան ասում է ծմբարտությունը», «Էլ ավելի սերտորեն կհամախմբվենք լեհիկայան Կենտրոնական կոմիտեի շուրջը», «Պարտիայի ուժը նրա գաղափարների ծմբարտացիության մեջ է», «Ժողովուրդը ընդամենը է իր պարտիային», «Մենք միշտ քեզ հետ ենք, պարտիա», «Պարտիայի հզորության և միասնության նոր վկայությունը», «Կոմունիստական պարտիան սովետական ժողովրդի ոգեշնչողն ու առաջնորդն է («Պրավդա», 6 հուլիսի)», «Անսասան է պարտիայի միասնությունը», «Պարտիայի և ժողովրդի կապը անխզելի է»:

¹⁰ «Ստալինի անհատի պաշտամունք» ձևակերպումն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել ԽՍՀՄ Սինիստրների խորհրդի նախագահ Գ. Մալենկովը ԽՄԿԿ ԿԿ-ի 1953 թ. հուլիսյան պլենումում: Ընդհանրապես 1953-1956 թթ. իրադարձությունների վերլուծության հաջողված գործ է փաստաթղթերի հրապարակմամբ համեմված հետևյալ աշխատությունը՝ Реабилитация: Как это было март 1953 – февраль 1956 гг. Ред. совет: А. Н. Яковлев (председатель), Е. Т. Гайдар, В. П. Козлов и др. Документы Президиума ЦК КПСС и другие материалы. Составители А. Артизов, Ю. Сигаев, В. Хлопов, И. Шевчук. М., 2000.

¹¹ Կոմունիստական կուսակցության համար փրկողակի դեր վերապահվող «անհատի պաշտամունքին» հանրությունը միանշանակ չէր արձագանքել և, չբավարարվելով իրեն հրամցված մեղավոր «անհատներով» փորձել էր վիճարկել «պարտիայի քաղաքականության ծշտությունը», ինչին շատ արագ հակահարված էր տրվում կուսակցության թե՛ կենտրոնական, թե՛ տեղական մարմինների կողմից: «Խորը ուսումնասիրել ՍՄԿԴ XX համագումարի որոշումները» («Սովետական Չայաստան», 7 ապրիլի 1956 թ.) հրապարակման մեջ սպառնալի խորհուրդ է տրվում «չափի ծանաչել» և դուրս չգալ թույլատրելիի շրջանակներից. «Կճակական այլաբար մղելով անհատի պաշտամունքի դեմ, որը լայն տարածում ստանալով Ի. Վ. Ստալինի կյանքի և գործունեության վերջին շրջանում մեծ վնաս հասցրեց գործին, ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպությունները պետք է լայնորեն ծավալեն սկզբունքային, համարձակ քննադատությունն ու ինքնաքննադատությունը, էլ ավելի բարձրացնեն մասսաների ակտիվությունն ու ստեղծագործական նախաձեռնությունը: Միևնույն ժամանակ նրանք չպետք է անցնեն այն

մատուցվեց խորհրդային քաղաքացիներին տասնամյակներ շարունակ: Առաջ անցնելով նկատենք, որ դա է հիմնավոր պատճառներից մեկը, եթե ոչ ամենահիմնականը, որ մեր հետազոտության մեջ ընդգրկված բանասացների ճշող մեծամասնությունը ստալինյան ժամանակաշրջանի բռնությունների հիմնական մեղավոր համարում էր ոչ թե համակարգը, այլ իր անունը բռնադատվողների ցուցակում մտցրած գյուղխորհրդի կամ կոլտնտեսության նախագահին, մատնագիր գրած հարևանին, ծանոթ համագյուղացուն կամ համաքաղաքացուն, վերջապես բավականին հազվադեպ՝ Ստալինին կամ Բերիային: Այսինքն՝ անհատներին: Եզակի են այն դեպքերը, երբ միլիոնավոր մարդկանց արքայի, բանտարկության կամ գնդակահարության մեղավոր էին ընկալվում ու ներկայացվում համակարգը, ռեժիմը:

Սակայն տեսնենք, թե ինչպես, ինչ ձևակերպումներով ու հիմնավորումներով են հարցը ներկայացնում բռնադատվածներն իրենք և նրանց մերօրյա ժառանգները: Մինևույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ անցած-գնացած ժամանակների մասին հիշողությունները ստատիկ երևույթներ չեն, այլ ենթակա են ձևափոխումների, որոնք կարող են լինել ինչպես ներքին զարգացումների արդյունք, այնպես և արտաքին ազդեցությունների հետևանք:¹²

ԲՈՒՆԱԴԱՏՎՈՂՆԵՐԻ «ՄԵՂՔԵՐԸ»

Բռնադատվողների «մեղքերը» շատ են եղել: Բռնադատվածների խնդիրները քննարկող յուրաքանչյուր հետազոտության կամ հուշագրության մեջ մանրամասն անդրադարձ է արված բռնադատման «հիմք» հանդիսացող պատմություններին: Ստորև սակայն ես փորձելու եմ համառոտակի անդրա-

փաստերի կողքից, երբ *առանձին նեխված տարրերը անհատի պաշտամունքը դատապարտելու պատրվակով ծգնում են կասկածի տակ դնել պարտիայի քաղաքականության ծշտությունը, փորձում են քննադատությունը և ինքնաքննադատությունն օգտագործել ամեն կարգի զրպարտիչ հերյուրանքների և հակապարտիական պնդումների համար* [ընդգծումն իմն է – Յ.Մ.]»:

¹² Հիշողության մասնագետների մեջ գնահատվում են տարբեր մոտեցումներ: Հեղինակների մի մասի համոզմամբ անցյալը փոփոխական է, այն կերտվում ու վերակերտվում է ներկայի օգտագործման համար, ներկայի պահանջմունքներից էլնելով: Տեսաբանների մյուս խումբը գտնում է, որ կոլեկտիվ հիշողությունները վերապրում են հասարակության ներսում տեղ գտած փոփոխությունները, և ավելին, անցյալն է, որ ձևավորում է ներկայի մասին մեր պատկերացումները և ըմբռնումները, այլ ոչ հակառակը: Երրորդ ուղղությունը ներկայացնող գիտնականների համեմատաբար փոքր խումբը գտնում է, որ նույն ներկան կարող է կրել տարբեր հիշողություններ, և տարբեր ներկաներ կարող են կրել միևնույն հիշողությունը ու, այդպիսով, կոլեկտիվ հիշողությունը քաղաքական մշակույթի մեջ ժամանակի միջով ընթացող քննարկումների դիմամիկ, շարունակական գործընթաց է: Մանրամասն տես *Հարություն Սարոյան*, *Հայ ինքնության պատկերագրությունը*: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Երևան, 2009, էջ 27-67:

դառնալ միայն այն «մեղքերին», որոնք հիշատակվում են իմ ու գործընկերներիս հավաքած պատմություններում, այսինքն՝ առկա են մեր օրերի մարդկանց պատկերացումներում: Դրանց մեջ, թերևս, կարելի է առանձնացնել երկու հիմնական խմբեր, որոնք պայմանականորեն կարելի է բնութագրել իրեն ա) գաղափարախոսական (իրական և կեղծ) և բ) անձնական հենք ունեցող:

Գաղափարախոսական բնույթի «մեղքեր» էին համարվում նախկինում «Դաշնակցություն» կուսակցության անդամ կամ համակրող կամ որպես այդպիսին ներկայացվող լինելը: Այդպիսին է, օրինակ, Հասմիկ Տեր-Ավագյանի հայրական պապիկի՝ «հայտնի ֆիդայի» քահանա Տեր Գրիգոր Տեր Ավագյանի դեպքը, որը Շեղեգնաձորում համագործակցել է Անդրանիկ գործավարի հետ, չի լքել նրան դժվարին ժամանակներում: Տեր Գրիգորի մահվան հանգամանքները ցայսօր անհայտ են, նա «անհետացել է» Հայաստանի խորհրդայնացման հենց սկզբում, բայց «դաշնակ ազգայնական» լինելու մեղադրանքով բռնադատվել, ապա և գնդակահարվել են նրա չորս որդիները՝ Անուշավանը, Հմայակը, Հայրիկը, Խորենը: Մի առանձին, կարելի է ասել «խավ» են կազմել բոլշևիկյան-ադրբեջանական ագրեսիային դիմակայողները: Ինչպես նշում է Ակսել Բակունցի թանգարանի տնօրեն, պատմաբան Վարդան Սարգսյանը. «[19]20-ական թվականների կեսերից սկսվել է դա [բռնությունների ալիքը], հատկապես բոլոր նրանց նկատմամբ, ովքեր մասնակցել են Զանգեզուրի հերոսամարտին: Փաստորեն չի շրջանցվել ոչ մեկը: Ոչ միայն մասնակիցները, այլև շրջապատը, նրանց հարազատները, նրանց բարեկամները: ...Դե բնականաբար դրանք [Լեռնահայաստանի հերոսամարտի ակտիվ մասնակիցները] մեծավ մասամբ դաշնակցական կուսակցության անդամներ էին, ... այնուհետև շարքային մասնակիցները, և ահա այդպես ալիքը ծավալվել է ընդհուպ [19]30-ական թվականների սկիզբը: ...Ընդհուպ մինչև [19]35-36 թվականները ավելի թափ ստացավ էս ամենը, բնականաբար մտավորականության բոլոր շերտերն էլ ենթարկվեցին [բռնությունների]»: Նրանց թվին էր պատկանում նաև ծավեցի Դերանց Աշոտի պապը՝ Շիշկերտ գյուղից Պատվական Տեր-Գրիգորյանը, ով Զանգեզուրի ինքնապաշտպանությունը ղեկավարող Գարեգին Շժդեհի վաշտապետերից էր և իրենց գյուղում կազմակերպած հեծելազորի հրամանատարը: Նրան կալանավորում, ապա և աքսորում են Սոլովեցկ 1927 թ., որտեղ էլ նա վախճանվում է:¹³ Նմանատիպ բախտի է արժանացել նաև գործակցի բազմավաստակ մանկավարժ Նինա Հովսեփյանի հայրը՝ հասարակական-քաղաքական գործիչ Նիկոլայ Հովսեփյանը (Օսիպովը), ով հա-

¹³ Մանրամասն տե՛ս *Գրիշա Սմբատյան*, Երկաթե վարագույրից այս կողմ, Երևան, 2009, էջ 163-165: Պատվական Տեր-Գրիգորյանի թոռան՝ Աշոտ Գրիգորյանի հիշողություններով նա գնդակահարվել է Գորիսի բանտում:

մագործակցել է Անդրանիկ զորավարի, ապա և սերտ շփումներ ունեցել Նժդեհի հետ: 1919 թ. մարտին նա նշանակվել էր Գորիսի գավառապետ, 1921 թ. Նժդեհի հետ անցել Պարսկաստան, ապա, հավատարով կոմունիստների խոստումներին, վերադարձել ծննդավայր: Նրան կոչել են «Չանգեզուրի Բիսմարկ»: 1931 թ. օգոստոսի 30-ին, ի թիվս մի քանի այլ համաքաղաքացիների, նա գնդակահարվում է քաղաքի Շորին-ձոր վայրում:¹⁴

Հակախորհրդային քարոզչություն էր որակվում իշխանությունների հասցեին ասված փոքր քննադատական խոսքն անգամ, հատկապես երբ այն անզգուշորեն արտաբերվում էր օտար մարդկանց մոտ: Այսպես, կապանցի Ռուդիկ Քարամյանը պատմում է, որ իր տատիկի եղբայրը՝ Բալա Պետրովիչ Մելիք-Քարամյանը, Խանջյանի սպանության օրերին «Մի գործով գնում ա Թիֆլիս: Խանջյանին որ սպանում են, կայարանում վերցնում ա ասում՝ «Խանջյանը հո հիմար չի, որ իրան սպանի»: Մի հատ թուրք կայարանապետ ա լինում կողքին կանգնած՝ դա լսում ա: Ինքը [Բալա Պետրովիչը] նստում ա վագոն, որ պիտի գար Բաքու, ճամփին ձերբակալում են: Ու գնում ա դատը: Դատում են Բաքվում, տասը տարի են տալիս»: ¹⁵ Նմանատիպ դրվագ է մնացել երևանցի Արմեն Ոսկանյանենց ընտանեկան հիշողություններում. «Պապիկիս ձերբակալել էին Խանջյանի մահվան հետ կապված. այսինքն՝ նրա մահվանից հետո նեղ շրջապատում ասված խոսքերի համար, որ «դժվար դա ինքնասպանություն լիներ, դա սպանություն էր, նրա գլուխը կերան, էս մարդը ուզում էր ինչ-որ բան անել, երկիրը լավացներ»:

Թերևս «գաղափարախոսական» հենք ունի նաև արտասահմանի համար լրտեսության մեղադրանքը, ինչը բնականաբար նշանակում էր, որ «լրտեսը» խորհրդային կարգերի թշնամի է: Արտասահմանի հետ «կապ» ունեցողներին խորհրդային գործակալները, որպես կանոն, հետևում էին տարիներ շարունակ, անընդհատ «փաստեր» էին կուտակում և, հարմար պահը որսալով, «լրտեսին» մեկուսացնում էին հասարակությունից (հմմտ. Տիգրան Ջրբաշյանի դեպքը): Ռուբեն Ջրբաշյանն իր երկրաբան հոր մասին պատմում է, որ «Մեղադրանքը այն էր, որ նա արտասահմանյան լրտես է: Թ-ե ինչու՞մն է լրտեսությունը դրսևորվել՝ չկա որևէ ապացույց կամ հիմնավորում: 1930-ական թվականներին հայրս եղել է նաև Աղասի Խանջյանի խորհրդատուն հանքաբանության հետ կապված հարցերի գծով: Խանջյանը նրան շատ գնահատում, հարգում ու լսում էր նրա խորհուրդները: Ու իհարկե դա էլ իր զգալի դերն ունեցավ հորս ձերբակալության գործում»:

¹⁴ Մանրամասն տես *Սերգեյ Հախվերդյան*, Գորիսի ամփոփ պատմություն, Երևան, 2005, էջ 268, 291, 294-95, 395, 396: *Նույնի՝* Պատմագիտական նոթեր. Սյունիք: Հողվածներ, Երևան, 2007, էջ 49-50:

¹⁵ Հմմտ. *Գրիշա Սմբատյան*, նշվ. աշխ., էջ 64-65:

Հագարավոր խորհրդային քաղաքացիներ «մեղավոր» էին այն բանի համար, որ նրանք կամ նրանց ծնողները ժամանակին եղել էին օտարահպատակ: Այդ մասին ուղղակիորեն նշված է երկրի ղեկավար Ի. Ստալինի ստորագրած ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1949 թ. մայիսի 29-ի որոշման մեջ, որտեղ թվարկվում են մարդկանց այն կատեգորիաները, ովքեր ենթակա են արքայազնի: ¹⁶ Դրանց թվում հիշատակվում են ոչ միայն «դաշնակները», այլ նաև խորհրդային քաղաքացիություն ստացած նախկին թուրքահպատակները, որոնց ճշող մեծամասնությունը, հասկանալի պատճառներով, Մեծ եղեռնից մազապուրծ արևմտահայ գաղթականներն էին: Ու նրանց թվում իմ մայրը՝ Արփենիկ Ալեքսանյանն ու նրա ընտանիքի անդամները՝ ծնողները և քույրերը:

Եվ վերջապես ծանրագույն մեղք էր համարվում Հայրենական մեծ պատերազմի ժամանակ գերմանական գերության մեջ հայտնվելը, անկախ նրանից, թե դա ինչ հանգամանքներում է տեղի ունեցել: Այդ «մեղքերի» համար նախկին գերիները պատժվում էին ոչ միայն պատերազմից անմիջապես հետո, այլ նաև 1949 թ. արքայի ժամանակ: Ծավեցի Շողեր Զաքարյանը պատմում է. «Ինչի՞ համար արքայեցի՞ն: Դե ես հի՞նչ իմանամ: Հերս գերի էր, գերությունում էր Գերմանիայում, վեց տարի չի եկել, ոչ մի նամակ չկար: Վեց տարուց հետո բանակից էկավ, իմացանք, որ գերի էր. նամակ չէր գրում: Իսկ իրա հորքուրի տղեն իրա հետ էր՝ Թամրազյան Շմավոն: Մեր գյուղից էլ իրեքն էին էլի արքայեցի՝ հերս էր, Շմավոնը ու Արշակը Բաղայան՝ մեծ մարդ էր, պատշար էր, էսդեղ էլ արքայում մահացել ա: Չեմ իմանում, թե որ թվին էր գերի ընկել [հայրս], բայց գերիությունը Գերմանիայումն էր անցել: [19]46 թվին ա էկել: Դե, տանում էին՝ քնում: Չեմ իմանում, մեզ չէր ասում [ինչի մասին էին հարցաքննում]: ...Ինքը տի՞ֆով հիվանդացած՝ գոսպիտալում պատկած էր: Էդ ժամանակ են գերի վերցրել: Դե ասում ա, չէի կարում քայլել, բան. զոռով բռնում էին ընկերներս՝ տանում: Ասում ա՝ զոռով էի քայլում: Բայց տենց էին գերի վերցրել՝ գոսպիտալից»: Պենզաշենցի Համլետ Գասպարյանը գտնում էր, որ իր հայրը բնավ արդարացի չէր համարում, որ եթե ինքը գերի է ընկել պատերազմում, ուրեմն պետք է արքայովի. «Չէ, իհարկե չէ, ինչի պետք է ընդուներ, ինքը գերի էր ընկել, իր ամբողջ վաշտը գերի էր ընկել, ինչ մեղք ուներ»:

Բռնադատվողներն ու նրանց ժառանգները նշում էին նաև այնպիսի «մեղքեր», որոնք միանշանակ անձնավորված վերաբերմունքի հետևանք են, այսինքն՝ պայմանավորված չէին որևէ օբյեկտիվ գործոններով: Այսպես,

¹⁶ Մանրամասն տե՛ս *Արմենակ Մանուկյան, Զաղաքական բռնածնյումները Հայաստանում 1920-1953 թթ.*, Երևան, 1999, էջ 229-230:

օրինակ, Վոլոդյա Մարտիրոսյանի ընտանեկան պատմությամբ նրա մորեղբոր՝ Անանիա Խաչատրյանի բանտարկությունը, ապա և գնդակահարությունը 1937 թ. սեպտեմբերին, հետևանք էր այն բանի, որ նրա քրոջ ամուսինը՝ կոմերիտական ակտիվիստ, գյուղխորհրդի ապագա նախագահ Աստոնը չէր ներել Անանիայի պնդումը, որ իր Սիրան քույրը պետք է ամուսնանա միայն եկեղեցական պսակով: Եվ դա 1928-29 թվերն էին: Մի քանի օր անց Շիշկերտ գյուղի կոմսոմոլի ժողովը իր շարքերից հեռացնում է Աստոնին: Ու հարմար պահին Աստոնը վրեժխնդիր էր եղել իր կնոջ եղբորից, դառնալով նրա դեմ մի շարք մատնագրերի հեղինակ. «Անանիայի թղթերում էլ կա, որ գյուղատվետը բացասական և գնահատում: Փաստորեն մորաքրոջս ամուսինը իրա աներձագին գրել և բացասական [կարծիք]»: ¹⁷

Ծավեցի բանասացի պատմելով. «... գյուղում նայում էին, որ հանկարծ աչքներին դուր չէր գալիս, տո եսիմ, լափ ում կինը լավ էր, էլի տանում էին, ըտենց էլ էին անում: ...Ըստեղ մի տատիկ կար, հիմա չկա, իրան տեքոր կընգա մասին էր պատմում, Սիրանի. [տատիկի] ախպորը տարան [բռնադատեցին] էլի... Պատմում էր, որ ախպորը բռնեցին տարան, [քանի որ] աչք էին դրել կնոջ վրա, կանչեցին [Սիրանին] գյուղատվետ, իբրև գործ հանձնարարելու, դռները փակեցին, բայց էդ տատիկը ճարպիկ էր, գլխի էր ընկել ինչը ինչոց և, հետևից գնացել էր: Էդ իրա ախպոր կինն էր, հետո ախպոր կնոջը ասել էր ամուսնացի, իմ ախպոր կինն ես, երեք երեխա ունես, բայց ամուսնացի»:

Տաթևի 1990-ական թվականների գյուղապետ Էդիկ Խաչատրյանի կարծիքով նույնպես էական է եղել պաշտոնյային պոտենցիալ բռնադատվողի դուր գալ-չգալը. «Էն ժամանակ, ասեմ Ձեզ, ինչ և էղել: Սենց մի հատ բան կա, ինչ-որ մի հատ պաշտոնյա մարդ և էղել՝ կամ քարտուղար, կամ, չգիտեմ, կոլխոզի նախագահ-մախագահ, երևի ում դուրը չի եկալ կամ ինչ և իլալ՝ անունները գիրալ, եկալ են տարալ»: Հայկավանից Սուքիաս Զաքարյանը նույն միտքը ձևակերպում է քիչ այլ կերպ. «Մեկին ձևակերպեցին, յանի [իբր թե] մե բանմ է խոսացել, վատ բան է խոսացել կոլխոզի նկատմամբ, սուտ է, բայց ընդհանրապես գեղի մեջ մունդար մարդ կար ... ուղղակի չկամեցողություն է էղել»: Գոշեցի Էմմա Արզումանյանը պատմում է, որ իր սկեսրայրի եղբայրը՝ Ամիրխանյան Բեգլարը, կամային, չենթարկվող անձնավորություն էր, ու գյուղի «վերնախավը» որոշել է պատժել նրան: Համագյուղացիներից մեկն ասել է, թե գիտեք ինչ է էղել՝ Բեգլարը հայեղել է Ստալինին: Դա 1937 թիվն էր. «ու Բեգլարին աքսորել են»: Արալեխի Ասյա Յատյանի բնութագրմամբ այն տարիներին, «եթե դու մի կտոր հաց ունես, իսկ ես նախանձ [մարդ] եմ, ես կարող եմ չարախոսել [քո մասին] որքան կուզենամ»:

¹⁷ Անանիա Խաչատրյանի մասին տե՛ս նաև *Գրիշա Սմբատյան*, նշվ. աշխ., էջ 165-169:

Եվ արդյունքը կարող է լինել շատ ողբերգական: Չարախոսությունը կարող էր պայմանավորված լինել լրացուցիչ շահ ստանալու ցանկությամբ: Այսպես, Ռուսաստանի Արմավիր քաղաքից Սոդոմոն Հարությունովը պատմում է Սուխում քաղաքի Ստալինի անվան զբոսայգում աշխատող երկու լուսանկարիչների մասին. «մեկը մյուսին մի բան [կարծիք ինչ-որ երևույթի մասին] ասաց, հաջորդ օրն այդ մարդն արդեն չկար: Այն մյուսը մտածել էր, թե ավելի լավ է ես իրեն ծախեմ [մատնեմ], ես մենակ կմնամ [զբոսայգում], ավելի շատ [զումար] կվաստակեմ»: Գորիսեցի մի կնոջ պատմելով իր բռնադատված հորեղբոր մեղքն այն է եղել, որ նա ... ազնիվ պահեստապետ է եղել. «ոչ մեկը չի կարողացել ինչ-որ զարտուղի ճանապարհներով պահեստից ինչ-որ բան տանել, թոցնել: Էդպես պատմում են, որ առաջարկել են իրեն, որ պահեստից ինչ-որ ապրանք դուրս գրեն: Նա չի համաձայնվել, ու դրանից մի քանի ամիս հետո իրեն զրպարտել են դրա մեջ, որ իբրև Ստալինի վարչակազմի դեմ ինչ-որ հերյուրանքներ է ասել: ... գրել են, որ իբր ինքը զրպարտել է և այլն, և այլն: Դրա համար էդ մարդուն տարել [բռնադատել] են, ու այլևս ոչ ոք չգիտի որտեղ են տարել, չի վերադարձել»:

Մեր պատմությունների մեջ քիչ չեն այն դեպքերը, երբ մարդկանց արտորում, քանտարկում կամ անգամ գնդակահարում էին պարզապես այն պատճառով, որ նրա հարազատն *արդեն* բռնադատված է: Այդպես է եղել նաև Խաչիկ Գաբրուզյանի պարագայում. «[19]37 թվին հորս տարան... Ո՛նց եղավ: Խանջյանի սպանությունը էղավ [19]36-ին, չէ՛: Հուլիսի 9-ին: Խանջյանի սպանության հետ «կապեցին» հորեղբորս՝ Վահրամ Ալազանին, որպես Խանջյանի մտոկի ընկեր,¹⁸ որովհետև Խանջյանն էլ էր վանեցի, Ալազանն էլ էր վանեցի. նա էր իրեն առաջ քաշել և այլն, և այլն: Ու Ալազանին էկան տարան տնից: Էլի [19]36-ին: [19]37-ին էլ հերս քեֆը լավ մտնում ա ԿաԳեԲե, ասում ա ինչի՞ եք այսպորս տարել, ասում են, թե մտի էն դուռը, քեզ կասեն: Էդ սենյակը որ մտել էր, ասել էին ինքը [Վահրամ Ալազանը] հայրենիքի դավաճան ա, ու հորս էլ, էկել տարել են տնից գիշերը»:¹⁹

¹⁸ Աղասի Խանջյանը ծնվել է 1901 թ., Վահրամ Գաբրուզյանը (Ալազան)՝ 1903 թ., այսինքն՝ նրանք գրեթե տարեկիցներ էին:

¹⁹ Եղիազար Գաբրուզյանի նկատմամբ մեղադրանքն առաջ է քաշվել 1937 թ. ապրիլի 28-ին: Նա մեղադրվել է «եղբոր՝ Ալազանի ձերբակալությունից և հակահեղափոխական Խանջյանի դավաճանական ինքնասպանությունից հետո» խորհրդային իշխանության և ՀամԿ(Բ)Կ դեմ հակահեղափոխական քարոզչություն իրականացնելու, Ալազանի ու Խանջյանի քաղաքական համախոհ լինելու, խորհրդային Հայաստանի ղեկավարության դեմ թշնամական արտահայտություններ օգտագործելու, իբր թե զենք ձեռք բերելու ցանկության մեջ: Մանրամասն տես Դանչո-Եղիազար Գաբրուզյանի վրա հարուցված քրեական գործը. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 2, գ. 699:



Նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ բռնադատման ուղղակի մեղավոր դիտվում էին²⁰ բռնադատվողներին ա) լավ ճանաչող համագյուղացի-համաքաղաքացիները, մասնավորապես մատնագիր գրող հարևանը, կոլտնտեսության կամ գյուղխորհրդի նախագահը, ինչպես նաև բ) չճանաչող, սակայն «պլան» կատարելու աշխատանքային-կուսակցական պարտավորություն «իջեցնող» ավելի բարձր մարմինները՝ անորոշ կերպավորում ունեցող «վերևները» ու մասնավորապես գ) դրանց անձնավորված կերպարներն ի դեմս Ստալինի ու Բերիայի, դ) պետությունը, ամբողջատիրական համակարգը/ռեժիմը: Արդ, ինդիքն այն է, թե նշված կատեգորիաներից ու՞մ էր տրվում գերակայությունը, և ինչ հիմնավորումներ էին ներկայացվում:

«ՆԱԽԱԳԱՀ», ԱՆՈՒՆՆԵՐ, ՑՈՒՑԱԿՆԵՐ...

Չրուցակիցների մի որոշակի մասը առաջնահերթ մեղավոր են դիտում գյուղխորհրդի և/կամ կոլտնտեսության ղեկավարներին, ում որ հանձնարարված էր տեղեկացնել «ժողովրդի թշնամիների» մասին՝ համապատասխան ցուցակներ ներկայացնելով «վերևներին», այն է՝ վերադասին:

Այսպես, Շիշկերտից Շողեր Չաքարյանը, ում հայրը գերի էր եղել Հայրենական մեծ պատերազմի տարիներին (ինչն էլ, թերևս, եղել է 1949 թ. բռնադատվելու հիմնական պատճառը), պատմում է. «Հիմա որ մենք աքսորից էկանք, մեր գյուղսովետի նախագան բարևում ա ինձ, ասում ա «Բալա բարև», էէէէ, «էն օրվանից հետո որ աքսորած ես մեզ, ինչի բարևեմ քեզ», ասում եմ: ...Ասում եմ, «բա քո հորեղբայրն էլ էր գերի ընկած, էս մյուսն էլ, էն էլ, խի՞ իմ հորս ես աքսորել»: Տաթևի գյուղապետարանի մեր զրուցակիցն այն կարծիքին է, որ «Դ-ե մեծերից եմ լսել: Ուղղակի իմ պապս էր ասում, որ իրականում, դե էդ մարդկանց [աքսորվածներին] էն կողմից եկողները՝ Երևանից եկողները ինչ էին իմանում, ո՞ր մարդը ո՞վ ա, ինչ ա, ի վերջո, ցուցակ ա եղել, չէ՛, եկել են, անունները կարդացել, մտել տները, լցրել մեքենաները՝ տարել: Դ-ե որ պատահական էր, թող գային մի թաղամասից, խոսքի, անուն չտային, լցնեին մեքենաները՝ տանեին: ...Դ-ե եթե Երևանից մի ինֆորմացիա կա, անուն-ազգանունները կարո՞ղ ա գյուղից չեն տվել»: Տաթևի հարևան Սվաբանց գյուղից «ոչ մեկին չեն տարել [աքսորել]»: Այդ փաստն ուժեղ կովան է տաթևցիների համար համոզված պնդելու, որ աքսորվելու ելթակա մարդ-

²⁰ Չերթականությունը պայմանական է և ներկայացվում է տաքսոնոմետրիկ սկզբունքով անհատ-կազմակերպություն-համակարգ: Նման ձևակերպումներով առանձնացումը նույնպես ինչ-որ չափով պայմանական է, քանի որ բանասացների խոսքում շատ են անցումները, քիչ չեն հակասական մտքերը:

կանց ցուցակը «տեղի [տեղական, գյուղական] իշխանությունն ա արել [կազմել]» կամ «պատճառը [գյուղի] ղեկավարությունն ա»: Գյուղի պատմությանը քաջատեղյակ Էրիկ Մկրտչյանի համար նույնպես ամեն ինչ պարզ է. «Վերևից ասել են, թե ովքեր որ անհարազատ են, նրանց ցուցակը տվեք: Ստեղ [Տաթևում] էլ ցուցակը տվել են: Հարևան Սվարանց գյուղում կոլխոզի նախագահ Մղումյան Տիգրանն էր, գնացել են էնդեղ էլ են ասել (էդ մենք հետո ենք իմացել), որ ընկ. Մղումյան, բա քեզ բան [անհարազատ] չունեն, որ արքարում են, բան են անում: Ասել ա, մեր գյուղում ըստենց մարդ չկա: Բոլորը «հարազատ» են»: Բռնադատված Նոյեմ Արշակյանն էլ է քաջաձանթթ վերոբերյալ փաստարկին. «Տվյալները [աքարովողների] որ տվալ են՝ եղել ա գյուղտվետը: ...Բա ինչի՞ Սվարանցից ոչ մեկին չաքարեցին: Ինչի՞ Մղումյանը ասել ա, թե մեզ մոտ դաշնակ չկա: Մեղավորն ո՞վ էր՝ գյուղտվետն էր»:

Բնութագրական է այստեղ «անհարազատ» եզրույթը: Այն մեզ հաճախ հանդիպել է Սյունիքում դաշտային աշխատանքների ժամանակ և առավելապես օգտագործվել է՝ բռնադատվածների ընտանիքի անդամներին բնութագրելու համար: Ահա թե ինչպես է բացատրում այն բռնադատվածի գավակ կապանցի Վոլոդյա Մարտիրոսյանը. «Անհարազատ» նշանակում ա՝ ինքը պետության դեմ, չգիտեմ, մերս էդպես ա ասում, ասում ա՝ անհարազատ էին ասում [մեզ]: Չէին թողնում՝ ժողովների գնայինք, չէին թողնում՝ մասնակցեինք ոչ մի բանի: Թշնամու նման բան ա, էլի, անհարազատ, այսինքն՝ խոթոթ»: Նման մի պարզաբանում լսեցինք նաև Տաթևի գյուղապետարանում: Այնուամենայնիվ, իր ժամանակին այդ ձևակերպումն ունեցել է, թերևս, բավականին լայն տարածում: Այն հանդիպում է հանրապետական կենտրոնական մամուլում, օրինակ՝ Հոկտեմբերյանի շրջանից և Երևանից ուղարկված թղթակցություններում: Առաջին դեպքում եզրույթը հայտնվում է հետևյալ համատեքստում. «Մեծ Շահրիարի [ներկայումս՝ Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղ] դպրոցական [կոմերիտական] կազմակերպության ընտրության ժամանակ կոմերիտական կոմիտեյի կազմում ընտրել էին 2 անհարազատ: Նույն գյուղի կուս. կազմակերպության անդամների քաղաքական կուրությունն այն աստիճանին ե հասնում, վոր այդ յերկու անհարազատներից մեկին՝ Խաչատրյանին, յերաշխսավորում են կուսակցության մեջ անցնելու համար»: Երևանյան պարագայում թղթակիցը գրում է. «Միության [տարրական և միջնակարգ դպրոցների աշխատողների պրոֆմիության] կենտկոմը և նրա նախկին նախագահ Ս. Մակինցը հովանավորել և պրոֆ. որգաններում տաքուկ տեղ են տվել մի շարք անհարազատ տարրերի»:²¹ Եզրույթը պարզաբանված է մեկ այլ հրապարակման մեջ, որը վերա-

²¹ Տե՛ս համապատասխանաբար Գ. Բոստանջյան, «Անել անհրաժեշտ հետևություններ» և Ս. Ղազարյան, «Աշխատանքը չի վերակառուցված» («Նորհրդային Հայաստան», 17 և 21 օգոստոսի 1937 թ.):

բերում է Կոտայքի շրջանի Առինջ գյուղում գաղափարական ոլորտում տարվող աշխատանքների վիճակի քննադատությանը: Այստեղ գրված է. «Նույն գյուղից համակրող Լևոն Մնացականյանը շրջապատված ե խորհրդային իշխանության վոչ հարազատ մարդկանցով, կովել ե բոլշևիկների դեմ քաղաքացիական կռիվների ժամանակ, բայց և այնպես ընդունվել և մնացել ե համակրողների շարքերում»:²²

Արալեխից Ղազախստան արտրված Այսա Յատյանի համոզմամբ. «Նրանք [նկատի ունի կոլտնտեսության ղեկավարությանը] ում ուզում էին՝ նրանց էլ ցուցակագրում էին»: Երևանի մերձակա Այնթափ ավանի բնակչուհի, 1949 թ. բռնադատված Ալվարդ Սայադյանի համար նույնպես սխեման պարզ է. «Ցուցակ են պահանջում յուրաքանչյուր գյուղից: Գյուղի մարթը չի տվողը: Գյուղի մարթն ա: Ումը չի ուզում [ում հետ խնդիրներ ունի], նրան էլ տալիս ա [նրա անունն էլ մտցնում է ցուցակում], բա: ...Մարդ կար, որ գերի էր, բայց չտարան; Բա էտ ոնց էր: Հա, մեր գյուղում հետց էդպիսի մարդ կա, բա: Իսկ խեղճ, անմեղ մարթին, որ ոչ մի բան չի արել ծեր հասակին, հանին տարան, ինչի՛»:

ԱՆՈՐՈՇ «ՎԵՐԵՎՆԵՐ»

Բնութագրական է «վերև», «վերևներ» հասկացության օգտագործումը: Դա ընդհանրապես, ես կասեի, շատ «խորհրդային» բառ է: Շատ բան կարելի էր վերագրել կամ բարդել անդեմ «վերևներին»: Եթե ինչ-որ կարգադրության հեղինակ նշվում էր «վերևները», ապա դա, որպես կանոն, արդեն քննարկման ենթակա չէր, ենթակա էր միայն իրականացման: «Վերևը» պաշտոնական-բյուրոկրատական սանդղակում «ստորադասից» բարձր գտնվող «վերադասի» կամ «ղեկավարության» կրճատված, ժողովրդական անվանումն է: «Վերևն», իր հերթին, կարող էր լինել տարբեր մակարդակների, սկսած շրջկոմի հրահանգչից մինչև Կրեմլի ղեկավարը («ամենավերևը»): Այսպես, տաթևցի բանասացները գտնում էին, որ «էդ տեղացի ղեկավարների ներկայացրած բանն [ցուցակն] են էնդեղ [վերևներում] հաստատել, ու դրանց քարտել: Է, վերևը ի՞նչ գիտեին, ես ի՞նչ եմ արել: Տեղացի ղեկավարներն են ասել, որ սրանք էսպիսին են...»: Տաթևցի Էրիկ Մկրտչյանը նույնպես կիսում է այդ կարծիքը. «...նրանց [վերադասի]՝ բնակչության մեջ՝ ներմուծած ասեմ թե արտամուծած ասեմ՝ նրանց քաղաքականությունից էր դա: Վերադասի քաղաքականությանը իսկույն ար-

²² Ա. Դ., «Աշխատանքը թույլ է համակրողների մեջ». – «խորհրդային Հայաստան», 29 հուլիսի 1937 թ.:

ձագանքում էին [տեղերում]»: Պենզաշենցի բռնադատված Համլետ Գասպարյանը նույնպես գտնում է, որ «ստեղ վերևից էր գալիս հրամանը: Օրինակ տեսեք, մենք որ արքայազն էինք, վրացի չկար մեր հետ, վրացի ոչ մի տեղ չկար, ուրեմն Ստալինը իր ազգին պահեց, իսկ բոլոր ազգություններից արքայացի, և մոլդովացի կար, և ուկրաինացի կար, և բելոռուս կար, ռուս, դազախ, երեսուն ազգություն կար Այթայում ապրող: Մոսկվայի, Մոսկվայի մակարդակով, այսինքն՝ Մոսկվան հրամայել էր Հայաստանին, որ սպես պետք է անեք [արքայազն]»: 1949 թ. բռնադատված հոռոմցի Հարություն Մովսիսյանը, հոր պատմածից տեղեկանալով, թե ենթադրաբար ով է իրենց ընտանիքը արքայազնների ցուցակում ներառել, համոզված է, որ «հրամանը վերևից է, էդ մարդն [իրենց անունը արքայազնների ցուցակում ներառողը] էլ իրա հրամանն է կատարել. մեկը պտի արքայազն, էսքան պլան, էսքան ժողովուրդ պտի վերցնես ըստից, գյուղից կամ ուրտից, հմի դու չես էղել, ես չեմ էղել, էն մարդն [հայրը] է էղել, ինչ տարբերություն, հերս չեղներ, ուրիշ մարդ պտի երթար հորս տեղը, ինչ տարբերություն: Դա, դա պլանավորված էր, պլան էր. էսքան ռայոնից էսքան մարդ էր պետք, էսքան բառաք է ազատ, էսքան տեղ է ազատ, էսքան մարդ պտի տեղավորցնեն, ըդիգ վերևից էր»:

ՈՐՈՇԱԿԻ «ՎԵՐԵՎՆԵՐ». ՄՏԱԼԻՆԻ ԴԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

«Վերևների»²³ մեջ մի առանձին, ես կասեի հակասական, ոչ միաշանակ դիրք է զբաղեցնում Ստալինի կերպարը: Բանասացների մի զգալի հատվածի մեջ կար այն պատկերացումը, թե Ստալինն անձամբ տեղյակ չէր ու ներգրավված չէր կոնկրետ մարդկանց նկատմամբ բռնություններ իրականացնելու գործի մեջ: Այսպես, կապանցի Ռուդիկ Քարամյանը գտնում է, որ «Ո՛վ էր մեղավոր [19]37 ու [19]49-ի համար: Էս ժողովուրդը էլի: Ասեմ խի: Ստալինը շատ էր իմանում կամ Բերիան շատ էր իմանում, թե իմ պապիկը տենց բան ա ասել [կասկածի տակ էր դրել Խանջյանի ինքնասպան լինելու տեղեկատվության ճշմարտացիությունը]»: Շիշկերտցի Շողեր Ջաքարյանն այն կարծիքին է, որ «Ստալինը շատ գիտեր, թե ով ա ոչխարը փչացնում, ով չի փչացնում»:²⁴ Ճիշտ չեմ ասում: Ըտենց բռնի-բռնի տանում էին: Մեր գյու-

²³ Բնութագրական է, որ «վերևներ» հասկացության մեջ բացակայում են խորհրդային Հայաստանի կուսակցական և խորհրդային ղեկավարները, ինչը, թերևս, ցուցիչ է այն բանի, որ քաղաքացիները շատ լավ պատկերացնում էին խորհրդային աստիճանակարգության իրական դեմքը:

²⁴ Ակադի ունի Գրիշա Սմբատյանի «Երկաթե վարագույրից այս կողմ» աշխատության էջ 401-ում նկարագրված դեպքը:

դից շատերին տենց տարան: Մի պրիչին [պատճառ] քցում էին, Ստալինը շատ իմանա, Մասկվայում նստած, թե Շիշկերտ ինչ ա կատարվում: Մխան էմ ասում: Ասում են, էլի, տվյալ ա, ասում են [ստորադասը վերադասին]: «Մեղավորությունը ու՛մն էր» հարցին պատասխանը տաթևցի Նոյեմ Արշակյանը ստացել է հեռուստացույցից. «Ես տելվիզորով [հեռուստացույցով] լսել եմ, որ Ստալինն էր: Դա իրան հրամանն ա իլալ: Չէ, հերս էն կարծիքը չուներ, թե Ստալինն էր մեղավոր, ես իրանից տենց բան չեմ լսել: Էն ժամանակ Ստալինին մենք պաշտում էինք»: Հայկավանից Սուքիաս Զաքարյանը 1930-ական թթ. բռնությունների մասին կարծիք հայտնելիս նույնպես գտնում է, թե «Ստալինն ինչ մեղք ուներ, Ստալինը գիտեր, թե դու էս գյուղում ինչ կաշխատիս, ինչ կենես... Էն վախտ, որ Ստալինը կրոներ, կրսեին Ստալինը կրոնե, բայց Ստալինը խո չէր գիտե ըստեղ, թե դու ով ես կամ ես ով եմ, Ստալինը ինչ գիտեր, թե ինչ կենեին, ըղտեղի ժողովուրդն էր էլի կեներ»: Այսա Յասոյանը, համաձայնելով հոր կարծիքին, որը խորհրդային իշխանությունից նեղացած չէր, նույնպես նշում է. «չէ որ Ստալինը չէր մեղավորը: Պարզապես ցանկանում էր յուրացնել այդ հողերը [Լազախստանը]»: 1930-ական թվականների բռնությունների ժամանակ հորը կորցրած, բայց և կոմունիստական գաղափարախոսության ջատագով Սամվել Գրիգորյանն այն կարծիքին է, որ «շատ դեպքերում Ստալինն էլ չի գիտեցել [բռնությունների մասին]»: Սողոմոն Հարությունովը, ում հայրը բռնադատվել է 1938 թ., նշում է. «մայրս միշտ ասում էր, որ այդ սրիկան [Ստալին] է մեղավորը: Առանց նրա գիտության ոչինչ չէր արվում»: Հանրապետական մասշտաբի կուսակցական գործիչ, 1937-1955 թվականները հիմնականում Սիբիրում անցկացրած Արել Օրդուխանյանը խնդրին ավելի լայն էր նայում, բայց և այնպես, նա էլ, կարծես թե, չէր ընդունում Ստալինի անձնական մեղավորությունը բռնությունների մեջ: Ինչպես պատմում է նրա թոռնուհին. «Իր ներկայությամբ, որ Ստալինից վատ բան էին ասում, ինքն ասում էր՝ «Лес рубят – щепки летят» [«Անտառը հատելիս տաշեղներ են թռչում»]: Ու որ սկսում էինք վիճել, ապացուցել, որ դու՛ էիր «щепка»-ն, թե՛ Բակունցն էր «щепка»-ն, ինքը չէր սիրում էդ խոսակցությունները: Շատ զուսպ էր: ...Մտքում քննադատում էր, բարձրաձայն՝ չէ: Ինքը վախենում էր, որ մենք լեզուներս բաց թողնենք, մե՛զ վնասենք: Էդ վախը մեջը կար: Ստալինիզմի նման վիճակներ ամեն պետության կյանքում էլ լինում է: Իսկ ինչ է, Փարիզյան կոմունան ավելի լավն էր: Դեղոն [պապիկը] էր միշտ այդպես ասում: Նաև ցիտում էր. «Революция, как Са-турн, пожирает своих детей»²⁵ [«Հեղափոխությունը, Սատուրն աստծո նման, խժոժում է իր զավակներին»]:»:

²⁵ Արտահայտությունը վերագրվում է Ֆրանսիական մեծ հեղափոխության ականավոր գործիչ Ժորժ Ժակ Դանտոնին, որ նա արտաբերել է մահապատժից առաջ:

1949 թ. բռնադատված Սերգեյ Խուրշուդյանը Ստալինի մեղավորության պատճառը փնտրում է նրա անձնական հատկությունների մեջ. «Ուրեմն, գիտե՞ք ինչ կա, մեր էդ առաջնորդը, որ կոչվեր գը ընկեր Ստալին, ուրեմն, երկրի լավ էղնելը, երկրի հարցերը, [երբ] երկիրը կարգավորելը կախված է մե մարդուց, որի լծակները իրա մոտն են: Ու երբ որ հանկարծ էդ ղեկավարը չի ունենա խղճի խայթ, չի ունենա մակարդակ, չի ունենա էն հատկությունները մարդկային, որն որ մարդը օժտված է, որն որ մարդը պիտի ունենա՝ չունին, շատ վատ է դրա հետ յուր գնալը, ու դրա ներքո՝ դրա ձեռի տակ, ինչ կըսեն, հովանավորության տակ ապրելը, շատ դժվար է, շատ անչափ»: Այս միտքը յուրովի շարունակում է գյումրեցի Իսաժակ Հերթեցյանը, ում պատիվն էր բռնադատել էին 1937 թ. «Չէ, չէ, նորից եմ կրկնում՝ ես կոմունիստների կուսակցությունը չեմ սիրել Ստալինի մարդակերության պատճառով: Մտո Յգեղունը, Ստալինը, Հիտլերը, սրանք նույնատիպ մարդիկ են եղել, մարդակեր են եղել»: Բնավորության անձնական հատկանիշները քաղաքականության վրա արտածելու խնդիրն է բարձրացնում հոռոմցի Հարություն Մովսիսյանը: Նա Ստալինի ու ստալինյան ժամանակաշրջանի մասին շատ գրքեր է կարդացել, ու նրա մեջ ձևավորվել է այն համոզմունքը, որ «նա [Ստալինը] շատ վախեցել է, նա իրանից ուժեղ մարդկանցից, գիտնական՝ Կիրովին, մյուս-մյուս, որ թվեմ շատ կան, նա վախեցել է, ինքը էդքան հզոր է երևացել [արտաքնապես] չէ, բայց շատ վախկոտ մարդ է եղել, շատ վախկոտ...»: Ստալինի ձեռնարկումներում անձնական նկատառումների մեկ այլ՝ էթնիկական դրդապատճառի մասին կարծիք է հայտնում այլթայան արքայություն տարիներ անցկացրած գոշեցի Զարիկ Գրիգորյանը. «Մեզ ասացին, որ այդ ամենը [հայերի գանգվածային արքայություն] Ստալինն է արել, քանի որ նա ուզում էր հեռացնել Վրաստանից բոլոր հայերին ու բնակեցնել Վրաստանը թուրքերով [ադրբեջանցիներով]»:

Երբեմն Ստալինին ջրնադատելու պատճառ էր համեմատությունը մերօրյա իրականության հետ: Այսպես, պատմաբան Արմեն Ոսկանյանի հորեղբայրը, ում հորը բռնադատել էին 1937 թ., «[19]90-ական թվերի ծանր վիճակի առթիվ նա ասում էր, թե «երկրին Ստալին ա պետք»: Ես էլ ասում էի, թե «ախր դու տեսել ես էդ «ստալինը», վրովդ անցել է, հիմա ճնց ես ասում, թե «ստալին» է պետք»: Նա էլ ասում էր, թե «չէ, պետք ա «ստալինը», որ ուժեղ իշխանություն լինի, էս բարդակ վիճակը, խառը վիճակը կարգավորի, որովհետև ուրիշ ճանապարհ երկրի համար չկա: Եթե բաց թողնեն [երկրի կառավարման սանձերը], ուրեմն կքանդվի ամեն ինչ»: Ու իր համար էդ «ստալինի» կերպարը՝ որպես ուժի կերպար, կար միշտ: Ու դա ինքն ընկալում էր որպես դրական մի բան: Իսկ երբ հարցնում էի, թե «քո հայրն ինչ էր արել, որ տարան ըտենց», ասում էր, թե «հա, դե սխալ էր եղել,

երբ [մեծ, ընդարձակ] երկիր ա, տենց սխալ էլ կլինի էլի»: Այսինքն՝ ինքը չէր ուզում ընդունել, որ Ստալինը վատ է իր նկատմամբ եղել ու դրանից [երևույթը] տարածի մյուսների վրա նույնպես»:

ՎԱՍԻ ԳՈՐԾՈՆԸ

Վերը բերված հիմնավորումների ու բացատրությունների փորձերում կային մի քանի ձևակերպումներ, մասնավորապես «վախ» և «վերաբնակեցում», որոնք կցանկանայինք ավելի մանրամասնել:

Բանասացները բավականին հաճախ շեշտում էին վախի գործոնի հսկայական, եթե ոչ որոշիչ դերակատարումը մարդկանց գործողություններում: Այսպես, Ռուդիկ Քարամյանը նկատում է. «Էն ժամանակ [ստալինյան տարիներին] վարչչե [ընդհանրապես] վախենում էին, գնում էին ասում էին, ծախում [մատնում] էին: Ծախում էին, բա ինչ էին անում: Դե էն ժամանակ հեր ու տղա էլ էին վախենում իրար հետ տենց բան խոսել: Էն ա պատմում էին, էլի, մեզ՝ հեր ու տղա վախենում էին իրար հետ խոսել: Ռեժիմն էնենց էր արել, որ հեր ու տղա վախենում էին իրար հետ խոսել: Ռեժիմն ա արել: Տենց էր»: Խաչիկ Գաբրույանը, ում հորը բռնադատել էին 1937 թ., նկատում է. «Էն ժամանակ Ստալինի մասին խոսալը տանը վտանգավոր էր: Էն ժամանակ ասում էին, որ «ավելորդ բաներ միք սախ, պատերն էլ են լսում»: ...«Անհատի պաշտամունք» որ ասում են, ոչ թե բոլորը Ստալինին պաշտում էին, այլ վախենում էին: Վախենում էին բոլորը: Էն ժամանակ կարայիր ասելի, թե Ստալինի աչքի վերևը ունք կա: Հանկարծ որ մի թարս խոսք ասելի, կարող ա քեզ գային գիշերը տնից տանեին: Ռեժիմ ասածը՝ դա Ստալինի ամբողջ դրվածքն էր: Էն ժամանակ չէիր կարող ազատ խոսել: Հետո, երբ Ստալինը մեռավ, սատկեց, ու տենց կամաց-կամաց դեպի լավն էր գնում: ... Վախի մթնոլորտը հիմա ինձ մոտ չկա: Էն ժամանակները, անգամ Ստալինի մահվանից հետո՝ վախը կար»: Նման մեկնաբանություն են առաջարկում նաև իրենց հորը 1937 թ. կորցրած Ջրբաշյան եղբայրները. «Անհատի պաշտամունք» հասկացությունը մի երկու խոսքով գնահատել երևի հնարավոր չէ: Ժողովրդի մեջ ձևավորվել էր մի ահավոր համընդհանուր վախի մթնոլորտ: Նման պայմաններում շատերը, ոտնահարելով բարոյականության բոլոր նորմերը, վարկաբեկելով և զրպարտելով ուրիշներին, ձգտում էին ինքնահաստատման հասարակության մեջ: ...Ամենաահավորն իհարկե վախի զգացումն էր, որը մարդկանց դարձրել էր ստրուկ և բոլորովին ինքնուրույնությունից զուրկ էակ: Այդ վախը վարակել էր հասարակության բոլոր շերտերը»: Հոր և հորեղբայրների աքսորը տեսած, մեկ այլ հորեղբոր գնդակահարությանը տեղյակ երագավորսեցի Սաշա Մխիթարյանը նույնպես մեծ

նշանակություն է տալիս վախի գործոնին. «ըտից [Ստալինի մահվանից] հետո ղով էր վախենում որ, ինչ ըսես խոսում էին: Ինքը կորավ գնաց, արդեն կամաց-կամաց... էն վախտ կոնայիբ մե բան'մ խոսայիր կամ ըսեիր՝ լավ է կամ վատ է, ֆլան է կամ ֆստան է [այս է, այն է], ըդման բան վախենում էինք խոսայինք, հեչ մեկի քովը բան չէինք խոսում: Կառավարության մասին բան չէինք կոնա խոսայինք, գաղ[տ]իք էր ըդիկ: Գաղ[տ]իք էր, մեկ-մեկ էդ խաբար տվողների, ծախողների ականջն ընկնում էր, ըդոնց [խոսողներին] տանում կորցնում էին»: 1936 թ. հոր ձերբակալությունը տեսած պեմզաշենցի Պարույր Տոնոյանը նշում է. «Վախ էր, վախենում էինք, էլի, բողբոս էլ, վախը... Օրինակ, մինչև հմի՝ հլե ես էդել եմ 82 տարեկան, մեջս վախ կա: Էդ վախը չի անցե: Չնայած հմի կարգերն ուրիշ են, բայց ինչ-որ ներքին մե բանըմ կա ընծի: Ես քաջ մարդ եմ, բայց ինչ-որ մե բանըմ կա, էդ վախի զգացումը էստեղից մնացել է»: Սողոմոն Հարությունովը հետևյալ կերպ է նկարագրում վախը. «Ախր այդ ժամանակ մարդ վախենում էր, վախենում էր բերանը բացել: Նույնիսկ ռադիո լսելն էինք վախենում: Պատուհանի վրա փեղկեր կային, դրանք փակում էինք, նոր էինք լսում [ռադիոն]: Վախենում էինք, որ մեկնումեկը, մի լրտես, պատուհանի տակից կլսի [կմատնի], ու վաղը կգան, կտանեն: Այդ պատճառով էլ մարդիկ վախենում էին մի խոսք ասել»: Իսկ Սերգեյ Խուրշուդյանը պատմում է իր հետ ալթայյան աքսորավայրում պատահած զավեշտի նման մի իրական դեպք: Երբ ինքը, թերևս իր ընկերուհու հայր Անուշավանի հետ դաշտում սայլով գնում էին, «Մեկել էսիգ [Անուշավանը] դառավ, էսպես արավ, ըսավ. «Սերյոժ»: ...Կըսեր. «Մի բան'ն կուզեմ բամբասեն»: Ես ասի. «Չյաճա Անուշավան, ինչ, ում մասին կուզեք...»: Ըսավ. «Էդ հոգի քաքածի»: Մեկել որ չըսավ «հոգի քաքած», էդ որ չըսավ՝ ես էլ վախեցա: Ըսավ ...էսի բամբասի կը՝ ըտեղ դաշտ է, ըստեղ դաշտ է, էդ ղով պիտի խաբար տա, ով պիտի խաբար տամ: Ես չեմ խաբար [տա] ...Ըսավ. «Կարող է ձին խաբար տա»: Հըբը՝ ձին: Վախը կար, վախը շատ կար, շատ կար, շատ կար... Էդ մարդը ինծի էսպես արավ, ըսավ. «Կուզեմ բան'ն բամբասեն, բայց վախենամ կը»: Առաջին անգամ վախեցավ ասել, ում մասին է: Որ հետո ըսավ, թե ում մասին է... «Էդ հոգի քաքածի» ...Որ չըսավ, վայ էէէ»:

Բնութագրական է, որ անուղղակիորեն վախի խնդրին ժամանակին պաշտոնապես անդրադարձել է նաև ԽՍՀՄ ղեկավարությունը: Այստեղ «հիմնավորումները» բացարձակապես այլ բնույթ ունեին և փաստորեն ուղղված էին կուսակցության ղեկավարության կողմից Ստալինի ամբողջատիրական իշխանության դեմ չձեռնարկված քայլերի, իրենց մեջ իսկ առկա վախի (ինչի մասին խոսել էր Ն. Խրուշչևը XX համագումարին ներկայացրած իր փակ զեկուցման մեջ) հիմնավորմանը: Այսպես, «ՄՄԿՊ կենտրոնական կոմիտեի որոշումը անհատի պաշտամունքը և նրա հետևանքները հաղ-

թահարելու մասին»²⁶ հրապարակման մեջ բերվում է հետևյալ պատճառաբանությունը. «Կենտրոնական Կոմիտեի լենինյան կորիզը Ստալինի մահվանից հետո իսկույն ևեթ բռնեց անհատի պաշտամունքի և դրա ծանր հետևանքների դեմ վճռական պայքարի ուղին: Կարող է հարց առաջանալ. իսկ ինչու՞ այդ մարդիկ բացեիքաց հանդես չեկան Ստալինի դեմ և նրան չհեռացրին ղեկավարությունից: Ստեղծված պայմաններում այդ բանն անել չէր կարելի: Իհարկե, փաստերը այն են վկայում, որ Ստալինը մեղավոր է շատ ապօրինություններում, որոնք կատարվում էին նրա կյանքի հատկապես վերջին շրջանում: Սակայն ընդամին չի կարելի մոռանալ, որ սովետական մարդիկ Ստալինին ճանաչում էին որպես մի մարդու, որը միշտ հանդես է գալիս թշնամիների մեքենայություններից ՍՍՌ-Մ-ի պաշտպանությամբ, պայքարում է սոցիալիզմի գործի համար: Նա այդ պայքարում երբեմն գործադրում էր անվայել մեթոդներ, խախտում պարտիական կյանքի լենինյան սկզբունքներն ու նորմաները: Դրանումն էր Ստալինի ողբերգությունը: Բայց այդ ամենը, ընդամին, դժվարացնում էր նաև պայքարը ընդդեմ այն ժամանակ կատարվող ապօրինությունների, որովհետև սոցիալիզմի կառուցման, ՍՍՌ-Մ-ի ամրապնդման հաջողությունները անհատի պաշտամունքի իրադրության մեջ վերագրվում էին Ստալինին: Այդ պայմաններում նրա դեմ ամեն մի ելույթ ժողովուրդը չէր հասկանա, և այստեղ բանը բնավ էլ անձնական արիության պակասը չէ: Պարզ է, որ յուրաքանչյուր ոք, ով այդ իրադրության մեջ հանդես գար Ստալինի դեմ, աջակցություն չէր ստանա ժողովրդի մեջ: Ավելին, այդօրինակ ելույթը այն պայմաններում կգնահատվեր որպես ելույթ սոցիալիզմի կառուցման գործի դեմ, որպես կապիտալիստական շրջապատման իրադրության մեջ պարտիայի ու ամբողջ պետության միասնության ծայրահեղորեն վտանգավոր քայքայում...»:

ԱՔՍՈՐՆ ԻՔՐԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ. ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ, ԱՐԴԱՐԱՑՄԱՆ ՓՈՐՁԵՐ...

Բանասացների խոսքում երբեմն հնչում է նաև ստալինյան ժամանակաշրջանի արքորի նույնացումը «վերաբնակեցում» երևույթի հետ: Նման մեկնաբանության պաշտպանության համար բերվում են յուրովի «հիմնավորումներ», սակայն գնահատականը, որքան էլ զարմանալի է, բավականին մեղմ է: Այսպես, տաթևցի մի բանասացի դատողությունները հիշեցնում էին պարոնյանական «մեղմացուցիչ դեպք հանցանացը»: Խոսելով

²⁶ Տե՛ս «Սովետական Չայաստան», 3 հուլիսի 1956 թ.:

1949 թ. արքայի մասին՝ նա նշում է. «Էնդեղ էդ մարդկանց ոչ թե առողջությանը կամ կյանքին վտանգ, այլ տանըմ են էնդեղ մըթամ խամ ու խոպան հողեր ա [աշխատացնելու]: ...Տարել են էնդեղ պահել են, մարդկանց քարկոծել չեն, օրինակ, աշխատել են, բան են արել: Ուղղակի որ ստեղից՝ գյուղից, հայրենիքից հանել են՝ միայն էդ ա [եղել խնդիրը]: Բայց էնդեղ մարդկանց ոչ վնասել են, ոչ [այլ վատ բան են արել]: ...Էդ մարդկանց [1949 թ. արքայազնության] առոք-փառոք պահել են, աշխատանք են ունեցել՝ աշխատել են...»: Այս Յասոյանի հայրը, երբ արքայի ճանապարհին, պայմաններից բողոքելով, սպառնում է զանգահարել Մոսկվա, նրան պատասխանում են, թե «նրանց տանում են... բռնադատում են, որպեսզի յուրացնեն դազախական տափաստանները: Դա հո Հայաստանը չէ, որ 29.5 մլն քառակուսի մետր է, դա մի ամբողջ Ղազախստան է, ամենամեծ հանրապետությունը»:²⁷ [Հետագայում] Հայրս միշտ ասում էր, որ շատ բավարարված է, որ մեզ բռնադատել են: Նա չէր նեղանում, քանի որ շատ լավ էինք ապրում, համերաշխ էինք»:

Նշված դեպքերում (ինչպես նաև մեր օրերում երբեմն հանդիպող առօրյա խոսակցություններում) փաստորեն առկա է, կենցաղավարում է նաև այն կարծիքը, որ միլիոնավոր մարդկանց արքայի խորհրդային պետականաշինության գործընթացի մաս էր, և որ այդ կերպ խնդիր էր դրվում անմարդաբնակ կամ նոսր բնակեցված տարածքները բնակեցնել, տնտեսապես զարգացնել: Այսինքն՝ մի կողմ են դրվում համամարդկային արժեքները, և չի բացառվում, նույնիսկ ինչ-որ ձևով արդարացվում է մարդու կյանքին բռնանալով պետական մակարդակի խնդիրներ լուծելու իրավունքը: Բնութագրական է, որ միայն պատմագիտական կրթությամբ անձն (Արմեն Ոսկանյան) է տեսնում կամավոր ու պարտադրված աշխատանքականների միջև տարբերությունը. «Նույն կերպ՝ գերազանցապես բանտարկյալների ուժերով, նրանց ոսկորների վրա կառուցվեց Բելոմոր կանալը: Բայց, ասենք, Խրուշչևի ժամանակ, երբ խամ ու խոպան հողերի յուրացման խնդիրը առաջ քաշվեց, հիմքում դրվեցին կամավորության պահը, աշխատանքային էնտուզիազմը և այլն: Երկու ճանապարհն էլ կարելի է օգտագործել, բայց միշտ ազատ աշխատանքն ավելի պրոդուկտիվ է, քան թե ստրուկի աշխատանքը»:

²⁷ Հայկական ԽՍՀ տարածքը 29.8 հազ. քառ. կմ էր, Ղազախական ԽՍՀ տարածքը՝ 27.173 հազ. քառ. կմ, այսինքն՝ Ղազախստանը մեծ էր Հայաստանից շուրջ 91 անգամ:

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՏԵՂԵՐՈՒՄ ԲՈՒՆԱԳԱՏՎԱԾՆԵՐԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

1935 թ. դեկտեմբերի 1-ին՝ առաջավոր կոմբայնավարների խորհրդակցության ժամանակ, ի պատասխան մասնակիցներից Ա. Գ. Տիլբայի ելույթի, երբ վերջինս ասել էր, թե «Չնայած ես կուլակի որդի եմ, սակայն ազնվորեն պայքարելու եմ բանվորների և գյուղացիների գործի համար», Ի. Ստալինն արձագանքել էր, թե «Որդին հոր համար պատասխանատու չէ»:²⁸ Ասույթի կարգավիճակ ստացած այս արտահայտությունը հրապարակվեց «Պրավդայում», դարձավ ուղենիշային, կարելի է ասել՝ թմբկահարվում էր որպես մարդկային վերաբերմունքի դրսևորում, սակայն չդարձավ գործնական, ինչի մասին վկայում են թեկուզ մեր բանասացների պատմությունները:

Սկսեմ, սակայն, եզակի բացառություններից, որը, թերևս, ավելի «ժողովրդական դիվանագիտության» պարզունակ կիրառության վկայություն է, քան գործող նորմ: Այսպես, պեմզաշենցի Պարույր Տոնոյանը պատմում է, որ երբ 1936 թ. արքորեցին իր հորը, իրենք երեխաներով մնացին տատի «խնամակալության տակ: Իրեք անգամ փորձել են մեզի արքորել, բայց տատը կարողացավ մեզ պահի, շատ խելոք կին էր: Էն ժամանակ «Խորհրդային Հայաստան» թերթ կար, կարմիր թղթի վրա կտպեին: Ըստեղ Ստալինը ինչ-որ բան էր ըսել, թե տղեն հոր տեղը պատասխանատու չէ, բռնելու ժամանակը որ սկսվավ, տատը էլ [թերթունը] կտրե, պահել էր: Հետո, որ գալիս էին, տատս էլ թղթերը ցույց կտար, թողեին կերթային, էլ չէին արքորե»:

«Ժողովրդի թշնամիների» հարազատների նկատմամբ վերաբերմունքը, որպես կանոն, պայմանավորված էր երկրում տիրող ընդհանուր քաղաքական մթնոլորտով, որի բնորոշ գծերից էին, ինչպես վերը նշվեց, վախը, ամենուրեք «վխտացող» խորհրդային իշխանության թշնամիների, լրտեսների մասին ՋԼՄ-ներով պարբերաբար մատուցվող քարոզչությունը,²⁹ կասկածամտությունը և այլն: Վերաբերմունքն ունենում էր տարբեր դրսևորումներ՝ խոսքային մակարդակից մինչև գործնական քայլեր՝ բնակարանի/բնակելի տան առգրավում, արտաքսում մայրաքաղաքից, դժվարությունների, արգելքների հարուցում աշխատանքի տեղավորման գործում, կարիերա անելու ճանապարհին և այլն, և այլն: Ինչպես ցույց են տալիս մեր պատմությունները, այն ժամանակվա երեխաների հիշողության մեջ առավելապես

²⁸ Տե՛ս «Правда», 4 декабря 1935 г. Տե՛ս նաև <http://www.bibliotekar.ru/encSlov/17/216.htm> (դիտված է 25.09.2015):

²⁹ Հարցի շուրջ տե՛ս *Հարություն Սարոյան*, Խորհրդահայ մամուլի գաղափարական ուղղվածությունը քաղաքական պարտադրանքի պայմաններում (1930-ական թթ.)։ – «Լրաբեր հասարակական գիտությունների», 2015, թիվ 1, էջ 362-375:

դրոշմվում և տրավմատիկ երանգ են ստանում հայրենի տան հետ կապված իրադարձությունները, վերաբերմունքը դպրոցում, ընկերական միջավայրում, հարևանների ու հարազատների կողմից:

Այսպես, Խաչիկ Գաբրիելյանը, ում հորն արդեն բռնադատել էին, տունն էլ ձեռքներից վերցրել, պատմում է. «Հիշում եմ, Կոնդում մի հաստ լաչառ թաղային լիագոր ունեիք՝ կնիկ էր, երբ որ մենք խաղ էինք անում փողոցում, աղմուկ-բան էր լինում, գոռում էր. «Թողեք փախեք ստեղից, դաշնակցականի շներ»: [Սակայն] Դպրոցում ոչ մի բան չեն ասել»: Տեխնիկումն ավարտելուց հետո Խաչիկին ու եղբորը «սկզբից մեզ ուղարկեցին Կիրովի գործարան՝ «Կաուչուկ», բայց էնդեղ, քանի որ փակ գործարան էր, մեզ չընդունեցին: Քանի որ «ժողովրդի թշնամիի» տղերք էինք»: Սակայն «Միրզոյանը՝ «Հայէլեկտրո» գործարանի գլխավոր ինժեները, մեզ վերցրեց: Ինչու՞ վերցրեց: Էն ժամանակ որ ավարտում էին տեխնիկում կամ ինստիտուտ, գործարանների գլխավոր ինժեներները հավաքվում էին էդտեղ, նայում էին գնահատականներին ու ընդունում իրանց մոտ: Աղասի Արուսյունովիչ Միրզոյանը գնահատականների ցուցակը նայում ա, դե էն վախտ ես ու Հարություն [եղբայրը] լավ էինք շատ սովորում, համարյա գերազանցիկ էինք, էլի, [լավագույն սովորողների] հինգ տոկոսի մեջ էինք մտնում, ու մեզ վերցնում են «Հայէլեկտրո»:

Իսկ Իոեն Օրդոլյանյանի ու նրա քրոջ պարագայում, ում հայրն արտորում էր, և բնակարանն արդեն ընտանիքից վերցված էր, խնդիրներ էին ծագել վարձով բնակարանի բակում և դպրոցում: Իոենը պատմում է. «Բակում ես շատ ազարտնի [կրքոտ, տաքարյուն] խաղացող էի, ու ես երբեք չէի տարվում: Երբեմն էլ երեխեքը կատաղում էին ու դուրս էին տալիս. «Իսկ քու պապադ բանտում ա նստած»: Ես միանգամից սկսում էի լացել ու տուն էի գնում: Էլ չեմ ասում դպրոցում: Մեզ մոտ *свободная директриса* [սրիկա տնօրենուհի] կար: Պուշկինի [անվան] դպրոցում էի սովորում: Նա բռնադատվածի կին էր, բայց պաշտոնապես նրանից հրաժարվել էր: Նա անընդհատ մտածում էր, թե ոնց անի, որ ինձ էլ դպրոցից հանի: Ու ինչ որ լիներ, ինքն ասում էր՝ Конечно, это могла сделать только дочь контрреволюционера – Ордуханян Ира [«Իհարկե, դա կարող է արած լինել միայն հակահեղափոխականի դուստրը՝ Իռա Օրդոլյանյանը»]: Այդպես ասում էր կամ դասարանում, կամ էլ ուսուցչանոցում՝ բոլոր ուսուցիչների ներկայությամբ: Այդ կինը մեզ Սահմանադրություն էր դասավանդում: Իր պատճառով քույրս ոսկե մեդալ չստացավ. Կարինեն փայլուն սովորում էր: Ավարտական քննության ժամանակ այդ տնօրենուհին հանձնաժողովի կազմում էր, և երբ քույրս, ինչպես հարկն է, պատասխանում էր, ասաց, թե Ну, дочь контрреволюционера не может иметь “пятерку” по “советской

конституции” [«Դե, հակահեղափոխականի աղջիկը չի կարող «հինգ» ստանալ «սովետական սահմանադրություն» առարկայից»], ու «չորս» դրեցին: Դա նրա միակ «չորս» գնահատականն էր ատեստատում, ու նա արծաթե մեդալ ստացավ: Երբ քույրս ցանկանում էր գնալ Մոսկվա՝ բուռ ընդունվելու, ասացին, թե այժմ դու հակահեղափոխականի աղջիկ ես, ընդունվիր Երևանում ցանկացած ինստիտուտ, որտեղ մատդ դնես, դու առանց մրցույթի անցնում ես, բայց գնալ սովորել Մոսկվայում դու չես կարող: Բարոյական ճնշման մեկ այլ օրինակ էր, երբ «դասարանում ժողովներ էին անցկացնում, Իռային նստացնում էին առաջին կարգում ու սկսում էին խոսել հակահեղափոխականների, ժողովրդի թշնամիների, նրանց արած վատ բաների ու պատիժներ կրելու մասին, ու նա [Իռան] մյուսների հետ միասին պետք է ծափահարեր: Որ Իռան իր տեղն իմանար»:

Մեր հարցազրույցի ժամանակ, այսինքն՝ 1937 թվականից երեք քառորդ դար անց, Էդգար Ջրբաշյանի մեջ թաքնված էր³⁰ այն տրավման, որ նա, տակավին յոթ տարեկան առաջին դասարանցի, ստացել էր հոր ձերբակալությունից հետո Երևանի կենտրոնում գտնվող իրենց բնակարանից հանելու օրը. «Երբ մեզ հանում էին տանից, մամային էին շատ խիստ նեղացրել՝ վիրավորելու չափ: Թե «զգույշ արեք, պոլերը չփչանա», երբ մեր իրերը բանվորները հանում էին տանից»:³¹ Ջրբաշյան եղբայրները հիշում են. «Պուշկինի փողոցում բնակվելիս առաջին շրջանում մեր հանդեպ վերաբերմունքը անբարյացակամ էր, կոչում էին «ժողովրդի թշնամու զավակներ», բայց ժամանակի ընթացքում վերաբերմունքը նորմալացավ: Մամային շատ էին հարգում, նա շատ կազմակերպված ու զուսպ կին էր»: Ռուբեն Ջրբաշյանը հիշում է. «Դպրոցում գիտեին հորս բռնադատված լինելու մասին, բայց ընկերների և դասատուների կողմից խտրություն չեմ զգացել, լավ էին վերաբերվում: Մեր դասարանում սովորում էին պաշտոնյա և պատվարժան մարդկանց տղաներ, որոնց հետ ընկերություն էինք անում, նրանց տներ գնում: Երևի նրանց ծնողները գիտեին, բայց երբեք մեր ընկերությանն արգելք չէին դնում, ինչի համար նրանցից միշտ շատ շնորհակալ եմ եղել: Դպրոցական տարիների հետ կապված հիշում եմ մի դրվագ. ավարտում էի դպրոցը [19]52 թվին, երբ հայրս դեռ արդարացված չէր: Մի օր դպրոցի տնօրենը կանչեց մամային ու ինձ, ասաց, թե Ռուբիկին մեդալ տալ չենք կարող, իրավունք չունեն և ավելացրեց՝ ոչինչ, կգնա, կընդունվի, կսովորի...»:³²

³⁰ Էդգար Ջրբաշյանը վախճանվեց 2015 թ. օգոստոսի 14-ին:

³¹ Նույն կերպ Երևանցի Ռեհիլ Գարությունյանը հիշում է, որ 1937 թ., «Որ մեզ արդեն տնից հանում էին, մեր իրերը վերգրեցին (կոնֆիսկացիան էն ժամանակ կոչվում էր «վերգրել»), նույնիսկ ֆիկուսները, օլեանդրները՝ մեծ ծաղիկներ ունեինք, դրանք էլ վերգրեցին»:

³² Ախուրյանցի Անժելա Շահբազյանը նույնպես նշում է, թե «եթե իմանայիք, թե ինչպես էին սովորում բռնադատվածների երեխաները: Մենք ցանկանում էինք ապացուցել, որ մեր հայ-

Մանսօրինակ մի տրավմա է ապրել գյումրեցի Խաժակ Հերթևեցյանը 75 տարի առաջ, սակայն այսօր էլ այն թարմ է նրա համար, քանի որ ուղեկցվել է մեկ այլ բացահայտումով. «Ավագ ջոկատավար կար, վեչնի [հավերժ] ավագ ջոկատավար, էդպես էլ մահացավ, խուլ Համո կըսեին, խուլ էր, իսկականից: Էկավ, ուրեմն, ինձի, [19]38 թվին է արդեն, պապիս բանտարկել են, ընձի իջացրեց [պիոներական ճամբար տանող մեքենայից]՝ չտարան: Թե՛ «ժողովրդի թշնամի է, ժողովրդի թշնամու թռռին հետներս լագեր չենք տանի, նա արժանի չէ, և այլն, և այլն: Ես առաջին անգամ էդպեսի վիճակի մեջ եմ ընկել, լացով էկել եմ տուն: Մորս հետ սկսել եմ կովելը, թե «ինչի՞ իմ պապս պիտի ժողովրդի թշնամի էղնիր, ինչի՞ ինձ լագեր չպիտի տանեին»: Նու, էրեխա, մորս հետ, «բան չկա, բալա ջան» և այլն, հայրս ներս եկավ, թե «ինչ է պատահել, ինչի՞ ես լաց էղե, ինչի՞ ես էսպես էղե»: Պատմեցի. «Էսպես, էսպես, ինձ իջեցրին, ավտոն քշեցին, գնացին, ես եկել եմ տուն»: Ձեռքիցս բռնեց, ըսավ. «Քելե, բալա ջան»: Էկանք, ուրեմն, Կահեթե-ի շենքի մոտ: Ուրեմն մի հարկանի շենք կա, էդ շենքից ընդունում էին պերեդաչա: Ուտելիք էին ընդունում, մի ծայրը աջ էր գնացել, մի ծայրն էլ հերթի ձախ էր գնացել, էլավ, ըսավ. «Տեսնո՞ւմ ես, սրանք բոլորն էլ ժողովրդի թշնամիների հարազատներ են, ինչպես դու, սրանք բերել են հաց կուտան, պերեդաչա կուտան»: Որին, որ գնդակահարել են, չեն ընդունե: Մերոնք էլ հլա չեն բան էնե, նոր են տարել պապին: Ցույց տվավ ըսավ. «Ժամանակ կգա, էս, ինչ որ կատարվել է, բոլորը շուտ կուգա ոտն ի վեր»: Ու էդպես էլ էղավ: Էդպես էլ էղավ»:

Հայկավանցի Սուքիաս Զաքարյանն ավելի ընդհանրական գնահատական է տալիս. «Բայց ընդհանրապես կուսակցության մեջ մտնելու համար, դրանց [«ժողովրդի թշնամիների»] էրեխաներին չէին թողե, չէին ընդունե որպես կուսակցական, հերը որպես բռնված էր: Ոնց որ ձայնի իրավունք չունենային էլի, էդ ձևի էր: Հա, էլի, լավ գործի չէին տա, ըսենք թե էրեխեքը լավ էին, սորվել էին, վերջացրել էին, լավ գործի չէին տա, պարտիական, կոմսոմոլ չէին ընդունե... Որպես հայրենիքի դավաճանի հաշվին էր, էլի...»: Իշխանությունների կողմից «ժողովրդի թշնամիների» հարազատների նկատմամբ տարվող մեկուսացվածության քաղաքականության դրսևորում էր և այն, որ, ինչպես հիշում է Պարույր Տոնոյանը, «եղբայրը տղային ամուսնացրել էր՝ տատին հարսանիք չէր կանչել»: Վոլոդյա Մարտիրոսյանի պատմության մեջ էլ որդին չէր ցանկանում հորը տեսնել,

րերը ձեր [համադասարանցիների չբռնադատված] հայրերից լավն են. աստված չանի, եթե մեզանից մեկը 4 [լավ գնահատական] ստանար, ամբողջ օրը լաց կլիներ: Մենք նրանցից շատ էինք կարդում, մենք նրանցից շատ ավելին գիտեինք, մենք ամեն օր դասերը անգիր [չատ լավ] էինք սովորում»:

քանի որ «Ինձ բանակից հանել են, որ հայրս էսպես ա՛ դուք դաշնակ եք, դրա համար ինձ հանել են, ես չեմ ուզում ձեր էրեսը տեսնեմ»:

Պեմզաշենցի Սամվել Գրիգորյանը, ում պապն ու պապի եղբայրը բռնադատվել էին 1930-ականներին, նույնպես նկատում է. «Մինչև հիսունական թվականները հալածում էին նրանց էրեխեքին, «դաշնակի էրեխա» էին անվանում, վիրավորական արտահայտություն էր դա»: Ընդհանրապես իր համագյուղացիների մեջ, «մեկը մյուսին, որ ուզում էր անարգել, ասում էր տոռցկիստի տղա, տո չգիտեմ [հակա]հեղափոխականի տղա, էդպիսի արտահայտություններ էին անում. դա որպես պիտակ էր, խարան, որովհետև էդպես էր նստած [մարդկանց մեջ]»:

Երևանցի Ռևիկ Հարությունյանն ու նրա քույրը հորն ու մորը բռնադատելուց հետո ապրում էին իրենց մորաքրոջ տանը, որը նույնպես անօրինական խլվում է, և նրանք. «Դուրսն էինք մնացել: Գալիս էինք կայարան: Կայարանում գիշերները... արդեն ճանաչում էին էդ կայարանի աշխատողները մեզ: Ու գիտե՞ս ինչ: Ճիշտ ա, վախենում էին, բայց մարդկային մոտեցում կար էն ժամանակ: Հասկանալ կար, որ էս մարդը դժբախտության մեջ ա, գոնե ոչ թե օգնենք, այլ թող քնեն գոնե ըստեղ, ասենք թե: Մենք մի տարի դրսերում ենք եղել: Բառիս ամենատղիղ իմաստով: Քրոջս մեկ-մեկ տանում էինք... էդ մեծ մորաքրոջս տուն կամ մորաքրոջս տղայի տուն, որը տարիքով մեծ մարդ էր, բայց ես ու մորաքույրս դրսում էինք: Մի տարի: Մի տարուց ավել»: Մանաստիպ իրավիճակ է ստեղծվում գորիսեցի Նինա Հովսեփյանի պարագայում, երբ 1929 թ. «...իմ հոր մահից հետո մեր տունը տորգի են տվել, այսինքն՝ աճուրդի են հանել: Տունը չէ, տան ապրուստը՝ կահկարասին, աճուրդի են հանել, իսկ տունն էլ մի մարդ, որ ջանջալ Մանգի էին ասում Գորիսում... գալիս ա մորս ստիպում, որ էդ [բռնադատված ամուսնու] տունը ծախի, վախեցնում, ասում է, որ չծախես, մեկա բռնագրավելու են: Վերջը մամայիս տանում ա փաստաթղթերը ձևակերպել տալիս ու փողը չի տալիս: Ինքը մտնում էր տունը, մենք մնում ենք դրսումը մամայիս հետ»:

ՀԱՄԱԿԱՐԳԻ «ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ»

Եզակի են այն բանասացները, որոնք իրենց պատմություններում ստալինյան բռնությունների հետևում տարբեր ձևակերպումներով, տեսնում են համակարգը: Ընդ որում, ոչ միշտ են քննադատում այն, երբեմն փորձում են յուրովի արդարացնել բռնությունները (մի շարք կարծիքներ վերն արդեն ներկայացվել են): Այսպես, կապանցի Վոլոդյա Մարտիրոսյանը պատմում է. «Մերս էլ պետության նկատմամբ հավատ ուներ: Հավատում էր: Էդքան

չարչարվելուց հետո, բայց էլի հավատ ուներ պետության նկատմամբ: Բայց մեկ-մեկ որ միտն էր գալիս՝ ատում էր. նա ինչ պետություն էր՝ այսպոքս տարավ [գնդակահարել են 1937 թ.], մարդիս տարավ [10 տարի եղել է քսորավայրում], պատրոնիս [սկեսրայրին] տարավ [գնդակահարել են 1937 թ.], բոլորին տարավ՝ վերջը, էսպես, տուժվեցինք: Ունեցածներս [նկատի ունի դրամական խնայողությունները խնայքանկերում] լրիվ տարավ»: Հոր բռնադատվելու համար Խաչիկ Գաբուզյանը մեղավորությունը տեսնում է Ստալինի մեջ. «Նրա կարգերին: Իրա ռեժիմն էր, էլի: Ստալինը ասում էր, բռնում նստացնում էին: Սովետական կարգերին ես միշտ հավատացել եմ: Ըստ դրա էլ սովետական կարգերում աշխատել եմ»: Տաթևի Էրիկ Մկրտչյանի բացատրությունը քիչ այլ կերպ է. «Իմ կարծիքով էն էր, որ իշխանությունը միանգամից ընկել էր ամենահետամնաց խավի ձեռքը: Ոնց կուզեք՝ ասեք: Յուրաքանչյուր մարդ ձգտում էր մի բան ասել՝ մեկին մի յառիկ [պիտակ] կպցնել, որպեսզի ինքն առաջ ընկնի: Հիմնական պատճառն էր ա էղել»: Սիբիրի Տոմսկի մարզ քսորված ու այնտեղ հինգ տարիներ անցկացրած Արփենիկ Ալեքսանյանն ու նրա բախտակիցները գտնում էին, որ սխավմունք է տեղի ունեցել, և որ պետք է ճշմարտությունը գրավոր կամ բանավոր դիմում-բողոքի ձևով ներկայացնել պետության համապատասխան մարմինների՝ պետական անվտանգության, ներքին գործերի, արդարադատության և այլ բարձր կամ ցածրաստիճան ղեկավարներին, և նրանք, ուսումնասիրելով հարցը, անպայման կկայացնեն արդարացի որոշում: Այդպես էր դաստիարակված խորհրդային քաղաքացին: Եվ սկսվում է դիմում-բողոքներ գրելու անվերջանալի գործընթացը: Սամվել Գրիգորյանը, որը կորցրել էր հորն ու հորեղբորը 1930-ական թվականների բռնությունների ժամանակ, այնուամենայնիվ շարունակում է մնալ այն կարծիքին, որ երկրի քաղաքական հենասյունը հանդիսացող «կոմունիստական գաղափարախոսությունը խեղաթյուրողներ կային, գաղափարախոսությունը ինքնին շատ լավն էր, վերցված էր այդ գաղափարախոսությունը մեր Ավետարանից, լրիվ ավետարանական գաղափարախոսություն [էր], մարդասիրական»:

Ապա շարունակում է. «Համակարգը էսպես ասեմ. գիտե՞ք ինչ, պատերազմի [Մեծ հայրենական] ժամանակ, պատերազմի նախօրյակին, ինչ-որ տեղ էլ չի կարելի մարդկանց մեղադրել, որովհետև վախենում էին երկիրը կորցնելուց: ... Դե իհարկե չի կարելի, նման մի երևույթ էր ստեղծվել, բնականաբար երկիրը պահելու համար կարող էին նաև զոհերի գնալ, սա բնական երևույթ է»:

Այս հենքի վրա թերևս օրինաչափ է, որ կրկին միայն պատմագիտական, մասնագիտական կրթության տեր անձը՝ Արմեն Ոսկանյանն է դատողություններ անում ստալինիզմի ձևավորման գործընթացի մասին. «...Ու եթե դրվում է պոստուլատ, որ դասակարգային պայքարը սրվում է

ժամանակի ընթացքում, և պետք է բացահայտել դասակարգային թշնամիներ, դրանք չեն կարող չլինել, քանի որ առաջնորդը ասել է, որ նրանք կան: Եթե չեն գտնում, ուրեմն լավ չեն որոնել: Այդ դեպքում պետք է հնարել դասակարգային թշնամուն: Ու բռնեցին հնարեցին այդ թշնամուն: Եվ այդ մարդկանց հսկայական մասը դրանց զոհ դարձավ: Այսինքն հետո էլ, երբ եղավ երկրորդ, երրորդ ալիքը, այդ չեկիստներին էլ վերացրին, միգուցե դա նաև նրանց հնարանքի պատիժն էր: Եվ այդ, այդ գաղափարական պոստուլատը մեջտեղ բերվեց անհատի իշխանությունը ուժեղացնելու համար: Որովհետև առաջնորդին պետք էր այդ դաշտը մաքրել ու, բնականաբար, այդ դրույթը բոլորը՝ վերևից մինչև ներքև, օգտագործեցին իրենց տեղերում. ասենք, հանրապետության մասշտաբով մի կրուզ [շրջանակ] ոչնչացավ, քաղաքի մասշտաբով՝ մի կրուզ, գյուղի մասշտաբով՝ մի կրուզ, հիմնարկի մասշտաբով՝ մի կրուզ, ու բոլորը դրանից օգտվեցին: Ու դա դարձավ հսկայական մի թիվ, ու հիմա հաշվվում է, որ մինչև 26-27 միլիոն բանտարկյալ կար, այսինքն՝ բնակչության տաս տոկոսի չափով: Շատ մեծ թվեր են, հսկայական թվեր են: Էս առումով, բնականաբար, ձևագնդու էֆեկտը ունեցավ: Հետո, երբ որ փորձեցին դա կանգնեցնել, արդեն այդքան էլ հեշտ չեղավ»:

Բնութագրական է, որ պատմություններից և ոչ մեկում չի հանդիպում մի դեպք, որ բռնադատված լինելու հանգամանքը բռնադատվածների գավակներին հետ պահեր կոմերիտմիության կամ կոմունիստական կուսակցության շարքերն ընդունվելուն ուղղված քայլեր ձեռնարկելուց: Դա, թերևս, նշանակում է առնվազն երկու բան. որ ստալինյան բռնությունները չէին դիտվում իբրև ամբողջատիրական ռեժիմի դրսևորում, համակարգի մեղավորություն, համակարգին բնութագրական մի բան, և, երկրորդ, անդամությունը կոմկուսին դիտվում էր իբրև աշխատանքային/պաշտոնեական առաջընթացին նպաստող միջոց, այլ ոչ կոմունիստական գաղափարախոսությանը հավատարմության դրսևորում:

ՄԱՏՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏՆԻՉՆԵՐ. ՈՎՔԵՐ ԵՎ ԻՆՉՈՒ՞: ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅՈՒՆՆ ԻՔՐԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ

«Մեղավորների» փնտրտուքում մարդիկ ոչ քիչ դեպքերում անդրադառնում են «մատնություն» երևույթին ու դրա հեղինակներին: Խնդիրը բազմաշերտ է և ոչ միանշանակ: Ո՞ւմ համարել մատնիչ և կամ գործակալ, ինչն էր այդ մարդկանց դրդում նման քայլեր անելու՝ սոցիալիզմի գաղափարը, շահը, նախամհը, խորհրդային քարոզչությունը, թե՛ այլ բան,

ինչպէս են վերաբերվել «մատնիչներին» անցյալում և ինչպէս նրանց ժառանգներին՝ ներկայում, և արխիվային նյութերի հնարավոր թափանցիկության պարագայում, երբ տեղեկատվությունը ենթադրության ոլորտից տեղափոխվում է հարաբերական ճշմարտության հարթություն, ինչպէս դա կանդրադառնար մատնիչների/գործակալների ժառանգների վրա: Այսինքն՝ հարցադրումները շարունակում են մնալ այժմեական, չնայած ստալինյան բռնությունների գագաթնակետերից (1937 և 1949 թթ.) անցել է ավելի քան վեց-յոթ տասնամյակ:³³

Մատնության խնդրին անդրադարձ է կատարված հարցազրույցների մի զգալի մասում: Բռնադատվածները կամ նրանց ժառանգները, որպես կանոն, ենթադրում են կամ գիտեն, թե ով է եղել «մատնիչը» գյուղում և/կամ ով է մատնել իրենց մերձավորներին: Հաճախ դրա մասին գիտի ողջ գյուղը, գերագանցապես միջին և ավագ սերնդի մարդիկ ու հատկապես բռնադատվածներն ու նրանց հաջորդ սերնդի ներկայացուցիչները: Իմացության/պատկերացումների աղբյուրները, սակայն, տարբեր են: Այստեղ կուզենայինք շեշտել խիստ կարևոր մի հանգամանք: Բանն այն է, որ մեզ հետ զրույցներում բանասացները նշում են **կոնկրետ** մարդկանց անուններ: Որպես կանոն, նրանք վստահ են, որ հենց այդ մարդիկ են իրենց անունները ներառել «վերևներին» ուղարկվող՝ բռնադատման ենթակա մարդկանց ցուցակներում կամ պարզապես մատնագիր գրել կամ «ծախել»: Որոշ դեպքերում էլ նրանք վստահ չեն, որ իրոք հենց իրենց մատնանշած մարդիկ են այդպես վարվել և պարզապես ենթադրում են, որ իրենց ունեցած տեղեկատվությունը ճշմարիտ է: Այսպես թե այնպես, հարցի շուրջ համայնքի անդամների (կրկնենք՝ հատկապես միջին և ավագ տարիքի) քննարկումներում ազատորեն շրջանառվում են իրենց նախնիին և ներկա համագյուղացիների, հարազատների ու բարեկամների, հարևանների ու ծանոթների անուններ, որոնք, նրանց համոզմամբ կամ ենթադրությամբ, այս կամ այն կերպ մասնակից են եղել մարդկանց բռնադատելու գործին: Բայց քանի որ չեն եղել դատավարություններ, կամ պաշտոնապես չեն հրապարակվել բռնադատվածների արխիվային գործերում առկա տվյալները, մենք նպատակահարմար գտանք հրաժարվել անունները ներկայացնելուց կամ էլ ծայրահեղ անհրաժեշտության պարագայում փոխել այդ անունները (դրանք ներկայացված են շղագիր), մեկերկու անգամ էլ չենք գրել գյուղի անունը:

Այսպես, Վոլոդյա Մարտիրոսյանի հայրը՝ Սամսոնը, այն «երջանիկներից» էր, ով դեռևս հարցաքննության ժամանակ էր իմացել իր հասցեին մատնագիր գրողների անունները. դրանք ցույց էր տվել քննիչը: Վոլոդյան այսպես է վերաշարադրում հոր պատմածը. «[Հարցաքննության] Հերթը հա-

³³ Հարցի հանգամանալի դիտարկումը տե՛ս օրինակ՝ *Գրիշա Սմբատյան*, նշվ. աշխ.:

ասվ ինձ, վերջը, գնացի, անուն-ազգանուն ասեցի, վերջը, [հարցնում է քննիչը] թե ո՞վ ա գյուղում թշնամիներդ, ասում ա՝ ասացի: Սենց ժպտաց [քննիչը], թե գրել-կարդալ գիտեն, ասի՝ հա, թե վերցրու կարդա [իր դեմ գրած ցուցմունքները]: Վերցրի, նայեցի, թե իմ ասածներից ոչ մեկի անունը չկա: Ում որ համարում եմ թշնամի՝ թշնամի չի: Ում որ համարում եմ հարազատ՝ թշնամի ա, ասում ա: Կարդում եմ, գլուխս պտտվում ա. ո՞նց թե, արա, էս ի՞նչ մարդիկ են, էս մարդիկը ո՞նց որ իրան մոտ մարդիկ են, բայց դե փաստորեն գրողը նրանք են»:³⁴ Վոլոդյա Մարտիրոսյանը «ինչո՞ւ էին մատնագիր գրել» հարցը դիտարկում է ավելի լայն համատեքստում. «Հայրս [Սամսոնը] կարծում էր, որ իրեն ուղղված մեղադրանքները հոր [Ալեքսանի, որը բռնադատվել էր ընդհատակյա դաշնակցական կազմակերպության անդամ լինելու մեղադրանքով 1929 թ., ապա և գնդակահարվել 1937 թ.] պատճառով էին, ուրիշ ոչ մի բանի: Իրա դեմ գրել էին զուտ նրա համար, որ տանեն: Ասենք՝ չունեին հետը Ալեքսանի պատճառով: Էն ժամանակ էսպես էր՝ եթե պետությունը գտնում ա, որ դու թշնամի ես, ուրեմը գյուղացիները չէին ընդունում, իրոք վերաբերվում էին որպես թշնամու. եղբայրը եղբոր սուն չէր գնում, դու պատկերացնո՞ւմ ես՝ ինչ ա: Չէր գնում: Համարո՞ւմ էր թշնամի: Եղբայրը եղբորը համարում էր թշնամի: Եթե պետությունը գտել ա, որ դու թշնամի ես, ուրեմը նա թշնամի ա: Էդ սարեցի ժողովուրդը՝ եղպես էր ուղեղները մտած: Շատ քչերն էին, որ գնում էին, հարազատին ձեռք մեկնում: Վախենում էին մի մասը, մի մասը համարում էին իրոք սա թշնամի ա, հարազատը հարազատին ընկնում էր [չէր օժանդակում]: Ոնց որ իմ հորեղբայրը դուրս չեկավ հորը [Ալեքսանիսն]՝ ճամփու դնի [երբ արքայում էին]: Էղպես էր: Նկարները [«դաշնակցական» հոր] վառեց...»: Ըստ Վոլոդյայի՝ կար մարդկանց մի խումբ, որոնք մատնագրերը ստորագրել են՝ առանց տեղյակ լինելու դրանց բովանդակությանը. «...անգրագետները, թե ես չեմ իմացել, թուղթ ա, ինձ ասել են ստորագրի՝ ես էլ ստորագրել եմ: Չեն իմացել, որ սա նյութ [մատնագիր] ա, որ էս մարդուն պիտի ձերբակալեն»: Վոլոդյայի հարազատներից մեկը, ով մասնակից էր դարձել նրա հոր բռնադատման հիմնավորմանը, Վոլոդյայի մեկնաբանմամբ, թերևս գործել է այլ սկզբունքից ելնելով. «...ինքը ջահել էր, խելքը չի կտրել, կամ չէր կարող էղպես չանել, որովհետև եթե նախագահը, բան, անում են, ինքը [կոմունոլի քարտուղար] ո՞վ ա, որ չանի: Կային նաև մարդիկ, որ հանուն իրենց մտածելակերպի կարող էին դեմ գնալ, նա էլ երևի թե վախեցել ա, որ եթե ինքը դեմ գնա, կարող ա իրան էլ տանեն, չգիտեմ»:

Տաթև գյուղի միջին և ավագ սերնդի բնակիչները նույնպես անուն առ անուն գիտեն, թե ովքեր են եղել գյուղի և կոլտնտեսության ղեկավարները 1949 թ., ով է եղել միլիցիոները («չեկիստ»), որոնք էլ «վերևներին» ներկա-

³⁴ Հմմտ. *Գրիշա Սմբատյան*, նշվ. աշխ., էջ 443-444:

յացրել են բռնադատման ենթակա համագյուղացիների ցուցակը: Նույն կերպ հարցին տեղյակ է տաթևցի Նոյեմ Արշակյանը. «Դա գիտեմ, որովհետև հերս միշտ ասում էր, որ *Պողոս* ա մեր անունը ցուցակում գրել»:՝³⁵ Երևանցի բանասաց Արմեն Ոսկանյանը նույնպես տեղյակ է շուրջ ութ տասնամյակ առաջ իր պապին մատնած մարդու մասին. «Իրանք [պապիկի ընտանիքը] ապրել են Բուրսանիա թաղամասում, համարյա կոմունալ տիպի պայմաններում և հարևաններով, երբ որ նստած գրուցել են ու էդ Խանջյանի սպանությունից հետո է եղել անմիջապես, նրանք տեսել են, որ մյուս հարևանը, որը միշտ հայտնի է եղել որպես մատնիչ և «վատ մարդ»՝ լուսամուտի տակով անցել է: Ու էդ երեք հարևաններով իրար մեջ խոսել են, ասել են «էս Հակոբը լուսամուտի տակով անցավ, հաստատ կեթա մեզ կծախի»: Ու իրանք էլ իրար մեջ խոսել են, թե «դե ինչ ենք խոսում, որ պիտի ծախի՝ ոչ մեկի համար էլ գաղտնիք չի [Խանջյանի սպանության հանգամանքները]: Ու մյուս օրը էդ երեքին էլ կանչել են հարցաքննության, ու հետո էդ բոլոր ընտանիքների բնակարանները մնացել ա էս Հակոբ կոչվածին»: Ռուբեն Ջրբաշյանն ընդհանրական գնահատական է տալիս երևույթին՝ բնավորության անհատական գծերից անցում կատարելով դեպի գաղափարախոսական դրվածքներ. «Միաժամանակ մարդկանց մեջ գերիշխում էր նախանձի զգացումը: Զրպարտանքների և մեղադրանքների միջոցով տեղերում վերացնում էին մարդկանց, զբաղեցնում նրանց պաշտոնը և դիրքը՝ չունենալով համապատասխան գիտելիք և կարողություն: Համակարգը վերևներից տարբեր ուղիներով այդ գաղափարախոսությունը ներարկում էր մարդկանց մտածողություն. «դուք մեծ գործ եք կատարում ի նպաստ մեր հայրենիքի և դրա համար պետք է վերացվեն բոլոր անարժան մարդիկ»: Ահավոր էր, որ նման մտածելակերպը դարձավ մարդկանց ներքին խառնվածքի համատարած ապրելաճ, իսկ նման համակարգը եղավ շատ կենսունակ: Եվ դա միայն Հայաստանում չէր, այլ ողջ Խորհրդային Միությունում: Անպայման չէր, որ գործը իրականացվեր միայն չեկիստների, ԿաԳեԲ-ի ուժերով՝ բոլորովին դա կարևոր չէր»:

Հայկավանցի Սուքիաս Զաքարյանի պատմածով գյուղում գիտեին այն «մունդար» մարդուն (ենթադրաբար նրանք հինգ-վեց հոգի էին), որը/որոնք զբաղված էին ուրիշների մասին կեղծիքներ տարածելով՝ այդ կերպ նպաստելով նրանց բռնադատմանը: Ասյա Յատյանը և Սամվել Գրիգորյանը «չար լեզու» ունեցողների, «ԿաԳեՊեներին բաներ հայտնողների» գործելակերպի հիմնական նարժառիթը համարում են նախանձը: Վերջինիս կարծիքով. «գիտեք ինչ և նախանձի հիմնական պատճառը. երբ մարդ չի կարողանում

³⁵ Ըստ հետազոտողի. «Շրջանային կուսակցության և պետանվտանգության պատասխանատու աշխատողները ճշտել ու կազմել էին բռնադատվածների և պատերազմում ֆաշիստական գերությունից հրաշքով փրկվածների ցուցակները»: Տե՛ս *Սեդրակ Պողոսյան*, *Տաթևի համառոտ պատմություն*, Երևան, 2011, էջ 116:

ապրել, տեսնում է դիմացինն էլ քիչ թե շատ ապրում է, կարող է նախան-
 ձել, շատ հանգիստ»։ Գոշեցի Էմմա Արզումանյանը, ախուրյանցի Անժե-
 լա Շահբազյանը նույնպես տեղյակ են գյուղի մատնիչների անուններին։
 Շիրակի գյուղերից մեկի մեր բանասացները, ինչպես և նրանց համագյուղա-
 ցիները, նույնպես գիտեն «ծախող մարդու» անունը, որն իր մատնությունը
 պատճառաբանել է. «ես ինչ էնեմ, ինձի կստիպեին, ես կստորագրեի...
 խաչ կդնեի, անգրագետ եմ»։ Նրա մասին նաև պատմում էին, թե «էրթում
 ԿաԳեԲեն ծախում էր, էդ մարդկանց կանչում էին ու տանում, տանըմ էին, էլ
 հետ գալ չկար։ Շատ է մատնե, ուրիշ մարդու էլ բանտարկել տվե, ով էրթըմ
 բանտարկվում ընտեղ, գալըմ էր, գալըմ ըստեղ պարծենում էր թե՛ «թալի
 գնդան»։ Ու երբ նրան մոտիկ մարդիկ ասում էին, թե «դու ինչի՞ ես ըզման
 բաներ էրըմ, մի էնե», ըսըմ էր. «Հը, պալիտ բյուրոն ա, բան կենե, վերջացնե
 գը, պալիտ բյուրոն է», ու էդ պարծենում էր, որ էս ինչ մարդուն տարա
 թալի գնդան, էս ինչ մարդուն բան...»։ Հինգ տարի այթայան արքություն
 մնացած Հայրենյաց գյուղի բնակիչ Ռուստ Աբրահամյանն իր հորը մատ-
 նող անձնավորության ով լինելու մասին տեղեկացել է հետագայում, հենց
 պետանվտանգության մարմիններում ծանոթանալով արխիվային գործերին։
 Իր հոր դեմ մատնություն գրողի ով լինելու մասին գիտե նաև հոռոմցի
 Հարություն Մովսիսյանը։ Գյումրեցի Վեներա Սահակյանը նույնպես
 ենթադրում է, որ կային մարդիկ, որոնք համապատասխան օրգաններին
 տեղեկություններ էին փոխանցել իր՝ նախկինում գերմանացիներին գե-
 րի ընկած հոր մասին։ Տեղյակ է գյուղի «գործ տվողների» մասին նաև
 հայկավանցի Ռոբերտը։ Միաժամանակ, որևէ կոնկրետ գյուղից (օրինակ՝
 Շիրակի մարզի Լեռնակերտ) արքավածների բացակայությունը բացատրվել
 է «մատնիչների» բացակայությամբ։ Պեմզաշենցի Պարույր Տոնոյանի
 կարծիքով «Էնտեղ... երևի իրար չեն մատնել, կամ՝ չի էղել, ես ինչ գիտեմ։
 Ընտեղից ոչ ոքի չարքորին։ [Պատճառը] Տո ներսից է. գողն, որ տնից կեղնի,
 եզը երթիկից էլ կոնան հանել»։

Սակայն ռեժիմի պայմաններում այդ մարդկանց հակազդելու և ոչ մի
 հնարավորություն չկար. «էն ժամանակ կարայիր մի բան ասեիր ...խոսայիր՝
 տանում էին», «ինչ պտի ըսեին, ո՞վ կոնար, որ խոսար, ո՞վ ռիսկ կեներ, որ
 խոսար», «չէ, չէ, ոչ մի բան, որովհետև դա վտանգավոր էր, Խորհրդային
 Միության ժամանակ էդպիսի բան չէիր կարող անել, նախ և առաջ պետք
 է ապացուցեիր, որ նրանք մեղք ունեն, նրանց մատնությամբ է եղել, որը
 հաստատ չգիտեիր, չէիր կարող ապացուցել, որից հետո էլ ընդհանրապես
 իմաստ էլ չուներ էլի», «հեչ բան չէին կոնա ըսեին, հլը խոսում էին, տանըմ
 էին, տանըմ, էլ հետ չէր գալըմ, թոփ էնում տանըմ էին, էլ հետ չէին գալըմ»,
 «Ո՞վ [19]37 թվին կհամարձակվեր բողոքել», «ոիսկ կենեին խոսային, ռիսկ
 չէին էնե, կերթար կծախեր, նորից կտաներ բանտարկել կուտար»։

Իսկ ինչպիսին էր վերաբերմունքը մատնագիր գրողների նկատմամբ Ստալինի մահվանից հետո: Ամենատարածվածը, թերևս, ենթադրական կամ ճշտված «մատնիչին» այս կամ այն ձևով անձնապես ամոթանք տալն էր կամ էլ հասարակական պարսավանքի ենթարկելը: Այսպես, Վոլոդյա Մարտիրոսյանն իր հոր մասին մատնագիր գրող ազգականին. «մի անգամ, էսպես, խոսքի մեջ ասացի, բան, հետո զգուշացավ ինքը ինձանից: Կոպիտ բան չասացի, էնպես ասացի, որ գիտեմ, որ դու էդ գործի [մատնության] մեջ կաս, էլի: Չշարունակեց [բարեկամությունը]»: Վոլոդյայի համոզմամբ. «Շատերը կան, որ չեն ներել [մատնիչներին]: Դա դրսևորվել և վերաբերմունքով: Ասելով, մասսայի մեջ քննադատելով, էրեսով տարվ՛ այո՛, դեպքեր եղել են: Մի անգամ մի քսոտականի տղա [Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին նվիրված] հուշարձանի մոտ բռնեց մատնիչին, որ սպանի՝ փախավ դա: Էլ հուշարձանի մոտ էդ մարդը չէր գալիս՝ նախկին գյուղսովետի նախագահն էր»:

Այլթայան քսոտում մեծացած տաթևցի մեր բանասացներից մեկը բորբոքված պատմում էր. «...ես հարյուր անգամ ասել եմ դրանց [իրենց ընտանիքի և համագյուղացիների անունները բռնադատման ենթակա անձանց ցուցակում մտցնողներին] երեսին: *Էդ մարդը* մի անգամ եկել և մտալ [աշխատանքային] կաքինետս, ասել եմ տյո՛ւս եկ իմ կաքինետաս. մինչև ես տյուս կըկյամ [աշխատանքից], նոր դու կմտնես ստեղ: Որովհետև դո՛ւ ես մեր ընտանիքը քայքայել: Թող մի բերան մի բան ասեր. չի՛ կարացել: Ի՞նչ էն *մյուսին* ասալ չեմ: ...Ես մինչև կյանքիս վերջը գիտեմ, որ էդ մարդիկ են արալ: Իմ հերս, որ Ալտայսկի կոչայում մահացել և, դիակը է՛ստեղ և՛ ես գիտեմ, որ դրանք են արալ: Կարո՞ղ և մոռանամ. իմ տղաս չի՛ մոռանա դա: ...Ով որ քսոտրվել և, էդ նույն ընտանիքների վերաբերմունքը էդ մարդկանց նկատմամբ վանտ և»: Բայց և այնպես կյանքը շարունակվում էր: Իրենց ընտանիքի անունը բռնադատվողների ցուցակում մտցրած մարդու որդին տաթևցի մեր բանասացի դասընկերն էր, կինը՝ իր ուսուցչուհին: Եվ երբ այդ մարդը «մահացավ, ընկերոջս [նույնպես բռնադատվածներից] հետ գնացինք մտանք իրանց տունը՝ դիակատունը: Գնացինք, վերջը, սովորության համաձայն, դիակի մոտ կանգնեցինք, բան, ուսուցչուհին էլ է՛ղեղ նստած էր, ասում և [դիմելով մահացած ամուսնուն]՝ «Էէէէ, փիսույթյունը արել ես, բայց մարդիկ կյալիս են»: Դե եղել և, եղել և...»: Տաթևցի մեկ այլ միջին տարիքի բանասացի կարծիքով. «Անցածը՝ անցած և, բայց տեսնու՛մ ես իմ *համագյուղացին* ինչ և ասում. «ես շատ վիրավորված եմ, իմ երեխան էլ չի մոռանա դա»: Դա լինելու և: Էդ վերքը, որ ասում են սպիանում և՛ սուտ և, վերքը միշտ էլ մնում և որպես վերք: Ինքը ինչքան էլ ապրի՛ իրա ամբողջ կյանքում դա հիշելու և: Դա շարունակվելու և նաև իրա սերունդում»:

Շիրակի գյուղերից մեկի բանասացներից մեկի ներկայացմամբ իրենց գյուղի «ծախող մարդու» տղաները տեղյակ էին հորը վերագրվող լուրջ կասկածներին («բայց տղերք ինչ էնեին, տղերք ուրիշ ձև էին մտածում, ինքը ուրիշ ձևի»), սակայն «ըղիգ հաստատած էլ չէ, ըղիգ մենք գիտենք էլի: Հա, գյուղը խոսվավ էլի, էդ մասին արդեն գյուղը խոսվավ, բայց դե անմիջապես [փաստեր չկար]», չնայած այդ մարդը չի ժխտել, որ ստորագրել է մատնագրերի տակ («ես ինչ էնեմ, ինձի կստիպեին, ես կստորագրեի... խաչ կդնեի, անգրագետ եմ»): Այդ մարդու համագյուղացին ավելի հստակ է արտահայտվում այդ նույն մարդկանց ժառանգների մասին. «իրանք շատ լավ գիտեն, իրանք հարյուր տոկոսով գիտեն, որ իրանց հերերը ըղպես բան են էրել, իրանք շատ էլ լավ գիտեն», իսկ գյուղում նրանց «դավաճանի գավակներ ենք անվանում: ...Հետներն էնքան կովող է էղել, ըսել են դավաճանի տղա»:

Բռնադատվածների ժառանգների կողմից ներողամտության յուրօրինակ դրսևորում է այն դեպքը, որը պատմում է հայկականցի Սուքիաս Չաքարյանը. «Ուրեմնա, էս Գյունաշյանենք, որ քսորել էին, հետո էկան տղերք լավ գործի էին, ցեմենտի պահեստապետ կաշխատեին քաղաքի շինարարության վրեն, էն մարդը, ով որ վատություն էր էրել, դրա տղեն գնացել էր ցեմենտ վերու, տուն շինելու համար, էդ մարդը վերցրել ըսել էր՝ հերդ մեր տունը քանդեց, բայց ես ձեր տունը կշինեմ: Հիշեցրել էր էլի: ...Չէ, չէ, ըղպես բան [կոնիվ անել] չի էղել: Ըսենք, էրեխեքը ինչ մեղք ունի, կամ, ըսենք, ինչ են տեսել, հետո էրեխեքը իմացան, էլ ինչ, արդեն ուշ էր, էլ ոչ կոնային ձեն հանեին, ոչ էլ պետությունը թույլ կտար»: Ներողամտության կողմնակից է նաև պեմզաշենցի Սամվել Գրիգորյանը: Նրա կարծիքով. «Գիտեք ինչ, նրանք [մատնագիր գրողները] շառավիղներ ունեն մեր գյուղում, հիմա իրանք ինչ մեղավոր են, որ, ասենք, իրենց հայրը կամ հարազատը էսպիսի վատ բան են ունեցել, բնավորություն, չի կարելի էլի էղպես վրեժխնդրոբեն կամ քինախնդրոբեն վերաբերվել, դրանով մենք իհարկե ոչինչ հետ չենք բերի»: Իսկ ներկա պահի համար, թերևս որոշակիորեն հրապարակախոսական պայթուտով, նա ասում է. «Հիմա [որ տեղեկանան մատնիչների մասին] կարող են իրար սպանել, ինչի մասին է խոսքը, հիմա ինչ, օրենք է գործում հիմա, օրենքներ չկան հիմա»: 1937 թ. մատնագրի (իբր թե հայիոյել էր Ստալինին) հիման վրա քսորված, ապա և ընտանիքի՝ 1949 թ. քսորը տեսած գոշեցի Բեգլար Ամիրխանյանը (Էմմա Արզումանյանի պատմելով) «վրեժը» լուծել է յուրովի. նպատակ է դրել. ««բոլորին [մատնագիր գրողներին] կթաղեմ, նոր ես կմահանամ»: Ու այդպես էլ արեց: Արդեն համարյա հարյուր տարեկան էր, երբ մահացավ: Իր բոլոր թշնամիները մինչ այդ արդեն մահացել էին»: Տկն Էմման էլ վերջերս է իմացել, թե ով էր 1949 թ. «հոր քսորի [հրամանը] ստորագրողը», ում նկատմամբ, սակայն, «չար չենք տրամադրված»: Ախուրյանցի Անժելա Շահբազյանը (ում հորը քսորել են

1937, ապա և 1949 թթ.), գյուղում հայտնի «մատնիչների» (ում մասին տեղեկացված էր հորից) ընտանիքների ժառանգների հետ նորմալ («բարեհամբույր») հարաբերություններ ունեն, սակայն վերջիններս չեն ընդունում իրենց վերագրվող մեղքը, համաձայն չեն, որ իրենք մեղավոր են: Եղբայրների հետ միասին ներողամիտ է տրամադրված նաև Ռուստ Աբրահամյանը. գործակալի («տականք մարդ էր») մասին «Հայրս էլ գիտեր, մենք էլ գիտեինք, բայց մենք չարամիտ չենք էղել եղբայրներով: Մենք հանդուրժել ենք, ասել ենք՝ անցածը անցած է: ...Որ տղաներն էլ, որ հանդիպում են մեզ՝ բարև, ասծու բարև, շատ ջերմ չէ: Հա, դե արդեն անցել է, մենք էլ չարագործ մարդիկ չենք: [Տղաներն իրենք] Գիտեին, լրիվ գիտեին [իրենց հոր արարքների մասին]»: Թերևս որպես այդ ընտանիքի նկատմամբ հարգանքի բացակայության դրսևորում է գնահատում Ռուստն այն փաստը, որ «Դրանց հերը որ մեռավ, 12 հոգի մարդ [միայն ընտանիքի անդամները] մասնակցեցին [հուղարկավորությանը], էդ էլ ասեմ»: Հոռոմցի Հարություն Մովսիսյանն այսպես է նկարագրում «մատնիչի» վախճանը. «Ես գիտեի, ով է էրել, ինքն [բռնադատված հայրը] էլ գիտեր, ըստեղ մի հատմ կար, իննսուն տարի ապրավ, կուրացավ, նոր մահացավ, հերս անցնում էր դռներով, ըսպես ուլիցով, փողոցով, ըսում էր, դա պիտի շատ ապրի, պտի քոռնա, նոր մեռնի, ու ըդպես էլ էղավ, քոռցավ, նոր մեռավ»: Թերևս «մատնիչի» նկատմամբ ներողամտության ցուցիչ է 1937 թ. հորը կորցրած երևանցի Ռևիկ Հարությունյանի վարմունքը, որն այսպես է նկարագրում հանդիպումը պետական գոյության մարմինների աշխատակցի հետ. վերջինս ասել է, թե «Ես չեմ կարող տալ, որ գործը ծերից ծեր նայեք, որովհետև ըստեղ... մատնիչները չկան [վախճանվել են], բայց նրանց ժառանգները... եղել են դեպքեր, մեզ ստիպել են, որ ցույց տանք, հետո անախորժություն ա եղել»: Ասի. «Ես չեմ ուզում իմանամ»: Հիմա, ասենք թե, ժառանգը իմացել ա, որ հերը մատնել ա, էն ժամանակ մատնելը ո՞րն էր: Ամեն մեկը մատնում էին, որ իրանց գլուխը փրկեն: Ոչ թե, որ վատություն անեն, այլ իրանց փրկեն: Հետո էդ մատնիչներին էլ էին տանում»:

Եղել են իրավիճակներ, երբ մատնագրերի հեղինակները մեղա են եկել: Այսպես, Արմեն Ոսկանյանի բռնադատված պապիկի «այն հարևանը, որը որ մատնել էր, եկել է տատիկիս գտել է: Դա եղել է 1940-ականներին, պատերազմից հետո: Ու ասել է, որ ես եմ ասել, որ իրենք տենց խոսում էին, բայց ես չէի մտածում, որ տենց կլինի, ու թե խնդրում եմ ների՞ր ինձ: Տատիկս ասել է, թե ես քեզ չեմ ներում, թող Աստված ների քեզ: Հետո պատմում էին, որ այդ մարդը հիվանդացել է, ծանր հիվանդություններ է տարել, երկար ժամանակ պառկել է, ցավեր է ունեցել ու տենց մահացել է»: Այդպես է եղել նաև հայկավանցի մի բանասացի ընկերոջ պարագայում, ինչը բերել է դիմացի կողմի ներողամտությանը գյուղում «գործ տվող» ընկավող մարդու ժառանգի նկատմամբ. «...հմի ըղոնցից մեկի տղեն իմ դասընկերս է էղել, ինքն էլ

կրսեր, օր իմ հերս անպետք մարդ է էղել, ինքը իրա բերնով կրսեր: Կրսե՛ ան, արի իմ հեղս ընկերություն մի՛ արա, բայց ես ինչ մեղք ունեմ, դե ճիշտ է, հո ինքը չի ցանկացել, դրա համար ինքը նեղվում էլ էր»:

ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻԻՐԸ ԵՎ ՄԵՐՕՐՅԱ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լինել որևէ մարդկային հասարակության անդամ՝ նշանակում է քո տեղը ունենալ, տեղավորել ինքդ քեզ նրա անցյալում: Այդ պատճառով էլ անցյալն ու ներկան սերտորեն փոխկապակցված են: Անցյալում տեղի ունեցած իրադարձությունների գնահատականի ու մասնավորապես հազարավոր մարդկանց կյանքի ու մահվան խնդիրները տնօրինելու մեջ մեղավորության հարցը բռնադատվողների ժառանգները հաճախ դիտարկում են այսօրվա տեսանկյունից: Ընդհանրապես հասարակության նոր անդամներին իրենց անցյալին ծանոթացնելը այդ հասարակության մեջ նրանց ներգրավման իմաստով տվյալ հասարակության ջանքերի կարևոր մասն է կազմում: Անցյալի վերհիշումն ակտիվ, կառուցողական գործընթաց է, այլ ոչ թե տեղեկատվության սովորական վերականգնում: Հիշել նշանակում է անցյալի մի մասը տեղադրել ներկայի հայացքների համակարգի ու կարիքների սպասարկման մեջ: Ահա այդ շարքում են տեղավորվում այն հարցադրումները, թե պետք է արդյոք տեղեկացնել, հանրությանը մատչելի դարձնել ընդհանրապես ստալինյան բռնությունների տարիների բոլոր մեղավորներին՝ «բացելով»³⁶ այդ ժամանակաշրջանի արխիվները կամ իրականացնելով «լյուստրացիա»: Իսկ ինչո՞վ է հիմնավորվում 65-80 տարի առաջ տեղ գտած երևույթների քննարկումը մեր օրերում. ի՞նչ կապեր, համեմատություններ են առկա մարդկանց պատկերացումներում անցած-գնացած ժամանակների ու մերօրյա իրողությունների միջև:

³⁶ Հայաստանի ազգային արխիվում ստալինյան բռնություններին վերաբերող գործերին սկզբունքորեն կարող է ծանոթանալ թեմայով զբաղվող ցանկացած հետազոտող: Նրանք կարող են արտագրել գործերում առկա տվյալները, աշխատել համակարգչով, սակայն իրավասու չեն պատճենել ու պատճենած փաստաթուղթը իրապարակայնացնել, եթե դա պարունակում է «մարդու անձնական և ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ»: Օրենքով նախատեսված այս պարզաբանումն իրականում թույլ է տալիս յուրաքանչյուր տեղեկություն ցանկության դեպքում դիտարկել որպես «գաղտնի»: Գործերին կարող են ծանոթանալ նաև բռնադատվածների ժառանգները: Ի տարբերություն հետազոտողների՝ վերջիններս կարող են նաև պատճենել գործերի առանձին էջեր: Հարցը կարգավորվում է «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքով (տե՛ս մասնավորապես, հոդված 22-ի կետ 3-ը): Տե՛ս <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2019> (դիտված է 25.09.2015):

Այս հարցերի մեծ մասը տարբեր ձևակերպումներով ու մանրամասնություններով տեղ է գտել մեր հարցազրույցներում: Ստալինյան բռնաճնշումների զոհերի ու նրանց ժառանգների պատկերացումների զգալի մասը հանգում են նրան, որ բռնությունների տարբեր մակարդակների «դերակատարների» անվանական բացահայտումը միայն կօզնի հասարակության ինքնամաքմանը, նոր թշնամությունների առիթ չի դառնա և առհասարակ կօզնի ոչ վաղ անցյալի պատմության վերականգնմանը: Արխիվների «բացելու» հարցը մաս է կազմում շատ ավելի բարդ գործընթացի՝ «լյուստրացիայի»: Այդ առումով բնութագրական է, որ «լյուստրացիայի» խնդրի որոշ դրվագների շուրջ համեմատաբար խորքային քննարկում ընթացել է միայն մեկ բանասացի՝ Արմեն Ոսկանյանի հետ: Վերջինս ժամանակին աշխատել է ազգային անվտանգության մարմիններում, ու հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ նա հարցի նկատմամբ ունի մասնագիտական մոտեցում, տեղյակ է խնդրի թեր և դեմ կողմերին: Ու քանի որ «լյուստրացիայի» խնդրի շուրջ (լայն առումով) փաստորեն բացակայում են «ժողովրդական» պատկերացումները, այդ հարցը այս հոդվածում չի քննարկվի:

Արխիվների բացմանը կողմ արտահայտվող մարդկանց կարծիքի յուրօրինակ, անպաճույճ և պարզ ձևակերպումներով ամբողջացում է Վոլոդյա Մարտիրոսյանի մեկնաբանությունը, որով նա խնդիրը հիմնավորում է՝ այն տեղադրելով իմացության և տեղեկատվության հասանելիության դաշտում. «Կարծում եմ՝ ճիշտ կլիներ արխիվները բացել: Չէ, թշնամություն չէր լինի [զոհի և դահճի ժառանգների միջև]: Նախ, վերացել են էդ մարդիկ, չկան: Հետո, կան մարդիկ, որ էն տարիներին միլիցա են եղել, բայց կարողացել են էնպես անել, որ մարդիկ փրկվեն, չսստեն, քիչ տուժեն: Տենց մարդ եղել ա: Բայց տենցն էլ եղել ա, որ էնպես ա արել, որ մարդիկ նստեն [բանտ], ավելի շատ տուժեն: Այ, տենց մարդիկ եղել են: Դե ես չգիտեմ, ես ինչ իմանամ: Բացելը [արխիվների] գիտես, հիմի գոնե գիտենք [1980-90-ական թթ. արդարացման դատավճիռների շտրիկով], որ էն մեկը գնդակահարվել ա, էս մեկը գնդակահարվել ա, ով ա արել, ինչի համար ա արել: Պրոստո [պարզապես] հետաքրքիր էլ ա, որ իմանանք: Գյուղացիք բոլորը գիտեն [մատնիչներին]: Գիտեն ով ա արել, ով ա պատճառը դառել, ինչի համար: Բացվի, ճիշտ կլինի, էլի: Իմանան, էլի»:

Քիչ ավելի բազմազան են այն խնդրի հիմնավորումները, թե որքանով է այսօր պահանջարկված ստալինյան բռնությունների քննարկումը: Նույն Վոլոդյա Մարտիրոսյանն այն համոզման է, որ թեման ավելի շատ հետաքրքրում է. «Ումը որ ցավ ունի: Ում որ ցավ ունի, նա անպայման ուզում ա կարդալ: Այսինքն՝ ով որ հարազատ ա կորցրել: Ով որ հարազատ, բարեկամ, եղբայր, հորեղբայր ա կորցրել, նա խիստ հետաքրքրված ա կար-

դալու: Հետաքրքիր ա իմանան՝ ինչի՞ համար, ո՞նց, խի՞: Բոլորի համար հետաքրքիր ա: Ով որ չի կորցրել [նրանց համար հետաքրքիր է]՝ մասամբ: Սա ես չեմ ենթադրում, ես արդեն էս գրքի [Գրիշա Սմբատյանի «Երկաթե վարագույրից այս կողմ»] տպվելուց հետո ես տեսնում եմ մարդկանց ցանկությունը, ում հարազատը [որ բռնադատվել է], անպայման ուզում է էդ գիրքը կարդա, տեսնի: Թեև ուզ չի կարողանում կարդա՝ ասում ա՝ պատմի՛: Ուզում ա՝ մի տեղեկություն իմանա»: Մեր օրերում դիտարկվող հարցի չիմացությունը կապանցի Ռուդիկ -Քարամյանը բացատրում է թեմայի մասին անգրագիտության գործոնով: Նա ասում է. «[19]37-38 թիվը որ ցույց են տալիս [հեռուստացույցով], թող իրանցն էլ ցույց տան՝ իրանք ինչ են անում: Անցյալի մասին որ ցույց են տալիս՝ դա էլ ա պետք, խի՞ չի պետք: Դե, որ անարդարություն եղել ա, էլի: Էն ժամանակ էլ, էլի, անարդարություն էլի եղել ա: Անմեղ մարդկանց շատերն են տարել, կոտորել, որը՝ կենդանի ա մնացել: Չէ, ջահել էրեխեքը շատ էլ չգիտեն դրա մասին: Իմ էրեխեքը՝ խի՞ չգիտեն. իմ էրեխեքը խելոք, կրթված մարդիկ են, ամեն ինչ էլ գիտեն: Կարդացել էլ են, տանն էլ են լսել՝ ամեն ինչ էլ գիտեն: Բայց դե էքքան մարդ կա, որ սկի [չի էլ հետաքրքրվում]: Պատճառը: Անգրագիտություն ա, գիտելիքը չկա»:

Տաթևցի Վաչիկ Մարտիրոսյանը գտնում է, որ Հայաստանում ստալինյան բռնությունների թողած վերքը առկա է և դրա համար էլ թեմայի շուրջ. «Հեռուստացույցով էլ պիտի ասեն, ամեն ինչով էլ պիտի նկարեն»: Նույն մոտեցումն ունի մեկ այլ տաթևցի՝ Նույեմ Արշակյանը. «[19]49 թվի [աքսորի] մասին դե որ ըլի՛ խի՞ չի պետք: Պետք ա որ մեր սերունդն էլ իմանա, որ սենց եղել ա: 49 թիվը պատմություն ա էլի՛՝ որ աքսորել են, թող իմանան՝ որպես պատմություն: Թող էդ էլ կիրեն պատմության գրքերում՝ որ հիշվի»: Արվինիկ Ալեքսանյանի մեջ այնքան էր արմատացած 1949 թ. աքսորի գործոնը, որ իր երեխաներին հեքիաթների փոխարեն պատմում էր դրվագներ աքսորական կյանքից, ընդհանրապես մինչև կյանքի վերջին օրերն անընդհատ, առիթ-անառիթ «վերադառնում» էր տոմսկյան աքսորի իրողություններին: Այսինքն՝ շատ-շատերի համար անցյալը շարունակում է տառապանք պատճառել, քանի որ այն *անցյալ* չէ: Այն պարզ պատճառով, որ արդարադատությունը լիարժեք, ամբողջական չի եղել, քանի որ տասնյակ, հարյուր հազարավոր անհատների ու ընտանիքների ճակատագրերի խեղդողները չեն դատապարտվել որպես հանցագործներ, և կենդանի մնացած մեղավորները չեն ընդունել իրենց պատասխանատվությունը: Այդ իսկ պատճառով այդ «անցյալը» շարունակում է ցավոտ մնալ ինչպես պատմական կտրվածքով, նույնպես և ներկայի կոլեկտիվ հիշողության մեջ, այդ անցյալը դեռևս չի վերադարձել անցյալի իր տեղը:

Ոչ միայն հիշելու, այլ նաև վախի մթնոլորտի դեմ պայքարելու անհրաժեշտությունն է մատնացույց անում երևանցի Արմեն Ոսկանյանը. «1937 և 1949 թթ. մասին խոսել պետք է, բացահայտումներին անդրադառնալը միանշանակ պետք է ուղղված լինի վախի մթնոլորտի դեմ: Բայց կարող է նաև հակառակ էֆեկտը լինի՝ մարդիկ ավելի վախենան: Այսինքն, մի բան էլ հուշենք, որ կարելի է էսպես էլ անել...»:

Հանդիպում են նաև հոռետեսական մտեցումներ: Այսպես, 78-ամյա երևանցի Խաչիկ Գաբրուզյանը նախ նկատում է, որ «...սերունդը փոխվել և հիմա, ոչ ոք [19]37 թիվ էլ չի հիշում: Իմ սերունդն և հիշում, ինձնից հետո համարյա բոլորը ջահել են, չեն էլ հիշում, չեն էլ իմանում: ... [19]37-ի, [19]49-ի մասին երեխեքին պատմել եմ, երբ որ առիթ է եղել: Ենթադրենք գիտեն կամ չգիտեն, դա ինչ և տալիս հիմա: Հիմա լրիվ ուրիշ կարգեր են: Ուզում ես խոսի, ուզում ես՝ մի խոսի, եթե կարիքը, առիթը չկա՝ ինչ խոսես: [19]37 թիվը ոչ ոք չի հիշում: Ովքեր որ մեր նման կան՝ ապրում են դեռ, նրանք կարող և որոշ բաներ հիշեն-ասեն, ոնց որ ես եմ ասում: Իսկ մյուսները ո՞վ և [19]37 թիվ հիշում: Ինձ համար հիմա նշանակություն չունի՝ [19]37 թիվ և էղել, թե չի էղել. էկել, անցել, գնացել և, մենք չարչարանքները տեսել ենք էդ ժամանակ...»: 80-ամյա Սողոմոն Հարությունովը նմանատիպ հարցադրում է անում. «Իսկ ինչ դա կտա: Դսմ ինչ կտա: Կարո՞ղ եք ասել: Այսօր ասում են «խոսքի ազատություն»: Խոսիր ինչի մասին ուզում ես: Բայց, ինչպես ասվում է, «տակից». եթե չափն անցնես՝ քեզ էլ կճնշեն: Դե, էսպես, իհարկե, ոչ մասսայաբար»:

1930-40-ական թթ. բռնությունների կապը մերօրյա իրողությունների հետ նույնպես աչքի է ընկնում սուր հարցադրումներով: Կապանցի Վոլոդյա Մարտիրոսյանն այն համոզման է, որ «Էս թեմայի շուրջը [ԶԼՄ-ներով] ընդհանրապես չեն խոսում: Պենք և խոսել: Պենք և, որ դաս լինի, դաս լինի ներկա սերնդի համար: Որ զուգահեռներ անցկացնեն, որ էսօր որ, օրինակ, միտինգներին նկարում են, էս էլ սրա [բռնությունների] մի ձևն և փաստորեն, դավաճանության մի ձևն էլ դա և»: Ավելի գլոբալ հարթության մեջ նույն դրվագին է ուշադրություն հրավիրում Ռուդիկ Քարամյանը. «[19]37-38 թվականին՝ դա իսկականից արդեն բռնություն էր: Ոնց որ հիմա հայաթափ և լինում Հայաստանը: Նույնն էլ հիմա ա՝ էդ նույն պատմությունն և, էլի: [19]37-38 թիվը՝ նույնն էլ հիմա և: Նույն պատմությունն և: Ինչո՞վ և նույնը՝ ճիշտ և, էն ժամանակ բռնում էին, տանում, հիմա մարդկանց ֆինանսակա-նը... կարան աղքատացնեն: ...Հիմա ազատ խոսում ենք, ինչ ուզում՝ ասում ենք. էդ ազատություն և: Էն ժամանակ վախենում էին բան ասեն: Կուսակցությունները որ գալիս են միտինգ են անում՝ ով որ աշխատում ա՝ վախենում և [գնալ մասնակցել]... Վախը ո՞նց և: Պենք ասել ա՝ եթե հանկարծ

տեսնեմ էնտեղ՝ աշխատանքից հեռացնելու եմ: Դրա համար էլ ասում աս [պոտենցիալ բողոքավորը]՝ էն աս աշխատանք ունեմ, գնամ [հանրահավաքի]՝ ինչ անեմ: Ճիշտ չի դա էլ: Էդ աս՝ աշխատանքի բանով [գործոնով պայմանավորված] վախենում եմ, թե չէ աշխատանք եթե չունի՝ խի պիտի վախենա: Բնչ աս էղել՝ առաջվանը հո չի գալիս: Հա, էղել են դեպքեր, որ էդ պատճառով մարդկանց գործից հանել են: Տեխնիչեսկի [տեխնիկապես] նենց են հանում, որ իսկի [չես էլ հասկանում բուն պատճառը]: ...Առաջ ասում [քննադատում] էին՝ բռնում, տանում, կորցնում էին: Հիմա եթե ասում [քննադատում] են՝ կամ ուշադրություն չեն դարձնում ասածին, կամ գործից են հանում, կամ պրեմիյա [հավելավճար] չեն տալիս: Հա, էդ աս էլի, վայր [վերջ]: Կարելի աս ասել, որ ճշման ձևերն են փոխվել, բայց ճշումն էլի մնում աս»: Վերջին միտքը զարգացնում է Արմեն Ոսկանյանը. «Հիմա, օրինակ, ցույցերի ժամանակ մասնակիցներին անթաքույց տեսանկարահանում են: Դա անում են ԵԳԵ կամ ԱԱԾ աշխատակիցները: Եվ կամ հետո Ֆեյսբուքով ճշտում-համադրում են դիմագծերը. չէ՞ որ Ֆեյսբուքը դրա համար հրաշալի գործիք է: Կամ եթե բջջային հեռախոսի մեջ GPS-ը միացրած է լինում, ում որ պետք է՝ իմանում է, թե որտեղ և որ ժամին է էղել այդ հեռախոսի տերը: Այսինքն, тотальная слежка-ն [տոտալ լրտեսում], այսպես կամ այնպես՝ շարունակվում է: Ես կարդացել եմ, որ ամերիկացիները օրական հինգ մլրդ բջջային հեռախոսագրույց են գաղտնալսում: ...Եթե իշխանությունների դեմ ուղղված ցույցերին մասնակցելուց վախենում են պետական աշխատողները, նույն կերպ կվախենան նաև աշխատանքը կորցնել մասնավորի մոտ աշխատողները: Այսինքն, նրանք միանշանակ չեն լինի նաև ընդդիմության շարքերում: ... Ու դրա դեմը չես կարող առնել, այդ վախը բոլորիս մեջ նստած է: Այսինքն, մարդ կարծում է, թե ինքը կորցնելու ոչինչ չունի, քանի որ ընդամենը 40-50.000 աշխատավարձ է ստանում, բայց այսօր այդ աշխատավարձն իրեն պետք է: Իսկ եթե մասնավոր խանութ ունի, օրինակ, վաղն էլ եթե հարկայինը եկավ ստուգելու, ու եթե նախկինում 5-10-30.000 վերցնում էր ու թերությունների վրա աչք էր փակում, այս անգամ այդ գումարը չի վերցնելու ու մի բան հաստատ գտնելու է: ...Լծակները շատ են»: Վախի մթնոլորտի դեմ 1937-ի «գործիքներով» պայքարելու անհրաժեշտություն է մատնացույց անում Ռուբեն Զրբաշյանը. «Ես կարծում եմ, որ վախի մթնոլորտը մինչ այժմ մեր հասարակության միջից լրիվ չի վերացել: Այո, [19]88-ին կարծես ազատվեցինք դրանից, բայց այդպիսի զարթոնքը երևի երկար չի տևում: Ուղղակի մենք դրա արդյունքները չգնահատեցինք և չկարողացանք զարգացնել»:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Այսպիսով, վերը հանգամանալից անդրադարձ եղավ այն խնդրին, թե ստալինյան շրջանի բռնությունների իրականացման գործում ում կամ ինչն են մեղավոր դիտում մեր ուսումնասիրություններում ընդգրկված բռնադատվածները և նրանց ժառանգները: Անցած տասնամյակներում, համեմատյալ նույն վերջին առնվազն երեսուցիս տարվա ընթացքում մեջտեղ են եկել հսկայական թվով հրապարակումներ ստալինիզմի՝ որպես երևույթի մասին: Գրվել ու երբեմն նաև հայերեն են թարգմանվել բազմաթիվ գրքեր, թերթային հոդվածներ, նկարահանվել են վավերագրական ու գեղարվեստական ֆիլմեր, հեռարձակվել են հարյուրավոր կյոթ սեղաններ ու հեռուստատեսային քննարկումներ, բայց և այնպես, մեր ուսումնասիրություններում ներգրավված բռնադատվածներն ու նրանց ժառանգները, որպես կանոն, իրենց գնահատականներում հենվում են սեփական կենսափորձին, համակարգային բնույթի գնահատականներ քիչ են տալիս, եղածներն էլ պայմանավորված են անձի բարձր կրթական մակարդակով: Պատճառները երևի թե բազմաթիվ են: Ուղղակի թվարկեմ մի քանիսը. ա) վերը նշված և տասնամյակներ շարունակ քարոզվող «անհատի պաշտամունքի» տեսության պակասավոր, ոչ մինչև վերջ հետևողական լինելը, բ) կանոնակարգված հիշողության մշակույթի բացակայությունը կամ թույլ մշակվածությունը, գ) համեմատությունները մերօրյա իրողությունների հետ, որի բնութագրական գծերից են տնտեսական վիճակի վատթարացումը, օրինականության պահպանման ցածր մակարդակը, սոցիալական ոլորտում անհավասարության աղաղակող դրսևորումները և այլն, ինչի արդյունքում շարքային քաղաքացու կենսապայմաններն էապես տուժել են:

Վերոբերյալի հենքին միանգամայն օրինաչափ են թվում այն զարգացումները, որ տեղ գտան մեր իրականության մեջ Անաստաս Միկոյանի արձանի տեղադրման հարցի հետ կապված: Բնութագրական է, որ հարցն ամբողջատիրական գաղափարախոսության ոլորտի մեջ դիտարկելու ու այդ կերպ մերժելու փոխարեն (սման քայլեր ձեռնարկում էին միայն պրոֆեսիոնալները, այդ թվում և իմ գործընկերները) խնդիրը քաղաքային իշխանությունների, ապա և սոցիալական ցանցերի ու ՉԼՄ-ների էջերում տեղափոխվեց Միկոյանի՝ ԽՍՀՄ և հայության շահերին կողմ կամ դեմ արած ու չարած գործերը կշեռքի նժարի վրա դնելու ոլորտ: Սա մի լրացուցիչ անգամ ցուցում է խորհրդային գաղափարախոսության հետևանքներից ձերբազատվելու գործում անելիքների մեծ դաշտի առկայության վիաստը:

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱՑՈՒՄԸ

Տվյալ հոդվածում դիտարկելու ենք ստալինյան բռնաճնշումների մասին եղած հայաստանյան պատմագրությանն ու պաշտոնական վերաբերմունքի և անհատական հիշողությունների¹ փոխազդեցություններն ու փոխառնչությունները:

Վերջին մի քանի տարիներին տարբեր ամբիոններից հաճախ հնչում է այն միտքը, որ խորհրդային ամբողջատիրությունը մերօրյա Հայաստանում կարոտ է հիմնարար քննության: Մինչդեռ Ռուսաստանում «պերեստրոյկայի» և հատկապես հետխորհրդային առաջին տարիներին այն արդեն հայտնվել էր հանրային ուշադրության կիզակետում: Դրան նպաստում էին ոչ միայն «ներքևից» եկող քայլերը՝ առանձին ուսումնասիրողների հետազոտական նախաձեռնությունները, այլև «վերևից»՝ նոր քաղաքական իշխանությունների փորձերը՝ հանրությանը հասանելի դարձնել քաղաքական բռնությունների ընթացքն ու հետևանքները բացահայտող նորանոր փաստաթղթեր և ընդունել դատապարտող օրենքներ (հմմտ. Ալ. Յակովլևի հանձնաժողովն ու նրա անունը կրող ֆոնդի աշխատանքները², 1991 թ. ընդունված ռեաբիլիտացիոն օրենքը, բռնագաղթված ժողովուրդների ռեաբիլիտացիայի մասին որոշումները, հետազոտությունների խրախուսումը ևն): Որոշ մասնագետներ այնքան են կարևորում հանրային քննարկվող տեքստերը, որ կարծում են՝ խորհրդային կայսրության փլուզման կարևոր պատճառներից էին ուշխորհրդային շրջանում իշխանական տրամասության (դիսկուրսի) և կենցաղավարող պրակտիկաների միջև խզման ահագնացող չափերը, որի արդյունքում այդ տրամասությունները կորցնում էին իրենց բռ-

¹ Հմմտ. *P.H. Hutton. History as an Art of Memory. Hanover [N.H.]: University Press of New England, 1993:*

² *Ալ.Ն. Յակովլև (1923-2005)*՝ Ռուսաստանի քաղաքական և հասարակական գործիչ, 1988 թ. ղեկավարել է բռնաճնշումների նյութերն ուսումնասիրող կոմկուսի հանձնաժողովը, նյութերի զգալի մասը հասանելի են առցանց, տե՛ս Архив Александра Яковлева, <<http://www.alexanderyakovlev.org/>> (24.05.2014):

վանդակային հիմքը³: Այսօր Ռուսաստանում սեփական պատմության հետ առերեսվելու նախկինում կատարած փորձերը հաճախ մերժվում են կամ ենթարկվում վերընթերցման՝ մեծ մասամբ վերադառնալով խորհրդային կադապրներին: Այս ընթացքի մեջ ներքաշվեցին ռուսաստանյան քաղաքական կողմնորոշում ունեցող նախկին ԽՍՀՄ-ի մի շարք երկրներ՝ ենթարկվելով այս հարցերի շուրջ միջպետական համաձայնագրերում ամրագրված սահմանափակումներին (հմմտ. ԱԳՀ մի քանի երկրների, այդ թվում՝ Հայաստանի, ԽՍՀՄ պատմությանը վերաբերող ԿաԳեԲե-ի արխիվներում աշխատելու նոր կանոնների վերաբերյալ միջպետական որոշումները)⁴:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՏԱՆԱՐՐԱՏԻՎԸ

Նորանկախ Հայաստանի պատմագրությունը հիմնականում շարունակում է խորհրդային նարրատիվների վերարտադրությունը, ինչին նպաստում են ոչ միայն քաղաքական կախվածությունը Ռուսաստանից, այլև միջազգային քննարկումներից հայաստանյան պատմագրության որոշ մեկուսացվածությունն ու խորհրդային հասարակական գիտություններին բնորոշ ինտերցիան: Խորհրդային անցյալի հանդեպ մասնագիտական և հանրային հետաքրքրությունը հաճախ ստվերվում է Հայոց ցեղասպանությունն առավել արդիական հարց ճանաչելու հանգամանքով, և մինչև թուրքական ժխտողականության հաղթահարումն ու խնդրի քաղաքական հանգուցալուծումը մյուս պատմագիտական հարցերը, կարծես, դատապարտված են ստվերում մնալու և ընկալվելու որպես երկրորդական: Անկախ պատճառներից, ցեղասպանության թեման հայ հասարակական տրամասությունում վերածվել է մետասարրատիվի և ոչ միայն ճնշում է այլ թեմաները, այլև ծառայում է որպես տարբեր ոլորտություններ նկարագրելու լեզու⁵: Խմբային տրավմատիկ հիշողության դեպքում նման երևույթներ հանդիպում են տարբեր ժողո-

³ А. Юрчак. Это было навсегда, пока не кончилось. Последнее советское поколение. М.: Новое литературное обозрение, 2014: Հմմտ. նաև Ж. Кормина. Рец. на кн.: Алексей Юрчак. Это было навсегда, пока не кончилось. Последнее советское поколение // Антропологический форум, 26, 2015, էջ 209-221:

⁴ Տե՛ս Пресс-служба Исполнительного комитета СНГ. Степень секретности сведений, засекреченных в период существования СССР, будет пересмотрена // Исполнительный комитет СНГ. Официальный сайт <<http://www.cis.minsk.by/page.php?id=16284>> (17.05.2014); На всякий случай засекретить: совместная архивная политика СНГ // Уроки истории XX век <<http://urokiistorii.ru/2572>> (17.05.2014).

⁵ Հմմտ. G. Shagoyan. Memorializing the Earthquake // Changing Identities: Armenia, Azerbaijan, Georgia. Collection of Selected Works. Tbilisi: Heinrich Böll Stiftung, 2011, էջ 70-95:

յաստանի, և՛ առանձնապես Սփյուռքի զգալի ներուժն ուղղված է հիմնականում մեկ հարց լուծելուն՝ ստիպել թուրքերին առերեսվել սեփական պատմության հետ՝ անտեսելով ոչ վաղ անցյալի սեփական պատմության բազմաթիվ դրվագներին նույնպես առերեսվելու անհրաժեշտությունը: Մրա վառ վկայություններից է երկու «տրավմատիկ» իրադարձությունների՝ Հայոց ցեղասպանության և 1949 թ. հայերի բռնաքաղաքի «կլոր» տարելիցների համեմատությունը: Նկատի ունենք անսխալադեպ շնորհայից միջոցառումներով ուղենկցվող Հայոց ցեղասպանության հարյուրամյակի և 1949 թ. հայերին Սիբիր արքարելու հիսունամյա (1999 թ.) և վաթսունամյա (2009 թ.) բացարձակապես աննկատ անցած տարելիցները:

Համեմատելով ողբերգական իրադարձությունների հանդեպ այլ հանրություններում ձևավորված մոտեցումները՝ կուզենայինք մի փոքր կանգ առնել ֆաշիստական և ստալինյան համակարգերի հանդեպ ժամանակակից գերմանական և ռուսաստանյան հասարակությունների մոտեցումների տարբերության վրա¹², մասնավորապես անդրադառնալ Դան Դիների «էթնիկացված հիշողության» տեսությանը¹³: Ըստ վերջինիս՝ հրեաների և գերմանացիների հիշողությունները Հոլոքոստի հարցում մեծ մասամբ պայմանավորված էին հրեաների՝ իբրև «մշակույթով և պատմությամբ իրենցից տարբերվող խմբի», գերմանական ընկալմամբ: Այս դեպքում գերմանացիները մտնում են «էթնիկ հիշողության» դաշտ և իրենց մեղքը նույնպես էթնիկացնում՝ դրան տալով «հատուկ գերմանական մեղքի կարգավիճակ»¹⁴: Մինչդեռ խորհրդային ռեժիմը և՛ «գոհերին», և՛ «դահիճներին» ձևակերպում է իբրև «նույն պատմական հիշողությունն ունեցող խմբի մասեր», ուստի նրանց հիշողության վերարտադրության մեխանիզմներն ու ծավալները տարբեր են հրեական ողբերգության մասին հիշողությունից: Դ. Դիներն ընդհանրապես մերժում է «հիշող խումբ» ձևավորելու ոչ էթնիկ խմբերի կառողությունը և խմբային տրավմատիկ այլ հիշողությունների համեմատ ցե-

Empire. Ronald Grigor Suny, Fatma Müge Göçek, and Norman M. Naimark, eds., Oxford and New York: Oxford University Press, 2011; *R. Kévorkian. The Armenian Genocide: A Complete History.* London and New York: I.B. Tauris, 2011; R. Suny. "They Can Live in the Desert but Nowhere Else": A History of the Armenian Genocide. Princeton University Press, 2015; *F.M. Göçek. Denial of Violence: Ottoman Past, Turkish Present, and Collective Violence against the Armenians, 1789-2009.* Oxford University Press, 2015; *T. de Waal. Great Catastrophe: Armenian and Turks in the Shadow of Genocide.* Oxford University Press, 2015; ևն:

¹² Տե՛ս A. Etkind. *Warped Mourning. Stories of the Undead in the Land of the Unburied,* Stanford University Press, 2013; *Memory and Theory in Eastern Europe.* Eds. U. Blacker, A. Etkind, J. Fedor. Palgrave Macmillan, 2013:

¹³ D. Diner. *Beyond the Conceivable. Studies on Germany, Nazism, and the Holocaust.* Berkeley: University of California Press, 2000, էջ 191-192:

¹⁴ D. Diner. *Beyond the Conceivable,* էջ 188-200; հմն՝ A. Etkind *Post-Soviet Hauntology: Cultural Memory of the Soviet Terror // Constellations Volume 16, Number 1, 2009,* էջ 187-188:

ղասպանությունների մասին հիշողության երկարակեցությունը դրանով է բացատրում:¹⁵ Թ-են Ալ. Էտկինդը, բռնաճնշումների մասին հետխորհրդային ռուսաստանյան հիշողության բազմաթիվ օրինակներ բերելով, համաձայն չէ այս դրույթի հետ, սակայն այդ օրինակներն անհամեմատելի են նույն շրջանի մասին «էթնիկացված» հիշողությունների ծավալի և դրսևորումների հետ: Հատկապես եթե անդրադառնանք Դ. Դիների բերած օրինակներին, որտեղ լավագույնս երևում է, թե «կոլեկտիվ հիշողության» որ մասն են կազմում զանգվածային սպանությունների «էթնիկացված» սյուժեները: Օրինակ՝ գյուղացիությունը որպես այդպիսին չունի հավաքական հիշողություն, և կուլակների դեմ ձեռնարկած մասսայական բռնաճնշումները չեն դառնում այս խմբի կոլեկտիվ հիշողություն, բայց դրանք վերաշարադրվում և դառնում են «համաուկրաինական տրավմատիկ հիշողության» մաս ու որակվում որպես ցեղասպանություն՝ սպանություններ, որոնք ի սկզբանե պիտի ունենային հակաուկրաինական բնույթ¹⁶: Ստալինյան բռնաճնշումների դեպքում ակնհայտ է, որ «պատժված ազգերը»¹⁷, գործի դնելով կոմմեմորատիվ տարբեր պրակտիկաներ, մեծ տեռորի տարիներին զրկանքներ կրած, սակայն «որպես ազգ» չթիրախավորված ժողովուրդների համեմատ ավելի են հակված հիշելու խորհրդային բռնությունները: «Պատժված ժողովուրդների» հիշողության մեջ խորհրդային բռնաճնշումները որպես կանոն վերաճում են մետանարրատիվի: Լավագույն օրինակներից է կալմիկների անդրադարձն այս խնդրին: Այստեղ բազմաթիվ գիտական ուսումնասիրություններից զատ¹⁸, կազմակերպվել էր «հուշ-գնացք»¹⁹, որով նախկին արքայալները Կալմիկիայից մեկ-

¹⁵ D. Diner. *Beyond the Conceivable*, էջ 188-200:

¹⁶ D. Diner. *Beyond the Conceivable*, էջ 193-194:

¹⁷ Стэн Иосиф Сталин — Лаврентию Берию: «Их надо депортировать...»: Документы, факты, комментарии. Вступ. ст., сост., послесп. Н. Бугай, М.: Дружба народов. 1992, էջ 84-95; Н.Ф. Бугай. Депортация народов в Советском Союзе. Нью-Йорк. 1996; Н.Ф. Бугай, А.М. Гонов. Кавказ: народы в эшелонах (20–60-е годы). М.: Инсан. 1998; П. Полян. Не по своей воле... История и география принудительных миграций в СССР. М.: ОГИ – Мемориал, 2001; Депортации народов СССР (1930-е -1950-е годы). Вып. 12. Часть 1. Документальные источники. М. ИЭА. 1992; В.Н. Земсков. Спецпоселенцы в СССР. 1930-1960. М.: Наука. 2003; П. Полян. Любимые игрушки диктатора. Размышления о советской депортационной политике // Журнал Индекс/Досье на цензуру. 14/2001 <<http://index.org.ru/journal/1401/polyan1401.html>> (19.09.2014); М.А. Вылцан. Депортация народов в годы Великой Отечественной войны // Этнографическое обозрение. 1995. № 3, էջ 26-44; А. Авторханов. Убийство чечено-ингушского народа: народодубийство в СССР. М., 1991. <<http://www.hro.org/editions/karta/nr9/avt0.htm>> (14.03.2013); Н. Нухажиев, Х. Умхаев. Депортация народов: Ностальгия по тоталитаризму, Грозный, 2009 ևն:

¹⁸ Կալմիկների դեպորտացիայի մասին ամբողջական գրականությունը տես Э.-Б. Гучинова. Помнить нельзя забыть. Антропология депортационной травмы калмыков, Штутгарт, 2005; Համացանցում ցուտ նշվ. աշխ., Библиография по депортации калмыков // Семейные истории <<http://www.famhist.ru/famhist/guch/00010adc.htm>> (21.05.2014):

¹⁹ Նման «հուշ-տուրեր» առաջինը կազմակերպվել էին նախկին ֆաշիստական ծամբար-

նել էին իրենց արքայազնները՝ այս անգամ որպես զբոսաշրջիկ²⁰: Աքսորից վերադարձած հայաստանյան մեր զրուցակիցները նախանձով էին խոսում կալմիկների այս հնարավորության մասին: Նրանցից Սերգեյ Խորշոդյանը որպես մասունք պահում էր թերթային մի հոդված, որտեղ նկարագրված էր այս իրադարձությունը: Ավելին, գյումրեցի բռնադատվածները՝ Նույնիսկ դիմել էին հայրենի իշխանություններին՝ իրենց համար նման մի գնացք կազմակերպելու, սակայն պատասխան էին ստացել, որ պետությունը համապատասխան միջոցներ չունի²¹: Պետությունը համապատասխան միջոցներ չունի նաև ցեղասպանության զոհերի ժառանգների համար, սակայն բազմաթիվ մարդիկ տարբեր մասնագիտացած գործակալությունների միջնորդությամբ սեփական միջոցներով այցելում են իրենց պապերի լքված հայրենիքը, անցնում Դեր-Չոր տանող ճանապարհով կամ դրա մի հատվածով: Սա վկայում է, որ խորհրդային բռնաճնշումների մասին հանրային ընկալումը, ի տարբերություն ցեղասպանության մասին հիշողության, չի հանգեցնում այն սպասարկող կոմերցիոն կառույցների ձևավորմանը, ինչը խոսում է երկու տրավմատիկ հիշողությունները կարևորելու տարբերության մասին:

1990-ականների նորանկախ Հայաստանի կայացումը որոշ իմաստով ընթանում էր «նոր ցեղասպանություն կանխարգելելու» քննարկումով. աղբյուրներն ընկալվում էին որպես թուրքեր, իսկ նրանց գործողությունները Մուվգայիթում, Բաքվում, Ղարաբաղում՝ որպես ցեղասպանության շարունակություն²²: Խորհրդային կայսրությունից դուրս գալու ամբողջ օրինական ընթացքը²³ «էթնիկացվեց» ու անցավ ոչ թե որպես բռնատիրական պետությունից ազատագրվելու պայքար, այլ «էթնիկ» պատերազմով պարտադրված իրավիճակ: Այդ շրջանում պատմական սյուժեներից հանրային քննարկումներում առավել հաճախ հանդիպում էր Ղարաբաղն Ադրբեջանին անօրինաբար հանձնելու հարցը: Նույնիսկ այդ պարագայում ԽՍՀՄ-ը՝ որպես ամբողջատիրություն, և նրա հազարավոր զոհերը չդարձան հանրային քննարկման առանձին առարկա (թե՛ չհաշվենք թերթային որոշ հրապարակումներն ու մի քանի պատասխանները Ղարաբաղյան շարժման ցույցերին)²⁴:

ներում իրեա զբոսաշրջիկների համար, ինչը մեկ անգամ ևս գալիս է պայացուցելու, որ ցեղասպանության պարագայում տեղի է ունենում տրավմատիկ հիշողության «սրբազնացում»՝ ընդհուպ մինչև «պատմական ուխտագնացություն»:

²⁰ Սանրամասն տե՛ս *Յ.Բ. Գուչնովա. Помнить нельзя забыть. Антропология депортационной травмы калмыков, Штутгарт, 2005, էջ 252-258*:

²¹ Այս հատորում: *Ս. Խորշոդյան, Խոհարարի պահպան շերտեր, որ կտորվեց Սիբիրում*:

²² *Յ. Մարության, Յայ ինքնության պատկերագրությունը: L. Abrahamian. Armenian Identity in a Changing World, Costa Mesa: «Mazda», 2006, էջ 247-270*:

²³ Խորհրդային Հայաստանի Հանրապետությունը միակն էր, որ ԽՍՀՄ-ի կազմից փորձեց դուրս գալ ԽՍՀՄ սահմանադրությամբ նախատեսված գործընթացով:

²⁴ *Յ. Մարության, Յայ ինքնության պատկերագրություն, էջ 23*:

Այսպիսով, կարելի է ասել, որ Հայաստանում խորհրդային բռնաճնշումները, «ազգային ողբերգության» ձևակերպում չստանալով, հայտնվեցին հանրային հիշողության լուսանցքում՝ խամբելով ցեղասպանության մասին հիշողության և ցեղասպանության խնդրի կարևորության առջև: Վերջինս հայկական պատմագիտական հանրային տրամասությունում ոչ միայն առաջատար է, այլև վերածվել է խմբային տրավմայի նկարագրության լեզվի հենց այն պատճառով, որ ունի «ազգային ողբերգության» կարգավիճակ²⁵ անկախ նրանից, որ արևելահայոց հատվածի «սեփական» հիշողություններում ավելի մտապահվել են տեղական կոտորածներն ու հայթոյրական տարբեր ընդհարումներ:

Սրա կողքին 1940-ականների արքորին միայն Հայաստանից գոհ գնացին տարբեր գնահատականներով 13000-15000 հայեր (ոչ պաշտոնական հաշվարկներն այս թիվը հասցնում են մինչև 100 000-ի)²⁶: Թեև չկար «էթնիկ» թիրախավորման ֆորմալ ձևակերպում (չնայած ուսումնասիրողների շրջանում այն հայտնի է իբրև «հունական կամպանիա»)²⁷, Կովկասյան տարածաշրջանից այս արքորն իրականում տարածվել էր հատկապես հայերի վրա, քանի որ վերաբերում էր նախկին «դաշնակցականներին», «թուրքա-» կամ «հունահպատակներին», որոնցից առնվազն առաջին երկուսը հենց հայերն էին: Փաստորեն, հայերը քշվեցին Ալթայի և Կրասնոյարսկի երկրամասեր, սիբիրյան տափաստաններ և Միջին Ասիա ոչ միայն որպես «դաշնակներ», «նախկին ռազմագերիներ», այլև որպես «թուրքեր», և չի բացառվում՝ նաև «հույներ»²⁸ անտեսելով, որ «թուրք» լինելու մեղադրանքի դեպքում նրանք նույնացվում են իրենց երբեմնի դահիճների հետ²⁹:

²⁵ Հմմտ. *J.C. Alexander. Trauma. A Social Theory*, Cambridge: Polity Press, 2012, էջ 6-30:

²⁶ 1949 թ. արքորի թվային տվյալների վերլուծությունը տես *Ս. Ստունկյան, Զաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ.*, Եր., «Առեքտում»-Անի, 1999, էջ 218-241: *Н.Н. Аблажей. Репатриация и депортация армян во второй половине 1940-х годов // Вестник Новосибирского гос. Университета. Серия: История, филология. 2011. Том 10, выпуск 1: История, էջ 116-121; А. Марутян. Обыкновенная жизнь в необыкновенных условиях (травматический быт в сталинской ссылке и способы его преодоления) // Арпеник А. Сибирский дневник 1949-1954 гг. (Антропология памяти. Вып. I). Ереван: Издательство «Гитутюн» НАН РА, 2007, էջ 37-38:*

²⁷ Այս արքորի մյուս էթնիկ խումբն իսկապես հույներն էին, տես *И.Г. Джуха, Греческая операция. История репрессий против греков в СССР*. СПб.: «Алетейя», 2006:

²⁸ Գոնե մեկ նման դեպք մեզ հայտնի է Վրաստանից, շնորհիվ մեր գործընկեր Դ. Զիշկարիանիի:

²⁹ Տես *А. Алексанян. Сибирский дневник 1949-1954 гг.*, էջ 158-159; см. также *Г. Шагоян. Возвращаясь в «советское сейчас»: дневник-летопись-мемуары Арпеник Алексанян. Сибирский дневник 1949-1954 гг.* Ереван: Издательство «Гитутюн» НАН РА, 2007, 408 էջ (Антропология памяти. Вып. I) // *Ab Imperio*, 2/2012, էջ 579:

ԵՐԿՈՒ ԲՈՒՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ «ՉՀԱՏՎՈՂ» ՍՅՈՒԺԵՆԵՐ

Թեև հայ զոհերի մի զգալի մասի համար խորհրդային հետապնդումներն ըստ էության թուրքական ցեղասպանության յուրովի արձագանքն էին, քանի որ նույն մարդիկ էին դարձել նոր համակարգի զոհը հենց այն պատճառով, որ երբեմնի թուրքական պետության քաղաքացիներն էին, հայ պատմագրության մեջ այս երկու ողբերգությունները կարծես չհատվող սյուժեներ են: Մինչդեռ Հռոմի Ֆրանցիսկոս պապը Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում 2015 թ. ապրիլի 12-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված պատարագի ժամանակ Հայոց ցեղասպանությունն անվանեց «20-րդ դարի առաջին ցեղասպանություն» և անցյալ դարի երեք մեծ ողբերգություններից մեկը: Մյուս երկու ողբերգությունը, ըստ նրա, ստալինյան բռնաճնշումներն էին ու Հոլոքոստը: Ծնորհիվ այս ճառի՝ Հայոց ցեղասպանությունն ու ստալինյան բռնաճնշումները հայտնվեցին մարդկության դեմ ոճրագործությունների նույն շարքում: Ամբողջատիրական համակարգը քննող Հաննա Արենդտի դասական դարձած աշխատանքում նույնպես խորհրդային կայսրությունը դիտարկվում է ֆաշիստական Գերմանիայի հետ մեկտեղ որպես ամբողջատիրական համակարգի ամենացայտուն օրինակներից, որոնց բնութագրության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում առանձին խմբերի թիրախավորումը³⁰: Ճիշտ այնպես, ինչպես դա տեղի է ունեցել քրիստոնյա և հատկապես հայ բնակչության հանդեպ Թուրքիայում: Հաննա Արենդտն ազգային պետությունների ամբողջատիրության աստիճանը չափում է ըստ «փոքրամասնություններին» մասսայաբար քաղաքացիությունից զրկելու կիրառվող պրակտիկայի և որպես «դենատուրալիզացիայի» օրինակ հաճախ հիշատակում է ոչ միայն հրեաներին, այլև հայերի դեպքը³¹: Այս համատեքստում իրար համահունչ, թեև առաջին հայացքից այդքան տարբեր, թուրքական և խորհրդային կառավարման համակարգերի զոհերը մեր դաշտային գրանցումներում հաճախ բառի բուն իմաստով միևնույն մարդիկ են: Հիշենք, օրինակ, որ մինչև խորհրդային պետության զոհ դառնալը, Ադաի Խանջյանը 1915 թ. Վանի ինքնապաշտպանությանը մասնակցած, այնուհետև Վանը թողած բազմաթիվ հայ փախստականներից էր, որոնցից շատերը (հատկապես իր մտավորական միջավայրը), մազապործ լինելով թուրքական ցեղասպանությունից, իրենց մահկանացուն կնքեցին հայաստանյան բանտերում և խորհրդային համակենտրոնացման ճամբարներում:

³⁰ X. *Արենտ*. Истоки тоталитаризма, М.: ЦентрКом, 1996, էջ 361-450:

³¹ X. *Արենտ*. Истоки тоталитаризма, էջ 374-389:

Հայաստանյան հյուսիս և արևմտյան շրջանների (Շիրակում, Արագածոտնում, Արմավիրում և Արարատում) բռնադատվածների ընտանեկան պատմություններն ուղղակիորեն են կապում այս երկու կայսրությունների պատմությունները՝ դրանք դարձնելով մեկը մյուսի շարունակությունը: Չարմա-նալին այն է, որ, ցեղասպանության տարբեր դրվագներ ուսումնասիրելով, ցեղասպանության գոհ դարձած աշխարհասփյուռ հայությանը հետևելով, չունենք ոչ մի ուսումնասիրություն, որի առանցքը լինեին խորհրդային կայսրությունում հայտնված ցեղասպանությունը վերապրածները՝ որպես առանձին խումբ³²: Նույնիսկ Գյումրիում տեղակայված ամերիկյան որբատները, որոնք խորհրդային առաջին տարիներին դեռ շարունակում էին գործել որպես ամերիկյան հիմնարկներ (ինքնին զարմանալի փաստ), համեմատաբար վերջերս են սկսել հետաքրքրել առանձին ուսումնասիրողների³³: Մանկատներում ապաստան գտած որբերի քանակն այդ շրջանում մոտենում էր Գյումրիի բնակիչների ընդհանուր քանակին³⁴ և վստահաբար խիստ ազդել է Գյումրիվ՝ բազմիցս նշվող ուրույն դիմագիծ ունեցող քաղաքային կենցաղի ձևավորման վրա: Բայց այդուհանդերձ այս որբերի ճակատագիրը մինչ օրս չի արժանացել առանձին ուսումնասիրության:

«ՀԱՎԱՔԱԿԱՆ» ԵՎ «ՀԱՎԱՔՎԱԾ» ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատմական հիշողության հանդեպ հանրային կոնսենսուսը ձևավորվում է ոչ միայն և ոչ այնքան պատմաբանների շնորհիվ, որքան ընդհանուր «մշակութային հիշողության»³⁵, որտեղ պատմաբանների աշխատանքները

³² Բացառություն են կազմում միայն հայրենադարձներին նվիրված ուսումնասիրությունները (*Ա. Կ. Կոռիկյան*, Հայրենադարձների բռնաձնշումները ստալինյան ժամանակաշրջանում, Եր., Հեղինակային հրատարակություն, 2010: *Ա. Ստեփանյան*, XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Եր., «Գիտություն», 2010), սակայն, անտեսված են մնում հազարավոր փախստականներ՝ թուրքահայեր, ովքեր տեղափոխվել են Հայաստան կամ խորհրդային Միության այլ վայրեր և այնտեղ են ենթարկվել բռնաձնշումների: Որոշ չափով խնդիրն այս տեսանկյունից քննարկվում է Հրանուշ Խառատյանի այս ժողովածու ներառված հոդվածում:

³³ Այս հարցին նվիրված մի մենագրություն է պատրաստում ամերիկահայ պատմաբան Նորա Ներսիսյանցը: Ալեքսանդրապոլի գավառում ցեղասպանության տարիներին հաստատված արևմտահայ գաղթականության դրությանը վերաբերող 217 փաստաթուղթ հրատարակել է Կարինե Ալեքսանյանը, տե՛ս Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922 թթ., խմբ.: Ամատունի Վիրաբյան, Եր., 2012:

³⁴ Հմմտ. Գյումրի. քաղաքը և մարդիկ: Գյումրի, 2009, 79-85:

³⁵ Այս դեպքում «մշակութային հիշողություն» եզրն օգտագործում ենք ոչ թե Յան Ասսմանի առաջարկված իմաստով (*Յ. Ասսման*, *Культурная память. Письмо, память о прошлом и поли-*

համեստ անկյուն են զբաղեցնում և հանրայնանում են ավելի շատ գեղարվեստական աշխատանքների շնորհիվ: Օրինակ, հիմնականում Դ. Դեմիրճյանի վեպի շնորհիվ են հայկական պատկերացումներում արմատացել «դրական Վարդանի» և «բացասական Վասակի» կերպարները: Մինչդեռ խորհրդային բռնաճնշումների մասին հիշողությունը մեծ մասամբ մնում է «գոհերի խմբի» շրջանակում: Գեղարվեստական և հրապարակախոսական գրականության մեջ այս խնդրին մեծ մասամբ անդրադառնում են կամ հենց իրենք գոհերը, կամ նրանց ժառանգները: ԽՍՀՄ քաղաքական բռնությունների նկատմամբ մասնագիտական հետաքրքրությունը կարծես նույնպես նման միտում ունի: Օրինակ, հայաստանյան պատմաբաններից դեռևս խորհրդային տարիներին Սյունիքի մարզում բռնաճնշումների մասին բանավոր հիշողություններ է հավաքել Գրիշա Սմբատյանը, ում հետազոտական հետաքրքրությունը թերևս մասամբ պայմանավորված էր սեփական կենսագրությամբ. նա նույնպես բռնադատվածի զավակ է: Գ. Սմբատյանի ընտրած մեթոդը՝ բանավոր պատմությունը, նախևառաջ պայմանավորված էր աղբյուրագիտական սահմանափակությամբ: Թեև հարցազրույցներ գրանցելու շրջանում՝ 1980-ականների առաջին կեսին, Գ. Սմբատյանը հազիվ թե տեղյակ լիներ բանավոր պատմության մեթոդաբանության շուրջ ծավալվող մասնագիտական քննարկումներին. դրանք այդ տարիներին նույնիսկ եվրոպական շատ երկրներում համեմատաբար նոր էին, իսկ Հայաստանի պատմաբանների միջավայրում ընդհանրապես չէին կիրառվում: Սակայն որևէ պատմական իրադարձության վերապրողի «անձնական» հիշողությունը կարևորելու մոտեցումն արդեն ձևավորված էր «ցեղասպանագիտության» ոլորտում՝ առանց մեթոդաբանության շուրջ քննարկումների: Հայերի չճանաչված ցեղասպանությունն առիթ էր դարձել անդրադառնալու հուշագրություններին և բանավոր հիշողություններին՝ ընդլայնելով ցեղասպանության փաստագրական բազան³⁶: Այս մոտեցումը հատկապես տարածված էր Սփյուռքում: Արդյունքում այնտեղ, ի տարբերություն խորհրդային Հայաստանի, ստեղծվեցին «բանավոր պատմության» տեսա- և ձայնային բացա-

тическая идентичность в высоких культурах древности. М.: Языки славянской культуры, 2004), որտեղ պատմաբանների աշխատանքները դիտարկվում են որպես այդպիսի հիշողության մաս, այլ Ալ. Էտկինդի կիրառած իմաստով, որտեղ մշակութային հիշողությունն ընդգրկում է տարբեր մշակութային դաշտերում՝ գրականություն, կինո, երաժշտություն, գեղարվեստ ևն, եղած պատմական սյուժեներն ու մեկնաբանությունները (տես A. Etkind. Hard and Soft Cultural Memory: Political Mourning in Russia and Germany // Grey Room 16, Summer 2004, Inc. and Massachusetts Institute of Technology, էջ 36–59):

³⁶ ՀՀ-ում ցեղասպանության մասին հիշողությունները գրանցողներից ամենաառաջին հեղինակներից նշենք Վերժինե Սվազյանին, ով գրանցում էր վերապրածների հուշագրությունները իբրև բանահյուսական նյութ, թերևս այն պատճառով, որ խորհրդային շրջանում ցեղասպանության մասին աշխատանքները չէին ողջունվում:

դիկ արխիվներ, ինչպես նաև հուշագրությունների հարուստ շտեմարաններ³⁷: Պատահական չէ, որ ստալինյան բռնաճշմունքներին նվիրված առաջին հայկական վավերագրական ֆիլմը, որի հիմքում ընկած էին ստալինյան համակարգի գոհերի բանավոր պատմությունները, Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ/AGBU) ֆինանսավորմամբ նկարահանեց նույնպես սփյուռքահայ ռեժիսոր Զարեհ Ճգնավորյանը: Ֆիլմի նկարահանման ընթացքում գրանցած պատմությունները դարձան ստալինյան բռնաճշմունքները վերապրողների եզակի տեսադարան, քանի որ 1997 թ., երբ ֆիլմի համար նյութեր էին գրանցվում, դեռ ողջ էին ստալինյան արքայը վերապրածները, ովքեր ի վիճակի էին «կիսվելու» իրենց հիշողություններով: Մինչդեռ հետխորհրդային Հայաստանում չկա ոչ մի կառույց, որը հետաքրքրված լիներ այս իրադարձությունների մասին հուշերի գրանցմամբ³⁸, պահպանմամբ և, առավել ևս, դրանց հանրայնացմամբ: Օրինակ, ի տարբերություն նախկին խորհրդային որոշ հանրապետությունների, այստեղ չստեղծվեցին հատուկ թանգարաններ³⁹ կամ գոհերին անուն առ անուն թվարկող հուշամատյաններ («Книга памяти»): Պատահական չէ, որ հենց Սփյուռքում, որտեղ ցեղասպանության մասին հիշողությունը դարձել է խմբի ինքնությունը ձևավորող հիմնական սյուժե⁴⁰, առաջինը ծնվեց ստալինյան բռնություններին անդրադառնալու և դրանց մասին հիշողությունները գրանցելու միտքը: Ցեղասպանության խմբային հիշողության արդեն մշակված մեխանիզմները գործի դրվեցին նոր «գոհերի» դաշտում, և դա ի վիճակի էր անելու նախևառաջ սփյուռքահայը, ում վերաբերմունքը խորհրդային կայսրությանը մթագնած չէր խորհրդային քարոզչամեքենայով, վախով և պատմագիտական թեմաների ընտրության գրաքննությամբ:

Նորանկախ Հայաստանում պատմաբանների առջև դրված հանրային և քաղաքական պատվերը ձևակերպվեց վերստին «էթնիկ» ձևաչափի շրջանակներում: Այն ամենը, ինչ անմիջապես կապված չէր «ազգայինի» հետ, լավագույն դեպքում «հերթի» էր դրվում՝ ապագայում անդրադառնալու հա-

³⁷ Առավել հայտնիներից նշենք Միքայել Զակոբյանի ֆիլմադարանը, մանրամասները տե՛ս՝ <<http://www.armenianfilm.org/>>: Ֆիլմադարանի ընթացիկ կարգավիճակի և ձակատագրի շուրջ ծավալվող զարգացումների մասին տե՛ս Դ. Մարության, Ցեղասպանության հարյուրամյա հիշողությունը և «ամերիկահայ ազգության» ձևավորման գործընթացը // Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում. գիտաժողովի զեկուցումներ, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 42-53:

³⁸ Պատմաբաններից այս խնդրին մասնագիտորեն անդրադարձել են Ա. Սանուկյանը, Վ. Ղազարխեցյանն ու Ա. Վիրաբյանը, սրա մասին մանրամասն տե՛ս նախաբանում:

³⁹ Բացառություն են կազմում որոշ թանգարանների թեմատիկ ցուցադրությունները, օրինակ՝ Գրիշա Սմբատյանինը Կապանի երկրագիտական թանգարանում, ինչպես նաև որոշ միջոցառումներ՝ կազմակերպված Զարեհի տուն-թանգարանում նև:

⁴⁰ Զմմտ. Ա. Պետրոսյան, Ցեղասպանություն և ազգածնություն // «Պատմա-բանասիրական հանդես», 2007, № 3, էջ 30-37:

մար: Բռնաճնշումներն առաջին ուսումնասիրողներից վերոհիշյալ Գրիշա Սմբատյանը խոստովանում է, որ 1980-ականներին իր գրանցած նյութերը նա ստիպված էր մի կողմ դնել և ներքաշվել Ղարաբաղյան շարժման մեջ՝ այս համատեքստում տեսնելով նաև իր՝ պատմաբանի ներդրման անհրաժեշտությունը, և միայն 1994 թ. ղարաբաղյան զինադադարը կնքելուց տարիներ անց նա ժամանակ և ուժ գտավ ավարտին հասցնելու իր սովորածավա աշխատությունը⁴¹:

Եմանապես մեր հետազոտական թիմի անդամ Հարություն Մարությանը, ում տանը պահվում էր բռնաճնշումներին վերաբերող մի եզակի փաստաթուղթ՝ իր արքայական մոր սիրիդյան օրագիրը⁴², որը հրատարակելու գաղափարն ընտանիքում վաղուց էր հասունացել, այն հնարավոր գտավ իրագործել միայն ղարաբաղյան թեմային իր մասնագիտական տուրքը տալուց հետո⁴³:

Բռնադատվածների հանդեպ հայաստանյան հանրային ուշադրությունը հիմնականում ընթացավ նրանց սոցիալական խնդիրները լուծելու ուղղությամբ⁴⁴: Հոների ժառանգների զգալի մասն անդրադարձան իրենց ծնողների պատմությանը, որպեսզի կարողանան օգտվել որոշ արտոնություններից և սոցիալական նպաստներից՝ գոյատևելու նորանկախ Հայաստանի ծանր ճգնաժամային պայմաններում:

Խորհրդային ժառանգության անտեսումը մասնագետների և հանրության լայն շրջանակների կողմից կարծես բումերանգի նման վերադարձավ հանրային քննարկման օրակարգ, քանի որ հետխորհրդային հայաստանյան իրականության մեջ սկսեցին հայտնվել տեքստեր, կատավարման ձևեր ու տրամատություններ, որոնք ավելի ու ավելի էին հիշեցնում խորհրդային քաղաքական մշակույթը: Այս երևույթի առաջին քննարկումները հայտնվեցին 2013 թ. Ս. Սարգսյանի նախագահական նախընտրական քարոզարշավի կապակցությամբ⁴⁵: Այսօր արդեն խորհրդային անցյալի «մոտալուտ ապագան» դարձել է հանրային քննարկումների գերիշխող թեմաներից, որոնք

⁴¹ Գ. Սմբատյան, Երկաթե վարագույրից այս կողմ, Եր., «Ձանգակ-97», 2009:

⁴² А. Алексанян. Сибирский дневник 1949-1954 гг., ред. Гучинова Э.-Б., Марутян А. Ер.: «Гитутюн», 2007.

⁴³ Դ. Մարության, Հայ ինքնության պատկերագրությունը:

⁴⁴ Այս մոտեցումը տես Գ. Խարատյան. Реабилитационный ли закон РА «О репрессированных лицах», и кто такие репрессированные в Армении: Դ. *խախտյան*, Ինչպե՞ս հայերը դարձան «թուրքեր» // Lragir.am, 21 հոկտեմբերի 2014, <<http://www.lragir.am/index/arm/0/society/view/105588>> (16.07.2015):

⁴⁵ Դմմտ. G. Shagoyan. From Ideologies to Technologies: an Anthropological overview of Elections as an Indicator of Modernization and Counter-Modernization of Armenian Society // South Caucasus at a Crossroad. Thorny Realities and Great Expectations, Salome Asatiani, Nino Lejava (eds.), Heinrich Boll Stiftung South Caucasus, 2014, էջ 118-119:

տարբեր առիթներով սկսում են գլխավորել մեդիայի առավել քննարկվող հրապարակումները⁴⁶:

Հիշողության ուսումնասիրողներից առաջինը Մորիս Հալբվաքսն է ուշադրություն դարձրել այն հանգամանքին, որ անցյալի մասին հիշողությունը խիստ ազդված է ներկայով⁴⁷: Հիշողությունն ուսումնասիրող հետազոտողների մեկ այլ խումբ⁴⁸ պնդում է, որ ներկան ոչ թե ազդում է անցյալի մասին հիշողության վրա, այլ հենց ինքն է այն ձևավորում՝ օգտագործելով այսօրվա լեզուն և նարրատիվները⁴⁹: Այդպիսով, անցյալի մասին գրույցը ավելի շուտ քննարկում է ներկայի մասին: Օրինակ՝ 2014 թ. Երևանում Ա. Միկոյանի արձանը դնելու շուրջ վեճերը շատերը պայմանավորում էին հայաստանյան ընթացիկ քաղաքական իրողություններով, մասնավորապես նույն ժամանակաշրջանում Ռուսաստանի նախաձեռնությամբ ստեղծված Տնտեսական միությանը, ապա Եվրագետին, Հայաստանի անդամակցության հարցով: Արձանի շուրջ ընթացող հասարակական քննարկումները հանգեցրին նրան, որ վերահրապարակվեցին և վերընթերցվեցին խորհրդայինի մասին հիշողություններն ու մինչ այդ մամուլում հազվադեպ ներկայացված տեքստերը, որոնք ստեղծվել էին ձևալարի կամ անկախության շրջանում, շրջանառության մեջ դրվեցին խորհրդային հանցագործությունների մասին վկայող արխիվային փաստաթղթեր⁵⁰, հրապարակ հանվեցին առանձին դրվագների խոր վերլուծություններ⁵¹, տեղի ունեցան բռնաճնշումներն ու ամբողջատի-

⁴⁶ Տե՛ս *Г. Шагоян*. Ставить ли памятник Анастасу Микояну? Опыт «социальной люстрации» в Армении // Материалы конференции «Правовые и социальные аспекты реабилитации жертв политических репрессий на постсоветском пространстве», Научно-информационный и просветительский центр «Мемориал», М.: 2014 (հրատարակության ընթացքում):

⁴⁷ Տե՛ս *М. Хальбвакс*. Социальные рамки памяти, М.: Новое издательство, 2007: Հիշողության ուսումնասիրության տարբեր մոտեցումների մասին հայերեն տե՛ս *Յ. Սարոյան*, Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ, Եր., «Նորավանք», 2006:

⁴⁸ *J. E. Young*. The Texture of Memory. Holocaust, Memorials and Meaning. Collective Remembering. London: Sage, 1990; *E.B. Bolles*. Remembering and forgetting: an inquiry into the nature of memory. New York: Walker and Co., 1988; *J. Fentress*. Wickham Ch. Social Memory. Oxford: Blackwell, 1992:

⁴⁹ Հմնտ. սրա հակառակ մոտեցումը, ըստ որի՝ անցյալը ոչ թե վերհիշվում է, այլ այսօր դրանով են ապրում: – «Мы у прошлого не учимся, мы им живем», Беседа Ирины Костериной с антропологом, историком культуры, профессором Принстонского университета (США) Сергеем Ушакиным // Гедфтер < <http://gedfter.ru/archive/15988>> (27.09.2015):

⁵⁰ Տե՛ս Facebook-ում «Armenia Total(itar)is խմբի հատկապես 2014 թ. մայիս-հուլիս ամիսների գրառումները <<https://www.facebook.com/groups/402824203170801/>>:

⁵¹ Օրինակ. *Յ. Խառատյանի* հոդվածները. Անաստաս Միկոյանի կյանքի մութ էջերից, կամ քամուն չտալ հին դարմանը: Փաստեր // *Lragir.am*, 03 մայիսի 2014, <<http://www.lragir.am/index/arm/0/society/view/98630>> (4.05.2014); Մի քանի սարսափելի փաստեր // *Lragir.am*, 23 հունիսի 2014, <<http://www.lragir.am/index/arm/0/society/view/100875>> (23.06.2014), Մսկվայի պայմանագիրը: Ինչպես զոհաբերվեց Հայաստանը // *Lragir.am*, 16 հոկտեմբերի 2014, <<http://www.lragir.am/index/arm/0/society/view/100875>> (23.06.2014):

րական կարգերը քննարկող ֆիլմերի ակումբային դիտումներ⁵², ռադիո- և հեռուստահաղորդումներ են: Այսինքն հանրահռչակվեց ոչ թե «հավաքված» («collected») անձնական հիշողությունների պարզ հանրագումարը, այլ սկսեց ձևավորվել «խմբային», «հավաքական» («collective») հիշողություն, որն այնքան է յուրացվում, որ կարող է ազդել նույնիսկ անձնական հիշողության վրա⁵³:

Դաշտային աշխատանքի ընթացքում զանգվածային տեղեկատվական աղբյուրներից մեջբերումներ անում էին հիմնականում մեր ռուսախոս գրուցակիցները, ովքեր այս խնդրի պարագայում կրում էին ռուսաստանյան հանրային տրամասության ազդեցությունը: Մինչդեռ ցեղասպանության մասին հիշողությունների մեր գրառումները, օրինակ՝ Թալիսի շրջանում, վկայում էին ցեղասպանության մասին եղած նույնիսկ շատ նվազ գրականության⁵⁴ բավականին ընթերցված լինելը: Օրինակ, երբ 1980 թ. Անդրանիկի արձանը քանդակող Համլետ Դավթյանին բացատրություններ տալու համար կանչում են շրջկոմ և պահանջում նշել, թե ով է իրեն սովորեցրել նման արձան անել, նա պատասխանում է՝ Ջոն Կիրակոսյանը՝ նկատի ունենալով որ ինքն ազդվել է վերջինիս «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» աշխատանքից⁵⁵: Իսկ խորհրդային բռնաճնշումների տարածված պատկերներ և տեքստեր հայաստանյան իրականության մեջ գրեթե չստեղծվեցին: Չունեցանք նույն ազդեցությամբ սովժենիցիներ և շալամովներ: Այս թեմային անդրադարձ կատարող գրողների աշխատանքները (օրինակ՝ Գ. Մահարին և Լեռ Կամսարը) չդարձան հանրամատչելի գրական

www.lragir.am/index/arm/0/society/view/105413> (17.10.2014), Հայ, ռուս և թուրք բուլվակների համատեղ զագանությունները // [Lragir.am](http://www.lragir.am), 16 հոկտեմբերի 2014, <www.lragir.am/index/arm/0/society/view/105450> (17.10.2014), Ռուս-թուրքական ռեպրեսիաները Հայաստանում // [Lragir.am](http://www.lragir.am), 18 հոկտեմբերի 2014, <<http://www.lragir.am/index/arm/0/society/view/105484>> (18.10.2014), Թուրքիայի պահանջով Մոսկվան վերացնում է հայկական հարցը // [Lragir.am](http://www.lragir.am), 18 հոկտեմբերի 2014, <<http://www.lragir.am/index/arm/0/society/view/105495>> (19.10.2014), 1949 թ. հայկական բռնաքսորը. էթնիկ ղեկորտացիան, թե... // [Lragir.am](http://www.lragir.am), 20 հոկտեմբերի 2014, <<http://www.lragir.am/index/arm/0/society/view/105544>> (20.10.2014), Ինչպե՞ս հայերը դարձան «թուրքեր» // [Lragir.am](http://www.lragir.am), 21 հոկտեմբերի 2014, <<http://www.lragir.am/index/arm/0/society/view/105588>> (21.10.2014) են:

⁵² ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում Հայաստանում Լեհաստանի դեսպանատունը կազմակերպել էր Ս. Վայդայի «Կատին» ֆիլմի դիտումը (10.06.2014), ԼՓԱԿ կենտրոնում «Հազարաշեն» ազգաբանական հետազոտությունների կենտրոնը ներկայացրեց «Անհարազատները» ֆիլմը (ռեժ.՝ Նիկա Շեկ, Սարիկ Հովսեփյան) (14.06.2014):

⁵³ J.K. Olick. Collective Memory: The Two Cultures // Sociological Theory, 1999, 17 (3), էջ 333–348:

⁵⁴ Այս շարքում հատկապես առանձնանում են Ֆ. Վերֆեյի «Մուսալեռան քառասուն օրը», Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վեպերը, Պ. Սևակի «Անլուծելի զանգակատուն» պոեմը, Հր. Քոչարի «Կարոտ» և Ս. Գալշոյանի «Ձորի Միտոն» վիպակները:

⁵⁵ Զ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ: 1915-ից մինչև մեր օրերը: Գիրք առաջին, երկրորդ, երևան, «Հայաստան», 1982-1983:

նություն և բռնադատվածների մասին սեղանի գիրք: Բակունցն ու Չարեն-ցը ընկալվում են որպես խորհրդային բռնաճնշումների գոհ-խորհրդանիշ, բայց նրանց տեքստերը հայտնի պատճառներով չէին կարող ապակազմել «խորհրդային մարդուն», հակառակը՝ նրանք հաճախ մեղադրվում էին կառավարման համակարգին ծառայելու մեջ: Հայ «այլախոհական գրականությունը» վերստին մնում էր հիմնականում ազգային պայքարի և ցեղասպանության թեմաների շրջանակում՝ աննշան անդրադառնալով խորհրդային բռնաճնշումներին: Հրանտ Մաթևոսյանի՝ էկրանավորման շնորհիվ առավել հայտնի դարձած «Մենք ենք՝ մեր սարերը» աշխատանքը, որի հիմքում ընկած է խորհրդային բռնաճնշումների մի պատմություն⁵⁶, ներկայացվում է որպես խորհրդային վարչական համակարգի և ավանդական գյուղական համայնքի միջև տարբեր աշխարհընկալումների մի երգիծախաղ՝ շրջանցելով բռնաճնշումների թեման:

Մեր գրուցակիցների սեղանի գրքերից էին ոչ թե Մահարու կամ Լեո Կամսարի աշխատանքները, այլ, օրինակ, մարշալ Բաղրամյանի հիշողությունները⁵⁷՝ որպես պատերազմի սկզբում գերի ընկածներին արդարացնող մի պաշտոնական հիմք, քանի որ այնտեղ նկարագրվում էր, թե ինչ պայմաններում էին նահանջում խորհրդային զորքերը, և նշվում էր գերեվարությունից խուսափելու անհնարինությունը⁵⁸: Գիրք-մատուք էին համարվում բռնաճնշումների հետ որևէ բովանդակային կապ չունեցող այնպիսի գրքեր, որ բռնադատվածներն իրենց հետ տարել էին սիբիրյան արքայի և հետ բերել⁵⁹: Մի խոսքով, ստիպված ենք փաստել, որ գրեթե չունենք բռնաճնշումների մասին ձևավորված «մշակութային-հանրային-կոլեկտիվ հիշողություն»:

Անձնական պատմությունները ներկայացնելու մի կարևոր հանգամանք ևս. գոհերի և նրանց ծառանգների նկարագրություններում բազմաթիվ են «խորհրդային կլիշեները»՝ նույնիսկ բռնադատվածներին ձևակերպելու հարցում: Օրինակ, հաճախ կարելի էր լսել. «իմ պապը ազգի դավաճան չէր, նրան տարան, իսկ ազգի իսկական դավաճանները մնացին», «էդ գյուղից մարդ չտարան, երևի էստեղ չկային դավաճաններ» ևն: Այսինքն, մինչ օրս չկա այն գիտակցումը, որ խորհրդային քաղաքական մեղադրականները

⁵⁶ *Ս. Սարգսյան*, 1937 թ. և շամուոցիները // «Շամուտ» պատմագրական նյութերի ժողովածու, 2015 (հրատարակության ընթացքում):

⁵⁷ *И.Х. Баграмян. Мои воспоминания*, Ер., «Айастан», 1957:

⁵⁸ Տե՛ս այս հատորում՝ *Ս. Խորշուդյան*, Խոհարարի պահապան շերեփը, որ կոտրվեց Սիբիրում:

⁵⁹ *Լ. Աբրահամյան*, *Գ. Շագոյան*, ԴԱՆ, Գյումրի, 2012, 2013, այս հատորում՝ *Ռ. Աբրահամյան*, «Նույն ՆԿԿԴ-իստները եղել են և՛ չար, և՛ բարի»:

կապ չունեին հանցագործության հետ, և պետական մեքենան յուրաքանչյուրին կարող էր թիրախավորել: Նման արտահայտությունները ցույց են տալիս, որ անհամաձայնությունը հաճախ վերաբերում է միայն ընտրված թիրախին, օրինակ՝ իր ազգականին, այլ ոչ թե խաղի կանտոներին՝ բռնաճնշում իրագործող պետական կառավարման համակարգին:

Այդ շրջանին վերաբերող ուսումնասիրությունները չեն առաջարկել կամ բավարար չափով տարածել այլ ձևակերպումներ, որպեսզի հասարակ քաղաքացին կարիք չունենա կամայական ձևակերպումներ փնտրելու՝ փորձելով համատեղել իր անձնական ողբերգությունն ու խորապես յուրացրած խորհրդային լեզուն: Ինչպես արդեն նշել ենք, հիշողությունը ձևակերպվում է լեզվի միջոցով, և այդ շրջանը նկարագրելու և բռնաճնշումների մասին խոսելու նոր լեզու՝ նոր սահմանումներ և ձևակերպումներ չստեղծելը, փաստորեն, նշանակում է, որ ցայսօր շարունակում ենք հիշել և մտածել որպես «խորհրդային մարդ»: Ուրեմն այդ իրողությունը մեզ համար անցյալ չի դարձել, քանի որ այդ «անցյալի» և «ներկայի» լեզուները նույնական են: Այդ նույնականությունը հանգեցնում է ոչ միայն խորհրդային լեզվական բանաձևերի մերօրյա քաղաքական կենդանությանը, այլև խորհրդային հերոսների վերակենդանացմանն ու դրանց վերստին փառաբանելու փորձերին (հմմտ. վերոհիշյալ Ա. Միկոյանին, Մ. Կալաշնիկովին, մարշալ Հ. Բաղրամյանին արձաններ կանգնեցնելու նախաձեռնությունները):

«ՀԻՄՆԱԿԱՆ/ԿԱՐԾՐ» ԵՎ «ԾՐԱԳՐԱՅԻՆ/ՓԱՓՈՒԿ» ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում պաշտոնապես դատապարտվել են, և 1994 թ. ընդունվել է բռնադատվածների ռեաբիլիտացիայի մասին օրենք⁶⁰: Եթե առաջնորդվենք պատմաբան Ա. Էտկինդի առաջարկած հիշողության երկու տեսակներով՝ «հիմնական» (hardware) և «ծրագրային» (software)⁶¹, որոնցից առաջինը կարծր տվյալներ պարունակող հիշողությունն է, երկրորդը՝ դրանց հետ վարվելու ձևերն ու մոտեցումները, ապա բռնաճնշումների մասին հիշողությունը պիտի մաս կազմեր «հիմնական» հիշողության: Սրա օգտին են խոսում, օրինակ, դեռ 1990-ականներին

⁶⁰ Տե՛ս ՀՀ օրենք բռնադատվածների մասին, 1994 թ. <<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1778&lang=arm&enc=utf8>> (24.06.2014):

⁶¹ A. Etkind. Hard and Soft in Cultural Memory: Political Mourning in Russia and Germany // Grey Room 16, Summer 2004, էջ 36–59; A. Эткинд. Время собирать камни: Постреволюционная культура политической скорби в постсоветской России // Ab Imperio. 2004. № 2, էջ 33–76:

Երևանում բռնաճնշումների զոհերի հիշատակին նվիրված հուշաքարը [նկ. 11], այնուհետև՝ կառուցված հուշահամալիրը (պատրաստ էր 2007 թ. [նկ. 12]): Ի դեպ, ճարտարապետը 1938 թ. որպես աջտրոցկիստ-ազգայնական բռնադատված, հետո գնդակահարված և անգերեզման մնացած Պետրոս Թորոսյանի⁶² որդի հայտնի ճարտարապետ Զիմ Թորոսյանն է, և այս փաստը վերստին հաստատում է այն միտքը, որ խորհրդային բռնաճնշումների զոհերի մասին հիշողության խնդիրը հիմնականում մնում է բռնադատվածների և նրանց ժառանգների տիրույթում⁶³:



Նկ. 11. Երևանում բռնաճնշումների զոհերի հիշատակին նվիրված հուշաքար: Լուսանկարը՝ Գ. Շագոյանի:

⁶² Տես Ռ. Աթայան, Որտեղ է թաղված իմ հայրը // «Առավոտ», հունիս 16, 2014, <<http://www.aravot.am/2014/06/16/471100/>> (18.11.2014):

⁶³ Այս դիտարկման համար շնորհակալություն ենք հայտնում Զ. Խառատյանին:



Նկ. 12. «Ի հիշարակ հայ բռնադատված զոհերի» հուշահամալիր:
Լուսանկարը՝ Գ. Շագոյանի:

Տարին մեկ անգամ՝ հունիսի 14-ին, 1949 թ. Հայաստանից 13 272, Ադրբեջանից, Վրաստանից և Սևծովյան ավազանի այլ տարածքներից առայժմ անհայտ թվով հայերի արքորելու օրը⁶⁴, որը 2006 թվականին «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում լրացումներ կատարելուց հետո սահմանվել է որպես Բռնադատվածների հիշատակի օր, «Ի հիշատակ հայ բռնադատված զոհերի» հուշահամալիրում 2009 թ.-ից հանդիպում են խորհրդային շրջանի բռնաճնշումների զոհերն ու նրանց ժառանգները [նկ. 13]: Իշխանության ներկայացուցիչները, այդ թվում՝ նախագահ Սերժ Սարգսյանը, մասնակցել են միայն 2008 թ. այս հուշարձանի հանդիսավոր բացմանը: Հիշեցնենք, որ այդ տարի Հայաստանի նույնիսկ հետավոր նպատակներում չկար Եվրասիական միությանն անդամակցելու ծրագիր, ուստի խորհրդային անցյալին մեծ վերապահումներով մոտենալը Ռուսաստանի հետ հարաբերությունների համատեքստից դուրս քաղաքական ակցիա էր: Ընդ որում, այդ շրջանում Ռուսաստանում էլ առանձնապես չէին նկատվում

⁶⁴ Ա.Ս. Մանուկյան, Քաղաքական բռնաճնշումները Յայաստանում, էջ 218-258: Н.Н. Аблажеў. Репатриация и депортация армян, էջ 116-121:



Նկ. 13. «Ի հիշատակ հայ բռնադատված զոհերի» հուշահամալիրում 2013 թ. հունիսի 14-ին: Լուսանկարը՝ Գ. Շագոյանի:

խորհրդային պատմության դրական վերընթերցումների ներկայիս փորձերը: Բռնադատվածներին նվիրված հուշարձանը բացելուն հաջորդած 2009 թ.-ից հետո ոչ նախագահը, ոչ կառավարության անդամները չեն մասնակցել հունիսի 14-ին այստեղ տեղի ունեցող ամենամյա միջոցառումներին: Ինչը, ի թիվս այլ պատճառների, կարող է պայմանավորված լինել նաև այն հանգամանքով, որ այդ օրը հուշահամալիրում հավաքվածները քննարկում են բազմաթիվ չլուծված սոցիալական խնդիրներ: Հունիսի 14-ը, բացի ստալինյան բռնաճնշումների զոհերի հիշատակի օր լինելուց, ինքնաբերաբար վերաճել է ռեժիմային համակարգի զոհերի հանդեպ հետխորհրդային սոցիալական քաղաքականությունը քննադատելու մի հնարավորության: 2012, 2013 թթ. հունիսի 14-ին հուշահամալիրում հավաքվածները փորձեցին նախագահական նստավայր ներկայացնել իրենց պահանջները, իսկ 2014 թ. բողոքի ցույց անցկացրին կառավարության շենքի առջև⁶⁵: Այս միջոցառում-

⁶⁵ Այդ բողոքի ակցիայի մասին կարճ տեսահաղորդագրություն տես Բռնադատվածների ոտնահարված իրավունքները, 2014 հունիսի 19-ին բռնադատվածների և նրանց ժառանգների բողոքի ցույցը ՀՀ կառավարության շենքի դիմաց (19.06.2014) <<https://www.youtube.com/watch?v=mU5mcdL0Bsw>> (30.10.2014), Բռնադատվածների ոտնահարված իրավունք-

ները որևէ գործնական արդյունք չտվեցին⁶⁶: Մոցիայական խնդիրներից գատ հավաքվածների պահանջների կետերից էր նաև նույն հուշահամալիրի տարածքում ստալինյան բռնաճնշումների գոհերին նվիրված թանգարանի հիմնադրումը, ինչի շնորհիվ հուշահամալիրը կվերածվեր ամենօրյա գործող կառույցի, իսկ խորհրդային բռնաճնշումների ուսումնասիրությունն ու դրանց արդյունքների հանրայնացումը կարող էին ստեղծել հիշողության մի նոր դաշտ:

Հուշարձանը բացվում է միայն հունիսի 14-ին, որպեսզի, ինչպես բացատրեցին հուշարձանը խնամող բռնադատվածների հասարակական կազմակերպության ներկայացուցիչները, կանխեն անօթևանների և կենդանիների մուտքը հուշարձանի տարածք: Ուստի միայն այդ օրը հնարավորություն կա ծաղիկ կամ ծաղկեպսակ դնելու համալիրի կենտրոնում տեղադրված հուշաքարին կամ ի հիշատակ գոհերի հնչեցնելու համալիրի գանգը:

Դաշտային աշխատանքների ընթացքում պարզվեց, որ մեր գրուցակիցներից շատերը չգիտեին ո՛չ հուշարձանի, ո՛չ էլ հիշատակման օրվա մասին: Այստեղ ծաղկեպսակ և ծաղիկ սովորաբար դնում է բռնադատվածներից և նրանց ժառանգներից բաղկացած «Հուշամատյան» հասարակական կազմակերպությունը, նրանց սովորաբար միանում են նաև խորհրդային և հետխորհրդային շրջանի քաղաքնադարկյալներ:

Ստալինյան բռնաճնշումների գոհերի ու նրանց ժառանգների՝ մարգերում ապրողներից շատերը, ովքեր առողջության, ֆինանսական սող պայմանների կամ այլ պատճառներով չեն կարող հասնել Երևան՝ հունիսի 14-ի միջոցառմանը մասնակցելու, նախանձով էին խոսում իրենց երևանաբնակ բախտակիցների հնարավորության մասին և ջանում ձեռք բերել այս հուշարձանի գոնե լուսանկարը⁶⁷: Գյումրեցի մեր գրուցակիցներից մեկը՝ Սերգեյ Խտրշուդյանը, բազմիցս դիմել է Գյումրիի տեղական իշխանություններին՝ բռնաճնշումների գոհերի հիշատակման համար որևէ վայր հատկացնել, տեղադրել մի հուշաքար, որտեղ ցանկացողները հնարավորություն կունենային տարին գոնե մեկ անգամ ծաղիկ դնելու, հարգելու ստալինյան բռնաճնշումներին գոհ գնացած հազարավոր մարդկանց հիշատակը: Նրա այս նախաձեռնությունը մնացել է անպատասխան, այն դեպքում, երբ նույն տարիներ

ները. Մեկ օր կառավարության շենքի դիմաց (19.06.2014) <<https://www.youtube.com/watch?v=K9iwS173ul0>> (30.10.2014):

⁶⁶ Բռնադատվածներին արտոնություններ տրամադրելու շուրջ անարդյունք քննարկումներ կառավարության ներկայացուցիչների հետ անցկացվել են նաև նախկինում: Տե՛ս, օրինակ, Զ. Աբրահամյան. «Տեղյակ եմ բռնադատվածների համար նախատեսված արտոնությունների շուրջ ստեղծված իրավիճակից» // ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք, 15.06.2009, <<http://www.parliament.am/chairman.php?page=meetings&NewsID=3402&year=2009&month=00>> (16.04.2015):

⁶⁷ *Ս. Խտրշուդյան, Խոհարարի պահպան շերեփը:*

րին Գյումրիում տեղադրվել են, 1988 թ. երկրաշարժից ավերված քաղաքի մինչ օրս անմխիթար պայմանները հաշվի առնելով, զարմանալի քանակությամբ նոր հուշարձաններ⁶⁸, վերջինս էլ՝ 2014 թ., Գյումրիում տեղակայված ռուսական ռազմաբազայի տարածքում, ռուս զինագործ Մ. Կալաշնիկովին: Այդ ամենի կողքին միջոցներ «չգտնվեցին» ստեղծելու Լենինականի (Գյումրիի խորհրդային շրջանի անվանումը) ԿաԳԵԲի հազարավոր զոհերի հիշատակման որևէ հանրային վայր: Քաղաքային հուշահամալիրային լանդշաֆտում որպես կանոն տեղ է հատկացվում միայն իշխանությանը ցանկալի պատմական դրվագները, դեմքերը կամ արժեքները վավերացնող «հուշարձանացմանը», սովորական քաղաքացու հիշողության տարածքը սահմանափակվում է իր անձնական տնօրինության տակ եղածով՝ բնակարան, բակ, գերեզմանոց, վիրտուալ տիրույթ: Հանրային տարածք ներխուժելու միակ ճանապարհը հուշակոթողն անձնական միջոցներով, ավելի հաճախ՝ իշխանությունների թույլտվությանը չդիմելով, տեղադրելն է⁶⁹:

ՀԻՇՆԷԼ, ՉԻ՛ ԿԱՐԵԼԻ ՄՈՌԱՆԵԱԼ⁷⁰. ՀՈՒՇԱՐՁԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐ, ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԸ՝ ՈՐՊԵՍ ՎԱՎԵՐԱԳԻՐ

«Հուշամատյան» ՀԿ-ի, ինչպես նաև մի խումբ բռնադատվածների ընտանիքների համար հունիսի 14-ը ստանում է ուխտագնացության իմաստ: Հուշահամալիր այցելելուց զատ 1949 թ. արքայազնների համեմատաբար երիտասարդ մարդկանց մի խումբ իջնում է Կասկադի տարածքում տեղադրված հուշաքարի մոտ, որը դրվել էր մինչև հուշահամալիրի կառուցումը և այս օրվա հիշատակման նախնական վայրն էր: Այդ իմաստով և՛ հուշաքարը, և՛ հուշահամալիրն այս միջոցառումների մասնակիցների համար ունեն նաև ստալինյան բռնաճնշումների նահատակների «եղբայրական գերեզմանի» իմաստ: Այստեղ դրված ծաղկեպսակների ու ծաղիկների ձևավորումը նույն-

⁶⁸ Հմմտ. Գ. Շադոյան. Мемориализация землетрясения в Гюмри // Антропологический форум, 2009, N 11, էջ 328-370:

⁶⁹ Հմմտ. Ռ. Մարկոսյան, Յոգու պարտքը այդ զգացումն ունեցողին է // Յետք, 16.09.2014, <<http://hetq.am/arm/news/56461/hogu-partq-ayd-zgacum-n-unecoxinn-e.html>> (25.10.2014); *Նոյնի*՝ Ի հիշատակ կացնահարվածների // Յետք, 18.02.2014 <<http://hetq.am/arm/news/32605/i-hishatak-kacnaharvatsneri.html>> (30.09.2014):

⁷⁰ Այս և հաջորդ բաժինների վերնագրերում որպես հիմք ընդունել ենք Է.-Բ. Գուչինովայի գրքերից մեկի «Յիշել չի կարելի մոռանալ» վերնագիրը (տես Է.-Բ. Գուչինովայի *Помнить нельзя забыть. Антропология депортационной травмы калмыков*, Штутгарт, 2005), որտեղ հեղինակը չի դրել ստորակետեր՝ այսպես ձևակերպելով կալմիկ ժողովրդի բռնաճնշումների մասին հիշելու և մոռանալու երկընտրանքի բարդությունը:

պես հիշեցնում է հուղարկավորման ծեսն ու հայերիս կոմմենորատիվ պրակտիկաներում ամրապնդված՝ ցեղասպանության զոհերի հիշատակման համաժողովրդական ուխտագնացությունը դեպի Ծիծեռնակաբերդ⁷¹:

Ինչպես հանրային հուշարձանն է երբեմն իր վրա վերցնում անգերեզման մնացածների համար գերեզմանի գործառույթը, այնպես էլ առանձին գերեզմաններ կառուցվում են որպես անհատական ներդրում հանրային հիշողության շտեմարանում: Օրինակ, մեր գրուցակիցներից մեկը պատմեց, թե ինչպես Իջևանի շրջանի Գետահովիտ գյուղից 1949 թ. Ալթայի երկրամաս արքորված իր մայրը պատվիրել է, որ զավակներն «իրեն չթողնեն անտեր մեռել, ինչպես ամուսնուն», որին գնդակահարել են 1937 թ. և աճյունի տեղը մնացել է անհայտ, և որ իր աճյունը տեղափոխեն Հայաստան: Աքորավայրում մահացած այս կնոջ որդուն մոր պատգամը հաջողվում է կատարել 1957 թ.՝ Հայաստան վերադառնալուց 3-4 տարի անց: Նա այդ նպատակով մեկնում է նախկին արքորավայր և դին ճամպրուկով տեղափոխում հայրենի գյուղ, որտեղ կազմակերպում են մարդաշատ թաղում, դնում մարմարե տապանաքար և վրան նշում ոչ միայն մահվան տարեթիվը, այլև մահվան և վերահուղարկավորման վայրերի անուններն ու տարեթիվերը՝ գերեզմանաքարը վերածելով բռնագաղթի յուրօրինակ տարեգրության: Աքորայլի այս գերեզմանաքարի անսովոր գրությունը հիշեցնում է ցեղասպանությունից փրկվածների և արդեն Արևելյան Հայաստանի տարբեր բնակավայրերում իրենց մահկանացուն կնքած այն մարդկանց գերեզմանաքարերի տապանագիրը, որտեղ ծննդյան տարեթվից բացի, նշվում էր նաև ծննդավայրը⁷²: Այսպիսով, գերեզմանաքարը դառնում է գաղթականի միգրացիոն պատմության, ճակատագրի և պահանջատիրության մի հիշատակարան: Խորհրդային տեռորի զոհերին նվիրված մեզ հայտնի առաջին հայաստանյան հուշաքարը դրվել է Երևանի Մունդուկյանի անվան թատրոնի հարակից այգում (Կոմայգում) 1992 թ. հեռուստահաղորդավար Աիդա Ներսիսյանի ջանքերով՝ ի հիշատակ 1921 թ. փետրվարի 18-ին Երևանի բանտում բռլչնիկների կողմից կացնահարվածների: 2008 թ. վնասված այս հուշաքարը փոխարինվեց խաչքար-հուշարձանով՝ տեղադրված նույնպես մասնավոր

⁷¹ Հուղարկավորման և ցեղասպանության զոհերի ոգեկոչման արարողության զուգահեռների մասին տես Գ. Մարության, Հուշարձանը որպես գերեզմանոց (Ցեղասպանության հուշահամալիրի օրինակով) // Հայ ժողովրդական մշակույթ XIII. Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, խմբ.՝ Դ. Վարդումյան, Ս. Հարությունյան, Ս. Հրոսյան, Երևան, 2006, էջ 172-180:

⁷² Տես Գ. Շագոյան, ԴԱՆ, Արագածոտն, 2010: Այս տիպի տապանագրերի մասին մանրամասն տես Կ. Kharatyan-Araqelyan, On Some Features of Armenian-Turkish Joint Memories of the Past // Prospects for Reconciliation: Theory and Practice. Proceedings of the International Workshop, Yerevan, 27 November, 2010, Կ. Kharatyan-Araqelyan, L. Neyzi (eds.), Yerevan, Istanbul: DVV international, 2011, էջ 126-155:

անձի՝ խորհրդային քաղաքատարկյալ Ռ-ագմիկ Մարկոսյանի նախաձեռնությամբ⁷³: Սակայն այս հուշարձանը [նկ. 14]⁷⁴, ինչպես և նախորդ հուշաքարը, չվերածվեցին խորհրդային բռնությունները դատապարտող կամ դրանք որևէ կերպ հիշատակող արարողությունների վայրի:

Կան սակավ դեպքեր, երբ խորհրդային բռնաճնշումների զոհերին հուշարձան կանգնեցնելու նախաձեռնողը համայնքի ղեկավարն է: Մնան մի դեպք ենք գրանցել Սյունիքի մարզի Առաջաձոր գյուղում, որտեղ ստալինյան բռնաճնշումների զոհերի հիշատակին նվիրված աղբյուր-հուշաքարին նշված են գյուղի՝ գերեզման չունեցող բռնադատվածները [նկ. 15]: Գյուղում եղել են այլ բռնադատվածներ նույնպես, սակայն քարտավայրից վերադարձողների և գյուղում կամ որևէ այլ տեղ գերեզման ունեցողների անուններն այս քարի վրա նշված չեն: Մի փոքր կանգ առնենք տվյալ օրինակի վրա և ներկայացնենք այս հուշարձանը տեղադրելու պատմությունը⁷⁵:

Առաջաձորում 2002 թ. գյուղապետ ընտրված Դավիթ Մովսիսյանը որոշում է որպես հանրօգուտ նախաձեռնություն՝ ջուր անցկացնել գերեզմանատուն, որի կարիքը հատկապես զգացվում էր հուղարկավորությունների և գերեզմանները սարքելու ժամանակ: Արժի նշել, որ Հայաստանում համայնքային նշանակության նախաձեռնությունների զգալի մասը կազմում են գերեզմանատների բարեկարգման աշխատանքները: Այս նպատակի համար համեմատաբար հեշտ է կազմակերպել արտագաղթած հաջողակ համագյուղացիների ներդրումները, ինչպես նաև ապահովել գյուղում բնակվողների որոշակի մասնակցությունը: Գերեզմանոց պարսպապատելը, գերեզմանատուն տանող ճանապարհի վերանորոգելը կամ նույնիսկ այստեղ հոսանք անցկացնելն ու լապտեր տեղադրելը հետխորհրդային երկարամյա մեր գիտարշավների ընթացքում գրանցած առավել հաճախ հանդիպող համայնքային միջոցառումներից են⁷⁶: Համայնքի միասնությունն առավելագույնս դրսևորվում է հատկապես հանգուցյալների հետ կապված արարողություններում և նրանց շիրիմները բարեկարգելու աշխատանքներում:

Այս նույն տրամաբանությամբ Առաջաձորի նորընտիր գյուղապետն իր մերձավորների, ընկերների անձնական միջոցներով ջուրը գերեզմանոց հասցնելուց հետո կանգ է առել մի նոր խնդրի առջև՝ ինչպիսի աղբյուր դնել: Ստալինյան բռնաճնշումների զոհերի հիշատակին նվիրված աղբյուր-հուշաքար կառուցելու գաղափարը նրա մեջ ձևավորվել է Գրիշա Սմբատյա-

⁷³ Ռ. Մարկոսյան, Ի հիշատակ կացնահարվածների:

⁷⁴ Լուսանկարում Աիրա Ներսիսյանն ու Ռագմիկ Մարկոսյանն են (լուսանկարի աղբյուրը՝ Ռ. Մարկոսյան, Ի հիշատակ կացնահարվածների // Զեռք, 18.02.2014 <<http://hetq.am/arm/news/32605/i-hishatak-kacnaharvatsneri.html>> (30.09.2014)

⁷⁵ Զ. Մարտոսյան, ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2012, Դավիթ Մովսիսյան:

⁷⁶ Գ. Շաղոյան, ԴԱՆ, Զորագյուղ, 2009: ԴԱՆ, Շնող, 2014: ԴԱՆ, Գոշ, 2006 ևն:



Նկ. 14. «1921 թ. փետրվարի 18-ին Երևանի բանտում բուշեկիների կողմից կացնահարվածների հիշարարկին» նվիրված խաչքար:



Նկ. 15. Առաջածորի գյուղապետը՝ Դավիթ Մովսիսյանը «Անմեղ մեղավորների հիշարարկին» հուշաքարի մոտ: Լուսանկարը՝ Հ. Մարտոչյանի:

նի՝ բռնադատվածներին նվիրված վերոհիշյալ «Երկաթե վարագույրից այս կողմ» գրքի⁷⁷ ազդեցությամբ. գյուղապետն այդ ժամանակ դա էր կարդում, և այնտեղ որոշակի տեղեկություններ կային նաև իր համազյուղացիների մասին: Հուշակոթողն անվանվել է «Անմեղ մեղավորների հիշատակին», ինչը գրված է հուշաղբյուրի ճակատին՝ հավերժության նշանի կողքին: Այս գրության տակ թվարկված են գյուղի բռնադատված բնակիչների անուն-ազգանունները և նրանց ծննդյան ու մահվան տարեթվերը: Աղբյուր-հուշաքարի գրությունն ավարտվում է Սմբատյանի գրքի գլուխներից մեկում հանդիպող պատգամով՝ «Եվ դու մի՛ ասա, թե մեղավոր է ժամանակը, և անմեղ ես դու»⁷⁸: Հուշաղբյուրը դնողի մեկնաբանությամբ նման հուշարձանի գլխավոր նպատակը «պատմությունից դաս քաղելն է»: «Դատախարակչական» գործառույթի մասին վկայող այս տողերը, ըստ մեր գրուցակցի, վերաբերում էին նաև իր համազյուղացիներին, ովքեր կամա թե ակամա ժամանակին վերա-

⁷⁷ Գ. Սմբատյան, Երկաթե վարագույրից այս կողմ:

⁷⁸ Նշվ. աշխ., էջ 400:

ճել են ստալինյան համակարգի պտուտակների, և յուրաքանչյուրն ունի մեղքի իր բաժինը: Թեև հուշաղբյուրը տեղադրվել է 2011 թ. աշնանը, սակայն 2012 թ. ամռանը, երբ մենք նորից այնտեղ էինք, ջուրը հուշաղբյուրին միացնելու համար դեռ անհրաժեշտ էր անցկացնել մոտ 20 մետր ջրատար խողովակ և աղբյուրի շուրջը բարեկարգել: Հուշարձանի անավարտ լինելը, սակայն, չի խանգարում գյուղացիներին հուղարկավորությունների ժամանակ գերեզմանոց այցելելիս հուշաքարին պարտադիր ծաղիկներ թողնել: Հուշաղբյուրի նախաձեռնողներն այս հուշակոթողին ծաղիկ են դնում հունիսի 14-ին՝ այսպես նշելով բռնադատվածների օրը: Սակայն, ինչպես նշեց գյուղապետը, այն դեռ չի կարելի կայացած ավանդույթ համարել, դա կպարզվի միայն հուշարձանը վերջնականապես ավարտելուց հետո:

Հուշաղբյուրի ամենահավատարիմ այցելուները հուշաքարի վրա նշված զոհերի ընտանիքների անդամներն ու ժառանգներն են: Նրանց որոշ մասը հատուկ այցելություն է կազմակերպել երեխաների համար: Այսինքն, դեռ չավարտված հուշարձանն արդեն գործում է իբրև ընտանեկան գերեզմանաքար: «Ունենք պատերազմի վետերան գյուղում, էկավ, լացում էր, ասում էր՝ վերջապես էսքան տարի հետո իմ հոր անունը գրվեց մի քարի», – պատմում է հուշաղբյուրի նախաձեռնողը⁷⁹: Հուշաղբյուրի վրա նշվածների ժառանգներից են Ոսկանյան Մուշեղի որդի Հրանտը, ով Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության վերջին քարտուղարն էր, Բախշյան Սարգսի թոռը՝ ՀՀ Ազգային ժողովում 1999 թ. հոկտեմբերի 27-ի ողբերգական իրադարձությունների զոհ Ազգային ժողովի պատգամավոր Յուրի Բախշյանը, ում ճակատագիրը, կարծես, մի նոր իմաստ է հաղորդում այս հուշաքարին՝ միավորելով տարբեր քաղաքական ոճրագործությունների զոհ միևնույն ընտանիքի սերունդներին:

Հուշակոթողը փաստորեն սկսել է միաժամանակ ծառայել որպես պետական օրացույցում պաշտոնապես ընդունված բռնադատվածների հիշատակի օրվա՝ հունիսի 14-ի միջոցառումների անցկացման վայր, ինչն առիթ է ստեղծում այս հիշողությունները ներընտանեկանից տեղափոխել մշակութային⁸⁰ կամ հանրային հիշողության դաշտ:

Ունենք դեպքեր, երբ բռնադատվածների որդիները կամ թոռները կառուցել են կենտոաֆ՝ առանց դիակի գերեզմանոց, տեղադրելով տապանաքար և վրան գրելով իրենց հարազատի անունը⁸¹: Այդպիսիներից է նաև Հովհաննես Քաջազունու՝ Հայաստանի Առաջին հանրապետության վար-

⁷⁹ Գ. Մարության, ԴԱՆ, զրույց Դավիթ Մովսիսյանի հետ, Առաջածոր, 2012:

⁸⁰ Մշակութային հիշողության մասին տես Y. Assman. Communicative and Cultural Memory // Cultural Memory Studies. An international Interdisciplinary Handbook, Berlin, New York, 2008, էջ 109-118:

⁸¹ ՀԱԻ ԴԱՆ, Հարկատ, 2014, Արագածոտն, 2014:

չապետի դեպքը, ով 1937 թ. ձերբակալվել և 1938 թ. գնդակահարվել է ըստ երևույթին ՆԳԺԿ բանտում: Քաջագնունու չորս որդիներից երկուսը՝ Արամը և Աշոտը, գոհվել էին 1919 թ. և 1921 թ. թուրքերի դեմ կռիվներում: Նրա կրտսեր դուստրը՝ Մարգարիտ Քաջագնունին, 1992 թ. ազգագրագետ Հ. Խառատյանին պատմել է, որ իր մայրը՝ Քաջագնունու այրին՝ Սաթենիկ Միրիմանյանը, 1952 թ. Երևանի Թոխմախազյու գերեզմանատանը երրորդ որդու նույնպես ողբերգական մահից (գոհվել է ավտովթարից) հետո՝ փաստորեն այդ ընտանիքի առաջին հուղարկավորությունից հետո, որդու տապանաքարի կողքին մեկ այլ տապանաքար է տեղադրել հանգուցյալ ամուսնու հիշատակին՝ վրան գրված «Հովհաննես Քաջագնունի» անունը, չնայած իրականում ընտանիքն այդպես էլ չիմացավ նրա դիակի հանգրվանի վայրը: Այնուամենայնիվ, նման դեպքերն ավելի շուտ բացառություն են, քան օրինաչափություն: Խորհրդային տարիներին բռնադատվածներին սովորաբար ոչ միայն չէին ջանում հիշատակել կամ նրանց նվիրված հուշաքարեր տեղադրել, այլև հակված էին թաքցնելու այս մարդկանց մահվան պատճառը, ու մինչև 1990-ականները, երբեմն՝ այսօր, նույնիսկ նրանց մահվան տարեթիվը հստակ չգիտեն:

Առաջաձորում հուշադրյուրի տեղադրումն առիթ դարձավ, որպեսզի այս գյուղում բնակվող որոշ ընտանիքներ, որտեղ նույնպես եղել են բռնադատվածներ, ջանք թափեն իրենց հարազատների մասին հիշողությունն ամրագրելու: Հուշարձանի վրա տեղ էին գտել միայն այն անունները, ում իր գրքում հիշատակել էր Գրիշա Սմբատյանը: Սակայն հուշարձանը տեղադրելուց հետո գյուղապետին դիմել են ևս երկու ընտանիք, ովքեր փաստաթղթեր են ներկայացրել, որ իրենց ծնողները նույնպես բռնադատվել են, և նրանց գերեզմանի տեղն անհայտ է: Սա գյուղապետի համար առիթ դարձավ որոշելու, որ գրված 11 անուններով հուշաքարի տեքստը չի կարելի համարել վերջնական, և դրանց կողքին կավելացվեն ոչ միայն բացահայտված այս երկու անունները, այլև հետագայում դրանց ցուցակը կարող է ընդլայնվել, և քարի վրա հայտնվեն նոր անուններ⁸²:

Խորհրդային շրջանի բռնաճշումների հիշատակին նվիրված հուշակոթողները՝ որպես հանրային տարածքում տեղադրվող «կարծր/հիմնական հիշողության» նմուշ, պիտի պաշտոնապես արտոնված լինեն: Առաջաձորի դեպքում որևէ խնդիր չկար, քանի որ նախաձեռնողը հենց գյուղապետն էր՝ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը, և նման թույլտվություն հենց ինքը պիտի արտոներ: Մեկ այլ դեպքում բռնադատվածների հիշատակին նվիրված հուշարձանը տեղադրողը ոչ միայն ստացել էր գյուղապետարանի թույլտվությունը, այլև գյուղապետարանը դարձել էր այս ծրագրի մաս-

⁸² Գ. Խառատյան, Գ. Մարության, ԴԱՆ, Սյունիքի մարզ, Առաջաձոր, 2012:

նակիցը և հուշարձանի բարեկարգման համար համայնքի բյուջեից միջոցներ էր հատկացրել: Բոլոր դեպքերում հետխորհրդային մասնավոր նախաձեռնությամբ տեղադրվող հանրային արձանները տեղական իշխանություններն այսպես թե այնպես պիտի օրինականացնեն: Մեզ հանդիպած դեպքերում նման նախաձեռնություններն իսկապես տեղական կառավարման մարմինների մակարդակում որևէ դժվարության չեն հանդիպել⁸³:

Հետխորհրդային շրջանում մասնավոր նախաձեռնությամբ արձան տեղադրելու գործընթացի հիմնական բարդությունը տեղանքի ընտրությունն է, քանի որ սեփականաշնորհումից հետո ազատ հանրային տարածք գտնելն ինքնին խնդիր է: Եթե Առաջաձորում սկզբից որոշվել էին տեղն ու հուշարձանի հանրօգուտ նպատակը, և հետո միայն՝ արձանի ձևը, ապա Կոտայքի մարզի Գողթ գյուղում բռնադատվածների հիշատակին դրվող արձանն ամբողջությամբ արդեն պատրաստ էր, երբ սկսել են փնտրել այն կանգնեցնելու վայրը: Ընտրության համար կարևոր հանգամանք է դառնում դպրոցը, որը ոչ միայն շատ գյուղերի հանրային կենտրոնի ցուցիչներից է, այլև, ըստ հուշարձանը նախաձեռնողի, դպրոցին մոտ վայր ընտրելը պիտի շեշտեր արձանի դաստիարակչական նշանակությունը՝ պատգամը եկող սերունդներին:

Գողթ գյուղի բռնադատվածների հուշարձանը [նկ. 16] տեղադրվել է հիմնականում զոհերից մեկի՝ Պետրոս Տեր-Պետրոսյանի թոռան նախաձեռնությամբ և միջոցներով, որին աշխատանքով և որոշ գումարով աջակցել են նաև նույն գյուղի այլ բռնադատվածների ժառանգներ և գյուղապետարանը: Հուշաքարի վրա պատկերված է գիրք՝ միջևամասում գյուղում բռնաճնշումներին զոհ գնացած համագյուղացիների անունները: Այն, ըստ տեղադրողի, պիտի խորհրդանշեր իրենց գյուղի պատմության գիրքը, որի մի էջը կազմում է բռնադատվածների պատմությունը: Նույն քարին պատկերված արծիվը պիտի խորհրդանշեր զոհվածների մահը՝ այն ներկայացնելով որպես «հայրենիքի համար» զոհաբերություն, հերոսություն, յուրովի պայքար (Գողթում գործել է մի խումբ, որն իսկապես մտադրված էր դիմադրել խորհրդայնացմանը, մասնակցել է Փետրվարյան ապստամբությանը և, ինչպես պնդում էին մեր զրուցակիցները, այդ նպատակով զենքի որոշ պաշար էին կուտակել գյուղում): Հուշարձանի ստորին մասում հավերժության նշանն է, որը սկզբից ուզեցել են պատկերել պարուրված օձով, այնուհետև հրաժարվել են այդ մտքից: Հուշարձանի վերնամասում գրված է՝ «Ի հիշա-

⁸³ Եթե այդպիսին չհամարենք Աշտարակ քաղաքի դեպքը: Այստեղ հուշարձանի տեղադրման թույլտվության համար դիմել է քաղաքի ավագանու անդամ Կարեն Շահագոյանը, ով իր գերդաստանում հաշվում է ստալինյան բռնությունների շուրջ 25 զոհ: Երկու տարի շարունակ նրա դիմումն ավագանու մի նիստից «քոչում էր» մյուսը (Յ. *Խառատյան*, Գ. *Ստեփանյան*, ԴԱՆ, Աշտարակ, 2014): Գուշարձան կառուցելու թույլտվություն նա ստացավ միայն 2015 թ.:

Նկ. 16. «Ի հիշատակ 1937-38 թթ. բռնադատված գողթեցիների» հուշարձանը, քանդակագործ՝ Գագիկ Գրիգորյան: Լուսանկարը՝ Գ. Շագոյանի:



տակ 1937-38 թթ. բռնադատված գողթեցիների»: Գրությունը տեղադրելու ժամանակ նախաձեռնող Ներսես Տեր-Պետրոսյանը գիտակցաբար խուսափել է օգտագործել «ստալինյան զոհեր» կամ «ստալինյան բռնաճնշում» և այլ ձևակերպումներ՝ չջանկանալով, որ Ստալինի անունը որևէ կերպ նշվի հուշաքարի վրա: Ստալինին չհիշատակելը հուշարձանը դնողների «յուրօրինակ պատիժն» էր բռնակալին՝ նրա անունը մոռացության մատնելու մի փորձ: Այսպիսով, ըստ նախաձեռնողների, հուշաքարի վրա հիշատակման (անկախ բովանդակությունից) իրավունքը դեռ հարկավոր է վաստակել, անարժանների անունները նույնիսկ բացասական իմաստով չպիտի հավերժացվեն: Այս մեկնաբանությունն առավել ուշագրավ է դառնում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ արձան տեղադրողը՝ այդ զոհերից մեկի թոռը, նույն քարի վրա նշել է ոչ միայն իր պապի և նրա բախտակիցների անունները, այլև իր պապին մատնողի (հետագայում նույնպես բռնադատված անվտանգության ծառայության մի աշխատակցի) անունը՝ գտնելով, որ նրանք երկուսն էլ նույն համակարգի զոհերից են, ու քանի որ «նույն դռնով են անցել» ընդունելու իրենց մահը, նրանք իրենց կարգավիճակում հավասարվել են»⁸⁴: Առավել ևս, որ իր պապը, ձգտելով կանխել «մատնիչի» հետագա մատնությունները, իր հերթին նրան «զրպարտել է»՝ պնդելով, որ վերջինս եղել է իրենց «դաշնակցական խմբակի պարագլուխներից»: Այս հայտարարությանը հետևել են այդ մարդու ձերբակալությունն ու ամենայն հավանա-

⁸⁴ ՀՍԻ ԴԱՆ, Գողթ, 2014:

կանությամբ՝ գնդակահարությունը (կրա ճակատագիրը մնում է անհայտ): Այսպիսով, հետապնդողն ու հետապնդվողը մի պահ փոխվում են տեղերով և դառնում բախտակից ոչ միայն իրենց մահկանացուն կնքելիս, այլև մահից հետո հիշատակվելու իրավունքը հավասարապես կորցնելով (երկուսն էլ չունեն գերեզման) և հետո միասին այդ իրավունքն ու հնարավորությունը վերագտնելով: Հակառակորդների անունները մեկ հուշաքարի վրա նշելու այս որոշումն առանձնացնում է այն կայացնողներին մեր շատ այլ գրուցակիցներից, ովքեր որպես իրենց նախնիների խորտակված կյանքի մեղավոր ավելի շուտ նշում էին նրանց մատնող համագյուղացիներին, քան Ստալինին կամ ամբողջատիրական համակարգը: Այս դեպքում պատմական իրադրության զարմանալի ըմբռնում է նկատվում, երբ համակարգի և այն ստեղծողների մեղավորության աստիճանն այնքան է գիտակցված, որ «ստորին օղակի» զոհերն ու դահիճները երկուսն էլ ճանաչվել են որպես զոհ:

Ուշագրավ է, որ եթե Գողթում Ստալինի անունը հուշարձանին վավերացնելը ընկալվել է որպես պատիվ, և այդ անունը չի նշվել, ապա Թ-ալինի շրջանի Աշնակ գյուղում, ընդհակառակը, այդ անունը տեղ է գտել անհատ մարդու տապանաքարին՝ վերջինիս որդու ընդգծված ասելության թելադրանքով: Հոր տապանաքարին նա փորագրել է տվել «Ստալինիզմի զոհ» բառերը⁸⁵:

Գողթի այս հուշարձանը, ինչպես և Առաջաձորինը, դրվել է նախևառաջ որպես անգերեզման մնացած զոհերի հուշաքար: Սակայն Գողթում հուշաքարի վրա անունները գրելիս որոշել են նշել ոչ միայն անգերեզման մնացած զոհերին, այլև երկու բռնադատվածի անուն ևս, ովքեր արքայից վերադարձել են գյուղ, իրենց մահկանացուն կնքել հայրենիքում և գյուղում ունեն գերեզմաններ: Այսպիսով, նվազեցնելով հուշարձանի կենտոաֆային իմաստը, նախաձեռնողները փորձել են հուշաքարը հնարավորինս մոտեցնել հանրային իմաստ պարունակող մի հուշարձանի և այն չդիտել որպես գերեզմանին փոխարինող շիրիմ: Ջանացել են նաև հնարավորինս խուսափել խաչքարի հետ նմանությունից՝ գտնելով, որ այդպես կարող են նվազեցնել տապանաքարի հետ ընդհանրությունը՝ փոխարենը շեշտելով հուշարձանի քաղաքացիական ուղերձն ու հասարակական գործառույթը: Նույն նպատակն ընդգծվել է նաև հուշարձանի բացման արարողության ձևաչափն ու մասնակիցներին ընտրելիս, երբ բացմանը տերունական օրհնության փոխարեն, ինչը հետխորհրդային Հայաստանում հանրային տարբեր միջոցառումների գրեթե պարտադիր բաղադրիչներից է դարձել, բացման խոսքը տրվել է խորհրդային նախկին քաղբանտարկյալի՝ Պարույր Հայրիկյանին:

⁸⁵ Զ. Յանբարձումյան, Գ. Ստեփանյան, ԴԱՆ, Արագածոտնի մարզ, 2014:

Նկ. 17. Արագածուրնի մարզի Շամիրամ գյուղի զոհերին նվիրված հուշարձան: Լուսանկարը՝ Լ. Խառապյանի:

Եզդիաբնակ Շամիրամ գյուղում վերջերս կանգնեցված հուշարձանը⁸⁶ պատմության և հիշողության յուրօրինակ միաձուլում է. զոհերի հիշատակի եռայուն այս հուշարձանի [նկ. 17] մի սյան ստորին մասում նշված են ցեղասպանության տարիներին այս համայնքից սպանվածների անունները, երկրորդ սյան վրա՝ 1932-38 թթ. ստալինյան բռնաճշմունքների զոհերի անունները, և երրորդ սյունը նվիրված է Երկրորդ համաշխարհային պատերազմի զոհերին. համապատասխանաբար նշված են այս գյուղի զոհվածների անունները: Ուշագրավ է, որ մեկ հուշարձանում միավորված են անցած դարի առավել արյունահեղ երեք պատմական իրադարձությունները, որոնց, համատեղելով մեկում, որոշակի պատմական համաչափություն է հաղորդված, միգուցե հաշվի առնելով հենց մարդկային զոհերի ահռելի չափերը: Մյուս կողմից, այս երեք սյունները միաժամանակ հիշվում են

որպես որոշակի մարդկանց հուշարձան: Հուշարձանային նման պրակտիկա բավականին տարածված էր խորհրդային շատ գյուղերում, երբ «Մեծ հայրենական պատերազմին» նվիրված հուշակոթողին նշվում էին տվյալ գյուղի՝ պատերազմից չվերադարձած զինվորների անունները, և երբեմն նույնիսկ լուսանկարներն էին փակցվում: Սակայն այս հուշարձանն աչքի է ընկնում ոչ միայն այն պատճառով, որ միավորում է երեք պատմական իրադարձություն, այլև նրանով, որ հուշարձանն ուղեկցող գրությունը հուշում է, թե այս



⁸⁶ Այս հուշարձանի վրա մեր ուշադրությունը հրավիրեց Լուսինե Խառապյանը, ով նաև տրամադրել է հուշարձանի լուսանկարները:

երեք իրադարձություններից որ մեկն է արտացոլում հավաքական, խմբային հիշողություն (հմմտ. collective), և որ մեկը՝ հավաքած (հմմտ. collected): Երեք իրադարձություններն էլ սյուների վրա կան տարեթվեր, սակայն եթե առաջինը և երրորդը պարունակում են պատմագրությամբ (collective) ամրագրված թվագրում (ցեղասպանություն՝ 1915 թ., Հայրենական մեծ պատերազմ՝ 1941-1945 թթ.), ապա ստալինյան բռնաճնշումների ժամանակաշրջանը որոշված է ըստ տվյալ գյուղի զոհվածների գնդակահարության կամ արքայի տարեթվով (1932-38), այսինքն՝ այն, ի տարբերություն կողքի երկու սյուների, ոչ թե ընդհանուր «հավաքական» պատմագրության, այլ միայն տվյալ գյուղի «պատմական հիշողության» թվագրումն է, թերևս նաև այն պատճառով, որ խորհրդային բռնաճնշումներն այնքան թռուցիկ են քննարկված թե՛ պատմագրության մեջ, թե՛ հանրային դաշտում, որ պարզ քաղաքացիների համար չունեն նույնիսկ քիչ թե շատ ընդհանուր թվագրում:

ՀԻՇԵԼ ՉԻ ԿԱՐԵԼԻ, ՄՈՌԱՆԱՂ. ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՄԵՐԺՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Բռնադատվածների հիշատակին կատարվող վերոհիշյալ համայնքային միջոցառումները թույլ են տալիս ենթադրել, որ խորհրդային բռնաճնշումների հարցի շուրջ կար համայնքային որոշակի կոնսենսուս: Մինչդեռ խորհրդային տարիներին տեղի էին ունենում «արձաններ» տեղադրելու բացահայտ և գաղտնի պատերազմներ: Խորհրդային հասարակությունը, չնայած հայտարարված հաղթանակած գաղափարախտությանը և դրանից յուրաքանչյուր շեղման պարագայում խստորեն պատժվելու հեռանկարին, գերծ էր մեծ ու փոքր ընդվզումներից: Հայաստանում երկար ընդմիջումից հետո դրանք անհամարձակորեն սկսվեցին 1960-ական թվականներին: Պասիվ դիմադրության ձևերից էր «արձանամարտը», որի մասնակիցներից էին, ըստ մեր դաշտային գրառումների, ցեղասպանության զոհերի ժառանգների և բռնադատվածների ընտանիքների ներկայացուցիչները: Ունենք գրանցած մի քանի դեպք, երբ ստալինյան բռնաճնշումների տարիներին համակարգի հանդեպ զայրույթի ու կորցրած ազգականների վրեժխնդրության օբյեկտ դառնում էին Լենինի ամենատարածված արձանները՝ հատկապես համեմատաբար փոքր չափերի արձանիկներն ու անհամար կիսանդրիները: Սա ուշագրավ փաստ է, քանի որ Խորհրդային Միությունում քաղաքացիները հիմնականում ոչ միայն հակված էին քննադատելու կամ նույնիսկ քննարկելու Լենինի կերպարը, այլև խորապես յուրացրել էին նրա անսխալական լի-

ներու թեզը⁸⁷: Մինչդեռ Արևմտյան Հայաստանից գաղթական աշնակցի մի քարտաշ վարպետ, ում հորն անվերադարձ տարել էին 1930-ականներին, 1960-ականներին մասնավոր աշխատանքային պատվերով հրավիրվում է հարևան գյուղ, որտեղ, ինչպես և հայաստանյան շատ այլ բնակավայրերում, կանգնեցված է եղել Լենինի արձանը: Օգտվելով նրանից, որ մոտակայքում մարդ չի եղել, այս վարպետն իր մուրճով ջարդել է արձանի գլուխը՝ մուրճի յուրաքանչյուր հարվածն ուղեկցելով բռնադատվածներից մեկի անունը բարձրաձայնելով՝ որպես խորհրդանշական հարված նրա կողմից⁸⁸:

Լենինի արդեն կիսակոտրած կիսանդրու դեմ է ուղղում իր պայքարը նաև Երազգավորսի բռնադատվածներից մեկի որդին, ով, աշխատելով դպրոցում, 1945-46 թթ. հնամաշ շրերի մեջ փաթաթում է Լենինի կիսանդրին և նետում գյուղական փոս-գուգարանը: Մինչև օրս գյուղացիները, այս «հաշվեհարդարի» դեպքը հիշելով, հիանում են այն իրագործողի համարձակությամբ, քանի որ այդ պայմաններում ապրած մարդը չէր կարող այն չգնահատել՝ հաշվի առնելով հնարավոր հետևանքները, առավել ևս, որ անողի հորը գնդակահարել էին, և ինքն էլ բարձր պաշտոն էր զբաղեցնում⁸⁹: Մեկ այլ պատմությունում Լենինականից ինչ-որ առիթով 1980-ականներին Մոսկվա գնացած նախկին բռնադատվածի կինն ու արդեն կոմկուսի անդամ՝ որդին, զբոսնում են խորհրդային մայրաքաղաքում, և որդին, իբրև ուշագրավ տուրիստական վայր, առաջարկում է մորը գնալ Լենինի դամբարան: Մայրն իր մերժումը ձևակերպում է այսպես. «Եթե տեսնեմ այդ բաստուրմին [նկատի ունի Լենինին], չեմ դիմանա և կթքեմ դրա վրա, և մեզ նորից Սիբիր կըշեն, ավելի լավ է դրանից հեռու մնանք»: Կարող ենք ենթադրել, որ, ի տարբերություն այլ խորհրդային ժողովուրդների, ում համար Լենինը զրեթե ցայսօր մնում է դրական կերպար⁹⁰, հայերի միջավայրում, հատկապես մինչև Հայաստանի խորհրդայնացումը ծնված սերնդի մեջ, նրա հանդեպ վերաբերմունքը շատ ավելի երկիմաստ էր նույնիսկ խորհրդային տարիներին: Չի բացառվում, որ սա Թ-ուրքիայի հետ Լենինի համաձայնությամբ կնքված Մոսկվայի և Կարսի պայմանագրերի՝ հայերի համար բախտորոշ և ծանր հետևանքների նկատմամբ հանրայնորեն չարտահայտված ժողովրդական ընդվզման որոշ արձագանքներից է:

⁸⁷ Տե՛ս Ա. Юрчак. Это было навсегда, пока не кончилось, էջ 125-137, 155-254:

⁸⁸ Գ. Խաչատրյան, Ջ. Դամբարձումյան, Գ. Ստեփանյան, ԴԱՆ, Արագածոտնի մարզ, 2014:

⁸⁹ Գ. Շաղոյան, ԴԱՆ, Տավուշի մարզ, 2006:

⁹⁰ Զմմտ. կամիկների դրական վերաբերմունքը, ովքեր պահպանեցին Լենինի արձանն Էլիստայի կենտրոնական հրապարակում նաև այն պատճառով, որ Լենինի նախնիներից մեկը եղել է կամիկ: Այս մասին տե՛ս E.-B. Guchinova. From the USSR to the Orient: National and Ethnic Symbols in the City Text of Elista // Soviet and Post-Soviet Identities, ed. Bassin M., Catriona K., Cambridge; New York: Cambridge University Press, 2012, էջ 194-211:

Ստալինի արձանի հանդեպ վերաբերմունքը, նույնիսկ անձի պաշտամունքի մերկացումից հետո, միանշանակ չէր: Օրինակ, մի քարոյշալ մտապահել է, թե ինչպես ԽՄԿԿ XX համագումարից հետո սիբիրյան քարավայրերից Ստալինի հանված արձանի գլխով քարականոթները փորձել են ֆուտբոլ խաղալ⁹¹: Սյունիքի գյուղերից մեկում՝ Շիշկերտում, երբ 1962-63 թթ. իշխանությունները որոշում են հանել Ստալինի արձանը, ոչ մեկը չի համարձակվում իրականացնել այդ որոշումը:

«Դե տրակտորը բերել են, տրոսերը [ճուպան] կապել, ոչ մեկը... նախագահը, պարտկոմի քարտուղարը լացում էին: Հերս ասավ՝ էկա տեսա՝ լացում են: Լացում են, ժողովուրդն էլ լրիվ կանգնած նայում է: Ասի՝ դրա տիրու հերն անիծած, ես Նոր Երկիր ինչ եմ անում տասը տարի, տու՛ր ստեղ: Բարձրացավ, ասում է, տրոսը կապեց գցեց»⁹²:

Մեկ այլ գյուղում՝ Քարահունջում, Ստալինի արգելված արձանն ընդհուպ մինչև 1970-ականները դարձրել էին «ղնովի-հանովի»։ ամեն տարի մայիսյան տոներին ընդառաջ այն տեղադրում էին գյուղի հրապարակում, նշում Հայրենական պատերազմի հաղթանակի հերթական տարելիցն ու այնուհետև նորից հեռացնում, որ այլ շրջաններից կամ շրջկենտրոնից չիմանան: Ի վերջո գյուղխորհրդի նախագահն ու կուսքարտուղարը մի գիշեր գյուղացիներից գաղտնի կիսանդրին տանում են լեռները և այնտեղ ջարդում⁹³:

Ցեղասպանությունից փրկված սասունցիներով բնակեցված Թալինի Աշնակ գյուղում 1960-ականներին «արձանամարտը» ծավալվում էր այլ հերոսի շուրջ⁹⁴։ աշնակցի քանդակագործ, խորհրդային բռնությունների զոհի թոռ Համլետ Դավթյանը որոշել էր գյուղում տեղադրել Անդրանիկի արձանը⁹⁵:

Ցեղասպանության ընթացքում հայկական ինքնապաշտպանության ակտիվ մասնակից և Թուրքիայում ահաբեկչի անուն «վաստակած» Անդրանիկին խորհրդային գաղափարախոսությունը փորձում էր ջնջել հանրային հիշողությունից կամ ներկայացնում էր որպես դավաճանի: Միայն 1965 թ. հետո Անդրանիկի շտրեիվ փրկվածներն իրենց «բարձերի տակից» հանեցին Անդրանիկի խունացած լուսանկարները: Նրա ջանքերով ցեղասպա-

⁹¹ Հ. Խառատյան, Հ. Մարության, ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2012:

⁹² Հ. Մարության, ԴԱՆ, Գորիս, 2012, Վոլոդյա Մարտիրոսյան:

⁹³ Հ. Խառատյան, ԴԱՆ, Սյունիքի մարզ, 2012:

⁹⁴ Հ. Խառատյան, Զ. Համբարձումյան, Գ.Ստեփանյան, ԴԱՆ, Արագածոտնի մարզ, 2014:

⁹⁵ Անդրանիկի առաջին արձանը սեփական միջոցներով դրել են նույնպես Ցեղասպանությունից փրկված սասունցիներով բնակեցված Ուջան գյուղում 1967 թ.՝ դիմակայելով պետական տարբեր ճնշումների: Մանրամասն տես Հ. Խառատյան, Ու՛մ ներես, Բնչը ներես // Խոսելով միմյանց հետ՝ անձնական հիշողություններ անցյալի մասին Հայաստանում և Թուրքիայում, Երևան, Ստամբուլ. Dvv international, 2010, էջ 22-27:

նությունից փրկվածների շրջանում նա այնպիսի հեղինակություն և սեր էր վայելում, որ նրա լուսանկարը՝ որպես սրբություն և անբաժան մասունք, թաղում էին ամբողջ կյանքն այդ նկարն իրենց մոտ խնամքով պահած և պատկառելի տարիքում մահացած ցեղասպանությունը վերապրածների հետ⁹⁶: Մեջբերենք մեր դաշտային նյութից Անդրանիկի հանդեպ ակնածանքը նկարագրող մի փոքր դրվագ.

«Հանեց Անդրանիկի, էն վախտը բան էին անում, տպրմ էին, տանում ծախում էին, չէ, ժողովուրդը, չեմպիոնների նկարները... Ինքն էլ Անդրանիկի օրացույցը հանեց, Անդրանիկի նկարով: Ըսի՛՛ էտի տուր ինձի, ինչ կեղնի: Առավ պակեց (համբուրեց), պակեց, կուլուցեց, տվավ ինձի: Հասանք յայլեն, իջավ, ըսավ. «Տղա, տու՛ր էդ նկարը, – ըսավ, – ես առանց էդ նկարի կրնամք քնիմ, չեմ կրնա քնիմ: Ես ըդրան մեռնիմ, էտի իմ պաշտպանն է»⁹⁷:

1970-ականներին Անդրանիկի արձանը կանգնեցնելը դեռևս այնպիսի համարձակ որոշում էր, որ Աշակունց այն տեղադրող Համլետ Դավթյանի ազգակից պաշտոնյան խորհուրդ էր տվել ասել, որ նա ոչ թե Անդրանիկի, այլ Վարդան Մամիկոնյանի արձանն է քանդակում: Եղբայրների օգնությամբ Համլետն իրենց բակ է բերում քարի մեծ կտոր, և մինչ իր հայրն ու եղբայրը կառուցում էին եղբոր տունը, նա նույն բակում քանդակում է Անդրանիկի կիսանդրին: Աշակունցի երիտասարդների օգնությամբ Անդրանիկի ծննդյան օրը 1980 թ. գիշերն արձանը տեղադրվում է գյուղի մուտքի մոտ՝ աչքի ընկնող մի բլրի վրա:

Արձանը հանելու իշխանության առաջին քայլերը բավականին մեղմ էին. փորձում էին համոզել այն տեղափոխել թանգարան, հանրային տարածքից «թաքցնելու» այլ լուծումներ գտնել: Սկսվում են համոզելու և ստիպելու երկար բանակցությունները: Գյուղացի երիտասարդներից կազմված կամավոր խմբերը հուշարձանի մոտ հերթապահություն էին սահմանել, որպեսզի այն որևէ մեկը չվնասեր կամ տեղափոխեր: Կանայք աջակցում էին՝ նրանց համար կերակուր պատրաստելով: Արձանի պաշտպանության համար ծավալվում է խորհրդային իրականությանը խորթ քաղաքացիական շարժում: Քանդակագործին փորձել են թաքցնել, որպեսզի հնարավորություն չտան նրան ձերբակալելու կամ համոզելու: Թեև ինքը՝ Համլետ Դավթյանը, կարծում է, որ այդ տարիներին իրեն ձերբակալելու լուրջ վտանգ չկար, իսկ իր թաքնվելու իրական նպատակը միայն համոզելուց խուսափելն էր: Նրա իմացածով այն ժամանակվա ՀՀ կոմկուսի առաջին քարտուղար

⁹⁶ Լ. Աբրահամյան, Գ. Շազոյան, ԴԱՆ, Շիրակի մարզ, Երազգավորս գյուղ, 2012:

⁹⁷ Նույն տեղում:

Կարեն Դեմիրճյանը հանգիստ էր ընդունել այս արձանը տեղադրելու լուրը:

Բողոքներն ավելի շուտ գյուղից էին տարածվել, որ փոխանակ Լենինի վնասված արձանը նորոգելու, դնում են Անդրանիկինը: Քանդակագործը փորձում է իր նախաձեռնությունը պաշտպանելու կարողություն ունեցող ազդեցիկ հովանավորներ գտնել: Անհաջող փորձ է անում հանդիպելու մարշալ Հ. Բաղրամյանին: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի հետ հանդիպումը ոչ մի արդյունք չի տալիս. կաթողիկոսը խոստովանում է, որ այս հարցի լուծումը «իր ուժերից վեր է»: Սա լավ օրինակ է ցույց տալու, թե ում էր ժողովուրդը տեսնում որպես իր շահերի իրական պաշտպան և հեղինակություն:

Արձանը մոտ 15 օր է մնում կանգնած, որից հետո քանդակագործն ինքն է նախաձեռնում այն հանելը՝ հիմնավորելով, որ փոխարենն ավելի մեծ մի արձան կտեղադրի: Ամենայն հավանականությամբ դա գյուղում ստեղծված լարվածությունը հանգուցալուծելու հարկադրված քայլ էր, հատկապես եթե հաշվի առնենք, որ այս արձանի պատմության պատճառով քանդակագործի քեռուն հեռացնում են գյուղխորհրդում զբաղեցրած բարձր պաշտոնից: Այն, որ պետության «պատժիչ գործողություններն» ուղղվել են ոչ թե անմիջապես կատարողի դեմ, այլ նրա ազգականի, քանդակագործը բացատրում է նրանով, որ «ԿաԳեԲեն ինձ չի նեղել, [որովհետև] մի քիչ խելամի տեղ է դրել»: Այսինքն՝ նրա վարքը համակարգի տրամաբանությունից դուրս էր, և պատժիչ գործողություններն ուղղվում են նրա այն ազգականի դեմ, ով համակարգի մաս է՝ հասկանալով, որ սա նույն քանդակագործի համար շատ ավելի ազդեցիկ հարված է, քան իր դեմ ուղղված գործողությունները: Կարևոր է ընդգծել, որ, փաստորեն, պետական համակարգն իր նպատակին հասնելու համար բավականին արդյունավետ օգտագործում էր համայնքային և ազգակցական կապերն ու հարաբերությունները: Ըստ Համլետ Դավթյանի՝ իշխանությունները նրան հետապնդելու առանձնապես ցանկություն չեն էլ ունեցել, քանի որ պետական անվտանգության մարմիններում նստած տեղացի պաշտոնյաները ներքուստ կողմ էին այս նախաձեռնությանը: Ինչպես հիշում է քանդակագործը, միակ հանդիպումը դատախազության ներկայացուցիչների հետ եղել է նրանից արձանը գնելու առաջարկի առիթով, որի մերժումին հետևել է դատախազի՝ «գնա, ես քո ցավն էլ տանեմ, գնա, ինչ ուզում ես արա» խոսքերը:

Քանդակագործն իսկապես պատրաստել է նոր քար, սկսել նոր հուշարձանի աշխատանքները, սակայն այն ավարտին չի հասցրել. գործն ընդհատել է՝ որպես ազատամարտիկ մեկնելով արցախյան պատերազմին մասնակցելու: Ինչպես ինքը բնութագրեց. «բրիչը փոխվավ գնեքով»:

Պատվանդանից իջեցրած արձանն անհայտ անձինք վնասել են: Հեղինակի ենթադրությամբ դա արել է «ԿաԳեԲեն», որպեսզի այնուամենայն

նիվ կանխի հետագայում արձանը տեղադրելու նոր փորձերը: Իսկ որոշակի վնաս հասցնողի ճակատագիրը նկարագրվում են որպես պատիժների մի շարան, ճիշտ այնպես, ինչպես սովորաբար նկարագրվում է սրբավայր ավերողների ձախողված և «վերևից պատիժ ստացած» ճակատագրերը. «դրա համար իր սաղ տուն հանգավ. ինքը Ռուսաստան մեռավ գնաց, կինը կուրացել է, էրեխեքն էլ ցվրված դետուդեն՝ ոչ կարան գտնեն իրար, ոչ էլ քան»: Վնասված արձանը հեղինակի վերանորոգումից հետո տեղափոխում են Թ-ալին և տեղադրում իր ընկերոջ տան կտորի վրա՝ փաստորեն տունը արձանի համար ծառայեցնելով որպես պատվանդան:

1960-80-ականներին ցեղասպանության թեմային անդրադարձը որպես կանոն դիտարկվում էր այլախոհության համատեքստում: Ինչպես ճիշտ նկատել է խորհրդային քաղբանտարկյալ և հայաստանյան այլախոհության պատմությունն ուսումնասիրող Վարդան Հարությունյանը, 1965 թ. բազմա-հազարանոց ցույցից հետո և իշխանությունները, և՛ այլախոհները վերանայեցին իրենց գնահատականները մարդկանց փողոց դուրս հանելու հնարավորության վերաբերյալ: Հասկացան, որ նույնիսկ ԽՍՀՄ-ում կարող են պոռթկումներ լինել: Ուստի անակնկալ չէ, որ այս շարժմանը հետևեցին ազգային արժեքների փնտրտուքի նկատմամբ խորհրդային իշխանությունների խստացումներն ու հետապնդումները⁹⁸: Եթե ազգային երգերի, պարի խմբերի, տարբեր մշակութային միջոցառումների հանդեպ իշխանություններն ավելի հանդուրժող էին դարձել, քանի որ դրանք կարելի էր տեղավորել «բովանդակությամբ՝ խորհրդային, ձևով՝ ազգային» խորհրդային բանաձևի մեջ, ապա հուշարձանի՝ հիշելու արժանի դեմքերի և դեպքերի ընտրության պայքարն արդեն այլ իմաստ էր ստանում. այն դառնում էր ազգային ինքնություն ձևավորելու հայտ, և «հիշողությանը» միտված այս նախաձեռնությունները խոսում էին ընթացիկ արդիական ազգայնական միտումների մասին:

Գյուղական մակարդակում նկարագրված այս քաղաքացիական շարժումների ազգային ձևաչափի դրսևորում կարելի է համարել Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի կառուցումը, որին կամավոր սկզբունքով մասնակցում էին և՛ գյուղերից եկած տարբեր շինջուկատներ, և՛ հանրապետական իշխանություններն էին հնարավորինս քողարկում հուշարձանի բուն իմաստն ու արագացնում շինարարական աշխատանքները, որպեսզի հասցնեն այն ավարտել, քանի դեռ Մոսկվայում «չեն փոշմանել» հուշարձանը կառուցելու թույլտվության համար⁹⁹:

⁹⁸ Վ. Հարությունյան, Այլախոհությունը խորհրդային Հայաստանում, Եր., «Վան Արյան», 2014, էջ 22-24:

⁹⁹ Լ. Աբրահամյան, Գ. Շադոյան, ԴԱՆ, Երևան, 2006, Ցեղասպանության զոհերի հիշատակի հուշահամալիրի համահեղինակ-ձարտարապետ Սաշուր Զալաշյան:

Կոմենտորատիվ գործողությունները՝ ինչպես արձանաշինությունը, այնպես էլ դրա շուրջը կատարվող ծիսակատարությունները դառնում էին ազգային ինքնության վերահաստատման և համախմբման առավել ազդեցիկ քայլերից: Բավական է հիշել Ծիծեռնակաբերդի ուխտագնացության մարդկային անվերջ հոսքը: Արձանաշինությունն ու դրա հետ կապված գործողությունները հաճախ ընկալվում են որպես հանրային հայտի մի նոր մակարդակ ավելի անցողիկ գործողությունների՝ երգերի, պարերի, բանաստեղծությունների համեմատ: Պատահական չէ, որ Աշնակի վերոհիշյալ քանդակագործը մինչև քանդակն անելու որոշումը նախաձեռնում է ազգային զարթոնքին ուղղված ազգային-հայրենասիրական գործունեություն. հիմնում է «Սասունի անտեսանելի մարտիկ» գաղտնի խումբը, որի միջոցով տարածում է ֆիդայիներին նվիրված երգեր, բանաստեղծություններ, քաղաքական բովանդակությամբ թռուցիկներ՝ ձգտելով այսպես պահպանել և հանրայնացնել ցեղասպանության մասին հիշողությունը: Նույն ուղղությամբ էին գործում նաև այլախոհական տարբեր կազմակերպություններ և խմբակներ: Անդրանիկի արձանի տեղադրումն աշնակցի քանդակագործը դիտել է որպես այս գործունեության տրամաբանական շարունակություն ու «մեկ քայլ առաջ»՝ խնդիրը հանրայնորեն վերահաստատելու և բարձրաձայնելու իրավունքի ձեռքբերում: Նույն իրավիճակն էր նաև Թալինի Աշնակ գյուղում Գևորգ Չաուշի տուն-թանգարանի, Թալինի Ներքին Սասնաշեն, Իրինդ, Շիրակի Ոսկեհասկ և այլ գյուղերում տեղադրված Անդրանիկի հուշարձանների դեպքերում: Ուշագրավ է, որ այս բոլոր դեպքերում նախաձեռնությունները «թուրքահայերին» էր, ովքեր, կարծես, Խորհրդային Հայաստանում «ազգային արժեքների իրավունքի» վերահաստատման ավելի շատ ջանքեր էին գործադրում:

ԱՐՁԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ԿՈՒՌՔ, ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ «ԿՈՒՌՔԵՐԻ» ԱՐՁԱՆՆԵՐԸ

Արձանների հանդեպ նման վերաբերմունքի ակունքները հարկավոր է փնտրել խորհրդային գաղափարախոսության ամրապնդմանն ուղղված ամբողջատիրական կառավարման մեխանիզմների նույն զինանոցում¹⁰⁰: Խորհրդանշաններ հորինող և դրանց շուրջ զգայական հագեցած ծեսեր սահմանող հասարակարգերում արձանների հանդեպ որպես կանոն սեր-

¹⁰⁰ Յմմտ. X. Арендт. Истоки тоталитаризма, էջ 451-478; Փ. Серс. Тоталитаризм и авангард, М.: Прогресс-Традиция, 2004:

մանում են սրբազնացած վերաբերմունք¹⁰¹: Արձանի տեղադրումը գեղագիտական-մշակութային երևույթից վերաճում է գաղափարախոսական-քաղաքականի, իսկ ներկայացվող հերոսների ընտրությունը վկայում է արժեհամակարգի և «հավատքի» ընտրության մասին: Արձանների միջոցով գաղափարախոսության տարածումն ու դրանք ծիսատոնական համալիր ներառելն ամբողջատիրական համակարգին բնորոշ առօրյա պրակտիկաներից են, ինչի ուղղությամբ աշխատում է ողջ պետական մեքենան՝ փորձելով խորհրդային արձանների պաշտամունքը հաստատող գործողություններն ընդգրկել նաև ընտանեկան ծիսակարգ¹⁰²:

«Պատկերապաշտություն» ամրապնդվում էր ոչ միայն հանրային տոնածիսական միջոցառումներով, այլև պատժիչ գործողություններով: Առաջնորդների պատկերներին ուղղված կամա թե ակամա «վնասակար» գործողությունները շատերի համար կարող էին ունենալ քաղաքական հետապնդումների, ազատության սահմանափակման կամ նույնիսկ կյանքի գին¹⁰³: Այս վախն աչքի առաջ ունենալով՝ խորհրդային քաղաքացին երբեմն հայտնվում էր անելանելի իրավիճակներում: Օրինակ, հետևում էին, որպեսզի զուգարանի թղթի տեղ չօգտագործվեն կոմկուսի առաջնորդների պատկերներով թերթերը կամ գրքից պոկած նման էջերը: Չովասար գյուղում մեզ պատմեցին մի դեպք, երբ երիտասարդ կինը, իր առաջին աշխատավարձը ստանալով, ստիպված էր այն ամբողջությամբ ինչ-որ տեղ թաղել, քանի որ խորհրդային ռուբլու, թղթադրամի, վրա պատկերված Լենինի երկու աչքերն իր ստացած փողի վրա ասեղով ծակած էին: Համակարգի դեմ ուղղված մեկի այսօրինակ բողոքի ակցիան կամ «վուդուական» կախարդությանը հարիր չարաճճիությունը մեր գրուցակցի համար ունեցավ մեկ աշխատավարձի գին:

Խորհրդային հասարակության մեջ արձանն իսկապես վերաճում է մի կուռքի, որի թե՛ փառաբանող, թե՛ դրա դեմ ուղղված գործողությունների հիմքում ընկած է մի տրամաբանություն. հանրային տարածքում տեղադրված արձանը խորհրդանշում է ոչ այնքան որոշակի հերոս կամ իրադարձություն, որքան գաղափարախոսության հաստատման միջոց է: Ուստի և «արձանա-

¹⁰¹ Հմմտ. Գյուղատնտեսության համամիութենական ցուցահանդեսի համար Ստալինի 25-մետրանոց երկաթետոնն արձանի մեջ իր մանրակերտը տեղադրելու օրինակը (1939 թ.), որը խոսում է ծիսականացված և կրոնականացված վերաբերմունքի մասին նույնիսկ արձանը պատրաստելու ընթացքում: *В. Палерный. Культура два, М.: Новое литературное обозрение, էջ 203-204:*

¹⁰² Տե՛ս *Ch. Lane. The Rites of Rulers. Ritual in Industrial Society – The Soviet Case, Cambridge: Cambridge university press, 1981; Գ. Շագոյան, «Յոթ օր, յոթ գիշեր»*. հայոց հարսանիքի համայնապատկեր, էջ 359-361:

¹⁰³ Հմմտ. Զ. Արարատովի հետ տեղի ունեցած նման մի պատմություն. *А. Гарезинян. Отечество и честь Христофора Араратова // Новое время (2013-05-25) <<http://www.nv.am/lisa/27869-2013-05-25-06-14-47>> (05.08.2014):*

մարտը» պետք է ընկալել որպես գաղափարական հարցերի շուրջ իշխանության հետ բանավեճ սկսելու փորձ, քաղաքացիական անհամաձայնությունն արտահայտելու միջոց:

Այս առումով հատկապես ուշագրավ են խորհրդային բնակավայրերի գլխավոր հրապարակներում տեղադրված հերոսների արձանների հետ կապված ընդվզման դեպքերը, ինչը, ըստ էության, կարելի է համարել տարբեր հասարակական համակարգերի տեսլականների միջև պայքար: Պատահական չէ, որ խորհրդային պետության փլուզմանը նախորդեց «արձանամարտի» մի մեծ «հաղթարշավ»¹⁰⁴: Եվ նույնիսկ այսօր ռուս-մերձբալթյան բարդ հարաբերությունների կամ ռուս-ուկրաինական պատերազմի մաս են կազմում անցյալից մնացած խորհրդային տարբեր, այդ թվում՝ Լենինի, հաճախ նաև՝ «Ազատագրող խորհրդային զինվորի» արձանների շուրջը կատարվող միջոցառումները կամ այդ արձանների դեմ ուղղված գործողությունները: Երկբևեռ վերաբերմունք կա նաև բուն ռուսաստանյան հասարակության ներսում՝ կապված Երկրորդ համաշխարհային պատերազմի տարեկիցի առիթով Մտալինին նոր արձաններ կանգնեցնելու նախաձեռնություններին¹⁰⁵:

Անցյալի վերաբերյալ մարտնչող հայեցակարգերի «արձանամարտային» դրսևորումներից կարելի է համարել նաև Հյուսիսային Կովկասը հպատակեցրած Երմոլովի արձանի դեմ տեղացի ժողովուրդների պայքարը, որ պարբերաբար արտահայտվել է նաև խորհրդային շրջանում: Նույն շարքում է տեղավորվում Անդրանիկի արձանը Սոչի քաղաքի մոտ գտնվող Լազարևսկ գյուղից հանելու Թուրքիայի պահանջը՝ սպառնալիքով, որ այլապես Թուրքիան չի մասնակցի Սոչիի օլիմպիադային: Եվ ՌԴ-ն կատարեց այդ պահանջը. ցեղասպանությունից փրկված թուրքահայերի բնակավայրից հանեց ռուսական բանակի գեներալի արձանը:

Ուշխորհրդային շրջանում շատ հանրապետություններում ազգային-ազատագրական պայքարի գրեթե պարտադիր խորհրդանշանային գործողություններից էր դարձել կենտրոնական հրապարակներում կանգնեցված Լենինի հուշարձանի հեռացումը: Նույնը տեղի ունեցավ Հայաստանում: Երևանում Լենինի անվան հրապարակից Լենինի արձանի հեռացումը վերածվեց յուրօրինակ ծեսի՝ քարկոծելուց մինչև ծիսական հրաժեշտի՝ մանր

¹⁰⁴ Հայաստանում դրա դրսևորումների մասին տես *Ս. Աբրամյան*. Երևան: память и забвение в организации пространства постсоветского города // Антропологический форум, N 12, էջ 248-271.

¹⁰⁵ Հմմտ. В Липецке установили памятник Сталину // *Gorod48.ru* <<http://gorod48.ru/news/314858/>> (7.05.2015); Памятник Сталину в Липецке расценили как оскорбление чувств верующих // *Gorod48.ru* <<http://gorod48.ru/news/314858/>> (6.05.2015); «Мемориал» призвал законодательно запретить прославление Сталина // *Lenta.ru* <<http://lenta.ru/news/2015/05/05/stalin/?f>> (5.05.2015):



Նկ. 18. Լենինի արձանը Լենինականում, դեկտեմբեր 1988 թ.: Լուսանկար՝ Յու. Պավլովի:

դրամ նետելով¹⁰⁶: Երկրաշարժից ավերված Գյումրիում Լենինի արձանն (նկ. 18) ուղղակի փակեցին մի փայտաշեն ծածկով, որը հիշեցնում էր քաղաքը պատած տնակները¹⁰⁷: Սա առիթ դարձավ, որպեսզի գյումրեցիները կատակեն, որ Լենինն արտահերթ տնակ է ստացել: Գյումրիում Լենինի այս արձանի շուրջ բազմաթիվ անեկդոտներ էին հյուսվում դեռ խորհրդային տարիներին: Այսպես, «Արարատ» ֆուտբոլային թիմի՝ 1973 թ. փայլուն խաղից հետո գյումրեցիներն իբրև թե առաջարկել էին Լենինի փոխարեն տեղադրել թիմի լավագույն խաղացողի արձանը, և երբ այս առաջարկը մերժվել էր, հաջորդ առավոտ Լենինի արձանի մեջքի կողմից գրել էին 11՝ այդ խաղացողի համարը¹⁰⁸: Կարելի է ասել, որ Ս. Մերկուրովի քանդակած այս արձանը մտել էր քաղաքի ֆուլկլորային գավեշտալի պերսոնաժների շարքը և իր հանդիսավոր նշանակությունը մասամբ կորցրել դեռ խորհրդային տարիներին:

Խորհրդային շրջանում Լենինի անունը կրող այս քաղաքում այդ շրջանից մնացել է ևս մի ուշագրավ հուշարձան՝ մեծ սյուն, վրան նշված «1984» (ի

¹⁰⁶ Լ. Աբրամյան. Борьба с памятниками и памятью в постсоветском пространстве (на примере Армении) // Acta Slavica Iaponica XX, 2003, էջ 25-49; L. Abrahamian. Armenian Identity in a Changing World, էջ 283-292:

¹⁰⁷ Գ. Շառոյան. Очерки антропологии города, пережившего землетрясение // Laboratorium 2010, N 1, էջ 165-166:

¹⁰⁸ Լ. Աբրամյան. Жизнь и смерть памятников в постсоветском Ереване: мифы, герои, антигерои (ծեռագիր՝ Հումբոլդի համալսարան, Բեռլին), 2006, էջ 37-38:



Նկ. 19. «1984», Գյումրի: Լուսանկարը՝ Գ. Շաղոյանի:

հիշատակ քաղաքի վերանվանման 60-ամյակին)՝ որպես Իվանովո-Վոզնեսենսկ քաղաքի տեքստիլագործների հետ բարեկամության նշան [նկ. 19]: Սակայն հետխորհրդային արվեստաբանների համար այն վերաիմաստավորվել էր իբրև Ջ. Օրուելի «1984 թվական» անմահ աշխատանքի հղում¹⁰⁹, առավել ևս, որ մինչև 2006-2007 թթ. այս սյան կողքին դեռ մնում էր Լենինի մեկ այլ հուշարձան, որը մի օր անաղմուկ անհետացավ, ինչպես ենթադրում են գյումրեցիները՝ «ձուլարանում ձևափոխվելով մեկի գրպանին հարմար փողի»:

Խորհրդային արձանների խմբագրման և վերաիմաստավորման ձևերից մեկը դրանց «վերանվանումն» է: «Ժողովրդական վերանվանում» տեղի ունեցավ, օրինակ, Սուրեն Սպանդարյանի¹¹⁰ արձանի դեպքում, ում անվան հրապարակն ավելի հեշտ եղավ վերանվանել Գարեգին Նժդեհի անունով, քան փոխել հրապարակում տեղադրված Ս. Սպանդարյանի արձանը: Հետխորհրդային սերունդը կամ քաղաքի նոր բնակիչներն այլևս Նժդեհի անունը կրող հրապարակում գտնվող Սպանդարյանի

արձանը հաճախ ընկալում են իբրև Նժդեհի և ժամադրվում ոչ թե Նժդեհի հրապարակում, այլ «Նժդեհի արձանի մոտ»:

Արձանի «վերանվանումը» կարող էր ծավալվել ոչ միայն բանավոր մակարդակում, այլև արձանի վրա տեղադրվող տեքստի ֆիզիկական փոփոխությամբ, քանի որ այն հնարավորություն էր տալիս ամրագրելու նոր՝ ժամանակի ընթացքին համապատասխան առաջացած վերընթերցումը: Օրինակ, Տաթև գյուղում խորհրդային տարիներին տեղադրվեց մի հուշակոթող, որը նվիրված էր 1921 թ. Տաթևում սպանված բոլշևիկների հիշատակին և ուներ փակցված մարմարե համապատասխան հուշագրություն¹¹¹: «1990-ա-

¹⁰⁹ Գ. Շաղոյան, ԴԱՆ, Գյումրի, 2006:

¹¹⁰ Սուրեն Սպանդարյան - (1882-1916) առաջին հայ բոլշևիկներից, հայտնի է նաև որպես լրագրող, գրաքննադատ:

¹¹¹ Դ. Խառատյան, Դ. Մարություն, ԴԱՆ, Սյունիքի մարզ, Տաթև գյուղ, 2012:



Նկ. 20. «Զանգեզուրի փրկության սուրբ գործի համար 1918-1921 թթ. նահատակված հայ մարտիկների անմահ հիշատակին», Տաթև: Լուսանկարը՝ Հ. Մարությանի:

կան թվականների սկզբին հուշարձանի վրա եղած գրությունը հանվել կամ ջարդվել է և փոխարինվել Հայաստանի Առաջին հանրապետության գինանշանի ու Գարեգին Նժդեհի պատկերներով՝ հետևյալ գրությամբ. «Զանգեզուրի փրկության սուրբ գործի համար 1918-1921 թթ. նահատակված հայ մարտիկների անմահ հիշատակին»¹¹² [Նկ. 20]: Տաթևցիներն այն միանշանակ չեն ընդունել, և մինչ օրս էլ տարբեր գնահատականներ են հնչում, թե որքանով էր արդարացված այս սրբագրումը, և ինչպիսի այլ լուծումներ կարելի էր գտնել խորհրդային շրջանի հուշարձանների համար: Չոհերի հիշատակին նվիրված հուշատախտակի հեռացումն ընկալվել էր նախ իբրև անարգանք զոհված մարդկանց և պատմության նկատմամբ: Առավել ևս, որ այդ հուշարձանն ընդունվում էր որպես Տաթևի կիրճում զոհված բոլշևիկների գերեզման, իսկ ոմանք էլ կարծում էին, որ այդտեղ են թաղվել զոհ-

¹¹² Հ. Մարության, Տաթև գյուղի գյուղապետարան // Armenia Total(itar)is, <<http://armeniatotalitaris.am/?p=1699>> (10.11.2014):

վածների ոսկորները: Որպես ավելի ընդունելի լուծում տաթևցիներն այսօր տեսնում են նույն հուշաքարի հակառակ կողմից մեկ այլ գրության ավելացումը կամ այդ հուշակոթողի կողքին Նժդեհին նվիրված մեկ այլ հուշարձան կանգնեցնելը¹¹³:

Խորհրդային այս կոթողի առաջին գրության մեջ նշված իրադարձություններն ինքնին արժանի են առանձին ուսումնասիրության, որտեղ ամենաարդյունավետը թերևս կարող էր լինել հարցն «անձնական» և «մշակութային» հիշողությունների համատեքստում դիտարկելը: 1921 թ. իրադարձությունների շուրջ Տաթևի գյուղապետարանում ծավալած մեր քննարկումը ցույց տվեց, որ այդ շրջանի՝ Տաթևի ողբերգական դեպքերի մասին գրույցի մասնակիցներից յուրաքանչյուրն ուներ իր տարբերակը: Այս իրադարձություններին առնչվող նաև հրապարակած նյութերի համադրումը, որը ջանապիրաբար արեց Հարություն Մարությանը¹¹⁴, նույնպես չի հստակեցնում իրավիճակը, փոխարենը թույլ է տալիս ենթադրել, որ այդ աղբյուրների մի մասը հասել է գյուղացիներին՝ ուղիղ կամ միջնորդավորված և, տեղում յուրովի մեկնաբանվելով, վերածվել մի նոր տարբերակի, մի մասն էլ, թերևս, տեղացիների պապերից փոխանցված հիշողությունների առանձին պատասխանների արձագանքն է: Բոլոր դեպքերում մույթ են մնում այս իրադարձությունների գրեթե բոլոր հանգամանքները՝ քանի մարդ է սպանվել, ինչ ճանապարհով (գնդակահարվել են և հետո նետով ձորը, թե սպանվել են նետ(վ)ելով), ովքեր էին զոհվածները (հայ կոմունիստներ, նրանց աջակցող գյուղացիներ, կարմիրբանակայինի համազգեստով թուրքեր, թե ռուս կարմիրբանակայիններ, ովքեր այսօրվա տաթևցու մեկնությամբ ներկայացվում են իբրև մալական, քանի որ Հայաստանում ապրող իր իմացած ռուսն այլևս նույնանում է մալականի հետ), ով է տվել հրամանը և ինչ մասով, արդյոք եղել է հրամանից դուրս կատարողների նախաձեռնություն ևն: Այս իրադարձությունները հայաստանյան քաղաքացիական պատերազմի այն եզակի դրվագներից է, որ էկրանավորվել է, սակայն դեպքերի առասպելականացումը սրանով

¹¹³ Նույն տեղում, տես նաև Գ. Խառատյան, Գ. Մարության, ԴԱՆ, Տաթև, 2012:

¹¹⁴ Գ. Մարության, Տաթևի գյուղապետարան // «Armenia Total(itar)is» խմբի դաշտային նյութերի արխիվ, 2013: Նյութում նաև որպես հավելված ծաղկաքաղ է արվել 1921 թ. Տաթևի իրադարձություններին վերաբերող հրապարակված հետևյալ աշխատանքներից. Ա.Ս. Դալկոբյան, Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թվականին: Սովետական իշխանության ամրապնդումը: 2. Փետրվարյան խռովության ջախջախումը // «Հայ ժողովրդի պատմություն», հատոր VII, Երևան, ՀԱՍՄ ԳԱ հրատ., 1967, էջ 154, В. Овсепян. Гарегин Нжде и КГБ. Воспоминания разведчика. Ер., «Нораванк», 2007, էջ 22, 24, 82, 216, 218, 220-224, <http://www.noravank.am/upload/pdf/301_ru.pdf>, Վ. Ղազարխանյան, Չանգեզուրի ինքնապաշտպանությունը // Հայոց պատմություն, հատոր IV, գիրք առաջին. Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Եր., 2010, էջ 339-353, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը // «Հայրենիք» ամսագիր, 1923, թիվ 3, էջ 45, Ա. Սիմոնյան, Չանգեզուրի գոյամարտը (1920-1921 թթ.), Եր., ԵՊՀ հրատ., 2000, էջ 462-465:

չի ավարտվել, այսօր դեռ բացահայտվում են նոր առասպելականացված սյուժեներ (օր. մալականների համար տաթեցիների թխած շատ մեծ հացը, որի մեջ բանտարկյալներին փախչելու համար պարան են փոխանցել և այլ դրվագներ): Այս առասպելականացումը հասնում է նրան, որ մի նոր պատմություն է հայտնվում՝ կապված խորհրդային հուշարձանի հետ, որ իբրև թե դպրոցականները հավաքել են ձոր նետվածների ոսկորները և թաղել հուշարձանի տակ: 1921 թ. Տաթևում տեղի ունեցած իրադարձությունների այս հիշողություններն արժանի են բանավոր պատմության դասականներից՝ Ա. Պորտելլիի¹¹⁵ մոտեցմանը, որը ցույց կտար, թե ինչու և ինչպես այս դրվագի մասնակից տարբեր խմբեր և նրանց ժառանգները մինևույն դեպքերն այսպես տարբեր են հիշում, ինչ աղբյուրներից են նրանք սնվում, ինչպես են նրանց հիշողության մեջ հատվում խորհրդային, հետխորհրդային պատմագրությունն ու իրենց ընտանեկան պատմությունները:

Արձաններ հանելու գաղափարական շեշտադրումը որոշ իմաստով հենց կոմունիստական իշխանություններն էին սնուցել, ովքեր «անձի պաշտամունքի» դատապարտման տարիներին միջոցառումների շարք էին սկսել ողջ ԽՍՀՄ-ում սփռված ահռելի քանակությամբ Մտալինի, պակաս տարածված՝ Բերիայի արձանները վերացնելու ուղղությամբ: Ընդ որում դա արվում էր մեծ հանդիսավորությամբ՝ արձանի հեռացման արարողությանը մասնակից կամ ակնատես հանրության առաջ դատապարտող ճառերով: Այսինքն՝ նույնիսկ «կուռքերից» հրաժարվելու լեզուն մնում էր «կռապաշտական», ինչը ցուցում էր, որ գործ ունենք ոչ թե գաղափարախոսական փոփոխության, այլ ընդամենը «կուռքերի» վերադասավորության հետ՝ մերժելով Մտալինին, պահպանել Լենինի «անբիծ կերպարը» և միշտ տեղ պահել հերթական հնարավոր «հերոսի» համար:

Խորհրդային արձաններից երևի միայն Հայրենական պատերազմին նվիրված հուշակոթողներն են, որ, լինելով ամենատարածվածը, շարունակում են գործել իրենց խորհրդային համատեքստում: Այս արձանների կողքին հաճախ տեղադրում են Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշաքարեր կամ ավելի համեստ մի նոր հուշարձան: Այսպիսով, «թշամու դեմ պայքարում նահատակված հերոսների» հուշարձաններն այս դեպքում ոչ թե վերաիմաստավորվում են, այլ տեղի է ունենում իմաստի «կրկնապատկում»:

Հակառուսական արձանամարտը, որը Երևանում 1988 թ. տևեց ընդամենը 3 օր, նախևառաջ հուլիսի 4-ին Զվարթնոցի արյունալի դեպքերի արձա-

¹¹⁵ A. Portelli. The Massacre at the Fosse Ardeatine: history, myth, ritual, and symbol // K. Hodgkin, S. Radstone (Eds.). Contested Pasts. The Politics of Memory. London: Routledge & Kegan Paul, 2003, էջ 29-41:

գանքն էր¹¹⁶, երբ թիրախավորվեցին մի երկու ռուս գրողների կիսանդրիներ, որոնք հետագայում վերականգնվեցին¹¹⁷: Արձանամարտի ամենաառաջին զոհը դարձավ Ղուկաս Ղուկասյանի՝ Հայաստանում կոմերիտական և պիոներական շարժման հիմնադրի, պայթեցված արձանը¹¹⁸:

Ալեքսանդր Մյասնիկյանի¹¹⁹ արձանն անսպասելիորեն ձեռք բերեց կոմենտրատիվ ամբողջովին այլ՝ այս քաղաքական գործչի հետ որևէ կապ չունեցող, գործառույթ: 2008 թ. մարտի 1-ին արձանի շուրջը հավաքված ընդդիմադիր գանգվածի դեմ էին հանվել հայրենի գորամիավորումներ: Բախումների արդյունքում այդ գիշեր զոհվեց 10 մարդ: Չնայած նրանք զոհվեցին այլ վայրերում, բայց քանի որ բողոքի ցույցը ղեկավարելու համար արձանի պատվանդանը միակ հարմար վայրն էր, ապա այն դարձավ այդ օրվա խորհրդանիշը, և 10 զոհերի հիշատակին մարտի մեկին ավանդական դարձած երթի վերջնակետն այս հուշարձանն է, որի մոտ դնում են ծաղիկներ, ծաղկեպսակներ, տեղի է ունենում մոմավառություն¹²⁰: Այսինքն՝ տվյալ դեպքում արձանն ամբողջովին կորցնում է իր նախկին բովանդակությունն ու ծառայում որպես հետխորհրդային Հայաստանի քաղաքային լանդշաֆտում որոշակի քաղաքական բռնության հիշատակման պարբերացման վայր: Այսօր «գնալ Մյասնիկյանի արձանի մոտ» նշանակում է գնալ՝ մերօրյա քաղաքական բռնությունների զոհերի հիշատակը հարգելու: Սա, սակայն, չի նշանակում խորհրդային ռեժիմի կապը ներկայիս իշխանությունների ռեժիմային վարքի դրսևորումների հետ: Արձանի ողջ խորհրդային բովանդակությունը ոգեկոչման այս ծեսում իսպառ բացակայում է:

1988 թ. Ղարաբաղյան շարժման ազդեցությամբ «հակակոմունիստական» արձանամարտը շատ կարճ տևեց: Գյուղերում, որտեղ, ի թիվս համամիութենական առաջնորդների պատկերների, ընդունված էր «պաշտել» նաև համերկրացի կոմունիստական գործիչներին, այդ շարժումն այժմ ստանում է հակառակ ուղղություն: Այսպես, օրինակ, Հաղպատում, որտեղ ծնվել է,

¹¹⁶ 1988 թ. հուլիսի 4-ին ԽՍՀՄ-ի ՆԳՆ զորքերը գնեռալ Ա. Մակաչովի գլխավորությամբ ուժ կիրառեցին Զվարթնոց օդանավակայանի աշխատակիցների գործարդող դադարեցնելու, ինչի արդյունքում զոհվել էր մեկ մարդ, և մոտ 100-ը տեղափոխվել էին հիվանդանոց:

¹¹⁷ L. Abrahamian. Armenian Identity in a Changing World, էջ 281:

¹¹⁸ Л. Абрамян. Жизнь и смерть памятников в постсоветском Ереване: мифы, герои, антигерои (ձեռագիր, Զումբուլդի համալսարան, Բեռլին), 2006, էջ 17-18:

¹¹⁹ Ալեքսանդր Մյասնիկյան – (1886-1925) բոլշևիկ գործիչ, 1921 թ. նշանակվել է Հայաստանի Ժողովմիտրիի նախագահ, 1922 թ. Սնորֆեդերացիայի կազմակերպիչն ու ղեկավարն էր: Զոհվել է 1925 թ. ավիավթաբից:

¹²⁰ Ուշագրավ է, որ Ալ. Մյասնիկյանը, Հայաստանում բոլշևիկյան իշխանության շրջանը սկսելով, բարի համբավ է թողել հանրային հիշողության մեջ և, թերևս, բոլշևիկյան ինտրիգների առաջին զոհերից մեկն էր: Կան ենթադրություններ, որ 1925 թ. ինքնաթիռի վթարը, որի հետևանքով նա զոհվեց, կազմակերպել էր Լ. Բերիան:

ըստ տեղացիների, «առաջին հայ բոլշևիկը»՝ Ասատուր Կախոյանը¹²¹, և գյուղի կենտրոնական մասում՝ գյուղապետարանի դիմաց, կանգնեցված է նրա հուշարձանը, եթե 1990-ականների սկզբին այդ արձանի վրա ձու էին նետում, ապա այժմ մտածում են, թե ինչպես վերանորոգեն և թարմացնեն¹²²: Թեև Ասատուր Կախոյանը նաև 1937 թ. բռնությունների զոհերից է, բայց նրա արձանը տեղադրված է ոչ թե որպես զոհի, այլ որպես հաղթանակած առաջին բոլշևիկի: Հայաստանում «բոլշևիկի» կերպարի հանդեպ որևէ վերանայում ըստ էության չկատարվեց, ինչը նպաստում է «բոլշևիկի» դրական կերպարի շրջանառությանը: Սրա առավել զավեշտալի դրսևորումներից էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին հանրային հարթակից նրա կուսակցական ընկերներից մեկի կողմից «վերջին բոլշևիկ» անվանելը: Կուսակիցն անկեղծորեն փորձում էր այսպես մեծարել հետխորհրդային պետության նախագահին¹²³: Որոշ «բոլշևիկների» շարունակական մեծարմանը նպաստում է այն, որ երկար ժամանակ նրանք եղել են տվյալ տեղանքի համար հպարտության առարկա և «օրինակելի հերոս»՝ անկախ տվյալ բնակավայրի, շրջանի կամ հասարակության համար նրանց իրական նպաստից:

ԶԳՐՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ...

Խորհրդային կայսրության փլուզումից հետո բազմաթիվ նախաձեռնողներ փորձում էին գտնել զանգվածային գնդակահարության վայրեր: Շատ դեպքերում այդ որոնումներն ավարտվեցին անմեղ զոհերի ոսկորների վերահուղարկավորմամբ և/կամ հուշաքար դնելով¹²⁴: Հարևան Վրաստանում նույնիսկ Գերմանիայից հատուկ սարքավորումներ են ձեռք բերել՝ նման վայրերը հայտնաբերելու համար: Հայաստանում չնայած շատերը գիտեն խորհրդային շրջանի զանգվածային գնդակահարությունների կամ գաղտնի թաղումների վայրերը, բայց դրանք չեն արժանացել որևէ հուշակոթողի: Օրինակ՝ Շիրակի մարզի սահմանային Հայկավան գյուղում պատմում են, թե ինչպես 1937 թ. իրենց գյուղի միջով մեքենայով դիակներ են տեղափոխել Թուրքիային սահմանակից Վարդանլու լքված գյուղ: Այդ տարածքն

¹²¹ Ասատուր Կախոյան – (1874-1937) հայ հեղափոխական գործիչ, 1898 թ. անդամակցել է կոմկուսին, Թիֆլիսյան առաջին մարքսիստական խմբի անդամ էր: 1900 թ. սկզբներին Ա. Կախոյանի, Յ. Փիլոսյանի, Գ. Կոզիկյանի նախաձեռնությամբ լույս է տեսել «Բանվոր» ձեռագիր թերթը: 1937 թ. գոհ է գնացել ստալինյան բռնաճնշումներին:

¹²² *ՅՄԻ ԴԱՆ*, Լոռի, Յաղպատ, 2014:

¹²³ Մանվել Գրիգորյանը Սերժ Սարգսյանին. «վերջին բոլշևիկ» // 15 փետրվարի, 2014, <<https://www.youtube.com/watch?v=I9ofidEXTWM>> (16.11.2014):

¹²⁴ A. Etkind. Post-Soviet Hauntology, էջ 182-200:

այժմ հսկում են ռուս սահմանապահները, և այստեղ հասնելու համար անհրաժեշտ է պետամարմինների գրավոր թույլտվությունը: Անկախ այդ վարչական խնդրից, այս գյուղում ոչ մեկի մտքով չի էլ անցել այստեղ թաղվածների (այդ թվում՝ իրենց հինգ համագյուղացու) հիշատակին մի հուշաքար տեղադրել:

Ման մեկ այլ «չնշված» տարածք Գորիսին հարակից Շորին ձորն է, որտեղ գնդակահարվել են բազմաթիվ դատապարտյալներ, ում դիակները ծածկում էին հողի բարակ շերտով և բերում դատապարտյալների նոր խմբաքանակ¹²⁵: Չնայած այստեղ հուշաքար չկա, սակայն տեղացիների մեջ ամբաստանվել է այն պատկերացումը, որ այս ձորն անիծված է:

Նեղ շրջանակներում հայտնի է նաև, որ Սարդարապատի ճակատամարտի յոթ հանրահայտ սպաներ գնդակահարվել և թաղվել են Նոր Նորքի կիրճում՝ ներկայիս Երևանի կենդանաբանական այգու տարածքում: Այնուամենայնիվ այդ վայրերը որևէ հանրային հիշատակման կամ հուշարձանացման չեն արժանացել:

Այսպիսով, անցյալի հիշատակման և «հուշարձանացման» վերոհիշյալ օրինակները ցույց տվեցին պաշտոնական և անձնական հիշողությունների փոխհարաբերության այն բարդ կծիկը, որի մի ծայրից գործվում է պաշտոնական պատմագրությունը, մյուս ծայրը խճճված է անձնական հիշողությունների հյուսվածքում: Հաճախ դրանք երկարում կամ կրճատվում են մեկը մյուսի հաշվին: Նույնիսկ այն դեպքում, երբ պաշտոնական դիրքորոշումը կարծես հակված էր մեղանչելու ստալինյան զոհերի առաջ, վերջիններիս հուշարձանացումը հաճախ բախվում էր միջին օղակի որոշում կայացնողների գաղափարական պահպանողականությանը: Այսպես, Ա. Տեր-Գաբրիելյանը հիշում է, թե ինչպես մերժվեց նման հուշարձան դնելու իր առաջարկն այն տարիներին, երբ արդեն ետևում էր XX համագումարն ու հնչել էր անձի պաշտամունքը մերկացնող խրուշչովյան հայտնի ելույթը, ամենուրեք հանվում էին Ստալինի արձանները: Այս չընդունված առաջարկը, սակայն, դրդել էր Ռ. Իսրայելյանին մի ճեպանկար նախագիծ պատրաստել ապագայում նման հուշարձան կառուցելու համար:¹²⁶ Ստալինյան զոհերին նվիրված հուշարձանների նախագծեր, պարզվում է, պատրաստել էին տարբեր ճարտարապետներ և նկարիչներ, կրկին հիմնականում՝ զոհերի ժառանգներից: Սակայն այդ նախագծերը կյանքի էին կոչվում որպես այլ իրադարձություն-

¹²⁵ Գ. Խառատյան, Գ. Մարության, ԴԱՍ, Սյունիքի մարզ, 2012:

¹²⁶ Տե՛ս Ա. Տեր-Գաբրիելյան, Անցյալի անհայտ էջեր. Տխուր հուշարձաններ // Առավոտ, 12.04.2013, <<http://www.aravot.am/2013/12/04/411656/>>, նույն տեղում տե՛ս նաև Ռ. Իսրայելյանի ստալինյան զոհերին նվիրված հուշահամալիրի ձեպանկարը:

ներին նվիրված հուշարձաններ: Օրինակ, Լենինգրադում բնակվող Լևոն Լազարևի նման մի նախագիծ իրագործվում է որպես «Չիլիի ֆաշիստական դիկտատուրայի զոհերին» նվիրված հուշարձան:¹²⁷

Այսպիսով, պաշտոնական պատմագրությունը որպես կանոն պարտադրում է իր մեկնությունն ու, սպասարկելով իշխող խմբին, ճանապարհ հարթում նրանց համար ընդունելի հերոսների «հուշարձանացմանը»: «Միկրո-պատմությունը» իրեն հասանելի միջոցներով դիմակայում է այս հոսանքին՝ ընդհուպ մինչև առանձին մարդկանց անձնական ուժերով հուշարձան դնելն ու զուգահեռ «ոչպաշտոնական» հուշագրություն և նույնիսկ պատմագրություն ստեղծելը: Խորհրդային կայսրության կործանումն ու վերադառնալու փորձերը լավագույնս արձանագրում են պատմության վերընթերցման ճկուն հնարավորություններն ու կարծր «արձանային» լանդշաֆտում դրանց հարմարեցման հետ կապված դժվարությունները: Ուստի պատմության հետ առերեսվելու հնարավորությունների և քննարկելի դաշտի ծավալները կարծես հակառակ համեմատական են արձանների քանակին և հաճախ չափերին: Բավական է հիշել խորհրդային և ֆաշիստական արձանների դեպքում դրսևորած ծավալապաշտությունը: Սրա կողքին հիշենք, որ մեզ շրջապատում են բազմաթիվ «չդրված հուշարձաններ»՝ «մեծ արձաններ» դնողների զոհերի չնշված կյանքերն ու ողբերգական մահերը, որոնք լավագույն դեպքում պատմության դասագրքում վերածվում են մի պարզ թվի:

¹²⁷ Նույն տեղում:

ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ԲՈՒՆԱԴԱՏՎԱԾՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ

«ԻՆՉ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԷՐ՝ ԱԽՊՈՐՍ ՏԱՐԱՎ,
ՄԱՐԴԻՍ ՏԱՐԱՎ, ՊԱՏՐՈՆԻՍ ՏԱՐԱՎ,
ԲՈՒՈՐԻՆ ՏԱՐԱՎ...»

*Հարցազրույց Վոլոդյա Սամսոնի
Մարտիրոսյանի (ծնվ. 1950 թ.) հետ:
Գյուղ Ներքին Մագրա/Շիշկերտ/Կապան
(Սյունիքի մարզ), 8 հունիսի 2012 թ.:
Զրուցավար՝ Հարություն Մարության:*

Ծնվել եմ 1950 թ. Ղափանի շրջանի Շիշկերտ գյուղում (սկ. 21): Ծնվել եմ գյուղացու ընտանիքում: Յոթ երեխա ենք եղել. երեք երեխան ծնվել են մինչև հորս արքայությունը, չորսն էլ արքայությունից [արքայից վերադառնալուց] հետո են ծնվել: Հերս 10 տարի նստել ա: Նոր Երկիրում, Նարիվսկում [Նորիվսկ], Վլադիվաստոկում [Վլադիվոստոկ], Վարկուտայում [Վարկուտա]: Ես հինգերորդ երեխան եմ, իմ հորս գալուց հետո եմ ես ծնվել: Հորս անունը Սամսոն Մարտիրոսյան էր (սկ. 22), մորս անունը՝ Սաթենիկ Մարտիրոսյան (սկ. 23): 1906 թ. ծնված հայրս է, 1912 թվի՝ մայրս: Էրկուսն էլ [Ներքին] Մագրից են, մագրեցի են: 1939 թ. Մագրան տեղափոխել են պետականորեն: Տեղափոխել են Փարաքար գյուղ [Երևանի մոտ]: Էն ժամանակ կոլխոզ էր արդեն, ութ-ինը տարվա կոլխոզ էր՝ անասուններով, բանով, պետականորեն տեղափոխել են այնտեղ: Մի մասը գնացել են, մի մասն էլ՝ դե ովքեր... [19]37 թվին դե որ հորս



*Նկ. 21. Վոլոդյա Մարտիրոսյանը
հարցազրույցի պահին: Կապան,
8 հունիսի 2012 թ.: Լուսանկարը՝
Հարություն Մարությանի:*



Նկ. 22. Վոլոդյա Մարտիրոսյանի հայրը՝ Սամսոն Ալեքսանի Մարտիրոսյանը (նախած, ապիպրակ գլխարկով) համագյուղացիների շրջապարում:



Նկ. 23. Վոլոդյա Մարտիրոսյանի մայրը՝ Մաթենիկ Մարտիրոսյանը հարազատների հետ:

բունել են, մերս ո՛նց գնա՛ երեք երեխա, մենակ կին, էլ եկել ա մոտիկ գյուղ՝ Շիշկերս:

Հայրս հովիվ էր, անասնապահ էր: Տարրական կրթություն ուներ, գրա-
ճանաչ էր, հա, գրել-կարդալ գիտեր: Մորս հետ ամուսնացել էին 1929 թվա-
կանին Մազրայում: Պապս՝ Ալեքսան Կոստանդյանը՝¹ Սամունի հայրը, եղել
ա վաշտապետ: Նժդեհի վաշտապետն էր: Պապս ծառայել էր ցարական
բանակում 14 տարի: Յոթ տարի ծառայել ա, գալիս՝ որ պտի եղբայրի հերթն
ա՛ գնա, իրա մայրը ասում ա՝ Ալեքսան, ինքը [կրտսեր եղբայրը] փոքր-մոքր
ա, վերջը՝ չի կարողանալու, դու՛ գնա ծառայի. էն ժամանակ էդպէս էր՝ մեկը
մյուսի տեղ դառնում էր ծառայող: Ու Ալեքսանը իր հոժար կամքով նորից
գնաց ծառայելու: Մասնակցում ա պատերազմին, էրկու Գեորգիևյան խաչ ա
ստացել (ասել են իմ հորեղբայրները), հետո գալիս ա գյուղ: Հերս ասում էր՝
թե իրան [իր հայրը՝ Ալեքսանը] մի կլոր կնիք ուներ, դրա համար էլ ահագին
եկան դրա հետևից, գնացին... Անձնական էր, թե ինչ էր, նաղդը կնիք կար,
վրան գրած էր Կ.Ա.՝ Կոստանդյան Ալեքսան: Հետո էդ շարժումը որ սկսավ
[19]18-20-21 թվերին, Նժդեհը որ [19]19 թվականին Նախիջևան եկավ, դե
Մազրան էլ Կալերի հետևն ա. եթե լսել եք, Կալեր գյուղը Մեղրու հենց թի-
կունքն ա, Մեղրու շրջանի ամենաբարձրության վրա ա: Ընտեղ Նժդեհը գա-
լիս-գնում էր: Հերս ասում ա, թե 16-17 տարեկան տղա էի, [Նժդեհի] ձեռքե-
րին ջուր եմ լցրել, գալիս էր, մի քանի անգամ մեր տուն եկել ա: Պապս էլ
ուժեղ սնայպեր էր. վերջը, ուժեղ, ճանաչված մարդ էր գյուղում, հարգանք
ուներ:

Հա, Ալեքսանը մինչև բանակ գնալը ամուսնացած ա եղել, դրա համար
էլ նրա երեխաների մեջ [տարիքային] մեծ տարբերություն կա: Հա, դե մայրը
ուղարկել է տղուն [երկրորդ անգամ բանակ ծառայելու կրտսեր եղբոր փո-
խարեն], կինն էլ հոժար կամքով թողել ա տանը: Դե, էն ժամանակ լինում էր
[այդպիսի բաներ]: Եթե կարդացել եք «Ֆավորիտը»,² էն ժամանակ 25 տա-
րով ծառայության էին տալիս բանակ: [Գրքում] Ամուսինը որ ծառայություն-
նից եկավ, կնոջը չճանաչեց, թե դու իմ կինը չես, բան, վերջը ծնվեց Պոտյոմ-
կինը: Ինքը [Ալեքսանը] 1873 թվի ծնված ա: Մեծ երեխան [190]2 թվի ծնված
ա: Բայց, ասում են, ինքը շուտ ա ամուսնացել: Ամուսնացել ա, երեխա չի
ունեցել: Ու հետո որ գնացել ա բանակ եկել ա՝ էրեխեքը ուշ են ծնվել: Ստաց-
վում ա, որ ինքը 29 տարեկան ա եղել, առաջին երեխան ծնվել ա: Բայց ինքը
շատ ջախել տարիքումն ա ամուսնացել:

¹ Նրա մասին տես նաև *Գրիշա Սմբատյան*, Երկաթե վարագույրից այս կողմ, Երևան, «Ձանգակ-97», 2009, էջ 150-151:

² Բանասացը նկատի ունի Վալենտին Պիկուլի «Ֆավորիտ» վեպը: Գրքի հայերեն թարգմանությունը երկու հատորով լույս է տեսել Երևանում 1989 և 1990 թթ.:

Տվյալները չգիտեմ, թե ինքը որ մի ճակատում ա մասնակցել առաջին կովին [համաշխարհային պատերազմին], բայց գիտեմ, որ մասնակցել ա: Որ հետ ա գալիս գյուղ, արդեն լինում են խառը ժամանակները: Մազրիի հենց կողքին Շահբազ յուրդ թուրքի գյուղ ա եղել, էդտեղ կռիվ ա եղել: Հիմա էդ գյուղերը [թե՛ հայկական, թե՛ թուրքական] չկան: Ասուններն ա էլի, [գյուղերն իրենք] չկան: [Յույց է տալիս քարտեզի վրա] *Kak paz* [Այ հենց] Մազրան Ճգնավորի [գյուղ] տակինն ա, այ ստեղ ա եղել: Էդ կռիվն էլ Ճգնավորի ու Մազրայի մոտ ա եղել: 11-րդ կարմիր բանակի զորամասերը հասել են էնդեղ: Էդ ռուսական բանակը իհարկե խառն ա եղել [ազգային կազմով]... Նժդեհը ամեն մի գյուղում ուներ մի վաշտապետ. այսինքն էդ գյուղի փոքր զորախմբի հրամանատար: Կանոնավոր բանակ չունեիր Նժդեհը: Ինքը կովում էր էդպես: Ինքն էլ ասում ա, թե չեմ սիրել կանոնավոր բանակը: Իրա գրվածքներում տեսց էլ կա: Շիշկերտում Պատվականն³ էր [վաշտապետը], Շիշկերտում մարդկությունն [մարդկանց թվաքանակը] ավելի շատ էր, էստեղ հեծելագոր էլ կար դաժե [սույնիսկ]: Շիշկերտից գնացել են Եղվարդին, Ագարակին պաշտպանության: Մեր մեծերը պատմում էին, էլի, որ գնացել են էստեղ կովի, օգնության են եկել: Տեսց, մեծ մասնակցություն են ունեցել: Դե, տրա համար էլ էնդեղ [մեղադրական եզրակացության մեջ] որ գրած ա «անդամթերքով ապահովելը բանդիտներին»՝ ինչ բանդիտներ, զինվորներ են եղել, վերջը՝ ուրիշ տեղից եկածներ են եղել: Ու հետո որ Նժդեհը գնում ա, ինքը մնացել ա, Պարսկաստան չի գնում: Քեռիս՝ Անանիան⁴ ա գնում Պարսկաստան: Հա, նա Դաշնակցության անդամ էր: Ալեքսանը մնում ա Մազրայում: Հետո, իրենք, իմիջիայոց ասեմ, որ ահագին ունեցվածքի տեր են եղել էն ժամանակ իհարկե: Անասուններ են պահել՝ ոչխար, ջորիներ, կովեր: Ալեքսանի երկու եղբայրները զբաղվել են դրանցով, Ալեքսանը կառավարել ա իրենց էդ տնտեսությունը: Իրա մի եղբայրը անասնապահությամբ ա զբաղվել, էն մի եղբայրն էլ դաշտավարությամբ: Հետո երեխաները ջահել տղերք են եղել՝ օգնել են: Չորս եղբայր են եղել. էն մեկն էլ [Խոսրովը] գնացել ա Բաքու 1906 թվին՝ աշխատելու էն խառը ժամանակներին ու չի եկել, էստեղ ա մահացել:

Սովետը որ հաստատվում ա, մերոնց ձեռ չեն տալիս: [19]28 թվականին բռնում են նշանավորներին: Ալեքսանի փոքր երեխան [19]28 թվի ծնված ա: [19]28 թվին Ալեքսանի բոլոր երեխաները ծնված են եղել: Ասեմ՝ քանի երեխա ա եղել՝ Արշակը, Սարգիսը, Պետրոսը, հերս, հա, 5 տղա, 4 աղջիկ՝

³ Խոսքը Պատվական Տեր-Գրիգորյանի մասին է: Երա մասին տես *Գրիշա Սմբատյան*, նշվ. աշխ., էջ 163-165:

⁴ Անանիա Խաչատրյանի մասին մանրամասն տես *Գրիշա Սմբատյան*, նշվ. աշխ., էջ 143, 164-170:

10 երեխա, որից մի տղային [Վահան] 17 տարեկանում թուրքերը խփել են: Էնտեղ մի տարածք կա, փայտ են մշակում: Ջորիները բարձել ա, որ տահնի, դե ջահել երեխա ա, մենակ ա եղել, դրանք էլ [թուրքերը] կրակել են, որ ջորիները փախցնեն: Մոտիկ ա եղել. պապա, վերջը՝ իրա ախպերները վազելով գալիս են, դե վիրավոր ա [17 տարեկան տղան], մինչև հասցնում են գյուղ, մահանում ա:⁵ Հետո իմ ախպորս անունն են դնում Վահան, ախպերս մահացել ա, հիմա ես իմ թոռանս անունն են դրել Վահան: Վահանը՝ մեր պապական էդ անունը, պիտի գնա [չարունակվի]:

[19]28 թվին արդեն բռնի-բռնին ընկավ: Սկսեցին բռնել: Կոլխոզը դրանից հետո սկսվեց: Ինչի՞ համար են բռնել՝ այ էս ա էլի, էս տեղեկանքն է:

[Տեղեկանքը տրվել է ՀՀ դատախազության կողմից 1996 թ. մայիսի 5-ին, թիվ 13-409-96: Այստեղ նշված է. «Քաղ[աքացի]. Ալեքսան Մարտիրոսի Կոստանդյանը, ծնվ. 1873 թ. Կապանի շրջ. Ն. Մազրա գյուղում, ՀՍՍՀ ներքին գործերի ժողկոմի եռյակի 1937 թ. նոյեմբերի 16-ի որոշմամբ դատապարտվել է մահապատժի այն բանի համար, որ նա Հայաստանի խորհրդայնացումից հետո մտել է ընդհատակյա դաշնակցական կազմակերպության մեջ և տարել է հակատվետական աշխատանք, կապ է պահպանել բանդիտների հետ և մթերքներով մատակարարել է նրանց, որի համար 1929 թ. եղել է դատված և արքարված: Վերադառնալուց հետո նորից է կապվել հակատվետական տարրերի հետ և տարել է հակատվետական աշխատանք: 1958 թ. հունվարի 16-ին ՀՍՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան հսկողական բողոքի հիման վրա լսել է Կոստանդյանի վերաբերյալ քրեական գործը և այն կարճել է Կոստանդյանի հանցանքը ապացուցված չլինելու պատճառով:

Կոստանդյանը արդարացված է և նրա առաջին հերթի ժառանգները օգտվում են 14.06.94 թ. բռնադատվածների մասին ՀՀ օրենքով նախատեսված արտոնություններից:

Քննչական վարչության դատախազ Գ. Ռ. Մանուկյան»]⁶

Դե կարծեմ երեք տարով բռնեցին, բայց ինքը ուշ ա եկել. Տաշքենդում էր ինքը: Աքտրում են Տաշքենդ: Նամակ էր գրում, բան, հետո նամակ էր գրում Ծվանիձոր: Կապ կար: Հերս գնում էր-գալիս [Ծվանիձոր]: Գովում էր, թե լավ երկիր ա, բան: Հերս ասում ա, որ գրեցի, թե չգաս, որ գաս՝ բռնելու են, ավելի լավ է երեխաները հավաքեմ, գանք: Պապա ասում ա՝ չէ: Գալիս ա, մի տարի ա, թե ինչքան մնում ա, նորից [19]37 թվին բռնում են: Էն ժամանակ 64 տարեկան էր: Ն. Մազրայից 1929 թ. ուրիշ մարդու երևի թե

⁵ Տես նաև *Գրիշա Սմբատյան*, նշվ. աշխ., էջ 151:

⁶ Տեղեկանքի բարձրաձայն ընթերցման ժամանակ հստակեցվեց, որ Ալեքսան Կոստանդյանին ձերբակալել են 1929 թ., այլ ոչ 1928 թ.:

չեն բռնել: Պատվականին էլ են [19]28-29 թվերին բռնել. էդ նշանավորներին [19]28-29 թվերին են բռնել: Առաջին պերիոդը [չրջանը] դա էր: Պատվականին էլ Շիշկերտի վաշտապետն էր, նրան էլ [19]28 թվին-[19]29 թվին տարել են: Հետո դե որ եկել են, հետո արդեն սկսվել ա [19]37 թվի աքսորները: Հետո նորից իրանց տարել են: Ուրեմն, [19]36 թե [19]37 թվի սեպտեմբերին կամ հոկտեմբերին իրան [պապին՝ Ալեքսան Կոստանդյանին] են տարել, չանցած էրկու ամիս՝ իրա մեծ ախպորն են տարել՝ Իսակին, չանցած էրկու ամիս՝ արդեն [19]38 թվի փետրվարի 13-ին, հորս են տարել: Էրկու ամիս – էրկու ամիս հետո:

Թե ինչի են էրեխեքից հենց իմ հորը տարել: Ասեմ: Իրա [հոր] մեծ եղբայրը ամուսնացել էր – բաժանվել: Գնացել էր բանակ, բանակից հետ էին տվել: Բանակից հետ էին տվել, որ քո հայրը էսպես ա՝ դաշնակ ա: Հետ են տալիս՝ գալիս ա (դա մայրս է պատմել): Գալիս ա [գյուղ]՝ դե առաջ մեր տունն էր՝ պապական, հետո իրանց տունը. տան առաջով անցնում ա, պապական տունը չի մտնում: Մայրը [պատմողի տատը] դուրս ա գալիս, թե Արշակ, էդ ու՛ր ես գնում, Արշակ, բա խի՛ չես գալիս: Չեմ գալիս ձեր տունը, չեմ ուզում ձեր երեսը տեսնել [պատասխանում է Արշակը]: Բա խի՛ [հարցնում է մայրը]: Ինձ բանակից հանել են, որ հայրս էսպես ա՝ դուք դաշնակ եք, դրա համար ինձ հանել են, ես չեմ ուզում ձեր երեսը տեսնեմ [պատասխանում է Արշակը]: Հետո որ բռնում են պապիս [Ալեքսանին], դե էսպես ա, եղբայրը դուրս չի գալիս: Մերս գնում ա, թե դե, Արշակ, արի՛, ապուն տանում են, ասում ա, տանում են՝ տանեն, չեմ գալիս: Եվ ինչքան նկար-բան կար, քցում ա փեշը՝ վառում. վախից: Էդ մարդուց [Արշակից] զոռով մի նկար ենք ճարել: Իսկ էն փոքր հորեղբայրներս՝ նրանք փոքր են եղել, Ղափանում սովորելուց են եղել, արդեն 9-րդ – 10-րդ դասարան են եղել: Դրա՛ համար են հորս տանում: Հինգ աղջիկ էլ տանը՝ միակ կերակրողը հերս ա, էն էլ տանում են:

Հա, իմիջիպալոց էլի ասեմ. կոլեկտիվացումը սկսում ա (Ալեքսանին արդեն տարել են՝ էն առաջվա տանելը), գալիս են, որ տանեն ոչխարը: Սկզբից չեն տանում, հետո տանում են: Տանում են, էն ա ասում ա (էն փոքր հորեղբայրս ա պատմում), էդ փոքր տղան վերջին ոչխարի վիզը գրկում ա, որ չտանեն, ասում ա, էն ակտիվիստներից սենց բան ա արել, թո՛ղ, ասում ա, թողե՛ց [հորեղբայրս]՝ տարավ: Հետո հերս ասում ա՝ Մարտի [փոքր հորեղբոր անունն է], եթե հալալ ա էս ապրանքը, նորից կգա մեր դուռը: Վեց ամիս չանցած՝ հետ տվին: Տարան, հետո հետ տվին էդ ապրանքը [անասունները]: Չգիտեմ՝ ինչու, կարող ա որպես վատ մարդ, որպես անհարազատ՝ հետ են տալիս էդ ապրանքը [այսինքն՝ վատ մարդկանց անասունները պետք չեն նոր կյանք սկսող կոլեկտիվ տնտեսությանը]: Հետո մի քանի ամսից նորից տանում են:

Իհարկե, իմ հորս բռնելուց հետո նորից սաղ տունը ավերում են, ինչ ունեին-չունեին՝ ցորեն-մորեն մի քիչ, գարի, անասուն՝ սաղ վերցնում են, մերոնք մնում են տկոթ: Պատերազմը որ սկսում ա, հորեղբայրս՝ Պետրոսը [գորակոչի ժամանակ], չի ասում [իր հոր՝ Ալեքսանի բռնված լինելու մասին], ասում ա՝ ես որք եմ: Դրա համար գնում ա ռազմաճակատ, երկու Փառքի աստիճան շքանշան ա ստանում, լավ մասնակցում պատերազմին: Էն մյուս հորեղբորս՝ Սարգիսին՝ ուսուցիչ էր, նրան էլ, փոքր քեռուս էլ (որ Անանիայի եղբայրն ա) չտարան. նրանց՝ որպես անհարազատի, տարան Չեյաքինսկ, տրակտորնի (որ սարքել էին տանկովի) գործարան, մինչև պատերազմի վերջը մնացին էստեղ. համարելով, որ անհարազատ, անվստահելի մարդիկ են, առաջին գիծ չտարան, հենց թիկունքում աշխատում էին գործարանում: [19]46-47 թվին նոր եկան:

«Անհարազատ» նշանակում ա՝ ինքը պետության դեմ, չգիտեմ, մերս էղպես ա ասում, ասում ա՝ անհարազատ էին ասում [մեզ]: Չէին թողնում՝ ժողովներին գնալինք, չէին թողնում՝ մասնակցեցինք ոչ մի բանի: Թշնամու նման բան ա, էլի, անհարազատ, այսինքն՝ խո՞րթ: Չգիտեմ, էլի. անհարազատ, էղպես էին ասում:

Հերս էլ գնաց, 10 տարի նստեց: Հերս ասում էր, թե բանտում ասում էինք, թե մեզ էլ տարեք, էլի, պատերազմ, գնանք Հայրենիքը պաշտպանենք: Ասում ա՝ չտարան: Շարիսկում մնաց: Վերջի տարիները Շարիսկում էր: [19]43 թվից մինչև [19]47 թիվը՝ հինգ տարի Շարիսկում էր: Իսկ մինչև էդ Վա[ն]րկուտայում ա եղել, Վլադիվա[ն]ստոկում ա եղել, Նովայա Չենվայում [Նոր Երկիր] ա եղել. հա, էդքան տեղ եղել ա: Ասում ա՝ մինչև 45 գրադուս [աստիճան] մարոզը [ցուրտը] աշխատում էինք, 45-ից բարձր չէինք աշխատում: Ասում ա՝ Նոր Երկիրում բորան էր, շենք էինք կառուցում, հաստ թոկ էինք կապել՝ կազարմա – ճաշարան – զուգարան՝ թոկին բռնված էինք գնում: Քամին, ասում ա, տանում էր, եթե բաց ընկար [թողեցիր], էէէ, մի քանի կիլոմետր [հեռավորության վրա] արդեն [միայն] ամառը ոսկորներդ ճարվում էր: Ասում ա, մինչև 72 աստիճան մարոզ [ցուրտ] էր լինում Նովայա Չենվայում: Էդտեղից նամակ գրելու իրավունք չունեք: Որ եկավ Շարիսկ,⁷ նոր սկսեց գրել, արդեն եկան նամակագրական կապերը:

[Խոսքը վերաբերում է 1950-ական թվականներին, երբ հայրն արդեն աքսորից վերադարձել էր] Մերս դե ռուսերեն չգիտեր, ռուսերեն ասենք էստեղից նամակ ա գալիս: Դե մերս մի քիչ ճարպիկ էր. դե կրթություն չունեք նենց... Ասում ա, գալիս էր նամակը, [մայրս հարցնում էր] Սամառն, ո՞վ ա գրել՝ ընկերս ա գրել: Կարդում էր, տխրվում էր, ժպտադեմ էր լինում: [Մայրս հարցնում էր] Ո՞վ ա գրել [հայրս պատասխանում էր]՝ ընկերս, ընկերս: Մի

⁷ Վոլոդյա Արտիրոսյանն արտասանում է «Չեյաքինըսկ», «Նարիլըսկ» ձևով:

անգամ, ասում աս, փոշտալոյնը [փոստատարը] բերում աս նամակը, դէ Սամսոնն էլ տանը չի, [մայրս նամակը] տանում աս տալիս քեռու: Քեռիս էլ լավ ռուսերեն տիրապետում աս, յոթ տարի Չեչյաբինսկում եղել աս: Մայրս թե՛ Գրիգոր, կարդա, տես ո՞վ աս: Վեր աս ունում, կարդում, թե աս քուր, սա [հայրս] կին ունի է՛ստեղ, երեխաներ ունի, գրել աս էսպես, էսպես... Հետո իրիկունը որ հերս գալիս աս, [մայրս նամակը] փակում աս ու տալիս [հորս]: Որ կարդում աս, [մայրս հարցնում է] թե Սամսոն, ո՞վ աս գրել, թե՛ ընկերս, մայրս, թե ընկերդ չի գրել, էսպես, էսպես կին էլ ունես, երեխա էլ ունես: [Հայրս] բա ո՞վ ասաց քեզ, [մայրս] թե ո՞վ որ ասաց: Հա, դէ հերս Նարիլսկում բանտում չի եղել, ազատ արքորի նման աս եղել: Է՛ստեղ աշխատել աս արմուրով չչիկ, է՛ստեղ նիկելի կոմբինատ կա: Արմուրով չչիկը, չգիտեմ՝ կատելնիների, կաթսաների քյարփինջ [աղյուս] շարող աս: Հետո վիզ աս առնում հերս, թե կա՛, վերջը: Մայրս պատմում աս, որ ստեղից պասըլկա [ծանրոց] աս ուղարկում՝ գուլպա, խնձոր, չգիտեմ՝ դես-դեն ուղարկում աս: Ասում աս՝ էդ կինն էլ փոշտում [փոստատանը] էր աշխատում, մեզ համար փող էր ուղարկում: Դե իմ անունը Վալոդյա աս, չգիտեմ, թե դա իրա տղու անունն էր, որ իմ վրա էլ աս դրել: Քրոջս՝ ինձանից մեծ, անունն էլ Օքսյա աս, բայց իսկական անունը ծննդականում Դոքսյա աս: Գլուխովետի քարտուղարը [ով պաշտոնապես գրանցում է անունները] հետո պատմում էր, թե անուն դնելուց ասել աս, թե Սամսոն քեռի, էսպիսի անուն չկա, սա ռուսի անուն աս, [նա էլ] թե քեզ ինչ ասում են՝ գրի, էդպէս գրի: Թե՛ Դույա աս է եղել [Նորիլսկի ռուս կնոջ անունը], հետո Դոքսյա է դրել... Դե հետո, իհարկե, քույրս անունը փոխեց, Օքսյա դրեց: Հիմի չգիտեմք, նա կնոջ [Նորիլսկի] անունն էր դրեց քրոջս, իմն էլ՝ տղայի անունը՝ էդպես էլ չկարողացանք իմանալ, նա [հայրս] էլ չպատմեց: Ես ուզում էի «Жди меня»-ին⁸ գրել-բան, նենց էլ չգրեցինք:



[19]37 թվին հորս տարել են, [19]39 թվին Մազրան քանդվել աս: Մայրս եկել աս Շիշկերտ, տուն չկա, տեղ չկա, էս թորեններում [թոնիրներում] ... Թոնիրը գիտեք, չէ, մեջը հաց են թխում, մի սուտկա [ամբողջ օր], էրկու սուտկա կարող աս տարությունը պահել էլի, էրեխեքը հենց էդտեղ աս պահել: Չափարներ [ցանկապատ] ուներ թորենը, կիսաբաց տեղ էր,⁹ է՛ստեղ աս պահել էրեխեքը: Գոմերում, էստեղ, է՛նդեղ: Հաց չկար, գնում էր սրան-նրան խնդրում,

⁸ Մարդկանց փնտրտուքի ազգային ծառայություն, որն ունի նաև մեծ մասսայականություն վայելող հեռուստաթողարկումներ: Մանրամասն տես <http://poisk.vid.ru/>

⁹ Կապանի տարածաշրջանի գյուղերում թոնիրները տան մեջ չէին, այլ դրում, տանից որոշ հեռավորության վրա գտնվող առանձին փոքր կառույցներ էին, որոնցից կարող էին օգտվել մի քանի ընտանիքներ:

խմոր հունցում, աշխատում, որ մի կտոր հաց լինի, իրեք էրեխաները պահի: Տուն չի եղել, չեն ունեցել, սրա-նրա տանը, պաղվախներում... Չորս երեխա ա եղել՝ երեք աղջիկ, մի տղա: Մի աղջիկը մահացել ա, 4-5 տարեկանում: Երկու աղջիկը [ու] մի տղան կարողացել ա պահել՝ մինչև հորս գալը: Էն փոքր աղջիկը հիմի կենդանի ա, սովխոզումն ա ապրում, 70-ն անց ա: [19]38 թվի ծնված ա. [19]38 թվին հորս տարել են, ինքը մի ամիս-երկու ամիս հետո ա ծնվել, հորս չի տեսել: Էդպես ա եղել: Հետո արդեն եկել ա [հայրս] տեսել, 10 տարեկան աղջիկ ա, երեխեքը մեծացած, բան...

Մայրս էդպես ապրել ա, հետո որ կոլխոզում աշխատել ա, հին մարագ ա եղել, գոմ ա եղել, սովել են իրեն իբր թե, որ ապրի: Եկել ա, էդտեղ մի քիչ կարգավորել են, ապրել են: Հետո հերս որ եկավ, անտառից գերան-բան բերեցին, տուն կառուցեցին: Բարեկամություն եղել ա, բայց դե հիմնականում մագրեցի են եղել, թողել-գնացել են, գյուղում մնացածներն էլ չեն կարողացել տուն կառուցել-տալ: Կարող ա, ասենք, մի քիչ օգնել են: Մի մասը վախեցել են, մի մասը չեն ունեցել, մի մասը չեն ուզեցել: Չէ, չեմ ենթադրում, եղել են, պատմել ա, պատմել ա [մայրը]: Մերս գնում էր խմոր հունցում սրա-նրա համար: Ասում ա [մայրը], հաց չէի ուտում, որ հաց էին դնում, հաց չէի ուտում, ուզում էի որ, ինչ-որ տալու են, բերեի էրեխաներին: Հետո ում որ անում էի [խմոր էի հունցում], ասում էր, Սաթիկ, հացդ կեր, մեկ ա, հացդ տալու եմ, դրել եմ էդ հացը, որ դու ուտես, էրեխաների փայն էլ տալու եմ, որ տանես: [Մայրը] Ասում ա, չէի կարողանում [ուտել], գիտեի, որ սոված են խոխեքը, պահում էի, որ տանեմ: Բայց դե որ ասում էր, մի քիչ կարողանում էի հաց ուտեմ, որ սովածն էլ տանեմ, արդեն արխային էի լինում, որ էլի հաց է տալու, տանեմ էրեխեքիս: Դպրոց գնում էինք: Բայց ախպորս չորրորդ դասարանից հետ էին տալիս, որ գնա, դարձիք չոբան՝ հովիվ: Ուզո՞ւմ ես ապրես՝ գնա՞ կոլխոզ, գնա՞ ոչխարը: Ուզո՞ւմ ես հաց ուտես՝ գնա՞ էստեղ: Չորրորդ դասարանից հանել են եղբորս, ուղարկել են ոչխար, հովիվ: Ինքը վեց ամիս՝ ձմեռը, գնում էին Ադրբեջան, Հորադիզից ներքև, էստեղ, որտեղ Քուռը խառնվում ա Արաքսին: Վեց ամսով գնում էին: Եղբայրս պատմում ա, որ էստեղ ո՞վ էր՝ պատերազմ գնացածների, բռնվածների էրեխաները՝ 10-12 տարեկան: Սոված, ծարավ, ջրի մե՛ջ, խոնավ: Չէ, պանիր, բան ուտելու հնար չկար: Ստալինյան տարիներ էին, մեկը մյուսից վախենում էր, թե կգնան, կասեն, թե էսպես բաներ ա արել, կբռնեն տանեն:

Հերս վերադարձել ա [19]47-ին: Վերադարձել ա, հետո էլի գլուխը մի օյին ա եկել [19]52 թվին, էդ էլ կարևոր բան ա, պատմեմ: Ուրեմը, մի տարածք կա, ձմեռը եզները էստեղ պահում էին, 4-5 հոգով: Դե արդեն աշուն ա, հոկտեմբերի վերջ-նոյեմբեր, կարտոշկի դաշտն ա, կոլխոզը ցանել ա, տարել [բերքը հավաքել է], վերջացել ա: Բայց դե ինչքան էլ որ տարել ա,

էլի լինում ա, էլի: Պակաս տարիներ ա, դե մի քիչ հավաքել են [մնացորդ կարտոֆիլը], որ տնից չտանեն, էստեղ յուա գնան: Մի չորս-հինգ մեշոկի [պարկ] չափ դգել են, հորել, որ էստեղ օգտագործեն: Ինչ-որ մեկը ասում ա միլիցա Բագրատին, սա վեր ա կենում, գնում: Գնում, որ բերի: Հիմի էդ մի-լիցեն չի գնում գյուղը, պոյամոյ [միանգամից] գնում ա էդ տարածքը, հորս ու մի հոգու վերցնում, բերում Ծավ, որ տանի [բանտարկություն]: Էստեղից իրա ընկերներից մեկը վագում ա, նախագահին՝ Անդրանիկն [Ավետիսյան] ա լինում, վերջը, միլիցու քեռու տղան: Շատ լավ մարդ ա եղել: Գնում են ասում, թե Սամսոնին ու Վարշամին տարավ Բագրատը, տարավ Ծավ, էստեղից էլ որ վերցնի ու բերի Ղափան: Հերս էլ մտածում ա, թե արս՛, նորից են գնալու [բանտ, աքսոր], էս ինչ վիճակ ա: Անդրանիկը ճշտում ա, թե ինչքան կլինի էդ տարածքում կարտոշկա, գրում ա, թե էդ կարտոշկան կոլ-խոզն ա տվել: Կոլխոզն էդպիսի իրավունքներ ունի, էլի, իրա բանվորներին հասարակական սնունդ տալիս ա: Գրում ա, վերնագիրը մուտք անում, որ ես եմ տվել, կոլխոզն ա տվել, վերջ: Հերս էլ ասում ա, թե մեզ արդեն քցել են մի պաղվալ, զամուկը [կողպեքը] փակել են, բանտարկել են: Վերջը նախագահը գալիս ա Ծավ, իրա հորքորի տղային [միլիցիոներ Բագրատին] ինչ ասես ասում ա, հերով-մերով, ուշունցով [հայեղանք], բան, թե դու քանի գլխանի ես... Գալիս ա էդ զամուկը կտորում, հանում, պոկում, մեզ վերցնում, հետ տալիս [ազատում]: Թե չէ, ասում ա [հերս], չգար՝ մեզ նորից Սիբիր էին տանելու, կորած էինք:

Պապս չի գալիս: Ալեքսանին գնդակահարում են մի շաբաթվա ընթացքում: Գորիսում, [19]37 թվին: Չէ, մեզ չեն ասել: Իրա եղբորն էլ՝ Իսակին էլ են գնդակահարել. թուղթը կա: Ես էլ յոթ երեխա ուներ, բա է, ինչ ապրուստ են ունեցել. կովերն են տարել... Նրանք էլ, վերջը, կարողացել են մեծացնել երեխեքին. էդ կինը [Իսակի] կարողացավ, մեծացրեց [երեխաներին], կարգին մարդիկ դառան: Հետո մեր ազգի մեջ էդ խելքը, բանը կա: Ալեքսանը էսօր 45 բարձրագույնավարտ թոռ, ծոռ, կոռ ունի: Տարբեր մասնագետներ՝ բժիշկներ, տնտեսագետներ, ինժինեքներ: Տոհմածառը գրել եմ, իհարկե: Արել եմ, վերջացրել եմ, բայց հլա չեռնավիկն [սևագիր] ա, տվել եմ՝ Գրիշան [Սմբատյանը], որ մաքրմանը անի [սխալներն ուղղի], ձևավորի մի քիչ: 180-200 անուն կա: Կինարմատի անուններն էլ եմ գրել, բայց որ արդեն ամուսնացել ա, էլ չեմ գրել: Բա դե որ գրես՝ հեռանում ա, է, դա արդեն պիտի շատ լինի, էլի: Կարամ գրեմ, սաղին [բոլորին] գիտեմ, պոռստո [պարզապես] էդ դառնում ա շատ, էլի: Ես ազգասեր եմ հատկապես, հորքոր, մորքոր, հորեղբորս երեխաների, թոռների՝ բոլորի հետ կապը պահում եմ:

Սամսոնը մահանում ա [19]81 թվին: [19]60-ական թվերին՝ [19]62-ին թե երբ, աշխատանքից գալիս ա, տեսնում ա, թե Ստալինի արձանը, ամբողջ

գյուղը կանգնած, տրակտորով, բանով [ուզում են՝ հանեն]: Նախագահը, պարտկոմի քարտուղարը լացում են: Լացում են՝ բա ինչ ա, թե ոչ որ ռիսկ չի անում տրոսը [ճուպանը] գցի արձանի վզովը: Հերս ասում ա, թե ես Նոր Երկիրում ինչեր ասես, որ չեմ արել, տրոսը տվեք ստեղ: Վերցնում ա, բարձրանում ա, տրոսը կապում ա, տրակտորը քաշում ա, քցում ա: Հերս ասում ա, թե 10 տարի ես գնացի հենց էսպես նստեցի, ինչի համար՝ չգիտեմ: Ինքը մեկնաբանում էր [իրեն բանտարկելու պատճառը]՝ հիմնականում դավաճանության: Որ դավաճանել են իրեն, հիմնականում հոր պատճառն ա եղել: Հա, նախ ասում ա, իրեն ղնց են բռնել [1938 թ.]: Իրեն բռնել են [երբ որ ինքը]՝ ոչխարումն էր, գյուղից հեռու: Գալիս ա մի հոգի՝ պարտկոմի [գյուղի կուսակցական կազմակերպության] քարտուղարը. Սամսոն, թե քեզ վայենկոմատից [գինկոմիսարիատից] կանչու՛մ են: [Հայրը] Ասում ա, ես գիտեի, վայենկոմատից ինձ չեն կանչում, ինձ բռնում են: [Քարտուղարը] Թե չե՛ ինչ ես ասում: [Հայրս] Արա՛, ինձ բռնում են, ինձ բան մի ասա: Դե, ասում ա, գալիս ենք: Փետրվարի 12-ն ա: Հետո էլ 14-15 տարեկան ընկերս, օգնականս ա: Ինքը [քարտուղարը]՝ հետևից, մենք՝ առաջից: Էդ ընկերս ասում ա, թե Սամսոն, մեկ ա որ գիտես, թե քեզ բռնելու են, հրացանը տուր, ես սրան խփեմ, անցնենք Իրանը: Իսկականից ուզում ա վերցնել, խփել, ես չեմ տալիս: Վերջը հասնում ենք գյուղ՝ ձերբակալված ես: Հենց գրասենյակում [են ասում]: Չեն էլ թողնում, որ գնամ տուն: Էստեղից վերցնում են, գալիս Շիշկերտ: Գալիս ենք Շիշկերտ, ասում ա, տեսնեմ, թե էրկու հոգի Շիշկերտից են բերել՝ Միլիտոսը, Անդունը [թերևս՝ Անտոն]: Անդունին [19]28 թվին արդեն մի անգամ տարել էին, եկել էր: Տոմսկում, էստեղ համալսարանում պովար [խոհարար] էր աշխատում: Կինը վատանում ա, հիվանդանում ա, գալիս ա [հայրենի գյուղ], էլի [19]37 թվին բռնում են, կակ ռազ [հենց] հորս հետ, մի գիշեր: Հա, հերս ասում ա, որ չորս-հինգ հոգի եկել են [որ տանեն], ասում ա, մի հոգի մոտ չի գալիս, մի քիչ հեռու ա: Հարցնում եմ էդ միլիցաներից, թե արա՛, բա նա՛ ով ա: Դե, ասում ա, Ռուբենն ա, կեմանցեցի: Ասում ա, նա էլ իմ քեռուս տղան ա: Կոմունիստ ա, ուղարկել են: Բայց մոտ չի գալիս, հեռու ա: Վերջը հերս հայիցում ա՝ Ռուբեն, քու տիրու մերը, քո սենցը, արա՛, բա դու ղնց ես գալիս ինձ բռնում: Դե, ասում ա, խեղճը ինչ անի, պատասխանս չի տալիս: Էն ա խեղճն էլ, ասում ա, գնաց պատերազմ, էստեղ մնաց՝ զոհվեց: Հետո, ասում ա, բերեցին էստեղ՝ Ղափան, ստեղ, ասում ա, հարցաքննում էին. ով որ ոտով գնում էր, սենց կոներից բռնած, ծեծված՝ բերում էին, քցում կամերը [բանտախումց]: Հերթը հասավ ինձ, վերջը, գնացի, անուն-ազգանուն ասեցի, վերջը, թե ո՞վ ա գյուղում թշնամիներդ, ասում ա՝ ասացի:¹⁰ Սենց ժպտաց [քննիչը], թե գրել-կարդալ գիտե՞ս, ասի՝

¹⁰ Այս դրվագի մասին տես նաև *Գրիշա Սմբատյան*, նշվ. աշխ., էջ 443-444:

հա, թե վերցրու կարդա [իր դեմ գրած ցուցմունքները]: Վերցրի, նայեցի, թե իմ ասածներից ոչ մեկի անունը չկա: Ում որ համարում եմ թշնամի՝ թշնամի չի: Ում որ համարում եմ հարազատ՝ թշնամի ա, ասում ա: Կարդում եմ, գլուխս պտտվում ա. ո՞նց թե, արա, էս ի՞նչ մարդիկ են, էս մարդիկը ո՞նց որ իրան մոտ մարդիկ են, բայց դե փաստորեն գրողը նրանք են: Կակ ռազ էն, որ 190 ոչխար ա կորցրել [անկում է եղել], դատված ա [իբր 1930 թ., մի բան, որ չի եղել իրականում], վերջը: Գյուղտվետի նախագահն էլ բացասաբար է գնահատել: Բա, դե գյուղտվետի նախագահն էլ մորաքրոջս ամուսինն ա եղել, հորս բաջանաղը: Էդ էլ մի վախկոտ մարդ ա եղել: Մայրս ասում էր, որ քեռուս էլ [Անանիային] ա ինքը [գյուղտվետի նախագահը] արել:

Հայրս [Մամսնը] կարծում էր, որ իրեն ուղղված մեղադրանքները հոր [Ալեքսանի] պատճառով էին, ուրիշ ոչ մի բանի: Իրա դեմ գրել էին զուտ նրա համար, որ տանեն: Ասենք՝ չունեին հետը Ալեքսանի պատճառով: Էն ժամանակ էսպես էր՝ եթե պետությունը գտնում ա, որ դու թշնամի ես, ուրեմը գյուղացիները չէին ընդունում, իրոք վերաբերվում էին որպես թշնամու. եղբայրը եղբոր տուն չէր գնում, դու պատկերացնու՞մ ես՝ ինչ ա: Չէր գնում: Համարու՞մ էր թշնամի: Եղբայրը եղբորը համարում էր թշնամի: Եթե պետությունը գտել ա, որ դու թշնամի ես, ուրեմը նա թշնամի ա: Էդ սարեցի ժողովուրդը՝ եղպես էր ուղեղները մտած: Շատ քչերն էին, որ գնում էին, հարազատին ձեռք մեկնում: Վախենում էին մի մասը, մի մասը համարում էին իրոք սա թշնամի ա, հարազատը հարազատին ընկնում էր [չէր օժանդակում]: Ոնց որ իմ հորեղբայրը դուրս չեկավ՝ հորը ճամփու դնի: Էդպես էր: Նկարները [«դաշնակցական» հոր] վառեց...

Հորս մի քանի օր ստեղ [Կապանում] պահեցին, տարան Գորիսի բանտը: Էնտեղ մի քանի օր մնաց, հետո խաբար ա անում մորս, թե ինձ տեղափոխում են Ռուսաստան, եթե կարաս, մի քիչ շոր-մոր բեր: Մերս վեր ա կենում Մազրայից, մենակ [առանց այլ մեծահասակների], հորքուրս՝ Ալեքսանի 9 տարեկան փոքր աղջիկը, քույրս՝ 2 ամսական, որ հորը չէր տեսել, շունը, էշը՝ բարձած, գնում են Գեղանուշ [գյուղը]: Հերս ասել էր, որ էնտեղ Թումաս անունով մի մարդ կա, ում ախպերը նույնպես նստած ա, որ էդ վեչերը [իրերը] տալիս ես նրան, որ ինքը բերի Գորիս: Դե արդեն մայրս ա պատմում, թե գալիս եմ էնտեղ, տեսնում եմ մի մարդ, հարցնում եմ, թե պապի, ստեղ մի մարդ կար, Թումաս, որ պիտի գնար Գորիս: Էդ մարդը ասում ա, թե բալա, Թումասը սպասեց, սպասեց, տեսավ չեկար՝ ինքը թողեց գնաց: Ասում ա՝ լացու՞մ եմ, բան, էսպես, բա ի՞նչ անեմ: Էն ա էնդեղ մի բարի մարդ ա լինում, շոֆեր ա լինում, ասում ա, ես գնում եմ Գորիս, տուր տանեմ: Վեչերը վերցնում ա, տանում, և իրոք տանում ա, հասցնում Գորիս: Հետո հորս արդեն էտապով, 12 սուտկա, ասում ա, պոյեզով [գնացքով] գնացինք: Դե

պատմում էր [հայրս], շատ ահավոր բաներ էր պատմում, ասում ա, դե գիշերը կազարմում քնած ենք, ասում ա: Գալիս էին, վերցնում, շարժում կողքիդ ընկերոջը. վեր կաց, սուս, շորերդ հագի, դուրս արի: Չկա, էլ չէր գալիս նա: Գնում էինք, տեսնում, արդեն էն տրանշեն [խրամատը], որ քանդել էինք, չկա, փակվել ա, շոֆերներն էլ մաշինեն [որով տեղափոխել են դիակները] լվանում են, արուն-մարուն ա: Դե, ասում ա, քուն կգամ աչքերիդ: Սպասում էիր, որ հեսա քո հերթն ա: Գալու են, էսպես, շարժեն, որ արի, վերջը, քեզ ենք տանելու գնդակահարենք: Ինչի հաշվին դիմացավ: Ինքը, նախ, կամ-քից ուժեղ էր, ֆիզիկապես շատ առողջ էր, աշխօրներ էր աշխատել, կաթմածուն կերել, ֆիզիկապես շատ առողջ էր: Տենց դիմացավ: Ատամները թափվեց, բան: Դիմացավ, դիմացավ, բայց էկավ [վերադարձավ], արդեն բրոնխներ [բրոնխիտ] ուներ, հետո, ասում ա, որ ազատվեցինք, ստուգում էին, հետո բաց թողնում [19]47 թվին: Հետո, ասում ա, ես ու ընկերս, հեռու էինք կանգնած [բժշկից]: Ասում ա [բժիշկը], թե դուք խի մոտիկ չեք գալիս, ասում ենք՝ թե բա մենք առողջ ենք: Նա թե՛ եկեք, տեսնենք, առողջ եք, թե՛ չէ: Դե, ասում ա, եկանք, ստուգեց, ասաց՝ թե հիվանդ եք, կզնաք, կբուժվեք [ձեր հայրենիքում], հիվանդ ա ձեր թոքերը: Դե, ասում ա, էն ժամանակ որ էկանք, հալա ջահել էինք, չէր ազդում, աշխատեցինք, 60 տարեկանից հետո արդեն հիվանդ էինք: Բայց աշխատում էր [հայրս], ֆիզիկապես լավ էր: 75 տարի ապրեց: Հետո, ես իրա աչքերից արցունք չէի տեսել: Ցամաքել էր արցունքը էդ մարդու աչքերից, էսքան նենց բաներ էր տեսել երևի. ես չէի տեսել արցունքներ: Էդպես ապրեց, ահագին էլ վերջում ապրեց գոհ, որ գոնե հասավ իր վերջին, երեխաներ ունեցավ, թոռներ, ուրախանում էր, գնում էինք – գալիս էինք, երեխաները, վերջը, ամուսնացան, իրա գերդաստանը մեծացավ... Մայրս ինձ 40 տարեկանում է ունեցել, 45 տարեկանում էլ մի եղբայր ծնվեց, բայց մահացել ա երկու տարեկանում:

Երբ որ վերադարձավ հերս, հետո մենք ծնվեցինք, իմացանք, թե ովքեր էին իրա դեմ գրել, էդ մարդկանց մի մասը արդեն չկային: Այսինքն, տեղափոխվել էին, տարբեր տեղեր էին ապրում: Մի հոգի էլ կար, էն էլ մեզ բարեկամ էր գալիս, էն ժամանակ ջահել էր, երևի կոմսոմոլի քարտուղար էր, մորս մորաքրոջ տղան էր, մենք դա գիտեինք, իրան մի անգամ, էսպես, խոսքի մեջ ասացի, բան, հետո զգուշացավ ինքը ինձանից: Կոպիտ բան չասացի, էսպես ասացի, որ գիտեմ, որ դու էդ գործի [մասնություն] մեջ կաս, էլի: Չշարունակեց [բարեկամությունը]: Դե, էն ժամանակ, ինձ թվում ա, ինքը ջահել էր, խելքը չի կտրել, կամ չէր կարող էդպես չանել, որովհետև եթե նախագահը, բան, անում են, ինքը ո՞վ ա, որ չանի: Կային նաև մարդիկ, որ հանուն իրենց մտածելակերպի կարող էին դեմ գնալ, նա էլ երևի թե վախեցել ա, որ եթե ինքը դեմ գնա, կարող ա իրան էլ տանեն, չգիտեմ: Այո, մայրս

խոսում էր մորաքրոջ տղու հետ՝ գիտենալով հանդերձ [նրա դերը ամուսնու արտոյի գործում]: Դե, Քաջարանումն էր ապրում, հազվագյուտ էին հանդիպում, տենց...

Շատերը կան, որ չեն ներել [մատնիչներին]: Դա դրսևորվել և վերաբերմունքով: Ասելով, մասսայի մեջ քննադատելով, էրեսով տալով՝ այո, դեպքեր եղել են: Մի անգամ մի արտոականի տղա [Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին նվիրված] հուշարձանի մոտ բռնեց մատնիչին, որ սպանի՝ փախավ դա: Էլ հուշարձանի մոտ էլ մարդը չէր գալիս՝ նախկին գյուղտովետի նախագահն էր: Էնքան, որ բոլորը [Հայրենական մեծ պատերազմի մասնակիցները] մահացան, ինքը արդեն գալիս էր: Ինքն էլ պատերազմ չէր գնացել, իրան բռնել էին. պատերազմի տարին արվագացիայի [պետական փոխառություն] գործով նստացրել էին, ազատ արտո էին ուղարկել: Դե, էդ ձևի մարդկանց դավաճան էինք ասում: Ես էլ եմ խիստ էդ հարցերում, միշտ էլ քննադատում եմ, ժողովրդի մեջ էլ ասում եմ, որ ով որ արել աս, մեկ-մեկ ասում եմ, որ էս մարդը էսպես աս արել, էս մարդը՝ էսպես:

Մի պատմություն էլ աս հայտնի, որ մարդու վրա գրել են, 10 տարի նստացրել են: Մի թուղթ կա՝ [19]37 թվի գրված, Գրիշայի մոտ աս դա կարծեմ,¹¹ որ էսինչ-էսինչյանը կոլխոզին պատկանող ոչխարի հոտը քարի ժայռովը գլորել աս, երկուսի փորը ճղել աս, երկուսի ոտը կտորել աս: [Կոլտնտեսության] Շախագահին՝ որ խնդրում եմ միջոցներ ձեռնարկել: «Միջոցներն» էլ էն աս դառնում, որ [19]37 թվականին էլ մարդուն՝ գնա Միբիր: Գնում աս, էստեղ էլ մահանում: Չեմ կարող ասել, թե [բողոք գրողը] ինչ աս ունեցել էր մարդու դեմ՝ կարող աս մի չնչին վեճ: Էս տարիներին ով մի քիչ խոսքը, էսպես ասած՝ չափ աս ընկել, թեք աս ընկել, չի բռնել խոսքերը իրար՝ էդպես են արել, առանց հասկանալու, որ ճակատագրական բան են անում դա: Դե հասկանալով, որ վատություն են անում, բայց դե էլ վատությունը շատ մեծ աս դառնում, էլի, չգիտեմ: Հետո էլ մարդիկ [բողոք-դիմում գրողները] իրենց համարել են, որ իրենք մեղավոր չեն եղել: Իրենց մեղքը վիզ չեն առել: Մի վիզ էլ առել են անգրագետները, թե ես չեմ իմացել, թուղթ աս, ինձ ասել են ստորագրի՝ ես էլ ստորագրել եմ: Չեն իմացել, որ սա նյութ աս, որ էս մարդուն պիտի ձերբակալեն:

Հերս ոչ էն [արտոականի] կնոջ անունը ասեց, ոչ տղայի: Մենք ինչքան մեծացանք, հերս ամաչում էր, ամաչկոտ էր: Հետագայում, երբ որ ես մեծացա, մեր տնային արխիվը նայեցի, ոչ մի էդպիսի փաստաթուղթ չկար, ոչնչացրել էր: Մայրս մահացավ 2002 թվին, 90 տարեկան: Հայրս քախոս էր: Դե պատմում էր, իհարկե, որոշ բաներ: Դե, ճիշտն ասած, էս ժամանակ ջահել եմ եղել, չի հետաքրքրել երևի... Տարիքս արդեն ինչքան որ մեծացավ,

¹¹ Սանրամասն տես. *Գրիշա Սմբատյան*, նշվ. աշխ., էջ 401-402:

զգացի, որ պետք ա դա՝ պատմությունը, և տառապանքի ուղի ա դա... 28 տարեկանում [1978 թվին] ինձ գյուղատվետի նախագահ նշանակեցին՝ Ծավի, Շիշկերտի, Ներքին Հանդի՝ միասին: Սովխոզ էր: Ջահել տղա էի, աշխատեցի մինչև 96 թիվը: Ես ավարտել եմ Քաջարանի շինարարական տեխնիկումը՝ ցերեկային բաժինը, հետո ինձ ուղարկել են Բաքու՝ Высший партийный школа – ВПИ. ավարտել եմ Սարատովում: Այսինքն՝ հեռակա ավարտել եմ բարձրագույն կուսակցական դպրոց: Երեք տարի պարտկոմի քարտուղար եմ աշխատել, մնացածը՝ գյուղատվետի նախագահ: Իսկ դրանից առաջ էլ գյուղատվետի քարտուղար եմ աշխատել, կոմսոմոլի քարտուղար՝ գյուղի, հիարկե: Էն ժամանակ, որ հարց եղավ ընդունվելու-չընդունվելու [ԽՍՀՄ շարքերը], ես էլ կոմսոմոլի քարտուղար էի, ակտիվ էի, հիարկե, ամենակատիվ կազմակերպությունը շրջանում մերն էր, գյուղատնտեսության գծով՝ առաջավոր: Մի քանի հոգու ուղարկել եմ պուտյովկաներով [ուղեգրերով] Լենինգրադ՝ ձրի, ինձ են ուղարկել որպես առաջավոր տնտեսության կոմսոմոլի քարտուղար. դա արդեն 24-25-26 տարեկան էի: Լավ գործեր ենք արել. շաբաթօրյակներ ենք կազմակերպել, տնտեսությանը օգնել, թատրոն կազմակերպել, ինքնագործ խմբեր, գյուղում աշխուժություն, էդպես: Վերջը, շրջանը [շրջանի ղեկավարությունը] գիտեր էլի, պլենումում՝ մեր գյուղը միշտ առաջավորների շարքում... Երբ որ հարց եղավ, թե արդեն կուսակցության շարքերը պիտի ընդունվեմ, բան, հորս ասացի, ասաց՝ ընդունվի, դրանց հերն անիծած, մեզ տարան, թե դաշնակ եք, հորս գնդակահարեցին, հորեղորս գնդակահարեցին, ինձ էլ տարան, 10 տարի պահեցին. մտի, բալա ցան, մտի [կուսակցության շարքերը]: Հետո որ արդեն դրին գյուղատվետի նախագահ, ուրախացավ. շատ ծանր իրավիճակում էր, բայց ի սրտե ուրախացավ: Գոհ եմ, որ ինքը կյանքից հեռացավ, բայց ահագին հանգստացած իրա հոգին, որովհետև տառապանքի տարիներ շատ էր տեսել:

Էս ՀՀԸ-ն որ եկավ, ես էն ժամանակ պարտկոմի քարտուղար էի, [19]90-91-92 թվերին էր: Սովխոզի պարտկոմի քարտուղարն էի՝ ազատված. աշխատավարձ էի ստանում, բան, էլի ամենամեծ տնտեսությունը մերն էր: 67 կուսակցական կար. դե 50-ից [ավելի անդամ ունեցող կուսկազմակերպության առկայության պարագայում] արդեն ազատված քարտուղար էին տալիս: Դե էն ժամանակ Շչորս Դավթյանն էր դեպուտատության թեկնածու, իրեն ընտրեցինք, ինքն անցավ: ՀՀԸ-ի ակտիվիստներից մեկը եկավ, թե բա դուք դավաճան եք, թշնամի եք, Շչորսը գող-ավազակ ա, դուք պոի ՀՀԸ-ի մարդուն տայիք [ձեր ձայնը] և այլն, և այլն: Մերս էլ վերջը ասում ա, թե «Արս, հերիք ա, էն ժամանակ թե դաշնակ էիք՝ տարան, հիմի թե կոմունիստ եք, հիմի սրանց եք թշնամի համարում: Մենք որտեղ գնանք կորենք, ձեզանից պրծնենք, մենք ու՛ր գնանք»: Վերջը, էսպես չի՛ լինի: Էդ ակտիվիս-

տը գալիս և պարտկումի [իր] տունը՝ գիտի, թե պալատ աս: Կարծում աս, թե պարտկումը կերել և [կաշառակեր է], պալատ սարքել: Հիմա՛ր մարդ: Էս աս, էն չորանի տունը ավելի լավ աս, քան թե իմ տունը:



Մերս էլ պետության նկատմամբ հավատ ուներ: Հավատում էր: Էդքան չարչարվելուց հետո, բայց էլի հավատ ուներ պետության նկատմամբ: Բայց մեկ-մեկ որ միտն էր գալիս՝ ասում էր. նա ինչ պետություն էր՝ ախպորս տարավ, մարդիս տարավ, պատրոնիս [սկետրայրին] տարավ, բոլորին տարավ՝ վերջը, էսպես, տուժվեցինք: Ունեցածներս [նկատի ունի դրամական խնայողությունները խնայքանկերում] լրիվ տարավ:

Ասանիան քեռիս աս: [190]2 թվի ծնված էր: Ասանիա Ներսեսի Խաչատրյան:¹² Մայրս չորս եղբայր ուներ, բայց մենակ դրա անունն էր տալիս: Էն էրկուսը գնացին, զոհվեցին [Հայրենական մեծ պատերազմում], էն մեկին էլ չտարան [բանակ] որպես բան՝ անհարազատ, տարան Չելյաբինսկ: Մայրս միշտ [ասում էր]՝ Ասանի, Ասանիա, Ասանիա. ես էդպիսի բան չէի տեսել: Գժվու՛մ էր նրա համար: Ամենամեծ եղբայրն էր: Մայրը յոթը տարի էրելիս չի ունեցել, հետո բերել և Ասանիային: Նրան, ասում աս [մայրը], սրբի պես էինք հարգում, սիրում: Ուրի՛շ էր նա, ոչ մի եղբայր, քույր նման չէր նրան, առանձնահատուկ էր: Նկարը Գրիշայի [Սմբատյան] գրքում կա: Շատ ճարպիկ տղա և եղել, շատ: Իրա հերը՝ Ներսեսը, ջորիով գնացել և մինչև Դամասկոս, Բեյրութ, Սիրիա, Երուսաղեմ. առևտուր էր անում: Էն մի ախպերները տնտեսությամբ էին զբաղվում, ինքն էլ գնում էր տենց՝ նավթ էր բերում, աղ էր բերում՝ չգիտեմ, տենց գործեր էր անում: Մագրեցի էր: Ռուսերեն գիտեր, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, յոթ լեզու գիտեր: Տղայի համար գիրք էր բերում, նստեցնում էր, հատուկ ռուսերեն էր սովորեցնում: Ճիշտ է, կրթություն չուներ, բայց դե տենց խոսակցականով լեզուների տիրապետում էր: Ասանիան ահագին գրագետ էր, նաև լավ որսորդ մարդ էր. ճիշտ է, էլի բարձրագույն կրթություն չուներ, բայց օրենքները լավ գիտեր: [19]28-29 թվին էլ իրան են տարել [իրականում՝ 1927]: Իրան էլ են առաջին պերիտում [չրջանում] տարել: Գնացել աս, մի քանի տարի [8 տարի] նստել, հետո եկել: Իրան էլ մեղադրել են դաշնակցական կազմակերպության ակտիվ անդամ լինելու մեջ, Իրանից եկած հակասովետական բանդաների հետ կապ պահելու մեջ, անլեզավ գրականություն բերելու մեջ, սովետական իշխանության դեմ կռվելու մեջ: Մերս էլ էր ասում, որ վեց ամիս անցել աս [սահմանը], գնացել աս, Իրանում կացել [մնացել]: Հետ աս եկել [19]36 թվի վերջին, [19]37 թվի օգոստոսին նորից տարել են [առկա է 1937 թ. սեպ-

¹² Տե՛ս ծանոթագրություն 4:

տենքերի 9-ով թվագրված մեղադրական եզրակացությունը]: Երեք երեխա ուներ: Հետո կինը ամուսնացավ: Անանիայի երեխաները կան՝ խելոք, գրագետ, Երևանումն են: Մինչև մեռնելու օրն էլ մայրս սիրում էր իրան [Անանիայի կնոջը], անունը Սիրան էր: Ասում էինք, այ կնիկ, բոլ ա, հերիք ա, վերջը ախպորդ լքեց, բան, ասում էր [մայրը], էն ժամանակ ուրիշ էր, ասում ա, նախագահ, բրիգադիր, ֆերմայի վարիչ անտեր կանանց քաշում էին, տանում էին, քցում գրասենյակ, որ, վերջը, էլի, էսպիսի պայմաններ էին ստեղծում, որ հետը կապվեն սրա-նրա հետ [սիրուհի դարձնեն]: Մերս էլ ասում էր, որ ճիշտ արեց, որ գնաց, ամուսնացավ մեկի հետ, որ չաներ, ասելու էին էսօր սրա հետ ա, էգուց նրա հետ ա, նամուսը, թասիբը որն ա, բան: Տենց: Ճիշտ ա, դե գնաց, երեխեքն էլ հետը չխոսացին: Երեխաներին Սիրանը սկզբից տարավ, բա հետո, թե սկեսուրս չի համաձայնվում, դուք գնացեք: Քեռուս տղան մինչև մոր մահանալը հետը չխոսեց: Ըն երկուսը խոսեցին՝ աղջիկը, տղան, ինքը չխոսեց: Ասաց, մեզ սկզբից, ասաց, էս բերեք, էս բերեք [ամուսնու ծնողների տանից], կարպետը բերեք, գլաբան [գորգը] բերեք, չգիտեմ, որ ձեզ հետս տանելու եմ [նորաստեղծ ընտանիք]: Մենք էլ, ասում ա, լակոտ էինք, չէինք հասկանում՝ տարանք: Հենց տարանք, մի քանի օր մնացինք, ասավ [մայրը՝ Սիրանը], բա՛ կեսուրս չի համաձայնվում, դուք գնացեք: Դե ասում ա, տատս-պապս էլ, մենք իրանց մոտ էինք, տատս էլ ծեր կին էր՝ ասում էր, բալա, բա էդ մեր կարպետը ու՛ր ա, էս խալին ու՛ր ա, մեր էս ինչը՝ ու՛ր ա, մեր էս ինչը՝ ու՛ր ա՝ չկա: Բա ու՛ր ա՝ տարել ենք էստեղ [մոր նորաստեղծ ընտանիքը]: Հետո, ասում ա, հասկացա, որ մեր մայրը [Սիրանը] ինչ սխալ ա գործել: Եվ չխոսեց մոր հետ, ասաց՝ դու մայր չես մեզ համար: Բայց փոքր տղան, մեկ էլ աղջիկը խոսում էին, էլի...

Անանիային էլ են գնդակահարել, [19]37-ին, ստեղ՝ Գորիսում: Բայց մենք էլի չենք իմացել: Փաստորեն մենք չենք իմացել՝ ու՛շ ենք իմացել, էս քանից [1989 թ. դեկտեմբերի 30-ին տրված արդարացման վճռից] (սկ. 24) հետո ենք իմացել, որ գնդակահարել են: Ըս փոփոխությունից [թերևս՝ գորբաչովյան գլխատուտից] հետո արխիվները բացեցին, հետո իմացանք, որ արդեն ստեղ են գնդակահարել: Մերս միայն էդ ժամանակ իմացավ: Ինքն էլ ասաց, որ իրա քրոջ ամուսինն ա արել՝ գյուղտվետի նախագան [նախագահը]: Մերս պատմում ա, որ գալիս են ուզելու Շիշկերտից Անանիայի քրոջը, էդ ուզողն էլ կոմստունի քարտուղար ա (հետո որ դառնում ա գյուղտվետի նախագահ): Էդ էլ էն ժամանակ ա, որ պետությունը ասել ա ժողովրդին, թե եկեղեցու հետ կապ չունենաք [ամուսնության եկեղեցական գրանցումներ չլինեն]: Էլողի [Շողեր Հարությունյան, 1935 թ. ծնվ., ումից Հ. Մարությանը հարցազրույց էր վերցրել Ծավ գյուղում] հայրն ա պատմում (գյուղտվետի ապագա նախագան Էլողի ընկերն ա), թե մենք էլ ազապբաշի ենք, դե Անա-

Судебная Коллегия по уголовным делам Верховного
Суда Арм.ССР и состав:

Председательствующего - Хурцудия
Члены: Минасян
Александрян

При участии пом. прокурора Арм.ССР - Бархударова

Рассмотрела на открытом судебном заседании от 30-марта 1962г. протест пом. прокурора Арм.ССР, на постановление троих НКВД Арм.ССР от 13-сентября 1937г., кои нарушили и ИЖ -

ХИЧТРАЯ Анянни Норсесович, 1902 года рождения, б/жители села
Н. Беара, Кацелинского р-на, Арм.ССР, многогранный, б/непригодный,
при аресте одиночки.

Обуздан за участие в бандитской группе, Москва похоронен на
ссылке в 1937г. вновь освобожден с д/р элементами алья и продолжил
деят. антиколлектив. организации.

Протест внесен на предмет отмены указанного постановления и
присяжные дела.

Заслушав доклад члена Верхов. Суда и заключение пом. прокурора Арм.
ССР, подделавшего протест, Верхов. Суд находит, что следует отменить
и протест на следующие основания:

Из материалов дела видно, что основными для ареста Хичтрыя
последней оперативные данные из 1937-1938гг. в его банд. деятель-
ности, да что он был обуздан в 1937г. и освобожден только до 1937 года.

Заслушавшие свидетели: Минасян, Александрян и Бархударова заявили,
что Хичтрыя не возвращался на ссылку в 1937г. когда имелось орга-
низация в селе Беара по инициативе русского жителя и они были аресто-
ваны, якобы для ведения б.с. работы. Далее, что когда ему во время
ареста в колхоз он заявил, что это есть нарушение Советского кон-
ституции. Других доказ-ств данных об антиколлектив. деятельности Хич-
трыя, после его освобождения на ссылке в коллектив. дела нет. Таким
образом, в силу ст. 15 п. 2 ст. 111 Арм.ССР, Хичтрыя в 1937 году необязан-
но был обуздан за его прошлую деятельность.

Находя на законности и руководствуясь ст. 375 НК Арм.
ССР-Коллегия -

определила:

Отменить постановление троих НКВД Арм.ССР от 13-сентября
1937г. в отношении ХИЧТРАЯ Анянни Норсесовича и дело прекратить
за отсутствием состава преступления.

Отп. 5-ая.

3-ая.

1 в дело

1 в н.д.

вс. Александрян И.Е.

и 214

Председательствующий А. Хурцудия

Члены: Л.Б. Минасян

И.А. Александрян



Handwritten signature of the presiding judge, A. Khurtsudya.

Նկ. 24. Հայկական ՍՍՀ գերագույն դատարանի քրեական գործերով դատարանի կողմից (սահմանի՝ Ա. Խորշոյան, անդամներ՝ Ա. Մուսակյանյան, Պ. Ալեքսանյան) որոշումը Անանիա Ներսիսի Խաչատրյանի (Վորոդյա Սարգիսիտյանի քեյիս) նկատմամբ Հայկական ՍՍՀ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի Եռյակի (Тройка) 1937 թ. սեպտեմբերի 13-ի որոշումը չեղյալ հայտարարելու և հանցանքը սպառնցված չլինելու պարճառով նրա նկատմամբ գործը կարճելու մասին: 2 սարիլի 1962 թ.: Ռուսերեն, անթևագիր, գաղղյնի, պարճնախանված է օրիգինալից:

նի մասին էլ լսել ենք, թե էսպես, դաշնակ ա, գնացել ա Իրան, եկել ա, թե տեսնում ենք, որ [Անանը] կայում ձեռքերը կախ գնում-գալիս ա, վերջը, ոնց որ հարսանիքն էլ ա արհամարհած, վերջը, մտնում ա մի սենյակը, թե էդ տղային [փեսացուին] կանչե՞ք՝ գա: Կանչում ա, թե տղա ջան, քրոջս տանելու եմ, մեր եկեղեցովը ամուսնացնեմ, դու կոմստով ես, ուզում ես քրոջս տերություն արա, կամ տոմսիդ տերություն արա, քո գործն ա: Դե նա էլ, ասում ա, կարա՞մ խոսա Անանի դեմ: Տանում են, եկեղեցով ամուսնացնում: Հա, եկեղեցին գործում էր, տերտերն էլ դաշնակ էր, նշանավոր մարդ էր, իմիջիպայոց: Էդ ամուսնությունը եղել ա [19]28-29 թվին: Հենց եկել են, բռնել են Անդունին [փեսացուին՝ գյուղսովետի ապագա նախագահին] կոմստովից հանել, նկատողություն արել, խայտառակել: Իմ մերս ասում ա, թե մոտ ա պահել, Անանին բռնել: Ասում ա, էդ է եղել պատճառը: Անան[իայի] թղթերում էլ կա, որ գյուղսովետը բացասական ա գնահատում: Փաստորեն մորաքրոջս ամուսինը իրա աներձագին գրել ա բացասական [կարծիք]: Բայց դա [գյուղսովետի նախագահը] մի թույլ մարդ ա եղել: Վերջը, Անանիային էլ են գնդակահարում, իհարկե: Չգիտեմ, բայց խի: Օրինակ, պապս, Իսակը տարիքով մեծ էին, հերս ջահել էր, տարել են, աշխատացրել, հետո գնդակահարել: Փաստորեն մեծերին էին գնդակահարում: Անանին խի են գնդակահարել, այսր, Անանին էլ տանեին նստացնեին... Անանը օրենքները լավ գիտեր, ժողովրդին պաշտպանում էր, ասում էր, նախագան անգրագետ ա, չի հասկանում, օրենքը սա ա, էսպես, էսպես: Օրենքներ ա բացատրել, գրագետ ա եղել, բացատրել, բան, նրանք էլ ասել են, որ Անանը խանգարում ա մեր գործերին: Անանին պլենումում էլ են անդրադարձել, է: Էդ թղթերը գյուղումն ա:

Իմ աղջիկներն էլ են ավարտել պատմության ֆակուլտետը: Մեծ աղջիկս մանկավարժականն ա ընդունվել 93-ին, չորս տարի հետո ավարտել: Մեծը հիմա էստեղ [Կապանում] ռուսական դպրոցում պատմության ուսուցչուհի ա: Փոքրն էլ, վերջը, էլի փիս, պակաս տարիներ էին, էլի գնաց սովորելու նույն տեղը: Փոքրը հետո թանգարանում [Կապանի գավառագիտական] աշխատեց, էրկու տարի: Հետո գնաց վերապատրաստման, ACBA բանկում էր աշխատում, հետո ամուսնացավ, հիմա Մոսկվայումն ա:

Կարծում եմ՝ ճիշտ կլիներ արխիվները բացել: Չէ, թշնամություն չէր լինի: Նախ, վերացել են էդ մարդիկ, չկան: Հետո, կան մարդիկ, որ էն տարիներին միլիցա են եղել, բայց կարողացել են էսպես անել, որ մարդիկ փրկվեն, չնստեն, քիչ տուժեն: Տենց մարդ եղել ա: Բայց տենցն էլ եղել ա, որ էսպես ա արել, որ մարդիկ նստեն [բանտ], ավելի շատ տուժեն: Այ, տենց մարդիկ եղել են: Դե ես չգիտեմ, ես ինչ իմանամ: Բացելը [արխիվների] գիտես, հիմի գոնե գիտենք [1980-90-ական թթ. արդարացման դատավճիռներին շտրիկով], որ էն մեկը գնդակահարվել ա, էս մեկը գնդակահարվել ա, ով

ա արել, ինչի համար ա արել: Պրոստո [պարզապես] հետաքրքիր էլ ա, որ իմանանք: Գյուղացիք բոլորը գիտեն [մատնիչներին]: Գիտեն ով ա արել, ո՛վ ա պատճառը դառել, ինչի՞ համար: Բացվի, ճիշտ կլինի, էլի: Իմանան, էլի: Ես համոզված եմ, գենետիկան էսպիսի բան է, որ անցնում է ժառանգների: Հիմի նրանց ժառանգներից մի որոշ մասը կարող ա իրենց հայրենասեր ցույց տան, տենց խոսեն, բայց դե ժառանգականությունը ուրիշ բան ա, 50 պլյուս ա, էս մյուս մասը՝ 50 մինուսը, շրջապատի արդյունքն ա: Ես էդպես եմ գտնում: Ես մեր գյուղի մասշտաբով՝ սաղ կյանքս գյուղումն եմ աշխատել, հիմնականումը տենց ա՝ գենետիկան գնում ա [բնավորության ու վարքի գծերի ժառանգորդությունը շարունակվում է]: Վատամարդկանց էրեխեքի վատ մարդ լինելու հավանականությունը ավելի մեծ ա: Ես մտովի հենց տեսնում եմ գյուղում. մարդ «ծախելը», մարդկանց նկատմամբ ազրեսիվ վերաբերվելը՝ ժառանգականությունը [ժառանգաբար] շարունակվում ա: Եթե հիմա էդ նույն [հին ձևի] իշխանությունը գա, էդ 50 պլյուսը աշխատելու ա: Նույն՝ իրանց պապերի ուղղությամբ: Հիմա էլ կան բաներ, որ [19]37 թվի զարգացած տեսակն ա: Քաղաքակրթությունը, վերջը, առաջ ա գնացել, էս ժամանակ ուրիշ էր, էս ժամանակ գրագիտությունը շատ քիչ էր, հիմա գրագիտությունը բարձր ա, զարգացածությունը բարձր ա...

[Թե հասարակության համար որքան է պահանջարկված նման թեմատիկայի իմացությունը, քարոզչությունը] Ումը որ ցավ ունի: Ում որ ցավ ունի, նա անպայման ուզում ա կարդալ: Այսինքն՝ ով որ հարազատ ա կորցրել: Ով որ հարազատ, բարեկամ, եղբայր, հորեղբայր ա կորցրել, նա խիստ հետաքրքրված ա կարդալու: Հետաքրքիր ա՝ իմանան ինչի՞ համար, ո՞նց, խի՞: Բոլորի համար հետաքրքիր ա: Ով որ չի կորցրել [նրանց համար հետաքրքիր է]՝ մասամբ: Սա ես չեմ ենթադրում, ես արդեն, էս գրքի [Գրիշա Սմբատյանի «Երկայթե վարագույրից այս կողմ»] տպվելուց հետո ես տեսնում եմ մարդկանց ցանկությունը, ում հարազատը [որ բռնադատվել է], անպայման ուզում է էդ գիրքը կարդա, տեսնի: Թեկուզ չի կարողանում կարդա՝ ասում ա՝ պատմի՛: Ուզում ա՝ մի տեղեկություն իմանա:

Էս թեմայի շուրջ [ԶԼՄ-ներով] ընդհանրապես չեն խոսում: Պենք ա խոսել: Պենք ա, որ դան լինի, դան լինի ներկա սերնդի համար: Որ զուգահեռներ անցկացնեն, որ էսօր որ, օրինակ, միտինգներին նկարում են, էս էլ սրա [բռնությունների] մի ձևն ա փաստորեն, դավաճանության մի ձևն էլ դա ա: Բայց չեն ասում, է: Վերջը, եթե իշխանության համար ա էդ նկարողը, մեց կասի. հեռուստացույցը չի ասի, իրանցն ա՝ չեն ասում:

ԿՅԱՆՔՆ ՈՒ ՊԱՅՔԱՐԸ ՍԻՔԻՐՅԱՆ ԱՔՍՈՐՈՒՄ

*Հարցազրույց 57 տարի տևողությամբ
Արփենիկ Արայի Ալեքսանյանի հետ
Թիֆլիս/Երևան,
ավարտված 2013 թ. դեկտեմբերի 17-ին:
Զրուցավար՝ Հարություն Մարության:*

Մորս ընտանիքը, ի տարբերություն մեր պատմություններով գրանցված հայաստանյան դեպքերի, արտրվել է Վրաստանից՝ Թբիլիսիից, որտեղ նրա ծնողները հանգրվանել էին 1915 թ. ցեղասպանությունից հետո: Նրա պատմությունը, մասնավոր լինելով, այնուամենայնիվ տիպական է՝ վկայելով, որ 1949 թ. արտրները ողջ Կովկասից մասնավոր թիրախ ունեին հայերին:

Մայրս ծնվել է 1925 թ. նոյեմբերի 14-ին Թիֆլիս քաղաքում՝ վանեցի գաղթականների ընտանիքում: Մորս ապագա հայրը՝ Արայ Արամի Ալեքսանյանը (1892-1983), դեռևս 1912 թ. մեկնել էր վաստակի Իրկուտսկ՝ մորաքրոջ մոտ: Մայրը՝ Աշխեն Գևորգի Թուրշյանը (1898-1958), Վանի հերոսամարտին հաջորդող 1915 թ. հուլիսյան նահանջի ժամանակ ընտանիքով ներգաղթել էր Էջմիածին, ապա՝ Թիֆլիս: Այստեղ էլ երիտասարդները ծանոթացել էին, ընտանիք կազմել: Առաջնեկը՝ Արմենուհին (Արմիկ), ծնվել է Ռոստովում, մյուս դուստրերը՝ Արփենիկը (Արփիկ), Իսկուհին (Ասյա) և Սիլվան՝ Թիֆլիսում: Արայը Թիֆլիսում մետաղական մահճակալների ճանաչված արհեստավոր էր: Ընտանիքն այն ժամանակների համար համեմատաբար բարեկեցիկ կյանք ուներ և բնակվում էր Կամո և Գրինսիչ փողոցների հատույթում գտնվող շենքի երեքսենյականոց բնակարանում:

Արփենիկը 1934-1944 թթ. սովորում է թիվ 47-րդ ռուսական դպրոցում (1943 թ.-ից՝ թիվ 51-րդ), որն ավարտելուց հետո՝ 1944 թ., ընդունվում է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետ: Երկրորդ կուրսից Արփենիկն ուսումը շարունակում է Թբիլիսիի բժշկական ինստիտուտում: 1949 թ. հունիսի 14-ին, երբ նա հանձնում էր ավարտական կուրսի պետական քննությունները, ողջ ընտանիքին՝ Արայ Ալեքսանյանին, Աշխեն Թուրշյանին, Արփենիկ, Ասյա և Սիլվա դուստրերի հետ (ավագ դուստրն արդեն ամուսնացած էր, կրում էր ամուսնու ազգանունը և ուներ մեկ երեխա), առանց նախազգուշացնելու և ժամանակ տալու, արտրում են Սիբիր: Ոչինչ չհասկացող ընտանիքը միայն արտրյալների գնացքում պիտի հայտնաբերեր, որ իրենք արտրվում են Վրաստանի հազարավոր այլ հայերի

հետ միասին: Վանեցի Արայ Ալեքսանյանի և Աշխեն Թուրշյանի ընտանիքը Սիրիո էր արքայություն որպես «նախկին թուրքահայատակներ»: Գնացքի բուլոր արքայություններին տանում են Սիրիո: Մորս ընտանիքը հայտնվում է Տոմսկի մարզում, որտեղ նրանց ցմահ բնակության վայր է սահմանվում Պարբիգի շրջանի Վիտոկի Յար գյուղը: Առաջ անցնելով ասեմ, որ Արսիենիկն արքորավայրում հինգ տարի շարունակ՝ 1949-1954 թթ., օրագիր է պահում (տասնամեկ տետրակ), որում իր, իր ընտանիքի և այլ արքայությունների ողիսականը մանրամասն շարադրված է՝ սկսած գնացքում հայտնվելու պահից: Ավելի քան կես դար անց՝ 2007 թ., նրա հարազատների նյութական աջակցությամբ օրագիրը լույս է տեսնում «Сибирский дневник: 1949-1954 гг.» («Սիրիոյան օրագիր. 1949-1954 թթ.») վերտառությամբ՝ որպես ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի նորաստեղծ «Հիշողության ազգագրություն» մատենաշարի թիվ 1 հրապարակում (նկ. 25):

Հենց գնացքում սկսվում են հետագայում արքորական կյանքին ուղեկցող ստորացումներն ու դաժանությունները: Փակ վագոններում մեկ ամիս տևած ճամփորդության ընթացքում մարդիկ «սկսում էին մոռանալ ամոթը»: Տոմսկի բանտի բարաքում անցկացրած մի քանի օրը ու հատկապես բաղնիքի դրվագը մայրս ավելի քան վեց տասնամյակ շարունակ հիշում էր ամե-



Նկ. 25. Արսիենիկ Ալեքսանյանն իր զանազան իր հեղինակած «Сибирский дневник: 1949-1954 гг.» գիրքը ձեռքին: Երևան, 19 ապրիլի 2009 թ.:

նայն մանրամասնություններով: Նույն կերպ երբեք չմոռացվեց բարձայով նավարկությունը Պարբիզ՝ տեղ չլինելու պատճառով ժամերով կանգնած մնալը, գետն ընկած տղայի մահը: Թիֆլիսյան բարեկեցիկ, սիրող ընտանիքի և բժշկական ինստիտուտի մտավորական միջավայրից միանգամից անհմաստ անմարդկային դաժանության, շարունակական ստորացման միջավայրում հայտնված Արփենիկի համար անհասկանալի, անբացատրելի էր իրավիճակը:

Ողջ օրագիրը ցուցադրում է անարդարության, ցավի, իրենց վիճակված ճակատագրի հետ չհաշտվելու դեմ ըմբոստացումը, բայց նաև՝ մտավորական ընտանիքի ջանքերը նոր պայմաններում նոր կյանք սկսելու, շարունակելու, այդ կյանքն իմաստավորելու և մարդկային ջերմություն ու համակեցություն ստեղծելու փորձերը: Ամենամեծ ցավն իրենց ընտանիքի նկատմամբ գործած անհասկանալի անարդարությունն էր: Սրան գումարվում էին մորս ողջ ընտանիքի համար անընկալելի խորհրդային զինվորի, ներքին գործերի և անվտանգության ծառայողների կոպտությունը, արտոյալների մարդկային արժանապատվության ոտնահարումը, ստորացումը, ծնողների և քույրերի, հարազատների ու բարեկամների կրած չարչարանքների, կյանքի համար խիստ վտանգավոր հարկադիր աշխատանքի տագնապները: Քաղաքային կյանքից միանգամից սիբիրյան ցրտերին անտառահատման հարկադրանքին ենթարկված մարդիկ մշտական վտանգի մեջ էին. «Անտառահատումը փայտամթերման ամենածանր աշխատանքն է: Առավոտից մինչև ուշ երեկո ես համարյա մինչև գոտկատեղ ձյան մեջ եմ, ձյան մեջ քայլելն անհնար է, ամեն բուպե ոտքդ ճյուղի է առնում, և ընկնում ես խոր ձյան մեջ: Իսկ վտանգը... Ամեն ակնթարթ մահ ես սպասում: Ծառը սխալ կընկնի կամ էլ ջարդվի, կամ ժամանակին չեն ասի՝ «գգու՛յշ», ահա և վերջ» (նկ. 26): Օրագրում տրավմատիկ կենսընթացի դրվագները ներկայացված են իրենց ողջ դաժան իրականությամբ. կամ տրավմատիկ առօրյալի հետևանքով տրամադրության կտրուկ փոփոխություններն օրվա ընթացքում, կամ դժվարություններին ու հուզումներին ուղեկցող լացը, կամ անգամ քնած ժամանակ՝ երագում մղվող պայքարը բյուրոկրատական քաշքշուկների դեմ, կամ ինքնասպանության՝ դեպքից դեպք այցելող միտքը և կամ մյուս արտոյալների կյանքի դժվարություններին հաղորդակցվելն ու օգնելու անկարողությունը: Մինչև կյանքի վերջին օրերը մայրս լաց էր լինում, երբ պատմում էր, թե ինչպես էին անվտանգության մարմինների աշխատակիցներն իրեն ստիպում արտոյականների շրջանում լրտեսել, նագան էին թափ տալիս քթի առաջ:

Ողջամիտ տրամաբանության սահմաններում ոչ մի կերպ չէր տեղավորվում, որ այն փաստը, որ ընտանիքի հայրն ու մայրը բնակվել են Թուրքիայի տարածքում գտնվող արևմտահայկական Վան քաղաքում ու, հետևա-

Նկ. 26. Ասյա (Իսկուհի) և Արփենիկ Ալեքսանյան (ձախից աջ) բույրերը անուրառում: Տոնակի մարզ, Պարբիզի շրջան, գյուղ Վխտկիջ Յար: Մայիս, 1951 թ.:



բար, եղել են այդ պետության հպատակները, իրականում «մեղք» է, «հանցանք» է ու պետք է պատժվի խորհրդային օրենքներով: Այդ «մեղքը» իրողություն էր նաև եղեռնից մազապուրծ հարյուր հազարավոր այլ արևմտահայ գաղթականների համար: Ուրեմն նրանք էլ էին ենթակա արքայի: Եվ իրոք, արքայավայր հասնելու մեկ ամիս տևող ճանապարհին Արփենիկը փորձում է գոնե իր համար լուծել այդ «խնդիրը».

նա մանրամասն ներկայացնում է իրենց վագոնի ու էշերի՝ ազգությամբ հայ արքայականներին (նրանց էշերնում ոչ մի վրացի չի եղել), նշում նրանց որտեղացի լինելը (մի որոշակի մասը իրոք որ արևմտահայեր-վանեցիներ էին ու նրանց ժառանգները): Ճանապարհին Հայաստանից արքայական էշերների հանդիպելիս Արփիկն ու նրա ուղեկիցներն անպայման փորձում էին ճշտել հայաստանցիների «ծագումը» և պատասխան էին ստանում՝ Երևան, Սևան, Համամլու (ներկայումս՝ Սպիտակ), հանդիպում էին նաև հայրենադարձներ: Արփենիկի մեջ հարց է ծագում, որ «Եթե մեզ համարում են նախկին թուրքահպատակներ, ապա ինչու՞մ են մեղավոր Թուրքիայի տարածքում երբեք չեղած, հայկական հողի վրա ծնված-մեծացածները: Անհասկանալի է»:

Բնական է, որ Արփենիկն ու նրա բախտակիցները գտնում էին, որ սխալմունք է տեղի ունեցել, և որ պետք է ճշմարտությունը գրավոր կամ բանավոր դիմում-բողոքի ձևով ներկայացնել պետության համապատասխան մարմինների՝ պետական անվտանգության, ներքին գործերի, արդարադատության և այլ բարձր կամ ցածրաստիճան ղեկավարներին, և նրանք, ուսումնասիրելով հարցը, անպայման կկայացնեն արդարացի որոշում: Այդպես էր դաստիարակված խորհրդային քաղաքացին: Եվ սկսվում է դիմում-

բողոքներ գրելու անվերջանալի գործընթացը: Բնութագրական է, որ առաջին դիմումը գրվում է հենց Ալեքսանյանների ընտանիքն աքսոր ուղարկող կապիտանի խորհրդով ու անգամ անմիջական թելադրանքով: Դիմումներն Արփենիկը գրում էր Թիֆլիսի կայարանում, աքսորի ճանապարհին, բանտում մնալու մի քանի օրերին, աքսորավայրից, շրջկենտրոնից, մարզկենտրոնից: Դիմումներ էին գրում ազգականներն ու բարեկամները, ընկերներն ու հարևանները Թիֆլիսից ու Երևանից, նրանցից ոմանք նույնիսկ հատուկ հանդիպման էին գնում զանազան մակարդակի ղեկավարների հետ ու բացատրում, որ սխալմունք է տեղի ունեցել, որ Ալեքսանյանների ընտանիքն իրականում անմեղ է:

Իրենց ընտանիքի, անձամբ իր, իր քույրերի, իրեն դիմող բազմաթիվ մարդկանց համար բազմիցս դիմումներ գրելը մորս համար դառնում է կենսաձևի մաս: Որպես կանոն՝ դիմումատուներին պատասխանում էին, թե դիմումն ուղարկված է այսինչ կամ այնինչ հիմնարկություն, դրան հաջորդում էին հույսով լեցուն սպասումների շաբաթներ ու ամիսներ, ապա գալիս էր ինչ-որ կերպ հիմնավորված կամ չհիմնավորված մերժողական պատասխան, դրան հաջորդում էր պատասխանում տեղ գտած հիմնավորվածության անհիմն լինելը բացատրող մեկ այլ դիմում, ու կրկին սպասումներ, կրկին մերժումներ: Այդպես չորս-հինգ տարի շարունակ: Սակայն դիմումներն ունեին նաև շատ կարևոր, դիմումատուների համար գուցե և ոչ ընկալելի, սակայն դրական նշանակություն. դա հնարավորություն էր տալիս տրավմատիկ, ճգնաժամային առօրյան լցնելու պայքարի պատրանքով ու այդ կերպ օգնելու նման առօրյայի հաղթահարմանը:

Աքսորի դժվարին տարիների ընթացքում մայրս չի կորցնում անարդարության պատճառած ցավը նաև կենսուրախությամբ հաղթահարելու ունակությունը: Ծիծաղն ու հումորի զգացումը Արփիկին ու նրա քույրերին ուղեկցել են թե՛ երիտասարդության դժվարին տարիներին, թե՛ հետագայում: Սիրիքում գտնվելու տարիներին աքսորական քույրերը ծիծաղում էին աշխատանքի վայրում, տանը, հայրենակիցների հետ շփվելիս, անգամ հումորային բնույթ էին հաղորդում հարևանների հետ վեճերին:

Արփենիկի օրագրի մեջ ամեն անգամ տարբեր դրսևորումներով երևում է Կովկասի և կովկասցիների թեման. կովկասցիները միշտ հետաքրքրվում էին միմյանց ճակատագրերով, փորձում օգնել, նեցուկ կանգնել միմյանց: Ռուսների պատկերացումներում ևս կովկասցիները, անկախ էթնիկ պատկանելությունից, համերկրացիներ են: Համակովկասյան համերաշխության, համակովկասյան վերէթնիկ ինքնագիտակցության ամենավառ դրսևորումը, թերևս, արտահայտվում է գրեթե յուրաքանչյուր հավաքույթի ժամանակ կովկասցիների մասնակցությամբ սեղանի շուրջը հնչող

«За Кавказ» («Հանուն Կովկասի») երգի պարբերական կատարմամբ: Հայերի էթնիկ գործոնի դերն առաջին պլան է գալիս միայն այն դեպքում, երբ պարետատանը գրանցման ժամանակ փաստաթղթերում նրանց անվանում են թուրքեր: Ցեղասպանություն տեսած, դրա մասին բազմիցս լսած մարդկանց համար շատ դժվար էր համակերպվել նման վիրավորական իրողության հետ: Ինչպես Արփենիկն է գրում. «Գրանցման թերթերում տեսնում ենք՝ գրված է արքայալ-թրքուհի: Այ քեզ բան, արդեն թուրք էլ դարձրին: Մենք աղմուկ բարձրացրինք, բայց մեկ է՝ պետք է ստորագրենք ու վերջ: Ֆեդյան [պարետատան աշխատակիցը] բացատրեց, որ դա արքայալի տեսակն է, ոչ թե ազգությունը: Մենք հիմնական ցուցակներում գնում ենք որպես հայեր, իսկ դա արքայալի տեսակն է, ինչպես հատուկ արքայալ, կուլակ, նյազանցիներ և այլն: Հայրս ասում էր՝ ռուս գրեք, չինացի, միայն թե ոչ թուրք: Բայց դրանք զուր բաներ էին, մենք գիտեինք, որ Գուրգենը [արքայալ հայերից մեկը] դիմադրել է, բայց հարկադրել են: Մայրս իմանալով, որ իր փոխարեն էլ ենք ստորագրել, մեծ աղմուկ բարձրացրեց, մեզ նախատում ու վիրավորում էր, որ մենք այսքան արագ ուրացանք մեր ազգությունը»: Հետո, կարծես ճակատագրի հեզնանքով, «բոլորի անձնագրերը վերցրին ու տեղեկանք տվին այն մասին, որ մենք թուրք ենք»: Բնութագրական է, որ խորհրդային արխիվային փաստաթղթերում առ այսօր Ալեքսանյանների արքայական ընտանիքը նշված է որպես «թուրքեր»:¹

Միմյանց հետ գրեթե ամենօրյա շփումը հայ արքայականներին էապես օգնում էր կենցաղն ավելի տանելի ու սովորական դարձնելու: Դրան օգնում էր նաև վիրտուալ շփումը, առանձնապես մեծ ուրախություն էին պատճառում ռադիոյով հայկական երգերի հաղորդումները, կամ էլ երբ կինոդիտումներին նախորդող վավերագրական ֆիլմը նվիրված էր լինում Հայաստանին:

Աքորի դառնությունների հաղթահարման գործում արտաքին ամենամեծ բարոյական և հոգեբանական օժանդակությունը, թերևս, նամակներն էին. նամակներ ու հեռագրեր հարազատներից, բարեկամներից, ընկերներից, հարևաններից: Նամակները հաճախ օրվա միակ մխիթարությունն ու ուրախությունն էին լինում: Դատելով օրագրից՝ Արփենիկն ու նրա հարազատները նամակագրական կապի մեջ էին շուրջ 60 հասցեներով:

Վիրտուալ կապը բավականին հաճախ նյութական դրսևորում էր ստանում նաև մթերային ծանրոցների ձևով: Ինչչէր ասես, որ չէին գալիս հարագատ Թիֆլիսից ու Երևանից՝ իրենց հետ բերելով հայրենիքի համն ու հոտը. էլ չիր ու չամիչ, չուչխել և սուջուխ, ալանի, չորացրած բալ, թուփ, ծիրան,

¹ Стен Жертвы политического террора в СССР <http://lists.memo.ru/index1.htm>



Նկ. 27. Ալեքսանյան քույրերն իրենց մոր՝ Աշխեն Թուրշյան-Ալեքսանյանի մահվան 50-ամյակին. ձախից աջ՝ Արմենուհի (Արմիկ), Արփենիկ, Ապա (Բակուհի), Միլվա: Երևան, 27 հունվարի 2008 թ.: Լուսանկարը՝ Հ. Մարտիջանի:

նան խնձոր, տանձ, խաղող, փշատ, մաքրած ընկույզ, լոբի, կանաչեղեն, կարմիր բիրար, տոմատ, բալի, ընկույզի և ծիրանի մուրաբա, տնական օղի և կոնյակ, կոնֆետներ, շոկոլադի սալիկներ ու ռահաթ-լոհում, պանրի մերան: Ծանրոցների պարունակությամբ աքսորականները հաճախ կիսում էին միմյանց հետ:

Միբիրյան կյանքի դժվարությունները հաղթահարելու գործում Ալեքսանյաններին մեծապես օգնում էին ընտանիքի ամբողջությունը, մեկը մյուսին օժանդակելու պատրաստակամությունը: Քույրերից յուրաքանչյուրը ջանում էր օգտակար լինել մյուսին թե՛ աշխատանք որոնելու, թե՛ սովորելուն օժանդակելու հարցերում (նկ. 27): Իսիստ մեծ նշանակություն ունեին նաև հարազատների ու բարեկամների չդադարող դրամական փոխանցումները:

Մորս կամքն ու ոգին անկոտրում պահելու կարևորագույն գործոն էր բժշկի իր մասնագիտությամբ աշխատելու հաստատակամ, նպատակալաց, համատության հասնող, ոչ մի խոչընդոտի առաջ չնահանջող ձգտումը: Եվ, վերջապես, Արփենիկին արքորական կյանքի դառնությունները հաղթահարելու գործում մեծապես օգնեց հենց օրագիր պահելը:

Աքսորը, ամեն ինչից գատ, նաև կյանքի դաժան դպրոց էր արքորվածների համար: Մի մասը չէր դիմանում, կոտորվում էր, բայց շատերն էլ ոչ միայն դիմանում էին, այլ նաև կյանքի նոր, անսովոր դժվարություններն ամենօրյա պայքարով հաղթահարելով՝ կոփվում էին, ուժեղանում, հզորանում: Արփենիկը, թերևս, այդ բազմահազար մարդկանցից մեկն էր:

Աքսորավայրում արդեն Ստալինի մահվանից հետո՝ 1953-54 թթ., մայրս կարողանում է ուսումը շարունակել Տոմսկի բժշկական ինստիտուտում, սակայն ավարտական քննությունների նախօրեին գալիս է երկար սպասված ազատման լուրը, և Ալեքսանյանների ընտանիքը վերադառնում է Թբիլիսի: 1954-55 թթ. մայրս շարունակում է ուսումը Երևանի բժշկական ինստիտուտի ավարտական կուրսում: 1955 թ. դեկտեմբերին ամուսնանում է ճարտարապետ Տիրան Հարությունի Մարությանի (1911-2007)² հետ: 1956 թ. ծնվում եմ ես, 1958 թ.՝ քույրս, Տաթևիկը: 1956 թ. մայրս ընդունվում և մինչև 1990 թ. աշխատում է Երրորդ (հետագայում՝ Հանրապետական) մանկական հիվանդանոցի պոլիկլինիկայում՝ որպես մանկաբույժ: 1995 թ. ապրիլին նրան տրվում է «Բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձ»-ի թիվ 1 վկայականը:

² Մրա մասին մանրամասն տե՛ս www.tiranmarutyam.am

«ՄԱՐՄԻՆՍ ԴԱՐՁԵԼ ԷՐ ՄՍԵ ՄՈՒԽՐԱՄԱՆ»

*Հարցազրույց Իռեն Արելի Օրդուխանյանի (ծնվ. 1938 թ.)
և նրա դստեր՝ Ազատա Էդուարդի Վանունցի (ծնվ. 1963 թ.) հետ:
Երևան, 15 դեկտեմբերի 2014 թ.:
Զրուցավար՝ Հարություն Մարության:*

Հայրս՝ Արել Իսկանդարի Օրդուխանյանը, ձերբակալվել է 1937 թ. հոկտեմբերին, մորս՝ Էվելինա Վարդանի Կիրակոսյանին, չեն աքաղարել, քանի որ այդ ժամանակ նա հղի էր ինձնով, պետք է ծննդաբերեր: Դրա համար իմ շնորհիվ մամաս մնաց, ես ծնվեցի մարտին, պապաս էդ ժամանակ արդեն էստեղ բանտում էր նստած: Ես ունեմ նաև քույր՝ Կարինե, որն ինձանից երեք տարով մեծ է:

Պապան ծնվել է 1902 թ. Սիսիանի շրջանի Շաղատ գյուղում: Նա Ալավերդու շրջկոմի առաջին քարտուղարն էր:¹ Եվ երբ իրեն բռնել են, մեղադրել են այն բանում, որ այնտեղ գործարանները սկսել են քիչ արտադրանք թողարկել, ամեն ինչ ավելի վատ է դարձել, որ իբր սաքոտած էր անում, ժողովրդի թշնամի էր:² Իմ հայրը փաստաթղթերով ապացուցում էր, որ ամեն ինչ հակառակն է, մինչև որ հասկացավ, որ անօգուտ է ինչ-որ բան ապացուցելը: Ես սա պատմում եմ իմ մամայի պատմելով:

Մամայիս մաման Բաքվից երեք աղջիկների հետ փախել էր 1918 թ.: Մամաս 1914 թվի ծնված էր: Իրենք փախել են Գյումրի, քանի որ տատիկի ազգուտակը գյումրեցիներ էին: Մամայիս պապային թուրքերը մորթել են հենց Բաքվի հիվանդանոցում [1918 թ.]: Նա որք թողեց չորս երեխաների, ու նրանցից մի աղջիկը մահացավ դեռ 1918 թ.: Մամաս տարիներ անց աշխատում է Լենինականի տեքստիլ կոմբինատում. համարձակ, երիտասարդ, գեղեցիկ աղջիկ էր, 18-19 տարեկան: Այստեղ էլ ծանոթանում է պապային. ինքը կուսակցական աշխատող էր, գնացել էր գործարան՝ երևի թե բանվորների հետ զրուցելու: Դե իմ մաման ամուսնացավ, ու պապան րե-

¹ Ըստ քրեական գործի (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 268)՝ Ա. Օրդուխանյանը եղել է նաև Ամասիայի շրջկոմի քարտուղար, Երևանի քաղկոմի երկրորդ քարտուղար, ձերբակալության պահին՝ ՅԿ(բ)Կ ԿԿ-ի հրահանգիչ:

² Ա. Օրդուխանյանը մեղադրվել է 1935 թ.-ից Հայաստանի հակախորհրդային, աջ-տրոցկիստական, նացիոնալիստական կազմակերպության անդամ լինելու, գյուղատնտեսության, արդյունաբերության և կուսակցական աշխատանքում վնասարար գործունեության, հակահեղափոխական նացիոնալիստական պրոպագանդա և ազիտացիա վարելու մեջ: Ըստ մեղադրական եզրակացության՝ կազմակերպության նպատակն էր զենքի ուժով խորհրդային իշխանության տապալումը հանրապետությունում, Հայաստանի անջատումը ԽՍՀՄ-ից ու կապիտալիզմի վերականգնումը: «Կազմակերպության» ղեկավարներն էին Ա. Խանջյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ա. Ամատունին և Ա. Գուլոյանը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 268, թ. 1, 2:

րեց մամայիս, նաև տատիկիս ու նրա երկու աղջիկներին Երևան: Բոլորով բնակվում էին Ալավերդյանի վրայի բնակարանում: Միջամտում է Ազատան. «Ասում էին, թե հենց այդ բնակարանի վրա աչք ունեին, որ դանոս [մատնագիր] գրեցին»: Մեծ, լավ բնակարան էր: Էկան, բնակարանից քշեցին [հորը բանտարկելուց հետո], մամային տարան Ալավերդյանի վրայի տպարանի հայաթը: Այնտեղ, որտեղ հիմա Մշակույթի նախարարությունն է և այլն, այդտեղ նախկինում հյուղակներ էին. մեզ զցեցին այդտեղ, մենք էլ այնտեղ մեծացանք:

Մինչև որ վերադարձավ հայրիկը: Արդարացման դատավճռում գրված էր մոտավորապես, որ արդարացված է հանցանքի բացակայության պատճառով: Դեղոն կիսաբերան ասում էր, թե դե պարզ է, թե ով է գրել դանոսը: Ասեմ, որ հայրիկս ոչինչ չի ստորագրել, նա երկաթյա մարդ էր:³ Ու քանի որ ոչինչ չէր ստորագրում, նրան չէին կարող գնդակահարության դատապարտել, ինչ-որ տեևց բան եմ հիշում: Որքան ես գիտեմ, դատ եղել է:⁴ Պապայիս Երևանի ԿաԳեԲե-ի բանտում պահեցին մինչև ապրիլ-մայիս, հետո արքունեցին Սիբիր: Մամաս պատմում էր, որ ինքը հղի վիճակում պերեդաչաներ [ուտելիքի փաթեթներ] էր տանում բանտ, այնտեղ հսկայական հերթեր էին, ու մեկ էլ, ասում է, մի օր էդ հերթի մեջ հեծյալ միլիցիոներներ են մոտենում, ու դրանցից մեկը՝ ղեկավարը, գեներալ Խվորոստյան [ազգանունով], մտրակով սկսեց էդ պերեդաչա բերողներին խփել ու ասել. «Разогнать эту контрреволюционную мразь» [«Տրել այս հակահեղափոխական ոչնչությունը»]: Ու հետաքրքիր է, որ ժամանակ անց այդ մարդուն էլ բանտարկեցին:

Այ տեևց պապաս գնաց Սիբիր: Նորիլսկ: Միջամտում է Ազատան. «Նրան տվեցին պոժիզնեննի [ցկյանս] բանտարկություն, բայց նստեց 18 տարի:⁵ Էդ բարոն էր էդպես ասում»: Բայց արքորավայրի փոփոխություններ եղել են:⁶ Սկզբում լեստպովալի [անտառահատման] գործի վրա է եղել, հետո են տարել Նորիլսկ»: Երբ նստած էր, նրանց տանում էին տայգա, ընդ որում պապան ասում էր, որ ոչ մի հսկողություն չկար: Որովհետև փախչելու հնարավորություն չկար: Ով էլ որ փախչեր, կմեռներ ցրտից: Այսինքն՝ նրանց [արտորականներին] հսկելու կարիք էլ չկար: Նրանք բոլորը վերադառնում էին իրենց բարաքները: Պապաս պատմում էր, որ իրենց բարաքներում սո-

³ Քրեական գործում նշված է, որ Ա. Օրդուխանյանն իրեն մեղավոր չի ճանաչել: Տես ՅԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 268, թ. 2:

⁴ Իրականում եղել է ԽՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական կոլեգիայի արտագնա փակ նիստ 1938 թ. հուլիսի 20-ին: Տես ՅԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 268, թ. 5:

⁵ Ըստ քրեական գործի՝ Ա. Օրդուխանյանին դատապարտել են 15 տարվա բանտարկության՝ ողջ անձնական գույքի բռնագրավմամբ: Ժամկետը հաշվվել է 1937 թ. հոկտեմբերի 14-ից: Տես ՅԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 268, թ. 5:

⁶ Ըստ քրեական գործի՝ արքորավայրերից երկի թե առաջինը եղել է Կրասնոյարսկի մարզի Ենիսեյան շրջանի Կարգինո գյուղը: Տես ՅԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 268, թ. 13:

ված էին պահում: Մի օր էլ Մոսկվայից հանձնաժողով եկավ, բոլորին հավաքել են, ու սկսել են հարցնել, թե դե ինչ, ձեր մոտ ամեն ինչ է կարգին, դուք ամեն ինչով եք գոհ: Պապան ասել էր, թե գիտեք ինչ, գուցե ավելի լավ է մեզ միանգամից գնդակահարել, քան թե այսպես դանդաղորեն սովամահ անել:

Միջամտում է Ագատան. «Պապիկն ինձ որ պատմում էր, իհարկե որոշ խմբագրումներով էր պատմում: Աշխատում էր սիրուն պատմություններ պատմել, օրինակ՝ ձիու պատմությունն ինձ շատ է պատմել: Բայց մեկ-մեկ էլ իր տեսած իրոք դաժան պատմություններն էր պատմում և՛ հարցաքննությունների, և՛ արքայի մասին: Տպավորվել է հատկապես իր մի արտահայտությունը. «Մարմինս դարձել էր մսե մոխրամաս», այսինքն՝ սիգարետները հանգցնում էին իր մարմնի վրա: Ու նրա մարմնի որոշ մասերի վրա այդ այրվածքների հետքերը մնացել էին: Պատմում էր, որ ասեղներ էին մտցնում եղունգների տակ»:

Էս վերջերս ես անընդհատ հիշում եմ պապայիս. մեղավոր եմ զգում իր առաջ: Որովհետև մենք՝ ես ու քույրս, սկիզբը [արքայից հոր վերադառնալուց հետո] էքսան վատ վերաբերվեցինք իր հետ: Ահավոր: Որ ինքն ասաց, թե ես բնակարանը կստանամ, ու ես կգնամ, [քանի] որ աղջիկներս չեն ուզում ինձ: Մենք էլ գիտեք ինչու էինք այդպես՝ մեզ մոտ խանդ կար մեր մամայի պատճառով: Ամեն ինչ հանգում էր դրան:

Երբ պապան արքայում էր, մեր տանն արգելված էր այդ թեմայի շուրջ խոսելը: Ամբողջ 18 տարի ապրում էինք տպարանի բակում: Մամաս գլխավոր հաշվապահ էր աշխատում «Նեվտեքիտում»: Բակում ես շատ ազարտնի [կրքոտ, տաքարյուն] խաղացող էի, ու ես երբեք չէի տարվում: Երբեմն էլ երեխեքը կատաղում էին ու դուրս էին տալիս. «Իսկ քու պապադ քանտում ա նստած»: Ես միանգամից սկսում էի լացել ու տուն էի գնում: Էլ չեմ ասում դպրոցում: Մեզ մոտ *свободная директриса* [սրիկա տնօրենուհի] կար: Պուշկինի [անվան] դպրոցում էի սովորում: Նա բռնադատվածի կին էր, բայց պաշտոնապես նրանից հրաժարվել էր: Նա անընդհատ մտածում էր, թե ոնց անի, որ ինձ էլ դպրոցից հանի: Ու ինչ որ լիներ, ինքն ասում էր՝ Конечно, это могла сделать только дочь контрреволюционера – Ордуханян Ира [Իհարկե, դա կարող է արած լինել միայն հակահեղափոխականի դուստրը՝ Իռա Օրդուխանյանը]: Այդպես ասում էր կամ դասարանում, կամ էլ ուսուցչանոցում՝ բոլոր ուսուցիչների ներկայությամբ: Այդ կինը մեզ Սահմանադրություն էր դասավանդում: Իր պատճառով քույրս ոսկե մեղակ չստացավ. Կարինեն փայլուն սովորում էր: Ավարտական քննության ժամանակ այդ տնօրենուհին հանձնաժողովի կազմում էր, և երբ քույրս, ինչպես հարկն է, պատասխանում էր, ասաց, թե Ну, дочь контрреволюционера не может иметь “пятерку” по “советской конституции” [«Դե, հակահեղափո-

խակասի աղջիկը չի կարող «հինգ» [գերագանց] ստանալ «սովետական սահմանադրություն» առարկայից», ու «չորս» [լավ] դրեցին: Դա նրա միակ «չորս» գնահատականն էր ատեստատում, ու նա արծաթե մեդալ ստացավ: Երբ քույրս ցանկանում էր գնալ Մոսկվա՝ բուհ ընդունվելու, ասացին, թե այն դու հակահեղափոխականի աղջիկ ես, ընդունվիր Երևանում ցանկացած ինստիտուտ, որտեղ մատոդ դնես, դու առանց մրցույթի անցնում ես, բայց գնալ սովորել Մոսկվայում դու չես կարող:

Ես արդեն յոթերորդ դասարանում էի, մեզ մոտ ռուսաց լեզվի դաս էր, ու ես պետք է քերականական մի օրինակ բերեի նախադասության միջոցով: Ու ես բռնեցի գրատախտակին գրեցի. Маргарита Богдановна, директор нашей школы, оказалась несправедливой учительницей [«Մարգարիտա Բոգդանովնան՝ մեր դպրոցի տնօրենը, անարդար ուսուցչուհի է»]: Դասարանը ստռեց, ուսուցչուհին՝ Արփիկ Նիկոլաննան, քարացավ: Նա դրա մասին տեղյակ պահեց տնօրենուհուն: Ինքն ասաց, թե եթե ես չասեի, ուրիշները տեղ կհասցնեին, ու տնօրենն ինձ կասեր, թե դու ինչու՞ չես ասել, որ նման բան է եղել: Դե, մի խոսքով, հետապնդումներ սկսվեցին իմ նկատմամբ, ինձ 15 օրով հեռացրին դպրոցից, ողջ դասարանը գալիս էր մեր տուն, բոլորս էին հայտարարել, հետո տնօրենն ասաց, թե փոխեք իրեն ուրիշ դասարան, քանի որ այդ դասարանը նրա ազդեցության տակ է գտնվում, մի խոսքով՝ ուսումնառությանս տասը տարիներն անցան իմ նկատմամբ նման ատելության պայմաններում: Միջամտում է Ագատան. «Բարոն պատմում էր, որ դասարանում ժողովներ էին անցկացնում, Իռային ստացնում էին առաջին կարգում ու սկսում էին խոսել հակահեղափոխականների, ժողովրդի թշնամիների, նրանց արած վատ բաների ու պատիժներ կրելու մասին, ու նա [Իռան] մյուսների հետ միասին պետք է ծափահարեր: Որ Իռան իր տեղն իմանար»:

Այո՛, Նորիլսկի հետ նամակագրություն կար: Միջամտում է Ագատան. «Բարոն շատ մանրամասն գրում էր [դեղոյին], թե աղջիկները ոնց են մեծանում, ոնց են սովորում, ինչ են անում: Կապը մշտապես կար»: Մենք նրան ծանրոցներ [մթերային] էինք ուղարկում: Չնայած հանդիպելու հույս չունեինք: Ինձ մոտ կա պապի նամակը Ստալինին: Սիրբիից: Պապան շատ մանրամասն բացատրում էր այդ նամակում, որ իր նկատմամբ մեղադրանքը բացարձակապես անիմաստ է: Այ էդ նամակը ես պահել եմ, չնայած ինչոր էջեր բացակայում են:

Մամաս երկու կրակի արանքում էր: Էդ խեղճ պապին մի հատ որ ձեռքը դներ մամայիս ձեռքի վրա, մենք սենց էինք լինում [ցույց է տալիս գերլարված դեմք]: Կարինեն նույնիսկ հոգեկան խանգարման նման մի բան ստացավ: Մամաս իրան տարավ բժշկի: Բժիշկն ասաց, թե ես չգիտեմ ձեռ

ընտանիքում ինչ է կատարվել, բայց էս աղջկան շուտ տարեք քաղաքից: Դե հետո էդ հակամարտությունը շարունակվում էր, շարունակվում էր, բայց քիչ-քիչ թեթևանում էր: Հասկապես երբ տեսանք, թե ինչպես նա սիրեց մեր երեխաներին՝ գժի պես. որ մեզ չէր մեծացրել, իր ողջ սերը տվեց թոռներին... Ես ու քույրս իհարկե հասկանում էինք, որ մեր հայրը մեղք չունի, որ 18 տարի անց է կացրել բանտում ու աքաղարկում: Հիմա, երբ ես փորձում եմ վերլուծել, թե ինչու էինք այդպես մեզ պահում, ես հո հիմար չեմ, ինչու՞ էի այդպես, մտածում եմ, թե գուցե մենք անգիտակցաբար մեր «վրեժն» էինք հանում մեր պապայից մեր սարսափելի մանկության համար: Կարող է մենք նույնիսկ դա չէինք գիտակցում: Վերջում մենք արդեն շատ սիրեցինք պապային (շարունակում է լացակումամ), բայց *дорога к этой любви через ад лежало просто* [«Ճանապարհը դեպի այդ սերն անցնում էր դժոխքի միջով»]: Ու ես հիմա դրա համար մեղավոր եմ զգում, որ մտքովս էլ չանցավ, մի հատ ներողություն էլ խնդրեմ իրենից: Նույնիսկ մտքովս չանցավ: Որ մի հատ ասելի, թե պապ ջան, կներես, էլի, հիմար եմ եղել, չեմ հասկացել, ես հիմա եմ այդ ամենը հասկանում (լացակումամ ձայնով): Պապան մահացավ 1985 թվին:

Երբ որ ինքը նոր եկավ, իր մոտ պատմելու մեծ ցանկություն կար: Միջամտում է Ագատան. «Էն ժամանակ չգիտեմ ով բաբոյին ասաց, որ իրան պետք ա միանգամից շեղել էդ խոսակցություններից, որ ինքը նորից չվերապրի էդ դժվարությունները: Բայց նա դրա [այդ մասին պատմելու] կարիքը զգում էր: Իրան Ֆրունզն [կիևոռեժիսոր Ֆրունզե Դովլաթյան, Իռեն Օրդուխանյանի երկրորդ ամուսինը] էր լսում»:

Երբ պապան հետ եկավ, Քոչինյանը [այն ժամանակ՝ Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահ] կանչեց իր մոտ, ասաց, թե «Աբել, Երևանի որ շենքի վրա որ մատդ դնես, այնտեղ դու բնակարան կստանաս»: Ու պապան ընտրեց այս շենքը [Մոսկովյան 8], որն այն ժամանակ դեռ լրիվ կառուցված չէր: Հետո աշխատեց Պետպլանում ու [կյանքի] վերջին տարիներին Հայաստանի գունավոր մետաղների գլխավոր մասնագետն էր: Ու իրան շատ էին սիրում: Քոչինյանն էլ ասել էր, թե քո արձանը կկանգնացնենք գործարանի բակում: Ինչու՞: Որովհետև ռուսներն ասել էին, թե դուք [պղնձի] հումքը տվեք մեզ, մենք կվերամշակենք: Ու այդ հարցով պապային ուղարկեցին Մոսկվա, ու նա այնտեղ ապացուցեց, որ մեր հումքը մենք կարող ենք վերամշակել ու ձեզ արդեն պատրաստի արտադրանք տալ: Ու երբ նա այս որոշմամբ վերադարձավ, Քոչինյանն ասաց, թե էդ գործարանը հենց որ բացեն, Աբել, պղնձից ես քո բյուստը [կիսանդրին] դնելու եմ զավորի [գործարանի] դեմը:

Սովետական կարգերի լավ կամ վատ լինելու մասին պապան երբեք չէր խոսում: Երբեք: Միջամտում է Ագատան. «Իր ներկայությամբ, որ Ստա-

լինից վատ բան էին ասում, ինքն ասում էր՝ «Лес рубят – щепки летят» [«Աստաղը որ հատում են, տաշեղներ են թռչում»]: Ու որ սկսում էինք վիճել, ապացուցել, որ դու՛ էիր շեպական [տաշեղը], թե՛ Բակունցն էր շեպական, ինքը չէր սիրում էր խոսակցությունները»: Շատ զուսպ էր: Միջամտում է Ագատան. «Մտքում քննադատում էր, բարձրաձայն՝ չէ»: Ինքը վախենում էր, որ մենք լեզուներս բաց թողնենք, մեզ վնասենք: Էդ վախը մեջը կար: Ու հայտնի չէր, կարող է վերադառնային, չէ՛, այդ օրերը: Քննադատական բնույթի խոսակցություններին ինքը չէր մասնակցում: Ահա այսպիսի բաներ:

Ագատան շարունակում է. «Ստալինիզմի նման վիճակներ ամեն պետության կյանքում էլ լինում են: Իսկ ինչ է, Փարիզյան կոմունան ավելի լավն էր: Դեղոն էր միշտ այդպես ասում: Նաև ցիտում էր. «Революция, как Сатурн, пожирает своих детей» [«Հեղափոխությունը, Սատուրն աստծո նման, խժռում է իր զավակներին»]:⁷ Դե գուցե ռուսների մեջ մի քիչ այլ ձևի էր, բայց, կարծում եմ, որ նման սարսափելի ժամանակներ բոլոր երկրներում էլ լինում են: Հիմա մոդայիկ են դարձել Ստալինի մասին օգտագործվող մի շարք արտահայտություններ՝ «խարհիզմատիկ անձնավորություն», որ նա, թերևս, ինչ-որ կերպ, Հիտլերի նմանողությամբ, գրավում էր մարդկանց, կարողանում էր ամբոխին կառավարել. երևի թե սատանայից ստացած հունար ուներ: Ինչու՞, օրինակ, Գերմանիայում իշխանության եկավ Հիտլերը: Ինչ-որ օրինաչափություն կա: Գալիս է ինչ-որ զլոյ գենիյ [դաժան հանճար], և հետո բոլորը, սկզբում մեծ հոժարությամբ, հետո արդեն վախով ենթարկվում են: Կարող է պատճառները տարբեր են, բայց սխեման նույնն է: Ես այդպես եմ պատկերացնում, որ ինչ-որ մի պահ ծնվում է դաժան մի հանճար, որը բերում է դժբախտությունների»:

Շարունակում է Ագատան. «Հիմա 1937-ի նման ժամանակների գալու համար առնվազն պահանջվում է անձնավորություն: Իսկ ու՞ր է նման անձնավորությունը»: Ես կարծում եմ, որ նման ժամանակների վերադարձը հնարավոր չէ: Հիմա միջազգային իրավիճակն այնպիսին է, որ ոչ ոք նման բան թույլ չի տա: Ես չեմ զգում վախի մթնոլորտի սերմանման փորձեր: Շարունակում է Ագատան. «Եթե ես միտինգներին մասնակցեմ, ասենք թե լսոնական եմ [Լևոն Տեր-Պետրոսյանի հետևորդ], մի օր ես ընկնեմ կաղրի մեջ, ու մի օր ինձանից ինչ-որ չափով դժգոհեն գործի տեղը, կարող են ասեն «ցուեություն»: Ինչու՞ եմ այդպես մտածում: Որովհետև մեկին հանեցին: Ճիշտ է, ինքը ժողովապետ էր: Ինքը լսոնական էր, պարզապես գնացել էր միտինգի, սկարել էին, ընկել էր կաղրի մեջ: Դա եթեր չգնաց, բայց նրան հանեցին աշխատանքից: Այնուամենայնիվ, մի բան կա: Հետո, մի քանի ամիս առաջ

⁷ Արտահայտությունը վերագրվում է Ֆրանսիական մեծ հեղափոխության ականավոր գործիչ Ժորժ Ժակ Դանտոնին, որ նա արտաբերել է մահապատժից առաջ՝ 1794 թ. ապրիլի 5-ին:

էր, լնոնականների միտինգն էր, «World Vision» կազմակերպության անդամներից մեկը գնացել էր այդ միտինգին ու նաև ելույթ էր ունեցել: Դրանից հետո նա մեքենայով տուն էր գնացել, անծանոթ մարդիկ իր հետևից մտել էին բակ, դաժանորեն ծեծել, նա ընկել էր հիվանդանոց: Բայց քանի որ «World Vision»-ը ավետարանական եկեղեցու կողմից հովանավորվող միջազգային կազմակերպություն է, ադմուկ եղավ, այդ մարդուն հրավիրեց ամերիկյան դեսպանը և ասաց, թե մենք պատրաստ ենք տրամադրել Ձեզ «գրին քարտ», եկեք մեր երկիր բնակության, մի եվրոպական կազմակերպությունից էլ հրավիրեցին, թե եթե ցանկանում եք քաղաքական ապաստան խնդրել եվրոպական որևէ երկրում, մենք Ձեզ կարող ենք օժանդակել, ադմուկը եղավ շատ, նույնիսկ կատակ հայտնվեց, թե. «Էդ ծեծողները ո՞վ էին, տվյալները չունեն, Սուրեն, մեզ էլ ասես»: Բոլորին դա շատ դուր եկավ»: Ազատան շարունակում է. «Ստալինյան բռնությունների գոհերի մասին խոսելն անհրաժեշտ է թեկուզ այդ սերնդի նկատմամբ հարգանքից ելնելով: Իսկ որ այդ «խոսելը» ինչ-որ բան կկանխարգելի, կասկածում եմ»: Իռենը եզրափակում է. «Խոսելն անհրաժեշտ է, որ հասկացնեն, որ դեռևս ամեն ինչ մոռացված չէ: Թող հույս չունենան, որ դա մոռացել ենք, որ կարելի է նորից սկսել: Դրա մասին պետք է խոսել: Մշտապես: Որ դա չի ներվել, դա չի մոռացվել:

«ԱՄԵՆԱՀԱՎՈՐՆ ԻՀԱՐԿԵ ՎԱՆԻ ԶԳԱՑՈՒՄՆ ԷՐ, ՈՐԸ ՄԱՐԴԿԱՆՑ ԴԱՐՁՐԵԼ ԷՐ ՍՏՐՈՒԿ»

Հարցազրույց Էդգար Տիգրանի Ջրբաշյանի (1930-2015) և Ռուբեն Տիգրանի Ջրբաշյանի (ծնվ. 1934 թ.) հետ: Երևան, 10 հունվարի 2014 թ.: Զրուցավար՝ Հարություն Մարության:

Էդգար Ջրբաշյանը տեխնիկական գիտությունների թեկնածու է, Ջրային պրոբլեմների և հիդրոտեխնիկայի գիտահետազոտական ինստիտուտի տնօրենի գիտության գծով տեղակալը, Ռուբեն Ջրբաշյանը երկրաբանական-հանքաբանական գիտությունների դոկտոր է, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի նախկին տնօրեն (ներկայում՝ տնօրենի խորհրդական և ռեզիդենտ երկրաբանության ու հրաբխագիտության բաժնի վարիչ): Հիմնական զրուցակիցը Ռ. Ջրբաշյանն է, մեկ-մեկ լրացումներ է անում Է. Ջրբաշյանը:

Տիգրան Արշակի Ջրբաշյանը ծնվել է 1889 թ. սոյեմբերի 9-ին Վանում:¹ Տարրական կրթությունը ստացել է Էրզրումի Արծյան (1896-1902), միջնակարգը՝ Վանի Երամյան վարժարանում (1902-1906) և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (1908-1912): Վերջինս ավարտելուց հետո նա 1913 թ. վերադառնում է Վան և նշանակվում Հայկազյան Կեդրոնական վարժարանի ուսուցիչ: Հենց այստեղ էլ, ստանալով իր մանկավարժական մկրտությունը, նա որոշում է իր հետագա ամբողջ գործունեությունը նվիրաբերել կրթության և մշակույթի բնագավառներին: Վանում Տ. Ջրբաշյանի աշակերտների թվում է եղել հետագայում Հայաստանի պետական-կուսակցական ականավոր գործիչ Աղասի Խանջյանը:

Վանից 1915 թ. հուլիսյան նահանջի ժամանակ Տիգրանը ծնողների, քրոջ ու եղբոր հետ գաղթել է Արևելյան Հայաստան: 1915-18 թթ. Տիգրանն ուսուցչություն է անում նախ Աշտարակի որբանոց-դպրոցում, այնուհետև, երբ ընտանիքով տեղափոխվում են Թիֆլիս, տեղի Հայկազյան բարեգործական ընկերության և Ներսիսյան դպրոցին առընթեր որբանոց-դպրոցներում: Մա դասավանդում էր մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, բնագիտություն առարկաները: 1917-20 թթ. Տ. Ջրբաշյանը սովորում է Թիֆլիսի անդրկովկասյան համալսարանում և միաժամանակ աշխատում Պոլիտեխնիկական ինստիտուտի հանքաբանության կաբինետում: 1920 թ. նա՝ որպես լավ ուսանող,

¹ Պրոֆ. Տիգրան Ջրբաշյանի կենսագրական ու մասնագիտական գործունեության հիմնական տվյալները քաղված են Լ. Ա. Ավագյանի «Տիգրան Ջրբաշյան» գրքույկից (Երևան, 2004):



Նկ. 28. Տիգրան Ջրբաշյան. դիմապատկեր:

Պողոս Նուբարի կրթաթոշակով մեկնում է Փարիզ և ընդունվում Սորբոնի համալսարան, այնուհետև փոխադրվում Փարիզի հանքաբանական ինստիտուտ, որն ավարտում է 1925 թ. և ստանում լեռնային ինժեներ-հանքաբանի կոչում: Տիգրանն ազատորեն տիրապետել է ֆրանսերենին, անգլերենին, ռուսերենին: Հընթացս Ս. Ջրբաշյանը աշխատում է նաև Փարիզի բնապատմական թանգարանում ականավոր երկրաբաններ ակադեմիկոս Ա. Լակրուայի, պրոֆեսորներ Է. Օգի և Պ. Բոննեի ղեկավարությամբ, դառնում է իրոք փայլուն մասնագետ: Դիպլոմային աշխատանքի պաշտպանության ժամանակ

եթովպացի դիվանագետից աշխատանքի հրավեր է ստանում, որը, սակայն, մերժում է՝ պատճառաբանելով, որ ինքն իր հայրենիքին ու ժողովրդին պետք է վերադարձնի այն բոլորը, ինչ ստացել է Փարիզում ուսանելու տարիներին (նկ. 28):

1925 թ. վերջերին Ս. Ջրբաշյանը վերադառնում է Երևան և արդեն հաջորդ տարվա սկզբից աշխատանքի է ընդունվում Երևանի պետական համալսարանում՝ որպես ընդհանուր երկրաբանություն, բյուրեղագիտություն (նկ. 29) և հանքաբանություն առարկաների դասախոս: Կարճ ժամանակամիջոցում նա կարողանում է ստեղծել բյուրեղագիտական-հանքաբանական և ընդհանուր երկրաբանության կաբինետներ, բյուրեղագիտական արհեստանոց, ձեռնամուխ է լինում կադրերի պատրաստման գործին: 1934 թ. նա նշանակվում է իր ակտիվ մասնակցությամբ ստեղծված աշխարհագրական-երկրաբանական ֆակուլտետի առաջին դեկան և ընդհանուր երկրաբանության ամբիոնի վարիչ: 1935 թ. նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում (նկ. 30): Նա կազմում է ընդհանուր երկրաբանության դասընթացի ծրագիր, երկրաբանական տերմինների հայերեն բառարան, թարգմանում մասնագիտական գրքեր, որոնք, սակայն, մնացին անավարտ ու չհասան մեզ: 1935-37 թթ. Ս. Ջրբաշյանն իր գիտահետազոտական աշխատանքները շարունակում է ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի (ԱրմՖԱՆ) Երկրաբանական ինստիտուտում (հետագայում՝ ՀԽՍՀ ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ) որպես գիտական աշխատող և Կոտայքի



Նկ. 29. Տիգրան Զրբաշյանը (աջից երրորդը) բյուրեղագիտություն առարկայի դասախոսության ժամանակ:



Նկ. 30. ՀՍԽՀ Կենտրոնականի պարտիզիրը, որը տրվել է գիտաշխատող Տիգրան Զրբաշյանին «գիտության ասպարեզում մարտցած աչքի ընկնող ծառայությունների համար»: 1935 թ. նոյեմբերի 28:

երկրաբանական արշավախմբի պետ: Տ. Ջրբաշյանը ինստիտուտի հիմնադիր, նշանավոր երկրաբան Հ. Կարապետյանի հետ միասին եղել է հանրապետության երկրաբանական ծառայության հիմնադիրներից մեկը: Պրոֆ. Ջրբաշյանն առաջին գիտնական-հետազոտողն էր, որ ուսումնասիրեց Հայաստանի ոչ մետաղական օգտակար հանածոները. նրա հաշվետվություններում ընդարձակ տեղեկություններ կան հանրապետության տարածքում աղի, պեմզայի, պեռլիտի, մարմարի, ծծմբի, այրվող թերթաքարերի, տրեպելների, բարիտի, օբսիդիանի, գունազեղ քարերի, ավազների և հրաբխային խարամների երևակումների և հանքավայրերի մասին: Տ. Ջրբաշյանի կանխատեսումները Երևանի մերձակայքում բարձրորակ աղի հսկայական պաշարների վերաբերյալ հետագայում հանքավայրի արդյունաբերական շահագործման հիմք հանդիսացան: Նրա հայտնագործությունների հիման վրա ստեղծվել և գործել են Արագած-պեռլիտ, «Հայքնագույնքարեր», «Իխատոմիտներ», գաջի և շինանյութերի մի շարք ձեռնարկություններ:

Տ. Ջրբաշյանն ամուսնացել էր 1927 թ. Էլբիս Տիգրանի Կարասեֆերյանի (1909-1986) հետ, ում ընտանիքը նույնպես գաղթել էր Վանից: Էլբիսը վաղ հասակում կորցրել էր ծնողներին և քրոջը ու Արտաշ եղբոր հետ բնակվում էր Թիֆլիսում: Եղբայրն աշխատում էր, իսկ Էլբիսը սովորում էր դպրոցում:

Երիտասարդ ընտանիքը բնակարան է ստանում ՀՕԿ-ի շենքում (ներկայումս՝ Արովյան 29, Արովյան-Իսահակյան փողոցների խաչմերուկում գտնվող Արմէներգոյի բակում): Այդտեղ էին բնակվում նաև Դերենիկ Դեմիրճյանը, Վահան Միրաքյանը, Նաիրի Զարյանը, Ռուբեն Զարյանը, Միքայել Մանվելյանը: Էդգարը հիշում է, որ «[19]36 թվի երկրաշարժի ժամանակ որ ցնցումներ էին լինում, մեզնից մի հարկ վերև բնակվող Միքայել Մանվելյանը և Նաիրի Զարյանը գալիս, դուռը ծեծում ու ճշտում էին, եթե հայրս տանն է, ուրեմն վտանգ չկա»: Ռուբենն ավելացնում է, որ հայրը կառավարության հանձնարարությամբ օրը երկու-երեք դասախոսություն էր կարդում Կուլտուրայի տան դահլիճում՝ երևանցիներին ծանոթացնելով երկրաշարժի ծագման պատճառների ու դրանցից պաշտպանվելու առաջին անհրաժեշտ քայլերի մասին՝ այդ կերպ ինչ-որ չափով հանգստացնելով ժողովրդին:

1937 թ. օգոստոսի 30-ին, ավարտելով դաշտային աշխատանքները, Տ. Ջրբաշյանը Գատնիից վերադառնում է Երևան: Ինչպես պատմում է Էդգարը. «հայրս ամբողջ կյանքում երազել էր ինձ դպրոց տանել, սակայն դա չիրականացավ»: Օգոստոսի 31-ի գիշերը նա ձերբակալվում է: Էդգարը հուզված շարունակում է. «Ես ուշացած եմ գնացել դպրոց ու պատժվել եմ»: Խուզարկության ժամանակ տարել են մի քանի գրքեր և ողջ նամակագրությունը, որ նա վարում էր արտասահմանի իր գործընկերների, աշխարհահռչակ գիտ-

նականների հետ: Էդգարի բնութագրմամբ. «Պապայի տանելու հետ կապված հիշում եմ մեր բնակարանի վիճակը: Կաշա [շատ խառն] էր գիշերվա խուզարկությունից հետո: Տարան նաև հորս լուսանկարչական ապարատը, որը երևի էդ ավազակներից մեկի դուրն է եկել: Ոչ էլ գրել էին ակտի մեջ»²:

Ռուբենի բնութագրմամբ. «Հայրս քաղաքականությամբ երբեք չի զբաղվել, ոչ մի կուսակցության անդամ չի եղել, բայց եղել է ճանաչված, հարգված անձնավորություն... Մեղադրանքը եղել է այն, որ սովորել է Ֆրանսիայում և ուրեմն արտասահմանյան լրտես է»:³ Էդգարի փոխանցմամբ. «Մահացել է էստեղ, ԷնԿաՎէԴ-ի պաղվալներում,⁴ 15 օր բանտարկությունից հետո:⁵ Մեզ այդպես ասացին Արդարադատության նախարարությունում»: Ռուբենը շարունակում է. «Դատապարտման մասին որոշումը չկա: Մեղադրանքը այն էր, որ նա արտասահմանյան լրտես է: Թե ինչու՞ մն

² Իրականում գրել էին, սակայն ստացականի երկու օրինակներն էլ մնացել են Տ. Ջրբաշյանի քրեական գործում (ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 1, գ. 1076, թ. 7): Երրորդ օրինակ կամ չի եղել, կամ էլ կորել է ձեռքակալությանը հաջորդող տեղափոխումների ժամանակ, սակայն փոքրիկ Էդգարի մեջ «ամսեղ» հոր ֆիզիկական կորստի զգացմանը գումարվել է նաև «ամսեղ» ֆոտոապարտի ոչնչով չարդարացված օտարումը:

³ Ջրբաշյան ընտանիքին 1955 թ. տրվել է միայն արդարացման փաստաթուղթը, գործի հետ կապված այլ հանգամանքներ չեն ներկայացվել: Մինչդեռ Տ. Ջրբաշյանը եղել է հայաստանյան ներքին գործերի մարմինների ուշադրության ծիրում դեռևս 1926 թվականից, այսինքն՝ Փարիզից վերադառնալուց անմիջապես հետո: Այդ տարի նա իբր թե հանդիպել է «Արևելքի հարցերով անգլիական հետախուզության սպա» որակված Արշակ Սաֆարսյանի հետ ու նրան փոխանցել «Իրաքարային կուսակումների հանքավայրերի» մասին տեղեկատվություն, որը գնահատվել է իբրև «տնտեսական բնույթի լրտեսություն»: 1927 թ. նա իբր օժանդակել է Երևան եկած ու Արարատ բարձրանալ պլանավորող «Մերձավոր Արևելքի գծով գերմանական գլխավոր շտաբի հետախույզ Օսկար Նիդեյմեյերին», իսկ 1932 թ. հանդիպել է կենսաբանի քողի ներքո հանդես եկող անգլիացի հետախույզ Դեվիդ Բեկստոնին: Այս հիմքով էլ նրան մեղադրանք է առաջադրվել Հայկ. ԽՍՀ քրեական օրենսգրքի 58ա հոդվածով: Մեղադրանքի փաստաթղթային տեղեկանքը կազմվել է 1937 թ. հուլիսի 7-ին, իսկ ձեռքակալության թույլտվությունը՝ օգոստոսի 11-ին: Տե՛ս ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 1, գ. 1076, թ. 1, 2, 4, 18-20, 24-25:

⁴ Տ. Ջրբաշյանի գործում առկա է հարցաքննությունն իրականացնող սպայի զեկուցագիրը, որ Ջրբաշյանն իրեն ներկայացված լրտեսության մեղադրանքից հետո իրեն վատ է զգացել, ուշաթափվել, ուշքի գալուց հետո՝ բողոքել սրտից և առավոտյան կողմ վախճանվել է: Ոչ պրոֆեսիոնալ բժշկի կողմից իրականացված հերձումը նույնպես հաստատել է (առկա են ակտ և 1955 թ. հարցաքննության նյութերը), որ Ջրբաշյանն ունեցել է սրտային խնդիրներ: Մինչդեռ պրոֆ. Ջրբաշյանը, հարազատների վկայությամբ, աշխատանքի բերումով շատ է քայլել և երբեք առողջական խնդիրներ չի ունեցել: Տե՛ս ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 1, գ. 1076, թ. 11-15:

⁵ Այդ մասին Ջրբաշյանները տեղեկացվել են միայն 1955 թ.: 1954 թ. հուլիսի 14-ին Տ. Ջրբաշյանի քույրը՝ տկն Սազդան, դիմում է գրում ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրին, որտեղ նշում է, որ իր մայրը (տկն Սալոմե) մինչ իր մահը այնպես էլ ոչինչ չիմացավ որդու ձակատագրի մասին և խնդրում է «վերանայել եղբորս գործը ու, եթե նա կենդանի է, արդարացնել նրան, եթե ոչ՝ արդարացնել նրա անունը»: Տե՛ս ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 1, գ. 1076, թ. 17: Ռուբեն Ջրբաշյանը նույնպես իր մոր պատմածներից հիշում է, որ հոր ձեռքակալությանը հաջորդած տարիներին մի քանի մարդ եկել է իրենց տուն և պատմել, թե իբր տեսել է Տիգրանին կամ թե նրա հետ եղել է Սիբիրում և այլն: Այսինքն՝ իրոք որ հույս է եղել, որ Տիգրանը կենդանի է:

է լրտեսությունը դրսևորվել՝ չկա որևէ ապացույց կամ հիմնավորում:⁶ 1930-ական թվականներին հայրս եղել է նաև Ադապի Խանջյանի խորհրդատուն հանքաբանության հետ կապված հարցերի գծով: Խանջյանը նրան շատ գնահատում, հարգում ու լսում էր նրա խորհուրդները: Ու իհարկե դա էլ իր զգալի դերն ունեցավ հորս ձերբակալության գործում: Ձերբակալությունից անմիջապես հետո մեզ բնակարանից արտաքսեցին, հանեցին դուրս գեցեցին»: Էդգարն ավելացնում է. «Այդ տանը տիրացավ Մնեյան ազգանունով մի ընտանիք: Կենտկոմի բաժնի վարիչ էր: Աչքը դրել էին տան վրա... Մեր բնակարանը երեքսենյականոց էր, կենտրոնում... Շենքի բնակիչներն այնքան խոսեցին դրանց վրա, թե դուք ճնց չամաչեցիք, եկաք մտաք այստեղ (լացակումած է պատմում), որ իսկապես այդ տունը դրանց ոտքերի տակ վառվում էր, թողեցին, գնացին: Երբ մեզ հանում էին տանից, մամային էին շատ խիստ նեղացրել՝ վիրավորելու չափ: Թե «զգույշ արեք, պղերը չփչանա», երբ մեր իրերը բանվորները հանում էին տանից: Արդեն նոր տանտերերն էին տնօրինում բնակարանը, նրանք եկել էին ու հետո մեզ հանել, այսինքն՝ նրանց ներկայությամբ էին մեր իրերը հանում տանից»:

Շարունակում է Ռուբենը. «Մենք արդեն երեքով մինչև 19157 թիվը, 20 տարի, բնակվում էինք վարձով, Պուշկինի փողոցի վրա, ներկայիս Ժուռնալիստների տան տեղում, ուր մի մեծ բակում ապրում էին 20-30 ընտանիքներ: Այդտեղ մեծացանք, ավարտեցինք դպրոց և ինստիտուտ: Եվ երբ 19157 թվին կառուցվեց Մոսկովյան 8 հասցեում շենքը, որպես բռնադատվածի ընտանիք այդտեղ ստացանք երկուսենյականոց բնակարան: Մեր բնակարանի ներքևի հարկում որպես բռնադատվածներ բնակարան էր ստացել ևս մի՝ Դանիելյանների ընտանիքը, իսկ հարևան մուտքում՝ նաև Օրդուխանյանների ընտանիքը»:

Եղբայրները հիշում են. «Պուշկինի փողոցում բնակվելիս առաջին շրջանում մեր հանդեպ վերաբերմունքը անբարյացակամ էր, կոչում էին «ժողովրդի թշնամու զավակներ», բայց ժամանակի ընթացքում վերաբերմունքը սորմալացավ: Մամային շատ էին հարգում, նա շատ կազմակերպված ու զուսպ կին էր: Նա ավարտել էր Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը և մինչև կյանքի վերջը աշխատում էր Բժշկական

⁶ Դա ցույց է տվել 1955 թ. մայիսից Տ. Ջրբաշյանի գործը վերաքննող Անդրկովկասյան ռազմական օկրուգի զինվորական դատախազի օգնական, իրավագիտության փոխգնդապետ Կոիլովի անցկացրած մանրագինի հետաքննությունը (ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 1, գ. 1076, թ. 18-62): Առկա փաստաթղթերի հետազոտմամբ և վկաների հարցաքննությամբ (այդ թվում և նախկին քննիչներից մեկի) նա մասնավորապես հիմնավորում է, որ Տ. Ջրբաշյանին առաջադրված մեղադրանքները շինծու էին, փաստերով չհիմնավորված, չստուգված ու չապացուցված (արդարացման դատավճռի հիմք կազմող որոշումը շարադրված է վեց էջում):

ինստիտուտում որպես դասախոս, դոցենտ էր»։ Ուշագրավ դրվագ է հիշում Էդգարը. «Բժշկական ինստիտուտում նա դոցենտի պաշտոնին հավակնելու իրավունք չուներ, որովհետև կենսագրությունը մաքուր չէր ժամանակի պատկերացումների համաձայն]։ Հորս արդարացումից հետո մի անգամ (այն ժամանակ Բժշկական ինստիտուտի ռեկտորը Էմիլ Գաբրիելյանն էր, նույնպես բռնադատվածի զավակ) ես գնացի նրա մոտ, ասացի, թե Էմիլ ջան, քո հայրիկը վերադարձավ, իսկ մորս ինչի՞ եք նեղացնում... Հիշում եմ (պատմում է լացակումած), ասաց, այխպեր, արի թքիր երեսիս, եթե մի քանի օրում այդ հարցը չլուծեն։ Ու երկու օր հետո դոցենտի լրացուցիչ տեղ տվեց, ու մայրիկը մրցույթով զբաղեցրեց այդ տեղը»։

Էդգարը սովորել է Կրուպսկայայի անվան դպրոցում, իսկ Ռուբենը՝ Ձերժինսկու։ Ռուբենը հիշում է. «Դպրոցում գիտեին հորս բռնադատված լինելու մասին, բայց ընկերների և դասատուների կողմից խտրություն չեմ զգացել, լավ էին վերաբերվում։ Մեր դասարանում սովորում էին պաշտոնյա և պատվարժան մարդկանց տղաներ, որոնց հետ ընկերություն էինք անում, նրանց տներ գնում։ Երևի նրանց ծնողները գիտեին, բայց երբեք մեր ընկերությանն արգելք չէին դնում, ինչի համար նրանցից միշտ շատ շնորհակալ եմ եղել։ Դպրոցական տարիների հետ կապված հիշում եմ մի դրվագ. ավարտում էի դպրոցը [19]52 թվին, երբ հայրս դեռ արդարացված չէր։ Մի օր դպրոցի տնօրենը կանչեց մամային ու ինձ, ասաց, թե Ռուբիկին մեղալ տալ չենք կարող, իրավունք չունեն և ավելացրեց՝ ոչինչ, կգնա, կընդունվի, կսովորի...»։ Մինչդեռ Էդգարը ստացել էր արծաթե մեդալ։

Շարունակում է Ռուբենը. «Ես ընդունվեցի Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետ, ուզում էի շարունակել հայրիկի գործը։ Ուսանողական տարիներին նույնպես խնդիրներ չեն եղել։ Այդ ժամանակ ֆակուլտետում դասախոսում էին հորս նախկին ուսանողները, նրանք շատ մեծ ջերմությամբ ու հարգանքով էին հիշում հորս, և դա ստիպում էր ինձ լավ սովորել, եղել եմ նույնիսկ «Լենինյան թռչակառու»։

[19]49 թ. հունիսն իհարկե հիշում եմ նաև այն պատճառով, որ մեր ընտանիքը խուսափեց արքայից։ Ինչու՞։ Որովհետև մեր բակում ապրում էր նախկինում բանակային հետախույզ, որն այդ տարիներին աշխատում էր ԿաԳեԲե-ում։ Արշակը։ Նա եկավ և մայրիկին ասաց, որ «գիշերը տանը պետք չէ մնալ, կգնաք տնից ուրիշ տեղ»։ Եվ մենք այդ գիշեր գնացինք տնից։ Չարմանալի էր, բայց նման աշխատանքում գտնվող մարդն այդպես օգնեց մեզ։ Չգիտեմ, գիշերը եկել էին մեր տուն, թե ոչ։ Բայց հիշում եմ, որ երեկոյան փողոցի երկարությամբ կանգնած էր բեռնատար ավտոների մի շարասյուն։ Մեր դասարանից էլ մի աշակերտի ընտանիք տարան [19]49 թվին։ Մենք դպրոցն արդեն ավարտել էինք, երբ նրանք վերադարձան։

Այո՛, [19]49 թվին թերթերում ոչինչ չգրվեց, ասես ոչինչ էլ չէր եղել: Չեմ հիշում՝ դասարանում մենք այդ հարցերը քննարկում էինք, թե ոչ, բայց ավելի ուշ՝ ուսանողական տարիներին, մանավանդ Ստալինի մահվանից հետո, այդ հարցերը քննարկում էինք: Սակայն, երբ ընկերներով հավաքվում էինք տանը, ավել-պակաս խոսում քաղաքական թեմաներով, մայրս միշտ ասում էր, թե ամեն ինչ լավում է, ամեն ինչ կգրանցվի, իմացե՛ք՝ մեղք եք, դուք պետք է ապրեք, այնպես որ շատ զգույշ եղեք: Հորս մասին մաման իհարկե պատմում էր, թե ինչ ազնիվ և բարի մարդ է եղել, ինչ նվիրումով է աշխատել, ինչպես էր վերաբերվում իր աշխատակիցներին և ուսանողներին:

Հորս արդարացումը եկավ [19]55 թվին: Առաջիններից մեկն էր, որ արդարացվեց: Ռուս մի գնդապետ էր զբաղվում նրա գործով: Արդարացման թողոթը, այո՛, ունենք:

Ստալինի մահը ընկալվեց ոչ միանշանակ: Հասարակության մեջ տարբեր մտտեցումներ կային: Մի մասը շատ մեծ ապրումների մեջ էր, անհանգստացած էին, մտածում էին, ի՞նչ կլինի ապագայում, ո՞նց պետք է ապրենք, երկիրը առանց առաջնորդի կկործանվի և նման բաներ, լաց էին լինում: Բայց մեր ընտանիքում ոչ մի լաց-կոծ չեղավ, հիշում եմ՝ մայրս միայն ասաց. «Պրծանք»:

«Անհատի պաշտամունք» հասկացությունը մի երկու խոսքով գնահատել երևի հնարավոր չէ: Ժողովրդի մեջ ձևավորվել էր մի ահավոր համընդհանուր վախի մթնոլորտ: Նման պայմաններում շատերը, ոտնահարելով բարոյականության բոլոր նորմերը, վարկաբեկելով և զրպարտելով ուրիշներին, ձգտում էին ինքնահաստատման հասարակության մեջ: Միաժամանակ մարդկանց մեջ գերիշխում էր սախանձի զգացումը: Զրպարտանքների և մեղադրանքների միջոցով տեղերում վերացնում էին մարդկանց, զբաղեցնում նրանց պաշտոնը և դիրքը՝ չունենալով համապատասխան գիտելիք և կարողություն: Համակարգը վերններից տարբեր ուղիներով այդ գաղափարախոսությունը ներարկում էր մարդկանց մտածողություն. «...դուք մեծ գործ եք կատարում ի նպաստ մեր հայրենիքի, և դրա համար պետք է վերացվեն բոլոր անարժան մարդիկ»: Ահավոր էր, որ նման մտածելակերպը դարձավ մարդկանց ներքին խառնվածքի համատարած ապրելաճ, իսկ նման համակարգը եղավ շատ կենսունակ: Եվ դա միայն Հայաստանում չէր, այլ ողջ Խորհրդային Միությունում: Անպայման չէր, որ գործն իրականացվեր միայն չեկիստների, ԿաԳեԲե-ի ուժերով, բոլորովին դա կարևոր չէր:

Ամենաահավորն իհարկե վախի զգացումն էր, որը մարդկանց դարձրել էր ստրուկ և բոլորովին ինքնուրույնությունից զուրկ էակ: Այդ վախը վարակել էր հասարակության բոլոր շերտերը:

Վերջին [1990-2000-ական] տարիներին կարծես արժեքները փոխվեցին, գաղափարախոսության կուսակցական (կոմունիստական) տարրը իր տեղը զիջեց ցավոք միայն փողի գաղափարախոսությանը: Ես տեսնում եմ, որ Ստալինի կերպարը վերջին ժամանակներում փորձում են կրկին վերականգնել: Ոչ շրջահայաց և նեղ մտահորիզոնի տեր մարդիկ, օրինակ, նրա կերպարի հետ կապում են միայն զսպվածություն, խստություն, ինչպես նաև շռայլության և կոռուպցիայի բացակայություն: Նրանք չեն ուզում խորանալ ու հիշել ԳՈՒԼԱԳ-ը՝ իր անմարդկային դաժանություններով և տասնյակ միլիոնավոր անմեղ մարդկանց ոչնչացմամբ: Դա ոչնչով արդարացնել և մոռանալ ընդունելի չէ:

[19]37 ու [19]49 թվերի մասին հիշելու առիթով նկատեմ, որ, այո՛, հայկական հեռուստատեսությամբ միայն երբեմն խոսվում է առանձին դեմքերի, անհատների մասին: Իր ժողովրդի հանդեպ կատարված բռնությունների՝ որպես երևույթի մասին, դիտարկումներ, վերլուծություններ և քննադատություն բացակայում են: Համենայնդեպս ես չեմ տեսել:

Ճիշտն ասած չգիտեմ, թե ինչպես է հնարավոր անցյալի փորձը օգտագործել՝ խուսափելու համար մեր օրերում նման երևույթների կրկնվելու հնարավորությունից: Այո՛, մեր երեխաներին պատմել ենք իրենց պապիկի մասին, [19]37 թվի մասին. երեխաներն այդ բոլորի մասին գիտեն աղոտ, նրանք դա անշուշտ դժվար են պատկերացնում:

Չեմ էլ պատկերացնում, թե մի՞թե կարող են [19]37 կամ [19]49 թվերը կրկնվել: Չնայած կանխագուշակելը շատ դժվար է, աշխարհն այնքան արագ է փոխվում, որ հասկանալ չես կարողանում: Ես կարծում եմ, որ վախի մթնոլորտը մինչ այժմ մեր հասարակության միջից լրիվ չի վերացել:


Այո՛, [19]88-ին կարծես ազատվեցինք դրանից, բայց այդպիսի զարթոնքը երևի երկար չի տևում: Ուղղակի մենք դրա արդյունքները չգնահատեցինք և չկարողացանք զարգացնել: Այդ թվերի զարթոնքը մեր ժողովրդի առաջընթացի համար ստեղծել էր բոլոր նախադրյալները, բայց, ավանդ, չստացվեց: Մենք մեր [19]88 թվի և Ղարաբաղի պատերազմի հաղթանակներից ոչ մի դաս չբաղեցինք: Դրա ապացույցը, ցավոք սրտի, մեր անկախ հանրապետության վերջին 22 տարիներում տեղի ունեցող զարգացումների ընթացքն է և ներկայիս վիճակը:

Ռեկի Հարությունյան [նկ. 31] (1933 թ. ծնված), 1938 թ. սեպտեմբերի 18-ին գնդակահարված Գուրգեն Հարությունյանի (ծնված 1904 թ.) որդին է: Հարցազրույցը Երևանում անցկացրել է Լևոն Աբրահամյանը: Նախատեսված երկրորդ հարցազրույցը և նկարահանումը չկայացան Ռեկի Հարությունյանի մահվան պատճառով (2012 թ. ամռանը):

«ԻՆՁ ՀԱՄԱՐ ԻՆՔԸ ԼԱՎ ՄԱՐԴ ԷՐ»

ՌեվիԿ. [19]37 թվին հորս բանտարկեցին, մի տաս օր էլ հետո մորս բանտարկեցին, առանց դատի ու դատաստանի: Բակում կար մի քննիչ Խվորոսյան ազգանունով, որը եղել էր Խվորոստյան, «խվորոստ» [ցախ] բառից, ինքը ըստեղ դատել էր Խվորոսյան, ավագ լեյտենանտ էր, ռուս էր, ավելի շուտ ուկրաինացի: Մորս կանչում և երրորդ օրը, թե՛ ձեր ամուսինը տրոցկիստական և, տրոցկիստական կազմակերպություններից, դուք ինչ կարող եք մեզ լրացուցիչ ասել իր գաղտնի գործունեության մասին: Մայրս ասում և. «Իմ ամուսինը ազնիվ կոմունիստ և»: Ասում և. «Դե լավ, գնացեք, հետո էլի ձեզ կկանչենք ու սպասում ենք, որ էդ հարցին մեզ սպառիչ պատասխան կտաք: Մեզ չբավարարեց ձեր պատասխանը»: Ինձ մայրս և էդ հետո պատմել: Հետո երկու-երեք օրից նորից կանչում են, էդ հարցը նորից տալիս են, մայրս շուտ և գալիս ու ասում: «Դուք եք տրոցկիստը»:

Հարցնում և. «Անձնագիրը Ձեզ մոտ և»: «Հա»: «Տվեք անձնագիրը»: Ու տանում են: Ո՛չ քննություն, ո՛չ դատ: ՏԷՑ-ը, որ կա Երրորդ մասի, էդ *փեցի* տեղը ախորներ են եղել: Էդ ախորներում բանտարկված էին բոլոր բանտարկված կուսակցականների կանայք: Աճառյանի կինը, Չարենցի կինը, Խանջյանի կինը: Գալիս է ըդտեղ: Մենք էլ ապրում էինք ներկայիս Պուշկինի 44-ում, հինգսենյականոց բնակարանում: Նույն հարկում ապրում էր Արմեն Գուլակյանը, որի տղան իմ հասակի էր, մենք շատ մտերիմ էինք: Ինքը ավարտեց համալսարանի երկրաբանականը, մահացել և: Որ մեզ արդեն տնից հանում էին,



Նկ. 31. Ռեկի Հարությունյան, ընտանիքում պահվող լուսանկար:

մեր իրերը վերգրեցին, կոնֆիսկացիան էն ժամանակ կոչվում էր «վերգրել», նույնիսկ ֆիկուսները, օլեանդրները, մեծ ծաղիկներ ունեինք, դրանք էլ վերգրեցին: Էն ժամանակ տրանսպորտը քիչ էր, համբալներ կային, դրանք իրեր էին տեղափոխում, փալաններ ունեին, մեջքներին դնում էին ու տանում: Համբալները, որ իրերի մեծամասնությունը տարել էին, մի քանի բան էր մնացել՝ ամանեղեն, բան, դրված էր շիֆոնյեթի մոտ: Շ. կար, սա եկավ. «Դեռ չեք ազատել էս բնակարանը», քացով խփեց, սաղ ջարդեց: Մի սարսափելի մարդ էր դա: Շատ չխոսեմ դրա մասին...

Մորաքույրս... Ազիզբեկովի փողոց կար, ներկայումս Սախարովի հրապարակին կից: Ըդտեղ [մորաքույրս] ուներ երկու սենյակ, մեկը՝ 16 քառակուսի մետր, մեկը՝ 11, նեղ միջանցքով: Մեզ տվեցին էդ նույն շենքի նկուղային հարկը, որը պատուհան չուներ, դռան կեսը պատուհան էր, կեսը դուռ էր: Մորաքրոջս ասեցի. «Մենք ըստեղ չենք ապրի»: Ասեց. «Գնացեք ձեր տուն, թե չէ էդ սենյակն էլ կվերցնեն»: Երրորդ համարն էր մեր տունը: Ուրեմն ըստեղ մի քանի օր ապրեցինք, եկավ միլիցիոներ, ասեց. «Երկու օր ենք ձեզ տալիս, դուք աքսորվում եք Կիրովական»: Կիրովականն էլ գյուղաքաղաք էր: Գյուղ էր ավելի ճիշտ: Քիմիական կոմբինատը արդեն շահագործման էին հանձնում համարյա, մի շենք կար չորսհարկանի, բնակելի: Էդ շենքի բակում... առանց քաղաք գալու իրավունքի... Էդ շենքի բակում միհարկանի շենք կար, մորքուրս, ես, քույրս ըդտեղ էինք ապրում: Ամիսը մեկ մի անգամ մենք իրավունք ունեինք գալ Երևան: Գնացքը Կիրովականից դուրս էր գալիս գիշերվա ժամը տասի կողմերը, առավոտյան Երևանում էր լինում: Մենք կարող էինք ամիսը մեկ մորս ինչ-որ ուտելու բան տանել՝ *պերեդաշա*, այսինքս, բայց առանց տեսակցության իրավունքի: Վեց ամիս մենք մնացինք Կիրովական, մի օր էլ եկան, ասեցին. «Կարող եք գնալ Երևան, ձեր տները»: Եկանք տեսանք՝ էդ մեծ սենյակը՝ 16 քառակուսի մետրանոց, տվել են չեկիստին, ՊԱԿ-ի աշխատողին՝ Վ-ին, ինքն էլ էր կիրովականցի ծագումով, բայց մեծացել էր ու սովորել Թիֆլիսում: Կինը թիֆլիսեցի էր: Շատ լավ կին էր, ռուսախոս ու ինձ շատ ա օգնել դպրոցում, էդ ռուսերենի հարցում, էլի: Իսկ ամուսինն էլ բոյով, շատ դուրեկան արտաքինով, իդեալական մաքրասեր, բայց դե ինքը չեկիստ էր, բան էր, ատորճանակով ման էր գալիս, բոլորը գիտեին, որ նա ՊԱԿ-ի աշխատող ա, նա մարդու նկատմամբ հատուկ զգացմունքներ ուներ: Մեզ, որ աքսորել էին Կիրովական, բերել էին էդ մի սենյակը տվել էին իրան: Փոքրը մնացել էր: Մեր մնացած իրերը, բանը, սաղ լցրել էին էդ փոքրի մեջ: Ոչինչ ես չեմ ուզում իրա մասին ասեմ: Ուրեմը, որ մեզ աքսորում էին, հորս ընկերներից մեկի քույրը էր ժամանակ մանկավարժական ինստիտուտում ուսանողուհի էր ու շատ մտերիմ էր մեզ հետ, անունն էլ Ա. էր: Մորաքույրս գնում ա ու ասում ա. «Ա., մեզ աքսորում են, բայց էդ աքսորը կարճ կտևի, դու արի, հանրակացարանում ես ապրում, արի, էդ սենյակում ապրի: Ինչ-որ կար,

իրերը՝ իրեն, դե մորաքույրս հարուստ էր եղել: Նրա ամուսնուն էլ էին բանտարկել: Որ մենք արտորից եկանք, եկանք մեր տուն: Տեսանք, մեծ սենյակը էդ չեկիստն ա գբաղացնում, փոքրն էլ՝ Ա-ն:

ԼԵՎՈՆ. Իսկ մինչև էդ մորաքույրդ ձեզ հետ էր ապրում:

ՌԵՎԻԿ. Չէ: Ինքը չէր աշխատում: Ամուսնուն, որ տարան, էլի չէր աշխատում: Ամուսնուն էլ բանտարկեցին: Ինքը երեխա չուներ, մորաքույրս, մենք իրան, ոնց որ հարազատ երեխա լինեինք: Առանձնահատուկ սեր ուներ իմ նկատմամբ, ավելի շատ, քան քրոջս: Շատ էր ինձ սիրում: Քույրս փոքրն էր: Ուրեմն էս կինը ասեց. «Դուք ո՞վ եք: Ես ձեզ տուն չեմ տալիս»: Եվ չթողեց մտնենք սենյակ: Որ հիշում եմ, հիմա էլ եմ բան լինում: Մորաքրոջս նվիրվածությունը... կյանքը կտար հանուն մեզ: Ուրեմը մորաքույրս՝ մեծ մորաքույրս, ապրում էր Քանաքեռում: Քանաքեռցի էր, բնիկ: Նա էլ, որ գնում էինք մեկ-մեկ իրանց տունը քնելու, դժգոհություն էր արտահայտում, որտև վախենում էր, տրոցկիստների գավակներ էին մեզ ընդունում: Դա արդեն պիտակ էր: Հետո գալիս էինք, դրսում էինք քնում: Մորաքույրս գործը տվեց դատարան, դատարանը ըսկի մեր երեսին չէր էլ ուզում նայել: Ըսկի բանի տեղ չէր դնում: Էս կինն էլ՝ հորս ընկերոջ աղջիկը, չէր թույլ տալիս, որ մի տեղ, մի անկյունում պատսպարվենք, մինչև որոշում լինի: Արդեն աշուն ա, հոկտեմբեր, մի հատ փոքր մահճակալ ա մանկական, մորաքույրս ինձ ու քրոջս դնում էր էդ մահճակալի մեջ, հորդառատ անձրև ա գալիս: Մորաքույրս այ սենց կլեյնկական պահել էր մահճակալի վրա, որ մենք չթրջվենք, ինքը ըսենց ոտից գլուխ ջրի մեջ էր, էդ պատկերը աչքիս առաջ ա: Ոչ մի հարևան չէր թողնում, որ նույնիսկ իրանց միջանցքում պատսպարվենք: Վախենում էին, ես իրանց չեմ մեղադրում, որտև տենց էր դրությունը: Հետո դատարաններ, ըստեղ-ըստեղ... Մորաքույրս ուր գնում էր, ես հետը գնում էի, մենակ չէի մնում: Քրոջս թողնում էր, ըստեղ ադրբեջանական ընտանիքներ շատ կային, ադրբեջանական ակումբներ, բաներ, քույրս մնում էր, որտև փոքր էր, իսկ ես իրա հետ էի գնում: Մի օր էլ Ամիրյանով գալիս էինք, մեր հարևաններից մեկը տեսավ, ասեց. «Մարգո (Մարգո էր մորաքրոջս անունը, Մարգարիտ), քույրդ՝ Վարսիկը, ազատվել, եկել ա»: «Որտեղ ա»: «Էդ Ա-ի մոտը»: Ես մորս չէի մոտենում, արդեն ինձ համար անսովոր էր, որովհետև ես մորս երկու տարի չէի տեսել: Մայրս էդ Ա-ին ասեց. «Ա.,- ասեց,- ես նենց եմ հիշում, էսպես նստած էինք,- բա էս կնոջ, էս երեխեքին շարտել ես դուրս քո հաճույքի համար, էս տունը քեզ պետք էլ չի, համ դու կստանաս»: Ա-ն ասեց, թե երկու օրից կգաք: Երկու օրից եկանք, Լևոն ջան, բացարձակ դատարկ: Բացարձակ դատարկ, դատարկ: Ես հիշում եմ, սենց թեյնիկ ունեինք, մետաղից, էլեկտրական, էն ժամանակ, էդ թեյնիկը շատ էի ես սիրում, էդ թեյնիկն էլ էր տարել: Դե հիմա ասեմ: Դրանից հետո անցավ երկար տարիներ:

ԼԵՎՈՆ. Էն տարի դու քանի տարեկան էիր:

ՌԵՎԻԿ. Հինգ տարեկան: Ավելի ճիշտ [19]39 թիվն էր, ես վեց տարեկան էի, [19]33 թիվ եմ ես:

ԼԵՎՈՆ. Մայրդ ուրեմն երկու տարի...

ՌԵՎԻԿ. Երկու տարի նստեց: Հիմա ես ունեմ էդ թուղթը: «Содержалась в Ереванской тюрьме, с такого-то по такое-то время» [«Պահվել է Երևանյան բանտում այս ինչ ամսաթվից մինչև այս ամսաթիվը»]: Անցան երկար տարիներ, հորս արդարացրեցին [19]56 թվին՝ փետրվարին, առաջիններից մեկը, մորս անմիջապես նշանակեցին անհատական թոշակ, համապետական մասշտաբներով, տարին մեկ անգամ էլ իրավունք վերապահվեց՝ Հայաստանի առողջարաններում անվճար բուժվի, ապրի և այլն: Հորս, որ արդարացրեցրին, մեզ անմիջապես որպես ռեաբիլիտացիայի ենթարկված մարդիկ մտցրեցին ցուցակի մեջ, որ մենք բնակարան ստանանք: Երեք հոգի էինք՝ ես էի, քույրս և մայրս, քույրս էլ նոր ավարտել էր, ինձանից մի տարի ուշ ավարտեց բժշկական ինստիտուտը, բժիշկ ա: Մեզ տվեցին բացառության կարգով: Էն ժամանակ երեք հոգուն տալիս էին միսենյականոց բնակարան կար, երեքսենյականոցում՝ մի սենյակ, հարևանով: Մեզ որպես բացառություն տվեցին երկուսենյականոց մեկուսացված բնակարան: Ընդ որում բնակմակերեսը 42 քառակուսի մետր էր: Մենակ սենյակները, մեծ սենյակներ էին: Ուրեմը արդեն ըդտեղ ենք ապրում, ես էլ աշխատում եմ Մարտունում: Մարտունուց աշնան կողմերը, ձմեռը գալիս եմ տուն, Երևան, որտեղ աշխատանքներ չկան, տե՛սց մի քանի օր, մի ամիս ամենաշատը: Ես քաղաքում էի, մի օր մտա տուն, տեսա՝ մի կին ա նստած մեր բնակարանում, մերս էլ հետը շատ աշխույժ խոսում ա: Ես գնացի խոհանոց, ասեցի, եսիմ, թող խոսեն իրանք: Մեկ էլ մայրս եկավ, ասեց. «Գիտե՞ս ով ա»: Ասի. «Զէ»: Ասեց. «Ա-ն ա»: Էդքան տարի ես չէի տեսել: Իսկ էդ Ա-ն իբր թե ինձ շատ էր սիրում փոքր ժամանակ: Ասեց. «Արի գոնե բարևի, անհարմար ա»: «Այ մարդ, - ասեցի, - դու ինքնասիրություն չունես: Էդ կնիկը մեզ մի տարի անձրևների տակ, ձների տակ փողոցներում էինք ապրել, ոնց-որ անտուն մարդիկ էինք»: Ասում ա. «Ինքը ինձ տեսավ, լաց եղավ, զոջաց, որ տենց բան ա արել: Ինքն էլ ամուսնացել ա, ամուսինն էլ զոհվել ա պատերազմում, ունի երկու տղա: Արի գոնե մի հաս բարևի»...

ԼԵՎՈՆ. Փաստորեն կտուր չունեիք:

ՌԵՎԻԿ. Զէ, չունեիք: Դուրսն էինք մնացել: Գալիս էինք կայարան: Կայարանում գիշերները... արդեն ճանաչում էին էդ կայարանի աշխատողները մեզ: Ու գիտե՞ս ինչ: Ճիշտ ա, վախենում էին, բայց մարդկային մոտեցում կար էն ժամանակ: Հասկանալ կար, որ էս մարդը դժբախտության մեջ ա, գոնե ոչ թե օգնենք, այլ թող քննե գոնե ըստեղ, ասենք թե: Մենք մի տարի

դրսերում ենք եղել: Բառիս ամենատղիղ իմաստով: Քրոջս մեկ-մեկ տանում էինք... մեկ-մեկ էլ թուրքերի տներում էր քնում, մեկ-մեկ տանում էինք էլ մեծ մորաքրոջս տուն կամ մորաքրոջս տղայի տուն, որը տարիքով մեծ մարդ էր, բայց ես ու մորաքույրս դրսում էինք: Մի տարի: Մի տարուց ավել: Չնայած դա մորաքրոջս սեփական տունն էր: Հիմա պոնչիկ-մոնչիկ են թխում դրա պաղվալում: Մորս ասի, էլ չբերես դրան մեր տուն, բան: Մայրս մի քիչ բան էր, էլի: Ինքը շատ սկզբունքային կին էր, բայց տենց հետապնդել ինչ-որ մեկին, վրեժխնդիր լիներ, էլ խնդիրը չկար: Հիմա էլ իմ մեջ ա անցել: Մի բան, որ լինում ա, ասում են. «Հո դու անինքնասեր չես, ինչի՞ ներեցիր»: Եթե մեկը սրտանց գոջում ա իր արարքի համար, ու զգում ես, որ նա դժվար թե երբևիցե էդ արարքը կրկնի, էս մարդուն պետք է ներես: Ու ես չեմ կարողանում բացատրել: Ինչ-որ ներքին բանով, բիռտոկերով... ներքին զգացմունքը ասում ա ինձ, որ էդ մարդը էդ արարքը էլ չի կրկնի, համենայն դեպս իմ նկատմամբ չի կրկնի: Հետո ես ասում էի. «Լսիր, ախր դու չես պատկերացնում, ինչ վիճակում էինք եղել, որ հիմա էլ դու ուզում ես, որ ներես, որ մեր տուն գնա-գա»: Ասեցի. «Մեր տունը թող չգա, կամ եթե գալու ա, դու ինձ նախօրոք ասա, ես տնից գնամ»: Ես էլ օրերը չէի մոռացել, չէի կարողանում մոռանալ:

Վերջը, ըդտեղ ենք ապրում, էս Վ-ը սկսեց ինձ սիրել, բան անել: Ուրեմը [19]42 թիվն ա, պատերազմ ա, օգոստոս ամիսն ա: Զգում ես, որ թուրքական դիվիզիա ա կանգնած, էլ մեր շրջապատի թուրքերը, ադրբեջանցիները մեզ անընդհատ ասում էին. «Ձեր օրերը հաշված ա»: Ուրեմը սա... օգոստոս, շոգ, մենք էլ լավ չէինք ապրում, պատերազմ ա: Ուրեմը էս Վ-ը... բակում ունեինք *յոուալեպ*, էս հին *յոուալեպներից*, փայտից սարքած, փոքր փորած: Սա ինձ փաղաքշական Ռ-նիկ չէր ասում, ասում էր. «դու իմ քեռիս ես»: Ասում էր՝ Քեռի: Մինչև հիմա էլ տղան, որ տեսնում ա ինձ, ասում ա՝ Քեռի:

ԼԵՎՈՆ. Սեփական տու՞ն էր:

ՌԵՎԻԿ. Սեփական տուն էր:

ԼԵՎՈՆ. Միհարկանի՞:

ՌԵՎԻԿ. Երկուհարկանի: Վերևի հարկում էլ ուրիշ մարդիկ են ապրում: Իսկ սա առաջին հարկն էր, գետնին հավասար: Գետնին հավասար, իսկ միջանցքը պոլ չկար: Կավ էր, բետոն էր արած: Իսկ մայրս էլ, մորաքույրս էլ շատ մաքրասեր մարդիկ էին, տունը փայլում էր:

ԼԵՎՈՆ. Հիմա դա որտե՞ղ ա:

ՌԵՎԻԿ. Հիմա չկա դա: Քանդել են: Գիտե՞ս, դա որտեղ ա ընկնում: Սախարովի հրապարակի շենքի դալանը... այ էդ դալանից մի քիչ գնում էիր ու հետո ձախ:

ԼԵՎՈՆ. Բարձրահարկ շենք է հիմա:

ՌԵՎԻԿ. Հա, բարձրահարկ շենք ա: Մեկ-մեկ գնում եմ ըդտեղ հարևանների մոտ՝ ուղղակի մանկությունս հիշելու համար: Միշտ լավ ընդու-

նում են, բան են անում, հիշում են ամեն ինչ, որտեղ էր ժամանակ Երևանում... Երևանի փողոցի օրենքները շատ հետաքրքիր օրենքներ էին: Մովի տարիներին, եթե դու ինչ-որ մի տեղից հաց էիր գտնում, հայթայթում ու մենակ էիր, դու իրավունք չունեիր՝ մենակ ուտելու, ինչ-որ ընկերոջ հետ պիտի կիսվեիր: Ու եթե իմանային, որ դու դավաճանել ես կամ ինչ-որ բան ես գնացել հաղորդել ընկերոջդ մասին, դա սազական չէր: Եթե մենակ ծեծեին, դու շահում էիր, շատ դեպքերում ասում էին. «Դու մեզ հետ գործ չունես»: Դու դառնում էիր մեկուսացված անձնավորություն: Դառնում էիր ոնց-որ... մենակ, էլի: Էս Վ-ը մտավ *փուսլեպ*, մեկ էլ մի վայրկյանից հետո գծի պես դուրս եկավ, թե՛ Քեռի ջան... տուալետին էլ «ոտանց ճանապարհ» էր ասում ինքը, ատրճանակս ընկավ ոտանց ճանապարհը: Մի չորս մետր խոր փոս էր: Կեղտը մեջը լցված: Դա գիտե՞ս՝ ինչ էին անում: Երբ որ փոսը լցվում էր, հող էին լցնում, կողքը ուրիշն էին փորում: Էս հրշեջ գարածը, որ կա Սախարովի հրապարակում, ըդտեղ համբալների քույան էր, իրանց հավաքվելու տեղը: Գալիս էին, եթե ինչ-որ մեկը ուզում էր ծանր իր տեղափոխել, սրանց վարձում տանում էին: Ասեց. «Գնա՛, համբալներին բեր»: Էկա, ես էլ վազելով էկա, իսկ էր ժամանակ՝ պատերազմի ժամանակ, անձնական գեների կորուստը տաս տարի էր, առանց դատի ու քննության: Ուղղակի տաս տարի տալիս էին: Էկա, ասեցի՝ եկեք, սենց-սենց գործ կա: Էկան, կողքը փոս փորել տվեց, էր կեղտը տեղափոխում են, դու պատկերացրու ինչ հոտ ամառվա շոգին: Վերջը հաստակից հանեցին: Ասեց՝ ջուր բեր: Ջուրը ոնց-որ ըստեղից *դում պրիյունով* [ընդունելությունների տուն] [մոտ հարյուր մետր]: Ուրեմը ջուրը բերեցի: Ես էլ նվազ երեխա, պատերազմի ժամանակ ինչ էինք ուտում: Ուրեմը դրանք ինչ գին ասեցին, հանեց տվեց: Ատրճանակը յուղեց, բան արեց: Էդ ջուրը տաքացավ, ինձ լվացրեց, ինքը լողացավ, հետո ասեց. «Ես քեզնից շատ շնորհակալ եմ, էս ատրճանակից մաքուր կկրակես»: Հիմա ես ատրճանակից որ կրակեցի, ձեռս սենց թափ տվեց: Բռնեց ձեռս, յոթ հատն էլ կրակեցի, բան: Միշտ ինքը ամեն երեկո ամառը, որ արձակուրդ էինք, դե մայրս գալիս էր տասը անց կես – տասնմեկին: Առավոտյան յոթին գնում էր: Մորաքույրս էլ աշխատում էր հանրային գրադարանում: Ուրեմն ամեն երեկո պիտի հագնվեի ես, ինքն էլ, իրա ճաշակով, կոշիկները փայլուն: Ու մենք դուրս էինք գալիս Արովյան փողոց՝ ման գալու: Ինքը արտաքինով շատ գրավիչ տղամարդ էր, մազերը, բան... Լավ երգում էր: Մի հատ էլ փոքր դիոլ ուներ, էր դիոլը խփում էր ու երգում էր: Իսկ կինը որ գնում էր Թիֆլիս ամառները, ես իրա հետ էի ճաշում: Ինքն էլ ապրում էր ըստ պահանջի: Ըստ պահանջի: Հիմա սա ուրեմը սկսեց աշխատել պահածոների գործարանում որպես հատուկ բաժնի պետ, պատերազմի տարիներին:

ԼԵՎՈՆ. Էն, որ ռեպրեսիայի ենթարկվածի տղա՞ ես...

ՌԵՎԻԿ. Չէ, բոլորովին, բոլորովին: Բերում էր ինչ տեսակի ասես պա-

հաճո՞նք, մի քիչ գող էր, ձեռից թույլ էր: Բայց մեր նկատմամբ՝ չէ: Կառուցեց մի հատ պահեստ բակում, իրա համար, վերևը մի փոքր պատուհանով, որ օդ խաղա: Էն ժամանակ ստոնարան չկար, ըսկի գաղափար էլ չունեինք: Մոկացյան Տոլիկ կար, երկար տարիներ աշխատեց տելեստուդիայում: Հայրը՝ Մոկացյանը, եղել է Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղարը, որին էլի [19]37 թվին բանտարկել էին: Ինքը ըզտեղ ապրում էր իրա մորաքրոջ տանը: Մեր վերևում էր ապրում: Էդ տունը մեկուկեսհարկանի էր, երկուս էին ասում: Էս Տոլիկը սովից ուռում էր: Էդ պատուհանով մտել էր ներս, որ բան ուտի, կերել, էլ չէր կարողացե դուրս գալ: Մտել էր, ըսենց աստիճաններ, պատկերացրա, ըսենց աստիճաններով մտել էր, իջել էր, էլ չէր կարողանում դուրս գալ, բարձր էր: Ուրեմը սա... ես էլ Տոլիկի հետ մոտ էի, ինձնից մի երկու տարով փոքր էր, [19]35 թե [19]36 թիվ էր, չկա հիմա, մահացել ա: Ուրեմը սա ինձ ձայն տվեց, թե ես ըստեղ եմ, մի կերպ օգնի ինձ, դուրս գամ: Վ-ից վախենում էր: Իսկ Վ-ը Տոլիկին չէր սիրում: Այ մարդ, ես որ ձեռս գցեցի, սա քաշեց, ես էլ ընկա էդ պահեստի մեջ: Հիմա, ուրեմը, մույթը ընկել ա, մորաքույրս, քույրս, հարևանները ընկել են, ինձ ու Տոլիկ են ման գալիս, չկանք: Արդեն ուզում են գնան միլիցիա, արդեն ուզում են գնան հիվանդանոցներ, էս կողմ, էն կողմ, էս Տոլիկը կամաց ասեց. «Ես ըստեղ եմ»: Մեկ էլ էս Վ-ը եկավ, դուռը բացեց, էս Տոլիկին լավ ծեծեց: Ես դուրս եկա, ասի. «Վ. դյադյա, ես էլ եմ ըստեղ»: Ասեց. «Քեռի, ես քեզանից չէի սպասում»: Մենց անհարմար զգացի, ասեցի. «Վ. դյադյա (ես ոչ մի բան էլ չէի կերել, ընտեղ վեռչինասներ, կալքասներ, բաներ),- ասի,- ես քեզ հետո կասեմ, ես մեղք չունեմ»: Բայց ինձ մատով չկպավ: Հետո, որ գնացինք տուն, մորաքրոջս ասեցի. «Մենց-սենց, ես գնացի Տոլիկին օգնեմ, չկարողացա դուրս գամ»: Մորաքույրս Վ-ի կնոջն էր ասել:

Հա, ուրեմն էդքան տարի մենք ընտեղ ապրում ենք: [19]48 [իրականում՝ 1949 – Լ.Ա.] թիվն ա, ծնողական ժողով ա, 8-ից փոխադրվում ենք 9-րդ: Մոավյան դպրոցում, նոր էինք եկել, էս Շիրակ հյուրանոցի հետևը, կեսը *գոսպիլիսալ* էր, կեսը՝ մեր դպրոցը: Դուրս ենք եկել, եկանք դեպի կրկես, ու մեկ էլ... կողքը «Սպարտակ» ստադիոնն ա, չէ՛: Այ մարդ, տեսանք էդ «Սպարտակ» ստադիոնի դաշտում այ սենց քիփ կպած մեքենաներ են կանգնած: Բեռնատար, միայն բեռնատար մեքենաներ: Առավոտյան զարթնեցինք, մեկ էլ մեր հարևանները գալիս ասում են. «Յա, ձեզ չեն տարել»: Ինչ ա, ինչ պիտի տանեն: Բա, ասում ա, փողոցի կեսը չկան, սաղին գիշերը հավաքեցին տարան: Էդ Ալթայի երկրամասը: Հետո վեր կացանք, էդ իրարանցումը և այլն: Խեղճ մայրս վերցրեց երեք կապոց արեց՝ [առաջին] անհրաժեշտության [իրերը]: Գիշերը նստում էր էդ շորերի վրա, չէր քնում: Որ էսա պիտի գան: Մի օր ասեցի. «Վ. դյադյա, մերս (մերս Վ-ին չէր սիրում, համարյա իրար հետ չէին էլ խոսում) Վ. դյադյա,- ասեցի,- մերս գիշերները չի քնում, վա-

խենում ա, որ մեզ էլ արտոբնն»: Ասեց. «Քեռի ջան, գնա ասա, որ քո խաթր իրան ձեռ չենք տա»: Անկեղծ եմ ասում: Ու մեզ ձեռ չտվեցին: Եկա, մորս ասեցի. «Այ կնիկ, պատկի քնի, Վ. դյադյան ասեց, որ մեզ ձեռ չեն տա»: «Ձեռ հավատում»: «Մամա,- ասեցի,- ինչի չես հավատում: Ձեռ չեն տա»: Ու իրոք ձեռ չտվեցին: Ինձ համար ինքը լավ մարդ էր: Ես դա անկեղծ եմ ասում:

ԼԵՎՈՆ. Դու էն անգամ ասում էիր, որ կային հարևաններ, որոնք նրա ձեռքով գնացին:

ՌԵՎԻԿ. Ինքը սենց էր, իրա մոտ էս սկզբունքն էր: Ասենք թե, եթե մեկի նկատմամբ ինչ-որ գաղտնի գործ ա հարուցվում, ինքը մտերմանում էր էդ անձնավորության հետ, հրավիրում էր իրա տուն, սեղան էր գցում, քեֆ էին անում, ինքը երգում էր, դիտը խփում էր, բան էր անում, մի երեք անգամ, չորս անգամ, չորրորդ կամ հինգերորդ անգամ էդ մարդը սպիտակ արջերի մոտ էր հայտնվում: Օրինակ, Դոմադյան կար, որը պահածոների գործարանի տնօրենն էր, ճանաչված մարդ քաղաքում, բոյով, բան, սա բերեց երեք անգամ, դրանից հետո տասը տարի նա նստեց: Տասը տարի, ես էդ շատ լավ գիտեմ, որտեղ աղջիկը աշխատում էր մեր ֆիզկուլտուրայի ամբիոնում: Բայց իմ նկատմամբ՝ ոչ մի բան: Մեր նկատմամբ՝ ոչ մի բան: Եվ մեր բակի նկատմամբ:

ԼԵՎՈՆ. Դրանք բակից չէին:

ՌԵՎԻԿ. Չէ: Բակից չէին, դրսի մարդիկ էին: Հետո մի անգամ... էդ խազեհիսական տներ էին կոչվում Երևանում: Միմյուրի վարձ էին տալիս՝ երեք ռուբլի, հինգ ռուբլի ամսական, դա խազեհիսական էր, դա մեր սեփականությունը չէր, բայց մենք սեփականի պես ապրում էինք: Ուրեմը [19]46 թվի մայիսի 24-ին, որ Երևանում սելավ եղավ ու ահագին մարդ զոհվեց, մանավանդ նկուղային հարկի ժողովուրդը, ներկայիս, ուրեմը, Թումանյան – Նալբանդյան անկյունում... ըդտեղ մի ընկեր ունեի: Ըդտեղ էր ապրում: Գնացել էի մաթեմատիկա պարապելու, որ քննություն հանձնենք, չորրորդ դասարանից մենք քննություն էինք հանձնում, ամեն տարի: Էդ անձրը, բանը, որ սկսվեց, տեսանք, էլի, որ սելավ ա, սենց հեղեղը գնում ա, դիակներ, անատոմիկումը քանդել էր, գազանանոցից գազաններ, բաներ, մի խայտառակ վիճակ էր: Մեքենաները քշում ա, բան, էդ ընկերոջս մայրը ասեց. «Ես քեզ ոչ մի տեղ չեմ թողնի»: Բայց հեռախոս էլ չկա, որ զանգ տաս, բան անես: Ուրեմը Վ-ը եկավ ինձ գտավ: Վ-ը եկավ ինձ գտավ, այ սենց բան արեց, սենց բռնեց ինձ, թևի տակ դրեց, ոտս էլ բերեց էս կողմից, ոտս ըստեղ ա, գլուխս ըստեղ ա, ու ինչ եկանք, մտանք մեր բակը: Ընդ որում մեր տունը լցվել էր, իրանց տունն էլ: Պատերը բաներ էր արել, վերջը: Եկավ, ինձ գտավ: Հետո, որ մեծացել էի, միշտ շատ ջերմ էի իրա նկատմամբ: Ասում էի. «Վ. դյադյա, ես չեմ մոռանում, դու ինձ փրկեցիր»: Ասում էր. «Ես քեզ չփրկեցի, ես մորաքրոջ փրկեցի, մորդ փրկեցի: Խելագարվում էին: Ռեկիլը հիմա խեղդվել ա, էս ա արել, էն ա արել: Ես բերեցի, որ հանգստանան»:

ԼԵՎՈՆ. Իսկ այնտեղ ապահով էր:

ՌԵՎԻԿ. Չէ: Էդ բակում մի հաստ սենց տուն էր էլի, որը մի հինգ-տասն աստիճան բարձրանում էր վերև: Սաղ բակը լցվել էր ըդտեղ: Ըդտեղ ջուրը չէր հասել: Իսկ մերը ցածր էր: Գետնին կպած ու մի քիչ ցածր էր բակի էդ հատվածը:

ԼԵՎՈՆ. Դու պատմել ես Վ-ի սիրային արկածների մասին...

ՌԵՎԻԿ. Էդ սիրային բաները... ինքը... կանայք իրա համար խելագարվում էին: Վ-ի համար խելագարվում էին: Ուրեմը դուրս էինք գալիս Աբովյան: Ասում էր. «Քեռի, որ մի կնոջ տեսնենք, ձեռքդ էս վերևի մասում սենց սեղմեն, իմացի, էդ իմն ա եղել»: Ուրեմը գալիս ենք, սա գալիս ա. «Վայ, Վ. ջան, ո՞նց ես, ի՞նչ ես»: Ես մոտավորապես մի երկու մետր կանգնում էի: Ինքը ինձ էդ էլ էր սովորացրել, որ մեծերի խոսակցությունը չի կարելի լսել: Կանգնում էի, ասում էի՝ ինձ ի՞նչ էս հետաքրքիր: Մեկ էլ սա սենց աչքով անում էր, իբր թե գրանցի՝ էս մեկ: Տենց մի քանի անգամ: Շատ ընենց բան մարդ էր: Հետո, որ մենք արդեն տեղափոխվեցինք, ինքը մի հաստ էլ աղջիկ ունեցավ, էդ աղջկան ես համարյա թե չեմ ճանաչում: Իսկ տղան գնդապետ էր: Էս վերջի յոթ-ութ տարին չեմ տեսել:

ԼԵՎՈՆ. Հասակակից էր:

ՌԵՎԻԿ. Չէ, ինքը [19]37 թվի ծնված է, ես [19]33: Մերս ինձ ասում էր. «Դու ցինիկ ես, որտև Վ-ի դաստիարակությունն ես ստացել»: Մինչև կյանքի վերջը էդ էր ասում, բայց ես ցինիկ չեմ: Մորս համար, երևի, ցինիկ էի: Սա ասում էր... Ուրեմն էդ Երևանի բակերը ոնց որ մի ընտանիք լիներ: Գիտեին, ում տունը ով ա գալիս, ինչ պիտի ուտեին, ինչ են եփել էսօր, երբ են լվացք անում: Ամեն ինչը տենց բան էին անում: Ամառները բակում նստում էին էդ կանայք, ժամերով: Բերում էին՝ իբր թե գործ են անում, մեկը՝ ձեռագործ, մեկը՝ ճաշ ա եփում: Էդ տներն էլ, որտեղ ապրում էինք, *սրբափնիներ* [կրկնափեղկ] ուներ, դրսից փակվող: Դրսից փակում էին, հետո չանգալով բան էին անում: Կնոջն էլ ամառները ուղարկում էր Թիֆլիս: Ինձ ասում էր. «Գնա, դու նենց ես անում, որ էդ պառավները, կանայք... ուշադրությունը գրավում ես»: Մի օր ինձ ասեց, ստավնիները փակեմ, ինքը իբր թե տանը չի: Հասկանո՞ւմ ես: Ասեց, որ Սախարովի հրապարակի անկյունը Նալբանդյանի կողմից, դեպի էդ կողմը, կին ա գալու, կեղթաս, կասես. «Ինձ Վ. դյաղյան ա ուղարկել»: Ասի. «Շատ լավ»: Այ մարդ, էդ կնոջ հետ սենց փողոցը գալիս ենք, հետո *պերեուլոկ* [սրբանցք] էր, ըդտեղ էր մեր հատակը: Երեք աստիճան իջնում էինք էդ պերեուլոկից ներքև: Կանայք նստած են: Պատմում են, ծիծաղում են, բան են անում: Նայում եմ, սրանք վեր կենալու մտադրություն չունեն: Ուրեմն էդ կնոջը ըդտեղ կանգնացրեցի, դուրս եկա, մի 20-15 մետր հետ գնացի, վազեցի, որ հևամ, ասեցի. «Տեսն էք»: «Ի՞նչը»: Ասեցի. «Գերմանական ինքնաթիռներ են գալիս»: [19]42 թիվն ա: Սրանք «վայ, վույ», լց-

վեցին իրանց տները: Ասի. «Մտեք տները, դռները փակեք: Բա չե՞ք լսել»: Կողքը ռադիոտրանսլացիոն կետ կար: Էս կնգան բերեցի մտցրեցի Վ-ի մոտ: Վ-ը էդ ամեն ինչը լսում ա: Վ-ը ասում ա. «Քեռի ջան, դու մեծ մարդ կդառնաս: Ո՛նց ֆայմեցիր, էդ լաչիկներին, տենց էլ ասում էր, էդ լաչիկներին ըդտեղից ցրիր»: Գնալն է՛լ արդեն մութ էր, ինքը իրան ճանապարհ դրել ա, արդեն պորբում չէր: Բայց Վ-ից ես ինչ շահեցի: Շատ մաքրասեր մարդ էր, արտակարգ: Ու ինքը ինձ հետևում էր: Ինչ հագնում էի էդ օրը, ասում էր. «Չէ, էս ճմրթած ա, արդուկը կմիացնես, կարդուկես»: Տենց բան էր անում: Շավարս էր արդուկում, ինձ սովորացնում էր, ոնց արդուկեմ շավարը: Ուրեմը [19]43 թե [19]42 թիվն էր, դպրոց գնալուց էդ Ազիզբեկովի հրապարակից նեղ ճանապարհ կար, կոչվում էր Վոդոայանովի փողոց: Դուրս էր գալիս դեպի կինո Մոսկվա: Իսկ մեր դպրոցը, էս ներկա Շահումյան դպրոցը, առաջին հարկը Չկալովի դպրոցն էր, իսկ երկրորդ-երրորդ հարկերը Շահումյան դպրոցն էր: Դե մեր դպրոցը գոսպիտալ էին դարձրել: Ուրեմը մի հատ ավչարկա ինձ կծեց: 40 ասեղ սրսկեցին ինձ, *պրոտրիվ բեշենսարվա* [կատաղության դեմ]: Ամեն օր ես գնում էի: Ուրեմը, ես գալիս էի Ազիզբեկովի հրապարակից դեպի Կոմայգի, Կոմայգի չհասած՝ ինչ-որ ըդտեղ սանիտարական կետ էր տենց բաների համար: Էդ քույրերը, էդ բժիշկները զարմանում էին, թե այ բալիկ ջան, ո՞նց ես եկել էս ցեխին, էս անձրևին, որ կոշիկներիդ վրա մի հատ ցեխ չկա, շավարդ միշտ արդուկած: Ես, ասի, հիմա մեր հարևանին կբերեմ, կտեսնեք, ոնց: Ասի. «Վ. դյադյա, գնում եմ սրսկվել»: Ասեց. «Այ մարդ, չպրծմիր»: Ասի. «Արի հետս, ընտեղ լավ-լավ սիրուն կնիկներ կան»: Ասեց. «Գնանք»: Եկավ, մտավ: Ասին. «Դու՞ք եք հայրը»: Ասեց. «Չէ, երանի չէր ես սենց տղա ունենայի: Տեսնու՞մ եք, ինչ տղա ա, ինչ կազմակերպված ա»: Ասին. «Այ մարդ, մի օր չկար, որ դրա շավարը արդուկած չլիներ, կոշիկները կեղտոտ լինեին: Ցեխին, անձրևին գալիս ա...»

ԼԵՎՈՆ. Ինչ էր աշխատում հայրդ:

ՌԵՎԻԿ. Հայրիկս աշխատել ա Հոկտեմբերյանի, Էջմիածնի ու ներկայիս Արտաշատի շրջկոմի երկրորդ քարտուղար, իսկ հետո աշխատել ա Իջևանի առաջին քարտուղար, իսկ վերջին պաշտոնը էղել ա Աշտարակի շրջկոմի առաջին քարտուղար: Իսկ հորեղբայրս աշխատել ա Երևանի քաղկոմի քարտուղար, հետո Չակկրայկոմում ա աշխատել, Բերիայի օրոք, և հետո, որ Միկոյանը, Մավենկովը էկան Հայաստան պլենում անցկացնելու, Միկոյանի առաջարկությամբ իրան ընտրեցին Կենտկոմի երրորդ քարտուղար, Հայաստանի: Հայաստանի կենտկոմի երրորդ քարտուղար: Ուրեմը մի կիրակի «ԶԻՍ» *սյրո աղիհնով* [հարյուր մեկով], դա կառավարական մեքենա էր, գալիս ա մեր տուն: Ապրում էինք ներկայիս Ղուկասյան փողոցի վրա: Էս պրոսպեկտից, որ գալիս ես դեպի Թումանյանի տուն-թանգարան, ձախի վրա: Ամեն կիրակի՝ առավոտյան, գալիս էր մեր տուն, հորս հետ խոսում

էին, բան էին անում, որից հետո, ինքը մի հատ տղա, մի հատ աղջիկ ուներ, տղան ինձնից երեք տարով մեծ էր, իսկ աղջիկն էլ մի քանի ամսով: Մեզ տնից վերցնում էր, գալիս էինք Կոմայգի: Կոմայգու առաջ աշտարակ էր, մի 30 մետր բարձրությամբ, ու պարաշուտ: Էդ պարաշուտով մի երեք անգամ իջել էր, Կենտկոմի երրորդ քարտուղարը: Հետո մեքենան թողնում էր, ոտով կամ պրոսպեկտով, կամ Աբովյանով բարձրանում էինք մինչև մեր տուն, ճանապարհին խանութներ մտնելով, նայելով, բան անելով, առանց ավարանայի, առանց ոչ մի բանի: Ուրեմը, դե էդ արդեն ինձ մայրս ա պատմել, մի կիրակի օր եկավ... դե իրանք ինչ էին խոսելու հորս հետ, ես հո չէի լսում, ինձ ինչ հետաքրքիր, ուրեմն ասում ա, որ Բերիան իրան կանչել ա Թիֆլիս: Հայրս ասում ա. «Գնացրով գնա ու հասնելուն պես կհեռագրես: Անմիջապես հասնելուց հետո հեռագիր կտաս»: Որտև խառը ժամանակներ էին: Սա ասում ա, թե ուզում եմ մեքենայով գնամ, ճանապարհին մտնեմ գյուղեր, շրջաններ: «Չէ, – ասում ա, – գնացրով գնա»: Էդ գնալն ա, որ գնաց: Հորս հորեղբոր տղան ավարտել էր Թիֆլիսի պոլիտեխնիկ ինստիտուտը: Ինքը երկրաբան էր, հետո դարձավ ճանաչված երկրաբան, Հարությունյան Արտավազդ կար: Հորիցս փոքր էր, հերս չորս թիվ էր, դա 12 թիվ էր: Իսկ էդ քարտուղարը Կենտկոմի հորիցս մեծ էր, երկու տարով: Ասում ա. «Մի հատ գնա Թիֆլիս, ընտեղ դու շրջապատ ունես, տես ընտեղ ինչ ա եղել»: Գնաց, եկավ ասեց. «Համոյին բռնել են»: Նա Հմայակ էր, Համո էին ասում: Հայրս էն ժամանակ Աշտարակի առաջին քարտուղարն էր, անմիջապես պլենում հրավիրեց՝ հրաժարական տա ու սպասում էր, որ իրան պիտի տանեն:

ԼԵՎՈՆ. Եղբոր պատճառով:

ՌԵՎԻԿ. Հա, իհարկե, արդեն էլ չէր կարող, եղբոր պատճառով, տրոցկիստ: Ուրեմն մեղադրել էին երկու հողվածով՝ մահափորձ Լավրենտի Բերիայի նկատմամբ...

ԼԵՎՈՆ. Եղբորը:

ՌԵՎԻԿ. Երկուսին էլ... ու կապիտալիստական կարգերի վերականգնումը, 58-րդ հողվածով, էլի, восстановление капиталистического строя в Армении: Հետո [19]91 թե [19]92 թվականներից... Հանիսյաններ կային, էլի հին բոլշևիկ, որին էլի [19]37 թվին գնդակահարել էին, դրա աղջիկը եկավ մի օր, ասեց, թե գիտես ինչ, ՊԱԿ-ում, էդ մեր իրերը, որ վերցրել էին, էս ժամանակ, որ վեր են գրել, այսինքս՝ կոնֆիսկացիա են արել, էս կուրսով, այսինքս՝ էս դրամի կուրսով, փող են տալիս: Ասի. «Էդ փողը ինձ պետքը չի, էդ փողը ես չեմ ուզում, որ սոված էլ մնամ, չեմ ուզում»: Սա վերցնում ա իմ անունից դիմում ա գրում, էդ Լիլիկը: Հիմա էլ կա: Մի օր ես նստած եմ, հեռախոսագանգ, վերցնում եմ, թե սա պետական անվտանգություն թե վարչություն, թե կոմիտե, փոխվում էր հա: Ասի. «Լսում եմ»: Բա «Ձեր դիմումի համաձայն՝ վաղը եկեք էս ժամին էս սենյակը»: Ես Տաիրային, կոնջս, վերցրի

հետս: Ուղղակի, որ Տաիրան հետս էր, մի քիչ ավելի վստահ զգամ, էլի, ինձ: Էդ հիմնարկի նկատմամբ ոչ թե հակակրանք, վախ կա: Վերջը, գնացինք, մի երիտասարդ մարդ կար, շատ ինտելիգենտ, բարեհամբույր, բերեց հորս գործերը, սենց, «совершенно секретно» [խիստ գաղտնի] վրան գրած ու թղթեր դրած տարբեր էջերի արանքում: «Ես չեմ կարող տալ, որ գործը ծերից ծեր նայեք, որտև ըստեղ... մատնիչները չկան, բայց նրանց ժառանգները... եղել են դեպքեր, մեզ ստիպել են, որ ցույց տանք, հետո անախորժություն ա եղել»: Ասի. «Ես չեմ ուզում իմանամ»: Հիմա, ասենք թե, ժառանգը իմացել ա, որ հերը մատնել ա, էս ժամանակ մատնելը ո՞րն էր: Ամեն մեկը մատնում էին, որ իրանց գլուխը փրկեն: Ոչ թե, որ վատություն անեն, այլ իրանց փրկեն: Հետո էդ մատնիչներին էլ էին տանում: Հետո սա սկսեց ինձ հետ հարգանքով, որտև տեսավ, ես բան չեմ անում, նորմալ խոսում ենք իրար հետ: Ասեց. «Իմ ձեռքի տակով անցել ա [19]37 թվի հետ կապված ավելի քան 15.000 գործ, ձեր հողվածը եզակի գործերից է, որովհետև նա չի խոստովանել, իսկ դուք գիտեք, չէ՞, դա ինչի հետ ա կապված՝ ծեծ, ջարդ»: Ասի. «Ես գիտեմ, բայց եթե կարելի է, էդ մասը ցույց տվեք»: Հանեց, ցույց տվեց: Տրոյկան էր: «Признаете вы себя виновным?» [Զեղ մեղավոր ճանաչո՞ւմ եք]: Գրել էր. «Я не признаю себя виновным, я был и остаюсь честным коммунистом» [Ես ինձ մեղավոր չեմ ճանաչում, ես եղել և մնում եմ ազնիվ կոմունիստ]: Ու իրա ստորագրությունը: Ես իրա ստորագրությունը գիտեի, որտև ֆաբրիմիլեն էր մնացել, իրա պեչատը: Հետո էս տղեն ա ինձ հետ կիսվում: Ասում ա. «Տարօրինակ ա, որ իրան գնդակահարել են»: Ասեցի. «Իսկ չե՞ք ցույց տա էդ տեղը, որտեղ գնդակահարել են»: Որտև, ասեցի, ես ուզում եմ մտովին էդ տեղը նշեմ: Մեպտեմբերի 18-ին են գնդակահարել: 18-ին ժամը չորսին, 16 часов. Ասում ա. «Տեսեք, գրած ա. «Приговор приведен в исполнение 18 сентября [19]38 года в 16.00» [Դատավճիռը ի կատար ածվեց 18 սեպտեմբերի 1938 թ. 16:00-ին]: Ասում ա. «Ախր գիշերն են գնդակահարել, մեկից հետո, մեկից մինչև երկուսը: Կազերեի պառվալներում հատուկ խողովակ կար, որով արյունը որ լվանան, գնա լցվի գետը»: Ասեցի. «Էդ ես չգիտեմ, բայց որ [19]56 թվին հորս արդարացրին... Նախ չէ, որ հորս մազապուրծ մահից փրկված ընկերները եկան 17-18 տարի նստելուց հետո, եկան բոլորը մեր տուն: Մենք ապրում էինք Տպագրիչների փողոցում, տաս, նկուղային հարկում, էդ ժամանակ արդեն մենք, որ մեծացանք, 11 քառակուսի մետրում ապրել հնարավոր չէր: Էդ զազապաստարան ա եղել պատերազմի ժամանակ: Համո Մայլսասյան կար, որը հորս օգնականն է եղել, «Հայ հերոսներ ու գեներալներ» այլում կա, դրա հեղինակն էր: Սա տվեց էդ, էդ բնակտարածություն չէր հաշվում, ու չորսհարկանի շենքի նկուղում 13 աստիճան գետնի տակ էինք իջնում, խոնավ, կանախիզացիան, ջուրը էդ շենքով էր անցնում, բայց դա իմ ընկերների, քրոջս ընկերուհիների հավաքատեղն էր:

Կենտրոն էր: Բոլորը ըզտեղ էին հավաքվում: Իրանք երեք, չորսսենյականոց բնակարաններ ունեին, բայց ըզտեղ էին հավաքվում: Որտև մայրս լավ էր ընդունում, շատ: Մայրս փորձված մանկավարժ էր, իրա գործն էլ սիրող: Ասում էին. «Ջարմանում ենք, որ էդ ժամանակ են գնդակահարել»: Որ եկան, Արտո Եղիազարյան, հետո դարձավ ակադեմիկոս, հետո... մոռացա ազգանունը, Գուրգեն Բաղդասարյան ... մի հինգ հոգի եկան, ինձ ասեցին, ես էլ չորրորդ կուրսի ուսանող էի, [19]56 թվին, ասեցին. «Ռևիկ ջան, ցերեկով եկան, պապայիդ ասեցին՝ իրերդ հավաքի, դուրս արի: Մենք իմացանք, իրան ազատում են, որտև ինքը չէր խոստովանել: Մենք բոլորս խոստովանել էինք: Օրինակ, Վիտայի Բարսեղյան կար, ասում ա. «Ես ասեցի, կինը ռուս է եղել, Մոսկվայում ընկերներ ունեմ, մինչև էդ ընկերներն գտան, չգտան, գնդակահարության այլքը անցավ: Ասում ա, որ եկան ասեցին՝ Հարությունյան Գուրգեն, մենք իմացանք, իրան ազատում են: Խնդրեցինք ամեն մեկս՝ տանը մի լուր հաղորդի»: Էդ տղեն սուրճ բերել տվեց, «կոկա-կոլա», «պեպսի-կոլա» նոր էին մտնում մեր կենցաղը, դրանից բերեց, ասեց վերջում, որ մեզ ճանապարհ էր գցում, ասեց. «Եթե իմ հայրս տենց բան աներ, ես կհպարտանայի իմ հորով»: Ես ասի. «Ես երբեք, նույնիսկ էն տարիներին, որ բոլորը համոզված էին, որ [19]37 թվին անարդարություն չի եղել, դա ճիշտ ա եղել, և այլն, և այլն, ես էն ժամանակ էլ, ես իմ հորս սիրել եմ: Երբեք,– ասի,– իմ մերս չի ասել, որ քո հերը անմեղ ա, բայց ես ամբողջ մորս կեցվածքով զգում էի, որ իմ հերս անմեղ ա»: Հերս Իջևանի առաջին քարտուղար էր, ինձ էլ շատ էր սիրում, ուր գնում էր, հետը տանում էր: Ուրեմն էդ Արփաչայի կանալը վարարել էր, Կրիվոյ մոստ կա, տենց գյուղ կա, չէ՛: Կրիվոյ մոստ են ասում, ցարի ժամանակվա մոստը քշել էր: Գնացինք, մեկ էլ տեսնեմ, հերս գալի՜ֆեով, կոժանկայով, մինչև ըստեղը ջրի մեջ բանվորների հետ էր կամորջն ա վերականգնում: Տենց աշխատող էր, գիշեր-ցերեկ: Խանջյանին եմ ես տեսել, շատ մարդկանց: Գարեգին Եսայանին:

ԼԵՎՈՆ. Իսկ Վ-ն ինչ եղավ:

ՌԵՎԻԿ. Վ-ը սրանից մի քանի տարի առաջ մահացավ: Կինս իրանից հետո մահացավ, ոռակ էր, իսկ ինքը, կարծեմ, ինսուլտ էր: Մի օր ես Ամիրյանից թեքվում եմ դեպի Պրոսպեկտ ձախ, դեպի Փակ շուկա: Մեկ էլ տեսնամ, Վ-ը ու կինը կանգնած մեքենա են բռնում: Ես անցա, նոր տեսա, որտև ես ձախ էի գալիս, իսկ իրանք մայթի մոտ էին: Ուրեմն հետ դառա Մարքսի փողոցով, չկային: Էդ վերջին անգամն էր, էլի: Հետո ես ուշ իմացա, ես թաղմանը չեմ մասնակցել: Հետո, որ Կուրբա էի գնացել, Կուրբայից եկա, մեքենայով տեսավ, ոնց էր ուրախացել, ոնց էր ինձ փաթաթվել: Այսինքը նա համարեց, որ ես արդեն ոտքի եմ կանգնել: Արդեն կարող եմ էս կյանքում իմ գոյությունս պահպանել: Ասեցի. «Դյադյա Վ., էն ջահել վախտերը ո՞նց էր»: Ասեց. «Այ Ռևիկ ջան, էդ էլ չանեինք, ինչ պիտի տանեինք հետներս»...

Տնտյան Պարույրի [նկ. 32] հետ զրույցը գրանցել են Գայանե Շագոյանն ու Լևոն Աբրահամյանը 2012 թ. հունիսի 12-ին նրա տանը, սրան նախորդել են մի քանի այլ հանդիպումներ: Պարույր Տնտյանը մահացավ 2013 թ. հունվարի տասին:

ՇԱՄԱՄ ՏԱՏԻ ԳՈՅԱՏԵՎԵԼՈՒ ՀՆԱՐՔՆԵՐԸ

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Տասու մահացավ [19]63 թվին, արդեն 94 թե՛ 95 տարեկան էր, տասու Պեմզաշեն է ծնվել, բայց պապա... մենք ուրիշ տեղից ենք: Սկզբից մեր նախնիները Ծովքից էկել են Ղարս, մնացել են, էն ժամանակ՝ [19]15 թվին՝ փախեփախին, տասու ըղպես կըսեր՝ փախեփախի ժամանակ, խանութ են ունեցել Ղարս՝ կամրջի էն կողմը, եկեղեցուց 5 տուն ներքև: Գնացել է, որ էղ խանութի ապրանքներից բերե Պեմզաշեն: Էղ ժամանակ սայրով վերադառնալիս թուրքերը գետի մեջը խփել են, էղպես էլ պապա չի վերադարձել [19]15 թվին՝ էղ կոտորածների ժամանակ: Էղ ժամանակ տասու ունեցել է հորս ու հորքուրիս, հերս [190]6 թվի ծնված է, հորաքուրս՝ [19]10-ը թվի:

ԳԱՅԱՆԵ. Ձեր տատի անունն ինչ էր:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Շամամ: Պապիս անունն է Արշակ, Արշար է իսկական պապիս անունը: Իսկ ում հետ, որ տասու ամուսնացել էր, տասու երկրորդ անգամ [ամուսնացավ], ըսուր անունը Ավագ էր, շատ լավ մարդ էր: Օղորմի իրան: Հետաքրքիր մարդ էր [լռություն 2 վայրկյան]:

ԳԱՅԱՆԵ. Պատմե՞ք մի քիչ նրա մասին:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հմ: Ավագ պապը, որ ամուսնացել էր տատիս հետ, ազաբ տղա է էղել: Տասու ունեցել է հորս ու հորքուրիս, առել է Շամամ մամին, Շամամ տատին է առել: Դե էղ ժամանակ իրա [Ավագի] հարազատները չեն ուզեցել, որ իրանց ազապ տղեն ամուս-



Նկ. 32. Տնտյան Պարույր, լուսանկարը՝ Լևոն Աբրահամյանի, Գյումրի, 12.06.2012:

նանա օրբների, էն էլ էրկու էրեխա ունեցող կնոջ հետ ու ինչ-որ հարաբերություններ խզել են: Այնուհանդերձ, Ավագ պապը քաջություն է ունեցել, հրաժարվել է...

ԳԱՅԱՆԵ. Ամբողջ ընտանիքից...

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ամբողջը... քույրերը թողել գնացել են, մեկը Բաքու է գնացել, մեկը Թիֆլիս է գնացել, մեկն էլ՝ Մանթաշ, առաջվա անունը՝ Առաքվալի կրսեին, էստեղ է էղե, մե քուրն էլ ընտեղ է էղե: Ամուսնացել գնացել են: Իրանց էլ կուլակաթափ են էրե, ըշտե պապը էկե ամուսնացել է, մնացել է Շամամ տատի հետ:

ԳԱՅԱՆԵ. Երբ որ ամուսնացել է, արդեն կուլակաթափ էղած էին:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, արդեն կուլակաթափ էղած է էղել, թե չէ, ճիշտն ասած, չիտեմ: Հա, երևի, էղած էին... Չէ, չի էղած էղել, ամուսնացել են կուլակաթափ չի էղած էղել: Կուլակաթափությունը, կարծեմ, երեսնական թվականներին էղավ: Հա, էդ թվերին էղավ, բայց իրանք շուտ են ամուսնացել՝ [19]17, թե [19]18 թվին: Դա [կուլակաթափությունը] Ավագ պապին չի կպել միայն, այլ ամբողջ գյուղին, իր ընտանիքին: Ինքն արդեն առնչություն չուներ, ընտեղ պարգապես ցրեցին...

ԳԱՅԱՆԵ. Էդ ընտանիքը...

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Համարյա թե ըդպես ստացվավ: Դե քույրերը ամուսնացան, գնացին, էդ 2-սենյականոց տունը, որ Ավագ պապինն էր, տատս էղտեղ էր, իրանք մնացին էղտեղ, մեզ էլ էստեղ բերին:

ԳԱՅԱՆԵ. Ավագ պապը եղբայր չունե՞ր:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Չէ, եղբայր չուներ, իրեք հատ քույրիկ: Իրանց ազգագաններից կար, գյուղում կային, որ նորմալ հարաբերությունների մեջ էին մեր հետ: Հա, Եղիշ, կարծեմ, Կիրակոսյան, էդպես մարդիկ կային, բայց ես մանրամասներն, ճիշտն ըսած չիտեմ, էն ժամանակ [19]30-ական թվականներին, էն ժամանակ հնարավոր չէր ազգական ու բարեկամ ջուլեին, թե ով ով էր: Պարգապես հետո կամաց-կամաց տատս ինչ որ պատմել է, ես ինչ որ կրսեմ, տատիս պատմածն է, թե ինչպես է, ինչպես չի էղել, ինչքան, որ հիշում եմ, ինչքան, որ ինքը պատմել է... Երևի գիտեր, որ... ընձի կպատմեր, որ իմանայի գոնե, թե մենք վրով ենք:

ԳԱՅԱՆԵ. Այսպիսով, տատը տեղափոխվեց Ավագ պապի տուն:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Տատը Ավագ պապենց տունն էր, ընտեղ, իրա կինն էր, իրար հետ ապրում էին, էրկուսով: Հայրս ու մայրս ու մենք՝ ես ու եղբայրս, առանձին տուն ունեիք:

ԳԱՅԱՆԵ. Նու՞յն գյուղում:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, մենք Տոնոյաններ էինք, իրանք՝ Քերոբյան: Ուրեմն, երբ [19]34 թվին հայրս ու մայրս կբաժանվին, ու այդպես էլ

տատու ինձի պատճառը չասեց, հետը գերեզման տարավ, մենք մնացինք որբ, փաստորեն, հայրս աշխատում էր, նայող չկար: Մեզի տատս տարավ իրա մոտ՝ ընձի ու եղբորս: Ամեն անգամ՝ երեկոյան, հայրս մեր տնից գուկար, աշխատանքից գուկար, երևի ճաշ էփող չկար, տատս, ըղտեղ, ուրտեղ մենք կապրեինք, ըղտեղ կճաշեր, մեզի էլ կնայեր, թե ինչխ ենք, կերթար քներ մեր տունը: Հետո, որ [19]36 թվին արքայազնի [հորը], էդ տունը մնաց էնպես, մենք մնացինք տատի մոտը:

ԳԱՅԱՆԵ. Ձեր հայրը ինչ էր աշխատում:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Սկզբից կուսկազմակերպության քարտուղար է էղե, հետո հանքերը տասնապետ է էղե, մենք պեմզայի հանքեր ունինք, ըղտեղ է աշխատել, տասնապետ է էղե, ինչ-որ էդպես պաշտոն է ունեցել: Երբ որ կուսբջջի քարտուղար է էղե, հանել են...

ԳԱՅԱՆԵ. Ինչի են հանել:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Չիտեմ էդիկ, ճիշտն ըսած, տեղեկություն չունիմ, բայց գիտեմ, որ էղել է, միայն գիտեմ, որ երբ որ սկսեցին կոլխոզ անել, մեր հորողբերներս, մեր ազգագանները՝ Տոնոյանները, բաժանվեցին բոլորը. տանը տուն էղան, թե՛ ինը տուն՝ կոլխոզ սարքին, առաջին համարն էլ Աղասի էր, մենք 6-րդ համարն էինք, թե՛ 7-ը, իսկ Ավագ պապը 52-րդ համարն էր կոլխոզի ցուցակում: Ինքը Քերոբյան էր, ու էդ ազգանունն էղավ պատճառ, որ մենք փրկվանք, մեզի՝ ընձի ու աղբորս չարքորին:

ԳԱՅԱՆԵ. Դուք ձեր ազգանունը հետո փոխեցիք Քերոբյան:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ձե՛, բոլորովին, Տոնոյան է իմ ազգանունը: Պատմությունը՝ երբ որ հորս արքայազնի, մենք մնացինք, փաստորեն: ...Ուրեմն, երբ որ հորս արքայում են, տատը գնում է... Դատախազը՝ Հովհաննիսյան ազգանունով, ինչքան գիտեմ, անունը չեմ հիշե, Գարեգին, հիշեցի, Հովհաննիսյան Գարեգին, մեր տուն էլե-գնացել է, ծանոթ է էղե: Տատս գնում, ասում է՝ թե էդ երեխանց հարցը ինչ պիտի էղնի, Գարեգին ջան: Գարեգինն էլ դատախազի քարտուղարուհուն կկանչե և ասում է՝ միամ դիմում գրի տատի անունով, որ էրեխեքը տան իրա խնամակալության տակ: Էղտեղ, փաստորեն, իմ ազգանունը Տոնոյան է, ինքը՝ Քերոբյան, մեզի տվել են խնամակալության մինչև ես էղնիմ 18 տարեկան, ու մինչև [19]48՝ թիվը, վերջին անգամ, որ արքայել կար, հլե իմ տարիքը չէր լրացել, թե չէ էդ ժամանակ էլ կարքորեին: Իրեք անգամ փորձել են մեզի արքայել, բայց էդ թղթերով, էդ թուղթը, որ մենք Քերոբյան Շամամի խնամակալության տակ ենք, մենք Տոնոյան ենք, պարզապես օրենքներին չէր բան անում: Հետո տատս շատ խելոք կին էր: Էն ժամանակ «Սով... «Խորհրդային Հայաստան»

¹ Սկստի ունի 1949 թ. հունիսի 14-ի Հայաստանից 13272 մարդու արքայել դեպի Ալթայի երկրամաս:

տան» թերթ կար, կարմիր թղթի վրա կտպեին: Ընտեղ Ստալինը ինչ-որ բան էր ըսել, թե տղեն հոր տեղը պատասխանատու չէ, բռնելու ժամանակը, որ սկսվավ, էդ էլ կտրե, պահե, էդ թուղթն էլ կտրե պահել էր ըդոնց հետ: Հետո, որ գալիս էին, ես չէի պատկերացնում, թե ինչ բան է, տասու ինչ-որ թղթեր ցույց կտար, թողեին, կերթային, էլ չէին աքսորե: Մեր սենյակներն էլ, որ առե, գրասենյակ էին դարձրել՝ գյուղավետի գրասենյակ, բոլոր աքսորականները ըտից կաքսորեին, 3 պատուկով աքսորեցին, իրենք էլ՝ ըդտից կէնեին: Մեր 2 սենյակը, որ Ավագ պապինն էր, փաստորեն մենք կմնայինք էդտեղ, միջանցքը թողեցին մեզի, էրկու սենյակը դուռ բացեցին, էրին գրասենյակ, առան ձեռներից, էլի, էդպես... Ու էդ ժամանակ էր, էլի, որ գիտեինք՝ ում կաքսորեին, սև ավտո կար, գուկար, 3 զղառովի մարդիկ կային, սև կոժերը հագը, գուկային, գիտեինք, որ արդեն մարդու պիտի տանեին, թե ում, հայտնի չէր, հետև կիմանայինք: Որտև հաջորդ օրը... Չէին էլ թողե, որ գային հետևից, լային... «Կտանենք, առավոտյան կգա»: Տանեին ու կտանեին: Էլ ինչ առավոտ, էլ ինչ բան:

ԳԱՅԱՆԵ. Էդ մարդիկ ձեր գյուղացի էին, թե՛...

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, մեր գյուղացի էին, յոթը, թե՛ ութը հոգու մեր գյուղից աքսորել են:

ԳԱՅԱՆԵ. Ես նկատի ունեմ տանողներին:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Մեր, չէ, չէ, չէ, մեր գյուղացի չէին: Մեքենայով գալիս էին, ծածկած մեքենա էր, գրուգավիկի նման էր, բայց ետը շոր կար, ծածկված էր, կապեին կը, ներսն էլ մարդ կար, հասնեին կը ընտեղ ներսը՝ կապեին, կերթար:

ԳԱՅԱՆԵ. Ինչ գույնի մեքենաներ էին:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Սև էր:

ԳԱՅԱՆԵ. Ու անունն էլ այդպե՛ս:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Երևի գագ էր, էն վախտ մեքենաներն ինչ էր, որ...

ԳԱՅԱՆԵ. Նկատի ունեմ, որ ժողովուրդը խոսում էր էդ մեքենաների մասին, ասում էր՝ սև մեքենա՛:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, «սև ավտո», «սև ավտոն էկավ»՝ ուրեմն մարդ կտանի, պարտադիր: Անունը դրել էին «սև ավտո», որովհետև էդ ծածկույթը սև էր: Երևի ինքն էլ էր... գույնը կապու՛յտ էր, ինչ էր... Ժողովուրդը «սև ավտո» էր դրե անունը: Կըսեին՝ «սև ավտոն էկավ, աչես, ու՛մ տունը պիտի քանդեն»: Այ էդպես էլ կարտահայտվեին: Թե ու՛մ, ո՞ր տղամարդուն պիտի տանեին:

ԳԱՅԱՆԵ. Էդ, որ ասում եք՝ երեք «պատուկ», էդ երեք «պատուկները» ո՞ր թվերն էին:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Մեզի արտորելու իրեք պատուկ էղավ: Մեկը՝ [19]42- [19]43 թվերին, էդ, որ Գերմանիան շատ էր մոտեցել, նույնիսկ Թիֆլիսի վրա բան էր գցել՝ ումբ, էդ ժամանակ: [19]45- [19]46 թվին, հետո էլ՝ [19]48 թվին: Իրեք բանով ուզին արտորել: Իրեք անգամ մենք էդ փորձությունը ապրել ենք:

ԳԱՅԱՆԵ. Վերադառնանք ձեր հոր ձերբակալությանը: Հիշո՞ւմ եք դրա մանրամասները:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հիշում եմ: Ես փոքր տղա էի՝ 6 տարեկան, եղբայրս էլ 4 տարեկան էր: Երեկոյան էր, էդ էրկու հաղթանդամ մարդ, որ ասում եմ, էդպես տպավորված մնացել է մոտս, էկան, ներս մտան, բարևեցին, տատս էլ աղանձ էր էրել, դեկտեմբերին էր, կարծեմ, թե ինչ բան էր, չգիտեմ, թե՞ փետրվարին էր: Չիտեմ, ամիսները լավ չեմ հիշում: «Կամող» կըսեինք մենք էդ քանի դարակներով, շատ հետաքրքիր քանդակներով... մամս «կամող» կըսեր: Հա, ըդուր վրա դրած էր բանով աղանձը: Էկան, նույնիսկ աղանձ էլ կերան, գրուցեցին ու դուրս էլան: «Երվանդ ջան, էրթանք»: Տատս վատ բան գուշակեց: Ըսավ՝ մի անհանգստանա, մայրիկ, առավոտյան հետ կգա, հլը հետ գուկա: Ու ըդպես տարան:

ԳԱՅԱՆԵ. Դուք մնացիք տատի հետ:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Մենք մնացինք տատի մոտ, իրեք օր հետո, որ հաջորդ օրը, որ չեկավ, երկրորդ օրն էլ չեկավ, տատը գնաց բան... կիրակի էր, ինչ, չիտեմ, ճիշտն ըսած: Էրկու-իրեք օր հետո տատը գնաց Արթիկ:

ԳԱՅԱՆԵ. Այնտեղ էին տանում գյուղից:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Շրջկենտրոնը ընտեղ էր մեր: Դե էդտեղ, տատը հետո էկավ լացավ, հավաքվան, մեզի բան չըսին, բայց գիտեմ, որ Ավագ պապը շատ ուշադիր էղավ տատի նկատմամբ: Գուլար, գուլար... վերջը, հետև հասկցանք, որ հորս էլ հետ չեն տա, կալանավորել են: Մի ժամանակ անցավ, երևի մե քսան քանի օր անցավ, չեմ հիշել, արդեն ձյուն չկար, երևի մի 2 ամիս անցավ: Տատս թե՛ կուզեն էրթանք, հայրիկիդ տեսնինք, ըսի՛ հա, ինչի՞ չեմ ուզե: Ելանք էրկուսով գնացինք, ըդիք նկարագրել եմ գրքի մեջը², գնացինք: Ուրեմն, հետաքրքիր բան ունեք [բանառը], շուշաբանդը, դռները ապակի էին, էս էրկու կողմը պատուհաններ կային, որ միլիցիաները կպատասխանե քաղաքացիներին: Մենք նստել ենք ընտեղ, որ պիտի հորս տեսնինք, մե քիչմ հետո էդ դռները դրեցին, ապակե դռները դրեցին, իրեք մարդ անցավ, էրկուսը կողքերը միլիցիա էին, մեջտեղինն էլ հայրս էր: Տարան, մենք մտանք տեսակցության սենյակ: Գնացինք... ինձի, որ փաթաթվեց, այ էստեղից [գոտկատեղից], կարճիկ տղա էի, փոքրիկ, ըսավ՝ մինչև գամ, այ էստիցս հետ կէղնիս [մինչև կտործքն է ցույց տա-

² Պ. Տոնյան, Մի կյանք, Գյումրի, ա.հ. 2008:

լիս), պաշեց ինձի, հետո բարձիկ կոնֆետ կար էն ժամանակ, մեջը մուրաբա, ըտից տվեց, ան քեզի համար է, ուրախացա: Հետև եմ հասկացե, որ էդիկ տատն է տվե, որ ինքը տա ինձի, թե չէ բանտը կոնֆետ ուրտից պիտի էդնի: Հետո իրանք գրուցեցին, դուրս էկանք, դուրս էկանք, ինչ-որ տաս րուպե էր, քսան րուպե էր՝ չեմ հիշե: Արթիկից ոտքով մենք գուկանք գյուղ, էկանք: Ընտեղ փոքրիկ բլուրմ կա, էստեղ ինչ-որ բան... փշալարերով դրված էր, ու էնտեղ ինչ-որ պահակակետ կար, ըտուր անունը դրել էինք Միլիցու դար, ընտեղ միշտ միլիցա կար, հավանական է, ըդիկ գաղութի տերիտորիան էր, ըդոր համար ըդպես կրսեին, հավանական է: Որտև հետո գաղութը վերևն էր, հետո-հետո, երբ ես 10-րդ դասարանն սովորեցի, գաղութը վերևն էր, ես Արթիկ սովորեցի: Տատս նստավ ու սկսեց լալ, ես էլ իրան ձայնակցեցի, սկսեցինք մե լավմ լալ, լացանք, հետո էլանք, ոտով էկանք տուն:

ԳԱՅԱՆԵ. Որ տուն էկաք, գյուղում ինքը ցույց տալիս էր իր վիշտը:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ուրեմն բոլոր քարտրականների ժամանակ, շատ... ըտուր համար ասում են թե, շատ հետաքրքիր կին էր, երևի որ, եթե գրագետ էղներ, երևի մեծ պաշտոններ կունենար, չնայած կոմունիստ էր ինքը: Հորս, որ քարտին, «որ դուք չէք հավատա, որ ինքը՝ տղես, տրոցկիստ չէ, առեք ձեր տոմսը ձեզի»:

ԳԱՅԱՆԵ. Ետ տվեց, չվախեցամ, որ իրեն էլ կտանեն:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Չէ, ինքն ինչ կապ ունի, ինքը կոմունիստ է [ծիծաղում է]: Հա, հետո ամեն անգամ, որ էդ սև ավտոն գուկար, մենք նայեինք կը, հետո կմտնեինք գոմը ու գուլայինք էրկուսով, դուռը կփակեր, ու լավ գուլայինք, բարձր ձայնով, ինչխոր հանգստանայինք, հետո էլ դուրսը գեղնեինք, որ ժողովուրդը գուկար, տատս կսկսեր ծիծաղել՝ հա-հա, հի-հի կէներ: Չարմացել էի: Հետո, հետո գլխի ընկա, որ տատս էնպես է անում, որ էն մեր չուգողները չիմանային, որ մենք շատ վատ կզգայինք մեզի: Այսինքն, կըսեր՝ բալա ջան, արտահայտությունն ուներ, կըսեր՝ սրտի սևը ներսն էրա, կարմիրը՝ դուրսը, այսինքն՝ քու հոգու մեջ ինչ որ կա, թող մնա, բայց մի ցույց տա, որ սիրտդ սև է: Շատ հետաքրքիր կին էր:

ԳԱՅԱՆԵ. Իսկ այ էն, որ ինքը մյուսներին ցույց էր տալիս, որ ներսն ուրախ է, դա միայն այն բանի համար էր, որ չուգողներին չուրախացնի, թե նաև վախից, որ հանկարծ չմտածեն, որ ինքը...

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Չէ, պարզապես ինքը շատ լավ գիտեր, որ ինքը ուրիշի կին է, Քերոբյան Շամամ է, էն մի քարտրվողը Տոնոյան Երվանդ է, նոր, որ ինքն ամուսնացել է, ամուսինը՝ Ավագ է անունը, ու էս մարդուն, փաստորեն, խորթ տղա գուկա, չէ, հայրս: Ինքը չէր վախենա, անվախ էր, մի միջադեպ հիշեցի: Ուրեմն էդ հարցով՝ քարտրականի հարցով, ԿաԳեԲեից էկել էին հարցաքննության՝ տատիս ու իրա քրոջը: Քրոջ տղի անունը Ստա-

լին էր, էն մի ախպոր անունն էլ Ջինովն էր, ախպոր տղի, էն մի ախպոր տղի անունը Կալինին էր: Բոլոր տղաների անունը էդ բոլոր ղեկավարների՝ Քաղցրությունի անդամների անուններն էր: Կանչեց քննության, թե արեք, ինչ որ հորս հետ կապված հարց էր: Մենակ մե բանն կհիշեմ, որ ըսել էր՝ դե հմի ըսեք: [Տատս] ըսել էր, թե ես ճիշտ կխոսիմ, ես պահելու բան չունիմ, իմ տղեն էդպես տղա չի էղե, կուզեն երդվինք, գուզեն, ընձի, որ ոտներիցս քերթես, կաշին բերես, քթիցս կախես, ես սուտ չեմ խոսի: Հա, ըսել էր [քննիչը], ես երդումի կհավատամ, երդվեք: Կազերեի [աշխատողի]... Սարիբեկյան էր ազգանունը, հիշեցի: Տատս կըսե՝ մենք մեկ-մեկ տղա ունինք, մե տղեմ քուրս ունի, մե տղեմ էլ ես ունիմ: Երդվինք էդ տղաների վրա: Հա, կըսե [Սարիբեկյանը]՝ հավատամ կը: Էս տատս կըսե՝ քու տղի անունը, քրոջ հետ է, քու տղի անունը Ստալին է, բեր անունը վերունք, դնենք մի կողմ, ով որ սուտ կըսե, ընտր տղեն մեռնի: Անիծեն կը, պատկերացնեն կը, այդ իրադրության մեջ վախը ինչ բան է: Կըսե՝ քու տղի անունը Ստալին է, բեր վերունք, անունը դնենք մե կողմ ու անիծենք: Այ էդ միջադեպը շատ լավ հիշում եմ:

ԳԱՅԱՆԵ. Որ հանկարծ անվանը բան չլինի:

ԳԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, բը հանկարծ անունին... հանկարծ Ստալինի նկարով թերթը տեսնեին փողոցը ընկած կամ ձեռեղ, որ քցել ես՝ պրծար, չկաս էլ: Վախ էր, վախենում էինք, էլի, բոլորս էլ, վախը... Օրինակ, մինչև հմի՝ հլե ես էղել եմ 82 տարեկան, մեջս վախ կա: Էդ վախը չի անցե: Չնայած հմի կարգերն ուրիշ են, բան են, բայց ինչ-որ ներքին մե բանն կա ընձի: Ես քաջ մարդ եմ, բայց ինչ-որ մե բանն կա, էդ վախի զգացումը էստեղից մնացել է:

ԳԱՅԱՆԵ. Էդ ինչն է զգուշությանն է բերում, թե...

ԳԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ես չիտեմ ինչխ... ղնց կարող եմ մեկնաբանել, բայց, ասենք, որ պիտի ուզենամ մեկի հետ վիճել, չէ՛, կմտածեմ, թե՛ այ մարդ, ինչ կարիք կա: Ես, երևի, մարդու հետ կյանքում վիճած չկամ: Հայհոյել էլ չիտեմ, ի տարբերություն... Հա, հա չիտեմ [ծիծաղում է]:

ԳԱՅԱՆԵ. Դա էդ զգուշավորությունից է գալիս:

ԳԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, երևի, հենց էդ տեղից կուզա: Ըստեղ հանկարծ սխալ արտահայտությունն էսեիր՝ կորած էիր: Մեր տունը մարդ չէր գա: Մեր տունը մարդ չէր գա, որտե կըսեին՝ ուրեմն կապ ունի, կապ ունի, թե չէ, ինչի կերթան-գուկան Շամամի տունը: Վտանգավոր էր, մեր տունը չէին գա, մենք մեկուսացված էինք: Նույնիսկ, նույնիսկ եղբոր... Եղբայրը տղային ամուսնացրել էր՝ տատին հարսանիք չէր կանչե: Չէր կանչել: Ուրեմն, գեղին անասուն, բան, որ կմորթեին, տատս խաշ շատ կսիրեր: Անպայման պտի Շամամը առներ խաշը: Ոչխարի խաշ էր դրե, ուրեմն, ոսկորները շատ մանր է, չէ՛, շատ լավ մաքրել էինք, լցրել վեդրոն, պահել

էր: Ուրեմն հարսին, որ բերին, մեր դռնից պիտի անցնի, ճանապարհը մեր դռնից է: Որ հարսանիք չէր կանչէ, տատս էդ վեղորոյով ոսկորները հարսի ու փեսի վրա շփեց: Թե դու ընծի... ճնց թե, ես քո քույրն եմ, դու ընծի ինչ-խոր չես կանչէ հարսնիք: Այ ըդպէս կնիկ էր: Շատ թասիբով: Ուրիշ մարդ էր, աշխատասեր, կամեցող, ուրիշի ցավը հասկցող: Ըդպէս կնիկ էր: Էդի էդ միջադէպը:

Ուրիշ միջադէպ էլ է էղէ: Ուրեմն փոքր եղբոր կինը շատ գեղեցիկ է էղել, մազերը գիջներ ներքև՝ մինչև կրունկները, հյուսերը մեծ, գեղեցկուհի էր: Կոլլսոգի նախագահի հետ սիլի-բիլի... սիրահարված էին իրար վրա, էրեխին թողէ գնացել էին նախագահի հետ տր տուն, ամուսնացել էր հետը, էդպէս կարելի է ասել, թե՛ ուղղակի՝ էրեխեքը թողէ գնացել էր: Աղբերը... Տատս իրեք եղբայր ուներ, ինքը մեծն էր, իրանից փոքր իրեք հաս եղբայր, ամենափոքրն էլ քույրիկն էր՝ հինգն էին: Էդ երկրորդ եղբայրը, ըստ հերթականության, Մարգար էր անունը, կտեսնի տատս, որ ընկել է նախագահի թևը, կբայլէ փողոցով: Կերթա կբռնէ՝ քելէ, կըսէ: Դու թասիբ չունիս, նամուս չունիս, քելէ՝ քաշէ կտանի, այ քույր, կըսէ, խելըմա՛ր: Ըդքան, որ դու ես, դու չէն հասկնա՛ ու՛մ թննս ընկել կքելես: Կտանի տուն, կըսէ՝ քելէ, բաիը վերու պտի էրթանք գերեզմանները: Կըսէ՛ այ քուր, էրթանք գերեզմաններ [ինչ անենք]: Կըսէ՛ փորէ, մեր հորը հաս կիսէ, քու բաժին հոր էսպէս-ընպէսը, դու թասիբ չունիս: Շատ թասիբով կին էր, շատ: Ու, գիտէն, հայկական իսկական տիպիկ ընտանիքի կին, ամեն ինչը տեղը տեղին, ամեն ինչը:

ԳԱՅԱՆԵ. Մյուս եղբայրները ճնցն էին:

ԳԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ուրեմն, մեծի անունը Խաչո էր, իրանից փոքր մյուսը Մարգար էր, փոքրը Դավիթ էր, որը կնոջը սպանեց, որ թողել էր էրեխին, գնացել էր, կուրծք ուտող երեխա էր, լացել էր, ինչ էնեմ, էն վախտ, երևի տուկա չի էղել, որ կաթ ցնեն բուտիկեն դնեն բերանը: Էն ժամանակ հավանական է՝ գդալով են բան էրէ: Քեռի Դավիթը, մրմռա կը սիրտը, կերթա, ում տունն էր, որ կապրին, էդ տունը էրկու դուռ ունի՝ համ արևելյան, համ արևմտյան, հայաթն էլ սանդ ունի, որ ձավար կծեծեն: Ուրեմն, որ էրեխեն գուլա, կերթա կըսէ՝ Մայաց, Մայաց է էղել կնոջ անունը, կըսէ՛ էրեխեն գուլա, քելէ կուրծք տուր, հետո, գրողը տանի, ինչ կէնես՝ էրա: Չի գա: Վարսակը բարձրացնելու ժամանակ թևը կբռնէ ու յոթ տեղով խփել էր, յոթը տարի տվին, յոթը տարին էլ նստավ էկավ: [19]41 թվի հունիսի 17-ին էկավ, [19]41 թվի հունիսի 22-ին պատերազմը սկսվավ, իրան նորից արքորին Կիրովական: Էդ էլ էդ Դավիթը, էդ կնոջը սպանեց:

ԳԱՅԱՆԵ. Իսկ մյուս եղբայրը:

ԳԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Խաչոն, մեծը: Էդի էնպէս հանգիստ մարդ էր: Հա, քի միջի այլոց, հիշեցի: Ես, որ ուսանող էի ու նաև ծխում էի էն ժամանակ:

Երբ որ պիտի գայի դասի, ըստեղ՝ ես Լեննական եմ սովորել, Միքայել Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտը, մինչև հմի էլ աշխատում եմ, դե... գնացքի ծախս է... փող էր պետք, էլի: Հետս 10 ոտրլի, ութը, ինը, նայած ինչքան կլիներ... Ձեռս կբռներ, կերթայինք էդ Խաչոյի տունը: Շատ բարի մարդ էր: Ուրեմն [Շամամ տասն ասում էր]՝ Խաչո ջան: Բնչ, Շամամ ջան: Էս էրեխեն պիտի էրթա, քանիմ մանեթ տուր, էրթա: Էսիգ քու բանկն է, դու փողդ քից, ետև ինքը պարտքի տակ չի մնա: Ուրեմը շապիկի վրա գրպան կար, գրպանից կհաներ քսակի պես բան էր, կբացեր, մե 10 մանեթ կուտար: Ուրեմն՝ էդ շաբաթ փրկված էի:

Հետո էղավ, որ ես ավարտեցի, գնացի: Շարունակությունն ավարտեմ: Ինքը պորթվեյն գինի կլսմեր: Ես ամեն շաբաթ պարտադիր կերթայի՝ քեռի Խաչոն պատկած էր, մի պորթվեյն կառնեի, կերթայի քեռի Խաչոյի տունը՝ [նրան] տեսնելու: Հնը դուռը կգարկեի, կըսեի՝ քեռի, քնած էլ էղնիր, կըսեր՝ Պարույր ջան, էկար: Հա: Բերեի կը պորթվեյնը, բաժակը ցեղի կը, կտորմ ընձի կլցեի՝ [մնացածը] թողեի կը իրան, էլի, կլսմեր: Տասս կըսեր՝ ուրտեղ էիր, կըսեի՝ գնացել էի պարտքս տալու, տաստ, բանկիս փողը... Կծիծաղեր, կըսեր՝ լավ կէնես, բալա ջան, էս նեղ սրին, որ ինքը քեզի ըղպես ուշադիր էր... Շաս վատ էինք ապրում: «Հիմի էլ դու կաշխատիս»: Բնչ է պատահել, մե պորթվեյն՝ մե մանեթ քսան յոթ կոպեկ էր, ինչ էր, էդ ինչ մե... թե՛ 97 կոպեկ՝ չիտեմ: Էրկու գնի կար, երևի, լավ չեմ հիշում: Էդ էլ էդ քեռի Խաչոն էր: Մարգարի համար ասի: Դավիթը, հա, Դավիթին որ աքսորին, բռնեցին, [19]30 քանի թվին էր, հա, չորս աղջիկ ուներ, մի հաստ տղա: Մե մեծ աղջկան տարավ մի աղբերը պահեց, մե աղջկան բերինք էստեղ Լեննական որբանոցը տվինք, փոքր էր, տղեն բերինք որբանոց ու անհետ կորավ, չկրցանք գտնել, բայց աղջկան վերջը գտանք: Լենա էր անունը, գտանք արդեն: Բուրերը գտան, էրկու քուրը տատս կպահեր, մեր տունն էին պատերազմի ժամանակ, և երբ որ Դավիթին էլ աքսորել էին, աքսորից առաջ էլ Մարգարը կպահեր, ինչ որ հետո բան չէրեց, բերեցին մեր տունը, չիտեմ՝ ինչ էր էղել:

ԳԱՅԱՆԵ. Էրեխեքին բերեցին ձեր տու՞ն:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, էդ էրկու աղջիկը մեր տունն էին: Պատերազմի ժամանակ մեր տունն էին էրկու աղջիկը՝ Ռոզ ու Շուռա էր անունները: Մեծ աղջկա անունը՝ Ալգո էր, փոքրը՝ Լենային, գտանք: Աղջիկները մեր տունը կմնային: Բացի դրանից, տատս ինչխոր որբանոցի վարիչ էղներ: Մեր տունն էին նաև իրա տեգոռջ էրեխեքը, առաջվա տեգոռջ էրեխեքը, Արշակ պապի փոքր եղբոր՝ Գևորի էրեխեքը:

ԳԱՅԱՆԵ. Իրենք ինչի էին որբ մնացել:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Էդ էլ ուրիշ պատմություն է: Պատմեմ, համ, երևի:

ԳԱՅԱՆՆԵ. Հա:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, դե կպատմեմ: Գևորգը աշխատում էր բան՝ գոմապահ էր կոլխոզում: Ուներ չորս էրեխա՝ 2 տղա, 2 աղջիկ: Ուրեմն պատերազմի, սովի ժամանակ մահացավ, նույնիսկ թաղող չկար: Գեղը սովորություն է, չէ՞, պիտի լողացնեն մեռելին՝ ես ու տատն ենք լողացրել: Կըսեր՝ ձեռը դրեց վրեն, ըսեց՝ էսի քու պապն է, մի վախենա, ինչ կա, տես: Ես ջուր կլցեի, ինքը կլողացներ, ընպես էլի: Հետո էլ, առաջ պատանք կըսեին, կարեցին, ըստեղ դեմը [ցույց է տալիս աչքերի մասը] բաց կթողեին՝ դաշավանք կըսեին, ինչ կըսեին, բաց կթողեին, որ արդեն կտանեին, կդնեին ժամի դագաղի մեջը, որ տանին դնեն ժամ, մինչև էդի բաց էր, որ պտի հանեին, տանեին թաղելու, էդի կքաշեին, էդ կտորը կքաշեին աչքերին, ըդքան տեղը [աչքերի մասը], էսպես վրեն կփաթեին:

ԳԱՅԱՆՆԵ. Իսկ քիթ ու բերանը փակ էին:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, փակ էր, [ցույց է տալիս աչքերն ու ճակատը] էքան տեղն էր բաց, էդ էլ ըսպես կփակեին [ցույց է տալիս՝ ինչպես աչքերի վրա կտորը վար է բերվում], կպրծնեին: Կհիշեմ, որտե ես կանգնած էի, տանող չկար, գնացել կոլխոզից սել եմ լծե, գոմապահին խնդրել եմ, եզները լծել է, սելը բերել եմ, դրել ենք դագաղը սելի վրա, տարել ենք: Ի միջի այլոց ըդիկ էն... մեր գյուղը մե հատմ բան կար՝ դուրգյար: Հովհաննեսն կըսեին: Հա, ի միջի այլոց, ես գրական անուններով չեմ ասել, էստեղ ինչխոր կա, էդպես կըսեմ, որ հետաքրքիր էդնի: Հա, [գոմի] օդա ուներ, որ մարդիկ հավաքվում են էստեղ՝ կնստեն, գրուցեն, հեքիաթ կպատմեն, կերգեին հազար ու մի տեսակ բան: Հավաքածու գյուղի՝ հասակով մարդիկ, դե պզտիկ էրեխեքս էլ կերթայինք ըստեղ: Տառս ըսեց ընձի, թե գնա ըսա Հովհաննեսն եղբորը, բոլորն իրար «եղբայր» կըսեին, տատիս անունից գնացի ըսի՝ Հովհաննեսն եղբայր, մամս կըսե, որ Գևորգը մեռել է, մարդ չկա: Գնացի ըսի՝ ելավ օդի դուռը փակեց: Ըսավ՝ ես որ մեռնեի սաղո գուկայի՞ք մեր տունը հաց ուտելու, քյասիք է՝ էդուր համար չե՞ք էրթա: Էդ մարդը կաստիլներով՝ [19]14-15 թվին ռուս-գերմանական պատերազմի ժամանակ վիրավորվել էր, մի ոտը 90 աստիճանով էր [ծավված], կաստիլով կքայլեր, թաթը չկար, էդպես էդ ձմեռվա թիփուն ինքը ըդպես կաստիլներով եկավ, տարանք, Գևորգ պապին թաղինք: Ըստեղ հարևանները մե էրկու հատ կնիկ, ով որ տատիս կճանաչեին, էկան, քիչմ լացան, թե՛ չլացան, չիտեմ, իրանք գիտեն էդիկ: Կնգտիկ էլ էդ թիփուն չգնացին, Հովհաննեսն էր, իրեք հատ էլ 3 տղամարդ կար հետները, ընդամենը 4 հոգի էին, ես էլի բանին նստած էի, եզները կքշեի, տարանք թաղեցինք: Այսինքն՝ սկզբից գնացի, ժամից նաշը բերեցինք, դրինք նաշի մեջը, էլ չտարանք բան [եկեղեցի], տարանք ըստեղ [գերեզմանոց], դրինք փուռը, բանը ծածկեց, Գերմարովը, հիշեցի, անունը Գերմարով

էր, մե աչքն էլ կույր էր: Հա, ու հողը տվին վրեն, ես էլ սելլը տարա, նաշը իջեցրի: Տարա սելլը կալ, պրծավ: Էդպես անցավ Գևորգ պապի թաղումը: Հայրս, որ միշտ նամակ կգրեր, միշտ կհիշեր Գևորին:

Ու երեխեքը մնացին: Մեծ տղին տարան բանակ, իրեքին էլ բերեց մեր տունը, ու՛ր պտի էրթային: Բերեց մեր տունը: Տղեն՝ Բարեղամը, ինձնից մեծ էր 2 տարի, գումը կաշխատեր, 2 քուրիկներն էլ փոքր մեր տունն էին: Գրիգորին տարան բանակ, Բարեղամը կաշխատեր: Գրիգորը բանակը ծառայեց, էկավ, էկավ, ամուսնացավ Լեննական, էրկու քրոջ ու եղբորը բերեց Լեննական:

ԳԱՅԱՆԵ. Վերադառնանք երեսունական թվականները: Դուք ձեր հոր քանտարկվելուց հետո երբ պիտի դպրոց գնայիք:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ցավալի պատմություններ են: Ուրեմն [19]37 թվին 7 տարեկան էի, գյուղը դպրոց չկար, առանձին տներ էին, մե տանմ հայաթը հավաքվեցինք, ուսուցիչները մեր գյուղից էին բոլորը՝ էս էրեխեն ընձի հետ գա, ըսիկ՝ ընձի... Իրեք առաջին դասարան էղավ՝ 25-ական: Մեր գյուղը մեծ գյուղ էր, էդպես կհիշեմ, Ա,Բ,Գ կար, ետև դասավ 2 դասարան՝ Ա ու Բ ետեսուն քանի հոգի էղանք՝ էրեխեքը չէին գա, ցուրտ էր, բան էր: Էդպես կհիշեմ: Որովհետև, երբ որ 45-ը կանցներ, 46 որ էղներ, երկրորդ դասարան կէնեին: Համ էլ նստելու տեղ չկար, ստիպված էին 3 դասարան էնելու: Էս սենյակը մեծ է, էսօր չափ սենյակ [6 քառակուսի մետր] քանի աշակերտ կրնա էղնի: Հենց էդ պայմաններից ելնելով: Բոլորին վերցրին, ես մնացի կանգնած, ես տրոցկիստի տղա էի, պիտակը վրես էր: Ընձի ոչ ոք [չվերցրեց իր դասարան]... Ձորակապից Անուշավան Կիրակոսյան, ըղիկ մեր գյուղը դասատու էր, ըսավ՝ էս փոքրիկն էլ թող ընձի հետ գա:

ԳԱՅԱՆԵ. Ինքը չէր իմանում, որ «տրոցկիստի տղա եք»:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Չէ, ինքը չիտեր ես վով եմ, ինչ եմ, ում տղեն եմ, թե չէ էն էլ չէր տանի: Էդպես տարան, ըղպես՝ առաջի դասարան: Երկրորդ դասարանում արդեն, թե երրորդ դասարան դպրոց սարքեցին, ուսուցիչներին պատերազմ տարան, դասարանները միացրին, դասատու չկար: Սովը գյուղում սկսեց գլուխ բարձրացնել, ու ցավալի բանմ նորից, որ հոգուս խորքում հեչ չեմ մոռանա: Մեր գյուղը հացի ֆուռ կար, դա էդ Պեմզա հանքերի բանվորների համար էր, իրեքհարկանի շենք կար էստեղ, բանվորները կմնային, հանքերը կառավարողները, ու, երևի, էդ ֆուռը սարքել էին՝ դրանց՝ բան էնելու համար: Երկրորդ դասարան կէղնեի, [19]41թիվը կէղնի, երևի, երկրորդ, թե երրորդ: Ուրեմն բոլորին տնտեսվարը կբերեր, 200 գ. հաց կուտար, բացի ինձնից, բոլորին կտային, ինձի չէին տա: Ես գնացի տուն, տատիս ըսի, տատս հասկցավ՝ ինչը ինչոց է, որ վատ կզգամ, որ սաղին հաց կուտան... մի կարևոր բանմ չէ, բայց՝ ինձի չեն տա, էրեխի հո-

գերանությունը... Ըսավ՝ բան չկա, բայց ջան: Առավոտ էլանք, լավաջ դրեց, պանիր դրեց մեջը, ըսավ, որ կբերեն, հաց կուտան իրանց, դու էլ քո բրդունը հան կեր: Հա [ծիծաղում է]: Գրքի մեջ գրել եմ՝ «հաղթական բրդուն»: Բերին տվին, ես էլ հանեցի, արդեն բոլորը ընձի նայեցին, որ ես պանիրով, լավաջով բրդունը ունիմ ու, պատկերացրու, էկա տուն ուրախ-ուրախ: Է, ինչխ էր, ըսի՝ շատ լավ էր, տաստ ջան:

ԳԱՅԱՆԵ. Հաղթեցիք:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, դե... Չանտա կըսեինք, տոպրակի նման բան, տաստ էր կարել, թե՛ կար, կզգեի վիզս՝ գրքերն էլ մեջը, եթե կար, ունեի գիրք:

ԳԱՅԱՆԵ. Էդ չանթայով էիք գնում դասի:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, բրդունը դրեց ըղտեղ, ըսավ՝ չուտես, երբ որ կբերեն, կուտան, որ իրանք հացը կուտեն, դու էլ քու բրդունը կեր:

ԳԱՅԱՆԵ. Էդ մի անգամ էր...

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Չէ, արդեն սովորություն էր, հա, արդեն սովորություն էր, ու միշտ հաց կղներ հետս: Չէի ուտի, ես էլ գիտեի, իրանք կուտեին՝ ես էլ իմ հացը կհանեի, կուտեի:

ԳԱՅԱՆԵ. Բայց ինքը նաև ստիպված էր շատ չափավոր, չէ՛, էդ հացերը տալ:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հարյուր տոկոսով: Երբ որ ըդքան որք կար մեր տունը, մեր աշխատողը պապն էր, որ մահացավ, աշխատող էլ չկար: [19]43 թվին էլ Ավագ պապը մահացավ: Մենք փոքր կարտոշկեքը որ քանդեն կը, մանդրները չեն հավաքե, մենք գնում, էդ բոլորը կհավաքեինք, կբերեինք տուն, մեշոկներով ունեինք: Խաշեր կը տաստ, կկաչեինք, մսի մաշի-նով կաղայինք էդ կարտոշկեքը, գարե ալըրի հետ կխառներ, կէղներ փափուկ հաց, կթխեր, ու կուտեինք:

Բարեղամը գոմերը կաշխատեր, Գրիգորը էկել էր, կոլխոզի կալը մալառիկեն խոփան կուտար, ընտր պայոկը չորսը հաց էր, Բարեղինը էրկու հաց ու կես էր, իմը էրկուս էր, աղջիկներինը, սաղիս էրկուս էր, էն մեկին էլ՝ մեկուկես էր, պզտի աղպորս ու պզտի քուրջը: Ես իրա իսկական թոնն եմ, էնի տեգրոջ տղեն, էնտր շատ կուտար, ինձի՝ քիչ: Կըսեր՝ բալա ջան, ընիկ կաշխատի, որ դու էլ էրթաս՝ իրան օգնես, քեզի էլ շատ կուտամ, ըղպես տատիկ էր: Կըսեր, էնի սաղ օրը վերև կուտա, կաշխատի Գրիգորը, ընիկ շատ պտի ուտե: Նորմայով էր:

ԳԱՅԱՆԵ. Գյուղում կային մարդիկ, որ օգնում էին ձեզ:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Պա հն՝ էդ էր պակաս, մեր տունը գային, հաջորդ օրը կաքտրեին, չէ: Մեր տունը միայն... մեզի օգնում էր որոշ հարցերով էդ Հովհաննեսը, որին ասի, գեղի դուրգյարը: Մենք էրկու հողամաս

ունեինք, ես, որպես Տոնոյան, 0.25, տատս Քերոբյան էր, Ավագը՝ 0.25 էլ իրանք ունեին: Մենք էդ էրկու հողամասն ունեինք: Էդ էրկու հողամասը կցանեինք ու գարի կցանեինք, որ շատ էղնի: Ու մենք դրանով կապրեինք: Ընդ որում... ու ցավալին էն էր, որ մեզի ոչ արոր կտային, ոչ էլ կօգնեին: Մենք ոտով կպահեինք ու կցանեինք: Ուրեմը, մի անգամ [19]42 թիվն է, Ավագ պապը մահացել է արդեն, չկա, մեզի տունն աշխատող չկա, Ավագ պապը փոշտալյոն էր էն ժամանակ, փոշտը Արթիկից կրերեր, ոչինչ, վատ չէր, մեր տունը հաց կար, պապի մահանալուց հետո համարյա թե բան չկար: Ուրեմն, գնացինք, որ արոր ենք ուզում՝ չութ, մամս չութ կըսեր: «Ապետ ջան, - բրիգադիրին կըսեր, - չութը տուր, էդ երեխանց արտը վարենք, մեր արտը մնաց, արտերը սաղ արդեն ցանել են: Հա, մորքուր ջան, 2 օր հետև արի, կուտամ: Էկանք տուն, ըսավ՝ խափեն կը, մեզի ո՛չ արոր կուտան, ո՛չ էլ չութ, քելե էրթանք, ցանենք մենք: Տո, տատ, էդքանն ի՞նչխ փորենք: [Տատն ասեց]՝ արի պայման կապենք, եթե ես ճիշտ էղա, ուրեմն սրանից հետո էլ չես հարցնե, դու տան տղամարդն ես, գելնիս, ինչխոր կարգն է, էդպես՝ վարելն էլ քո վրա է, ցանելն էլ քո վրա է: Գնացինք արտը, բերեց 2 վեդրո գարին լցեց, դրեց իմ շալակը, բահերը տվեց եղբորս, մեկն էլ՝ ինձ, փոցխն էլ ինքը վերուց, գնացինք արտը: Դրեցինք, ես գիտեմ, թե մարդ պիտի գա՝ ցանե: Մատանք, ըսի՝ ըբը ինչխ պտի ցանենք, տատիկ: Ըսավ՝ հա, հմի: Գոգնոցը հանեց, կապեց վիզս, բռնել տվավ, ըսավ՝ չոքի: Չոքա, բռերով գարին լցրեց գոգնոցի մեջը, բահով գիծ քաշեց ու ըսավ՝ էդ փեշիդ, գոգիդ գարին ըդքան տեղը ցանե, ցփնե: Տո, տատիկ... Ցանե: Ցանեցի, հետո նորից... մի խոսքով, ցանվոր դարձրեց տատը ինձի, սկսեցի ցանել: Հետո էլ փորեցինք ու ամեն 2 օրը մի անգամ՝ Ապետ ջան, չութը [կտաս]... Հա, մորքուր ջան, էգուց չէ մյուս օր: Ուրեմն, մինչև էկավ չութ տալու օրը՝ մայիսի 28-ին, մեր գարին արդեն ըսքան էր [ձեռքով մոտ կես մետր բարձրություն է ցույց տալիս]: Տատս կըսեր, թե երբ որ մարտին կցանես, մարդ կէղնիս, ապրիլին ցանիր՝ կապրիս, մայիսին՝ վայիս է, ոչ մի բան չի բուսի: Մենք արդեն մեր գարին ըսքան էր... Հլե չութն նոր կուտա: Էկանք ամսի 28-ին էլ, ըսավ՝ տիս, եզները գոմն են, բրախած են, գնացեք տարեք: [Տատն] ըսավ՝ վարող տու գոյնե: Տիս, տղեդ թող տանի վարե: Տո, Ապետ ջան, ես երեխեն ինչ կրնա լծե, չութ բռնե: Ես ինչ էնեմ, գնա մեկիմ գտի տար ու վերջ: Թողեց ու քելեց: Ահա, էդ էլ մեր վարելուն: Էկավ քաղելու վախտը: Չիտեմ ուրտից, երևի Հովհաննեսն էր տվել, մե 5 համարի գերնդիմ էր ճարել, թե՛ ութը, ութ համարի: Գերնդիմ էր ճարել, գերնդին առանք, փոցխ, եղան, բան՝ ելանք տնով, Սուտիկ Ռոսկանի պատմության նման, գնացինք արտը, կապասենք որ՝ ղվ պիտի գա քաղե: Մեկ էլ ելավ մամս, սրեց, առավ քաղեց, է, մեծ կնիկ էր: Տո, մամ, վնվ պիտի գա: Տո, ըսավ՝ դու պիտի քաղես: Ես ինչ կոնամ:

Ըսավ՝ ելի քաղէ: Ուրեմն, որ գերնդին կըցեի, տո՛ր «մեռնիմ ջանիդ»՝ ընպես կզովար, որ ես գիտեի, որ հաստատ ըղպես էր: Ու դառա նաև քաղվոր: Ու հետո... 12 տարեկան էի էդ ժամանակ, 12-13... Հետո, արդեն ընտից հետո իսկական քաղվոր դառա, կոլխոզին էլ քաղ կենեի, սովխոզ դառավ, սովխոզին էլ քաղ կենեի: Իմ հաճույքի համար: Գելեիք, սար կերթայինք, լավ քաղվոր էի արդեն, նորմալ: Ուրեմն ցանքվոր դարձրեց, քաղվոր դարձրեց, ստիպված էինք: Էկավ կալի ժամանակը: Էտի երևի պիտի մինչև վերջ ասվի: Ուրեմն ինչ էնենք: Էլի, ըսավ, քելե իրար հետ էրթանք կամ ուզենք: Ըսի՝ ես չեմ գա, ըսավ՝ չի տա, մեկ է: [Ասի՝] ըբը ինչ էնենք: Ըսավ՝ գիշերը իրար հետ էրթանք Հովհաննեսին, կամ կուտա մեզի: Ուրեմը գնացինք, էսպես լեն էր [մոտ մեկ մետր] կամը, այսինքն՝ տախտակը, հետևը փոսեր կա, սև քարերը կզարգեին: Գնացինք, առանք էկանք էրկուսով, բերինք դրինք մարագը, առավոտ ելանք: Մամը հնարագետ էր, հարևանը ավանակ ուներ, օրական 3 կգ գարի տվեց, էդ ավանակին բերեց: Բաները կապեց, կամը դրեց, քարն էլ դրեց, չմուռ տվավ ձեռս թե պտտե: Բորիկ, ինչ վիճակի կեղնին, ոտներս սաղ արուն-վիկ էղավ, բայց էնեի պտի, էրեցի: Ուրեմն կախ էլ կալեցինք: Ըմպես լավ կամ էր, էմպես լավ էր էրեր, որ էդ օրվա մեջ էրինք պրծանք, հավաքեցինք: Հմի մնաց մաքրելը: Էկանք, ըսավ՝ մեր պապերը, ես կիիշեմ, ըսավ, փոքր աղջիկ էի, մեր Եղո պապը, իրա հոր անունը Եղո էր, ընձի կպատմե, քու Եղո պապը, թիակով, կըսե, ըմպես էրան կեներ որ, վերուց ինքը մի 2 հատ քցեց, տվեց ընձի, ըսավ՝ փորձե: Տո, մամ... Փորձե, հիմի ինչ էղավ՝ էղավ, չէղավ՝ խո կալից գարին չի փախնի, էի կալի մեջը կմնա: Սկսեցինք էնել, էրան էնել էլ սովորա, ջոկեցինք, իհարկե լավ չէրի, էն մնացածը ինքը մաղով էրեց, ջոկեց, մի խոսքով, դարմնի հետ հեչ մի հատիկմ չթողեցինք, բոլորը հանեցինք: Ուրեմն, փաստորեն, ես 12-13 տարեկան էի, արդեն գյուղատնտեսական աշխատանքներին գիտակ էի, ամեն ինչ գիտեի, ամեն ինչ: Հա, ստիպված էի, ստիպված էինք, որտև մեր տունն էլ մարդ չէր գա, մեզի ոչ կամ կուտային, սեղ էլ չէին տա, որ [բերքը] արտից բերենք: Առաջին տարին շակելով ենք բերել, երկրորդ տարին նոր Արեստակմ կար, շատ լավ մարդ էր, օդորմի իրանց, առաջ լավ մարդիկ շատ կային, առաջ ինչխոր թե, կամաց-կամաց, որ մենք մեծցանք, փոխվավ, էդ պատերազմից հետո, ժողովուրդն ինչխոր մե քիչմ փոխվավ, ուրիշ էղավ, էլի, էն առաջվա ժողովուրդը չէղներ ինչխոր, մեր տունը գնալ-գալն էլ կար արդեն: «Հայ առի» հաշվապահի տղեն, ես իններորդ դասարան էի, մեր տուն գուկար, գուկար, խնդիր կլուծեինք, ես մաթեմատիկայից լավ էի, ինքն էլ պատմությունը կկարդար, կոնսպեկտ կգրեինք: Հա, ընպես, որ էդ հարցերը էրկուսով շատ լավ կլուծեինք: Արդեն մեր տունը մարդ գուկար, ընկերներ գուկային, ընկերներ ունեի, էն փոքր ժամանակվա ավագակախումը

էղնեինք ոնց որ, կոլխոզի կալից ցորեն, գարի կգողանայինք, կտանեինք, որ առևտրականները միրգ կբերեին, կառնեինք, կկիսեինք, աչկո կխաղայինք: Ես տունը չէի տանէ, տանեի՝ տասու կըսեր ուրտից, գողցել ես ուրեմն: Ես տուն չէի կոնա տանէ:

ԳԱՅԱՆԵ. Մյուսները տանու՞մ էին:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Չէ... ամենակարևորը... Էդ էլ հիշեցի: Աշխատանքային հերոս, հերոսի տղեն, Վրեժ էր անունը, հերը աշխատանքային հերոս էր, լավ վարելու համար մեղալ էին տվել: Վրեժը տուն կտաներ, մերն էլ վրեն կնեղենար, թե էս փողոցից դեղձերը, մենք շատալի կըսեինք, դեղձերը կկիսեինք, աչկո կխաղայինք, ես լավերը կուտեի, էն վատերը կթողեի կերթայի: Վրեժը տուն կտաներ, մերը վրեն կնեղենար, թե էս ուրտից ես հավաքել բերել, կըսեր էդպես է էղել բանի մեջը, չամադանի, էն ժամանակ յաշիկ չէր, չամադանով կըռնեին կտանեին, կբերեին: Էդով, որ Վրեժը հետո սովորեց խումար խաղալ, ես վախենում էի, վախենում էի, թե որ ես հանկարծ բան էնեմ, տատը իմանա, ընձի տուն չթողէ, ես ու՛ր պտի էրթամ: Ուրիշ տեղ չկար էրթալի՝ ոչ հորողբեր, ոչ հորքուր, ոչ մի բարեկամ, որ, ըսենք, էրթաս տունը կամ... վախենայի կը, ու՛ր պտի էրթամ: Մի խոսքով, էնպես պատահեց, որ Վրեժը դատավ գող, գողություն ըրեց, կոլխոզի պահեստից մեղր գողցավ, բռնեցին, բերին գրասենյակ, մենք 6 հոգի էինք, եթե Վրեժը ըսեր, 6-ն էլ իմ հետ էին, 6-ին էլ կկալանավորեին: Տատը ներս մտավ, գյուղսովետի նախագահի անունը Ոսկան էր, Ոսկան, ըսավ, հանկարծ թոռիս անունը էղել է, ձեռնես չես պրծնի, խայտառակ կէնեմ, թոռս Պիճոյի Համոյի տղի հետ, էդ «Հայտի» հաշվապահի, Պիճոյի Համոյի տղի հետ, մեր տունը իրկունը բան կգրեին, գուգես գրածները բերեմ տես: Ըդպես Վրեժն էլ ազնվություն էրավ, վով էղել էր հետն, ընտր անունը ըսավ՝ Գնունը, էրկուսին տվին 7-ական տարի, թե 5-ական տարի, գնացին: Մենք էդ փորձությունից, ես պրծա, որ հանկարծ մը հատմ ըսեր՝ հա, Պարույրն էլ է էդ օրը էղել մեր հետը, ընձի էլ կտանեին, մահանա էր պետք, ընձի տանելու համար մահանա էր պետք:

9-րդ դասարանը ավարտեցինք, մեր գյուղը 10-րդ չկար, գնացինք Արթիկ, իմ անունը չգրին... էդ տարին: Ուրեմն, եռանկյունաչափությունից բան հարցրեց, Մոսկվայի բանաձևերը, երևի թե անունն էի մոռացել, մինչև հիմի կհիշեմ, երևի էն բաները, որոնք ընձի ցավ են պատճառել, ըդոնք շատ լավ կհիշեմ: Դասատուի ազգանունը Տոնականյան էր, ես իրա տետրները մինչև հմի պահել եմ, որ ինքը գրել է. «առարկայի նկատմանը հետաքրքրությունը, հետաքրքրասիրությունը հետագա խորացման գրավականն է», ու 5 էր դրե, ստորագրել էր, տետրը էդիկ պահել եմ, էրեխանցը բոլորին ցույց եմ տվել, իմ էրեխեքը բոլորը մաթեմատիկայից լավ են, մեր տունը առաջ մը հատմ

գրատախտակ կար, էրեխեն ուրիշ բան չէր տեսել, գրատախտակից բացի, ուրիշ բան չկար: Տունն էլ կպարապեի, ընտել էլ: Էդ տարի չգրեցին, գնացի տուն, [տատն ասեց]՝ ինչխոր էկար, ասի՝ դե անունս չգրին: [Տատս] մե լաց ու կոցմ խո չդրեց, ըսավ՝ քու հերն էլ, որ հմի հաշվապահ էղներ, քու անունը բոլորից առաջինը կգրեին, որտև դպրոցը գիտեին, որ ամենալավ սովորողը ես եմ մաթեմատիկայից, էն էլ մաթեմատիկայի պատճառով չի գրե անունս, պատկերացնեք կը, ինձնից արտագրողին, ով որ... մեր հարևանի աղջիկը կար կարտագրեր, ընուր 5 կդնեին, ընձի՝ 3: Իմ գրածը, կըսեին, որ դու ես արտագրել: Կամ իմ գնահատականները իրեք էր, ընորը հինգ էր: Դե պատկերացրու: Ըշտը, էկա տատիս ըսի, որ էրթամ աշխատիմ: Դիմում գրեցի, գնացի հանքերն աշխատելու: Գնացի, մե ամիսմ աշխատա, քար կտրողի օգնականն էի, մանր խիբարները կհեռեցնեի, դե հանքի տեղը կազատեի, հանած քարերը կհեռացնեի, որ աշխատանքի տեղ էղներ: Ամիսմ աշխատելուց հետո էկա տուն, գյուղից էրկու հատ աշխարհագրության գիրք կար, էրկու հատ, թե՛ իրեք հատ, մեկը մեր սեղանին էր դրած, գնացի բացի, խո չուրախացմ: [Տատն] ըսավ՝ գուզե՛ս, ըսի՝ ո՞վ ուներ: Ինչի՞ պիտի չուզենայի: Ըսավ՝ էկուց դասի պիտի էրթաս: [Ասի՝] տատ, ես էդ էրեխոնց հետ չեմ էրթա, յանի ես շատ եմ մեծըցել: Չէ, ըսավ, դու դասի կերթաս: Պռոզուլ կար էն ժամանակ: Ըսավ, որ... բան էրիր՝ դատի կուտան, մահանա էր պետք: Ուրեմն խրատել էին տատիս: Ասել էին՝ գնա, 3 անգամ դիմում գրել տուր, թող գրե՛ չեմ ազատում, ըդիկ հերիք է: Ուրեմն 2 անգամ գնացել դիմում եմ գրել, ասել էր՝ չեմ ազատում, էն ժամանակ բանվոր չկար քարհանքները, 3-րդ դիմումն էլ նույնիսկ դրեց պատին Դարբինյանը ու գրեց՝ չեմ ազատում: Էդ 3 դիմումն առավ, տվեց դպրոցը, նորից նստա 9-րդ դասարան:

ԳԱՅԱՆԵ. Բա ո՞նց էր տատին համոզել, որ նորից դպրոց ընդունեցին:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հենց ըդպես, համոզեցի... Ինչխ էին տատին համոզել: Ուրեմն, քիչ առաջ էլ ասի, չէ՛, որ, ասի, 25-ը, որ կանցներ աշակերտների, 2 դասարան կենեին: Փաստորեն էրկու աշակերտ պակաս էին, մտածել են, էրթանք, մեկ էլ Շամամ մամին համոզենք, բերենք, մեկն էլ չիտեմ՝ ում էին բերել, էղավ էրկու դասարան, կիսվեց: Համոզել էին տատին: Էդ գիրքն էլ, վայտե, իրանք էին տվել, թե՛, չիտեմ, տատը կիլոմ յուղ էր տվե առե, չիտեմ էդիկ, գիտեմ, որ գրքերս նորմալ էր, հին էին, բայց նորմալ էր: Ըդպես էդ տարի էլ դպրոցում սովորեցի, հաջորդ տարի գնացի 10-րդ դասարան: Ավարտեցի, օտար լեզու չէինք անցել, ռուսերեն տառերը չիտեի թամամ, մեր գյուղը չկար դասատու, 6-րդ դասարանում էկավ մեր դպրոցի դիրեկտորը, բանակից նոր էր էկել, մե դասմ անցավ, էն էլ ինքը սաղ անգիր կարդաց, մենք բոլորս ինչ հարց կուտար, մենք անգիր կպատասխանեինք, ինքն էլ կըսեր պյատ, վայե պրծավ: Օտար լեզու չունեինք... Մի խոս-

քով, ավարտեցի դպրոցը, էկա, ընդունվեցի մանկավարժականը: Չէ, գնացի սկզբից Երևան Ճարտարագիտականը, ուզում էի շինարար-ինժիներ դառնալ, նկարչությունից 3 ստացա, նկարել ուրտեղ գիտեմ, ո՞վ է ինձի սորվըքրել, որ... Չընդունեցին, էկա, էստեղ ընդունվա ու մինչև հիմի էլ ըզտեղ եմ:

Հիմի իմ երեխեքը ինչքան որ դաստիարակություն ունեն, պարտաճանաչություն, սուտ չխոսել, ըդիկ սաղ տատիցս գուկա: Կըսեր՝ բալա ջան, սուտ մի խոսի, որ մե սուտը սուտ խոսեցիր, հաջորդ սուտը կէդնի 2 սուտ, հետո էդ 2 սուտը թաքցնելու համար 3-րդը կըսես, հետո 4-րդը ու կդառնաս ստախոս: Ավելի լավ է, ինչ, որ կէդնի, էդ բանը ըսա, կվերացվի, ավելի լավ է, քան թե մնա, բարդանա, հետո կյանքը ցույց տվեց, որ, իրոք, տատս ճիշտ է:

7-րդ դասարան էի, կոշիկ չկա, չարոխ չկա՝ տրեխ, չարոխ կըսեինք: Բոքիկ ոտով ես կերթայի, գրքերս կդնեի օդեն, կերթայինք, ընտեղ ճան կխաղայինք, մի ամբողջ 3-4 ամիս չգնացի: Մի անգամ էլ դպրոցի դիրեկտոր, ուսմասվարը կորկե [մի աշակերտի], թե գնա Շամամ տատին ըսա՝ Պարույրին ինչ է էղել, որ 2-3 ամիս է՝ դասի չի գա: Օսիկն էր, թե՛ չիտեմ մեկը գուկա, թե՛ մամ, կըսե՛ ինչ, կըսե՛ ո՛ր ա Պարույրը, դասի չի գա էղավ 2-3 ամիս: Կըսե՛ քա տղա ինչ կըսես, ըիդ նոր գրքերը բերեց դրեց ու գնաց, ըսավ՝ չիտեմ որ դասատուն չի էկել: Չէ, կըսե, էղավ 2-3 ամիս էլ չի գա: Համ... Թնդիրը վառը կէդնի, դուռը կփակել, ըդպես վառը կթողե, մե փետմ ձեռը կընկնի՝ Պարույր ո՛ր ես, գնաց, էկավ գտավ: Նստել ենք Անահիտ կա, առևտրականի տունը, դեղձը բերել է, ցորենը գողացել, տարել տվել ենք, առել ենք, բաժնել ենք, աչկո կխաղանք: Մեկ էլ դուռը [բացվեց], Պարույր տղամ, դուրս արի: Սաղ, ընկերներս էլ տատից կքաշվեին, որտև, որ գուկային մեր տունը, էն ամենավերջին բանը կիյուրասիրեր, որ ընձի հետ ընկերություն էսեին, մենակ չգգամ: Պատկերացնես կը՝ Պարույր տղա, դուրս արի: Հրաչը ամենաուժեղն էր մեր միջի ու շատ չար էր, թնդիրը վառն էր՝ էդ ում, որ տունն էինք, Անահիտի: Ըսավ՝ կեցի, ես հմի ըմպես մոլիս կապեմ, որ Շամամ մամը չկրնանա գտնի: Ինչքան որ... առհասարակ թոնրի շուրթը ինչքան որ պիտի վառեն էդ օրը, ցախը կլցեն, որ կամաց-կամաց քցեն, որ հետո թոնդիրը կկարմրի, որ հետև հաց թխեն: Բոլորը մեկից լցել է, հո մի ծուխմ չի էլե, դե փախի, տատս կանգնել է, ոտքերի արանքից դուրս թռա, դուրս թռա, ինքն էլ՝ հետևից: Ամբողջ գյուղը պտտել եմ: «Պարույր տղա...»: Վերջը, պտտեցի, մի 2 շրջան գյուղի մեջը պտտեցի, էկանք, որ խանութի դռնից անցանք, ըդիկ ընձի շրջադարձային կետ է էղել կյանքիս համար: Էնտեղ ժողովուրդը հավաքված է, գարուն է, խանութի դուռը կհավաքվին, ասում, ասում, անեկ-դոտ են պատմում, ծիծաղում, ամեն ինչ: Մենք, որ գնացինք, տատն էլ փետը [ձեռին] հետևես գուկա, էդոնք ինչ է կպատմեին՝ ծիծաղեցին: Ըսավ՝ Պարույր տղա, կեցի՛, տեն, մեր վրա կծիծաղեն: Կըսե՛ հլը տեն, դու չլսիր, ըսավ, կը-

սեն՝ հըը տեն, մամը փետըր առե, ընկել է թոռի ետևեն, Երվանդի տղի ետևից, որ դայրոց տանի, որ յանի մարդ դառնա: Ըմպես ազդեց վրես, խելոք սպասեցի, էկավ հասավ, փետըր քցեց, ըսավ՝ քելե դայրոց էրթանք, 7-րդ դասարան էի: 2 տարի էլ 7-րդ եմ մնացել՝ դասի չեմ գնացել: Գնացինք, գնացինք, դայրոցը գեղի վերևն էր, գերեզմանների, հին գերեզմանների մոտ էր: Ըսավ՝ ես կնստիմ ստեղ, դու գնա: Ըսի՝ դու մի գա հետս, ըսավ՝ հա, ես կնստիմ, դու գնա: Գնացի, մտա դայրոցը, հըը զանգը չի տվե, ճիտ ու վիտ կենեմ, թե տատը գնաց, թե էդտեղ է: Տեսնի կը, որ ես գոխս դուրս կհանեմ, տեսնի կը: Ըդորեն հետև էլ ըսավ՝ արի: Լացավ, իմ էլ սիրտը լցվավ: Ըսավ՝ դու չիտես ինչխ հեր ես ունեցել, դու էնպես հայր ես [ունեցել], [որ] դու իրավունք չունիս: Էս սաղ գեղը ինչի կծիծաղեցնես մեր վրա: Տո, տատ, ըսի... Ըբե՛ բան չկա, բալա ջան, մե կտորմ էլ էդտեղ լացանք, էլանք, բռնեց ձեռս՝ գնացինք: Տարավ ուսուցչատնոցը, ըսավ, բոլորիցդ ներեղություն կխնդրեմ, Մխիկ ջան, Մխիթար էր անունը, ընոր, որ պապս էտոնց քավորն է էղել, թե՛ իրանք մեր՝ չիտեմ: Քավոր, սաներություն է էղել հին պապերի միջև: «Ան, բերել եմ Պարոյրին, միսը՝ ձեգի, ոսկորն ու կաշին՝ ընձի»: Էդպես ընձի նվիրեց դայրոցին ու էդպես գնացի դայրոց, ու արդեն սկսի սովորել:

Մի ժամանակ երկար դասամիջոցին կհանեին, կկանգնեցնեին, ով որ վատ էր ստացել, պարսավեին կը, ով որ գերազանց էր ստացել, կկանգնեցնեին շարքի դեմը, կգովային: Ուրեմն, ես մե անգամ եմ պարսավանք ստացել, ըտից ետև միշտ գերազանց կէղնեի: Արթիկից մենք, 8-րդ դասարան էի արդեն, Արթիկից էկավ Պալոյան Արտավազը, մաթեմատիկա տվեց, էն, ինչ որ հնից ունեի, վերականգնվավ, ես էդ մարդուց ահագին բան սորվա ու գերազանցիկ դառա: Մաթեմատիկան, հայոցները, ֆիզիկան, քիմիան, սաղ 5 էր, ռուսաց լեզուն՝ 2, չկար, տառերը թամամ չիտեի, վերջը տառերը Արթիկ սովորեցի: Հետո արդեն գլխի ընկա, որ ընոնք իրանց համար անեկդոտ կպատմեին, կծիծաղեին, ինձի հետ կամ Երվանդի հետ ինչ կապ ունի: Հա, ինչ եմ ուզում ասել, էդ տատը ամեն մի բանը կօգտագործեր, հնարավոր բանը, էդիկ մեծ փիլիսոփա էր վայտե: Ինչխ իրադրությունը ընպես կգնահատեր ու կօգտագործեր, որ չէիր կրնա հակառակ բանն ըսե: Ես որ ամուսնացա, ըսավ՝ քաղքից աղջիկ չուզես, որ գա թվանք թալե թևը, թողե էրթա, այսինքն, որ գա, էրեխեմ ունենա՛ էրթա, դու ստիպված հետևից պիտի էրթաս: Բայց ընպես ստացվավ, որ ես քաղքից աղջիկ ուզեցի իրա ուզելով, իրա սրտով էր:

Ուրեմն Ավագ պապի մահանալուց հետո պոչսալյոնի բանը [գործը] ես էի անում, տատս էր անում, ավելի ճիշտ: Որ օրն էլ, որ բան չկար, թեթև տղա էի, կերթայի, վազելով կերթայի նամակները, թերթերը կառնեի, գուկայի: Իսկ բանի ժամանակ, էն ժամանակ բոլոր պատերազմի մասնակիցները՝

ընտանիքները, թոշակ կատանային, պատերազմի համար: Ուրեմն կտրոնը էրկու բան էր, մեկը փոքր էր, մեկը մեծ էր: Կլրացնեինք փոքրը կուտայինք իրան, մեծը կտանեինք, կհանձնեինք, որ ստորագրած է, ստացել է: Ուրեմն, միշտ էդ օրերը, ամսու 25-ին էր: Միշտ իրար հետ կերթայինք, հաշվելուց լավ էի քիչմ, ընծի հետը կտաներ: Կերթայինք, համ էլ էրկուսով կեղնեինք: Փողերը կտոնեինք, գուկայինք: Էդ մեր փոքր լուսամուտի մուտը ես կնստեի ստորագրել կուտայի, քարտերը կլրացնեի, տատս փողերը կհաշվեի, կուտար էդ փոքր թերթիկի հետ, կերթայինք: Էդ անգամ գնացի փոշտը, չիտեմ ինչ էր էղել: Էլի պատերազմի էդ օրն էր սկսվել՝ հունիսի 22-ին, թե՛ 21-ին, էդ օրը տվին թոշակները: Կանչեց բանը՝ թե տար: Ըսի՝ ես չեմ տանի, ժամի իրեքն է: Ըսեց՝ ըբե պարտադիր պտի տանիք, էգուց բաժանած կտրոնները ետ բերեք, ըղպես է հրամայված: Հատուկ բան կար, սումկա կար՝ փոչտայլոնների համար: Դրեց քարտերը, փողերը, ժամը 3 է, ընտեղ էլի մարդ կար, որ բողոքեց, բայց ըսավ՝ չէ պիտի տանիք, երևի էդ պատերազմի օրվա հետ կապված բան էր, ըտոր համար 3 օր շուտ տվին: Առա քցի վիզս, էկա, էկա, շուտ-շուտ միլիցու դարը անցա, հասա Վանքի մայլեն, մեկ էլ ինչխոր գետնի տկից երկու տղա ելան, էկան սումկին կպան, երևի էնտեղ նկատել էին՝ փոքր տղա, հա, էդ ժամանակ մե հատմ ընծի նկարագրեմ, 48 կիլո, 1.50 մետր բոյով կամ հակառակը՝ 1.48 բոյով, 50 կիլո, փոքրիկ-մոքրիկ տղա էի: Քաշեցին, քաշքվանք՝ էլ չեմ հիշե: Աչքերս բացի, որ տատս նստե կողքս, գուլա: Ուրեմն հետո տատս պատմեց, որ հովիվը ընտեղից կտեսնի, ինչխ սոնք գուկան, սումկեն կառնին, ընծի զարկել են, ուշաթափ եմ էղել, սումկեն կառնեն, կփախնին: Հովիվը մինչև գուկա, չի հասցնե: Ըշտե էդ հովիվը կբերե, կուտա մեր տուն՝ տատին: Զարթնա, որ տատը նստե գուկա, բան էղա, հետո հիշեցի, որ սումկեն ու՛ր ա, ըսավ՝ սումկա չես բերել, առել են ձեռնեդ: Կովմ ունեինք, ստիպված ծախեց, ահագին էլի բան տնից, չիտեմ ինչ էր, երևի, ինքը բաներ ուներ պահած, էդ փողը վերականգնեցինք, մեզ էլ փոչտից հանեցին, ազատեցին, էդ չարաբաստիկ օրը, էդ չարաբաստիկ դեպքով: Ըղպես շատ վատ ազդեց, անդրադարձավ մեր վրա:

ԼԵՎՈՆ. Ձեր հորը ճնց են տրոցկիստ հանել:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ես չիտեմ ինչխ է էղել: Մարգարյան Աշոտ կար, տրոցկիստական քարտուղար... Էդ տոռյկեն է դատել, հետո, որ գնացինք, հորս տեսանք, էկանք, [տատը] ըսավ՝ հորդ կաքտրեն, [սախ]՝ ինչի, ըսավ՝ կաքտրեն, էն վախտ... կրեսն՝ տոռցկիստ է էղել: Բայց ես չիտեի՝ ինչ բան էր տոռցկիստը, ինչ բան էր... Հետո-հետո, երբ որ հետո խելքս հասավ, հմի գիտեմ՝ ինչ բան է, որ խեղճ հերս հեչ բանից խաբար չի էղել:

ԳԱՅԱՆԵ. Մարգարյան Աշոտը տրոցկիստական խմբակի քարտուղարն էր:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, իրան ուշ են տարել, կարծեմ, տարիմ հետո, հորիցս հետո, որ իրան տարել են, իրա մտոր ցուցակ են գտել, հորս անունն ընտել չի էղել, պատկերացնես կը:

ԳԱՅԱՆԵ. Իսկ էն, որ Մարգարյան Աշոտը տրոցկիստ է էղել, դա վստահելի տեղեկություն է:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, հարյուր տոկոս, նստավ, գնաց, քանի տարի նստավ, էկավ: Իրան չվերականգնին, ինքը, ինչքան որ որոշել էին, էղքան նստավ, էկավ:

ԳԱՅԱՆԵ. Կարողացավ ողջ մնալ ու վերադառնալ գյուղ:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Այո, ողջ մնալ ու վերադառնալ: 1950-ական թվականներին, այս, ազատություն կանեին, չէ:

ԼԵՎՈՆ. Հա, բա Ձեր հորը ինչու՞ էին էղ ցուցակի մեջ մտցրել:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ինքը՝ որպես քարտուղար, անդամների ցուցակն ունեցել է: Հորս անունը չի էղել, որովհետև հերս տրոցկիստ չի էղել:

ԳԱՅԱՆԵ. Բա էղ դեպքում ո՞վ էր ձեր հորը...

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Տրոյկան էր դատել:

ԳԱՅԱՆԵ. Բայց տոյկեն ինչի՞ հիման վրա էր որոշել:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Էն ժամանակ «ինչի» կհարցնեի՞ն, հարցնեի՞ն կը՝ թե ինչու՞ համար է, Գայանե ջան: Տասու ընձի ըսավ, թե դիմում գրե՛ դրկենք Գերագույն դատարան: Դրկեցինք, չորսաստղանի Առաքելյան, չիտեմ ինչ էր, էկավ, բանից էր... դատախազությունից էր, էկավ, էղ մարդը 3 օր մնաց Արթիկ: Գուկար առավոտ իրեք մարդուց՝ էրկուսը չկան, մեկն էլ մեզի փեսա գուկա՝ ստորագրողը, բանից պարզվավ, որ կեղծել են, իրեք ստորագրությունն էլ կեղծ են, մի հոգիմ է ստորագրե: Էդպես է էղե, հավանական է, որտև էղ խեղճ մարդը մեզի հորքուր գուկար, ընոր ամուսինն էր: Առավոտ ստորագրել կուտային տաս հատ, ցերեկը՝ տաս հատ, իրիկուսը՝ տաս հատ: Էղ բոլորը համեմատին, հեչ մեկը չհամընկավ, ըսից ետև գնացին, ամիսմ հետև էր, էկավ էղ թուղթը՝ հանցակազմ չլինելու պատճառով չի մեղադրվում: Ըբե, էդպես բաներ է էղել, Լևոն ջան: Տո էն ժամանակ սոխի գլուխն ու մարդու գլուխը՝ ո՞վ էր տերը:

ԳԱՅԱՆԵ. Դուք ասացիք, որ հետո իմացել եք էղ տրոյկայի միջի ստորագրողներին:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, ըղիկ գիտեն երբ... Տասին ըսի, թե՛ տատ, արդեն, որ դիմում գրինք, արդարացրին, բան... տատ, ըսի, հեչ գյուղը էդպես մարդ չկա՞ր: Ըսավ՝ կար, բալա ջան, բայց քու հերը ըղոնց հետ գործ չունեք: Ըսի՝ ո՞վ են, ըսավ՝ Մարգարի Աշոտը: Ըսավ ըղիկ բջիջի քարտուղարն էր ու իրա ցուցակով 6 հոգի, յոթ, յոթին էլ արտրել են, բայց հերս էղ ցուցակի մեջը չի էղել, պոռստը հորս տոյկեն է դատել, որպես անհնա-

զանդ էր կարգերին, ես չիտեմ՝ ընտեղ ինչ է գրած էղել, ինչ գրած չէ: Դա-
դախագին էլ, որ էկել էր, խնդրեցի, ըսավ, ըղիկ ընպես դոկումենտ է, որ
չեն բան էս: Բայց ես մի վատ բան եմ արել, որ կյանքում չեմ մոռանա: Երբ
որ արդեն էր ամեն ինչը վերջացավ, ես մե հաստ պիտի էրթայի էդ տեղե-
րը հորս, մե հատմ... կարող է, ես ինչ գիտեմ, որտե Խասան լճի դեպքե-
րից հետո, ասին, որ էր կալանավորներին սաղին տարել են... Ճապոնիայի
դեմ Խասան լճի դեպքեր է էղել, ես լավ չեմ հիշում, պատմություն է էղել ըդ-
պես: Ասին, որ բանտարկյալներին էլ են տարել: Հնարավոր է, որ հորս էլ են
տարել, բայց երբ որ իրա մահվան թղթերն էկան, իրար հակասում էին, 3-4
ամսվա տարբերությամբ՝ էն մեկը գրած էր՝ թոքախտից է մեռել, էս էլ չիտեմ՝
պատճառն ինչ էին գրե՝ մահացել է էսինչ թվին:

ԳԱՅԱՆԵ. Երկու՞ անգամ եք ստացել նրա մահվան մասին վկայական:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, մեկը մեր հանրապետական ՉԱԳՍ-ից,
մեկը... տատս չիավատաց, ընձի գրել տվավ, ռուսերեն թարգմանել տվավ
դրկեց Մոսկվա: Մոսկվայից էկավ, էդ թուղթը, ափսոս, չեմ պահել, որ ո՞ր
թվին է մահացել:

ԳԱՅԱՆԵ. Ու դրանց միջև 4 ամսվա տարբերություն՞ կար:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, էն մահվան չորս ամսվա տարբերություն
կար, հետո [19]40 թվին է Հասան լճի դեպքերը, կարծեմ, թե՛ [19]41, հերս պի-
տի ազատված էղներ [19]41 թվին, հլը պատերազմը չսկսված, որտե իրան
տարել էին փետրվարին, ինչքան հիշում եմ, ուրեմն ինքը պիտի ազատված
էղներ:

ԳԱՅԱՆԵ. Քանի՞ տարի էին նրան տվել:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հինգ: [19]36 - [19]41թվին, ըստեղ գրած է, էս էլ
չի կարդցվի:

ԳԱՅԱՆԵ. Իսկ իրեն ո՞ր էին արքտրել: Իր արքտրավայրը հայտնի՞ էր:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. ԸՅԿՊՕ Շտուրմավոյ, Խատինախ, հասցեները
պահել եմ, կան:

ԳԱՅԱՆԵ. Ինչքան հաճախ էիք նրանից նամակ ստանում:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Երևի համարյա ամիսը 2-3 հատ կստանար:

ԳԱՅԱՆԵ. Նամակը բերելը հիշո՞ւմ եք:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Չէ, նամակը ուրիշ մարդ կբերեր, փոչտալյո-
նը ուրիշ մարդ էր, էդ Ավագ պապի պատվի համար, որտե Ավագ պապը
բլուր կփչեր, ամբողջ գեղը բան կէղներ, հետո էլ ինքը նաև սև գիր կըսեն,
էդ մահացողների համար գիր գուկար, ինքը չէր տանի տար, նույնիսկ, էդ
Մարգարի տղի սև գիրը էկել էր, պահել էր, չէր տվել: Վազգենը էկավ, պատ-
կերացնես կը, տարավ ըսավ՝ առ, Շամամ, էս էլ աղբորդ տղի, որ էկել է, սև
թուղթը: [Շամամը հարցնում է ամուսնուն]՝ բա ինչի՞ էիր պահել: [Ամուսինը

բացատրում է.] «ըբե ինչի տայի, որ լայի՞ր»: Էդպես շատ գրեր պահեց: Էրկու սև գիր էր պահել, որը իրա համար շատ հարազատ մարդիկ էին, մեկը տատի աղբոր տղեն էր, մեկն էլ՝ իրա ընկերոջ, որի տունը կերթար միշտ, բլուր կփչեր, էդ էլ էկավ, Վաչագանը: Էրկուսն էլ պահել էր, էրկուսն էլ էկան:

ԳԱՅԱՆԵ. Ձեր հոր նամակներից քանիսն են մնացել:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ես ունիմ իրեք հատը:

ԳԱՅԱՆԵ. Իսկ այ էդ նամակ կարդալը հիշո՞ւմ եք, ո՞նց էր:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, էսի կրերեր, մարդու էլ դավերիա չէր էնե տատս, ես գրագետ էի արդեն:

ԳԱՅԱՆԵ. Ինքն անգրագետ էր:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, մենակ Շամամ գրել գիտեր, Շ-ն էլ դ-ի պես կգրեր: Էն «Խորհրդային Հայաստանի» մեծատառերը կկարդար, լիկ-կայան էր գնացել, իսկ մնացածը՝ չէ:

ԳԱՅԱՆԵ. Ու Ձեր հոր նամակները տալիս էր, որ դո՞ք կարդայիք:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, դե, որ ինքը կրերեր, փոչտալյոնը կրերեր, մի հատմ ընտր կարդալ կուտար, մե հատմ էլ ինձ: Կըսեր՝ հըր ան, կարդա՛, տես՝ քեզի ինչ է գրե, որպես սիրո... որտե ընտեղ կգրեր Պարուս ինչիս է, բան... կըսեր՝ առ կարդա, հլե տես ինչ է գրե քեզի: Հմի նոր եմ գլխի ընկե, թե ընչի անպայման ընձի կարդալ կուտար, ըշտե կկարդար, կլսեինք, հետև ընձի էլ կսեր՝ առ կարդա, դու էլ կարդա: Մեկը, ըսիկ [ցույց է տալիս նամակները] [19]38 թվինն է, 9 հուլիսի, էս մեկը [19]39 թվինն է, էս մեկն էլ՝ [19]38 թվին: Էրկուսը [19]38-ը թվինն է, մեկը՝ [19]39 թվինը:

ԳԱՅԱՆԵ. Իսկ հիշո՞ւմ եք, թե վերջին նամակն ընդհանրապես երբ եք ստացել:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Չէ, ես չիտեմ, երևի էս [19]39-ը թվինն է վերջինն է: Հա, ինչքան կհիշեմ, թե՛ չէ պահած կէղնիր:

ԳԱՅԱՆԵ. Չէիք վախենում, որ նամակների մասին գյուղում իմասային:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Չէ, կրերեին կուտային արդեն: Փոչտալյոնը գուկար մեր տուն, կսեր՝ Շամամ մամ, կըսեր՝ հա, Սարգիս ջան... Գուկար, կմտներ տունը, կհաներ, կկարդար, կերթար: Հրապարակորեն չէր տա: Երևի էս հազվագյուտ բաներն է, էլի, որ մնացել է: Հա, հետո շատ բաներ չէր պահե [տատը], ըսիկ չիտեմ, հրաշքով մնացել է:

ԳԱՅԱՆԵ. Հենց ինքն էր ոչնչացնում:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ճիշտն ասած չիտեմ, միայն մե բանս գիտեմ, որ երբ որ Հիտլերը շատ էր առաջ էկե, մեր տունը Լենինի հատորները շատ կար, բոլորը վատել տվավ: Վառեցինք [այդ կրակի վրա], կաղամբը խաշինք թթու դրեցինք:

ԳԱՅԱՆԵ. Մտածեց, որ...

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ես չիտեմ, թե ինչ մտածեց, չեմ կրնա ըսել: Ըսենք, թողիքը խաշենք կը լախանեն, թե ինչ մտածեց, էդիկ չեմ կրնա ըսել, երևի վախեցավ, որտև ինչխոր թե ուզեմար, բայց մեր տունը ըդպես բան չգտնեին: Լենինի, Ստալինի հատորները սաղ ունեին, բոլորը ոչնչացրեցին, հեչ մարդ չթողեց:

ԳԱՅԱՆԵ. Իսկ այ այն, որ ասացիք, որ առաջին անգամ էկան ձեզ տանեն, էդ պատմությունը կպատմեմ:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա: Ուրեմն երեկոյան էր, էկան էդ մարդիկը ներս մտան, չիտեմ՝ ինչ խոսեցին, էդ թղթերը առավ՝ գնացին, մեր դռնից ելան, էն կողքից մտան գրասենյակը: Օր առաջ գիտեր, որ գուկան: Ուրեմն վերևը փոխհնդը կլուլել են եղով, բան են սարքել, որ մեզի տանին՝ ճամփեն ուտենք: Տատս ըսել էր՝ ես էրեխանցը չեմ թողե էրթան, ես հետները կերթամ, Ավագ: Ավագ պապը՝ թե ես էլ գուկամ: Թե՛ դու ինչի՞ գուկաս, դու մնա, դու ինչի՞ գաս՝ մեր հետ տանջվիս: Ըդոնց մեջը էդպես վեճեր էր գնացել: Ըսել էր՝ ես էրեխանցը, էս 12 տարեկան, էս 10 տարեկան էրեխանցը ու՛ր թողնիմ, Ավագ ջան, ես հետները կերթամ, իմ աղի էրեխեքն են: Ըշտե բերե փոխնդով բաներ սարքել էին, ու փաթել էին, որ ճանապարհ էրթանք՝ ուտենք, սոված չմնանք: Էն էլ տատը գնաց, ահագին ուշացավ, հետո թղթերը ձեռը՝ ուրախ-ուրախ ներս մտավ: Պապը գլխով հարցրեց՝ հի՞: Տատս՝ վերջ: Ըդ թղթերը առավ գնաց, երկրորդ անգամ ես արդեն գիտեի՝ ինչ էր: Դատարանի որոշումն էր տարե, հետո թերթից կտրած Ստալինի ելույթն էր տարե: Ըսել էր՝ էրեխան ի՞նչ գործ ունի, 11 տարեկան էրեխեն ի՞նչ կապ ունի հոր հետ, հորը չի էլ տեսե: Հորը տարել էք, չի էլ ճանչե հորը, որ բերեք կայսցնեք: Տատս լավ լեզու բերան ուներ, գրագետ չէր, բայց շատ դատողություններ ուներ: Մի լավ էլ նեղեցել էր վրենները ու ճամփել էր: Բայց երկրորդ անգամ էլի եկան, էլի կանչին, էլի էդ թղթերը առավ գնաց, էլի թե՛ այ մարդ, դուք վերջը չէք հասկնա, էդ ձեր ցուցակից հանեք, [19]48-ը թվին էլ էկան: Ըսավ՝ ինչ պինդերես մարդիկ էք, հանե, էս մարդը հլը 18 տարեկան չի էղել, երբ որ էղավ, բարով-խերով, 3 ամիս հետև արեք տարեք, արդեն ինքն ինքնուրույն մարդ է, արեք տարեք: Ու ըսից ետև էդպես էլ ոչ էկան, ոչ էլ բան էրին, ոչ էլ...

ԳԱՅԱՆԵ. Իսկ անունի երդումը, դա ո՞ր անգամ էր:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ըդիկ երկրորդ անգամն էր, որ բանն էր էկե, ԿաԳեԲեի բանը էկել էր, որտև տատը, որ տոմսը դրել էր, ահագին իրարանցում էր էղել, էլի էին էկել, մենք խաբար չէինք էղել, բայց էդ անգամին արդեն ահագին խեղճս հաս էր, գլխի ընկա: Ըդ ժամանակ էկավ, տունը պատմեց, ըսավ՝ Ավագ, ըսպես, ըսպես բան էր, ըսպես էրին ըսպես էլ

երդում կերանք: Ես էլ Սարիբեկյանին ըսի, թե հմե ես սուտ խոսամ, կաշիս քերթե, բեր քթիցս կախե: Պատերազմի ժամանակ նաև էկան տասերկու տղա... [19]42 թիվն էր, իմ հասակի տղաներին, որոնք [19]25 թիվն էին, բանակ տարան, [19]25 թիվեն վերև տղաներին կտանեին Սուվորովյան դպրոց, տատս ընձի փախցնել տվավ: Ըսավ՝ գնացել է հորքորին տեսնելու, Էրևան է, գուզեին տանեին Սուվորովյան դպրոց, չթողեց: Էդ էլ ըդպես, ըսել էր, գնացել է հորքորի տուն: Է, ըդոնք էլ էդպես էկել էին, ով որ տունն էր, կցուցակագրեին, կերթային, չիտեմ՝ գյուղից մարդ տարան, թե՛ չէ Սուվորովյան դպրոց:

ԳԱՅԱՆԵ. Որ ասում եք, թե առաջին անգամ ինքը գիտեր, որ «մեզ տանելու են», դա բանց ինֆորմացիա էր, թե՛ այլ աղբյուրներից կարողացել էր իմանալ:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Չէ, ինքը, գիտե՞ն ինչ, ինչ-որ զգացողություն ուներ, էն անգամ, որ հորս հենց առաջին օրը տարան, ինքը գիտեր, որ էլ հետ չեն բերե: Ինքը հասկանում էր էդ իրադրությունը, էդ իրադրություններին հասկանում էր, ի միջի այլոց, առաջի արտոբականն էղավ հերս:

ԳԱՅԱՆԵ. Գյուղից:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա:

ԳԱՅԱՆԵ. Ու ինքը էլի գլխի ընկավ:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա: Չէ, թե ըստից առաջ Աշոտին էին բան էրե, թե Աբրահամյան...: Ճիշտն ըսած, չեմ հիշե, հորիցս առաջ էղել էր վայթե մե հատմ, էդուր համար ինտուիցիայով, երևի, տատս գլխի էր ընկել, որ էկան, էդ ավտոն էկավ, երևի, չեմ կարող ըսել: Ոչ կոնսամ պնդել, ոչ էլ... որովհետև...

ԳԱՅԱՆԵ. Բայց ինքը, փաստորեն, համակարգը շատ լավ պատկերացնում էր...

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Համակարգը շատ լավ պատկերացներ կը: Ըդուր համար էլ գիտեր, թե ինչը ինչից է: Ու գիտեր, էդ պատահական թղթերը չէր պահե:

Ուրեմն, էդ տատս, իրոք, իրադրությունը շատ ճիշտ գնահատող էր, էն ժամանակ հարկեր շատ կար՝ 75 հատ ձու պիտի տաս, չիտեմ էսքան յուղ պիտի տաս, ըսքան էս պիտի տաս, ըսպես հարկեր կար գյուղը: Էս տատս բոլորից շուտ կտաներ կուտար, հավ չունեինք, բայց 75 հատ հավկիթ կերթար Արթիկի բազարից կտաներ, կբերեր, գեղից էլ չէր առնի: Կըսեր՝ ընչի՛ իմանան, որ հավ չունինք, կբերեր, տաներ կուտար: Յուղը՝ մե կովմ ունեինք, յուղը կուտար:

Հետո էկավ [19]42 թիվը, ամեն մարդ, ամեն տուն պասիկկա պիտի դրկեր ճակատ, ով որ չդրկեր, թշնամի էր, վերջ: Ուրեմն՝ ինչ պիտի դներ. նաս-

կի, ձեռնոց, հալվա, ուտելու բան՝ չփչացող ուտելու բան, ամենաչփչացող բանն էլ հալվեն էր: Տատս էդ բաները կէներ: Պասիկեն կսարքեր ու ամենից առաջ ինքը կտաներ: Կտաներ, պասիկեն կստուգեին, թե ինչ կա, նոր կփակեին, մէխերը ընտել իրանք կմէխեին: Կտաներ 2 զոյգ նասկի, ըսենք, 2 զոյգ ձեռնոց, հալվա՝ մե կիլոյիմ չափ, էդպես բաներ, պապիրոս, մախորկա կար մեր խանութը՝ ձուկ էր վրեն նկարած ու բռնտոյի կար: 2 հատ մախորկա կառներ ու իրան էլ՝ բռնտոյի, ինքը բռնտոյի քաշում էր: Կնայեին, որ նորմալ պասիկա էր, կփակեին կողկեին, տակը կգրեր՝ Քերոքյան Շամամ, բայց իրան Տոնեն Շամամ կըսեին, մինչև հիմի էլ, որ գյուղը մտնիս, ըսես՝ Տոնեն Շամամ, գիտեն, հա, Տոնենց Շամամ, Քերոքյան Շամամ չիտեն:

Հետո փոխառություն էին գրում: Կանչել էր մեզի, թե դու պիտի ամենից շատը տաս, որտև «հակա» ես, քո տղեղ «հակա» է էղե: Անպետք մարդմ կար՝ պարտքարտուղարը գյուղի, էդոնք էին կազմակերպողը: [Շամամ տատը] ըսել էր՝ դու ինչքան կուտաս: [Պարտքարտուղարն] ըսել էր՝ 500 ռուբլի, [տատը, թե] գրե՛ ես 800 կուտամ, 800 [ռուբլու] արլիկացի տվեց... Ամենից շատը գեղը մեր տունը արլիկացի կար, ու արլիկացի կառներ կբերեր: Կարծեմ խաղաց նոյնիսկ մի էրկու հատ, էթե չեմ սխալվում: Ըսավ՝ դու ինչքան ես տվե՛ 500: [Ուրեմն] 800 [ռուբլի] գրե ընձի, ես 800 կուտամ: Ինքը կանխարգելիչ բաներ կէներ, որ հանկարծ մեզի բան չէնեն: Հա, հասկնարզը իրադրությունը, էլի, ինչը ինչոց է:

ԼԵՎՈՆ. Իսկ ուրիշ արտոլվածներին էլի այդպես վստ էին վերաբերվում, ոնց որ ձեզ:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ճիշտն ըսած չիտեմ, մեր տուն էնքան մարդ էրը կերթար, գուկար, որ խորաթա էնեինք, իմանայինք: Երևի ընտնց տներն էլ չէին էրթա, բայց տատս գիտեր: Էն մեկը, ում որ արտոլել էին, ըղիկ սիրուհի դառավ պարտքարտուղարի: Էնքան, որ տատս էկել էր, կհեկեկար: «Էրեխին թողիր ու՛ր գնացիր, չե՛ս ամըչե»: Գյուղի բաներն էր, էլի: Ի միջի այլոց, գյուղի վերտոյիլը տատս շատ լավ գիտեր, ինչխոր անթել հեռախոս ունենար, կիմանար:

ԳԱՅԱՆԵ. Էդ նշանակում է, որ ինքը այնտամենայնիվ կապեր ուներ:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա:

ԳԱՅԱՆԵ. Ու՞մ միջոցով էր իմանում:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ինքը առավոտ որ կելներ, կնանիքը նախիր կտանեին, ինքն էլ մեր կովն ու 2-3 հատ ոչխար ունեինք՝ ըղիկ կառներ կտաներ, կերթար: Ընտեղ էլ, որ կնկտիք հավաքվան, բանմ կըսեն, վերջ, [ծիծաղում է] ու երևի բոլոր բաները ընտեղից կիմանար, էլի, նորությունները:

...Ուրեմն, էրբ որ ես ավարտի գնացի, գյուղի կազմակերպությունը ու դպրոցի պարտիական կազմակերպությունը նույնն են էղել, նույնն էին: Էն-

տեղ, երբ որ ընձի դաս չէին տա, կոլխոզի նախագահն ելոյթ կուներնա, կըսէ՝ տրոցկիստի տղեն ինչ պիտի դաստիարակե կոմունիստի երեխերքին, ընտեղ Գորոյանը՝ երեկոյան դպրոցի դիրեկտորը, ըսավ՝ այ մարդ, էղիկ շատ լավ մասնագետ է, ես իրան երեկոյան [դպրոցում] դաս կուտամ, ու ես գնացի, երեկոյանն եմ դաս տվե: Հետո կամաց-կամաց աճեցի:

ԳԱՅԱՆԵ. Ու որպեսզի Ձեզ դաս տան, Ձեր տատը որոշեց, որ պիտի գրի ձեր հոր մասին իմանալու համար:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, ազատվալ էկալ, որ ես դիմում գրեցի, որ պարտիայի մեջ ընդունվելու, դիմում գրեցի ընձի ընդունեցին պարտիայի մեջ, էն էլ... Ես էդ էլ եմ պահե՝ էդ իմ պարտիական տոմսն է [ցոյց է տալիս պարտիական տոմարը]:

ԳԱՅԱՆԵ. Իսկ տատի կուսակցական անդամոյան հարցն ինչ եղալ:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, գնացել էր, ուրեմն՝ իմ տոմար տվեք: Որ իմ տղեն անմեղ էր, դուք տարաք, իմ տոմար տվեք, վերականգնեք ու իմ թոռին ինչի՞ էսքան կճշեք, երբ որ տղես մեղավոր չի էղել, վերականգնեք ընձի: Ըսել էին՝ տատ ջան, 75-80 տարեկան ես, ինչ պիտի էնես, տո թոռիդ դիմում գրել տու, տո թող գա, կընդունենք: Մի խոսքով, համոզել դրկել էին: Ինքը սպեցիալը գնաց, որ տային էլ՝ չէր ուզե, հավանական է, բայց գնաց՝ ապացուցելու, որ տես, ես որ ասում էի, անմեղ տեղն են տարել, ու տոմար դրեցի, իզուր չէր, ես չիտեմ, թե իմ էրեխեն ինչխ էր:

ԳԱՅԱՆԵ. Մի բան հարցնեմ, այս թղթի վրա, որ գրված է Вєрховный суд Арм ССР, ու կողքը աղբրեջաներեն է գրված, սա պետական պաշտոնական թուղթ է: Սա սովորական բան էր, ուզում եմ հասկանալ, որ Հայաստանում պետական բյանկն այդպիսին պիտի լիներ՝ Հայաստան, հայկական կնիք, քաղաք Երևան և կողքը աղբրեջաներեն գրված [նկ. 33]:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Զարմանալի է, որ աղբրեջաներեն է գրված, պետական պաշտոնական թուղթ է էսիկ:

ԼԵՎՈՆ. Ուրիշ գյուղերից էլ շատ էին ձերբակալել:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Մեր գյուղի ներքևը Լեռնակերտ կա, ընտեղից ոչ մի մարդու չեն տարել:

ԳԱՅԱՆԵ. Ինչի՞ էր այդպես:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Էնտեղ... երևի իրար չեն մատնել, կամ չի էղել, ես ինչ գիտեմ: Ընտեղից ոչ ոքի չաքսորին: Տո ներսից է. գողն, որ տնից կէղնի, եզը երթիկից էլ կոնան հանել: Հորս՝ իրեք հոգի... էն էրկուսի ազգանունն էլ չեմ կրնա հիշե, թե ով են, ինչու՞ համար էք էրե, կամ էղի մե մարդմ է էրել, որը [հորս] չի սիրել, իրեքի տեղը ազգանունները գրել ու ստորագրել է:

ԼԵՎՈՆ. Բա ինչի՞ պետք է ձեր հորը չսիրեին:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Թունդ կոմունիստ է էղել, ըտուր համար:

ВЕРХОВНЫЙ СУД
Армянской ССР



Հրեանիստան ՀՍՀՐ
ԱԼԻ ՄԵՒԿԵՄԱՏԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԳԱՏԱՐԱՆ

Գ. Երևան, Շուշարյան № 6

Գ. Երևան, Շաումյան № 6

Տեղ. տեղ. № 2-03-09

№ 5/710

5. XI 1987 ր.

Справка

Дана настоящая справка в том, что определением Судебной Коллегии по уголовным делам Верховного Суда Арм.ССР от 10-го октября 1958 года, постановление Особого совещания при НКВД СССР от 10-го декабря 1936 года в отношении ТОЮДНА ЕРВАНД АРШАКОВИЧА, 1906 года рождения отменено и дело прекращено за отсутствием состава преступления.

Зам. Председателя
Верховного Суда Арм.ССР

АРАКЕЛЯН

Նկ. 33. Տեղեկանք երվանդ Տոնոյանի գործը կարճելու մասին:

ԼԵՎՈՆ. Սկզբից...

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, սկզբի ժամանակ հարկերը շատ բան է էին: Ակտիվ է էղել, շատ ակտիվ է էղել, ակտիվ է էղել:

ԳԱՅԱՆԵ. Այսինքն, որ ասացիք՝ հարկերի ժամանակ... Ինքը հարկ հավաքողն է էղել:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Չէ, պարտքարտուղար է էղել, պարտքարտուղար է էղել, տները մտն ստիպել է, հավանական է: Ինչխոր մեր ժամանակ պարտքարտուղարը կստիպեր, թե դու պիտի պասիվկա տաս, էս պիտի էնես, էս պիտի էնես: Էն ժամանակ էլ ինքը ըղպես է էղել:

ԳԱՅԱՆԵ. Մասնակցել է կոլեկտիվացմանը:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ինքը էն ժամանակ քարտուղար է էղել, կար-

ծեմ:

ԳԱՅԱՆԵ. Այսինքն՝ բռնի կոլեկտիվացմանը ինքը պիտի մասնակցած լիներ:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ինքը կոլեկտիվացման ակտիվ մասնակից է էղել, էդուր համար էլ չեն սիրել, մեկիմ երևի շատ է նեղացրել, գրել տվել է, [մեր ազգականի] անունն էլ [որպես գործ տվողի] գրել է, պարտքարտուղար է, գիտեցել են, որ մեզի էլ հարազատ է, ու եթե հարազատ է, ուրեմն [իր ցուցմունքը] ճիշտ կէղնի 100 տոկոսով: Ահա ամբողջ թելը՝ պատմությունը ինչպես կատացվի: [Պարտքարտուղարի ազգական] անունը, որ գրած չէինեին, հնարավոր է՝ չտանեին, պարտքարտուղարը հեղինակություն էր, չէ՛, էն ժամանակ: Մինչև վերջերս էլ հեղինակություն չէր: Բողոք, որ կերթար, կըսեին՝ կերթանք, ոսկյունը կբողոքենք: Ճիշտ է, ուրեմն էն ժամանակ ավելի հեղինակություն է էղել: Ըդոր համար էլ էղպես է:

ԳԱՅԱՆԵ. Դուք որ գրեցիք, հետո ինքներդ գնացիք ԿաԳեԲե՝ Ձեր արդարացման թղթերին ծանոթանալու:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ես չգնացի, ես չիտեի, որ կարելի էր էրթալ: Բայց հետև ընձի բան տվեցին, արդարացման էդ [վկայականը] տվին՝ իրավունք: Որպես բռնադատված՝ երթնելության անվճար բան տվին: Ընձի կանչեցին, թե՛ արի, գուգն, հողամաս կուտանք, տուն սարքե: Ես ունիմ, ընձի տունն ինչ պետք է:

ԳԱՅԱՆԵ. Գյուղի մեջ, հա՛մ:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Չէ, ըստեղ: Ես գյուղը դաչա սարքեցի, հետո էլ պայմանները չներեց, ծախի, էկա:

ԳԱՅԱՆԵ. Գյուղացիները ձեր հոր նկատմամբ ամեն մեկը ոնց որ իր հաշիվն ուներ:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, ու հենց դրանից էր, որ նույնիսկ իմ նկատմամբ էլ բարյացկամ չէին, բայց ես համարյա թե բոլորին լավություն արել եմ, ինչքան հնարավորություն ունեցել եմ: Ես մեր գյուղը շատ կսիրեմ, ես հայրենասեր եմ, իմ բանը ուրիշ տեսակ է: Ինչդ կոնա, ըսենք, գյուղ շատ ենք գնում, ու մեկը ճամփես կտրե, ըսե՛ Պարույր, չամընչիր, էրեխին գնահատական չդրիր: Ինչ ըսեմ: Ըդուր համար էլ ես շատ բան եմ, էմպես... Հետո էլ կմտածեմ, հմի՛ էրեխա է, 3-ի է պատասխանել, 4 կդնեմ, ինչ է պատահել, աշխարհը չավերավ:

ԳԱՅԱՆԵ. Շամամ տամն էլ էր փորձում մյուսների հետ հարաբերությունները լավացել, թե՛ ինքը կողքի քաշված էր:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Չէ, կողքի քաշված չէր, չէ, կողքի քաշված չէր: Շամամ տատի քով կանայք կհավաքվեին, մեր տան դեմը պատը հով էր, ստվերին կնստեին ու էստեղ կսկսեին նորությունները տատին հաղոր-

դել կամ խորհուրդ հարցնել: Հետո [19]50-ական թվականներից հետո արդեն մեր տունը... առաջին տեղեկիզորը ես դրեցի, մեր տունը լիքը ժողովուրդ գուկար արդեն, էլ էն տունը չէր, որ մարդ չգար, ամեն օր մեր տունը մարդ կար:

ԳԱՅԱՆԵ. Այ էդ վերաբերմունքի փոփոխությունը ո՞ր թվերից սկսվեց:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Էտի երբ, որ ես արդեն դասատու էի, երբ որ արդեն ահագին էլ քավոր էղա գյուղը: Տասու կըսեր, որ ով ներս կմտնի, դարտակ չդարձնես, բարեկամություն էրա, դուն մենակ մարդ ես: Շատ եմ քավոր էղե, գնա մի 8, 9, 10 հատ, երևի, հարաբերությունների արդեն բոլորովին նոր որակ էղավ: Երբ որ [19]54 թվին էդ ազատություններն էղավ, չէ, [19]54 թվին չէր, արդեն բոլորովին ուրիշ էր: Ես էլ դպրոցը դասատու էի, լավ հեղինակություն ունեցող դասատու էի, շրջանում էի, ուսմասվար էի դպրոցը, իրեք տեղ դասատու էի՝ Լեռնակերտ, Տուֆաշեն, մեր գյուղը: Ամբողջ օրը վազքի մեջ էի, պարտիայի հանձնարարությունն էր [ծիծաղում է]: ԳԱՅԱՆԵ. Պարտիան է Ձեզ ուղարկել:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, դասատու չկար էդ ժամանակ, կանչեց նայկումի քարտուղարը, թե առաջին պարտիական հանձնարարությունն է, նոր թեկնածու եմ: Էրթաս պիտի Տուֆաշեն, դաս պարապիս: Ըսի, որ հանձնարարես գե, կերթամ: Գնացի ընտեղ, հետո Լեռնակերտի ուսուցչուհին, ուսուցչին, չիտեմ, ինչ-որ բան էր պատահել, դատեցին, թե ինչ՝ ըբե՝ պիտի էրթաս: Էնտեղ էլ գնացի: Առավոտյան մեքենայով գնում էի Լեռնակերտ, 2 դաս կպարապեի, ոտքով կիջնեի մեր դպրոցը, ուսմասվարությունս կէնեի, դասս կպարապեի, հետո կիջնեի ներքևը՝ Տուֆաշենը՝ դասս կպարապեի, ետ գուկայի, երեկոյանն էլ կպարապեի, նոր տուն գուկայի: Արդեն ըդքան զբաղված էի: Նոր, որ ըստեղ էլ տեղափոխվա, սկզբից դաս չունեի, բայց հետև 70 քանի ժամ դաս ունեցա էդ տարին: Հետո, որ քաղաքը ճանաչին...

ԼԵՎՈՆ. Մինչև հիմա ունեք դաս:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, հմի շատ մարդ կճանաչե, երևի, որ փողոց էլ որ Տոնոյան հարցնես, կըսեն, որ կճանաչենք:

ԳԱՅԱՆԵ. Իսկ Ձեր հոր հետ կապված այն պահը, որ Ձեր հայրը բռնադատված է եղել, Ձեր կյանքի ընթացքում՝ [19]54 թվից հետո, որևէ իրավիճակում զգալ տվե՞լ է:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. 100 անգամ, նույնիսկ վերջերս վաստակավորի ներկայացրին, էրկու տարի առաջ, չտվին: Ես ենթադրում եմ, որ էդ պատճառով չտվին: Թե չէ ինչի՞: 40 գրքի հեղինակ եմ, ուսուցիչների համար գրել եմ, ուսանողների համար գրել եմ, ծրագրերը կփոխվի, ծրագրերի համապատասխան՝ ուսումնական ձեռնարկներ [կկազմեմ]: Ունիմ նաև մինիստրության կողմից թույլատրված ուսումնական ձեռնարկ՝ 200 էջանոց, մաթե-

մատիկայի դասավանդման մեթոդիկա: Բայց էկավ, որ էդիկ էդքան վաստակ ունիմ, պիտի տան, չտվին: Ինչ կմտածես, հլե դու իմ տեղը քեզի դիր: Էդ պիտակը մնացել է վրես, էդիկ... Չնայած, հմի կըսես՝ ինչ նշանակություն ունի, բայց հոգուս խորքում գիտեմ, որ պատճառն էդիկ է: Երբ որ կենսագրությունս կարդան կը, էնքան, որ դե լավ է, ինչ պետք է, ահա:

ԳԱՅԱՆԵ. Իսկ մինչև էդ, մինչև էս վերջին դեպքը, սովետական տարիներին ուրիշ նման առիթ եղել է:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Արտասահման չէին թողում գնայի, առիթ չի եղել... Մի առիթմ էղել է, էն էլ, գերազանցիկություն եմ ստացել մինիստրության կողմից:

ԳԱՅԱՆԵ. Իսկ արտասահման ինչու՞ թողնում, դիմել էք:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Չէ, հետո թողեցին: Կագերեն կանչեցին ընծի, որ ուղեգիր ունիմ, պիտի էրթամ, ու տվել են ընծի: Հա, պիտի էրթամ, կանչին, թե գզույշ կեղնիս, էտեղ նայե, ինչ կեղնի: Որ բաներ կեղնի, դու գուկաս մեզի կըսես: Հա՛ ըսի [ծիծաղում է]:

ԳԱՅԱՆԵ. Առիթ էղավ ասելու...

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Ոչ գնացել եմ, ոչ էլ... Ինչ պիտի էղնի: Գնացիք, հա, տո, գիտես ինչ: Մենք, մեր ժողովուրդը, մե քիչմ, ինչխ ըսեմ, թագավոր չունեցող ժողովուրդը միշտ ըդպես է՝ վախկոտ կեղնի, անպայման մե բանմ պիտի բան էղնի: Է հա, ինչ, էղել է, հմի ես՝ կոմունիստ եմ էդքան տարվա, ահագին լավ աշխատող եմ, ինչ էղավ, որ ընծի էլի վախենաք կը, չէք թողնի: Բուլղարիա եմ գնացել առաջին անգամ:

Ուրեմն, Կազան վերապատրաստման ենք գնացել: Գնացել ենք վերապատրաստման համար համալսարանը: Ընպես էղավ, որ Ռուսաստան ռեստորանները հերթով էր, ուշ էր, կնստիք, մեր տղեքով ընտեղ ենք, 3-4 հոգի էլ կային, ասպիրանտուրա էին սովորում, մեկը քնություններն էր հանձնել, էդ առիթով գնացիք, 6 տեղ զակաս տվիք, 6 տեղանոց չկար, 10 տեղ զակաս տվիք: Վեցս գնացիք, չորս էլ ազատ մնաց: Էկան 2 հատ կին, 2 հատ էլ բոյով անգլիացի, ընծի խնդրին, քանի որ միջևերից հասակովը ես էի, ինծի դիմին, թե կարելի՞ է՛ նստել, ըսի՝ նստեք: Ուտելիքը, խմելիքը ուշ կրերեն, չէ՛, մենք էլ, հայկական կոնյակները մեր դեմը, կլամենք, նշենք կը, քնություն է հանձնել [սեղանակիցներից մեկը], շտրիսավորենք կը: Էտնք, որ հա նային, ես էլ վերցրի բաժակը [ցի, [ասի]՝ ձեր Չերչիլը, ռուսերեն ընեցի, մեր կոնյակից շատ է սիրել, ըսի, հլե խմեք, տեսեք, արժե՛, իրոք, խմել, թե՛ չէ: Լցեցի, խմին ու՛ ու ու-ու-ու-ու՛: Մե կտորմ հետո, մե 10-15 բոպե չէր անցե, մեկ էլ տեսա քսվան ընծի, դառա՛ *вздыхая*, ըսի, ինչ ես էկե կպնիս կը: Ընպես էրին, որ վերջը կռիվ սարքին ու մեզի մեջ քաշին: Ես հայերեն բղավի՛ տղնք, փախեք: Փախանք: Մեր տղաներից մեկը կերթա կնստի ԿաԳեԲեի

ավտոն: Մի խոսքով, փախանք գնացինք հանրակացարան՝ Կրասնիյ Պա-
 զիցիա, էդպես թաղամաս կար, էստեղ էր: Առավոտ, մեկ էլ, էդ Ռ-ազմիկը
 էկավ, թե, ընկեր Տոնոյան: Ինչ է, Ռ-ազմիկ ջան: Էն խոշոր մարդը կտեսնիս,
 որ ցիլիդիլիս էլ գլխը կայնել է, սև ավտոն էլ ընտեղ, քեզի կնայե: Ըսի՝ հլը
 էդ սև ավտոներից չպրծանք, գրողը տանի: Ինչի: Ըսավ՝ էրեկվա միջադե-
 պից, որ փախել ենք, իմացել են, թե ով ես: Ընայե էրա, որ քեզի չտեսնի:
 Ըսի՝ ինչի համար: Ելա, ցուցադրական գնացի աստանովկեն, նստա երկ-
 րորդ համարը, ավտոն էլ գուկա հետս, գնացի իջա համալսարանը ու մտա
 համալսարան: Հաջորդ օրը էլ չկար էդ մարդը, էկել էր համալսարան, հե-
 տաքրքրվել, իմացել էր՝ ես ով եմ, ուրտից եմ: Ավարտինք 4 ամիսը էկանք:
 Էկանք, Առաքելյան Օնիկը պարտքարտուղարն էր: Ռեկտորը, պարտ-
 քարտուղարը, Կարապետ Ռուբենովիչը՝ ռեկտորը, մեկ էլ Ջորիկմ կար
 ԿաԳեԲեի, մեկ էլ՝ ես: Կանչեց, արի, ըսավ՝ հլե, Կազան էդ ինչ հերոսություն
 ես էրել: Ինչ եմ էրե: Անգլիացիների հետ անգլերեն ինչ ես խոսել: Ըսի՝ տնա-
 շեն... Էս Օնիկը դառավ Ջորիկին, թե գիտեմ որ էս Պարույրը սաղ օրը քայլե
 կը միջանցքը ուսանողների հետ անգլերեն կխոսի, տունդ քանդվի, ըսավ,
 էդ մարդը ինչ անգլերեն, ռուսերեն, ըսես, էլի մե բանս էրկուս՝ հասկըցանք:
 Թե չէ, ինքը հարաբերություն է ունեցել անգլիական 2 ինժեների հետ, որոնք
 ինչ-որ գաղտնի ինչ կարքեն Կազանում, ինքնաթիռի ինչ-որ բանս: Էս մեր
 պարտքարտուղարը ըսավ՝ տո, տունդ քանդվի, էս երկրին, որ հարազատ
 մարդ կա Պարույրն է, մենք իրեքս էլ հարազատ չենք: Կանգնել է մեր դե-
 մը՝ այ մարդ, էլի գնա: Էկել ես, ինչ: Կայնակ է, հյուրասիրել է: Ըսին՝ ինչխ է
 էղել: Պատմեցի, ինչխոր ձեզի պատմեցի, էդպես էլ՝ իրանց: Ըսավ՝ ել գնա,
 էլի: Էդիկ ինչի համար էկան, էստեղ էլ մարդ չկան, որ ԿաԳեԲեից գային
 կանչեին, հարցնեին, մենակ ընձի էկան կանչին: Էդիկ լիոր դատվածությու-
 նը, իրոք, չէր ազդե: Ազդեր կը: Էդիկ էդ պիտակն է վրայիս, որ կարո՞ղ է,
 ճիշտ է, կոմունիստ է, բայց շայտն է: Ո՞վ գիտե, թե անգլիացիները ինչ են
 ըսել: Էդ էր պատճառը նաև, որ չէին թողնի էրթայի արտասահման:

ԳԱՅԱՆԵ. Բացի Բուլղարիայից, էլ ինչ երկրներ գնացիք:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Բացի Բուլղարիայից գնացել եմ նաև Ազատու-
 թյան կղզի՝ Կուրա: Վերջերս էլ Թուրքիա եմ էղել 2 անգամ: Տառս նկարա-
 գրել էր մեր տունը Ղարսի, թե ինչխ կա, ուրտեղ ոսկի են պահել: Կըսեր՝
 մե հատմ հլը, որ երկիրը փոխվի, բացվի, էն վախտ խորհրդային կարգերն
 էր, երկիրն, որ փոխվի, մե հատմ հլե գնա էս տեղը, էս տեղը, էս տեղը՝ ըդ-
 պես բացատրել է: Էղավ, որ մի 2 տարի առաջ էր, երևի, գնացի Թուրքիա՝
 տուրիստականով: Գնացինք, գնացի Ղարս, ըսի յավաշ էրթամ հլը տատիս
 ըսածով: Կամուրջը անցա, գնացի, հին եկեղեցու մե պատն էր մնացել, փոքր
 լուսամուտը, զգացի, որ ըդիկ հայկական է, գնացի՝ տուն չկա, 5 հատ փոս,

հաշվեցի, ըսի՝ մեր տունն է էս փոսը, կտորմ հող վերցրի ըտից, բերի: Բերի, տարա գերեզմաններ, ըսի՝ ան, տատ ջան, պատվերդ կատարել եմ, բայց 5 հատ փոս կար, մեր տունը փոս էր, տուն չկար: Էդ էլ տատիս պատվերը կատարեցի: Բայց շատ զարմանալի էր, էնպես մե տեսակմ զգացում ունեցա, չիտեմ ինչ զգացում, սիրտս մե տեսակմ էր էղել, շատ վատ կզգայի, ինչխոր ջնջխեին հոգեպես քեզի, մորթեին: Էս երկրորդ անգամ գնացի հանգստանալու: Գնացի ու մեր պապերի, վայտե ըդպես բանաստեղծություն ունիմ գրած: «Մեր պապերի վատանը»:

ԳԱՅԱՆԵ. Հիշում եք:

ՊԱՐՈՒՅՐ ՏՈՆՈՅԱՆ. Հա, նորից հիշեցի ու վատ զգացի: Տատս էմպես, էմպես բանով կուզեր, էլի, հոգեպես կտանջվեր, որ էլ չըսած: Երևի ահագին փող է պահել, էդուր համար մրմռար կը:

Արրահամյան Ռուստյի [նկ. 34] (1938-2015 թթ.) հետ 2011-2014 թթ. ընթացքում մի քանի անգամ հանդիպել և/կամ հեռախոսով ենք զրուցել, զրույցներից մի քանիսը հաջողվեց ձայնագրել: Ստորև բերված զրույցից հատվածները ձայնագրել ենք 2012-ի հունիսի 11-ին իր տանը՝ Գյումրիում, զրուցել են Գայանե Շագոյանն ու Լևոն Արրահամյանը: Ձայնագրության տևողությունն էր շուրջ երեք ժամ:

Պատմության առանցքը Արրահամյանների ընտանիքն է, որին խորհրդային բռնաճնշման մեքենան թիրախավորել էր երկու անգամ՝ և 1930-ականներին, և 1949-ին:

«ՆՈՒՅՆ ՆԿՎԴ-ԻՍՏՆԵՐԸ ԵՂԵԼ ԵՆ ԵՎ ՉԱՐ, ԵՎ ԲԱՐԻ»

ԳԱՅԱՆԵ. Կպատմե՞ք ձեր տոհմի մասին:

ՌՈՒՍՍՈ. Մեր տոհմաձառով [նկ. 35] սկիզբը եղել է Լևոնը, Լևոնի որդին եղել է Մարկոսը, նա ծնվել է Կարին քաղաքում, թիվը չեմ հիշում, իր գերեզմանը գյուղում է՝ Հայրենաց գյուղում: 1848 թվականին մերոնք գաղթել են Կարին քաղաքից Հայրենաց գյուղը: Գյուղը կոչվել է Սունգյուղի, հայերեն՝ Ջրառատ: Մարկոսը ունեցել է Աբրամ որդի, Աբրամը՝ Ամիրխան, Առաքել... Իմ տոհմն՝ Մարկոսի տղան է եղել Աբրամը, Աբրամի տղան եղել է Ավետիսը: Ավետիսը ունեցել է երեք զավակ՝ Ղուկաս, Սուքիաս և Մարգիս և մի դուստր՝ Նախագ, հորքուրս: Կարինում սկսել են նեղել թուրքերը և իրանք ասել են՝ գնանք Հայաստան, Արևելյան Հայաստան, 1848 թվականին: Հետո, ուրեմն, օջախի քարը դրել են ֆուրգոնի վրա ու բերել են, էդ օջախի քարը իր գերեզմանի վրա է՝ Մարկոսի: Հայրս եղել է ամենակրթվածը պապիս տղաներից: Ղուկասը [19]14 թվականին կովել է Ավգուստովյան անտառներում, զոհվել է գերմանա-ռուսական պատերազմի ժամանակ, [19]14 թվականին:



Նկ. 34. Ռուստո Արրահամյան:
Լուսանկարը՝ Լևոն Արրահամյանի:

սա գնացել, էս մատնիչը՝ Ք. Փ.-ը, էս մարդը ազդարար է տալիս, թե որտեղ է պահած հացերը: Ու ասկարները գնում են էն հույսով, որ հաջորդ օրը գան տանեն: Էդ ընթացքում պապս կազմակերպում է հայրիկիս հետ՝ բոլոր երիտասարդ աղջիկներին փախցնում են, դեպի խորքերը, դեպի Արագած... Ալագյազի կողմերը: Թուրքերը գալիս են, տեսնում են, որ չկան, անասունները չկան, հայ աղջիկները չկան, կանայք չկան, հայրիկիս կապում են սյաւը ու սկսում են ծեծել: Տատս ունեցել է փուշի արծաթյա և գոտի արծաթյա, տալիս ա, ասում ա, սրանք վերցրեք, տղայիս կյանքը խնայեք: Էդ երեք [Գեորգիկյան] խաչն էլ է տալիս: Սովետական Միության «հերոսի» հավասար էր, հետո որ դեմոկրատիա էղավ, հավասարեցրին, ոսկի խաչ էր:

Ու էդպես... հայրս էղել է ուսուցիչ գյուղում: Առաջին տնօրենն է էղել դպրոցի: Ունեցել է 70 հատ մեղու, մի հատ ձի, յոթ հատ կով, տաս հատ ոչխար... Մայրս էղել է տնային տնտեսուհի, ժամանակին, ասեմ, արիստոկրատ ընտանիքից է էղել մայրս: Իրա եղբայրները էղել են կրթված մարդիկ, դասատու, մեկը էղել է սպա, որ թվին, չեմ հիշում, բանտի մեջ խփել էին, էն անասնակեր Աթարբեկյան չեղածը, կացինով կացնահարել են քեռուս: Էդ քեռուս խփում են կացնով: Մեր գյուղից ծառայող ա էղել ընտեղ, զինվոր:

ԳԱՅԱՆԵ. Բանտում:

ՌՌՍՍՈ. Բանտում: Դռնապահին, ասում ա, էս դիակը զգուշացեք, անհայտ չկորի, էլի, [հուզվում է] ...հողունի վրա տեղադրելիս, տանում, տեղը հիշում է էս մարդը, Պարույր է անունը, Փանոսյան Պարույր: Գիշերով յոթ օրվա բերում են գյուղ, միայն գիշերները: Յոթ հոգով, յոթ տղաները գնում են, բերում են գյուղ, թաղված է, Կուրդիսյան Աղասի: Կինը, Կուրդիսյան Արուսյակ, գլխավոր բժշկուհին էր Արթիկի ծննդատանը էղել, վաստակավոր բժշկուհի տվեցին... [19]20 թվին են խփել Աղասի քեռուս: Նա ունեցել է երկու դուստր՝ Ագատուհի, Շուշանիկ, դրանք էլ մահացել են [19]43-44 թվականներին: Շուշանիկը շատ գեղեցկուհի աղջիկ էր, շատ ականավոր:

Ուրեմը, մի քեռուս, Նահապետ քեռուս, [19]38 թվականին Ախուրյանում էղել է մանկավարժ, գալիս են, դուրս են կանչում դասարանից ու տանում են իրան՝ արքոր: Ախուրյան գյուղում էղել է դասատու: Փոքր քեռուս [19]38 թվականին դուրս են կանչում դասարանից, տանում են *Էսկավերեի* [ՆԳԺԿ-ի] հայաթ, որ էնտեղից վագոններով տեղափոխում են դեպի Նիժնի Տագի: Կա քաղբանտարկյալների 58 հոգվածը՝ հակահեղափոխական [գործունեության համար]: Քեռուս, որ բերում են վագոնով [հուզվում է], մայրս, մոտենալով, որ հետը զրուցի, եղբոր վագոնի դռան մոտ, [տեսնում է] մի հատ մարդ՝ կով է արածացնում: Ասում է. «Եղբայր ջան, տուր ես լինեմ հովիվ, կովերդ արածացնեմ՝ եղբայրս վագոնի մեջ է» [հուզվում է]: [Եղբայրը] ասում է. «Չոբան քույրիկ ջան, գնա, երեխաներիդ տեր էղի, ես լավ եմ, լավ կլինի»: Ու էդպես՝ վերջի հրաժեշտը:

ԳԱՅԱՆԵ. Կարողանում է տեսնել:

ՌՌԻՍՍՈ. Դե, դռան, լուսամուտի արանքից: Էդ քեռիս ունեցել է էս տղան, Կարլենը, [19]28 թվի ծնված, ուներ Ռուզան անունով աղջիկ ու Ջուլյետա: Մեկը մանկավարժ էր, մյուսը՝ բժշկուհի, անցյալ տարի մահացավ: Կարլենը ավարտեց Մոսկվայի գեղարվեստական ակադեմիան: Շատ մեծ նկարիչ էր... ու խմող էր, շատ խմող էր: «Արաքս» ռեստորան կա, չէ՛, ըստեղ: Դրա տեղը գրախանութ էր առաջ: Սա գնում է էդ գրախանութը, իր հորեղբայրը ընտեղ վաճառող էր, Սանասարը: Գնում է ընտեղ, մեկ էլ *ԿաԳեԲեի* պետը՝ պադպակովնիկ Չաքարյան, [19]70 քանի թվականներին, գալիս էր խանութը՝ գիրք գնելու: Հարցնում է Կարլենը. «Սա ո՞վ է»: Կարլենը հարցնում է հորեղբորը: Ասում է. «Սա ԿաԳեԲեի պետն է, Լենինականի»: Սա, որ գնում է իր ԿաԳեԲեն, դիմացն է, մեր Ալեքսանդրովսկի փողոցում, հետևից բարձրանում է: Հեղթապահը ասում է՝ ո՞ր եք գնում, ասում է՝ ուզում եմ պետի մոտ գնամ: Ասում է՝ ինչո՞ւ: Ասում է՝ գործ ունեմ, քաղաքացի եմ: Կրթված մարդ էր, շատ բազմակողմանի՝ երաժշտությունից, պատմությունից, գեղարվեստից [լավ հասկանում էր]: Որ մեծախոսություն չլիսի, Շանթ, Մարտիրոս Սարյան հավասար չէին սրան: Սրա նկարները մնացին երկրաշարժին [փլատակների տակ]: Շատ: Ասում էր. «Դա իմ ժառանգներն են»: Ինքը ժառանգ չունեցավ: Բարձրանում է պետի մոտ, ասում է՝ կարելի է: Ասում է՝ խնդրեմ: Չորում համբուրում է պոլը: [Պետն] ասում է՝ էս մարդը հոգեկան հիվանդ է: Ասում է՝ ինչ բան է: Ասում է՝ իմ հայրիկիս այստեղից են տարել: [հուզվում է]: Մի մասունք [կարող է] մնացել է: Նայում է՝ Ձերժինսկու նկարը [պետի սենյակի պատից կախված]: Ասում է՝ էս ինչ նկար է: Նման չէ իրան: Երկու ժամ ըստեղ նստեք, էս կգամ: Բերում կոնյակ է հյուրասիրում, կոֆե է հյուրասիրում: Երկու ժամ հետո գալիս է, ասում է, իրա նկարն էլ հետը, յուղաներկ նկարած, ԿաԳեԲեի պետ Չաքարյանի... Ձերժինսկու նկարն էլ ա նկարել, օրիգինալ, ու պետին՝ Չաքարյանինն էլ: Չաքարյանին ասում ա՝ էս ձեզ նվեր, կախեք, թող կերպարը փոխվի, էլի, մի քիչ: Ասում է՝ սա ձեզ՝ ինձանից հիշատակ, սա էլ էդ կերպարը փոխվի, սա ամենաառաջին չարագործն է եղել, կամակատար: Հա, էդպես: Էդ էդպես:

Հետո, որ քեռուս արքորել են, հայրիկս ու եղբայրս, եկել էր, ինքը [եղբայրս] Ավետիսյան է, գալիս են, Չարենցի գրքերը, Բաֆֆու գրքերը, վախենալուց, թե որ հանկարծ հայտնաբերեն, չէ՛, բերել գյուղ ու վառել են: Մեծ գրքեր է ունեցել քեռիս, մեծ գրադարան ուներ, վախենալուց, որ հանկարծ գան բռնեն, բերել վառել են գյուղում:

ԼԵՎՈՆ. Իսկ, որ նկարը նվիրում ա, էդ ո՞ր թիվն էր:

ՌՌԻՍՍՈ. [19]73-19]74, արդեն դեմոկրատիա, էլի, կոչեցյալը: Ինքը [19]78 թվին մահացավ մոտավորապես, չեմ հիշում, թե [19]79-ին:

ԳԱՅԱՆԵ. Լենինականում:

ՌՌԻՍՍՈ. Այո, գյուղում է թաղված: Ուրեմը հասանք... [19]37 թիվը: Արթիկի էնկավեղեի պետը՝ Ա. Վ. ու Կ. Լ., էդ Կ. Լ.-ը վերջում եղավ հրշեջ ծառայության պետ, Ա. Վ.-ն էլ եղավ տպարանի դիրեկտոր: Դիրեկտոր էր կոչվում էն ժամանակ, կարճ մարդ էր: Ըստեղ գալիս է... չար էին, չէ, *էնկավեղեի* մարդիկ, էն ժամանակ *էնկավեղեի* էին ասում, չար էին, բայց ինքը բարի էր: Տվյալ է գնում գյուղից, որ Սուքիաս Աբրահամյանը ուրիշներին շահագործում է իրեն տան վրա: Կուլակ են համարել, չէ, սրանց, որ հազար մարդ ա աշխատում, դա կուլակ չի համարվում [հիմա]: Հետաքրքրվող չկա: Բայց էն ազնիվ մարդը, որ իր քրտինքով աշխատել է, ասել են՝ կուլակ է: Գալիս են էնկավեղեից, Ա. Վ. ու Կ. Լ.-ը: Ուրեմն գալիս են սրանք ձիերով, տան մոտով անցնում են: Նայում են ուշադիր, որ հայրս մայրիկիս հետ գոմաղբը հայաթը լցնում են: Գնում են, մի շաբաթ հետո նորից են գալիս: Նորից են գնում, նորից են գալիս: Տեսնում են, որ նույն մարդն է: Հայրս ասում է՝ սրանք... դե ճանաչում է, ակտիվ գյուղի մարդ, ինքը էղել է Շիրակի Ջեմստվոյի դեպուտատ [պատգամավոր]: Ասում է՝ Նազան, Նազան է էղել մորս անունը, էկան սրանք, երկի բռնեն: Մտնում է մտորքի մեջ, ասում է հորեղբորս՝ Սարգիս, դու գնա, իմ տեղս աղբը կրի, գոմաղբը: Սրանք, որ գալիս են, մայրս ու հորեղբայրս... Ասում են՝ դու եղբայր ունես, Սուքիասը չես, Սուքիասին կանչի գա: Մայրս գնում կանչում է, [հայրս] գալիս է, վրեն խոտը, դարմանը, ասում է՝ էկել եք ինձ տանելու՞: Եկեք ներս գնանք, երեխաներիս տեսնեմ, մնաս բարով անեմ, նոր: Ես չեմ վիճում: Գալիս են, ասում է՝ նախ նստեք իլե: Տնական ձվածեղ, մածուն, հաց, մեղր, լավաշ, օղի տնական, բերում է, հյուրասիրում է: Երեխեքն էլ գալիս են, եղբայրներս, հավաքվում են էսպես, բոլորը՝ [ծնված] [19]22 թիվ, [19]25 թիվ, [19]28 թիվ, [19]31 թիվ, [19]33 թիվ: Սրանք հացը ուտում են, ասում են. «Սուքիաս, դու գյուղից բացակայի, տվյալներ են գալիս քեզ վրա»: Հայրս էդ ժամանակվանից դուրս է գալիս քաղաք, տուն է գտնում:

ԳԱՅԱՆԵ. Փաստորեն իրենք բաց են թողնում:

ՌՌԻՍՍՈ. Բացում են, տեսնում են, որ ինքը ուրիշներին չի շահագործում, ինքն է անողը, բայց տվյալներ են գալիս: Դեզն են վառել, մեղուններն են վառել, չար մարդիկ էղել են էն ժամանակ:

ԳԱՅԱՆԵ. Հետապնդել են իրան:

ԿԻՆԸ. Նախանձությունից:

ՌՌԻՍՍՈ. Ու էդպես անցնում, գնում է:

ԳԱՅԱՆԵ. Իսկ էդ, որ իրեն հետապնդել է, դեզն է վառել, դրանցից դուք տեղեկություն ունե՞ք, գիտե՞ք՝ ով էր անողը: Կամ Ձեր հայրը գիտե՞ր:

ՌՌԻՍՍՈ. Հայրս էլ գիտեր, մենք էլ գիտեինք, բայց մենք չարամիտ չենք էղել եղբայրներով: Մենք հանդուրժել ենք, ասել ենք՝ անցածը անցած է: Հա, հետո հայրս ըստեղ է դասատու աշխատել, Գետիկ գյուղում, Շիրակ գյուղում, Ախուրյանում:

ԳԱՅԱՆԵ. Ինչ էր դասավանդում:

ՌՌԻՍՍՈ. Ռուսաց լեզու: Ու աշխատել է 10-րդ դպրոցն է հիմա, առաջ Անաստաս Միկոյանի անվան դպրոցն էր, հիմա էդ դպրոցը էլի կա, ֆրանսիական է: [19]47 թվին տեղափոխեցին Իսահակյան գյուղ հայրիկիս: ...Մայրս [19]44 թվին է մահացել, աղոտ եմ հիշում: Ես հայրիկիս հետ գնացի Իսահակյան գյուղ: Եղբայրներս. մի եղբայրս էդ ժամանակ սովորում էր Տիմիրյազևի ակադեմիա, Մոսկվայում, մեծ եղբայրս դաշնակահարի տեխնիկումում պատմության դասատու էր, էս եղբայրս կուլտուրայի բաժնում էր Լեննականի, քաղաքային խորհրդում, էս եղբայրս աշխատում էր տպարանում, էս ժամանակ, որ մեզ քստրել են, մյուս եղբայրս՝ Высшее военное авиационное училище [Բարձրագույն ռազմա-օդային ուսումնարան], Կազանում, նկարները կա, ընտել էր սովորում: Մեզ որ քստրեցին, տվյալները *էնկավեդեն* ստուգում էր, տվյալ անձնավորության տղաները ովքեր են, ինչ են, ու բոլորին գործերից հանեցին: Գալիս են տպարանը, գրաշար է աշխատում [մի եղբայրս], կանչում են սրանք, էնկավեդեի նույն աշխատողը՝ Ա. Վ.-ն, ասում է, կենսագրությունդ պատմի: Ինքը էնկավեդեի պետն է եղել: Ասում է. «Ես ծնվել եմ Հայրենաց գյուղում, հայրս էղել է մանկավարժ, մայրս տնտեսուհի, ունեցել ենք էսքան բաներ...»: Ասում է. «Սպասիր, գնա Կ. Լ.-ին կանչի»: Էդ Շերամի անվան թե՛ Ջիվանի անվան մանկավարժականի դիմացը հրշեջ կայան կա, դրա դեմն էր ապրում Կ. Լ.-ն: Ասում ա. «Լ. դյադյա, Ա. Վ.-ն կանչում է, արի»: [Ա. Վ.] ասում է. «Ինչ որ ինձ պատմեցիր, նույնը կրկնիր հիմա»: Պատմում է: Էս Կ. Լ.-ն ու Ա. Վ.-ն իրար երեսին են նայում, ասում են. «Մենք մայրիկիդ ձեռքից հաց ենք կերել: Քեզ հիմա, որ էս գործից ազատեն, դու գնալու ես 13-րդ փողոցը»: Բանտի փողոցը: Լենինականի բանտը Սլաբոդկայում էր: Հրամանը փոխում է, գրաշարից դնում է մաքրող, որ պաշտպանի: Բարիությունը ըդտեղ է գալիս, չէ, *էնկավեդիստի*:

ԳԱՅԱՆԵ. Փաստորեն, երկրորդ անգամ են փրկում: Նույն մարդիկ:

ՌՌԻՍՍՈ. Երկրորդ անգամ է փրկում: Նույն մարդիկ: Էղել են և չար գիշատիչներ, և բարի մարդիկ: Ու մենք քստր տեղերս, որ նամակագրության մեջ էինք մտել, Կազան եղբորս նամակ էին գրում, Մոսկվա: Կանչում են իրանց էլ, կուսակցական էին: Էն ժամանակ ինքը գերագանցիկ ավարտել էլ դաշնակահարական տեխնիկումը, հինգ տոկոսով իրան ուղարկել էին սովորելու:

ԳԱՅԱՆԵ. Նրա անունը ինչ էր:

ՌՌԻՍՍՈ. Պրոուդն: Ավետիս, Պերճ, Պրուդոն, Ռ-ազմիկ, մեկ էլ Ռուստ: Ուրեմն կանչում են, Նորայր Սիսակյանը, աշխարհի խոշորագույն բիոլոգ, որը չափել է Գ-ազարիսի պուլսը, զարկերակը: Տիմիրյազևի ակադեմիայում դասավանդել է: Ես որպես հարգանքի նշան պահել եմ իրա նկարը: Ուրեմն, որ ուզում են ակադեմիայից հեռացնեն եղբորս, սա գնում է Միկոյանի մոտ.

«Անաստաս Իվանովիչ, միակ հայ տղա ունեք Հայաստանից, արքորել են հայրիկին, իրան ուզում են հեռացնել»: Պահել են, հային պահել է սա:

ԳԱՅԱՆԵ. Միկոյանի միջոցով, փաստորեն:

ՌՌԻՍՍՈ. Այո, այո:

ԳԱՅԱՆԵ. Միկոյանն էլ է միջամտել:

ՌՌԻՍՍՈ. Այո, այո, նա էլ է էդ բարիությունն արել: Սա շատ էր պատմում եղբայրս, շատ բարի, հայասեր մարդ է էղել, շատ հայասեր մարդ: Աշխարհի խոշոր բիռլոգն է, հայերեն՝ կենսաբան: Ու հետո արտը տեղը, որ ինքը էկավ, էս գիրքը՝ «Путешествие по Советской Армении» [«Ճանապարհորդություն Խորհրդային Հայաստանով»], սա բերեց ընտել հետը, ըստել գրած է. «В память от сына, Прудона Сукиасовича Абрамяна [«Ի հիշատակ որդուց՝ Պրուդոն Սուքիասի Աբրահամյանից»], ինքը Ավետիսյան է, բայց Աբրամյան գրեց [գրքում], студента Академии им. Тимирязева, 20.08.50 г., город Москва [Տիմիրյազևի անվան ակադեմիայի ուսանողից, 20/08/50 թ., քաղաք Մոսկվա]: Էս էլ արքոր է տեսել [նկատի ունի գիրքը]: Էս գիրքը ու Ջիվանու գիրքը:

Արքորից եկավ ինձ փախցնե եղբայրս: Տոմս էր առել, եկանք կայարան...

ԳԱՅԱՆԵ. Հենց էդ Տիմիրյազևյում սովորողը:

ՌՌԻՍՍՈ. Այո: Եկանք Մոսկվա... Վալենսկի, Կորտալենսկի, եկանք կայարանը, էկավաղիստները վեց հոգով էկան. «Сейчас мы вас арестуем. Тебя арестуем, почему ты хочешь забрать своего брата?»:

ԳԱՅԱՆԵ. Ո՞նց էին միանգամից գլխի ընկել:

ՌՌԻՍՍՈ. Իմաց էին տվել: Իմաց էին տվել: Հետևում էին որսու, յուրաքանչյուր քայլափոխ հետևում էին, որ քայլը ուր գնաց, որ գյուղը գնաց: Դե, իմաց էին տվել, կան, բոլոր վայրերում կան... մեր հայոց պատմության մեջ Դավիթ Բեկին մատնեց Ֆրանգյուլը: Մխիթար Սպարապետին իրա սիրուհին դավաճանեց: Հա, հոկտեմբերի 27: Հայերը միշտ էլ էղել են, բոլոր տեղերում, հայեր էղել են մատնիչներ: Կողք կողքի մատնել են մարդկանց: Ցավ է գալիս, էլի, ցավ է գալիս, որ էդպես բան կա:

ԳԱՅԱՆԵ. Եղբայրներից մեկին փորձել են Տիմիրյազևոյից հանել, մյուսին...

ՌՌԻՍՍՈ. Տպարանում...

ԳԱՅԱՆԵ. Պաշտոնը իջեցրել են, մյուսների հետ ինչ է եղել:

ՌՌԻՍՍՈ. Կազանից, Լյոտնի ուչիլիչչայից են հեռացրել: Ջինվորական ուչիլիչչայից: Իրա տղան Ազգային ժողովի ղեպուտատ է: Ավետիսյան Սուքիասը: Ինքն էլ գիտությունների թեկնածու էր, սելեկցիոն կայանում էր աշխատում գիտական գծով: Նախ տնօրենն էր, հետո հանգամանքները փոխվեցին:

ԳԱՅԱՆԵ. Բա որ դուրս արեցին «Լյոտնի ուչիլիչչայից», ինչ էր անում:

ՌՌԻՍՍՈ. Էկավ ըստեղ ինքը, մենք արքորում էինք, էկավ ըստեղ, գյուղինստիտուտը ավարտեց, թեկնածուականը պաշտպանեց, [19]62 թվին գիտական աստիճանը, որին ներկա էր Շիրազը, «Արմենիա» ռեստորանում: «Հորովել» երգեց, բանաստեղծություններ գրեց Շիրազը: Մենք, որ գնացինք, մի 30 հոգով էինք: Հիմնարկից ավտորուտով աշխատողներն էին, ասավ. «Վայ, այլեքսանդրապոլցիները եկան»: «Ալեքսանդրապոլ» բառեր էր օգտագործում: Ծանոթ էին, էլի, եղբայրներին: Մեզ հետ նստեց: Կերանք, խմինք, քեֆ արինք: [19]62 թվականն էր:

ԳԱՅԱՆԵ. Վերադառնանք Ձեր պապային: Ես ուզում եմ՝ մի քիչ խոսենք էն ժամանակվա մասին, երբ ինքը ստիպված եղավ փախչել Հայրենացից, փաստորեն գյուղից գաղտնի, միանգամից հավաքվել ու տեղափոխվել է Գյումրի:

ՌՌԻՍՍՈ. Այո, եկել էր այստեղ, տուն է բռնել, ես էդ տանն եմ ծնվել, հիմա էստեղ իմ Սուքիասն է, եղբորս տղան է ապրում: Ու էդպես...

ԳԱՅԱՆԵ. Ընդունվեց աշխատելու, էդքան հեշտ էր, որ գյուղից տեղափոխվում ես քաղաք, միանգամից հետքը կորչում է: Իրեն չէին կարող էդ քաղաքում գալ և բռնել:

ՌՌԻՍՍՈ. Հետապնդել են, էլի: Հա, էդ էլ ասեմ: Տարիմանով Մկրտիչ Օգանեստովիչ, начальник Управления КГБ по Брянской области [Բրյանսկի շրջանի կառավարման ՊԱԿ-ի պետ], [19]73 թվին, որ ըստեղից փախավ, մի հաստ Արտյոշ կար, որ փախավ, սահմանը անցավ, կնոջ ու երեխաների հետ, սա Հայաստանի ԿաԳեԲեի պետի տեղակալն էր: Հայաստանի ԿաԳեԲեի պետի տեղակալն էր գնդապետի կոչումով: Սրան տեղափոխեցին Բրյանսկ: Ես, որ ամեն տարի ընտանիքով գնում էի եղբորս մոտ, Բրյանսկ, սա ԿաԳեԲեի պետն էր: Ուզում եմ ասել, հայրիկիս վրա ով էր դանոս տվել: Կանչեց հավաքի ժամանակ, ասում է. «Պրոդոն, որտեղի՞ց եղբայրդ էդքան մաքուր առանց ակցենտի ռուսերեն գիտի»: Բա, արքորված է էղել: Սա՛ վայ, ո՞նց թե: Ռեաբիլիտություններ տվեցին, չէ՛, արքորյալներին: Տներ տվեցին որպես բռնադատված, օժանդակ, շիֆեր էին տալիս, շինանյութ էին տալիս... Մի խոսքով, ասավ. «Когда будешь уезжать, без меня не уезжай» [Մեկնելիս՝ առանց ինձ տեսնելու չմեկնես]: Մի հաստ նամակ տվեց ինձ: Չայնագրո՞ւմ ես, չէ՛:

ԳԱՅԱՆԵ. Հա:

ՌՌԻՍՍՈ. Ոչինչ, արդեն դեմոկրատիա է: Էդ նամակով, ասավ, գնաս, կներկայանաս գեներալ Բադամյանցին՝ ԿաԳեԲեի նախագահին Հայաստանի: Էկա, էդ նամակը տարա Երևան, տվեցի, [19]74 թվականին, հայրս հլե կենդանի էր: Մայիս ամիսն էր: Տարա տվեցի, դրեց կողքը, հյուրասիրեց, կոնյակ հյուրասիրեց, պատմեց որոշ բաներ: Դե ինքը արդեն լրիվ գիտեր: Եղբայրս Կրասնի Ջնամենի պարգևատրված էր, Բրյանսկում շատ առաջա-

տար աշխատող էր, էլի, որպես թշնամու գավակ, որպես տուժված քաղաք, Բրյանսկը, ընտեղ ուղարկեցին աշխատելու: Հարսս էլ, ինքը սիրահարվել էր, նրան սիրահարվել էր, հարսս իսկական ազնվական կնիկ էր, Մակարով կոնստրուկտոր, պիստալետը [հեղինակն էր], Մակարովի քրոջ աղջիկն էր, Ֆյոդոր Վասիլևիչի: Հա, գնացի, գանգ տվեց, նամակը, որ կարդաց, առաջ եկավ, «откуда его знаем» [որտեղից գիտես նրան], ասեցի, ասավ՝ хорошо. Արդեն գիտեր: Ջանգ տվեց *Նաշայնիկ արդեղա կադրով*, եկավ, ասավ. «Дело Абрамяна Сукиаса принесите сюда, сосланного в [19]49-м году» [«Բերեք Աբրահամյան Սուքիասի գործը, որ 1949 թ.-ին արքունվել է»]: Բերեց, կարդաց, էսպես փակեց թղթով, չլինելու բան էր, որ եղավ, էլի, չեղնելու բան էր: Ասավ. «Էս նամակը լավ ես արել, որ բերել ես: Կարդացեք»:

ԳԱՅԱՆԵ. Ինչը փակեց: Անու՞նը փակեց:

ՌՌԻՍՍՈ. Անունը չփակեց, ինչ որ պետք էր կարդալու, ես չկարդացի: Միայն տվեց, որ գրած էր՝ осведомитель: Իմաց տվող, էլի: Ասավ. «Я надеюсь, что вы воспитанные люди и не будете мшенье нести» [«Հույսով եմ՝ դուք դաստիարակված մարդիկ եք և վրեժխնդիր չեք լինի»]:

ԳԱՅԱՆԵ. Ու անունն էլ կարօсведомитель-ի:

ՌՌԻՍՍՈ. Անուն-ազգանունը կար:

ԳԱՅԱՆԵ. Ու Դուք իմացա՞ք:

ՌՌԻՍՍՈ. Իմացա: Որ տղաներն էլ, որ հանդիպում են մեզ՝ բարև, ասծու բարև, շատ ջերմ չէ: Հա, դե արդեն անցել է, մենք էլ չարագործ մարդիկ չենք:

ԳԱՅԱՆԵ. Իսկ տղաները գիտե՞ին, որ իրենց հայրը...

ՌՌԻՍՍՈ. Գիտեին, լրիվ գիտեին: Դրանց հերը, որ մեռավ, 12 հոգի մարդ մասնակցեցին, էդ էլ ասեմ:

ԳԱՅԱՆԵ. Իսկ ովքեր էին մասնակցողները:

ՌՌԻՍՍՈ. Իրա տղեքը, իրա ընտանիքը: Փեսան շատ լավ տղա էր, միշտ հայիոյանք էր տալիս, ասում էր՝ դրա կեղտոտ էսպես, էսպեսը:

ԳԱՅԱՆԵ. Ո՞ր թվին մահացավ ինքը:

ՌՌԻՍՍՈ. Երկրաշարժի թվին մահացավ:

ԳԱՅԱՆԵ. Այսինքն, համեմատաբար վերջերս [1988 թ.]:

ՌՌԻՍՍՈ. Հա: Էղել է գյուղտնտեսի նախագահ էն ժամանակները, [19]37 թվականներին իր հարագատ եղբորը ուղարկել էր ֆրոնտ: Դա բոլորի պարտականությունն ա հայրենիքի պաշտպանությունը, բայց իրա եղբորը, որ ուղարկի, մի քիչ դաժանություն է, չէ: Ուրիշները կարային մնան: Էդպես տականք մարդ էր:

ԳԱՅԱՆԵ. Փաստորեն, Դուք իմացաք:

ՌՌԻՍՍՈ. Իմացա: Ու [19]54 թվին մենք առաջիններից մեկն էինք, որ ազատվեցինք արքորից:

ԳԱՅԱՆԵ. Մենք կիսատ թողեցինք էն մասը, որ եկաք, տեղավորվե-

ցիք Լենինական: Ձեր հայրը ինչ սկսեց աշխատել Լենինական:

ՌՌԻՍՍՈ. [19]37 թվին:

ԳԱՅԱՆԵ. Հա:

ՌՌԻՍՍՈ. Մանկավարժ է աշխատել գյուղում:

ԳԱՅԱՆԵ. Հա, իրեն ուղարկում էին ուրիշ գյուղեր աշխատելու՞:

ՌՌԻՍՍՈ. Այո, այո:

ԳԱՅԱՆԵ. Ու էդպէս ինքը հայտնվեց Իսահակյան գյուղում:

ՌՌԻՍՍՈ. Հա, Իսահակյանում հայտնվեց:

ԳԱՅԱՆԵ. Լավ, մինչև վերադառնալը՝ մի քիչ ավելի մանրամասն կպատմեք, ոնց գնացիք: Քանի՞ տարեկան էիք էդ ժամանակ՝ 1949-ին:

ՌՌԻՍՍՈ. Տաս տարեկան էի: Ուրեմն գիշերով էկան ժամը մեկին, հայրս նստած... հա, էդ օրը, ինչ օր էր, հլա սպասի, շաբաթ օր էր: Շաբաթ օր էր: Ձու էիք վերցրել, մածուն, գալիս էիք եղբայրներիս տեսնելու հայրիկիս հետ:

ԳԱՅԱՆԵ. Պիտի գայիք Լենինական:

ՌՌԻՍՍՈ. Հա: Սահմանի գծով էր անցնում երկաթուղին: Սահմանապահները կանգնած՝ պոեզդում էին, որ չթոչեն վագոնից: Ուրեմն, էլանք դեպի թուրքի կողմը՝ թնդանոթներ, ձիեր կային, тяжеловесные [ծանրաքաշ], ձիերով էին էն ժամանակ տանում թնդանոթները: Ձիեր էին լողացնում: Թնդանոթները ուղղված էին դեպի Թուրքիայի կողմը: Ձայները գալիս էր: Առավոտները, որ վեր էիք կենում, դրանց մոլան, որ հաչում էր, ձայները գալիս էին: Ուրեմը զինվորները բռնել էին, էդ Արփաչայի դամիշներում վայրի բաղեր կային, դրանց ձագերին բռնել էին էսպես ձեռների մեջ, սրանց մայրերը գալիս, սրանց գլխներին խփում, գնում էին, էդ զինվորների: Մենք էլ էդ ընթացքում գնում էիք դեպի Շիրակական գյուղն էր կանգնում [գնացքը]: Հայրս ասավ. «Бессовестные люди, зачем вы взяли? Зачем вы поймали этих утят, матери плачут, неужели совести нет у вас?» [«Անվիղճ մարդիկ, ինչի՞ եք բռնել բաղի այդ ճուտերին, մայրերը լաց են լինում, միթե՞ խիղճ չունեք»]: Ու ծանր տպավորվավ էդ դեպքը: Էկանք... չհասած կայարանը, գնացքն էկավ, առաջ անցավ, ուշացել էիք արդեն: Սահմանապահն ասաց. «Отец, опоздали, вернитесь назад» [«Հայրիկ, ուշացաք, վերադարձեք»]: Վիշկայի վրա կանգնած ա ռուս սահմանապահը, ասավ՝ опоздали: Հայրս ասավ. «Մա լավ նշան չէր»:

ԳԱՅԱՆԵ. Ճանապարհից հետ դարձաք...

ՌՌԻՍՍՈ. Հա, լավ բան չէր: Էկանք ու գիշերը... Հա, նստանք, նորից՝ տետրները ստուգելու, բանով, ժամը մեկին, լամպ չկար, ճրագ էր... դուռը խփին ավտոմատներով երեք հոգի՝ գյուղատվետի նախագան, կոլխոզի նախագան, էնկավեդեի պետը ու մի հատ էլ ռուս՝ Մոսկվայի ներկայացուցիչ: Ասավ. «собирайтесь» [«հավաքվեք»]: Հայրս ասավ. «куда собираться?»

[«ու՛ր հավարվենք»]: «Собирайся, я тебе говорю,– սկսին հայրիկիս հրմշտե-
լը,– с сыном» [«Հավարվիր, ասում եմ քեզ, տղայիդ հետ»]: Հավարվանք
ըդպես, Ջիվանու գիրքը հայրիկս վերցրեց, հաց վերցրինք, ուրիշ բան
չվերցրինք, աղեպ վերցրինք երկու հաս...

ԳԱՅԱՆԵ. Ու ձեզ հետ էր նաև Ձեր խորթ մայրը, երեքով էիք:

ՌՌԻՍՍՈ. Հա, էն Դաշան: Սա էլ կազակական, дочь донского казака
Ефима [Դոնի կազակ Եֆիմի աղջիկը]: Սա էլ դավաճան էր:

ԳԱՅԱՆԵ. Հա՛ն:

ՌՌԻՍՍՈ. Հա, ընտեղ, արտոյ տեղը, գողություններ արավ, արվի-
գացիաներ գողացավ, արվիգացիաներ կային առաջ: Հետո ասում էր՝ ты
дашак [«դաշնակ ես»]:

ԳԱՅԱՆԵ. Ձեր հորն էր ասում:

ՌՌԻՍՍՈ. Հա, որպես դաշնակ-նացիոնալիստ, չէ՛, արտրեցին,
բայց ինչ դաշնակ: Հայրս ընտրվել է Շիրակի գավառային զենաստվոյի դե-
պուտատ: Որ ասեցին՝ ты – дашак [«դաշնակ ես»], էդ ռուսը ասավ՝ ты –
дашак-националист [«դաշնակ-ազգայնական ես»], էդ է եղել: Էդպես էդ
բառը հիշեց [հոր կինը], էդ դատարկը: Ինձ, որ արտրեցին, Ավետիք Իսա-
հակյանի հորեղբոր թոռը՝ Արա Իսահակյանը, եղբորս հետ ֆրոնտ է եղել,
սա գալիս է ոտքով, մեր տունը գտնում է Լենինական, ասում է, որ ձեր հայ-
րիկին արտորում են:

ԳԱՅԱՆԵ. Ձեր եղբայրներին է տեղեկություն հասցնում:

ՌՌԻՍՍՈ. Հա: Աքտրել են: Մեքենայով տարան: Տարան Արթիկ էդ
վագոնը: Հետո, էն, որ ասի Արուսյակ Կուրդիկյան, նրան են ասում: Ին-
քը բժշկուհի էր: Կարմիր խաչի սումկեն գցած՝ մեջը ծխախոտ ու կանֆետ,
էկավ, բարձրացավ... հուզվում եմ, էլի: Բարձրացավ վագոն, ասավ. «Փեսա
ջան, Ռուստյին լավ կնայես, շատ լավ կնայես»: Ու բերին ըստեղ, գիշերով:

ԳԱՅԱՆԵ. Լենինական: Արթիկի՞ց Լենինական:

ՌՌԻՍՍՈ. Այո:

ԳԱՅԱՆԵ. Ձեր հարևաններին էլ էին մարդ վերցրել: Իսահակյանից:

ՌՌԻՍՍՈ. Կոջոյան Մնաց, Կոջոյան Մնացական: Էս Արա Իսահա-
կյանի քույրն էր, Հռիփսիկն էր՝ Մնացականի կինը, դրանց էլ արտրեցին,
դրանց մամը, Հայկո մամը ջարդի փախերից է:

ԳԱՅԱՆԵ. Մամին էլ արտրեցին:

ՌՌԻՍՍՈ. Մնացի մայրիկին ու եղբորը, Ռաֆիկին: Սա [տատը]
վերցրել էր մի հատ մեծ կարաս: Մեջը թան էր լցրել, ինչու՞ էր լցրել, որ
կարագ պատրաստի, դա էր վերցրել, սխտոր էր վերցրել, չոր թան: Ջար-
դից փախած մարդ էր, գիտեր ճանապարհին ինչ է պետք: Ու ամբողջ ճա-
նապարհը մենք, ինչքան, որ մանր երեխա կային վագոնի մեջը, դա մեզ
էր տալիս՝ երեխաներին, սխտորը, չորաթանը, ասում էր՝ երեխաներին լավ

պահեք: Դե հացն էլ վերցրինք, չորացավ, կերանք, բայց հացերը: Հետո ճանապարհներին անապատ տեղերն էին կանգ առնում գնացքները: Ջուղայով տարան, Նախիջևանով, հեռվից Խոր Վիրապը երևում էր: Դռան էդ փոքր տեղով դանակով քանդել էինք, նայում էին: Սենց, որ գնում էինք, ձախ՝ Խոր Վիրապ, էն ժամանակվանից տպավորվեց ինձ մեջ Խոր Վիրապը: Երեք անգամ էղել եմ: Տղայիս հետ, ընտանիքով: Խոր քարեր էր էն ժամանակ, խոր քարեր էր: Թուրքերը՝ «սուրգյուլա, սուրգյուլա»՝ աքսոր թուրքերեն, բղավում, թողնում փախնում էին, բայց ամբողջ տարածքով էնկավեղիստները կանգնած էին ավտոմատներով:

ԳԱՅԱՆԵ. Աքսոր էին գոռում:

ՌՌԻՍՍՈ. Իմանում էին, որ էդ վագոնի ժողովուրդը «սուրգյուլա» է:

ԳԱՅԱՆԵ. Իսկ ինչո՞ւ էին թուրքերեն գոռում էդ բառը: Տեղի բնակիչները հիմնականում թուրք էին:

ՌՌԻՍՍՈ. Տեղի բնակիչները, թուրքեր կային էղտեղ: Էդ ժամանակ, գերանդիները թողնում էին ու փախնում: Գոռում էին՝ «սուրգյուլա, սուրգյուլա», թողնում ու փախնում էին: Սահմանի բերանը խտտ էին քաղում էդ ժամանակ: Լավ բնություն էր:

ԳԱՅԱՆԵ. Իսկ Ձեր հայրը իր հետ որևէ զենք, դանակ, կացին կամ ինչ-որ մի բան...

ՌՌԻՍՍՈ. Ոչ, ոչ, ոչ, բոլորովին, չէին թուլատրում, չէ, չէին թուլատրում, ոչ մի բան: Ֆրոնտավիկ մարդիկ, ասենք, երիտասարդները, փոքր դանակ, որ հաջողացրել էին՝ էդ էր, էլի: Կար, կտրտում էին ձեռքերը:

ԳԱՅԱՆԵ. Իսքնասպանության փորձ էին անում:

ՌՌԻՍՍՈ. Վոլգա գետի... Վոլգան անցնելիս, Վոլգոգրադով տարան, Ստալինգրադով: Ճակատամարտի տեսարանը էս օրվա նման աչքիս դեմն է: Գերմանացի զորքը թափված, սովետականներիս հավաքել էին: Գերմանացի զինվորները արդեն կմախքներն էին՝ չորս տարի, թափված, տեխնիկան ջարդված, մենակ գնացքի գիծն էին բացել, որ գնացքը գնում-գալիս էր: Նավերը խորտակված գետի մեջ, հլե չէին հասցրել մաքրել, տանկերը ջարդված: Տանում էին, ըդտեղ կանգնեցրին:

ԳԱՅԱՆԵ. Հենց էդ դաշտի մեջ, էդ զենքի մեջ:

ՌՌԻՍՍՈ. Կայարանի մոտերքը, էլի: Մեծ կամուրջ էր, սարքել էին: Ըդտեղ կանգնեցրին, տեսարան որպես, էլի: Բերեցին, ձկից պատրաստած ապուր տվեցին, դրա ուտողը դիզենտերիա ընկավ, ձկի ապուր: Կալանավորին ճնց են պահել: Ջուրը Վոլգայից էին բերում վեղրոններով:

ԳԱՅԱՆԵ. Պատկերացնում եմ, էդ վիճակում շատերի մոտ պետք է...

ՌՌԻՍՍՈ. Հա, շատերի մոտ: Էդ տատը մինչև աքսորավայրը էդ սխտորն ու էդ չորթանը խառնում էր ջրի հետ ու տալիս էր մեզ սխտորով:

ԳԱՅԱՆԵ. Որ էդ խնդիրը չունենայի՞ք:

ՌՌԻՍՍՈ. Հա, ես հեջ չեմ մոռանա: էղել եմ գյուղում էդ տատի գերեզմանին:

ԳԱՅԱՆԵ. Վագոնները չունեին, չէ՞, զուգարան:

ՌՌԻՍՍՈ. Ինչ զուգարանի մասին է խոսքը: Ընտանիքներով, փոքր երեխաներ, մեծածախասակ, հարսն ու աղջիկ, նորապսակ... Էս Մնացը, որ ասում եմ, սրանք նոր-նոր էին նշանվել, երիտասարդ հարսը, ամուսինը, եղբայրը, տատը՝ մեծ կին, ուրիշ տեղերից աղջիկներ, կանայք, խատը, խատը վագոնի մեջ:

ԳԱՅԱՆԵ. Բա ո՞նց էին էդ հարցերը լուծում:

ՌՌԻՍՍՈ. Ո՞նց: Պրոստիտներ էին քաշում, էդ տատը պրոստին էր քաշում, ասում էր՝ երեխաներ, դուք գնացեք էն կողմ, տղամարդիկ էն կողմ... Անասնատար վագոններ էին դրանք, չոր, փայտից սարքած, երկրորդ հարկով, առաջին, երկրորդ հարկ:

ԳԱՅԱՆԵ. Քանի՞ օր դա գնաց:

ՌՌԻՍՍՈ. 18 օր: Էդ քարտեզը չեմ կարում գտնեմ, էդ քարտեզն էլ կա: Գնացել ենք ու որ ճանապարհով ենք հետ եկել:

ԳԱՅԱՆԵ. Մտունդը միայն իրենք էին տալիս, թե՞...

ՌՌԻՍՍՈ. Իրենք էին տալիս: Տասն էր, ամբողջ վագոնը, կողքի վագոնից էլ, սխտոր, բան, բայց էդ սրիկա լակոտները, էնկավեղիստները, զենքի կոթերով խփում էին, չէին թողնում վագոնից վագոն գնալ: Ով էլ, որ չէր ենթարկվում, շտրաֆնայ իզոլյատոր կար:

ԳԱՅԱՆԵ. Վագոն-իզոլյատոր կար:

ՌՌԻՍՍՈ. Հա, հատուկ, ով հակառակվում էր, տանում նստացնում էին ընտել:

ԳԱՅԱՆԵ. Ինչո՞վ էր տարբերվում էդ վագոնը:

ՌՌԻՍՍՈ. Որ ընտել տեղաշոր չկա, բան չկա:

ԳԱՅԱՆԵ. Դռները փակ էիք գնում, թե՞ բացում էիք:

ՌՌԻՍՍՈ. Հա, դռները փակ, լուսամուտներին ճաղեր էր քաշած, նորից էին փակում, բայց որ դուրս եկանք Հայաստանից, ճաղերը բացեցին, որ շնչառություն լինի, բայց էլի դռները փակ: Տակը սետկաներ էր վագոնների, որ պողը չծակեն փախչեն, փայտ է, չէ՞, վերջ ի վերջո: Որ իջնում էինք, արդեն հեռանում էինք վագոնից, տափաստան էինք, չէ՞, 20-30 մետր, վերևները զինվորներ կային պուլեմյոտով նստած: Վագոնի վերջավորությունները, հետո պլասշադկա կար, յուրաքանչյուր վագոնի վրա երկու հոգի մարդիկ էին կանգնած:

ԳԱՅԱՆԵ. Փախչելու ոչ մի տարբերակ:

ՌՌԻՍՍՈ. Ոչ մի տարբերակ:

ԳԱՅԱՆԵ. Փորձ անող էղե՞լ էր:

ՌՌԻՍՍՈ. Չէ, փորձ անող չի էղել, բայց իրանց գցեցին: Վուզա գետի

վրա, որ անցնում էինք, երաժիշտ տղա կար, Արտյոմ, լավ երգիչ տղա էր, դա իրան գգեց: Լուսամուտի ճաղը պոկեց ու իրան գգեց:

ԳԱՅԱՆԵ. Կամրջից ներքև:

ՌՌԻՍՍՈ. Հա, գցեց, Վոլգա գետի մեջը:

ԳԱՅԱՆԵ. Հետն ինչ եղավ, չիմացա՞մ:

ՌՌԻՍՍՈ. Հեչ, ինչ պիտի լինի: Գնաց գնացքը, ինչ պիտի լինի:

ԳԱՅԱՆԵ. Գուցե մահացավ, գուցե ողջ մնաց:

ՌՌԻՍՍՈ. Ողջ չէր մնա: Երկաթներ են ամբողջ, որ գլուխը խփեց, կմահանա: Մի հատ էլ կկրակեն, մի հատ էլ կկրակեն վագոնից:

ԳԱՅԱՆԵ. Իսկ ճանապարհին բնական մահեր եղա՞ն, որ մարդիկ ուղղակի տանջանքներին չդիմացան:

ՌՌԻՍՍՈ. Այո, էդ էլ եղավ: Վագոնից վար էին իջացնում: Կանգառները ժամանակ իջացնում էին:

ԳԱՅԱՆԵ. Ու առանց թաղելու թողնու՞մ:

ՌՌԻՍՍՈ. Տալիս էին, գալիս էին դիմավորում վագոնը, իրանք էլ տալիս էին: Էնքան անհայտ մարդիկ մնացին շիրիմներով, տեղն էլ չկա, մարդիկ մահացան:

ԳԱՅԱՆԵ. Իսկ, որ ասում եք ինքնասպանության փորձ էին անում, դա վագոնի մեջ թե՛ արդեն տեղում:

ՌՌԻՍՍՈ. Վագոնի մեջ: Վագոնի մեջ էլ կար: Դրանց կապոտում էին, տանում էդ շտրաֆնոյ վագոնի մեջը: Կար, սանիտարնի վագոն էլ կար: Զորքի համար էլ [էր օգտագործվում գնացքը]:

ԳԱՅԱՆԵ. Իսկ գիտե՞ք՝ քանի վագոն էր ձեր *սասյրավի* [գնացքի] մեջ:

ՌՌԻՍՍՈ. Երկար էր, երկար էր՝ յուրաքանչյուրի մեջ 3 ընտանիք, 2 ընտանիք: Նայած բազմության: Մեքենաները, որ գալիս էին, որտեղ քիչ ընտանիք կար, նորից էին *դաքրավկա* [ավելացնում] անում: Որտեղ շատ էր, շատին էին իջացնում, շատ ահավոր բան էր: Մեր վագոնը քանի՞ ընտանիք էր: Էդ գյուղից էդ երկու ընտանիքն էինք, մենք մնացել էինք: Հետո Հոռոմ գյուղից բերեցին, Գեղամ անունով: Դա ռազմագերի էր եղել: Մարդուն մի պատիժ է հասնում, չէ՛, հանցանքի ժամանակ: Բայց դրան քանի՞ պատիժ: Գերի է եղել՝ մեկ, աքսորը՝ երկուս: Աքսոր տեղն էլ իրեն մատնեցին՝ երեք: Ընտանիք, երեք հոգի, սաղին տարան, քանակի՞նք տարի դատեցին դրանց:

ԳԱՅԱՆԵ. Տեղում իրար մատնու՞մ էին:

ՌՌԻՍՍՈ. Դրոյի գորքում ա եղել: Ընտեղ, տեղում, աքսորավայրում, նոր դրան մատնեցին, որ սա ընտեղ է եղել: Մեկը նկար ուներ, Հոռոմ գյուղից, Գեղամ էր անունը: Իտալիայում գերմանական գնդապետը քավորն է եղել, խաչը ձեռքը բռնած: Էդ նկարը ճնց էր ինքը բերել հետը, հասցրել: Էդ նկարը տան մեջը տեսնում են, էլի, բայց թե՛ ճնց են իրան մատնում, ճվ գիտի: Բա ինչի՞, օրինակ, ասի, որ էն Ֆրանգյուլը մատնեց: Դրա համար էլ

ասել են, լավ է անել բարի, քանց թե գանձը աշխարհի: Մարդ պարզամիտ լինի: Ժողովրդի մոտ ամաչելու բան չունենա, վատություն չանի մարդու:

ԳԱՅԱՆԵ. Ճանապարհին, երբ Հայաստանից դուրս եկաք, Վրաստանից, Ադրբեջանից, Ռուսաստանից էլի՞ միացնում էին մարդ:

ՌՌՌՍՍՈ. Վրացիայերը առանձին էշելոնով կգային:

ԳԱՅԱՆԵ. Ձեզ չէին միացնում նրանց:

ՌՌՌՍՍՈ. Ձե, որտե մի 20-30 վագոն իրանց հաշվարքն է, էդ էր էլի: 13 000 ընտանիք: Հայաստանից, Վրաստանից հայեր, Ադրբեջանից հայեր, ընտեղ էնկավեդեի կազմը ռուսներ էին, ուկրաինացիներ, վրացիներ էին: Բայց արտոբյայների մեջ վրացի ու ադրբեջանցի չկար: Չկար, չկար, արտոբված չկար, չկային: Մարդակեր Ստալինը... Ընտեղ տեղում կային վրացի, էնկավեդեի ծառայող: Ռուսներ... նրանց մեջ էլ լավ մարդիկ կային: Ռուս տղաների մեջ էլ լավ մարդիկ կային: Հայրս, որ մեղվապահ էր, օլշաննիկ էր կոչվում, գետնափոր, որ չսառի, էլի, բիդոնների մեջ, որ լցնում էր մեղրը, դա ոնց որ ձյուն, ձյուն էր դառնում: Գալիս էին. «Ну что, папаша, медком угодить нас?» [Դե ինչ, հայրիկ, մեղր կհյուրասիրեն:] Հայրս էլ հյուրասիրում էր մեղրով, պետական մեղրուներ էին: Առաջընթաց գնաց գործը հայրիկիս: Բազմացրեց:

ԳԱՅԱՆԵ. Ի միջի այլոց, ձեր հայրը ռուսերեն որտեղ էր սովորել, որ սկսեց դաս տալ:

ՌՌՌՍՍՈ. [19]33 թվին Երևանում: Առաջին շրջանավարտներից է եղել Երևանի մանկավարժական ինստիտուտի:

Հասանք... Բառնաուլը անցանք, Օրդալեսկ, 120 կիլոմետր է: Եկավ էդ կոմենդանտ պոեզդա, ասում է. «Еще 120 км надо ехать вам» [«Դեռ 120 կմ պիտի գնաք»]: Բառնաուլ կայարանից շարժվեցինք, տափաստանի մեջ կանգնեցրին: Դա մի հինգ ժամ տևեց: Առաջ պարավոզներ էին, դանդաղաշարժ: Գնացինք, իջանք, մեծ տափաստան էր: Ացեալենի կանգնավ, ավտոմատներով, իջացրին, ասին՝ նստեք, ոչ որ ոտքի վրա չկանգնի: Բոլորին նստեցրեցին: Ու ձեռքով դեպի հակառակ կողմը, որ գնացքին էլ չնայես: Որ չտեսնես: Իջացրեցին: Գնացքը շատ հեռու գնաց կանգնավ, մեքենաները էկան: Մեքենաները էկան, արդեն հաշվարկը արել էին, որ սովխոզին քանի մարդ պիտի տան: 50 ընտանիք մի տեղը, 50 մի տեղը, ու էդպես բաժանեցին սովխոզներին: Սվեկլասովխոզ, Սվինասովխոզ... էդպես բան:

ԳԱՅԱՆԵ. Ձեզ ու՞ր տարան:

ՌՌՌՍՍՈ. Ալեյսկ: Ալեյսկի պեկլասովխոզ: Գնացինք... Տարան Սվեկլասովխոզ, առաջի տարին: Գնացինք շուկա: Հիմի Սեմիպալատինսկից բերում էին, Տաչկենտը ավելի մոտ էր ընտեղ, էլի՞ խաղող, հատը երկու կոպեկ: ԳԱՅԱՆԵ. Մի հատիկը, ոչ թե գիլեն:

ՌՌՌՍՍՈ. Շարիկը, մի շարիկը՝ երկու կոպեկ: Որեմը գնացինք շու-

կա, դե մեր հայերը հասիկով, գրանով բան չեն առնում, չէ: Էդ ուզբեկի հետ հայրս խոսեց, ասում է. «2 кг винограда, дай» [«2 կգ խաղող տուր»]: Սա զարմացավ: Ասում է. «дай, дай» [«տուր, տուր»]: Խաղողը առանք, սկսինք ուտել, մեկ էլ մի բեղավոր հասակով մարդ էր, գյումրեցու գլխարկը սպիտակ գլխին, երկար պալտոն [վերարկուն] հագը, էկավ, ըսավ. «Տղա ջան, որտեղացի ես»: Հայրս ասավ. «Լենինականից»: «Չէ, ասա Ալեքսանդրապոլ»: Չէր սիրում Լենինին, էլի: Ստալինի հետ մի կամերայում նստած է էղել Կրասնոյարսկում: Հին հեղափոխական էր, թե՛ ինչ, արտրել էին: Շախրազյան Վրոժ: Գյումրեցի էր, բնիկ գյումրեցի: «Ես գյումրեցի բառը չեմ սիրում, ոչ էլ Լենինականը, ասա՛ պեքսանդրապոլցի: Գնանք մեր տուն»: Տարավ իրենց տուն: Արդեն ցուրտ էր: Մեպտեմբեր ամիսը, ընտեղ արդեն ձյուն էր, Սիբիրում: Գնացինք իրանց տուն, կնոջը կանչեց, ծանոթացրավ, ըսավ՝ это мой сын: «Сослали его из Армении, из города Александрополя» [«Որդիս է: Հայաստանից են արտրել, Ալեքսանդրապոլ քաղաքից»]: Հետո հյուրասիրեց, հաց դրեց. խոզի սալ՝ ճամփին, հաց, սամոգոն: Բերեցին, ըսեց՝ նստեք: Բայց ցուրտ է արդեն, ես էլ մի հատ հին տելեգրեյկա ունեի, բանով կարած: Ասավ. «Мой внук замерзает»: Ասավ՝ «թոռս մրսում է»: Էս շորը, էս շուրան [սկ. 36]: Բերեց... այ, էս էլ... «Հավերժ հիշատակ մանկությանս»: Շուրան տվեց ինձ ու հուզվեց: Ասավ. «Мой сын утонул». Река Алея [Алей] [Ալեյ գետն է] ընտեղ протекает [հոսում], էլի: «Мой сын утонул, а шуба на память висит, одевай на здоровье, чтоб бог дал тебе здоровье, ты бы не замерзал. У тебя жизнь еще впереди. Будет в окне свет» [«Որդիս խեղդվել է, իսկ մուշտակը ի հիշատակ կախված է, բարով հագնես, թող աստված քեզ առողջություն տա, որ չմրես: Կյանքդ դեռ առջևում է: Մի լույս կբացվի»]: Էդպես էդ մարդը մեզ մեծ օգնություն ցույց տվեց: Դե ինքը հին բնակիչ էր, ծանոթացրեց: Մենք էլ, որ էնկավեղեհից գալիս էին, մեղր էին հյուրասիրվում, բան, արդեն ոնց որ դավերիա [վստահություն] էինք ձեռք բերել, էլի, թուլատրում էին մեզ գալ, 30 կիլոմետր էր ճանապարհը: Պարոմ [լաստանավ] կար՝ լողկաներից [նավակներից] պատրաստած, մի ամիս, կամուրջներ չկար, տրոսներով [ճոպաններով], գալիս էինք: Մեղր էինք հյուրասիրում, բերում դրանց: Էդ ժամանակ էդ մարդը արդեն 78 տարեկան էր: Ծանոթներ ուներ: Մեզ թուլատրեցին գնալ, ծանոթներին գյուղերում կհանձնեինք [մեղրը], դրա համար շատ մարդու ճանաչեցինք:

ԳԱՅԱՆԵ. Ձեզ որտե՞ղ տեղավորեցին:

ՌՌԻՍՍՈ. Բարաքներ: Գետնափոր, սաման կա՝ կավն ու սալուման [ծղոտ] խառնում են իրար, ոնց որ հիմա ամերիկական պլիտաները [սալիկները] կա՛մ, էդ չափի, սաման: Դրանցով շարում էին, ու, պատկերացրեք, տաք էր, տաքությունը պահում էր, դե, ռուսական պեչերեր էր մեջը: Վերևը սալոնով ծածկած կրիչ [կտոր]: Հետո մի տարի էնքան ցուրտ եղավ, որ

Նկ. 36. Ռուսոս Աբրահամյանը
հոր հենք սիրիդյան արքայում
(ընտանեկան պրոֆից):



օղին սառչեց: 45 աստիճան: Այո, օղին խանութներում սառչեց: Փոքր խոզեր էին, հորթուկներին, հավերին բերում էինք ներս, էդ վիճակում վառում էինք՝ անասունի հետ: Պատկերացրեք, ամենադաժան բանն է դա:

ԳԱՅԱՆԵ. Մի բարաքի մեք մի ընտանիք էր ապրում, թե՛ մի քանի ընտանիք:

ՌՌԻՍՍՈ. Մի բարաքի մեջ երկու ընտանիք, երեք ընտանիք: Մեր ապրած տեղը երկու ընտանիք էր: Էդ Հոռոմսիմն էր՝ իրա հարսի ու տղայի հետ, մենք էինք, ես ու հայրիկս էդ ռուսի հետը, հետո... տղին 25 տարի տվեցին, էդ տղային դատեցին, 25 տարի տվեցին, էդ մարդը մահացավ ընտեղ:

ԳԱՅԱՆԵ. Դա էն տղան էր, որ ինքն էլ էր Դրոյի գորքում ծառայել:

ՌՌԻՍՍՈ. Հա: Մենք [19]54 թվից ազատվեցինք: Ընդհանուրը՝ երբ որ Ստալինը սատկավ, Բերիային բռնեցին, [19]56 թվին Խրոյշչովը ընդհանուր ամնիստիա արեց, բոլորին՝ բանտերից, արքորավայրից բոլորին ազատեցին: Մենք [19]54 թվին ենք եկել: Հա, [19]51 թվից սկսել են բողոքել: Նորայր Սիսակյանը եղբորս կանչում է, ասում է, դուք գրեք, թե ինչի՞ անմեղ տեղը ձեր հայրիկին արքորել են: Էս երկու ֆրանսավիկ եղբայրս արդեն ըստեղ են վերադարձել: Էս եղբայրս Սիսակյանի օգնությամբ Մոսկվայից է գրել՝ Գերագույն խորհուրդ: Ընտեղից թողթ է գալիս՝ վերանայել գործը: Արվիար Արվիարյանը ասում է. «Ես ծանոթ եմ էս գործին: Էդ մարդուն անձամբ ճանաչում եմ», հորս հետ նույն դասարանում է սովորել: Երաշխավորություն է տվել: Հանրապետական դատախազը մեզ... ու մինչև ստուգին... էս էն... երկուսը սաթկան [նկատի ունի՝ Ստալինին և Բերիային], նոր ժողովրդի բախտը ժպտաց, էլի: Ընդհանուր [19]56 թվին: Իսկ մենք [19]54 թվին էկանք Մոսկվա: Օրենքուրգ քաղաքով, Տոմսկով:

ԳԱՅԱՆԵ. Տոմսերը դու՛ք առա՛ք:

ՌՌԻՍՍՈ. Իրանք տալիս էին: Ընտեղից տոմսերը առնում էին, բերում վագոն, ճանապարհ էին դնում, պետության հաշվին էր:

ԳԱՅԱՆԵ. Էն տեղում, որ դուք մնում էիք, դպրոց կար:

ՌՌԻՍՍՈ. Կար: Նույն պապյոլկում [ավանում], 3 կիլոմետր հեռու տանից: Ձյունը, որ գալիս էր, երկու մետր ձյուն, ծածկում էր էդ տները բոլորը: Վագրելիչ կար, հին, բելագվարդեյեց՝ Չինաստանում կոված: Երկար մորուքով մարդ էր դա: Երկար փայտ ուներ: Մեր ծխնելոյզը, որ երևում էր, խփում էր ծխնելոյզին, բղավում էր, խփում էր, թե էդ տունը որտեղ է: Պաղկոպ էին անում, սաղը, թունելներով, ոնց որ խրամատները՝ մի վեց-յոթ մետր խրամատ, էդպես բարձրանում էին, մեկը մյուսի տները գտնում էին: Մենք ձյուն էինք հալում, ձյուն էինք խմում, հնարավոր չէր դուրս գալը: Սառչում էր ամեն ինչը: Ամբողջապես տան մեջ տեղավորվում էինք, սենի, կոչվում էր սենի, կարիդոր, էլի, էդպես, փետն էինք դարսում դրա մեջ, հայերը ընտեղ աթար էին անում, ռուսները գարմանում էին, կիզյակ: Մեզանից սովորեցին աթար վառելը ռուսները: Ընտեղ առաջին դասարան նստեցի: Նեմեցներ էին դասատուները, նեմեցերեն շատ լավ եմ տիրապետել: Տարբեր ազգեր էին, ու բոլորը համերաշխ: Կալմիկ, թաթար, հայեր, ռուսներ, ուկրաինացիներ, պոլյակներ, կորեացիներ: Ամերիկյան, որ կոխվ էր անում [19]48 թվին Կորեայի հետ, ամերիկացիները, դրանց գերիները, բոլորը, Սիբիր էին բերել: Ամենադժվար տեղը Սիբիրն էր:

ԳԱՅԱՆԵ. Իսկ դուք գիտե՞իք, թե ամեն մեկը ինչու՞ է այդտեղ հայտնվել, դատվածության հոդվածը:

ՌՌԻՍՍՈ. Ուկրաինացիք, ռուսները պոլիցայներ են եղել, մատնիչներ:

ԳԱՅԱՆԵ. Պատերազմի ժամանակ:

ՌՌԻՍՍՈ. Այո, պարտիզաններին են մատնել, ռուսական զորքին են մատնել, դեզերտիրները փախել են բանակից, նրանց են արքորել: Չեչենները նեմեցներին են ուզեցել դիմավորել, չեչեններ կային, ինգուշներ, լեզգիներ: Թաթարները ուզեցել էին Ղրիմում նեմեցներին դիմավորել, դրանց բոլորին արքորել էին: Հայերին համազոր էլի, հայերին էլ դավաճան հանեցին: Որ հայերը միշտ լավ մարտնչող, նվիրված են էղել, բայց Ստալինը ու Բերիան մեր զորավարների գլուխներն են կերել, հայերինն էլ:

Նժդեհը եղել է էլի հայրենասեր մարդ: Եթե Անդրանիկը մնար, Անդրանիկին էլ կվերացնեին: Նժդեհը մահացել է [19]55 թվականին Վլադիմիրով կա՛ք քաղաքական բանտում, Մոսկվայից 130 կիլոմետր հեռու: Նրան մատնել են հայերը Սոֆիա քաղաքում, Բուլղարիայում, [19]44 թվին: Նրան մատնել էին հայերը՝ թե սենց սպարապետ մարդ ունենք: Բերել են հանձնել Ստալինին: Նա առաջարկել, ասել է. «Ես կողմ եմ Սովետական Միության

նը, հայ ազգին»: Բայց որպես թշնամի, հայկական գվարդիա կար: Էդ էր հայերի... վայ հայ, վայ հայ: Լավ հայ կա, վայ հայ էլ կա, ինչի՞ չէ, ինչի՞ չէ: Մեր զորավարները՝ պարծանքը աշխարհի: Բաղրամյան, Իսաևով, Բաբաջանյան, ԽանՖերյանց՝ Խուռյակով: Ո՞նց էդ մարդուն, զրպարտելով, [19]50 թվականին են գնդակահարել: Խուռյակովին հայերը չեն սպանել: Քննիչը, որ կանչում է քննության, աթոռը ջարդել է գլխին Խուռյակովը: Տարել ու գնդակահարել են: Գիրքը կա: Չէր խոսվում, չէր խոսվում: Բայց դե, երեքի-նը [Հայկական լեգեոնից] լավ հիշում եմ, հանդիպեցի էդ երեքին, որ արքունից եկան: Թե ինչ պատճառով իրար ընտել մատնություն արեցին, անհայտ մնաց: Մեկը եկավ վողխոզում, Ս. անունով, աշխատավ գլխավոր հաշվապահ: Գ. կար, Գ. աշխատավ պահակային, էդ կոմբինատում, Պ. գյուղի մարդ էր: Թե ո՞նց էին իրար մատնել:

ԳԱՅԱՆԵ. Այնտեղ չէին ծեծում, չէին ստիպում իրար մատնել:

ՌՌԻՍՍՈ. Չէ: Թե իրար մատնել են ընտել, հիմի թե Հայաստանից էր էդ մատնությունը էկել... էդ էլ կա: Մատնիչը մատնիչ է մնում, էլի: Թե Հայաստանից էր եկել, որ էդ մարդիկ էդ մարդիկ են: Ըստեղ մենք արքունից, որ վերադարձանք, Ե. Վ. կար, X գյուղից, նա էլ մատնեց: Նրա տղան դպրոցի դիրեկտոր էր: Հայրս, որ գովաբանում է Անդրանիկ զորավարին, սա ասում է. «Այ մարդ, դու արքունի էլ գնացիր, չվերջացավ: Էկար, էլի էդ դաշնակյան կգովաբանեն»: Դաշնակ է անվանել Անդրանիկին: Հայրս փայտը տալիս գլուխը սրա ջարդում է: Բռնի սաղ կա [Գյումրիում], հիմա «Ֆլամինգո» է [սրճարան]: Մեծերը հավաքվում էին, շաշկի էին խաղում, ես էլ կողքը նստած եմ: Հավաքվում էին՝ շաշկի, նարդի, տամա: Միլիցիապետ Անդրանիկ կար, Ահարոնյան Անդրանիկ, ախպար էր: Լավ մարդ էր, գիտե՞ս: Տես, էլի լավ մարդիկ, ճիշտ մարդիկ կային: Դրա գլուխը հայրս փայտով որ ջարդեց, եկան միլիցիա տարան, ես էլ էլա գնացի հայրիկիս հետ: Բայց եղբայրներս արդեն հեղինակավոր էին քաղաքի մեջ, դասատուն էր, վերջը: Ճիշտ է, մենք արքունի տղանք, զրկանքով ապրեցինք, բայց հանցագործություն էտող չեղավ: Բոլորը իրանց մակարդակով աշխատեցին, ավարտեցին բարձրագույն: Տարան ընտել, ըսավ՝ ինչ է պատահել: Սրա տղեն է էկել, հավաքվել են, վայ-վո՛յ: Ըսավ. «Այ մարդ, էս մարդը իրան թուրը կրել է, ինչո՞ւ էս էս մարդուն անպատվում, չէ որ արդարացրել ենք, ինչի՞ ես ասում՝ դաշնակ»: «Անդրանիկին գովաբանում ա էս մարդը»: Չորավար Անդրանիկի քրոջ տղան՝ Վրեժը, «Ուտիլի» դիրեկտորն էր ըստեղ, Լենինականում: Հայրս ոչ մենակ ռուսաց էր դասավանդում, պատմաբան էլ էր, կյանք տեսած մարդ էր: Անդրանիկին տեսել է անձամբ: Հորեղբոր տղան էղել է Անդրանիկի գրառուն, Լևոնը Առաքելյան: Լավ հուշանվեր կար՝ պորտսիգար արծաթից, վրան գրած էր. «Անդրանիկ զորավարից իմ գրառուին»: Էդ Լևոն Առաքելյանն էլ ժառանգ չուներ: *Ապրեկաների ուսրալ-*



Նկ. 37. Պրուդոն Սուքիասյանը՝ զինվորական համազգեստով, բռնադատված հորն ու եղբորը արտորավարում այցելելիս (ընտանեկան այբումից):



Նկ. 38. Սուքիաս Աբրահամյանը՝ շրջապատված որդիներով:

լենինում [ղեղատների վարչությունում] գլխավոր հաշվապահ աշխատեց, գրագետ մարդ էր: Դրանք, որ իմացան, որ ինքը Անդրանիկի հետ է էղել, տուն տվեցին: Խորուշնովի ժամանակներն էր, տուն տվեցին: Վախենալու էր Անդրանիկի մասին խոսելը, բայց հայրս... բոլոր բաները պահում էր Անդրանիկ գորավարի մասին, տես, ինչքան բաներ ունի: Ես անընդհատ դրանցով եմ զբաղված: Ջորավարները, ազգի սիրված գավակները, հայրենասերները՝ դրանցով եմ զբաղված: Էն թավաքյալի մարդկանցով չեմ զբաղվում: Տարան հորս ուտիկանություն, եղբայրներս իմացան եկան, էս Ավո եղբայրս, ինքը բավակահին շրջապատ ուներ, մանկավարժ է, ռուսաց լեզվի մանկավարժ, եղբայրներս եկան, չորսը ըստեղ էին, եկան՝ էս ինչ բան է, ինչ կոիվ դավի: Դրանց դպրոցի դիրեկտոր տղան վախեցավ: Երանք, որ տղեքին տեսան, վախեցան: Ասեցին՝ օ-օ, էս Աբրահամյանը... էս Ավետիսյան Ավետիքի հայրն է: Էդպես հաշտեցրին, ասին՝ գնա, քու պատիժը դու ստացար, որ անպատվել ես էս մարդուն: Ըտենց հաշտեցրին, անցավ գնաց: Ասի՝ մարդիկ կային, որ ուզում էին նորից իրանց ստալինյան ռճով մարդկանց... ազդեցություն թողնեին վրաները, վախեցնեին:

Հայրս էղել է հայրենասեր ճշմարտացի մարդ: Դաշնակ չի էղել: Անկուսակցական անձնավորություն է էղել, մանկավարժ մարդ... Ուրեմն պատերազմի ժամանակ... Սադախո լսել էք: Հիմա էլ կա Սադախուն: Հայրս թիկունքային ծառայության մեջ է էղել *интендантская служба*. Ըստեղից թություն են տեղափոխել, շորեր են տեղափոխել, որ ֆրոնտ ուղարկեն:

ԳԱՅԱՆԵ. Իսկ իրեն ֆրոնտ չե՞ն ուղարկել: Ի՞նչ պատճառով:

ՌՌԻՍՍՈ. Մենձ է էղել, բազմազավակ հայրերին չեն տարել: Եթե, ասենք, կամավոր էլ է էղել, որ գնա, մի կերպ թողել են:

ԳԱՅԱՆԵ. Սա հայրիկի անձնագիրն է:

ՌՌԻՍՍՈ. Հա:

ԳԱՅԱՆԵ. Ո՞վ է այս նկարը կպցրել [տես նկ. 9]:

ՌՌԻՍՍՈ. Ես: Պասպորտը հանձնելու ժամանակ, հայրս, որ [19]74 թվի հուլիսի 6-ին մահացավ, հանձնելու ժամանակ պասպորտի սեղանի պետին ասի՝ էս որպես հուշ մնա, նկարը իսկական հանեցին, ես էս նկարը կպցրեցի: Ըստեղ գրանցումն էլ կա:

ԳԱՅԱՆԵ. Հա, գրանցումն է ու Ձեր անունն էլ կա, որովհետև Դուք էիք միայն հետը:

ՌՌԻՍՍՈ. Է, ինչ կրնար էղներ: Եղբայրներս կրնային լավ կարյերաներ էնեին, բայց էդ արտորը խանգարեց: Էս եղբորս, որ լյոտչիկի ֆորմայով էր, նկարը ցույց տվեցի [նկ. 37], իրան ասել էին՝ «Откажись, отречься от отца, будешь продолжать учиться» [«հրաժարվիր հորիցդ և կկարողանաս ուսումը շարունակել»]: Ասել էր՝ «нет» [ոչ]: Հայրիցդ, – ըսել էին, – հրաժարվի: Ըսել էր՝ *նեկ*: Ըդպես ստորություն էլ էին արել էն ժամանակները [նկ. 38]:

Սերգեյ Խուրշուդյանի [նկ. 39] հետ զրույցն իր տանը՝ Գյումրիում՝ 1988 թ. երկրաշարժից հետո տեղադրված տնակում, 2012 թ. հունիսի 12-ին գրանցել են Գայանե Շագոյանն ու Լևոն Աբրահամյանը:

ԽՈՎԱՐԱՐԻ ՊԱՀԱՊԱՆ ՇԵՐԵՓԸ, ՈՐԸ ԿՈՏՐՎԵՑ ՍԻՔԻՐՈՒՄ

ՍԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Հայրս՝ Մելսակ Խուրշուդյանը, ծնվել է 1905 թվականին Մուշի Գավառի Խաս գյուղում, մայրս ծնվել է էլի Մուշի Բուլանդիս շրջանում 1913 թ.: Ուրեմն սկսվել է հայ-թուրքական պատերազմը, երիտթուրքերի և Աթաթուրքի՝ Քյամալ փաշեն, Մուսթաֆա Քյամալ փաշեն էղել է ղեկավարը: Երիտթուրքերը, ատամները սրած, սկսել են կոտորել մեր ժողովրդին: Արևմտյան Հայաստանից սկսին քոչել, փախնել, բան էնել, վերջը՝ կյանքը թանկ է: Հետո հայրս կըսե, երբ որ ներս կմտնեին, կըսեին՝ Մուշլի ատամ վամ, դա կնշանակե՛ր՝ մշեցի տղամարդ կամ ձեր տունը, էդիկ թուրքերեն է: Ու, եթե կտեսնեին, որ կխաբեին՝ ողջ բանը կկտրեին: Էն ժամանակ քողերի հետ էին, կապրեին, և որոշ մարդիկ հայրենասեր են էղել, չեն ուզեցել էդ երեխեքը մորթվին, պահել են, բայց հետո հրաման է էկել՝ ով, որ ենթադրենք կը, հայի երեխա, հայ կպահե, ուրեմն՝ վերջացավ, իրա հարցը կլուծվի: Երբ էկել են Խաս գյուղը, սկսվել է կոտորածը, վառելը... իմ հորս ծնողներին... Երբ որ լցել են գոմերը, հետո պաժառ են տվել, էս քույրը, մեծը՝ Մարիամը, Մարոն, որպեսզի իրա



Նկ. 39. Սերգեյ Խուրշուդյան: Լուսանկարը՝ Լևոն Աբրահամյանի:

փոքր եղբայրը չվառի, գոմում անցքեր կան, որ ասենք գոմաղբը, ջրի հետ (դուրս գա): Որ կանցնի էդ անցքը, ինքը (հայրը), որ փոքր տղա է էղել, ասել է, մի կերպ էդ անցքից դուրս հասնենք էդ երեխուն, մենք մահանանք կը, վառիք կը, ինչ կեղևինք, գոնե էդ երեխեն ազատվի: Հետո էդ երեխեն դուրս գուկա: Մի հաստ քուրդ կին կանցնի, երբ կտեսնի երեխուն, ձեռը կբռնե՝ տուն կտանի ու կպահե: Ամիսներ կանցնին: Հետո նորից հրաման գելի, որ մարդը, ով կպահե ազգությամբ հայ, լինի երեխա, ուրեմն ինքը անմիջապես կենթարկվի կը գնդակահարության: Էս քուրդ կինը, վախենալով իրա ընտանիքի ոչնչացումից, ինքը էդ երեխային մի գիշերում, էն ժամանակ ինչ շոր պիտի էղնիր, փոստ կեղևի գառի, կապեն կը մեջքին, ոտքին, հետո տանի կը Մեղրագետ կա, հոսի կը կակ ռազ էդ Մուշ գավառով, էդ գյուղով՝ Խսա գյուղով: Կտանի՝ էն կողմը կեղևին ռուսական կազակները, գրանից կեղևի՝ սահման: Էն կողմը կեղևի ռուսական կազակները, էս կողմինը կեղևի Թուրքիայինը: Ռուսական կազակներն իրանց վրաններով էղտեղ իրանք կպաշտպանեն էդ սահմանը: Իրանք հեռադիտակով որ կնայեն, կտեսնին՝ մե երեխեմ նստած գուլա՝ էստին, էնտին: (Լուում է, փորձելով ճնշել հուզմունքը) մե քաջ հեծյալմ ջուրը կմտնի, գետը, ու կերթա վերցնե կը էդ երեխուն ու իրանց ափը կտեղափոխե: Հետո կստուգեն, տեսնին կը, որ երեխեն քրիստոնյա է, սուննըտած չէ, թուրք չէ, պահեն կը մոտները...

Պատերազմի ժամանակ էկավ, որ կըսեին՝ սին պուկա՝ գնդի որդին: Ինչ էնեն-չէնեն, զբաղված են, տանին կը պովարի մոտը՝ խոհարարի: Խոհարարն էլ մե բարեսիրտ մարդկային մարդ կեղևի, ազգությամբ ռուս: Էրեխեն ինչ պիտի էնե ընտեղ, էսիկ բեր, կռուշկեն (բաժակը) բե, շերեփը բե, դանակ բե, գդալ բե, էդպես իրանց, հենց կուխնու (խոհանոցի) մեջը, էդ երեխուն պահեն կը, սահագին կպահեն, դե երեխեն էդ ժամանակ կաճի, մեծընա կը: Հետո հրաման գուկա, որ Ռուսաստանում արդեն ընդլուցիա (հեղափոխություն) է, իմպերատորը գորքը հետ կկանչե: Երբ որ գորքը արդեն կքաշվին գուկան, գուկան Լեննականի Կազաչի պոստը: Իսկ Կազաչի պոստը մնան կը էնքան ժամանակ, մինչև որ հրաման էղնի, որ պիտի արդեն սովետական կարգեր հաստատվի, ընդլուցիա է սկսվել, Շիկոլայ Երկրորդ թագավորի ժամանակ... Վորչենմ, հետո երբ որ արդեն հրաման կեղևի, որ մեր Գյումրվա Կազաչի պոստից էդ գորքը պիտի նորից տեղափոխվի Ռուսաստան՝ պաշտպանության համար, էս մարդը՝ անունը իմ անունիցս կեղևի, Սերգեյ, ճիշտ է, Սերյոժա է պասպորտով, Սերգեյ է անունը՝ պովարի (խոհարարի): Էս պովարը, ինչխ ըսեմ՝ բարեգուտ, բարեսիրտ մարդ կեղևի, էդ երեխային որպեսզի բան չեղնի, ինքը կտանե կհանձնե Պալիգոնների որբանոցը:

Նույն բախտին կարժանանա մայրս: Էդ ժամանակ, որ (թուրքերը) մտնին կը գյուղ, էդ Բուլանըխ րայոնը կսկսվի ջարդը: Կըսե՝ ներս կմտնեին

թուրքերը, առաջինը կհարցնեին՝ կնիկմարդ կամ, տղամարդ կամ: Չէին հավատա, գուկային՝ անգամ էդ խոտի դեզերի մեջ պայ կմտնեին հայ էրեխեքը, իրանք էդ խշտիկներով բան կէնեին [կատուգեին]: Իրանք մեր ազգը անխնա կոտորեցին, չհարցրին մեծն ու փոքրը, չհարցրին՝ ծերունին ու երեխան: Հետո մորս հորեղբոր տղան կեղևի Աստրանիկի զինվորների մեջը: Կըսե՛ մեզի բերեց հասցրեց մինչև անվտանգ տեղ, էկել են մտել Ղարաբաղ: Ղարաբաղից, իրա պատմածով, էկել են մեր Մայր տաճարը, Էջմիածին: Սաղ, ինչխ ըսեմ, փրկությունը գտել են Սուրբ Էջմիածնա վանքի մոտը: Հարյուրավոր, հազարավոր մարդիկ էկել են էդտեղ, էդ փրկվածների մի մասը տվի է մատնվե, մի մասը՝ հիվանդության, մի մասը՝ բան... Էդպես գրգանքներով ու տառապանքներով, վերջը էկել են: Ընտեղից ամերիկական բան [միսփոնտեր] է էղել, ինչ էր անուրը՝ միս Մագա: Ուրեմն էստից մորս էլ կտանին Սևերսկու որբանոցը, հիմի էդ շենքը կա, ես գնացել եմ էրկու տեղն էլ: Էդ շենքը հիմի իրանց վարժարանն է, օֆիցերների կպատրաստեն: Էդ շենքը կակ ռազ մայրս խնդրեց մեզի հարևան կար մի էրկու, երեք կին, մայրս խնդրեց, թե՛ Սերոժ, մի օրմ մեզի տար էդ Սևերսկին, որտեղ էղել է մեր որբանոցը: Գնացի, վայեննի տեղ է, ընտեղ կարաուլ [պահակագոր] կա կանգնած, պահակ կա, պահակակետ կա, խնդրի, ըսի, թե ես էսպես մե հարցովմ եմ էկե: Ըսավ, թե՛ ես ձեզի չեմ կարող օգնել, բայց դուք պիտի գնաք շտաբը, շտաբից թույլատրություն վերցնեք, նոր գաք, որ մենք թողնինք: Ըսի՛ էն երեխաները, որ թուրքի ջարդից փրկվել ու էկել են ստեղ ու փոքր են էղել՝ իրանց տեղափոխել են որբանոց: Մայրս ու երեք կին կար, որ էդ որբանոցն էին էղել, գնացին, թույլատրություն տվեցին [հուզվում է, աչքերը ձեռքով ծածկում է, լռում է, հավաքվում ու մի փոքր ձայնը դողացնելով՝ շարունակում]՝ ներս տարան, իրանք էդպես նստարաններ ունեին, որ զինվորները գալիս գրում էին, չէ՛, կակ ռազ էդ տեղն էր՝ իրանց որբանոցը: Իրանք, նստան էն տեղերը, դրոնք... [հուզվում է] նստել էին:

ԳԱՅԱՆԵ. Այսինքն՝ ներսը նու՛յն ձևի էր մնացել:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒԻՇՈՒԴՅԱՆ. Հիմի էլ կա: Երկուհարկանի շենք է, էն ժամանակ որբանոց էր, իսկ էստեղանց որբանոցը էղել է հիմիկվա կակ ռազ մեր վայեննի բանը, որ կա, մեր գորքն, որ ըղտեղ է, շարունակությունը էդ շենքերի մեջ էղել է որբանոցներ: Երբ որ Ռուսաստանի գործը հետ է քաշվել, էդտեղ էղել են հայկական որբանոցներ, հազարավոր մարդիկ, հազարավոր մարդիկ՝ տղաներ, թե աղջիկներ, որոնք որ կենդանի են մնացել, բոլորն էղել են... Պալիգոնում էղել են տղաները, իսկ Սևերսկիում էղել է աղջիկների որբանոցը:

ԼԵՎՈՆ. Հիմն էլ է գորամաս:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒԻՇՈՒԴՅԱՆ. Հա, գորամասեր են՝ հայկական, էրկու

նոց, առաջին հարկը էղել է ինտուրիստ, արտասահմանի հյուրերը էղտեղ են ճաշել, ինքը էղտեղ է էղել մինչև պատերազմը որպես շեֆ խոհարար: Հետո ինքը էղել է վարպետ-դաստիարակ, գնացել է գորամասեր, նմուշ է ճաշերի վերցրել, հետո իրան տարել են ամենապատասխանատու տեղ, մեր օդաչուների (համար խոհարար): Ավիապորտ է էղել էստեղ, որտե մենք քաղաքացիական սամոլյետ չենք ունեցել, պատերազմի սկզբից էղել է արդեն իստրեբիտել [կործանիչ], իրան տարել են ավիոպորտ, ինքը էղել է էն անձը, որը կերակրել է լյուտչիկներին [օդաչուներ], որ չթունավորվին, վատ չեղնին:

Հունիսի քսանմեկին ինքը գորակոչվել է բանակ, իրան ուզեցել են պահել, քանի էղ ռուսական ավիապորտը էստեղ է էղել, [քանի] իրանք թոել են, ասել են պոլոռը անհրաժեշտ է, հենց առաջին օրից, մե հոգի մարդ պիտի լինի, որ ճաշ եփի: Էղքանը կիիշեմ. ինքը աշխատանքից հետ էկավ ու մորս ասեց, որ ինձ թուղթ գրին տվին, որ ներկայանամ զինկոմիսարիատ: Զինկոմիսարիատը էն ժամանակ էնքան լեցուն էր, որ ասելու չէ, որտե Հայրենական պատերազմի հենց առաջին օրն է, կգորակոչվին, պիտի գնան, ուրեմն երկրորդ զինկոմիսարիատը բացվավ, հիմի մենք բոլորս էլ գիտենք մեր քաղաքի այգին, որտեղ Մոավյանի թատրոնն էր: Էղ քաղաքի այգին դարձավ զինկոմիսարիատ, ընտեղ սկսին իրանց դոկումենտները տալ, ընտեղից իրանց նստեցրին մեքենաները ու տեղափոխին Գուսանագյոլ: Ուրեմն Գուսանագյոլում, նախքան բանակ գնալը ընտեղ պիտի անցնեին շորեր [ստանալու]: Էղտեղ իրանց գրաժդանակի [քաղաքացիական] հագուստը փոխեցին: Էղտեղ վագոններ է կանգնած էղել էրկու ուսանոց վագոն կա՛ն անասուն տեղափոխող, դրանց մեջը նստեր էր զարկած ու տղոնց գլուխները խուզած [կերևար]... Մեզի ասին, որ գնացեք, ժամը էրկուսի-իրեքի կողմը արեք վակգալ [կայարան], ընտից արդեն գնացքը կանցնի: Ժամը էրկուսին մայրս մեզի հավաքեց, իրեք տղա էինք, գնացինք երկաթուղի վակգալը: Գնացքը էկավ, սաղ գլուխները խուզած՝ վանեմի ֆորմով [զինվորական համազգեստով], հիմի կանգնել ենք: Գնացքը կանգնավ, մեկը ընտից մորս անունը տվեց, գնացինք մոտիկ ու տեսանք, որ ինքն էր ու իրա պես մե քսան-երեսուն հոգի տղա:

Էղ գնացքով քառասունմեկը թվի հունիսի քսաներկուսին ժամը էրկուսին գնացքը շարժվավ դեպի ֆրոնտ, պատերազմ: Սկզբնական շրջանում նամակ չեկավ, հետո էկավ: Էն ժամանակվա նամակները դաշտային էին, կոչվին կը՝ դաշտային նամակ, պոլեվայա պոչտա: Դաշտային նամակ ստացանք՝ շատ ուրախացանք, որ կենդանի է: Գրել էր, որ պատերազմ է, ինչպես քաղաքացիական ժամանակ, էղպես էլ հիմա նա պոլար է: Ինքը պախողնի կուխնյա, շարժական կուխնյա [ուներ]. ձիերը լծած հետևը, էղ կուրը՝ ճաշի, կեփի ու էղ կոփողների համար տերմոսների մեջ ճաշը կլցնի ու կտեղափոխի տղաներին: Իրանք ճաշը կուտեն հասգստի ժամին ու հետո

նորից կմասնակցեն պատերազմին, իրա աշխատանքը էղել է ճաշ պատրաստել, իրա զենքը էղել է բանակայինի համար խոշոր շերեփը: Հետո էլի դաշտային նամակ էկավ, որ ահեղ պատերազմ է... Էն ժամանակ Սովետական Միությունը պատրաստ չէր դիմակայելու, պատրաստված, մինչև ատամները զինված ֆաշիստական Գերմանիային: Մենք ունեինք տեխնիկա, բայց դա շատ փոքր էր, շատ անճար տեխնիկա էր, իրանց տեխնիկան էնքան զարգացած էր, որ ասենք հիմիկվա ջիպը, մյուս մեքենաները էնքան արագություն ունին, որ մեր էդ ժամանակվա ինքնաթիռները էդ արագությունը ունեն, 250-260 կմ արագություն էղել է ՌԻ-ԳՎԱ, էն էրկույնանի սամոլյետները [ինքնաթիռները], որ բոմբերը [ռումբերը] կրել քցել են, իսկ գերմանական միստեր Շմիտը, իրանցը, էղել է վեց հարյուր, յոթ: Հիմի ո՞վ կհաղթե: Մերոնք կսկսեն նահանջել, կարդամ: «Таким образом, за первые 18 дней войны Северо-Западный фронт потерял Литву, Латвию и часть территории РСФСР, вследствие чего создалась угроза выхода противника через Лугу к Ленинграду, подступы к которому были еще недостаточно укреплены и слабо прикрыты войсками»¹ [Այսպիսով, պատերազմի առաջին 18 օրերի ընթացքում Հյուսիս-արևմտյան ռազմաճակատը կորցրեց Լիտվան, Լատվիան և ՌՍՖՍՐ-ի տարածքի մի մասը, ինչի արդյունքում առաջացավ վտանգ, որ հակառակորդը կկարողանա Լուգայով դուրս գալ դեպի Լենինգրադ, որի մատույցները դեռ բավականաչափ ամրացված չէին և զորքով՝ թույլ պաշտպանված]: Մարշալ Ժուկովի գիրքն է, տասնութ օրվա մեջ գերմանացին Լատվիա, Լիտվա, Էստոնիան վերցրել է, Բելառուսիան, Ռուսաստանի տերիտորիայից, ու էկել հասել է համայրա հյուսիսային մայրաքաղաք՝ Լենինգրադ, վստահելի աղբյուր է, մարշալի գիրքն է: Ու էդ քսան օրվա մեջ մարդը ոչ հերոսացել է, ոչ էլ: Որը զոհվել է, որը գերի է ընկել: Ուրեմն ինքը պովար է էղել, ինքը տարե տղոցը կերակրել է՝ ինքն էլ է գերի ընկել էդ կովոդ տղաների հետ: Իրանց տարել են համակենտրոնացված ճամբարներ, քաղաք Բերդիչև, Ոսկրահնայի քաղաքներից է: Ինքը մեր սովետական զորքին է կերակրել: Ընտեղ էլ կանչե ասել են թե ինչ մասնագիտություն ունիս, ըսել են, թե պովար է, ասել են՝ ուրեմն ճաշ պիտի եփես ձեր գերիներին, ու հայրս էղել է էդ գերիների կերակրողը: Գերիները էղել են տարբեր ազգերից, ինքը որպես պովար ճաշ է կփել, կերակրել է էնքան ժամանակ, մինչև մարշալ Կոնևի զորքն է, կարծեմ, ազատել:

Մի օր կտեսնին, որ բառակների շենքերը խառնվավ, կոիշները [կտուրները] փլավ՝ աստղերը տեսան, բայց իրանց բան չի էղնի, հետո զորքը գուկա, ազատագրվին կը ու իրանք կանցնին էդ զորքի հրամանատարության տակ: Հետո իրանց կքնեն՝ էսկոմ, էսկոմ, չեն թուլատրե, որ

¹ Жуков Г. К. Воспоминания и размышления. М.: Издательство агентства печати новостей, 1969, с. 273.

տունը նամակ գրեն, ահագին վախտ թույլ չեն տվե, բայց հետո Ստալինից գերագույն հրաման է էկել, որ էն մարդիկ, որոնք որ էղել են համակենտրոնացված ճամբարներում, պետք է մասնակցեն Ճապոնիայի կապիտուլյացիային, պատերազմին: Մարդիկ կան, որ գնդակահարվան, ով որ չարություն էր արել, ենթադրենք, լքել էր... [Իսկ] ինքը պովար է էղել, ինքը էփել է՝ մեր գերիներն են կերել, էլի մեր տղեքն են... Իմ հորքուրիս աղջիկը Կիրովական՝ ֆրանտավիկ աղջիկ է Մարզոն, Նորատունկյան Մարգարիտա... [Հորս] քուրը տարբեր ճակատագրերով հայտնվել են Կիրովականում, իրա ամուսինը էղել է ամերիկական թարգմանիչ, Մարգար Նորատունկյանը, գրագետ կիրթ մարդ է, իմ հորքուրս էլ սիրուն կին է էղել, ու ամուսնացել են, իրա ամուսինը Կիրովականից է էղել, էդտեղ մնացել են, էրեխաներ են ունեցել: Իրա մեծ աղջիկը՝ Մարզոն, մասնակցել է պատերազմին, հերոս կին է, հիմի հասակով կին է, իննըտունին մոտիկ, կա², ես մեկ-մեկ գուգեմ էրթամ իրան տեսնիմ: Երբ որ հայրս կերթա Ճապոնիա, ինքն էլ կերթա հետները, ընտից էկել են, ինձի շոր են բերե հետները, գաշխտնի գույնի հաստ մատերիալից շորեր կար: Ինքը դպրոցի ուսուցչուհի էր, հետո, կարծեմ, դերեկտոր աշխատավ, իրանք կրթված քույրեր էին, բոլոր քույրերը դասատու էին էղել՝ Մարզոն, Ալմաստը, Բավականը: Հետո որ պատերազմը սկսվել է, Մարզոն իրանց ավագ քույրն է էղել, անմիջապես ֆրոնտ է գնացել ու մինչև հաղթական ավարտը [մասնակցել է պատերազմական գործողություններին], ու հորս հետ ետ էկան պատերազմից:

ԳԱՅԱՆԵ. Ձեր հոր նամակները ֆրոնտից պահպանվել են:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԳՅԱՆ. Մինչև երկրաշարժը՝ հա, ես էնքան կափտոսամ, որ իրա ֆրանտավոյ չամադանը [ռազմաճակատային ճամպուրկը], իրա շորերը, նամակը, գդալը, բոլոր էդ կոմպլեկտը ես վերցրե պահել էի, որ մարդու ձեռ չանցնի, մենք մեր կրիշը... տունն ունեինք, ես էլ շինարար էի: Կրիշը մաքրինք, լավ բարձր էղավ, հլը հարևանները կըսեին, թե լվացքի պարաններ էղնի, երբ անձրև գա, էդպես մաքուր մնաց, մինչև երկրաշարժը էդ չամադանը կար, հետո երկրաշարժին էլ ո՞վ դրա մասին կմտածեր, էդ շենքն էլ բլին, բայց հիմի շատ կափտոսամ:

ԳԱՅԱՆԵ. Վերադառնանք ձեր մանկության տարիներին, պատերազմի տարիներին ձեր հայրը ֆրոնտում էր, դուք ո՞նց էիք «յոլա» գնում:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԳՅԱՆ. Պատերազմի տարիներին ես էնքան ժամանակ օրկեստրը նվագեցի, մինչև Հայրենական պատերազմը վերջացավ: Պատերազմը վերջացավ, ես արդեն նվագող էի, մեզի շոր կուտային, Չկա-

² Մարգարիտա Նորատունկյանը մահացել է 2013-ին, նրա մասնակցությամբ վերջին նկարահանումներից տե՛ս Մարգարիտա Նորատունկյան. հավերժ փառք // Fortuna TV Lori, մայիսի 9, 2013 <<https://www.youtube.com/watch?v=SuF3JG0X6gq>> (14.09.2015):

լովի անվան ֆաբրիկան մեզի համար կոստյումներ կկարեր մայիսի մեկի, նոյեմբերի յոթի համար: Մայիսի իննի պարադին մենք Դմիտրիյ Շոստակովիչի Մարշը նվագինք, հա հիշում եմ, ինքը գրել էր Մարշ Պոբեդի, ու Մարշ Ստալինգրադա, գրել էր Լենինգրադում բլոկադայի ժամանակ: Տենոր [սաքսաֆոն] եմ նվագել, հետո անցել եմ բարիտոնի:

ԳԱՅԱՆՇ. Այդ տարիներին ո՞ր դպրոցում էիք սովորում:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒԻՇՈՒԴՅԱՆ. Լենինական քաղաքի Պուշկինի անվան դպրոցում՝ ռուսական ուկրնով [թեքումով]:

ԳԱՅԱՆՇ. Ձեր դասարանում կային երեխաներ, ում ծնողները բանտում էին նստած, բռնադատված էին դեռ երեսնականներին:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒԻՇՈՒԴՅԱՆ. Էդ թվերին մենք սովորել ենք Գիմնագում, փոքր ենք եղել, շատ մասի ծնողներ Հայրենական պատերազմի մասնակից էին, ինչխոր իմ հայրս, իրանց ծնողներն էլ էղպես դժվարությամբ պահեցին իրանց երեխաներին: Մենք երեք տղա էինք, մեծը՝ ես, փոքրիկին կտանեի մանկապարտեզ, մյուսին՝ առաջին դասարան, հետո գուկայի տունը կիստգեի [մաքրում էի], պուր կալվեի, էդ կինը [մայրը], հորս տեղը գնաց աշխատավ: Ասին՝ երեք երեխա ունի, առաջին օրվանից ֆրոնտ են տարել, մայրս գնաց աշխատելու, ոչ թե իրա տեղը, պաշտոնի համար, այլ իրան օգնելու, էլի: Հետը օգնական աշխատավ մինչև քառասունհինգ թիվը: Ինքը արժանացավ «За доблестный труд» [«քաջարի աշխատանքի համար»] մեդալի, ինքը երկու հատ մեդալ ունիր, որպես Հայրենական պատերազմի աջակից, թիկունքում աշխատողի՝ երկու հատ ստացավ: Շոր կուտային մեզի, դպրոցական արձակուրդներին պիոներական լագեր կուղարկեին: Լագեր կար Ստեփանավան, Գյառգյառ [Գարգառ], Կիրովական, Արթիկ, Երևանի մոտ կար, կտանեին, երեք ամիս կմնայինք, բայց քանի որ փոքր էին երեխեքը, ես չէի կարող գնալ, տունը մարդ չէր լինի, էդ երեխանցը ո՞վ պիտի պահեր, մայրս՝ աշխատանքի, ես էլ կմնայի կխնամեի: Մայրս մեզի մաքուր պահեց, պատերազմի ժամանակ աշխատավ էնքան, մինչև հայրս էկավ, հետո էլ չաշխատավ:

ԳԱՅԱՆՇ. Ձեր հայրը [19]45թվին եկավ:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒԻՇՈՒԴՅԱՆ. Չէ, հետո գնաց Ճապոնիայի պատերազմին մասնակցելու, պատերազմից հետ էին էկել, քննության պես բան են անցել:

ԳԱՅԱՆՇ. Գերի ընկնելու հետ կապված...

ՄԵՐԳԵՅ ԽՈՒԻՇՈՒԴՅԱՆ. Հա, ըդտեղից սկսվավ՝ թե ո՞վ է, որտե՞ղ, ինչ է էղել պատերազմի ժամանակ՝ սկսվավ մաքրելը, ստուգելը: Շոր էղ վախտ, որ Ճապոնիայից էկել էր, հետո նոր էկավ ըստեղ ու իրա մասնագիտությամբ սկսեց աշխատել: Էկավ Սև բերդը՝ գարնիզոն ու աշխատեց շեֆ-

պովար, ըդիկ արդեն [19]48-49 թվականներն էր: Հետո սկսվավ էս կանչելը, քննելը. որտեղ էք էղել, ինչի էք գերի ընկել: Մեկը չի ընկել, այլ հարյուրավոր մարդիկ, մի ամբողջ արմիա [«գորք»]:

ԳԱՅԱՆԵ. Այսիքն՝ քննությունն էր գնում մինչև արքունիք:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒԻՐՇՈՒԴՅԱՆ. Իրան կանչում էին [19]49-ին, սկսվեց [19]45 թվից, ու շատ մարդկանց: Մորավիայի հերոս ունենք՝ Արտյոմ Պետրոսյան, արձանը կանգնած է, իրան էլ են կանչել, ֆրանսավիկ տղա, հերոս տղա, կկանչեին, քննեին...

ԳԱՅԱՆԵ. Որտեղ էին կանչում:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒԻՐՇՈՒԴՅԱՆ. ՊԱԿ-ը: Փողոց կա Սվերդլովի ու 16 փողոցի խաչմերուկում:

ԳԱՅԱՆԵ. Իսկ կանչում ու թողնում էին, թե՛ պահում էին:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒԻՐՇՈՒԴՅԱՆ. Չէ, կանչում, քննում, հետ էին ուղարկում, թողնում էին:

ԳԱՅԱՆԵ. Իսկ էդ «քննելը»՝ ուղղակի հարցեր էին, թե՛ նաև ծեծ:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒԻՐՇՈՒԴՅԱՆ. Չէ, ճշում չէ, նայած ում, ինքը էղել է պովար, հո դավաճան չէր, ինքը պովար է, ըստեղ մեր տղոնցն է կերակրել, իսկ ընտեղ՝ գերիներին: Իրա մասնագիտությունը էղել է խոհարար, ինքը քաղաքականության հետ կապ չի ունեցել մինչև վերջ, ինքը էղպես մաքուր մարդ է էղել: Հետո կանչել են, թե էս մարդուն կճանաչեն: Առաջ էսպես նկարներ կար, կըսեր՝ էս մարդուն կճանաչեն: Էդ մարդուն ես ինչիս պիտի ճանաչեմ, էն վախտ ուրիշ է էղել, ամեն մարդ իրա գլուխը կպահեր, պատերազմ էր, ամեն մարդ իրա գլուխն է մոլորել, ես էդ մարդուն ինչիս պիտի հիշեմ կամ ճանաչեմ: Էդիկ, գիտեմ ինչ, պրոստո միջոց էր, որ էս բանը էղավ, արքունիք: Ըդիկ արդեն սկիզբն էր, [19]49 թվին սկսվավ կանչելը: Կկանչեին, ժամերով կքննեին, ինչը կքննեք: Էդ մարդը արդեն բանակ էղել է: Մարշալը գրել է. «18 օրվա մեջ էդքան մարդ հետ է էկել», էլ մարդ կմնա, ոչ հերոս են էղել, ոչ էլ 18 օրվա մեջ իրանք էկե, ըդտեղ են հասե, կեսը գերի են ընկել, կեսն էլ զոհվել են, վերջացավ: Ընտնց սև թղթերը էկավ, ընտնք էլ, որ գերի էին ընկել, ըդոնց էլ նամակ չէր գա: Ըդոնց էլ կըսեին՝ անհայտ կորած են: Ըդտեղ լրիվ մաքրվել են, որ էլ կարիք չգագցվի էդ քննության: Ըշտը ինքը, որ էկավ, իրա վոյեննի բիլետը [զինվորական տամար] մաքուր էր: Ճիշտ է, էդ պոնյակը ինքը ունիիր, որ գերի է էղել, որ մասնակցել է Ճապոնիայի պատերազմին, հետո իրան արդեն թուլատրին աշխատելու գարնիզոնը, էդ Սև բերդի, նորից պովարություն արեց մինչև [19]49թվը, [19]49-ին ինքը գնաց, մեկ էլ հետ էկավ: Ուրեմն էկավ, իրա աշխատանքային գրքուկի մեջը գրած է՝ բանի պատճառով, по сокращению штата вы освобождаетесь от своего долга [ազատվում եք աշխատանքից հաստիքների կրճատման

պատճառով], ուրեմն էդ արտ-ի կրճատման պատճառով կրճատվիս կը: Հետով էկավ, ըսավ՝ «բան չկա, ինչ ընենք»: Հլն մայրս կըսե, թե՛ «բան չկա, ես կերթամ կաշխատիմ, հետո աշխատանք գտնիս կը, դու էլ կաշխատիս՝ էքսան տեղ կա որ, հմի քայքայված քաղաք է, շինարարություն է...» Բայց չիտեհիք, թե ինչ կա հետևը, ինչ կսպասվի: Էդ կակ ռազ մի շաբաթ տևեց: Էդ օրվանից մի շաբաթ մտեց...

ԳԱՅԱՆԵ. Քաղաքում ոչ մի լուր, բամբասանք էդ բանի մասին չկաիր:

ՍԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Չէ, ոչ մի լուր, ոչ մի բան չկար: Սովորական էդ կյանքով կյանքը կընթանար՝ խաղաղ, լավ: Էն ժամանակ ամեն ինչ կհագնեիք: Է, ամերիկացիք... կօգնեին... Դաժե մի անգամ անգլիացիք ուղարկել էին *բայրինկա* [կոշիկներ]՝ էսպես մեջտեղը բան կար՝ ռեզին էր դրած... Բայց տակը փետ էր: Փետը կհագնեիք... Ինչ-որ բաղնիքի սալիկներ կըսեին՝ փետից նալիկներ, չէ՛, որ կերթան բաղնիք, դուրս գուկան, փետից նալիկներ կար, էդպես նալիկով կերթայինք դպրոց: Դպրոցը սաղ կգային... կկտկտար կը: Էդիկ էլ հագանք... Հետո շոր ուղարկին՝ էդ շորերն էլ հագանք... Վերջը, ամերիկացին անգլիացու հետ շատ բան ուղարկեցին: Կեր ուղարկեցին: Ուղարկեցին փոշի՝ կաթի և ձվի: Չվի փոշին խառնեիր կը ջրով, սիրուն կլցնեիր ամանի մեջը, մե քիչմե ջուր: Հետո կկտրեիր պիրոգի պես ... պիրոգ, տորթ ...պիտղ կդառնար: Էդիկ կվերցնեիր ձեռք, կուտեիր: Հետո գազարի ջեմ էր, հետո ...չգիտեմ... վերջը: Հետո շոր ուղարկին՝ ըսպես կիսատ շորտ էր, սպես շորտչկեք՝ մինչև ծնկները: ...Էդ շորերն ուղարկին...հագանք...

Ըդից հետո, ես շամ գիտեմ, [19]49 թվի հունիսի 14-ը մտտեցավ՝ այս ամսվա, այս օրերն էր: Էս օրերն էր ինչ-որ... սպես ասեկոսներ կերթար, ինչ-որ քննություններ կերթար, ինչ-որ մարդկանց կքննեին, հետո չգիտեմ՝ ինչ կեղներ: Ինչ-որ գաղտնիք կպահեին, ինչ-որ էդ աշխատողները ըդտեղ իրանք, որ լուրը հանկարծ չգնա, իրանք անգամ տունը չէին քնի: Որպեսզի, ենթադրենք, մարդը, մարդը կնոջը կըսե. «Գիտեմ ինչ, սպես բան է էդել»: Կնիկը կգար, հարևանին կըսեր, հարևանը մեկելին կըսեր... Որպեսզի չտարածվի... Ստալինը բանտարկեց էդ սաղին, ըսավ, որ հեչ մարդ պետքա չի մանա էդ բանի մասին, որ չտարածվի լուրերը: Ըդպես բաներ կէնեին: Ճիշտ է, չտարածվավ լուրը, չտարածվավ: Մի օրմ էլ իրիկունն էկան:

Գիշերվա ժամը մեկն էր, դուռը ծեծեցին, հերս հելավ բացեց, մեկ էլ... Դե մենք քնած ենք, մեկ էլ ներս կմտնին՝ ուրեմն 2 հոգի պարտակտիվից էին, մի հատ աֆիցեր [սպա] կար, մեկ էլ մի հատմ հրացանով սալդատ [զինվոր]: Ըշտը էկան, ներս մտան, նոր զարթնանք մենք, մեզի ձեռն տվին, թե՛ «հեկեք, հագեք շորերներդ»: Ընդից էն հայ մարդը՝ Շահինյան ազգանունով, ըսել էր, թե՛ «Էրեվանսըը հագցրեք»: Մերս էլ, թե՛ «Ինչի՞ համար հագց-

ներս»։ Բա. «Էրեխանցը հագցրեք, պետք է։ Հետո կըսենք»։ Ըշտը նստան իրանք։ Ես հեղա, իմ շորերս հագա, ընդեղ փոքրն էլ հագալ, է... վերջը... 16 տարեկան արդեն տղա եմ, էսիկ էլ 12-13 տարեկան տղա է, էս մեկն էլ ավելի փոքր է, 10 տարեկան է... Հելանք սաղս, շորերներս հագանք, սկսին քննել։ Ըշտը արձանագրություն կազմեցին, հորս թե բա. «արի, ստորագրի»։ Հայրս թե. «բա ինչու՞ հմար ստորագրեմ»։ Բնչ է, էլի, պատճառը։ Հըբե. «Ձեզի էն վախտ բան չէին ըսել, ձեզի պիտի տեղափոխենք»։ Որ չըսին «տեղափոխենք»...

- Ու՞ր տեղափոխեք։
- Հետո կիմանաք։
- Ո՞ւց թե «հետո կիմանաք»։

Էս մերս, չէ՞ որ կնիկմարդ է, ըսալ. «այ քեզի բան, ու՞ր տեղափոխեք»։ Հետո հըբե՝ «պատրաստվեք»։ Հերս ըսալ՝ «ինչ պատրաստվենք»։ Հըբե. «Վերցրեք. յորդան, դոշակ, բան... չի թույլատրվի։ Վերցրեք աղիալ (վերմակ), վերցրեք դոշակի երեսը, վերցրեք բարձերի երեսը, վերցրեք աղիալ, հետո վերցրեք, ենթադրենք, ստականներ (բաժակներ), ինչ-որ էդ մե 4 հատ ստական էր, էդիկ վերցրեք, էլ ուրիշ բան չվերցնեք»։ Հագանք շորերներս, էդ վախտ ժողովուրդը շատ քյասիբ էր՝ անիլլաջ, ըդպես կարելի էր ըսել, էս մարդիկ, որոնք որ պատերազմ չէին գնացել, որոնք որ կաշվաստեին, հլը իրանք՝ ոչինչ, կապրեին, լավ կապրեին։ Բայց էս, ով որ թողել տունը, գնացել էին... հետո հետ եկալ ջարդված, քանդված, է ինչ պտի... Երկիրը քյասիբ, բայց էդպես վերցրինք... Ուրեմն մերս գերմանական «Չինգեր» մեքենա ուներ, շատ ճարպիկ էր... Ընպես կսիրեր կարել, ինչխ ըդիկ գցել էր մեշոկի մեջը՝ էդ «Չինգեր» մեքենան։ Ըսել էին, որ հեչ բան չվերցնեք՝ մենակ էդ ուտելու գդալ է, էսիգ է, ըսիգ է, այ էդքան բան։ Սաղ ընդամենը իրար հետ մե փաթաթած բանմ էղալ... աղիալ է փաթաթած... Էդքան *վեշ* էղալ մեզի։ Մենք ինչ շոր էլ հագանք, ու դուրս էրեցին տնից։

ԳԱՅԱՆԵ. Մթերք չթողեցին վերցնել։

ՄԵՐԳԵՅ ԽՈՒԻՐՇՈՒԴՅԱՆ. Հա... Ըսալ՝ ուտելիք մե օրվա վերցրեք, մե օրվա։ Ուրեմն, վերցրին... Հելանք դուրս... Արդեն առավոտվա 8-ն էր։ Հելանք դուրս, որ մի հատմ մեծ գրուզավիկ մեքենա է կանգնած՝ բեռնատար, էդ բեռնատարի վրա մե ընտանիքմ կա։ Էլի էդ փողոցի վրա մեր հարևաններից՝ իմ ընկերներից, էլի։ Բեռնատարի մեջ իրանց տեսա, մի քիչմ ինչ-որ մարդ սիրտ առնի, ասի. «Այ մարդ, ուրեմն մենք չենք մենակ, մեզի հետ էլի մարդ կա։ Ընկերություն կենենք, հարևանություն կենենք»։ Մենք ինչ գիտենք, թե ինչ պատերազմ է սկսվել, ինչ ահավոր բան է սկսվել էդ ազգի նկատմամբ։ Գենցիդ... գենցիդ... էսիգ ուղղակի, էս ինչ գիտեմ, հրեշավոր բան, որն որ, ենթադրենք, դարերը պիտի անցնին, բայց էսիգ պիտի

չմոռացվի: Ու հարցնենք կր. «ձեզի բան ըսին, թե ուր կտանեն»: Ըսավ. «չէ, մեզի բան չեն ըսել»: Է, հետո ավտոն... տեղնուց-տեղ գնացինք 3-րդ մարդկանց էլ վերցրինք: Ըսինք. «լավ է, ընկեր էղանք», չիտեմ... Ելանք Սովխոզի խճուղին՝ Թիֆլիսյան խճուղի, մեկ էլ տեսնինք ավտոշարայուներ. մեջները ընտանիքներ, տո ես շամ գիտեմ, էլ չգիտեմ, էլ ինչ, էլ... էլ պատմելու չէ, թե ինչ կա: Էդ շարայուներ գնաց, տարան մինչև Ջաջու՝ Ջաջուի կայարանը: Ջաջուի կայարանը, դու մի ըսա կանգնած է, պլանավորված կանգնած է մե խոշոր սաստավմ [գնացքմ]՝ 100 վագոնից բաղկացած: Ինչ-որ հայրս գնաց ֆրոնտ՝ էդ անասուն կրող վագոններով, էսպես էլ նույնը... Էդպես վագոն էին պատրաստել մեջն՝ ամեն 5 ընտանիքի համար: Ուրեմն էդ վագոնի դուռը կրանաս. էդ պրախողին՝ մե ընտանիքմ, էս առաջին հարկը՝ մե ընտանիքմ, երկրորդ հարկը՝ մե, [եղավ] 4 ընտանիք, 5-րդ ընտանիքը՝ գետինը: Մեզի տարան, ներս էրին էդ վագոնը, վագոնի դուռը կողպեցին, 2 փոքր լուսամուտ կար, էդ լուսամուտները մնաց: Է, էրեխա կա, փոքրներ կան, տո չգիտեմ՝ ինչ կա:

ԳԱՅԱՆԵ. Ձեր վագոնի մեջ քանի՞ ընտանիք տեղավորեց ի վերջո:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒԲՇՈՒԴՅԱՆ. Ասեմ, որ էդ սաստավով համարյա 1000-ից ավելի մարդ տեղավորվավ: Էն տվյալներով կըսեին, թե 5000 է, չէ, ինչ 5000, 50 000 Անդրկովկասի տարածքից մարդ է գնացել, 50 000:

ԳԱՅԱՆԵ. Հայ, թե՛ ընդհանրապես:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒԲՇՈՒԴՅԱՆ. Ձե, հայ՝ Ադրբեջանից, Վրաստանից, Հայաստանից: Օրջի թիվը էղել է 50000: Որովհետև ճանապարհին մեզի սաստավներ ոռատ էկավ Տոմսկում, Օմսկում, Նովոսիբիրսկում, գիտեին, որ հայերեն կխոսեին, ընդեղ հայերեն բան կէնեին, ձեռով կէնեին. «Հայ եք, հայ եք, հայ եք»: Կըսեինք, որ. «հա, հայ ենք»: Ու էդ սաստավը ժամի 2-ին արդեն տեղավորվան... Ուրեմն, հա, էդ էլ ասեմ: Դրվագներ են, որ միտքս մնալու համար լղնում է ակնոցներն ու սկսում կարդալ. «50000 մարդ Անդրկովկասյան տարածքից: Մուկուչ և բուժքույր Սեդա»: Հա, Մուկուչ և բուժքույր Սեդա: Մանկական բուժքույր էր Սեդան, մի հոյակապ կին: Ուրեմն, Մուկուչի և բուժքույր Սեդայի հարսնիքը էն Ախուրյանի շրջանի Քեթի գյուղում էր: Ուրեմն, իրանց հարսանիքն է էղել, մեկ էլ տեսնինք, էդ ավտոյով բերին ահագին մարդ, հարսին էլ բերին, փեսին էլ բերին, էդ բանը զարկած [փեսայի կրծքին ծաղիկ]... Հարսնիքից վերցրել են... Մուկուչի համար, որ ինքը բանակ է էղել... Էդ հարսնիքը տեղնուց-տեղ ընդհատել են, առել են, սաղ հարսնքավորին բերին... Էդ ամուսիններին, էլի, ամուսիններ. փեսեն ու հարսը: Քեթի գյուղից բերին: Հիմի Մուկուչը պիտի նստի վագոն, ինքը՝ որպես բռնադատված, բայց քույր Սեդան՝ բուժքույր Սեդան, ինքը ազատ է, հիմի չեն թողնի Սեդային: Ինքը գուլա. «պառկիմ պիտի գնացքի ռեյսներին»

վրա, չիտեմ, ինձի խփեք ստեղ, չիտեմ ինչ...» Ամուսնանան կը, ամուսնության հենց 1-ին օրը մարդկանց բերեցին, կոխին վագոն: Էնքան լացավ, էնքան բան էղավ, էնքան շորերը պատռեց, էնքան... Մեկ էլ գանգը տվին, թե ինչ էղավ, վերջը հաղթեց ինքն էլ հեղավ վագոն:

Ուրեմն գնացինք, գնացքի մեջ ենք: Գնացքը 16 օր գնաց, քանի օր է... Արդեն մենք Հայաստանից դուրս էկանք: Մախաչկալա, Բաքու, Բաքվից երբ որ արդեն Ռուսաստանի սահմանը սկսվավ, հլե էդ վագոնների դռները փակ էր, մարդիկ խեղդամահ կեղնեին, ըսպես ուղղակի շոգից խեղդվեին կը: Երբ որ արդեն ռուսական սահմանն անցանք, խաբար արինք, գիտե՞ք՝ ինչ կա, թե ինչ է պատահել: Մի հատ տղա է մահացե, փոքր:

ԳԱՅԱՆԵ. Խեղդվե՞լ է շոգից:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Փոքր տղեմ է մահացել: Հետո [գնացքը] կանգնավ, հեղթական աստանովկա [կանգատ] տվին, ինչ-որ արտահերթ աստանովկա, գյուղական բնակավայր էր, ինչ էնն էդ տղեն, չէր կըրնա էնքան սաստավը կանգնացնե, բռնին ճամպրուկ, չամադան-դագաղ, ճամպրուկի, մեծ ճամպրուկի մեջ դրին էդ տղային ու տվին մե ռուս հասակով մարդու ու խնդրեցին, իմ հերս էլ է ներկա էղել, որ կխնդրենք ձեզի, թե փող կուզեք... Ըսել են՝ ինչ փող, ինչ բան: Ըսել էր, թե տարեք, գերեզմանոցում թաղեք՝ էդ չամադանը, էլի:

ԳԱՅԱՆԵ. Քանի տարեկան տղա էր:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Էփեջա տղա՝ 5-6 տարեկան: Դե չդիմացավ էդ շոգին, շոգից խեղդվավ, խեղդամահ էղավ: Հետո նորից գնացքը շարունակեց իրա ճանապարհը: Մեր էդ առաջնորդը, որ կոչվեր կը ընկեր Ստալին, ուրեմն, երկրի լավ էղնելը, երկրի հարցերը, երկիրը կարգավորելը, կախված է մե մարդուց, որի լծակները իրա մոտն են: Ինքը նստած է էդ դեկին: Ու երբ որ հանկարծ էդ դեկավարը չի ունենա խղճի խայթ, չի ունենա մակարդակ, չի ունենա էն հատկությունները մարդկային, որն որ մարդը օժտված է, որն որ մարդը պիտի ունենա, [բայց] չունին, շատ վատ է դրա հետ յուր գնալը ու դրա ներքո՝ դրա ձեռի տակ, ինչ կըսեն, հովանավորության տակ ապրելը: Շատ դժվար է, շատ, անչափ: Գիտե՞ք ինչ կա, այ էսի [ցույց է տալիս իր ձեռքի դաջվածքը] դաջել են՝ նակուկա, էսիգ ես 65 տարի է՝ մոտս է, թնիս վրա է, բայց էդ բանը, երբ որ մարդը կտեսնի, դաջվի կը հոգու վրա, արտի մեջը: Այ էղիկ դժվար է հանել: Էսիգ կարող եմ պաժառ տամ, վառեմ, բան-ման էնել, կամ բանմ փաթթես կամ շոր երկար հագնես՝ չի երևա, բայց ըղիկ չի էղնի պահել, չի ըղնի, էդ չի ըղնի:

Ու շարունակվավ ճանապարհը: Կտանեին: Որպեսզի չփախնին մարդիկ (ու՞ր պիտի փախնեին), կանգնեցնեին կը՝ բաց տարածություն է, դաշտ է, ամեն ինչ կերևա: Կըսեին, թե՝ «գնացեք, ան, բաց դաշտ է, գնացեք տուպետ [զուգարան]»: Բա ամոթ չէ, ամոթ չէ, դուք ըղքան նսեմացնեք

կը, հողին կհավասարացնէք էն հասարակությանը, էն ազգին, որն որ ունի մակարդակ, որն որ ունի դարավոր կուլտուրա, որն որ ունի, ես ինչ գիտեմ, ամեն ինչ՝ բոլոր բնագավառներում: Որ բնագավառը կուզեք վերցրէք, հայը առաջ է էղել՝ գիտության, տեխնիկայի, ռազմավարության էլ, տո ամեն ինչում: Մենք ունինք մարշալներ, ծովակալներ, որոնք որ մեր կողքի ազգերը չունին, մենք ունինք երաժիշտներ, ունինք կոմպոզիտորներ, ունինք գիտնականներ, աստղագետներ, որոնք որ չունին հավասարը: Մենք ունինք ամեն ինչը, որն որ օգնել են անգամ՝ Ալիխանյան եղբայրները, օգնել են անգամ էս Գազարիսին տիեզերք բարձրանալը: Վերջը, հա, գնացեք էդպես... ըսպես փեշերը քշտել են, է, շուրջը փակել են, էլի, մարդկանցով տուալետ կստեղծեին, որ... վերջը, օգտվեն տուալետից՝ հաջորդը, հաջորդը, հաջորդը... ըդպես:

ԳԱՅԱՆԵ. Իսկ վագոնում ոչ մի ժամանակավոր բան չմտածեցին, որ մինչև էդ իրենց բաները... Չէ՞ որ էրեխեք կային:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Չէ, ոչ մի բան, ոչ մի բան չկար: Ըդիկ վերից էր կարգադրված: Մենք ու՞ր պտի փախնեինք, ըդտեղաց ժողովուրդը, կամ ինչխ ես փախնիմ, երբ որ իմ ծնողներս, ախպերտիսքս մեջն են վագոնի, ու՞ր փախնինք: Ըշտը նոր, էդ ժամանակ նոր դռները բացին, սքան [ձեռքերով ցույց է տալիս մոտ 30 սմ տարածություն] տեղ բացեցին, որ ...մաքուր շուշ կքաշեինք, էդ երեխու բանից հետո՝ ճամպրուկ-դագաղից... Ըտի՛ էդպես:

Հետո գնացինք հասանք Ստալինգրադ: Ստալինգրադ հասանք, [19]49-ը թիվն էր, բայց իրանց [գերմանական] տեխնիկան, իրանց տրաֆեյը, էդ բանի մնացորդները՝ բոլորը հլե դաշտերում էին, հլե չէին հավաքել: Ընտեղ տանկ կար, ընկած սամալյոտ կար, շրջած գնացք կար, տո էլ... ավտո կար, ես շատ գիտեմ՝ ամեն ինչ էլ կար: Հլե չէին հավաքել տրաֆեյներ: Սադ դաշտը լեի-լեցուն էդ տրաֆեյը: Էդպես մարդիկ արդեն կերթային, պահ կմտնեին, ենթադրենք, թե տուալետ է հմիկ, գնացել են: Գիտես, որ չի երևա, դաշտի մեջն ես, է, կամ ինչ-որ տեղում կմտնիս: Բա ամոթ չէ: Դուք դրել եք դաշտը, մարդ ու՞ր փախնի: Կամ՝ լավ, բա ամոթ չէ: Ամոթ էր: Գիտե՞ք՝ ինչ կա, որ նոր մարդու հոգու մեջ կտալի... Ուրեմն, մեկ էլ գնացինք մե տանկիմ մեջը մտանք: Տանկ էր, իրա համար կանգնած էր: Էդ կափարիչը՝ լյուկը բաց, ցեպը կտրած տանկ էր: Էդի կկոչվեր կը Պրիգորոդ Ստալինգրադա: Ստալինգրադից նախքան ըդտեղ գուկա՝ ստանցիի գորոդ Կալաչի, նոր կմտնիս Ստալինգրադ: Ըշտը, տեսանք՝ տանկը կանգնած է, ընկերներով ըսինք. ամոթ է, ուրտեղ էրթանք: Արի տանկի մեջը մտնինք: Ստանք տանկի մեջը, չիտեմ, որը իրանցեն, թե ընդեղ սխալ բաներին սեղմեց՝ տու՛կ, դուռը փակվավ: Լյուկը փակվավ՝ մնացինք տանկի մեջ: Հիմա վերջցրել ենք էդ ամեն ինչը, գուզենք դուրս գանք, փակ է: Թռանք դենքը, չի բացվի, էսիգ կքաշենք կը, չի բացվի, էսիգ կքաշենք կը, չի բացվի [ծիծաղում

էլ: Հմի ինչ էնենք՝ լացից բացի էլ ինչ պիտի էնենք: Սրա կրակածի գիզերը [պարկուճները] չկամ, սնարյադը, որ կկրակեն, էդ դատարկ գիզերը վերցրել, զարգենք կը պատերին: Կըսենք որ՝ պամագիտե [օգնեցնք]: Է, բայց ո՞վ պամագատ կէնէ: Էդտեղ ո՞վ կա, որ պամագատ էնէ: Էդ իրանց սովորից կճվամ՝ պամագիտե, պամագիտե: Հեչ մարդ... Ինչ-որ մենք կճվանք, էդիկ էլ նորից կլսենք: Հմի բոլորս էլ ըդտեղ էն մտքին էինք, որ մենք պիտի վերջը մահանանք, մնանք պտի տանկի մեջը: Էլ էլք չկար: Գնացքը 2 ժամ ու կես էր տվել կանգառ ու գուդոկներ կուտար: Ժամմ կանցներ, գուդոկներ կուտար, մե ժամն կանցներ, գուդոկ կուտար, հետո կես ժամը կանցներ, գուդոկ կուտար: Կես ժամից հետո 5 րոպեն կանցներ, ու սաստավը լոխվ կշարժվեր: Էդ ժամանակ պիտի բոլորը մեջը լինեին: Հմի տվել է 2 գուդոկը, մնացել է կես ժամը, հլը մենք մեջն ենք: Ուրեմն, մեկ էլ, կըսեն Աստծուց էր, կափարիչը մեկ էլ բացվավ: Արևը մեջն ընկավ: Մեկ էլ տեսնինք, հեչ չեմ մոռանա էդ հոյակապ կնոջը, տեսանք, որ սև կամբինիզոն հագած, թևերը քշտած՝ մե սիրունիկ աղջիկմ: Մեկ էլ դառավ, ըսավ՝ «Չերտի, սատանեք, ընչի՞ եք մտել ըդտեղ»: Հելանք հետո դուրս, ինքը ըսավ՝ չերտի, դուք վագեք, գնացեք, արդեն գնացքը բան կէնէ: Մեկ էլ ըսավ. «Պերվիյ ռազ վաս մամա ռադիլա, ա վտարոյ ռազ վի ռադիլիս նեմեցկովովո տանկովովո լյուկա» [«Առաջին անգամ ձեզ մայրիկներդ են ծննդաբերել, իսկ երկրորդ անգամ դուք ծնվել եք գերմանական տանկի լյուկից»]: Լյուկից հելանք դուրս, որ մնայինք, մեռնեինք կը: Ծնված չէնք նորից: Երկրորդ ծնունդն է: Ուրեմն մեր մաման մեկ էլ գերմանական տանկն է էղել [ծիծաղում է]: Էդ կիևը գնացքից չէր: Ես ըդքան բան տեսա ավտոյի մեջը՝ գոռուգավիկի մեջը ավտագենի ավտոչնի [զոդման] ապարատ կար: Դու մի սա, իրանք էդ տրաֆեյը կտրողներն են: Տանկը կտրեն կը սիրուն... ավտոներ... կռանը, գոռուգավիկ մեքենան, մեկ էլ էդ իրանց էդ ավտոչնի ագրիգատը, սաղ ուրիշ ավտոյով կտրեն կը, մասմաս կըառնան, կտանին: Ստալեիտեյնի գավոդները՝ ձուլող գավոդները: Հետո սաղ նեղեցան մեր վրա, մեր ծնողները նեղեցան՝ ինչի պիտի ըսպես լիներ: Մենք գիտենք ինչին ո՞րն է... Ինչի առանց թոյլատվության եք գնացել... Ինչ որա, ճամփեն շարունակվավ:

Ես մե բանմ էլ կուզեի առաջը պատմեմ... Ղուկայայնի ճանապարհին չհասած, էդ դարի գլուխը, Քեթի կա: Մեկը Մեծ Քեթին է, մեկն էլ՝ Փոքր Քեթին: Ուրեմն, չեկիստները գուկան նախագահի մոտը՝ Արիստակեսյանի, նախագահին կըսեն. «Գիտե՞ք ինչ, դուք 5 հոգի մարդ պտի տաք»: Նախագահն կըսե, թե ինչ մարդ: «Հա, - կըսեն, - հինգ հոգի»: Կըսե. «Էդ մարդիկ, որոնք որ դուք պտի տանիք, հմի դաշտը աշխատանքի մեջ են: Մենք մարդ չունինք, մենք գուկանք»: Ինքը, գործկոմի նախագահն, պարտքարտուղարը գելին, գուկան ԿաԳեԲե: Գուկան, ըսել են, թե մենք մարդ չունինք, մեզի տարեք տեղը: Փոքր գեղ է: Փոքր է, Փոքր Քեթի են դրել [ստունը]: Մեծ կա՝ Մեծ Քե-

թի, կա Փոքր Քեթի, մե քիչմ դարի գլուխը: Էդ նախագահի տղան՝ Լուկաշ Արիստակեսյանը, դիրեկտորն էր Կուրդինյան Շուշանիկի անվան մասնագիտական դպրոցի: Էս վերջերս էր, որ մահացավ տղան իրա, էդ լավ նախագահի տղան, Արիստակեսյանի՝ իսկական տղամարդի, որ ինքը իրա գյուղի, իրա աշխատողներին չթողեց տանեն: Փոքր գյուղ է, ըսել է, թե. «Էդ հինգ հոգուն, որ դուք կուգեք, բա որը պիտի վար ու ցանքս ընե: Էդ... ես ինչըլս էդ մարդուն բռնեմ՝ դուք տանիք, հրը գյուղը մնա՞...» Ելել էին երեքն էլ գնացել: Ըսել են՝ մեզի տարեք: Մենք ուրիշ... ես ուրիշ մարդ չունեմ: Ես էն մարդիկն ունեմ, որոնք որ լավ մարդիկ են, աշխատող մարդիկ են, ես որին ըսեմ, թե «Էսիգ վատ է, տարեք»: Ու ըդպես էդ մարդիկ մնացել էին շտրիկ էդ հայրենասեր, լավ մարդու՝ Արիստակեսյանի: Համ իրանց չէին տարել, համ էլ էդ մարդկանց: Էդ ընտանիքները փրկվան, իրանք փրկվան:

ԳԱՅԱՆԵ. Իսկ էդ պատմությունը Դուք ո՞նց իմացաք:

ՍԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Էդ պատմությունը, իրա տղեն Շուշանիկ Կուրդինյանի [անվան] դպրոցի դիրեկտորն էր, մենք Պալիգոնների վրա ունենք, էլի, շատ լավ մարդմ էր, հոյակապ մարդմ: Իրա մասին լսել էինք, բայց դակումենտալի չէինք իմացել, հետո ինքը պատմեց, թե սպես բաներ է էղել:

Հա, էլի բան ունիմ գրած: Երբ որ մենք ընտեղ իջանք, մի-երկու ամիս անցավ, մեր տղաներին, բոլորին, որոնք որ չափահաս էին, հավաքին ուղարկին կուրսեր: Կուրսեր կար՝ կոմբայնավարի, տրակտորիստի, գյուղատնտեսական մեքենաների վերանորոգողների, տնից մոտ 200-300 կմ հեռու տարան սովորելու:

ԳԱՅԱՆԵ. Ձեզ առաջին տեղը, որ իջեցրին, որտեղ էր:

ՍԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Գնացքը, երբ որ կանգնավ, էկան «գնորդները». ամեն մարդ մեկ վագոնի դուռը կայնավ: Հարցնեին կը. «Сколько у вас мужчина, сколько женщина, сколько дети?» [Քանի՞ տղամարդ կա, քանի՞ն են կին, քանի՞սը՝ երեխա]: Իրանց ինչն էր պետք, իրանց պետք էր վզրոսի մուժիկա՝ աշխատող ձեռք: Որ կըսեր՝ էսքան էրեխա ունիմ: Էդքան երեխեն ու՞մ էր պետք: Ուրեմն գուկային ջոկեին կը: Որը որ մե քիչմ բան մարդ էր, էսպես, աֆերիստ մարդ էր, ինքը կջոկեր, որ աշխատող ձեռքը ինչքան շատ էղավ, իրա օգուտն է: Մեր վագոնն էլ էկավ մեր հետագա դիրեկտորը, մե խելոք մարդմ էր Ալեքսանդր Գրիգորիչը: Էկավ իմացավ՝ քանի տղա ենք, էս ինչ ենք, էս ինչ ենք, ու ավտոները ետ տվին, գրուզավիկները բարձան...

ԳԱՅԱՆԵ. Իսկ այդ ձեր հասած տեղը քաղաք էր:

ՍԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Հա, քաղաք էր, Ալթայսկի կրայի մայրաքաղաք Բառնաուլից հետո երկրորդ քաղաք Ալեյսկն էր: Բառնաուլից հարյուր քանի կիլոմետր հեռու էր: Սաղ մատակարարումը էդ քաղաքի միջոցով

էր. դաշտերը, հեռավոր սովխոզները, կոլխոզները էդ քաղաքից կերթար: Որտե՛ս 120-150 կմ մենակ հողային ճանապարհ էր, մենակ ավտոները կմատակարարեին, ընտեղ գնացք չէր աշխատի, ձմեռն էլ տրակտորները սանկեկը կկապեինք ու ապրանքը կկրեին՝ թե՛ ուտելիքը, թե՛ զապչաստը, թե՛ մեքենաները: Մեզի դրին ավտոն ու տարան ընտեղ, որտեղ մենք ապրել ենք յոթը տարի, էդ մեքենաները մեզի տարան իջեցրին հենց նշված տեղը: Էդ նշված տեղից սկսին բաժանել: Ամենահեռուն՝ 20 կմ էր: Ինքը կենտրոնն էր:

ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ. Կենտրոնի անունն ինչ էր:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԳՅԱՆ. Կենտրոնը կկոչվեր Ցենտրալնայա: Ես ունիմ գծած քարտեզը անվանական՝ սկսած Ջաջուռից մինչև մեր զավագած տեղը, սաղ նշել եմ [նկ. 40]: Երբ որ ավարտեցինք, ես էդ ընթացքում ստացա գովասանագիր՝ Ստալինի նկարով, Լենինի նկարով: Իսկ աշխատանքային գործունեության՝ լավ աշխատանքի համար պարգևատրվել եմ պատվոգրով, գյուղատնտեսության մեջ լավ աշխատելու համար: Տրակտորիստ եմ աշխատել: Լավ սովորա, էդտեղ գերազանցիկ էղա: Ուշիլիչչան [ուսումնարանը] սպես էր. երբ որ դու չես ուզե սովորել՝ ուրեմն հայրենիքի թշնամի ես: Հետո սպես կարգ կար. կերթայինք դասի, ով որ վատ գնահատական կստանար (իրան երբեմն կզիջեին, երբեմն երկուս կդնեին), ճաշարանի վարիչը գուկար իրանց ստացած գնահատականները գրանցեր կը իրա գրքույկի մեջը՝ կտանիր ընտեղ: Հետո կտեսնիր, որ էդ քսան հոգուց բաղկացած կուրսի տաս հոգին երկուս են ստացել, էդ տաս հոգուն ճաշ չէին տա որպես պատիժ: Մենք որ կնստեինք ուտելու, էդոնք էլ կնստեին, բայց իրանց ճաշ բերող չկար, ու մենք մեր ստացած բաժինը կկիսեինք կը: Հետո կամացկամաց իրանք էլ սկսին ներել: Մե՛ս հոգիմ կար՝ գյուղերի տղա էր, ինքը ոչ միայն ուտերեն չիտեր, ինքը հայերեն էլ չիտեր թամամ գրել ու կարդալ: Դասատուն կըսեր, թե ես ինչ լեզվով հարցնեմ իրան: Մենք՝ որպես գերազանցիկ, առաջը կնստեինք: Ֆեոկտիստով Ֆյոդր Իվանովիչը ըսավ թե՛ ես իլե մե՛ քանմ հարցնեմ, ըսավ Խուրշուոյան, քու ընկերդ է, իրար հետ կքնիք, բան կէնեք, ինքը հայերեն լավ գիտե՛: Ըսի՝ հա, լավ է: Ըսավ՝ ինքը խոսալ գիտե՛ հայերեն: Ըսի՝ հրե չիտե՛, իրա լեզուն է: Ըսավ՝ էսպես բանմ պիտի կազմակերպենք, ինքը պտի գա գրատախտակի մոտ, ցուցափայտը վերցնե, ընտեղ մասեր կան՝ տուկեք կան, միլիմետրեր կան, բարդ մեխանիզմներ կան, երբ որ ես ըսեմ, ինքը պտի տանե դնե էդ մեխանիզմի վրա [ցուցափայտը], բայց հայերեն պատասխանե՛ ձեզի, դուք թարգմանեք մեզի, որ էդ տղեն երկուս չստանա: Ինքը գելիիր պատմեր կը, կըսեինք թե՛, այ տղա, ինքը գյուղի տղա էր, դուք գյուղը քանի՞ կով եք ունեցել: Է, երկու կով, երկու հորթ չնք ունեցել՝ հա: Հետո երկու խոզ...՝ հա... Գրել են, որ ձեր կովը ծնել է, տաս հատ ձակ է բերել... Մեկ էլ դասատուն կէներ թե՛. «Вот, вот, говорит!» Այսինքն՝ կըսե, ուրեմն գիտե, գիտե: Կըսեր. «Умеет говорить, молодец, молодец!»: Կըսեր՝



Նկ. 40. Սերգեյ Խուրշուղյանի կազմած՝ 1949 թ. հունիսի 14-ին բռնաքաղաքի երթուղին:

այ, լավ կխոսի, լավ կխոսի: Էդպես կօգնեինք: Մարդ կար, բան կեղևիր, կըսեր՝ էս ինչ ֆիքս տղա ես: Կըսեին. «кто хочет говорить, кто отвечает?» [ով է ուզում պատասխանել, ով է պատասխանում]: Մեկ էլ սաղ ձեռքերը ետ կտանեին: Մե հոգիմ, որ կտեսներ, որ սաղ ձեռքերը ետ տարան, ինքը ձեռը կրարձրացներ: Դասատուն նայեր կը, կըսեր՝ մալադեց, մալադեց, բռներ իրան հինգ կղներ, բայց ինքը հեչ բան չի պատասխանել: Մենք կըսեինք, թե՛ դու ինչ աֆերիստություն երիր, որ հինգ ստացար:

Մենք կանցնեինք «Ստալինսկի կոնստիտուցիա» [Ստալինյան սահմանադրություն]: Ստալինյան կոնստիտուցիան պարտավոր էիր գիտենալ գերազանց: Դասատուն գուկար հարցներ գե, ենթադրենք կըսեր. «Хуршудян, встаньте, идите к доске» [Խուրշուղյան, մտնեցեք գրատախտակին]: Ենթադրենք, մտնեալի կը ու կոնստիտուցիայից պատմեի կը: Իսկ մարդ կար, որ ոսերեն էլ կարդալ չիտեր, ինքը կոնստիտուցիան ինչխ

տրվիր: Մե հոգիմ կար էդպես, բայց ինքը մոշնի [հզոր] տղեմ էր, շատ լավ տղա էր, ինքը, ինչխ ըսեմ, բանվորական տղա էր: Ընտեղ շաբաթը մե անգամ կերթայինք ցիստեռներով Օբ գետի վրայից, բայց Օբ գետը սառած էր, իրանք ջարդեին կը Օբը, ջուրը կհանեին, կլցնեին ցիստեռները, բերեինք կը, լցնեինք կը բաղնիքը, բաղնիքը կվառեին, որ շաբաթը մե անգամ ուսանողները լողանան: Ես, քանի որ շուտ էի տիրապետել, ես կսստեի էդ ռուլին [դեկին]: Իսկ էնպես տղեք կային, որ գուկային բանվորություն կէնեին՝ մեկը մեկին ջուր փոխանցեին կը, օրինակ, մեկը կանգնած է Օբի վրա, մեկը կուտա մեկելին, մեկելը կուդա էն մեկելին, էն էլ կդարտկե ցիստեռնի մեջը: Էդպես կլցնեինք հինգը տունսա ջուր: Կտունեինք ու նորից կբերեինք բաղնիքը՝ լողանալու: Ուրեմն էդ տղեն լավ ձիգ տղա էր, հզոր տղա էր, բայց ինքը տրակտոր քշել չիտեր, ոչ էլ գաղափար ունիր, թե տրակտորն ինչով կերթար առաջ: Ուրեմն, մի օր կոնստիտուցիայի ժամ էր, ու շատ ստորգի [խիստ] կմոտենային: Ստալինսկայա կոնստիտուցիա՝ պիտի գիտենաս: Հարց տվին, կոնստիտուցիան հողվածներ ունի, ըսին՝ էս ինչ հողվածը բըրդի պատմես: Ինքը հեչ բան էլ չիտե, կոնստիտուցիան ինչ գիտե ինչ է, որ պատմես: Վերջը, տրվըցրել էինք, տղերքը: Ըսել էին, որ հանկարծ հարցնեն Ստալինյան կոնստիտուցիայից... Ըսել էր, այխ ինչ ըսեմ: Ըսել էին, որ ըսա. «Ըսից մեր պետն է»: Իրան կանչին, հարցրին, ըսին՝ մե բանմ ըսա՝ Ստալինը ո՞վ է, մենակ ըղբանն ըսա ու նստի տեղդ: Սպես ըսավ. «Сталин – директор Советского Союза» [Ստալինը Խորհրդային միության տնօրենն է]: Որ չըսավ «директор Советского Союза», էս ռուսները բան ունին, քիչմ քիֆուրդան են, ըսավ. «директор бывает только ресторанов, директор чего-то» [տնօրեն ինում է ռեստորանի կամ նման մի բանի] ու վայր [ձեռքով ծածկեց բերանը], թե գուկան բռնեն կը: Ինչխ թե, դիրեկտորը ո՞րն է: [Ձեռքերը դեպի վերն պարզելով] «Великий вождь и учитель» [Մեծ առաջնորդն ու ուսուցիչը]: Դիրեկտոր... Էդիկ խոմ Թոթով Աշիկը չէ՝ դիրեկտոր ճաշարանի: Էդպես խնդայինք կը:

ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ. Փաստորեն սովորելու պատճառով դուք այլևս ձեր ընտանիքի հետ չէիք ապրում:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Հա, ընտանիքը վերջացավ: Աշունքը գնացինք, նոյեմբերին աշխատանքները վերջացավ, դաշտային աշխատանքները վերջացավ, տրակտորները կանգնեցրին, օգնականներ կաշխատեինք: Արդեն ձյուն էկավ, մեզի տարան տեյ ուչիլիշչա: Էդ օրը առանձին մնացինք, էքսի օրը տարան բաղնիք, տարան մեղօամուտը [բուժքննության], տարան ստուգին ամեն ինչը... Տգից վեր, ռոսների ծայրից մինչև գլխի մագերը ստուգին:

ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ. Ուչիլիշչայում ինչ ազգեր կային:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Կային, բացի հայերից, կալմիկ, գերմանացի, վենգերացի, պոլյակ, գագաուզ: Ուրեմն ընկերներ ունեինք՝ Շալանտան, Բալանտան, Պուրբեն: Կալմիկները, որ իրանց ավտոնոմնին [ինքնավար մարզը]՝ Ստալինգրադի մոտն է: Ուրեմն մե բան էլ ասեմ:

Կալմիկիան ավտոնոմնի ղեկավարիկա [ինքնավար հանրապետություն] է, հարուստ ղեկավարիկա է իրանցը, իրանցից էլ շատ մարդ կար, իրանք կազմակերպել էին, արդեն խաղաղ պայմաններում, մենք ստեղ ենք արդեն, վաղուց կապրեինք, [իսկ] իրանք կազմակերպին «Հուշ-գնացք», «հիշատակի գնացք»՝ «поэзд памяти»: Իրեք անգամ ուղարկին: Կալմիկիայից գնացել էր տեյ Բառնատու: Ընտեղ բաժնել էին, ով ուրտեղ էղել էր, էղտեղ էին գնացել: Մենք Միխատրների սովետին նամակ գրինք: Մեր մոտը լավ աղջիկներ կան, արքորված աղջիկներ, որոնք հմի, ենթադրենք, ապտեկի [ղեղատան] վարիչ են, Սայուզպեչատի աշխատող են, գագետի [թերթի], էղպես բաների աղջիկներ կան, կազմակերպեցինք, մենք ընկեր ունեինք, հասակով էր, գրագետ գրող, էս բաները կազմակերպող, հմի մեռավ: Նամակ գրինք Միխատրների խորհրդին, որ խնդրենք կը, որ հուշագնաց, որը Կալմիկիան կազմակերպեց արդեն երկրորդ անգամ էղպես գնացք, որ հազարավոր մարդկանց տեղափոխեց Բառնատու, մենք էլ կխնդրենք, մեզ էլ տրամադրեք էղպես գնացքմ, մենք էլ գնանք: Շատ կուզեինք գնալ, ենթադրենք, հայրս մահացավ, ընտեղ մնաց, ընտեղի ամեն մի բանը...

ԼԵՎՈՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ. Չեղամվ գնացքը:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Չէ, ընտեղից պատասխանեցին, թե ղեկավարիկան ֆինանսական բան ունի [պակասություն]... Ըբե էղամվ: Ամոթ չէ, ֆինանսական ինչ ունի: Որ ջեբերդ կդնեք՝ ֆինանսական բան չունիք: Մարդիկ են... Հազար մարդուց ավել մնացին ընտեղաց հողերում թաղված: Մեկն էլ իմ հայրս: Մե տունմ, մե շատ լավ ընտանիքմ, էրկու հատ սովորող տղա ու մե աղջիկմ ունեին, լավ ընտանիք էր, իրանց ծնողները կիրթ մարդիկ էին, զարգացած գիտության ամեն ինչի մեջ, գիտելիք ունեին: Ուրեմն ռուսական փեչկը [վառարանը] կվառեն տաքնալու համար, հետո, որպեսզի տաքությունը մեջը մնա, բռնեն, գաղվիժկա [սողնակ] կա ներսը, փակեն կը: Դու մի ըսա, էդ արթարներից հլե վառած չի էղնի, ու իրանք քնին կը: Քնին կը, հետո առավոտ տեսնին կը, որ իրանց դուռը չի բացվի, հետո հարևանները գուկան, դուռը կջարդեն, բանան, տեսնին կը, որ ամեն մարդ իրա տեղը պառկած է, խեղդվել են: Դառը հուշեր, դառը ճակատագիր: Մարդիկ էղան, որ խեղդան Օբ գետի մեջը, մարդիկ էղան, որ շատ վնասներ քաշեցին... մեր ազգը:

Ուրեմն հաջորդը, կարևորի մասին խոսենք, որ մենք երկար տարիներ... Ուրեմն էս միջոցառումը համարյա իրեք օր հետո կսկսվի, չէ, [խոսքը

հունիսի 14-ին բռնաճնշվածների հիշատակի օրվա մասին էլ: Մայիսի իննին իմ հայրս՝ որպես Հայրենական պատերազմի մասնակից, միշտ էդ միջոցառմանը մասնակցել ենք, գնացել ենք «Մայր Հայաստան» 1941-45 թթ. զոհվածների վրա ծաղիկ ենք դրել: Ես իմ հորս հրմար, հորողորս տղու հրմար, որ ինստիտուտից գնաց, իրան չէին տանե, ինքը թակ տղա էր, ըսել էր՝ իմ ընկերներս ընտեղ հմի կռվին կը, ես ստեղ ինստիտուտ կտրվիմ, էլե ուսանող գնացել էր: Իմ հորս հետ տարան, ինքը գնաց, իրան ուրիշ ուղղությամբ էին տարել, հորս՝ ուրիշ: Ես իրանց համար «Մայր Հայաստանը» ծաղիկ կտանեմ, մասնակցեմ կը տոնակատարությանը, միջոցառմանը, միշտ մասնակցել եմ: Երբ որ օրը գուկար [հունիսի 14-ը], հա, ծաղիկ ենք առել, բայց [ու՛ր տանեմ]: Ես մի օրմ ծաղիկ առա ու գնացի ԳԱԼԱ [Գյումրու ազատ լրատվական այլք] հեռուստատեսությունը, գնացի մտա ընտեղ, ընձնեն շատ են ինտերվյու վերցրել էդ աղջիկները՝ Արմենուհի Վարդանյանը, Հերմինե Մկրտչյանը, էսպես աղջիկներ են, բայեվոյ [մարտնչող], պիստալետներով [ատրճանակներով] [ծծաղում է], ըսին՝ Սերյոժ դյադյա, հմի դու էկել ես, մենք որտեղ գնանք, որ էդ ծաղիկները դնես: Տեղ չկա: Մինչև հիմա քար չունինք: Մի հատ կոթող չունինք, որ վրեն գրվի, էս հուշաքարը նվիրված է էս մարդկանց, որոնք որ ստալինյան ռեպրեսիային զոհ են եղել:

ԳԱՅԱՆԵ. Գիտե՞ք, չէ՛, որ Երևանում նման հուշակոթող կա:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Է՛, Երևանում մենք ինչևս գնանք, էդ մեծ ծաղիկն առնինք, Երևան գնանք: Երևան գնալու համար հմի տասս հազար ռուբլի փող է պետք. հաց ուտես, տրանսպորտ նստիս, գաս ետուտաջը, կեղնի տասս հազար ռուբլի փող:

ԳԱՅԱՆԵ. Գյումրիից, Շիրակից բռնադատվածներն իրար հետ կապ պահպանու՞մ են, կա՞ որևէ կազմակերպություն, որտեղ նրանք իրար հանդիպում են:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Առաջ կար, կհավաքվեինք կը, հետո կամաց-կամաց էդ էլ վերացավ: Էն ընկերները, որ հետս էղել են, իրար հետ կապը պահպանվի կը, հանդիպինք կը, խոսինք կը, քննադատությունը կերթա՝ լավը, վատը, բայց ինչ կմնա տեղի համար՝ չկա: Ո՛չ քարը կա, ո՛չ տեղը կա, ո՛չ էլ արտոնությունները կան:

Արտոնությունների մասին պատմեմ: Արտոնությունները սկզբից կար: Ուրեմն [19]56 թվին արտոնություններ ունեինք, ու էդ արտոնությունները տևեց մի երկու-երեք տարի: Էդ արտոնություններով, բացի տաքսի մեքենայից, իրավունք ունեինք անվարձ գնալու Երևան, իրավունք ունեինք տրոլեյբուսի, միջքաղաքային 50 կմ ավտոբուսի: Իսկ Երևան ապրողները մետրոյից, տրամվայից, ավտոբուսից. սաղից իրավունք ունեին օգտվելու: Հմի մենք ո՛չ մետրո ունինք, ո՛չ տրոլեյբուս ունինք, ո՛չ տրամվայ... Էդ արտոնությունները [տարածվում էին]՝ էներգիան, գազը, խմելու ջուրը, զիբիլը, մնա-

ցածր. Էդ բոլորը 50% էր: Էդ արտոնություններն ունեինք 1956 թվից, հետո էդ բոլոր արտոնություններից մեզի գրկեցին: Ջուրը՝ հիսուն տոկոսով, լույսը՝ հիսուն տոկոսով, գազը՝ հիսուն տոկոսով. էդ բոլոր արտոնությունները դրին մե կողմ, հմի մենք վարձ կմուծենք, երբ որ ունեինք արտոնություն: Մենք գրքույկներ ունինք, որտեղ գրված է, որ բռնադատվածը իրավունք ունի օգտվելու էս բաներից՝ ստից, ստից, ստից, որ որոշ բաներից իրավունք ունի օգտվելու: Բայց ոչ մի բանից չենք օգտվի: Մենք ստորգետնյա տրանսպորտից չենք օգտվի, մետրոյից չենք օգտվի, տրոլեյբուսից չենք օգտվի, տրամվայից չենք օգտվի, ուրեմն մեզի էդ վարձը տվեք, մենք կուտանք մեքենաներին, ավտոբուսներին: Ո՛չ էլ բժշկության մեջ արտոնություն ունիս, երբ որ կըսեն, գնա, դեղը դո՛ւ առ: Եթե դեղը ես պտի առնիմ, էլ քու բուժումդ ուրտե՛ղ է:

ԳԱՅԱՆԵ. 1994 թվին, որ փոխհատուցում էին տալիս, չստացա՞ք:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Մի անգամ ստացանք: 12000 դրամ փող տվին, է, 12000 դրամը հմի մարդ կամանչե ջեբը դնե, գնա բազար կամ խախտութ: Ձենձնին, տասը տեղ գրին, պասպորտ վերցին, ծննդական, իյա...

ԼԵՎՈՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ. Հետ գալը ճնց եղավ:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Ուրեմն հետ պտի գանք, տնտեսություն ունեինք, հարյուր հատ հավ ունեինք, քսան հատ բաղիկ ունեինք, հետո ճուտիկներ ունեինք, խոզ ունեինք, կով ունեինք, մե հատմ էլ ցուլիկ ունեինք: Երբ որ արդեն պիտի հետ գայինք, հայրս արդեն մահացավ, տոմսի արժեքը 650 ռուբլի էր: Տոմսի արժեքը՝ մեզի նստելը ու մինչև Լենինական հասցնելը 650 ռուբլի էր: Երբ որ մեր տնտեսությունը ծախեցինք, սաղ ծախեցինք, էղավ 700 ռուբլի: Հմի 650 ռուբլին տվել ենք տոմսի՝ Մոսկվա պերեստրոյով, ու մնացել է 500 ռուբլի սաղ մեր ընտանիքի խարջը, ծախսը: Գնացքը ութ օրվա Միբիրից բերեց մինչև Լենինական, իսկ մենք էդ գնացքով 17 օր գնացինք: Միգ արդեն կոմֆորտաբելնի [հարմարավետ] գնացք էր, բայց կոմֆորտաբելնի գնացքը խոմ ձրի չեն կերակրե: Մենք օգտվել ենք բուֆետներից, ռեստորանից, էդպես էդ հինգ հարյուրն էլ վերջացավ:

ԼԵՎՈՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ. Պետք է ձեր հաշվին գայիք:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Մեր հաշվին, մեր հաշվին: Դուք մեզի տարաք ստիպողական, ընտից էլ ըսիք՝ ինչխ գուգեք, գնացեք: Ի՛նչխ գնանք, մեր էս վերջի ամեն ինչը ծախեցինք, ընդամենն էղավ 700 ռուբլի: Էդ 700 ռուբլիով մենք ի՛նչ պտի էնենք, երբ որ 650 ռուբլին մենք տվել ենք ճանապարհի գնացքի վարձ:

ԳԱՅԱՆԵ. Ձեզ հետ ոչ մի բան չկարողացա՞ք բերել այնտեղից:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Գիտե՞ք՝ ինչ ենք բերել... Երբ որ խոզը մորթին, մե լավ տղեմ էր, էկավ մորթեց, հետո որ ծախեց, էդ սալը հանեց, ըսեց՝ տարեք հետներդ, կարող է պետք գա: Իսկապես պետք էկավ: Երբ որ էկանք [19]56 թվին, ստեղ էլ բարվոք վիճակ չէր, ստեղ էլ նորմալ չէր, լավ

է, էդ բանը օգտագործինք: Վեց ամիս ապրանք հյուրանցում: Տուն չկար: Հմի հարևան է, ընկեր է, ենթադրենք, կըսե՛ արի, մեր տունը քնեք, էլի: Բայց մենք ու՛մ տունը քնեինք: Գնացինք հյուրանոց: Հյուրանոցը տեղավորվանք, հետո տները բաժնելու ժամանակը մենք երկու եղբայրով գնացինք: Երբ որ տներ հանձնեցինք շահագործման, ընտեղ տոկոս կա, ըսեցին, էդ տոկոսից նոր ձեզի տուն կուտանք: Լավ չընդունին: Քաղաքի տեղի գործկոմի նախագահի մոտը գնացինք, համ դաժան մարդ էր, համ էլ դաժան անուն ունիր, ափսոս է, որ տանք: Գնացինք, մեկ էլ մեզի ըսավ՝ է, ընչի՛ եք էկել որ: Ըսավ՝ է, մնայիք ընտեղ: Այ քեզի բան: Ըսինք, այ մարդ, ինչի՛ մնայինք: Ձեզի տանեին, իմ հերս էլ քու տեղը նստած էղներ ու տղուդ ըսեր՝ ինչի՛ եք էկել [լավ կլինե՛ր]: Այ տգետ: Երբեմն ղեկավարը իրա գլոխը ուտերին չի բռնե, կամ իրա գիտակցությանը չի բռնե իրա մակարդակին, իրա էդ դիրքին: Կըսե՛ ինչի՛ եք էկել, ըշտե մնայիք էղտեղ, ապրեիք: Աղբերս ջահել տղա էր, քիչմ բան էղավ: Դե չափից կհանեն, էլի: Լավ, որ ուրիշ բաներ չեղավ: Բա կարելի՛ էր էդպիսի բաներ ըսել, դու պաշտոնյա մարդ ես, ընչի կըսես՝ ինչի՛ եք էկել, ընտեղ մնայիք, ըշտե լավ էր: Ես ըսի, թե գիտե՛ք ինչ կա, մենք էկել ենք կարոտից, կարոտից ենք էկել, [հուզվում է] էկանք, պատը պակիկք, ուրտեղ որ ծավել էինք, էկանք, ջուրը խմինք: Ըբե չգայի՛նք: Էկանք, վսմտ ենք էրել, որ էկել ենք, ես շինարար եմ էղել՝ հիսուն տարվա: Տասնյակ բնակարանների հեղինակ եմ էղել, կենցաղային օբյեկտների հեղինակ եմ էղել, հիմնադիր եմ էղել: Մեր Սովետական Հայաստանի ամենամեծ պարգևը ստացել եմ, ան՝ *диплом мастера «Золотые руки»* [«Ոսկե ձեռքեր» վարպետի դիպլոմ]: Ես քարը բերողն եմ էղել, շինարարության շոֆերն եմ էղել: Ես քարը բերել եմ, տաշել են, հետո Արամայիսը ըսավ, թե՛ Սերյոժ, արի մե քարմ էլ դու դիր, որ կոչվիս շինարար...

ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ. Մենք ձեր սիրիդյան կյանքից կարծես դեռ հարցեր ունենք չպարզած: Փորձենք վերադառնալ այդ տարիներին: Ձեր հայրը ինչ սկսեց աշխատել, երբ նոր եկաք:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Գնալուց հետո իրանք մասնագիտությունները հարցրին, մասնագետ կա՞ դյուրզյար էր, իրանց պետք էր դյուրզյարը: Մասնագետ կար՝ պատ շարող էր, իրանց պետք էր քիրպիչով շարելը: Ինքը գնացել, ըսել էր, թե ես պովար եմ: Ըսել էին, թե մենք ըսքան ժամանակ հլե տղամարդ պովար չենք ունեցել: Ըսել էր, թե մեր պովարները սաղ կնիկմարդ են: Ինքը լավ թափով տղամարդ էր, ֆիզիկապես ուժեղ: Իրան ըսել էին, թե դու գնա, շինարարությունը աշխատի: Ու իրան ուղարկին լեսագագատովկա [անտառահատման]: Էն խոշոր գերաններն, որ կբառնան ավտոները կղենն: Ուրեմն գնաց ընտեղ աշխատելու: Իրա կյանքը միշտ ճաշի հետ է էղել կապնված, խոհարար է էղել... Ինքը էլի կենդանի կմնար, եթե

ընտեղ ջուր էղներ, բայց ինքը որ գնացել է, ընտեղ ճահիճներ են էղել, ճահ-ճի ջուր են խմել, հետո բաներ [միջատներ] են խածել, վերջը, շատ դժվար է էղել: Հետո մե օրմ ինքը էկավ ըսավ, թե ինչխոր վատ կզգամ ընձի: Ըսի՝ ուրեմն պապիրոսը մի ծխե էլ: Ըսավ՝ ախր չի էղնի առանց պապիրոս, պապիրոսն ինչխոր մարդու ընկերն էղնի: Ըսավ՝ չեմ կոնա, ինչ գուզեք, էսեք՝ հաց մի կեր, կենեմ, բայց պապիրոս, որ կըսեք՝ մի ծխե, ըղիկ չեմ կարող, ուժերիցս վեր է: Հետո էլի գնաց, անցավ մե ժամանակմ, էկավ, ըսավ, թե շատ թույլ եմ: Ընտեղ բժիշկ կար, սաղ տարածքը մե հատմ քույր կար, լավ մասնագետ էր. ծնունդը կընդուներ, թերապևտությունը կէներ: Մի խոսքով, լավ մասնագետ էր: Մենակ ինքն էր՝ էղ Կատյան էր: Ինքն ընձի ըսավ թե՝ Սերգեյ, ես մենակ քեզի կասեմ, գիտեմ, որ դու իրա ավագ որդին ես, պապայիդ վիճակը լավ չէ, պապայիդ պիտի ապերացիա [վիրահատություն] էղնի, դու պիտի գնաս մինչև Բառնասուլ: Էն ժամանակ արդեն թուլատրեին կը, էլի, Բառնասուլ: Նստանք, գնացինք Բառնասուլ, հիվանդանոցը տեղադրի, կեցավ ընտեղ, անալիզները վերցրին, բան էրին: Անալիզները որ վերցրին, ըսին՝ մենք ապերացի բղի էսենք: Կապասեմ, որ մենք արդյունքը հայտնենք: Ըսի՝ հա, ինչ բղի էսեմ, որ չապասեմ: Մի էրկու-իրեք օր կեցա Բառնասուլ, իրանք ապերացիա էրին ու ըսին, որ՝ опухоль [ուուցք], չարորակ: Էն վախտ մտքով չէր անցնի, թե որը որոնցն է: Էլ չըսին, թե էսիգ էսպես է, էնպես է, պրոստո ըսին: Էդ, որ կըսեմ չարորակ, էդ, որ հետո մենք բերեցինք, իմացանք: Հետո, որ տարանք էղ Կատյային նայեց, ըսեց՝ Սերգեյ, վտանգավոր հիվանդություն է: Ինքը մի 15 օր մնաց, կարերը քանդեցին: Ես գիշերը ուրիշ տեղ կմնայի: Ընձի գանգ տվին, թե դուրս գրեն կը առավոտ, արի, պապայիդ սն, գնա: Առա, բերի տուն: Էդ ժամանակ մեզի ազատել էին, ով որ, ենթադրենք կը, բարձրագույն գուզեր սովորելու, կեղթար սովորելու...

ԳԱՅԱՆԵ. Էդ արդեն ո՞ր թիվն էր:

ՍԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԳՅԱՆ. Էդ արդեն՝ [19]56 թիվը: Ամեն ինչը թույլատրել էին: Վերջը, հորս վերցրի, էկանք: Ինքը էլ չապրավ: Ինքը արդեն շոկի մեջ էր, մեկ էլ տեսնինք՝ բերին ուսյունից թե Բառնասուլից ազատականի թղթերը: [Հուզվում է] Փեչատած պետական թղթերը բերին, որ «с этого числа вы свободны, вы – гражданин СССР, имеете получить паспорт, имеете право получить...» [այս ամսաթվից դուք ազատ եք, դուք՝ ԽՍՀՄ քաղաքացի եք, իրավունք ունեք ստանալու անձնագիր, իրավունք ունեք ստանալու...] չիտեմ ինչ, սաղ գրած էր: [Հուզվում է] ինքն ըսավ՝ տեսնիմ: Տվի իրան, առավ նայեց, նայեց, ըսպես բռնեց, ըսավ՝ արեք, ըսավ՝ [հուզվում է] ընձի կներեք, իմ երեսիցս, իմ հաշվովս դուք յոթը տարի տանջվաք: Վերջացավ: Ըսպես սեղմեց, էղիկ էլ [ստացված փաստաթուղթը] ձեռը գնաց: [Հուզվում է]:

ԳԱՅԱՆՇ. Այնտեղ է գերեզմանը:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Հա, ընտեղ տեղում թաղեցինք: Էկան, գետինը ձուն էր, սառած էր, օգնեցին, էլի: Դե մենք ընտեղ ապրելու ժամանակ մարդկություն էինք թողել: Երբ որ մեզի ճանապարհ դրին ռուսները, մեր հարևանները լացով [հուզվում է] ճանապարհ դրին: Մեկը ձու էր բերել խաշած, մյուսը սալ էր բերել, ըսի՞ գ էին բերել, ընի՞ գ էին բերել, հետոնքս ճանապարհ էին դրել: Հետո եղբայրս, ինքը նկարիչ է, Ալյոնուշկա [նկար] կար, նվեր տվինք մեր հարևաններին, իրա նկարածն էր: Ըսավ՝ տվեք նկարները, հիշատակ կպահենք: Մինչև հերոնս [վերջերս] էլ մարդկանց հետ կապ ունեինք, անցել էր էդքան տարի:

ԳԱՅԱՆՇ. Դուք արդեն մեծ էիք. 16 տարեկան գնացիք, 23 հետ եկաք:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Հա, էդ տարիքն էր:

ԳԱՅԱՆՇ. Էդ տարիքում այնտեղ կարող էիք ամուսնանալ:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Գիտե՞ք ինչ կա... Շատ պակշտնակներ [երկրպագուներ] կային, բայց մարդ, որ շոր չունենա, լավ հագուստ չունենա, տուն չունենա, ինչխ ամուսնություն կեղնի: Շատ կար, շատ: Ես ուներն լավ տիրապետել էի: Ես հայկական առածները, անգամ Գոլոգ Մուկուչից, չիտեմ որտեղից, թարգմանելի կը ռուսերեն, պատմելի կը: Երբ որ մենք կերթայինք ակումբ, ընտեղ մե օրմ կինտ էր, մե օրմ պար՝ տանգո, ֆոքստրոտ, վալս. պարեհիք կը աղջիկների հետ: Մի օր էլ կինտ էր: Մտերմությունը՝ մաքրությամբ, մաքրությունով, ընկերություն կենեինք, աղջիկ էին, ընկերություն կենեինք: Մեզի ըսին՝ էս տերիտորիայից դուրս չելնիք: Մենք շաբաթական, տասնհինգ օրը մեկ ստորագրեինք կը, որ մենք կենդանի ենք, ըստեղ ենք: Կամենդանտը [պարետը] գուկար տասնհինգ օրը մեկ մեզնե ստորագրություն կվերցներ, որ մենք ըստեղ ենք: Մուկյակներ կային, կստորագրեինք, 15 օրը կլրանար, նորից գուկար: Հայտարարին, ըսին, կամենդանտը, թե էսպես հրաման կա՝ եթե հանկարծ էդ տարածքից դուք դուրս ելաք, ուրեմն առանց դատի-դատաստանի ցմահ բանդարկություն կուտանք, 25 տարի: Ու մեզի անորոշ էր, թե մեզի ինչքան [ժամանակով են] բան արել [աքսորել], ըսել էին, թե անժամկետ է: Որ կերթայինք ընտեղ, աղջիկները կխաղային ընտեղ, կամար կկազմեինք, աղջիկը, որ գուկար, որ տղին, որ կզարգեր, էդ տղեն պարտավոր էր վազեր ետնեն, ու նորից իրար հետ ետ գուկային: Վարյա էր անունը, էդ աղջիկն էկավ, ընձի զարկեց ու փախավ: Ժիր աղջիկ: Լավ կվազեր: Ես էլ վազի ետնից, ահագին վազիք, ինքը վազե կը, ես կվազեմ: Ընպես էղավ, որ արդեն մեր տերիտորիան կվերջանար՝ թույլատրությունը, ըդտեղ ցիստեռներ կային, նեֆտեբազայի ցիստեռներն էին [որոնք նաև թույլատրված տարածքի սահմանանշան էին ծառայում], մեկ էլ տեսա, որ ցիստեռներն են, ըսի, վայ, ստեղ եմ ու կայնա: Ինքն էլ կայնավ, ըսավ. «Сергей, зачем не бежишь?» [Մերգել, ինչի՞ չես վազում]: Ըսի՝ нелязя: Ըսավ՝

почему? Ըսի՝ Маслов не разрешает [Մասլովը թույլ չի տալիս] [ծիծաղում է]: Էկավ ըսավ. «Я наплевала на вашего Маслова» [Թքած ունեմ ձեր Մասլովի վրա]: Լացավ [հուզվում է]: Ո՛վ է տեսել, վազեմ կը աղջկան բռնելու, կըսեմ՝ нет, нельзя, Маслов не разрешает [չէ, չի կարելի, Մասլովը թույլ չի տալիս]: Սպես դրվագներ են, որը կյանքում չի մոռացվի, չի մոռացվի կյանքում: Շատ բաներ կային: Ես օրագիր ունեի, որ կորցրել եմ, էդ օրագրի մեջ ընթան բաներ կար, ընթան բաներ, որ էլ պատմելու չէ. որ օրը ուրտեղ եմ էղել, ում հետ եմ էղել, ինչ է էղել, ինչ է պատահել, էսիգ է էղե, ընիգ է էղե: Օրագիրը կար: Ընդից ընձի խնդրեին կը, ընկերներս... Ընկերներս մեր դիրեկտորի աղջկն էր, մեր էրեխանցը դաս է տվել, բայց քանի որ, ինչխ ըսեմ, տարբերվել կը ուրիշներից՝ գիտելիքով, խոսալով, պիտի գիտենաս՝ ինչ խոսիս: Իրանք կիրթ մարդ, դասատու մարդ, ինչ պիտի խոսիս, իրանց բռնե քո խոսածածդ: Ընձի կիրավիրեին իրանց հետ գրույցի: Շատ մտիկ էինք, հարգելի կը: Վերջում մենք ըսքան տեղմ կապրեինք [մոտ երեքը չորս մետրի]՝ ըսքանը հինգ հոգով կապրեինք: Փայտից խաչուբառ զարկած կրավատներ էր: Կրավատների վրա դռակների մեջը ռուս աղջիկները բերեցին խոտը, լցրին, հինգը դռակի մեջը, բարձերի մեջ էլ՝ սալումը [ծղոտը]: Յոթը տարի քսանք խոտի, սալումի վրա: Պատկերցնեք կը, հոտը գուկար անուշ: Հետո մենք բան էղանք [տվորեցինք], փոխեինք կը: Խոտը լավ կչորնար, երբ որ կփոխեիր, բուրմունքը կար էդ խոտի: Շատ առողջ էր: Երբ որ բան էղավ [վերադառնում էին], խոտը թափինք, էդ բաները կուլուլինք, փաթինք, ձեռն բան էղավ: Ինչ բան ունեինք: Հեչ բանմ էլ չունեինք... Էդ ինչ-որ կար, նվեր տվինք ...

Էնպես է էղել որ, ուրեմն, մեզի մի խելացի մարդ՝ գլխավոր մեխանիկ, էկավ, սևտո մարդմ էր: Էկավ, ինքն էլ ուզեցավ աչքի ընկնող տղոնց հետ ծանոթանա, էդ ռուս տղեքը ցույց են տվել [ինձ վրա]. «Սերգեյն է»:

Մե օրմ ինքը կանչեց ընձի, անունս տվեց, ըսավ. «Արի ծանոթանանք»: Մեզի գլխավոր ինժեներ է էղել, սաղ՝ մեխանիզմը, բան, սաղ իրենն է էղել... Ես էլ տրակտորիստ եմ: Է, գլխավոր ինժեները՝ ուրտեղ, էդ տրակտորիստը՝ ուրտեղ... Ուրեմն, խոսացինք, ըսավ. «Ինչ ազգ եք»: Ըսի. «Հայ ենք»: Հըբը. «Ինչի համար են ձեզի բերել»: «Ես չգիտեմ,– ըսի,– բան են կայրել, դե բերել են»: Ըսի՝ «Приклеили» [կպցրել են], ըսավ. «ЭТО понятно» [Դա հասկանալի է]: Ընդից էլ դառավ, ըսպես էրավ, ըսավ՝ բան չկա, ըսավ, մենք կաշխատինք, քեզ հետ ավելի կմոտենանք: Ըսավ. «Դու իմ առաջի ծանոթս ես»:

Զմեռը մենք բան կկտրեինք, իմ հերս, որ գերանը կկտրեր, մենք տրակտորներով գերան կբառնայինք, կբերեինք... Էդ գերանը ոչ թե 5, 10, 20 կուրամետր գերան կբերեինք, այլ 3 հատ իրար հետև շարած ըղպես բաներով բերեինք կը: Ուրեմն մի օրմ ընձի էկան, ըսին, թե ուկրաինացի շոֆեռը, ազգանունը՝ Կանոնենկո, թե բեռով էկել է, ուզեցել է՝ քյասար էլնի, որ-

պեսզի էն ձյուներով չընկնի, կոուզ [շրջան] տա, ինքը ուզեցել է էդ դարը հաղթահարել, հելնել... Ուրեմն էկել էր, հետևը պրիցեպը [կցասայլ] կանգնած, գերանները, ավտոն չէր քաշել, մարել էր: Ինքը էդպես էլ թողել էր: Ընծի ուղարկին, թե տրակտոր ուղարկեք՝ էդ բեռը տանելու համար: Գնացի, տրակտորիստ եմ, է, իմ պարտականությունս է, գլխավոր մեխանիկն է, ինժեներն է ուղարկել: Տրակտորը բան ունի, ուղիղ տեղը ինքը չի բան էնի, բայց էսպես, որ դիքի վրա կկանգնի, ինքը պեդալի վրա կրյուչոկ [կեռիկ] ունի, էդ տորմոզի [արգելակի] պեդալը կաղմես, էդ կրյուչոկը կզցես կը, ինքը էլ տեղից չի շարժվի, կուզե որտեղ որ կանգնած էդնի: Ես կանգնա, մեքենաս կաշխատի: Արդեն տրոսները բան ենք արել, որ քշեմ, պիտի քաշեմ, ուրեմն կապեցինք, ես պիտի արդեն գամ, դու մի ասի, մեքենան, մատողը որ աշխատի կը, էդ իրա զաշյուկեն [տողնակը], կրյուչոկը վեր կհեկնի: Հը չեմ մոտեցել, մեկ էլ տրակտորը շխշխկալեն, գուսենիցներով, ցեպերով հետ էկավ: Հետ էկավ՝ փախանք: Ճվացի, թե՛ փախի... էկավ ու խփեց ավտոյին: Տրակտորը ընտուց էկել, զարկել է ավտոյին, ավտոն էղավ մե բուռմ, ջարդավ, գերանները թռավ... Ուրեմն էդ շոֆեռը իջավ, ընծի ինչ ըսավ, ըսավ. «Սերգեյ, ընծի կստացնեն: Հըմի դու գնա, ըդիկ օրշեժիծիան կքներ, հլե ընտանիքին չէր բերել, ըսավ՝ դու գնա, իմ պահարանիցս մենակ իմ պասպորտս բեր, ես ըստեղից փախնիմ: Ըսավ՝ ընծի կստորցնեն: Ինչի՞ նստրցնեն: Պասպորտս մոտս է՝ կերթամ, կկորեմ ու կկորեմ... Էկա, հետ էկա նորից, էդ տրակտորով նորից հետ էկա... Ուրեմն էդ ինժեներին հարցրեցի, թե՛ Սեմյոն Միխայլովիչ... Ըսավ. «Սերգեյ, բա մեքենան ո՞ր է»: Ըսի. «Սեմյոն Միխայլովիչ, էսպես դեպք պատահեց»: Ըսավ. «Ինչ դեպք»: Ըսի, որ տրակտորն էկավ զարկեց, մենք փախանք: Մեզ էլ կտորորեր, իրան էլ կխփեր, ինձ էլ: Ըսի. «Ինչ էնենք»: Ըսավ՝ ըդիք վատ է էղել, մեքենա եք ջարդել: Ըսավ. «Ըդիք հիմա հաշվի չեն առնի, քո սխալն է էղել, էդպես պիտի չէղներ»: Ըսավ. «Դու սխալ ես, քեզի կմեղադրեն, իսկ շոֆեռին կստատացնեն»: Էդ ա, ինչ անենք: Ըսավ. «Գիտես, ինչ արա, գնա, մնացեք՝ մուրջ տա, երբ որ արդեն իրիկուն է, մթնե կը, էդ մեքենան, գերանները սաղ կապի իրար հետ, քաշի, բեր... (ընտեղ տամբոր ունեինք հատուկ, մեծ մեքենաները, որ գուկային, ըդտեղ կկանգնեին)... Ըսավ՝ ես բալնիքը կուտամ քեզի, բերեք կը, ավտոն կոխեք կը ըտեղ ու վերջացավ: Ըսավ՝ էլ մարդու բան մի՛ ըսա: Ուրեմն, բերինք, ջարդած ավտոն կանգնացրինք: Ըսավ՝ շոֆեռն ուրա՛մ, շոֆեռին ըսել էր, թե գուկաս, մոնիս կը, դուռը կփակես, էն կողքի ավտոն կքանդես, հավաքես կը ստեղ, կողքի ավտոն կքանդես-կհավաքես, քու ավտոտ հանես կը աշխատանքի... Ըշտը էդ տղեն զիշեր ու ցերեկ մնաց, հավաքեց... Էդ Կոնդրածենկոն մնաց, հավաքեց: Ուրեմն, ինչ ենք լավություն էրել էդ գլխավոր ինժեներին... Մայրս ֆլյագայի մեջ պիվա կբռներ, ուներ էլի էդ մասնագիտությունը... ընպես պիվա կբռներ, որ էդ պիվեն որ կխմեիր, ինչ-

խոր շամպայնը խմելի՞ր՝ մեջը իրա փուչիկներով... Ու էնքան խրեն [ծովաբողկ] կար, ռուսական դռժը [խմորիչը], խմելը [գայլուկ], բան, սաղ կխառներ իրար, հետո վերցնել կը, շաքարը կխառներ, գցել կը ու փակել կը: Կտկտկտ՝ կեփեր: Ինքն իրան կեփեր, կեփեր, կեփեր... Հետո, երբ որ մեկ էլ ձայնը կկտրեր, նոր բերանը բան կանեինք... Ըշտե... Ինքը, որ ինձի էդքան լավություն էրավ, գլխավոր ինժեները, ըսի. «Սեմյոն Միխայլովիչ, գիտես ինչ, Отец тебя приглашает к нам ужинать» [Հայրս հրավիրում է քեզ մեր տուն ընթրիքի]: Ըսավ. «Не мешает, приду» [Զի խանգարի, կգամ]: Ինչորա է, հեղավ էկավ: Հեղավ էկավ, հմի բաժակ չունենք: Ուրեմն, մեր բաժակները, էն կաթը, սգուշյոնի [խտացրած] կաթերը, որ կան, ըդիք կերել, էդ ամանները վերցրել ենք, ըդիք է բաժակները: Հետո շեսծիգոնանի [վեցանիստ] բաներ կան [ապակե բաժակ], ըդիք ամեն մարդ չունենք: Ունեինք՝ քիչ էր, մենակ ինժեներին հասավ, էրկու հատ, մեկ էլ՝ իմ հորս: Էրկուսին տվինք, ես, մնացածը էդ կաթի բաժակները կպահեինք կը... Մեկ էլ դատավ, էսպես էրավ, ըսավ. «Էս ինչ իրար հետ կխոսիք»: Հերս ըսավ, թե՛ знаешь, Семен Михайлович, они стесняются [գիտես, Սեմյոն Միխայլովիչ, նրանք ամաչում են]: Ըսավ. «Почему?» [ինչի՞ համար]: Ըսավ. «Потому что у нас это не хватало, стаканы шестигранные, они эти, как его [որովհետև ապակե բաժակները քիչ են, դրա համար դա են], բանկեքը սգուշյոննու բերել են, հիմա ամաչեն կը»: Մեկ էլ ըսավ. «Стоп!» [Մի վայրկյան]: Ըսավ. «Մի բանմ ձեզի ըսեմ, ու շարունակենք»: Ըսավ. «Лишь бы что было кушать, а во что – это не имеет значения» [Միայն թե ուտելու բան լինի, իսկ ինչի մեջ՝ դա էական չէ]: Էդ ձև: Ըսավ. «Գուզեք էդ բաժակը, ըդիք ավելի մեծ է, ըսավ, ես դրանով խմեմ»: Խմեցինք, բան էրինք... Ինքը շատ լավ անձնավորություն էր, շատ լավ: Ուրեմն, այլը ինչը պատմես: Մեզ էսել էին, թե դուք իրավունք չունեք, 12 կիլոմետր [հեռավորության վրա] ջրադացն է, այլուրը վերջացել ա, իրավունք չունենք ջրադաց էրթալու: Է, ու՛մ տաս: Մեկ-մեկ կտանեինք, բայց էսպես կէղներ, որ ժամանակ չէր էղնի, տրանսպորտ չէր էղնի, բան չէր... Ինքը մե հատմ ավտո ուներ սլոժերնի [ծառայողական], բայց ինքը կըշեր: Մե օրմ էկա, հորս ըսի՛ գիտես, Սեմյոն Միխայլովիչը, ինքը ավտո ունի: Ըսեց. «Այ տղա, ինչ գործ ունես: Տանես, հանկարծ ավարյա տաս... ինչ էնենք»: Չէ... Ուրեմն գնացի, ըսի՛ Սեմյոն Միխայլովիչ, ես ձեզնից կուզեմ ավտո... «Ինչի՞ համար»: Ըսի. «Գուզեմ, որ ցորեն տանիմ աղալու՝ 12 կիլո, որը որ չի թույլատրվում մեզի...» Ըսավ. «Пожалуйста» [խնդրեմ]: Ըսավ. «Ուրտեղ է»: Ըսի. «12 կիլոմետր»: Ըսավ. «Знаешь что! Аккуратно отвезешь на мельницу, на обратном пути машину оставишь около нашего дома, и ключи [Գիտես ինչ, զգուշ կգնաս այրադաց, հետադարձ ճանապարհին մեքենան կթողնես մեր տան մոտ, ինչպես նաև բանալիները], որ ես առավոտ էրթամ դաշտերն, էլի»: Ուրեմն էկա, ավտոն 5 մեշոկ ցորենը գցինք մե-

քենայի կուզը, գնացի, լավ տեղ հասա: Հըը ճանապարհը կերևար, ըշտը շատ հաջող տեղ հասա: Տեղ հասա [ու տեսա], որ էսքան է ֆուրգոնով, ֆուրգոնով՝ եզի ֆուրգոնով, ձիու ֆուրգոնով կլիենտներ [հաճախորդներ] են էկել, մեշոկներ են դրել, է մե ջաղացը... Գնացի ջաղացպանին ըսի, թե... Ըսավ. «Գնա՛, վերջը հարցրո՛ւ, կայնի՛ վերջը»: Ըսի. «Վերջը որ հարցնեմ, էսօր չի էղնի, գիշերը չի էղնի, էդ էքսի օրը ցերեկը-իրիկունը կէղնի»: Ա՛յ քեզի բան... Ես ինչ էնեմ: Ըսի նորից հետ տանեմ ըղիկ, ինչի՛... Չէ, ըսի: Ուրեմն գնացի, քիչմ ման էկա, ինձ ըսին, թե դու գգույշ բան կանես, որ ընտեղ հանկարծ մարդ չտեսնի, խաբար տա, թե ըսիկ էսպես է, մեկ էլ տեսար, էկան, ընտեղից բռնին, տարան: Նորից գնացի բանի մոտ: Ուտելիք էին դրել հետս՝ խմիչք էին դրել, խմիչք ո՞րն է, մեղավոլիսա [մեղրասպիրտ], էլի... Ըղիգ էին դրել, լիտրանոց, ըսիգ էին դրել, ուտելիք: Ըղիգ դրել էին ոչ թե ինձ համար, խմելու համար, որ ենթադրենք, կարող է պատահի ուշ գամ, ըղիգ մեկ, երկրորդն էլ՝ հյուրասիրելու համար: Ուրեմն հելա գնացի նորից ջաղացպանի մոտ: Ջաղացպանի մոտը ըսի. «Ես չեմ կարող մնալ: Ազգությամբ հայ եմ, մեզի չի թույլատրվի ըստեղ, ես դրա համար չորնի խողով [ետնամուտքով] եմ էկել: Շատ կխնդրեմ, մենք էրեխեք ունենք, սաղ մեր ընտանիքը սոված է մնացել, ալյուր չունինք, որ հաց թխենք: Շատ կխնդրեմ, մե քիչմ առաջ քցես, ես քեզ նվեր եմ բերել...» Ըսավ. «Какой подарок?» [ի՛նչ նվեր]: Բերի, էդ ուտելիքը տվի, հետո էդ բանը [մեղավոլիսան]: Ըսավ. «Это дело другое, эта подарка хороший, давай!» [Այդ դա ուրիշ բան, դա լավ նվեր է, տուր]: Ըղիգ վեր կալավ, խմելու բանն էլ... Ըղիգ վերցրեց, է, իրանք ուտելիք միշտ էլ ունեին, երբեմն անուտելիք էլ կխմեին: Վերցրեց, ինձ էսպես էրավ, ըսավ. «Знаешь что? Ты машину задом, подгони сам, машину задом, с черного хода, чтобы никто не видел машину, разгрузай и сам машину гоняй отсюда туда, немножко подальше поставь машину» [Գիտե՛ս ինչ, մեքենան, ետ տալով, մոտեցրու ետնամուտքին, որ մարդ չտեսնի, դատարկիր մեքենան և հետո այստեղից հեռու կանգնեցրու]: Ըշտե ինչ-որա է, էդ հիևզ մեշոկը գցինք ընտեղ, մեքենան տարա, հիմա մարդ եմ, մթնել է, ինքը լավ օգնական ուներ, էդոր էլ էր խմելու բան տվել... Էկա տեսա՝ աղան կը արդեն: Աղացին, պրծան, մեշոկները պատրաստ բերին էդ դռան մոտը, նոր ինձ ըսավ, թե մաշինան բեր, գցեմ, գնա: Ըշտը բերի էդ մեքենան, էդ 5 մեշոկը վռագ [միանգամից] գցին, ու ես մեքենան առա, գնացի: Ըդպես դրվակներ կան, էլի, որ մարդը կյանքում չի մոռանա: Ի՛նչխ մոռանանք: Ընպես բաներ է էղել, որ ենթադրենք, թե մարդը տարիներ կանցնի էսօրվա օրը, ենթադրենք երբեմն անուն կմոռանամ, էս մի օրմ կնոջս՝ Հասմիկի անունը մոռացել էի: Ես էստեղ պատկած էի, հիմա կուզեմ անունը տամ՝ մոռացել եմ: Լավ է, որ էս հարևան կնիկը ըսավ՝ Հասմիկ, չե՛ս գա գիրքի թափելու:

ԳԱՅԱՆՇ. Իսկ Ձեր կոմսոմոլ ընդունվելը հիշում եք: Դա ո՞նց եղավ:

ՍԵՐԳԵՅ ԽՈՒԻՐՇՈՒԴՅԱՆ. Ես [19]49-ը թվին եմ էղել կոմսոմոլ, հունվարին: Գնալու տարին: [19]49-ը թվին կոմսոմոլի տոմսը ստացել եմ:

ԳԱՅԱՆՇ. Կոմսոմոլ ընդունելուց Ձեզ ոչ մի հարց չսովեցին Ձեր հոր մասին: Կոմսոմոլ ընդունվելիս խնդիր չեղանվ, որ Դուք...

ՍԵՐԳԵՅ ԽՈՒԻՐՇՈՒԴՅԱՆ. Չէ, հարցրին, թե հայրդ բան՝ էսկողմ-էսկողմ: Ըսի՝ հայրս ֆրանսավիկ է էղել: Էլ իրանք չհետաքրքրվան: Ըսի՝ ֆրանսավիկ է էղել, Հայրենական պատերազմի մասնակից: Հետո իրանք ըսին, թե ըդիկ էղավ: Սաղ ընտանիքի անդամները՝ մայրս որտեղ է, հայրս որտեղ կաշխատի, երկու եղբայր ունեմ, որտեղ են... Էդպես՝ հիմա փոքր են իրանք, դպրոցական են: Ըշտը ինձի կոմսոմոլը տվեց, իմ տոմսս տվեց Վրամ Մոլոնեցյան՝ ընտեղ կա իրա բանը... [19]49-ը թվին էղել եմ, իսկ էղ կոմսոմոլը, երբ որ մե հատմ Լենինի ավելացավ մեղավմ՝ կոմսոմոլի տոմսը փոխվավ: Կոմսոմոլի տոմսը փոխվավ, մեր քաղկոմի քարտուղարը էն վախտ Դոնարա Հարությունյանն էր, ինքը տվեց, իրա ստորագրությունն է:

ԳԱՅԱՆՇ. Իսկ Ձեր հայրը կոմունիստ եղև է:

ՍԵՐԳԵՅ ԽՈՒԻՐՇՈՒԴՅԱՆ. Չէ:

ԳԱՅԱՆՇ. Դուք էլ չեք փորձել ընդունվել կուսակցության շարքերը:

ՍԵՐԳԵՅ ԽՈՒԻՐՇՈՒԴՅԱՆ. Չէ: Էն ժամանակ էդ մեր ազատարարները՝ էդ դաշնակցությունն ա էղել: Մեր էս Անդրանիկ գորավարը: Անդրանիկ գորավարը Մոլոշից մինչև էդ բաները բերել է, ինքը հասցրել է Էջմիածին: Է, համակրեինք կը, էլի... էն կուսակցությունը: Որ կուսակցությունը, որ ժողովրդի մատից փուշ կհանե՝ էդ կուսակցությանը համակրեինք կը...

ԳԱՅԱՆՇ. Դա՞ հիմա: Էն տարիներին էլ էիք դաշնակցականներին համակրում:

ՍԵՐԳԵՅ ԽՈՒԻՐՇՈՒԴՅԱՆ. Չէ, էն վախտ, մտքիցս էրբ կանցնիր որ, կամ ես ինչ գիտեի, թե դաշնակցականը որն էր:

ԳԱՅԱՆՇ. Ստալինի մահը հիշում եք:

ՍԵՐԳԵՅ ԽՈՒԻՐՇՈՒԴՅԱՆ. Հա... Մենք, Ստալինին երբ որ մահացավ, մեր կամենդանտը՝ Մասլովը, սև լենտ [ժապավեն] էր կապել, սև լենտ՝ կարմիր բաներով: Սև լենտը կապած՝ ինքը գլխարկը հանել էր, հանդիսավոր նիստն էր: Մոսկվան հաղորդեր կը, մենք բոլորս կայնած կլսեինք: Բոլորս պարտադիր պիտի ներկա լինեինք: Մեկ էլ մեր ընկերներից մեկը, քեֆը լավ, ներս մտավ: Նիկոլայ Պրասկուրին, վոբշեմ խմող տղա էր, էլի: Էկավ, ներս մտավ, բան էրին, թե դուրս արեք, անմիջապես դուրս արեք: Մեկ էլ ասին, թե դուրս գնա, ըսավ՝ ինչի: Ըսին, թե սզո միտինգ է, ըսավ՝ ինչ էնենք: Ռուսերեն կըսե, էլի: Բռնին, տեղնուտեղը դուրս էրին, հելավ որ

դուրս, էսպես էրավ... ըսին, որ Ստալինը մահացել է, ըսավ. «На ego годах собаки давно съдохли!» [իր տարիքին շները վաղուց սատկած կլինեին]:

ԳԱՅԱՆԵ. Նրան դրա համար բան չարեցին:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Իրան բռնին, տարան: Չէ, իրան շուտմ հեռացրին, որ չբռնեն, տանեն: Բայց հետո բաց կթողնեին, ինչխոր մեզի բաց թողին:

ԳԱՅԱՆԵ. Իսկ բռնադատվածները Ստալինի մահվան կապակցությամբ տխրեցին, թե՛ մտածեցին, որ էս է՝ կազատվեն:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Բռնադատվածները էսքան բան էղան, որ ըսին, որ մի հրեշմ երկրագնդի վրից վերացավ:

ԳԱՅԱՆԵ. Այն ժամանակ իսկապէս այդպես էին մտածում:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Էս վախտ չէ: Էս վախտ մի կուլտուրական մարդմ ունեիք, շատ գրագետ՝ Անուշավանը, Սեդայի պապան, Վարդանի... գրագետ վերին աստիճանի, ես շատ գիտեմ ինչ տաղանդավոր մարդ: Ուրեմն, ֆուտմ են տվել՝ մեծ գիմ, ինքը հաց կտաներ կենտրոնական ֆուտը, հացը կբառնար, տաներ կը... Ես տուն էի էկել՝ հաց, բան վերցնելու, բայց 20 կիլոմետր պիտի գնայի, ինքը 20 կիլոմետր պիտի հաց տաներ: Ուրեմն նստել եմ ֆուտումը, էսպես ոտքերս կախել, հացի յաշիկն [արկղն] էլ էրկու տեղ կար, ես էսպես հակառակը ոտքերս կախած, ինքն էլ էսպես է նստել՝ ոժժը [սանձերը] ձեռը, ու քշենք կը: Ընտեղ էլ հացն է յաշիկով: Մեկ էլ էսիգ դառավ, էսպես ըսավ. «Սերյոժ»: Չէ, Սերյոժիկ կըսեր ընձի՝ Սյերոժա կըսեր: «Մի բանմ գուզեմ բամբասեմ»: Ես ըսի. «Չյաձյա Անուշավան, ինչ... ո՞ւմ մասին կուզեք...» Ըսավ. «Էդ հոգի քակածի»: Մեկ էլ, որ չըսավ, «հոգի քակած», էդ որ չըսավ՝ ես էլ վախեցա: Ըսավ... ըսի՝ բամբասի՛, ըդտեղ դաշտ է, ըստեղ դաշտ է, էդ ո՞վ պիտի խաբար տա, ո՞վ պիտի խաբար տար: Ես չեմ տա խաբար... Ըսավ. «Կարող է ձին խաբար տա»: Ըսավ. «Կարող է ձին խաբար տա»: Հըբը՛, ձին:

ԳԱՅԱՆԵ. Իսկ ընդհանրապես մեկը մյուսին հետևում էր, կարող էր «խաբար» տալ: Էդ վախը կար, թե՛ ազատ էիք... քիչ թե շատ:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Չէ... Վախենայիք կը, էլի: Ու ինչ պիտի խոսեին Ստալինի մասին: Մեկ ուրիշի մասին չէիք խոսի, Ստալինի մասին՝ բռնեին... հնար չկար: Մենք հեչ բան չէիք խոսի: Իրանք դրան կըսեին՝ «Великий Вождь и Учитель»... Է՛, մենք մեր մտքի մեջն, էլի, բայց չէ բառացի: Ստրիդ մեջը բանմ կըսեիր, բայց ինչ ըսեիր, հրե որ հանկարծ ստուրը [սյունը] խաբար տար կամ, ես շատ գիտեմ, մեկը խաբար տար, թե էսպես բաներ կըսեն... Վախը կար, վախը շատ կար, շատ կար, շատ կար... Էդ մարդը ընձի էսպես ըսավ. «Կուզեմ բանմ բամբասեմ, բայց վախենամ կը»:

Առաջին անգամ վախեցավ ըսել՝ ում մասին է: Որ հետո ըսավ, թե ում մասին է... «Էդ հոգի քակածի»... Որ չըսավ, վայ, է-է-է:

ԳԱՅԱՆԵ. Ընտանիքում իրար հետ հայերեն էիք խոսում, թե՛ նուսերեն էիք արդեն անցել:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Ըստեղ, ենթադրենք թե էդ մեր էրեխեքը՝ իմ եղբայրներս, երկուսն էլ ռուսական ավարտին: Էս նկարիչը Մոսկվա, Սուրիկովի անվան խոլոժժեստովեննի [գեղարվեստական] ինստիտուտը գերազանց ավարտեց... Ըստեղ, որ իրանք իրար մեջ ընկերներով, էդ դպրոցականները՝ սաղ ռուսերեն կխոսային: Հայերեն էլ կխոսեին, երբ որ տեղը գար, բայց մենք հայերեն կխոսեինք, էդ բանը՝ ռուսերեն: Բայց որ իրանք քանի ընկերներ էին, մտերիմներ, էդպես մտոյիկ էին՝ ախպոր պես էին, էդպես տղեք կային... Իրանք ռուսերեն կխոսեին, իրանք, որպեսզի էլի լրիվ հասկանան, պարզ կխոսեին, մաքուր կխոսեին: Իմ էդ փոքր [եղբայրը], էս նկարիչը, ինստիտուտը գերազանց ավարտեց: Նամակ էին ուղարկել ինստիտուտից, գրել էին, թե՛ уважаемый родитель, мы объявляем свою благодарность за хорошее воспитание вашего сына, ректор института [հարգելի ծնող, շնորհակալություն ենք հայտնում ձեր որդու լավ դաստիարակության համար, ինստիտուտի ղեկավար] ու էսինչ մարդը, ректор института... Ես էրկու անգամ փող կստանայի՝ մեկը նպաստ... ավանս, էն մյուսը՝ ռոճիկ: Ես իմ 60 ռուբլիս Մոսկվա կուղարկեի: Ձեռքս, որ փող կընկներ, էլի կուղարկեի: Երբ որ տվյալ մարդը գերազանց է, անգամ գուզես՝ էս շորը ծախես, որ օգնես իրան, գիտես, որ սպասելիքներ ունիս...

ԳԱՅԱՆԵ. Դուք դեռ Սիբիրում էիք, Ալթայի երկրամասում էիք, երբ որ ձեր եղբայրը գնաց Մոսկվա ընդունվեց, թե՛ արդեն բոլորդ հետ էիք եկել:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Չէ, հետ էինք էկել, [19]57 թվին գնաց: Շատ լավ գնաց, 4 տարի Մոսկվա մնաց, ավարտեց... Մյուս աղբերս էլ կարտոգրաֆ [քարտեզագիր] էր, վայեննի գարնիզոնին քարտեզներ կգծեր: Արդեն ինստիտուտը ավարտած տղա էր էլի ինքը, քարտեզներ կգծեր... Ինստիտուտավարտ տղա՝ Ժորա Խուրշոտյան... Ես սպորտսմեն էլ եմ էղել, սպորտով եմ պարապել:

ԳԱՅԱՆԵ. Ինչ սպորտաձևով:

ՄԵՐԳԵՅ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ. Ծանր աթլետիկա: Ծանր աթլետիկա պարապելի կը, որ տարան: Մուզիկանտ [երաժիշտ] էի, ծանր աթլետիկա կպարապելի, լավ արդյունքներ ունեի, գովային կը ընձի, կգովային: Էն վախտ ռազրյադներով էր, էս արդեն սպորտի վարպետի թեկնածու էի: Ըդտեղից Ռաստով [Ռոստով] պիտի գնայինք, էս էղիկ պիտի հանձնեի... Հետո չեղավ ըդիկ արդեն՝ հանձնելն էղավ վագոնի մեջը...

ԲԱՌԱՑԱՆԿ

Աղբրեջանցի 75, 76-78, 113, 134, 146-150, 178, 213, 243, 334, 389
Ազգայնական, ազգայնամոլ, ազգայնամոլություն, ազգայնամոլական 11, 43, 58, 62, 64, 66, 69, 73-82, 85, 86-89, 114-118 (*յրես նաս* Նացիոնալիզմ, նացիոնալիստ)
Ազգի դավաճան 196
Աթեիստ, աթեիզմ 178, 180
Ալևի, ալևիներ 130, 132, 138, 139
Ակտիվիստ 291, 206, 300
Ամբողջատիրություն, ամբողջատիրական (համակարգ) 8, 11, 14, 27, 28, 39, 49, 66, 154, 155, 208, 215, 224, 237, 238, 243
Ամերիկացի 236, 405
Ամնիստիա 391
Այլալեռի, այլալեռություն 11, 37, 86, 97, 272, 273
Անարդարություն 41, 308, 310
Անգլիացի 73, 74, 325, 372, 373, 405
Անդրֆեդերացիա 34, 45, 46, 47, 48, 57, 61, 69, 73, 76, 109, 141, 147, 282
—Անդրերկրում, Անդրերկրում 44, 72, 75, 76, 77, 145
Անհատի/անձի պաշտամունք 199-202, 214-216, 237, 281, 284, 328
Անհարազատ 11, 178, 209, 292, 301 (*յրես նաս* Թշնամի, Ժողովրդի թշնամի)
Անտառահատում 308, 315
Ապօրինություն 216

Առօրյա 154, 155, 156, 157, 176
Ասորի 178
Ավար 147
Արդարացում 14, 68, 70, 135, 141, 216, 328 (*յրես նաս* ռեսպիլիտացիա)
Արդիականացում, մոդեռնացում 155, 158, 172, 174, 177, 181, 186, 187, 192, 198
Արտակարգ հանձնաժողով, ԱՀ 27, 29, 33, 103, 119 (*յրես նաս* Չեկա, Պ.Բ.Կ., Ն.Գ.Ժ.Կ., ԿաԳեԲե)
Արտաքսում 218
Արևելահայ (*յրես Հայ*, հայեր)
Արևմտահայ (*յրես Հայ*, հայեր)
Աքսոր, արքորական, արքորված, արքորյալ 18, 36, 39-41, 113, 120, 122, 126, 127, 129, 135, 149, 151, 158, 163, 175, 176, 177, 182, 185, 186, 188-191, 207, 202, 205-209, 211, 213, 216, 217, 227, 229, 230, 234, 243, 244, 248, 252, 259, 266, 268, 270, 286, 291-293, 295, 299, 306-313, 315, 316, 318, 331, 346, 348, 366, 382, 380, 381, 384, 386, 388, 393, 404
—Բոնաքսոր 112, 176, 192, 413 (*յրես նաս* Դեպորտացիա, Բոնազաղթ)
Աքսորավայր 175, 176, 186, 215, 223, 259, 270, 309, 315, 363, 388
Բանդա, բանդիտ, բանդիտիզմ 11, 28, 29, 119, 126, 200, 301

Բանտ, բանտարկյալ, բանտարկություն 11, 19, 82, 116, 147, 196, 202, 203, 206, 207, 217, 219, 224, 228, 233, 257, 259, 261, 266, 272, 292, 295, 296, 304, 307, 315, 318
Բարաք 315
Բելոռուս 211
Բոլշևիկ, բոլշևիկներ, բոլշևիկյան 35-37, 40, 43, 49, 60, 63, 65, 66, 68, 70, 73, 75, 82, 92-94, 97-99, 101-106, 109, 110, 125, 133, 136, 138, 181, 203, 279, 283, 340
Բերիա, Լավրենտի 34, 35, 47, 48, 49, 56, 58, 60-62, 65, 66, 68, 72, 75-78, 82, 87, 109, 199, 141, 145, 151, 152, 199
Բոնազաղթ, բոնազաղթված 16, 177, 178, 238, 259 (*յրես նաս* Աքսոր (Բոնաքսոր), Դեպորտացիա)
Բոնություն 25, 42, 69, 70, 102, 129, 131, 132, 136, 170, 199, 212, 233, 235, 237, 247 247, 305, 320, 329
—Բոնադատում, բոնադատված 11, 14, 15, 57, 38, 39, 68, 83, 87, 114, 147, 151, 158, 163, 164, 176, 182, 189, 199, 202, 203, 205-209, 211-213, 217-220, 222-227, 229, 230, 232, 234, 237, 246, 247, 251, 252, 253, 255, 256, 258, 262, 263, 264, 268, 269, 286, 290, 294, 316, 326, 327, 382, 416
—Քաղաքական բռնություն, բռնանշում,

- բոնանշլված 21, 25, 27, 28, 34, 37, 38, 40-43, 63, 70, 78, 89, 91, 98, 118, 136, 145, 154, 155, 158, 159, 160, 161, 164, 171, 177, 182, 184, 195, 196, 198, 207, 238, 242, 244, 245, 247, 248, 250, 251, 252, 253, 255, 256, 263, 264, 268
- Գագաուզ 414
- Գաղթական 70, 114, 124, 128, 131, 181, 188, 205, 246, 248, 306, 309 (*չրէս նաս*)
- Փախստական, Թուրքահայ, Արևմտահայ, Տաճկահայ)
- Գերի, գերություն 205, 210, 228
- Գերմանացի (ներեց) 228, 386, 392, 414
- Գյուղատվետ, գյուղատրոհող, գյուղատվետի նախագահ 38, 82, 182, 183, 202, 206, 208, 209, 229, 261, 270, 272, 297, 299, 300, 302, 304, 346, 357, 383, 385
- Գողակահարություն, գողակահարել 15, 33, 35, 36, 40, 41, 68, 69, 72, 74, 76, 77, 78, 80, 82, 87, 122, 123, 126, 134, 151, 171, 202-204, 206, 207, 221, 223, 225, 226, 232, 233, 266, 268, 280, 397
- Գործակալ 39, 74, 73, 123, 204, 225, 231
- ԳՈՒՆԱԳ 17, 147-150, 329
- Դահիճ 167, 170, 171, 183, 186, 232, 241, 233, 244, 266
- Դաշնակցություն 28, 30, 36-38, 92, 118, 121, 122, 134, 202, 203, 289
— Դաշնակ, դաշնակ-ցական 11, 20, 30, 28, 29, 36-38, 40, 45, 66, 71, 73, 75, 81, 89, 102, 120, 121, 122, 127, 161, 182, 202, 203, 205, 219, 222, 226, 290, 291, 297, 300, 301, 304, 385, 393, 395, 425
- Դասակարգ, դասակարգային 59, 66, 86, 90, 96, 117, 126, 130, 223, 224
- Դավանան, դավանանություն 66, 85, 128, 137, 171, 207, 221, 230, 270, 296, 299, 300, 404
- Դատ, դատարան, դատել, դատապարտել, դատապարտել(ված) 17, 20, 27, 38, 41, 45, 49, 51, 69, 72, 78, 79, 81, 171, 182, 183, 204, 284
- Դեպորտացիա 131, 177, 178 (*չրէս նաս* Բռնագաղթ, Աքսոր (Բռնաքսոր))
- Դիմադրություն 195, 268
- Եզդիի 73, 127
- Եկեղեցի 178, 179, 180
- Եղեռն 205, 309 (*չրէս նաս* Տեղասպանություն)
- Եռյակ 81, 290, 303 (*չրէս նաս* Տրոյկա)
- Երեխա (էրեխա) 160, 166, 193, 195, 198, 262, 273, 332, 345, 350, 351, 353, 355, 357, 358, 359, 365, 368, 370, 379, 386, 387, 397, 398, 399, 403, 405, 407, 409, 420, 423, 426
- Երիտթուրք 251, 396
- Զոհ, զոհեր 14, 16, 24, 27, 28, 41, 42, 58, 59, 70, 76, 80, 89, 104, 107, 117, 118, 140, 169, 170, 171, 181, 182, 186, 196, 223, 224, 229, 233, 241, 243, 244, 245, 246, 256, 266
- Ջրպարտանք, զրպարտիչ 207, 214, 227, 328
- Ընտանիք 161, 163, 173, 174, 175, 176, 178, 179, 185, 188, 189, 190, 191, 192, 192, 194, 195, 196, 198, 262, 263, 268, 338, 344, 350, 388, 397, 407, 414, 415, 417, 422, 424, 426
- Թաթ 147
- Թաթար 392
- Թալիշ 147
- Թշնամի 37, 49, 57, 58, 60-66, 81, 85, 96, 102, 113, 123, 127, 129, 138, 171, 199, 207, 209, 224, 226, 296, 297, 300 (*չրէս նաս* Ժողովրդի թշնամի, Անհարազատ, Թուրքահայատակ)
- Թուրք (տաճիկ) 40, 61, 62, 66, 69, 75, 93, 95-98, 102-104, 107, 109, 110, 111, 113, 115, 123-125, 127, 129-137, 149, 150, 204, 213, 243, 244, 280, 290, 311, 314, 334, 343, 375, 376, 377, 384, 386, 397
- Թուրքահայ (*չրէս* Հայ, հայեր)
- Թուրքահայատակ 205, 307, 309 (*չրէս նաս* Թշնամի, Անհարազատ, Թուրքահայատակ, Ժողովրդի թշնամի)
- Ժողովրդի թշնամի 11, 37, 49, 56, 66, 72, 85, 135, 137, 164, 166, 171, 174, 192, 194, 208, 218-221 (*չրէս նաս* Թշնամի, Անհարազատ, Թուրքահայատակ)
- Իմպերիալիստ, իմպերիալիզմ 37, 59, 93, 95, 96, 142, 168, 200
- Ինգոլշ 392
- Ինքնասպանություն 34, 36,

- 49, 51, 81, 151, 204, 207, 211, 308
- Լեզիոն (հայկական), լեզիոներական 393
- Լեզգի 147, 392
- Լեռ (այլյակ) 392, 414
- Լուրյանկա 87
- Լյուտորացիա 5, 12, 20, 167, 169, 170, 232, 233
- Լրտես, լրտեսություն 11, 75, 78, 119, 204, 215, 218, 236, 308, 325
- Խանջյան, Աղասի 51, 56, 57, 58, 60, 64, 65, 75, 85, 90, 142, 143, 144, 145, 151, 152, 153
- Խորհրդային, սովետական (կարգեր, պետություն, իշխանություն, վարչակարգ, քաղաքացի, հասարակություն, կառավարում, ապագա, մշակույթ, առօրյա...) 11, 14, 15, 29-32, 37, 40, 41, 45, 53, 61, 64, 66, 65, 70, 73, 78, 83, 84, 89, 92-95, 98, 100, 104, 107-109, 118, 123, 126, 138, 142, 144, 148, 151, 152, 154-158, 163, 165, 166, 169, 170, 171-173, 176-180, 182, 184, 186, 187, 190-195, 198, 199, 202, 204, 205, 207, 210, 211, 212, 217, 223, 318
- ԽՄԿԿ (ՄԿԿՊ) 152, 199, 201, 215, 239, 270, 300
- ԿաԳեԲե 168, 119, 207, 221, 227, 228, 239, 258, 272, 273, 315, 327, 328, 348, 349, 365, 370, 372, 373, 378, 382, 383, 410 (*յրես նսև* Չեկա, Արտակարգ հանձնաժողով, ՆԳԺԿ, ԳԶՎ)
- Կազակ 397
- Կալանավոր 363
- Կալմիկ 242, 243, 258, 269, 392, 414
- Կամայականություն 199, 200
- Կենտրոն, Կենտրոնական Կոմիտե 51, 70, 80, 86, 199, 200, 201, 209, 339, 340
- Կին 6, 39, 40, 51, 160, 161, 179, 190, 192-195, 275, 330, 331, 350, 397, 398, 402, 407
- Կոլեկտիվացում 143, 144, 173, 291
- Կոլլոգ, կոլտնտեսություն 39, 135, 173, 174, 183, 196, 202, 205, 206, 208, 210, 286, 290, 294, 295, 299, 345, 350, 352, 356, 357, 367, 385
- Կոմկուս, կոմունիստական կուսակցություն, կուսակցական կազմակերպություն 21, 14, 30, 34, 40, 44, 51, 58, 59, 60, 76, 152, 180, 200, 201, 203, 209, 211, 213, 224, 238, 268, 271, 275, 283, 296, 300, 336
- Կոմկուս Հայաստանի 20, 21, 30, 33, 51, 90, 200, 201, 271, 336
- Կուսակցական 5, 30, 45, 48, 76, 100, 141, 145, 211, 220, 221
- Կոմունիստ, կոմունիստական 36, 67, 78, 200, 201, 204, 212, 213, 223, 224, 280, 296, 329, 330, 348, 368, 372, 373
- Կոմսոմոլ 136, 206, 221, 224, 226, 298, 300, 302, 304
- Կոնֆիսկացիա («վերգրել») 220, 331, 340
- Կորեացի 392
- Կուլակ, կուլակաթափություն 11, 38, 40, 78, 79, 126, 130, 135, 143, 144, 217, 218, 242, 344, 379
- Հայ, հայեր 34, 61, 66, 67, 68, 80, 81, 88, 92, 93, 97, 99-104, 108, 117, 121, 128-131, 138, 178, 189, 244, 245, 311, 389, 392, 397, 407, 408, 414, 423
- Արևելահայ 120, 180, 181
- Արևմտահայ 66, 67, 70, 71, 77, 91, 104, 107, 108, 110, 111, 114, 115, 120, 121, 180, 181, 182, 309 (*յրես նսև* Թուրքահայ, Տաճկահայ, Փախստական, Գաղթական)
- Թուրքահայ 5, 68, 70, 73, 75, 91-93, 100-102, 104, 107-110, 115, 120, 121, 125, 126, 128, 136, 137, 146, 180, 181, 246 (*յրես նսև* Արևմտահայ, Տաճկահայ, Փախստական, Գաղթական)
- Տաճկահայ 104, 107, 136, 180, 181 (*յրես նսև* Թուրքահայ, Արևմտահայ, Փախստական, Գաղթական)
- Հայդուկ 110, 125, 126, 127 (*յրես նսև* Ֆիդայի)
- Հայրենադարձ 113, 176, 309
- Հակախորհրդային, հակասովետական 11, 40-45, 63, 64, 66, 69, 78, 81- 83, 120, 135, 290, 301, 314
- Հակահեղափոխական 11, 29, 43, 60, 59, 64, 67, 68, 71, 72, 74, 77, 81-83, 85, 119, 126, 135, 207, 219, 220, 222, 314, 316, 317
- Հատուկ խորհրդակցություն (Особое совещание) 41
- Հեղկոմ, Հեղափոխական

- կոմիտե, Հայիեկոմ 35, 105-108
- Հիշողություն 27, 70, 136, 138, 156, 159, 247, 248, 250, 252, 253, 273, 281
—կոլեկտիվ 242
—հանրային 244, 259
—սպատմական 247
—հայրենիքի 45, 61, 70, 116, 126, 138
- Հոգևորական 178, 183
- Հոյն 115, 130, 178, 244
- Հունգարացի (վենգերացի) 414
- Հուշարձան 281, 284, 285, 299
- Հրեա 130, 245
- Չայնագուրկ, ձայնագրկում 41, 42
- Ձերբակալություն,
ձերբակալված 22, 27, 33, 35, 36, 40, 43, 47, 51, 60, 63, 68, 69, 72, 73, 77, 78, 80-83, 87, 90, 105, 120, 122, 124, 125, 129, 133, 135, 146, 151, 161, 170, 174, 176, 193, 194, 197, 204, 207, 215, 220, 226, 237, 263, 290, 296, 314, 324, 325
- Ղազախ 211
- Ղաչաղ 11, 28, 29, 122-124, 126, 127
- Ճամբար 147, 170, 176, 221, 242
- Մալական 280, 281
- Մահապատիժ 290
- Մահմեդական, մուսուլման 93, 101, 102, 111, 112, 114, 115
- Մանկատուն (*յրեն* Որբ, որբեր, որբանոց)
Մատնող, մատնիչ 6, 11, 20, 38, 39, 170, 178, 181, 182, 183, 184, 207, 224-229, 231-233, 341, 299, 305, 377, 381, 392
- Մատնություն, մատնագիր 21, 38, 39, 136, 181, 182, 206, 208, 224-226, 228-231, 233, 315
- Միկոյան, Անաստաս 82, 83, 85, 88, 92, 141
- Մոլդավացի 211
- Մուղղուսի, Խաչիկ 57, 63, 70, 71, 76, 77, 79, 85-88, 144
- Նախանձ 227, 228, 328
- Նացիոնալիզմ,
նացիոնալիստ 11, 45, 46, 49, 57-71, 72, 73, 75, 77-82, 84-91, 97, 98, 108, 133-136, 138, 141, 314 (*յրեն նաս* Ազգայնական)
- ՆԳՆ (Ներքին գործերի նախարարություն) 27, 147, 325
- ՆԳԺԿ (Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատ), ՆԿՎԳ (ԷնԿաՎեԳե) 27, 28, 35, 43, 44, 48, 57, 63, 71, 76, 78-82, 85-88, 91, 121, 131, 144, 147, 148, 170, 171, 262, 263, 309, 325, 377, 379, 380, 385, 389, 390
- Որբ, որբեր, որբանոց, մանկատուն 42, 69, 70, 107, 196, 246
- Չարախոսել,
չարախոսություն 206, 207
- Չեկա 109, 125, 215, 226 (*յրեն նաս* Արտակարգ հանձնաժողով, ՊԲՎ, ՆԳԺԿ, ԿաԳեԲե)
- Չեկիստ 29, 36, 38, 39, 48, 73, 75, 78, 104, 105, 109, 119, 120, 121, 125, 126, 127, 144, 130, 392, 224, 226, 331, 332 (*յրեն նաս* Արտակարգ հանձնաժողով, ՊԲՎ, ՆԳԺԿ, ԿաԳեԲե)
- Չեչեն 392
- Չինացի 311
- ՊԱԿ (Պետական անվտանգության կոմիտե) 24, 27, 151, 164, 186, 309, 331, 340, 404
- ՊԲՎ, Պետական քաղաքական վարչություն 27, 118, 119, 123 (*յրեն նաս* ՆԳԺԿ, ՊԲՎ, ԿաԳեԲե)
- Ռեպրիլիտացիա 14, 153, 238, 253, 333, 382 (*յրեն նաս* Արդարացում)
- Ռեժիմ 78, 201, 202, 208, 214, 223, 224, 228
- Ռեպրեսիա 41, 42, 45, 59, 60, 78, 90, 91, 98, 111, 150, 251, 335, 416
- Ռուս 34, 51, 60, 91, 94, 96-98, 100-104, 106, 111, 119, 124, 134, 136, 177, 178, 211, 280, 310, 311, 319, 352, 376, 389, 391, 392, 397, 419-421
- Ռուսող 147
- Սարսափ, սարսափելի 22, 40, 66, 69, 71, 74, 105, 125, 136, 250
- Սոցիալիզմ 43, 44, 60, 62, 65, 95, 125, 133, 143, 182, 216, 224
- Սպանություն, սպանել 36, 46, 49, 61, 69, 76, 77, 104, 122, 124, 132, 134, 135, 137, 143, 144, 150, 151, 153, 204, 207, 227, 229, 230, 232, 233, 267, 278, 280
- Ստալին, Իոսիֆ 6, 21, 35,

- 44, 49, 51, 56, 58, 68, 72, 75-77, 79-82, 88, 95, 100, 183, 199, 201, 205-207, 211, 212, 213, 214, 215, 216, 218, 223, 224, 227, 230, 275
- Ստալինյան, ստալինիզմ 16, 18, 22, 51, 72, 74, 87, 146, 154, 169, 199, 202, 203, 212-214, 216, 223, 224, 232, 323, 237, 246, 264, 283, 284, 319
- Ստալինյան ցուցակ 51, 68, 72, 73, 146
- Սպեցիֆիկ, սպեցիֆիզմ 86
- Ստրուկ 214, 217, 321, 328
- Վախ 68, 125, 174, 179, 184, 212-215, 218, 222, 223, 226, 235, 236, 275, 279, 297, 319, 321, 328, 341, 348, 349, 372
- Վարկարենկել 214, 328
- Վրացի 34, 47, 57, 76-78, 112, 113, 146-150, 211, 309, 389
- Տանկահայ (*յրևու* Հայ, հայեր) Տայգա 315
- Տեռոր, տեռորիզմ, տեռորիստ 11, 14, 16, 36, 65, 69, 77, 104, 106, 130, 132, 138, 183, 186, 242 —Կարմիր տեռոր 37, 185
- Տղամարդ 160, 161, 179, 191, 192-195, 398
- Տրոյկա 27, 28, 31, 41, 51, 73, 78, 123, 134, 341, 361, 362 (*յրևու նաև* Եղյակ)
- Տրոցկիզմ, տրոցկիստ, տրոցկիստական 11, 12, 27, 43-45, 51, 55, 59, 62, 64-66, 67-70, 72, 75, 81, 82, 86, 87, 90, 91, 117, 222, 314, 332, 353, 361, 362, 368
- Ցեղասպանություն 5, 6, 12, 14, 27, 23, 35, 66, 69, 70, 77, 82, 91, 92, 99, 102, 110, 117, 124, 127, 128, 132, 136-139, 146, 166, 180, 181, 239, 240, 241, 243, 245, 246, 247, 252, 259, 268, 270, 271, 273, 274, 276, 306, 406 (*յրևու նաև* Եղեռն)
- Ողի 147
- Ուզբեկ 390
- Ոսկրախնացի 32, 211, 389, 392, 421
- Փախստական 29, 67, 75, 92, 93, 97, 99, 100-102, 104, 107, 108, 110, 111-115, 117, 120-122, 125, 127-129, 131, 138, 201, 245 (*յրևու նաև* Գաղթական, Արևմտահայ, Թուրքահայ, Տանկահայ)
- Քաղցրորո 28, 72, 78, 80, 82, 126, 152
- Քուրդ, քրդեր 73, 101, 110, 123, 124, 127, 129, 130, 131, 132, 147, 177, 178, 397
- Օտարահպատակ 205
- Օրագիր 307, 308, 313
- Ֆաշիզմ, ֆաշիստ, ֆաշիստական 39, 66, 132, 172, 227, 242, 401
- Ֆիդայի 110, 120, 122, 125, 127, 201, 203 (*յրևու նաև* Հայրուկ)

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

- Ագարակ (գյուղ ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանում) 289
- Ադրբեջան 20, 30, 32, 34, 36, 48, 49, 61, 71, 78, 89, 91, 92, 94, 95, 97-99, 101, 102, 104, 132, 144, 146-148, 243, 255, 389, 407
- Ազիզբեկով (ներկայումս՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջան) 85
- Ալգայազ 73, 118, 377
- Ալավերդի 314
- Ալեյակ 390, 411
- Ալեքսանդրեթ 146
- Ալեքսանդրապոլ 106, 107, 110, 246, 390 (*յրևս նաս* Լենինական, Գյումրի)
- Ալթայ, Ալթայի երկրամաս 186, 211, 213, 215, 228, 227, 229, 244, 259, 336, 345, 411, 426
- Ալմա Աթա 131
- Ախալքալաք 60, 69, 70, 71
- Ախուրյան, Ախուրյանի շրջան 161, 163, 193, 196, 220, 228, 230, 377, 380, 407
- Ահազյի (գյուղ ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում) 122, 125 (*յրևս նաս* Զովասար)
- Ամասիա 314
- Ամերիկա (ԱՄՆ) 131, 392, 399
- Այնթափ (ավան Երևանի մերձակայքում) 210
- Անատոլիա 97, 116, 117, 131
- Անգլիա, անգլիական 74, 81
- Անդրկովկաս (Այսրկովկաս) 32, 34, 44, 48, 49, 61, 62, 68, 75, 78, 91, 92, 99, 109, 148, 149, 177, 326, 407
- Անի 60, 69
- Անկարա, Անգորա 93, 96, 116, 131
- Անճար (հայկական գյուղ Լիբանանում) 146
- Աշնակ (գյուղ ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում) 127, 137, 138, 266, 270, 271, 274
- Աշտարակ 264, 321, 340
- Առինջ (գյուղ ՀՀ Կոտայքի մարզի Արբիլյանի տարածաշրջանում) 210
- Արագած 67, 104, 377
- Արագածոտն 161, 170, 246, 259, 262, 266, 267, 269, 270
- Արալե(ր)յս (ներկայումս Գրիբոյեդով, գյուղ ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջանում) 210
- Արարատ 60, 67, 69, 246, 325
- Արաքս, գետ 125, 144
- Արխանգելսկ 135
- Առաջաձոր (գյուղ ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանում) 24, 260, 261, 262, 263, 264, 266
- Առատ (գյուղ Մուշի շրջանում) 123
- Առաքվալի (Մեծ Արալվալի) (ներկայումս Մեծ Սանթաջ, գյուղ ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տարածաշրջանում) 344
- Աստրախան 122
- Արդահան 98
- Արթիկ 348, 357, 360, 362, 366, 377, 379, 385, 403
- Արմավիր 246 (*յրևս նաս* Հոկտեմբերյան)
- Արմավիր (քաղաք Ռուսաստանում, Կրասնոդարի երկրամասում) 207
- Արտաշատ 105, 339 (*յրևս նաս* Ղամաբլու)
- Բաթում 47
- Բաքու 30, 35, 36, 76, 86, 94, 94, 114, 123, 143, 144, 147, 197, 204, 243, 289, 300, 314, 343, 407
- Բաղդադ 142
- Բայազետ (Գավառ) 127
- Բառնաուլ 389, 411, 414, 415, 418, 419
- Բելոռուսիա 30, 34, 36, 89, 90, 401
- Բելյուֆ 301
- Բերդիրև 401
- Բերկրի 125
- Բիթլիս 67, 110, 181, 122
- Բշերիկ 128
- Բոսֆոր 149
- Բրեստ 91, 110
- Բրիտանիա 112
- Բրյանսկ 382, 383
- Բուլանըլս 396, 398
- Բուլղարիա 372, 373, 392
- Գելիեզուգան (գյուղ Սասունի շրջանում, Թուրքիա) 122
- Գելանուշ (գյուղ ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանում) 297 (*յրևս նաս* Գյոտկում)
- Գետահովիտ (գյուղ ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանում) 259
- Գեղիկ (գյուղ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանում) — սա Գայանեի կոլոն է: Այս գյուղը նախկինում եղել է Ալեքսանդրապոլի

- գավառում: Ենթադրում
 են, որ Գեղարքունիքին
 է: Ուրիշ հին Գեղիկ
 չգտա: Գայանե, բան
 ունեն ասելու 380
- Գերմանիա, գերմանական
 35, 66, 74, 154, 172, 186,
 205, 283, 319, 325, 338,
 346, 325, 338, 346, 352,
 376, 386, 389, 401, 401,
 406, 409, 410
- Գնդեվյազ (գյուղ ՀՀ Վայոց
 ձորի մարզի Վայքի
 տարածաշրջանում) 120
- Գնիե (հայկական գյուղ
 Սիրիայում) 146
- Գողթ (գյուղ ՀՀ Կոտայքի
 մարզի Աբովյանի
 տարածաշրջանում) 264,
 266
- Գոշ 206, 213, 228, 230
- Գորիս 204, 207, 222, 284,
 295, 297, 302
- Գյումրի 160-163, 173, 213,
 221, 228, 246, 257,
 258, 277, 278, 314, 343,
 347, 393, 397 (*յրեն
 նաև* Լենինական,
 Ալեքսանդրապոլ)
- Գյուտկում 42, 135 (*յրեն նաև*
 Գեղանուշ)
- Գուսանագյուղ (գյուղ ՀՀ
 Շիրակի մարզի Անիի
 տարածաշրջանում) 400
- Գաշտաղեմ (գյուղ Բիթլիսի
 շրջանում, Թուրքիա) 67
- Գաշտաղեմ (գյուղ ՀՀ
 Արագածոտնի մարզի
 Թալինի տարա-
 ծաշրջանում) 123, 125
- Գաղատան 148
- Գարդանեղ 149
- Գերսիմ 132, 138-141
- Գեր-Չոր 243
- Գիարբեքի 128, 129
- Գիլիջան 118
- Գոն 114
- Եաղուպիե (հայկական գյուղ
 Սիրիայում) 146
- Եգիպտոս 130
- Ելիզավետպոլ 36, 94
- Եղեգնաձոր 203
- Եղվարդ (գյուղ ՀՀ Սյունիքի
 մարզի Կապանի տարա-
 ծաշրջանում) 289
- Եվրոպա 132, 140
- Երևան 15, 51, 81, 104, 105,
 118, 186, 208-210, 220, 231,
 235, 250, 257, 259, 263,
 276, 281, 284, 302, 306,
 309-311, 313-315, 321, 322,
 324, 325, 331, 333, 335,
 337, 338, 339, 359, 366,
 383, 389, 403
- Երազգավորս (գյուղ
 ՀՀ Շիրակի մարզի
 Ախուրյանի տարա-
 ծաշրջանում) 137, 188, 214
- Երուսաղեմ 301
- Զանգեզուր 18, 29, 40, 42,
 94, 97, 103, 105-107, 118,
 120, 133-135, 151, 203
- Զովասար (գյուղ ՀՀ
 Արագածոտնի մարզի
 Թալինի տարածաշրջա-
 նում) 122, 183, 185, 191,
 192, 193, 194, 275 (*յրեն
 նաև* Ահազչի)
- Էջմիածին 36, 104, 118, 339,
 398, 424
- Էստոնիա 401
- Էրզրում 77, 181, 321
- Թալին 110, 120, 122, 123, 125,
 127, 133, 137, 251, 266, 270,
 273, 274
- Թավրիզ 121
- Թելավի 36
- Թեհրան 129
- Թիֆլիս, Թբիլիսի 30, 33, 35,
 36, 46, 47, 51, 57, 60, 77,
 80, 100, 109, 141, 144, 147,
 176, 186, 204, 306, 308,
- 310, 311, 313, 321, 324, 331,
 335, 338, 340, 343, 347
- Թունցելի 139
- Թուրքիա 5, 12, 23, 60, 61,
 68, 70, 74, 75, 91-104,
 108-113, 115-117, 121-123,
 128-133, 137-140, 141, 142,
 144, 146, 172, 178, 245,
 270, 276, 283, 308, 309,
 373, 384, 397 (տես նաև
 Տաճկաստան)
- Թուրքահայաստան 92, 93
 (*յրեն նաև* Արևմտյան
 Հայաստան, Տաճկահա-
 յաստան)
- Թուրքմենստան 89
- Իգդիր 111
- Իջևան 259, 342
- Իսահակյան (գյուղ ՀՀ
 Շիրակի մարզի Անիի
 տարածաշրջանում) 380,
 385
- Իվանովո-Վոդնետենսկ 278
- Իտալիա 112, 389
- Իրան 108, 121, 191, 296,
 301, 304 (*յրեն նաև*
 Պարսկաստան)
- Իրինդ (գյուղ ՀՀ
 Արագածոտնի
 մարզի Թալինի
 տարածաշրջանում) 274
- Իրկուտսկ 306
- Լազարևսկ 276
- Լատվիա 401
- Լեհաստան 73
- Լենինական 56, 269, 277,
 351, 353, 378, 379, 384,
 385, 390, 393, 397, 403,
 417 (*յրեն նաև*
- Գյումրի, Ալեքսանդրապոլ)
- Լենինգրադ 19, 73, 81, 187,
 284, 401, 402
- Լեռնակերտ (գյուղ ՀՀ
 Շիրակի մարզի Արթիկի
 տարածաշրջանում) 371

- Լեոնահայաստան 103, 105
 (*յո՛ւս նաև* Ջանգեզոր)
 Լեոնապատ (գյուղ Գուգար-
 քի շրջանում, ՀՀ) 182
 Լիբանան 146
 Լիտվա 401
 Լոզան 99-102, 111-114, 116,
 120, 132, 136, 142
 Լոռի 103, 181, 182
- Խաչա 142
 Խաս (գյուղ Մուշի շրջանում,
 Թուրքիա) 396, 397
 Խասան, լիճ 363
 Խատինախա 363
 Խարբերդ 66, 68, 128
 Խտտորջուր 77
 Խոր Վիրապ 386
 ԽՍՀՄ 12, 13, 14, 17, 20, 21,
 25, 30-34, 63, 65, 70, 81,
 85, 89, 90, 101, 102, 105,
 108, 109, 111, 115, 116, 121,
 127, 129, 130, 132, 135, 138,
 141, 142, 144, 145, 148, 149,
 150, 153, 169, 195, 199, 216,
 227, 228, 239, 240, 243,
 247, 281, 314, 325, 328, 401
- Ծավ (գյուղ ՀՀ Սյունիքի
 մարզի Կապանի
 տարածաշրջանում) 205,
 206, 295, 300, 302
 Ծովք 343
- Կագան 372, 373, 380, 382
 Կաթնաղբյուր (գյուղ ՀՀ
 Արագածոտնի մարզի
 Թալինի տարա-
 ծաշրջանում) 122, 123
 Կալեր (ներկայումս լքված
 գյուղ ՀՀ Սյունիքի
 մարզի Մեղրու տարա-
 ծաշրջանում) 288
 Կալմիկիա 243, 414, 415
 Կարին 375
 Կարս, Ղարս 35, 60, 68, 69,
 72, 91, 98, 99, 110, 111, 114,
 136, 343, 373
- Կապան, Ղափան, Ղափանի
 շրջան 25, 135, 170, 188,
 209, 211, 222, 234, 235,
 248, 286, 290, 291, 293,
 295, 296, 297, 304
 Կարգին (գյուղ
 Ռուսաստանի
 Կրասնոյարսկի
 երկրամասում) 315
 Կիլիկիա 108
 Կիրովական (ներկայումս՝
 Վանաձոր) 331, 350, 399,
 402, 403
 Կո(ա)լիմա 18
 Կոնդ (թաղամաս Երևանում)
 219
 Կոստանդնուպոլիս, Կ.Պոլիս
 69, 74, 93, 108, 117, 121,
 129, 130
 Կովկաս 30, 91, 92, 94, 96,
 98, 102, 114, 149, 244, 276,
 306, 310, 311
 Կոտայք 118, 180, 209, 264,
 322
 Կորեա 392
 Կրասնոդար 149
 Կրասնոյարսկ 186, 244, 315,
 390
 Կուրա 342, 373
 Կուրան 114
- Հաթապ 146
 Համանլու (ներկայումս՝
 Սպիտակ) 309
 Հայաստան *passim*
 —Արևելյան (նաև
 Ռուսահայաստան) 68,
 69, 70, 73, 91, 92, 102, 122,
 124, 127, 180, 259, 321, 375
 —Արևմտյան 22, 45,
 58, 66, 67, 69, 70, 73,
 77, 91-93, 104, 108, 121,
 122, 128, 134, 136, 138,
 146, 396 (*յո՛ւս նաև*
 Տաճկահայաստան,
 Թուրքահայաստան)
 —Խորհրդային 11, 14-16,
 25, 27, 35, 36, 43, 46, 57,
- 58, 61, 73, 75, 76, 86, 88,
 98, 102, 103, 107-118, 121,
 125, 128, 144, 145, 150, 153,
 180, 211, 247, 274, 290, 303
 Հայկական (գյուղ ՀՀ
 Շիրակի մարզի Ախուրյա-
 նի տարածաշրջանում)
 136, 206, 212, 221, 227,
 228, 230, 231, 283
 Հայրենաց (գյուղ ՀՀ
 Շիրակի մարզի Արթիկի
 տարածաշրջանում) 228,
 375, 380, 382
 Հալեպ 128
 Հաղպատ (գյուղ ՀՀ Լոռու
 մարզի Թումանյանի տա-
 րածաշրջանում) 182, 282
 Հարավսլավիա 240
 Հոկտեմբերյան (քաղաք և
 շրջան) 209, 339 (*յո՛ւս*
նաև Արմավիր)
 Հոռոմ (գյուղ ՀՀ Շիրակի
 մարզի Արթիկի
 տարածաշրջանում) 183,
 211, 228, 231, 376, 388, 389
 Հորադիզ (գյուղ ԼՂՀ
 Հաղրութի շրջանում) 294
 Հրազդան 122
 Հունաստան 108, 115, 121,
 122, 141
- Զորակապ (գյուղ ՀՀ Շիրակի
 մարզի Անիի տարա-
 ծաշրջանում) 353
- Ղազախստան ԽՍՀ,
 Ղազախստան 89, 131,
 210, 212, 217
 Ղազախյի (գյուղ ՀՀ Սյունիքի
 մարզի Կապանի տարա-
 ծաշրջանում) 135
 Ղամարլու 85 (*յո՛ւս նաև*
 Արտաշատ)
 Ղարաբաղ 12, 60, 69, 70,
 71, 94, 97, 102, 240, 243,
 329, 398
 Ղենմիլ (հայկական գյուղ
 Սիրիայում) 146

Ղրին 32, 149, 150, 392
Ղրղզստան 89
Ղուկասյան 399, 410

Ճապոնիա 112, 363, 402,
403, 404

Ճգնավոր (ներկայումս
լքված գյուղ ՀՀ Սյունիքի
մարզի Կապանի տարա-
ծաշրջանում) 289

Մախաչկալա 407

Մանթաշ, Մեծ (գյուղ ՀՀ
Շիրակի մարզի Արթիկի
տարածաշրջանում) 344

Մաստրա (գյուղ ՀՀ Արա-
գածոտնի մարզի Թալինի
տարածաշրջանում)
123, 194

Մարդին 128

Մարտունի 85, 333

Մեծ Շահրիար (ներկայումս՝
Նալբանդյան, գյուղ ՀՀ
Արմավիրի մարզի Արմա-
վիրի տարածաշրջանում)
209

Մեղրագետ 397

Մեղրի 288

Մերձավոր Արևելք 73, 96,
114, 115, 130,

Մերձբալթյան երկրներ 186

Միլան 33

Միջին Ասիա 133, 244

Մկթեք (գյուղ Սասունի
շրջանում, Թուրքիա) 127

Մոսկվա 14, 19, 33, 35, 36,
57, 70, 71, 73, 81, 83, 99,
101, 111, 114, 136, 144, 147,
153, 187, 211, 211, 212, 217,
220, 268, 269, 273, 304,
316-318, 342, 363, 380, 381,
391, 392, 417, 425, 426

Մոսուլ 142

Մորավիա 404

Մոլդովա 92

Մուշ 110, 123, 125, 181, 396,
397, 424

Նախիջևան 60, 69, 71,
97, 102, 288, 386

Ներքին Մագրա, Մագրա
(ներկայումս լքված
գյուղ ՀՀ Սյունիքի
մարզի Կապանի տարա-
ծաշրջանում) 286, 288-
290, 293, 294, 297, 301

Նիժնի Տագիլ 377

Նովոսիբիրսկ 407

Նոր Նախիջևան (Դոնի
Ռոստով) 35, 36

Նո(ա)րիլսկ 292, 293, 315

Նոր Երկիր, Նովայա Չևնյա
292, 296

Շահրազ յուրդ (ներկայումս
լքված գյուղ ՀՀ Սյունիքի
մարզի Կապանի տարա-
ծաշրջանում) 289

Շաղատ (գյուղ ՀՀ Սյունիքի
մարզի Սիսիանի տարա-
ծաշրջանում) 314

Շամիրամ (գյուղ ՀՀ
Արագածոտնի մարզի
Աշտարակի տարա-
ծաշրջանում) 267

Շենիկ (գյուղ Սասունի
շրջանում, Թուրքիա) 122

Շիկահող (գյուղ ՀՀ Սյունիքի
մարզի Կապանի տարա-
ծաշրջանում) 42

Շիշկերտ (գյուղ ՀՀ Սյունիքի
մարզի Կապանի
տարածաշրջանում) 188,
203, 206, 208, 211, 212,
270, 286, 288, 289, 291,
293, 296, 300, 302

Շիրակ (գյուղ ՀՀ Շիրակի
մարզի Ախուրյանի տա-
րածաշրջանում) 380

Շիրակ (մարզ, շրջան) 103,
104, 110, 118, 120, 133, 136,
137, 193, 230, 246, 274,
283, 379, 385

Շորին ձոր (տեղավայր
Գորիս քաղաքում, ՀՀ)
204, 284

Շվանիձոր (գյուղ ՀՀ
Սյունիքի մարզի Մեղրու
տարածաշրջանում) 290

Շտուրմավոյ 363

Շուշի 35, 36

Շվեյցարիա 139

Ոսկեթաս (գյուղ ՀՀ
Արագածոտնի մարզի
Թալինի տարա-
ծաշրջանում) 122

Ոսկեհասկ (գյուղ ՀՀ Շիրակի
մարզի Ախուրյանի
տարածաշրջանում) 274

Չելյաբինսկ 292, 301

Չիլի 285

Չինաստան 392

Պաղեստին 130, 144

Պարբիզի շրջան
(Ռուսաստան, Տոմսկի
մարզ) 307-309

Պարսկաստան 36, 122, 122,
144, 204, 289 (*յրեսու*
Իրան)

Պեմզաշեն (գյուղ ՀՀ
Շիրակի մարզի Արթիկի
տարածաշրջանում) 205,
211, 215, 218, 222, 228, 343

Ջանֆիդա (գյուղ ՀՀ
Արմավիրի մարզի
Արմավիրի տարա-
ծաշրջանում) 69, 123

Ջաջուռ (գյուղ, նաև
լեռնանցք ՀՀ Շիրակի
մարզի Ախուրյանի տա-
րածաշրջանում) 104,
406, 412

Ռյազան 103, 104

Ռուսանդա 240

Ռուսաստան,
ռուսաստանյան 13, 17,
29, 30, 32-35, 41, 83, 60,
72, 89, 91, 92, 93, 94-100,
104, 115, 116, 142, 146, 148,

- 149, 152, 154, 163, 179, 186,
195, 207, 238, 239, 241,
250, 251, 273, 297, 372,
389, 397, 398, 401, 407
Ռուսաստանի Դաշնություն,
ՌԴ 13
- Սադախյո 395
Սալմաստ 36
Սանկտ Պետերբուրգ 36
Սասնաշեն 120
— Վերին Սասնաշեն
(գյուղ ՀՀ Արագածոտնի
մարզի Թալինի տարա-
ծաշրջանում) 127, 182
— Ներքին Սասնաշեն
(գյուղ ՀՀ Արագածոտնի
մարզի Թալինի տարա-
ծաշրջանում) 274
Սասուն, սասունցի 19, 24, 61,
69, 110, 112, 122, 125, 127,
136-138, 143, 270, 274
Սարատակ (գյուղ ՀՀ
Շիրակի մարզի Արթիկի
տարածաշրջանում) 182
Սարատով 35, 300
Սարդարապատ 82, 104, 110,
124, 128, 133, 284
Սեբաստիա 116, 117
Սեմիպալատինսկ 390
Սիբիր 16, 73, 110, 176, 212,
223, 241, 295, 243, 299,
306-308, 315, 317, 325,
390-392, 426
Սիսիանի շրջան 314
Սիրիա 108, 123, 130, 139-142,
146, 301
Սյունիք 182, 193, 209, 247, 270
Սոլովեցկ 203
Սոչի 276
Սոֆիա 392
Սվարանց (գյուղ ՀՀ Սյունիքի
մարզի Գորիսի տարածա-
շրջանում) 208, 209, 282
Սվեկլասովսոգ 389, 390
Ստալինգրադ 386, 402,
409, 414
Ստամբուլ 115, 130
- Ստեփանավան 403
Սուխում 207
Սումգայիթ 243
Սուրմալու 60, 69
Սևան (քաղաք) 309
Սևծովյան ավազան 255
Սևր 94, 96
- Վան, վանեցի 35, 69, 70, 73,
123, 124, 134, 245, 306-309,
321, 324
Վատիկան 245
Վարդանյու (լքված գյուղ
ՀՀ Շիրակի մարզի
Ախուրյանի տարա-
ծաշրջանում) 283
Վիտկիյ յար (գյուղ
Ռուսաստանի Տոմսկի
մարզում) 307, 309
Վոլգա, գետ 386, 388
Վոլգոգրադ 386
Վո(ա)րկուտա 292
Վրաստան 30-32, 34-36, 46,
47, 57, 75-78, 80, 89, 99,
100, 104, 105, 108, 109,
146-149, 186, 190, 213, 244,
255, 283, 306, 389, 407
- Տաթև (գյուղ ՀՀ Սյունիքի
մարզի Գորիսի տարա-
ծաշրջանում) 104, 208-
210, 212, 216, 223, 226,
229, 234, 278, 279, 280
Տանկահայաստան 114
(*յրես նաև* Արևմտյան
Հայաստան,
Թուրքահայաստան),
Տանկաստան 136 (տես նաև
Թուրքիա)
Տալշետ 19
Տաշքենդ, Տաշկենդ 122,
290, 390
Տաջիկստան 73, 89
Տիգրանակերտ (Դիարբեքիր)
129
Տոմսկ, Տոմսկի մարզ 223,
234, 296, 307, 308, 313,
392, 407
- Տրիպոլի 142
Տուֆաշեն (գյուղ ՀՀ Շիրակի
մարզի Արթիկի տարա-
ծաշրջանում) 371
- Ուզբեկստան 89
Ուկրաինա 30-32, 34, 89, 90,
100, 142, 401
Ուջան (գյուղ ՀՀ
Արագածոտնի
մարզի Աշտարակի
տարածաշրջանում) 19
- Փանիկ (գյուղ ՀՀ Շիրակի
մարզի Արթիկի տարա-
ծաշրջանում) 191, 178
Փարաքար (գյուղ Երևանի
մերձակալքում) 286
Փարիզ 33, 47, 73, 113, 118,
212, 322, 325
Փեթարա (գյուղ Մուշի
շրջանում, Թուրքիա) 122
- Քարաբիկ (գյուղ Վանի նա-
հանգում, Թուրքիա) 123,
124
Քաջարան 299, 300
Քարահունջ 270
Քելթի 407, 410
— Փոքր Քելթի 182, 410
Քեսապ (հայկական գյուղա-
քաղաք Սիրիայում) 146
Քրդստան 101, 129
Քոռո, գետ 294
- Օբ, գետ 413, 415
Օմսկ 407
Օսմանյան կայսրություն,
Օսմանյան Թուրքիա 70,
92, 124, 138, 181 (*յրես նաև*
Տանկաստան)
- Օրդալես 389
Օրենբուրգ 392
- Ֆրանսիա, ֆրանսիական
47, 74, 96, 112, 140, 142,
146, 172, 212, 319, 325, 380

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՄՆ – Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Անդերերկրում, Անդերերկրում –
Անդրկովկասի երկրամասային
կոմիտե

Անդրֆեդերացիա – Անդկովկասյան
Ֆեդերացիա, Անդրկովկասի
երեք՝ Հայաստանի, Վրաստանի
և Ադրբեջանի խորհրդային
հանրապետությունների միավորում՝
«Անդրկովկասյան Խորհրդային
Ֆեդերատիվ Սոցիալիստական
Հանրապետություն» անվամբ:
Գործել է 1922-1936 թթ. ընթացքում:
1936 թ. ԽՍՀՄ Սահմանադրությամբ
Հայաստանը, Վրաստանն ու
Ադրբեջանը դարձել են ԽՍՀՄ
առանձին հանրապետություններ:

ԳՈՒՆԱԳ - ռուսերեն ГУЛаг – Главное
управление лагерей и мест заключения
(Ճամբարների և ազատազրկման
վայրերի գլխավոր վարչություն), նաև
Главное управление исправительно-
трудовых лагерей (Ուղղիչ աշխատան-
քային ճամբարների գլխավոր վարչու-
թյուն) անվան ռուսերեն հապավումը:
Այս վարչությունը 1936-1956 թթ.
ԽՍՀՄ ՆԳԺԿ, ԽՍՀՄ ՆԳՆ, ԽՍՀՄ
Արդարադատության նախարա-
րության կողմից իրականացվող
զանգվածային ձերբակալությունները
և ազատազրկումները կարգավորող
ստորաբաժանում էր: ԳՈՒՆԱԳ բառն
այժմ բոլոր լեզուներով ինքնուրույն բառ
է, նշանակում է ԽՍՀՄ քաղաքական
բռնությունների գոհերի կալանավայր,
ճամբար:

ԷնԿաՎեԴե, Էնկավեդե - ռուսերեն НКВД
- Народный комиссариат внутренних
дел (Ներքին գործերի ժողովրդական
կոմիսարիատ) անվան ռուսերեն
հապավումն է, որը գործածական էր

ողջ ԽՍՀՄ տարածքում, հայերեն
համարժեքն է ՆԳԺԿ:

ԺԿԵ - Ժողովրդական կոմիսարների
խորհուրդ

Ժողկոմ – Ժողովրդական կոմիսար

Ժողկոմխորի – Ժողովրդական
կոմիսարների խորհուրդ

ԽՄԿԿ – Խորհրդային Միության
Կոմունիստական Կուսակցություն

ԽՄԿԿ ԿԿ - Խորհրդային Միության
Կոմունիստական Կուսակցության
կենտրոնական կոմիտե

ԽՍՀ – Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետություն

ԽՍՀՄ – Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետությունների Միություն

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՀամԿ(Բ)Կ – Համամիութենական
Կոմունիստական (բոլշևիկյան)
կուսակցություն

ՀԽՍՀ – Հայաստանի Խորհրդային
Սոցիալիստական Հանրապետություն

ԿԿ – Կենտրոնական կոմիտե
(Կոմունիստական կուսակցության),
նաև՝ Կենտկոմ

ԿԿ ԿԿ – Կոմունիստական կուսակցության
կենտրոնական կոմիտե

ԿԳԲ, նույնն է՝ ԿաԳեԲե - ռուսերեն КГБ -
Комитет государственной безопасности
(Պետական անվտանգության կոմիտե)
անվան հապավումն է, հայերեն
համարժեքն է՝ ԿԳԿ – Կենտրոնական
գործադիր կոմիտե

ՊԱԿ – Պետական անվտանգության
կոմիտե)

ԿԳԲ, տես ԿաԳեԲե

Կենտկոմ – Կենտրոնական կոմիտե
(Կոմունիստական կուսակցության),
նաև՝ ԿԿ

Կենտգործկոմ – Կենտրոնական գործադիր
կոմիտե

Կոմկուս - Կոմունիստական
կուսակցություն

ՆԳԺԿ - Ներքին գործերի ժողովրդական
կոմիսարիատ

ՆԳՆ - Ներքին գործերի նախարարություն

ՊԱԿ - Պետական անվտանգության
կոմիտե

ՊՔՎ - Պետական քաղաքական
վարչություն

ՌԴ - Ռուսաստանի Դաշնություն

ՌԽՍՖՆ - Ռուսաստանի Խորհրդային
Սոցիալիստական Ֆեդերատիվ
Հանրապետություն

ՍՄԿԿ - Սովետական Միության
Կոմունիստական Կուսակցություն

ՍՍՀՄ - Սովետական Սոցիալիստական
Հանրապետությունների Միություն

Քաղբյուրո - Քաղաքական Բյուրո՝
ՀամԿ(ք)Կ Կենտկոմի և ԽՄԿԿ
Կենտկոմի ղեկավար մարմինը

ՍՏԱԼԻՆՅԱՆ ԲՈՒՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ, ԱՌՕՐՅԱ

*Հրանուշ Խառապյան
Գայանե Շազոյան
Հարություն Մարության
Լևոն Աբրահամյան*

Հիշողության ազգագրություն, 5